



# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ուսումնական ձեռնարկ





ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՅԻՄՈՒՆՔՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

**Ձեռնարկի համահեղինակներ՝**

Անահիտ Չիլինգարյան

Գեւյա Պետրոսյան

Դավիթ Խաչատուրյան, ի.գ.թ.

Եղիշե Կիրակոսյան, ի.գ.թ.

Վահան Բուրնազյան, իրավագիտության դոկտոր

Վահե Գրիգորյան, մարդու իրավունքների մագիստրոս, Նոթինգեմի համալսարան

**Խմբագիրներ՝**

Եղիշե Կիրակոսյան, ի.գ.թ.,

Գեւյա Պետրոսյան

**Սրբագրիչ՝** Ռիմա Գրիգորյան

**Շապիկի դիզայնը և Էջադրումը՝** Մանե Արշալույսյանի

# Բովանդակություն

Հապավումների ցանկ .....	5
Նախաբան .....	6

## ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ .....

8

1.1. Մարդու իրավունքների հիմունքները .....	9
1.2 Մարդու իրավունքների հայեցակարգի զարգացման պատմական ակնարկ .....	34

## ԳԼՈՒԽ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ԾԱԳՈՒՄՆ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ .....

44

2.1. Պետության, իրավունքի և դատարանի ծագումն ու Էությունը .....	45
2.2. Ողջամիտ դիտորդի գաղափարը .....	50
2.3. Իրավունքի մեկնաբանություն և իրավունքի գերակայություն, ինքնավար հասկացություններ .....	53

## ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ .....

61

3.1. Պետության նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունները .....	62
3.2. Մարդու իրավունքների սահմանափակումների թույլատրելիությունը բացառապես այլ իրավունքների երաշխավորման համար .....	63
3.3. Բացարձակ և սահմանափակելի իրավունքների դասակարգման հիմքը, նշանակությունը և չափանիշները: Իրավունքի խախտում և իրավունքի սահմանափակում .....	65
3.4. ՄԻԵԴ-ի թեստը իրավունքի սահմանափակումների իրավաչափության վերաբերյալ: Մարդու իրավունքները սահմանափակող նորմերի սահմանափակ մեկնաբանման կանոնը .....	69

## ԳԼՈՒԽ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ .....

74

4.1. Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգը .....	75
4.2. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգը .....	80

## ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .....

87

5.1. Կյանքի իրավունք .....	88
5.2. Խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի բացարձակ արգելքը .....	94
5.3. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք .....	116
5.4. Հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունք .....	124
5.5. Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք .....	155
5.6. Արդար դատաքննության իրավունք .....	164
5.7. Արտահայտվելու ազատության իրավունք .....	193

5.8. Մտքի, խղճի և կրոնի ազատություն.....	203
5.9. Հավաքների ազատություն.....	210
5.10. Ժողովրդավարության իրավունք.....	221
5.11. Սեփականության իրավունք.....	228
5.12. Աշխատանքի իրավունք.....	234
5.13. Առողջության իրավունք.....	243
5.14. Առողջ միջավայրի իրավունք.....	256

**ԳԼՈՒԽ 6. ԽՈՑԵԼԻ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....266**

6.1. Ընդհանուր նկարագրություն. խոցելիության տեսությունը.....	267
6.2. Կանայք.....	269
6.3. Երեխաներ.....	271
6.4. Տարեց անձինք.....	274
6.5. Հաշմանդամություն ունեցող անձինք.....	275
6.6. Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խոցելի վիճակում գտնվող անձինք.....	279
6.7. Էթնիկ, ռասայական, ազգային պատկանելության հիմքով խոցելի վիճակում գտնվող անձինք.....	281

**ԳԼՈՒԽ 7. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ.....285**

7.1. Ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ բռնությունը՝ որպես մարդու իրավունքների խախտում.....	286
--	-----

**ԳԼՈՒԽ 8. ԿՈՌՈՒՊՏԻԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.....302**

8.1. Կոռուպցիայի վտանգավորությունը մարդու իրավունքների համար, կոռուպցիայի շարժիչ ուժը, օրենքների և իրավակիրառ պրակտիկայի որոշակիությունը.....	303
8.2. Կոռուպցիայի բովանդակությունը. ինչպես վերացնել կոռուպցիայով զբաղվելու ցանկությունը.....	307
8.3. Պաշտոնյաների անխոցելիության ստուգումը. նախնական և հետադարձ վեթինգ.....	309

**ԳԼՈՒԽ 9. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.....312**

9.1. Թվային տեխնոլոգիաների զարգացումը, սոցիալական ցանցերը և մարդու իրավունքները.....	313
9.2. Արհեստական բանականության ազդեցությունը մարդու իրավունքների վրա.....	320

# Հապավումների ցանկ

<b>ԱՀԿ</b>	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
<b>ԱՄԿ</b>	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
<b>ԵԱՀԿ</b>	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
<b>ԵԽ</b>	Եվրոպայի խորհուրդ
<b>ԵՄ</b>	Եվրոպական միություն
<b>ԼԳԲՏ</b>	լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս
<b>ԽԴԿ</b>	ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտե
<b>ԽԿԿ</b>	Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտե
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՄԱԿ</b>	Միավորված ազգերի կազմակերպություն
<b>ՄԻԵԴ</b>	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
<b>ՄԻԵԿ</b>	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա
<b>ՔԴՕ</b>	Քրեական դատավարության օրենսգիրք

# Նախաբան

Սույն ձեռնարկը նախատեսված է ավագ դպրոցների աշակերտների և ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև մարդու իրավունքներով հետաքրքրված այլ անձանց: Ձեռնարկը հնարավորություն է տալիս պատկերացում ձևավորելու մարդու իրավունքների առանցքային հասկացությունների վերաբերյալ, ձեռք բերելու անձի իրավունքների իրացման և պաշտպանության համար անհրաժեշտ նվազագույն գիտելիքներ և հմտություններ:

Ձեռնարկը նախ անդրադառնում է մարդու իրավունքների փիլիսոփայական հիմունքներին՝ քննարկելով անհատի տեսանկյունից մարդու իրավունքի անհրաժեշտության խնդիրը, ինչպես նաև թափանցիկության, հաշվետվողականության և համագործակցության կարևորությունը մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում: Այնուհետև ներկայացվում են մարդու իրավունքների հայեցակարգի պատմական զարգացման փուլերը՝ սկսած անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, փոխկապակցելով այս զարգացումը իրավական մտքի պատմական զարգացման շրջափուլերի հետ:

Ձեռնարկը նկարագրում է նաև պետության և իրավունքի, ինչպես նաև դատարանի գաղափարի ծագման և էության այն ընկալումները, որոնք ընկած են ժամանակակից քաղաքակրթության հիմքում: Արժարժվում են մարդու իրավունքների համատեքստում կոռուպցիայից բխող խնդիրները, կոռուպցիային նպաստող գործոնները և դրա կանխարգելմանն ուղղված միջոցները: Այն հակիրճ և մատչելի եղանակով ներկայացնում է մարդու իրավունքների ներպետական և միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմները, որոնց իմացությունը ցանկացած անձի համար բացարձակ անհրաժեշտություն է իր իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունների ապահովման տեսանկյունից: Շոշափվում են այնպիսի արդիական հարցեր, ինչպիսիք են մարդու իրավունքների առանձնահատկությունները թվային տեխնոլոգիաների զարգացման համատեքստում:

Ձեռնարկում անդրադարձ է կատարվում առանձին մարդու իրավունքների՝ կյանքի իրավունք, խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի բացարձակ արգելք, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունք, անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, ժողովրդավարության իրավունք, արդար դատաքննության իրավունք, արտահայտվելու ազատության իրավունք, մտքի, խղճի և կրոնի ազատություն, հավաքների ազատություն, սեփականության իրավունք, աշխատանքի իրավունք, առողջության իրավունք, առողջ միջավայրի իրավունք, առանձին խմբերի իրավունքներ, ինչպես նաև ընտանեկան բռնությանը և կանանց նկատմամբ բռնությանը՝ որպես մարդու իրավունքների խախտման: Առանձին թեմաներ ձեռնարկում կարող են ներկայացված լինել առավել ծավալուն ձևաչափով՝ համապատասխան ոլորտում հայալեզու գրականության սակավությամբ պայմանավորված:

Ձեռնարկի նյութերի հիման վրա ստեղծվել է նաև թեմատիկ դասախոսությունների տեսաշարք, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [Մարդու իրավունքներ](#):

Հեղինակները համապատասխանաբար մշակել են հետևյալ թեմաները՝

Անահիտ Չիլինգարյան - գլուխ 6, ենթագլուխներ 5.4, 5.13

Գեոյա Պետրոսյան - ենթագլուխներ 5.7, 5.9, 5.12

Դավիթ Խաչատուրյան - գլուխներ 2, 3, 7, 8, ենթագլուխներ 5.2, 5.6

Եղիշե Կիրակոսյան - գլուխներ 4, 9, ենթագլուխներ 1.2, 5.5

Վահան Բուրնազյան - ենթագլուխ 1.1

Վահե Գրիգորյան - ենթագլուխներ 5.1, 5.3, 5.8, 5.10, 5.11, 5.14



ԳԼՈՒԽ 1.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ  
ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՓՈՒԼԵՐԸ



## 1.1. Մարդու իրավունքների հիմունքները

*«Որտե՞ղ են վերջիվերջո սկսվում համընդհանուր մարդու իրավունքները: Փոքր վայրերում, մոտ, տանն այնքան մոտ ու այնքան փոքր վայրերում, որ աշխարհի որևէ քարտեզի վրա տեսանելի չեն: Այդուհանդերձ, դրանք անհատի աշխարհն են, այն թաղամասը, որտեղ նա ապրում է, դպրոցը կամ քոլեջը, ուր նա հաճախում է, գործարանը, ֆերման կամ գրասենյակը, որտեղ նա աշխատում է: Սրանք այն վայրերն են, որտեղ յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա հավասար արդարություն է փնտրում, հավասար հնարավորություն, հավասար արժանապատվություն՝ առանց խտրական վերաբերմունքի: Եթե այս իրավունքներն այդտեղ նշանակություն չունեն, դրանք քիչ նշանակություն կունենան ցանկացած այլ վայրում: Առանց այդ իրավունքներն իրենց տանը մոտ պահելու մտահոգ քաղաքացիների քայլերի՝ ավելի մեծ աշխարհում առաջընթացի սպասելն ապարդյուն է»:*

**Էլենոր Ռուզվելտ, 1958**

Գոյություն ունի կյանքի ընդհանուր, համատեղ փորձ: Բայց մեզնից յուրաքանչյուրն աշխարհն սկսում է ճանաչել որպես անհատ և ապրում ենք որպես անհատներ՝ յուրաքանչյուրս իրականությունն ընկալելով սեփական զգայարաններով: Սա ճշմարիտ է՝ չնայած այն բանին, որ, որպես սոցիալական էակներ, մենք պատկանում ենք շատ խմբերի, ինչպիսիք են ընտանիքը, ընկերները կամ, որ է՛լ ավելի լայն է, ազգը, ինչպես նաև չնայած նրան, որ մեզ վրա ազդեցություն է ունենում խմբային տեսակետը: Այդուհանդերձ, մեր գործողությունները, մեր վարքագիծը, մեր անհատականությունն ու մեր ներքին բնությունը եզակիորեն միայն մերն են: Մենք քայլեր ենք ձեռնարկում և անում բաներ, որոնք միշտ ընտրության արդյունք են, որովհետև կարող էինք և այլ կերպ անել: Յուրաքանչյուրս ձգտում է իր կամքն իրացնել, իր կյանքի հանդեպ որոշակի վերահսկողություն ունենալ: Որպես գիտակից անհատներ՝ մենք իրականությունը ճանաչում ենք ինչպես մեր զգայարանների ու զգացմունքների, այնպես էլ տրամաբանության միջոցով: Մեզնից յուրաքանչյուրը կարող է վիրավորվել և անարդարություն զգալ: Յուրաքանչյուրս կարող է ուրախանալ կամ ցավ զգալ, և հետևաբար յուրաքանչյուրս արժևորում է իր կյանքը: Ավելին, մենք գիտենք մեկ այլ բանի մասին ևս՝ միմյանց: Մեր կյանքը կազմված է միմյանց հետ շփումներից, այսինքն՝ շփումներ անհատների միջև, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր ընտրությունը, զգում է անարդարություն, գնահատում է կյանքը և վախենում է մահից: Այս ամենի մեջ, այս համատեքստում յուրաքանչյուրս նույնն է, նույն իրավիճակում է և հետևաբար հավասար է: Այսպիսով, մարդու իրավունքների նախադրյալն այն է, որ յուրաքանչյուր անհատ ծնվում է ազատ, կատարում է իր ընտրությունը, և ի վերջո անհատները հավասար են իրենց արժանապատվությամբ և իրավունքներով:

## Անհատը

### *Ինչու՞ անուն ունենք: Ինչու՞ յուրաքանչյուրս անուն ունի:*

Չնայած այն բանին, որ մարդիկ սոցիալական էակներ են, որոնք գոյատևում և բարգավաճում են խմբերով, յուրաքանչյուրս որպես անհատ է գիտակցություն ձեռք բերում: Կան գիտակցության մասին տարբեր տեսություններ, այսինքն՝ տեսություններ այն մասին, թե ինչպես ենք իրագեկ դառնում սեփական գոյության, այլոց գոյության և մեր շրջակա աշխարհի մասին: Բայց բոլոր տեսություններն ընդունում են այն փաստը, որ անհատն է դառնում գիտակից: Դու տեսնում ես աշխարհը քո սեփական աչքերով: Դու համտեսում ես, լսում, շոշափում, հոտ քաշում: Ցանկացած զգայական ընկալում քո սեփականն է: Ավելին, կան բաներ, որ սիրված կամ չսիրված են կոնկրետ քո կողմից: Որոշ առաջադրանքներ քեզ մոտ լավ են ստացվում, այլ առաջադրանքներ նույնիսկ ավելի լավ են ստացվում, և դու ցանկանում ես ավելի զարգացնել քո սիրած զբաղմունքի համար պահանջվող հմտությունները, եթե, իհարկե, այն արդեն գտել ես: Բացի դրանից՝ դու մասերից չես բաղկացած: Չնայած ունես բազմաթիվ հետաքրքրություններ, մի շարք սիրված ու չսիրված բաներ, դու ճանաչում ես ինքդ քեզ և ներկայանում աշխարհին որպես ամբողջականություն՝ ընկալում ես ինքդ քեզ որպես անհատականություն:

Մյուսները նույնպես քեզ ընկալում են որպես անհատականություն: Գուցե նման ես քույրերիդ ու եղբայրներիդ, բայց դու դու ես: Նույնական երկվորյակներն անգամ տարբեր են: Չնայած նրանք սերում են նույն ԴՆԹ-ից, սակայն զարգացման ընթացքում տեղի են ունենում մուտացիաներ ու փոփոխություններ, և ի վերջո ստեղծված անհատները տարբերվում են միմյանցից<sup>1</sup>: Թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ դու եզակի ես, եզակի ամբողջականություն ես:

Չնայած մեզկից շատերը զուգորդվում են կոնկրետ ընտանիքի հետ և ունեն ազգանուն, ու չնայած շատերս այլոց կապված ենք ընդհանուր լեզվի ու մշակույթի հիման վրա, որը նույնպես մեզ ինքնություն է հաղորդում, և որին նույնպես տալիս ենք անվանում, մեզկից յուրաքանչյուրն ունի իր անհատական անունը: Նույնիսկ մարդու իրավունքների մասին օրենսդրության պահանջն է, որ ցանկացած երեխա ունենա անուն<sup>2</sup>:

### *Ինչու՞ յուրաքանչյուրս ունի անուն:*

Որովհետև աշխարհն առհասարակ բաղկացած է անհատներից, և մենք ընդունում ենք այս ճշմարտությունը՝ անուն տալով յուրաքանչյուրին: Այսպիսով, ցանկացած խմբի, ընտանիքի, հասարակության և, իհարկե, որպես այդպիսին՝ ամբողջ մարդկության հիմնական բաղկացուցիչ միավորն անհատն է, ուրեմն մարդու իրավունքն արտահայտված է յուրաքանչյուր անհատի մակարդակով:

1. Lanese, Identical twins don't share 100% of their DNA, <https://www.livescience.com/identical-twins-dont-share-all-dna.html>

2. «Զարգացողական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (ICCPR), հոդված 24(2) «Յուրաքանչյուր երեխա պետք է գրանցվի իր ծնվելուց անմիջապես հետո և անուն ունենա»:

- Քանի որ իրականությունը կազմված է անհատներից, արդյո՞ք չի հետևում, որ յուրաքանչյուր անհատ եզակի է: Այսինքն, եթե դու դու ես և ոչ մեկ ուրիշը, դա չի՞ նշանակում, որ դու տարբեր ես, տարբեր ես բոլորից: Արդյո՞ք սա ճշմարիտ չէ յուրաքանչյուրիս համար:
- Հաշվի առնելով վերը նշվածը՝ մի՞թե բազմազանությունը նորմ չէ: Անհատների շրջանում բազմազանությունը բնական չէ՞:

### **Տարբեր ուղեղներ՝ տարբեր անհատներ**

*«Ե՛վ Էվոյուցիայի, և՛ իմունոլոգիայի տեսության համաձայն՝ անհայտ ապագային բախվելիս դրան հաջողությամբ ադապտացվելու հիմնական պայմանը գոյություն ունեցող բազմազանությունն է»:*

**Ջերալդ Մ. Էդելման<sup>3</sup>**

Քո մարմնի ու ուղեղի զարգացմանը տրվել է հնարավորություն: Մինչ գեներն ստեղծում են մեկնարկային կետ, աճի գործընթացը և ներգրավված բաղադրիչների զգալի քանակությունը բաղադրիչների զարգացման և փոխկապակցման եղանակի անթիվ տատանումների հնարավորություն են տալիս, հատկապես ուղեղի նեյրոնների և սինապսների առնչությամբ: Հայտնի է, որ նույնական երկվորյակներն անգամ ունեն ուղեղի անատոմիայի տարբերություններ: Եվ սա իր պատճառն ունի:

Փոփոխական ուղեղները և բազմազան անհատները ստեղծում են ներուժ: Բնության մեջ օրգանիզմները հնարավորություն ունեն հարմարվելու դեռևս անհայտ մարտահրավերին, քանի որ անհատները տարբեր են, փոփոխական, բազմազան: Համեմատության համար նշենք, որ ինչ-որ բան նախագծելիս հաճախ ստեղծվում են պահեստային համակարգեր (back-up systems), որոնք անում են նույն բանը կամ հասնում նույն արդյունքին, եթե գործընթացներից մեկը ձախողվում է: Իսկ ի՞նչ, եթե մարտահրավերը պահանջում է այլ արդյունք, եթե խնդիրը, որին առերեսվում ենք, պահանջում է, որ արձագանքը լինի ոչ թե նույնը, այլ մի փոքր տարբեր: Պահեստային համակարգերի փոխարեն բնության պատասխանը ապագայի դեռևս անհայտ մարտահրավերներին ներկայումս բազմազանություն ստեղծելն է, և հետևաբար բազմազանությունն ապագայի տարբեր արձագանքների համար այսօր ստեղծում է ներուժ, նախքան հայտնի կլինի, թե ինչ մարտահրավեր պատահաբար ի հայտ կգա, և համապատասխան ինչ լուծման կամ ադապտացիայի կարիք կլինի<sup>4</sup>: Անհատների շրջանում բազմազանությունը ստեղծում է հարմարվելու ներուժ: Էվոյուցիան պահանջում է բազմազանության առկայություն, ոչ թե համապատասխանելիություն: Բնական է, որ մեր փոփոխական ուղեղը ստեղծում է տարբեր անհատներ:

3. Mountcastle, Vernon Benjamin; Edelman, Gerald M. (1978). The Mindful Brain - Cortical Organization and the Group-selective Theory of Higher Brain Function. MIT Press. ISBN 978-0-262-55007-9

4. Neural Darwinism, [https://en.wikipedia.org/wiki/Neural\\_Darwinism#CITEREFMountcastleEdelman1978](https://en.wikipedia.org/wiki/Neural_Darwinism#CITEREFMountcastleEdelman1978)

Ուղեղների տարբերությունը ևս կարող է պատճառ լինել տարբեր անհատականությունների գոյության: Նեյրոնների փոփոխականության աստիճանը համապատասխանում է անհատական վարքագծի փոփոխականության աստիճանին, իսկ անհատական վարքագիծը «...նյարդային համակարգի ֆունկցիայի հիմնական արդյունքն է»: Բացի դրանից՝ բնածին վարքագիծը տարբերվում է գենետիկորեն նման և նույնիսկ գենետիկորեն նույնական անհատների դեպքում, և ժամանակի ընթացքում այդպիսի վարքագծի շարունակական կայունությունն է իրականում բնորոշում անհատին: Դու մասամբ ճանաչում ես քո քույրերին, եղբայրերին ու ընկերներին՝ իմանալով, թե ինչպես է տարբերվում նրանց անհատականությունը, ասել է թե՛ «կայուն վարքագիծ»-ը: Մի ուսումնասիրություն, որը մարդկանց մասին չէ, եզրակացրել է, որ «...նեյրոնային ցանցերի փոփոխականությունը, որ առաջ է գալիս զարգացման ընթացքում, խիստ փոխկապակցված է վարքագծային անհատականության հետ»<sup>5</sup>: Այսպիսով, նախապատրաստվելով մարտահրավերներին և Էվոլյուցիային՝ տարբեր ուղեղներ ստեղծում են տարբերակելի անհատներ՝ որպես հարմարվողականություն ստեղծելու մաս: Սա բնական է:

Ցավոք, մարդիկ ունեն բազմազանությունը չըմբռնելու և համապատասխանելիություն պահանջելու պատմություն: Մասամբ սա բացատրվում է հակադիրների տիրույթում մտածողությամբ. մենք հասկանում ենք իրականությունը՝ այն բաժանելով հակադրությունների՝ ցերեկ և գիշեր, տղամարդ և կին, աջ և ձախ: Հակադիրների տիրույթում մտածողությունը դասակարգման մեր մարդկային հակումի արտացոլանքն է: Իրականում գիտակցության մասին տեսություններից մեկը հիմնված է այն փաստի վրա, որ մարդիկ անընդհատ դասակարգում և վերադասակարգում են:

Մենք դասակարգում ենք, երբ նոր փորձած ցանկացած բան կապում ենք մի բանի հետ, որն արդեն փորձել ենք, և հետո որոշում, որ երկու կամ ավելի կոնկրետ բաներ մեծամասամբ նույնն են՝ այդպիսով կառուցելով նման կոնկրետ բաների կամ փորձառությունների ընդհանուր դասակարգ, այսինքն՝ ընդհանրացում: Օրինակ՝ մեզ հարմար է շատ տարբեր բաների վրա նստելը, բայց յուրաքանչյուրին անվանում չենք տալիս, փոխարենը բոլորն անվանում ենք «աթոռ»: Բայց մենք ոչ միայն դասակարգում ենք, այլև ստեղծում վերացական հասկացություններ: Օրինակ, երբ բնության գրկում ենք և ուզում ենք հանգստանալ, փնտրում ենք մի քար կամ գերան, որը համեմատաբար հարմար բարձրության ու ձևի է, և նստում ենք՝ «աթոռի» վերածելով այն, ինչ գտնում ենք: Բացի դրանից՝ մենք պատկերացնում ենք, թե որն ավելի լավ «աթոռ» կլիներ նախկինում մեր փորձած «աթոռներից» և ստեղծում այն: Նախկին բաների դեպքում տեղի է ունենում ընդհանրացում, իսկ նորերի դեպքում վերացարկում: Նմանապես, երբ զարգանում ենք, վերադասակարգման միջոցով յուրաքանչյուր անձ կառուցում է անհատի վերացական իդեալ, այնուհետև գիտակցում, որ և՛ ինքը, և՛ մյուսներն առանձին, բայց նման անհատներ են. սա գիտակցությունն է<sup>6</sup>: Այսպիսով, դասակարգումն ու վերադասակարգումը իրականության մեր ընկալումը ստեղծելու կերպն են: Հակադիրների տիրույթում մտածողությունը արտացոլում է դասակարգումը՝ հռչակելով երկու բան որպես ոչ նույնը, հռչակելով հակադիր՝ սև և սպիտակ: Աշխարհը, սակայն, կազմված է գույներից, և

5. Linneweber, et. al., "A neurodevelopmental origin of behavioral individuality", <https://www.biorxiv.org/content/10.1101/540880v1.full>

6. Oliver Sacks, On the Move: A Life, Knopf, 2015, էջ 363-364, et. al.:

դրանք լույսի մի սպեկտր են, որոնցից յուրաքանչյուրը բխում է մյուսից, և որոշ լուսային ալիքներ մեր տեսնելու կարողությունից վեր են: Այսպիսով, չնայած հակադիրների տիրույթում մտածողությունը մտածելու հարմար միջոց է, այն չի արտացոլում իրականությունը. իրականությունը բաղկացած չէ հակադիրություններից, և որքան շատ ենք սովորում, այնքան ավելի հավանական է դառնում, որ ամեն ինչ գոյություն ունի շարունակականության մեջ:

Ցավոք, հակադիրների տիրույթում մտածողությունը գերակայում է, և այն նաև խրախուսում է հիերարխիկ մտածողությունը, որի համաձայն՝ մի բան ավելի լավ կամ ավելի բարենպաստ է, քան հակառակը: Որպես օրինակ՝ դարեր շարունակ մշակույթները հավանություն են տվել աջ ձեռքի գործածությանը և խուսափել են ձախ ձեռքի գործածությունից: Աջ ձեռքը համարվում էր մաքուր և օգտագործվում էր օրհնություններ տալու համար, իսկ ձախ ձեռքին վերապահված էին ոչ մաքուր գործերը, և այն օգտագործվում էր ուրիշներին անիծելու համար: Արդյունքում իրենց ձախ ձեռքը հիմնականում օգտագործող անհատները բացասական էին ընդունվում և ենթարկվում խտրականության. միջնադարում նրանք կապվում էին կախարհության և չար արարքների հետ, իսկ 19-րդ դարի թերի «գիտության» համաձայն՝ ամենայն հավանականությամբ նրանք ունեին հոգեբուժական օգնության կարիք կամ հանցագործներ էին: Ուստի մինչև վերջերս երեխաները պատժվում էին ձախ ձեռքով գրելու համար, և նրանց ստիպում էին աջ ձեռքով գրել: Բայց այս զուգորդումներից ոչ մեկը վավերական չէ:

Այսպիսի վատ զուգորդումները բխում են պարզապես այն փաստից, որ մարդկանց մեծամասնությունը աջիկ է, և միայն փոքրամասնությունն է ձախիկ, ուստի մեծամասնությունն իրեն նորմալ է համարում, իսկ հակառակը՝ աննորմալ: Ելնելով այս տեսակետից՝ մեծամասնությունը ոչ միայն փոքրամասնությանը բնորոշել է որպես անհամապատասխան, այլև «ձախիկությունը» սահմանել է որպես «խնդիր»:

Օբյեկտիվ իրականությունը, սակայն, այն է, որ գրեթե բոլոր մարդիկ ունեն գերակայող ձեռք (երկհարվածությունը չափազանց հազվադեպ է): Հետևաբար նորմալն այն է, որ գրեթե բոլորիս դեպքում այս կամ այն ձեռքը գերիշխող է: Այսպիսով, հարցը օբյեկտիվորեն «ձեռքի գործածության» տիրույթում է, ոչ թե «ձախիկության». նորմալ է մեկ գերակայող ձեռք ունենալը, և մեծամասնության համար դա աջ ձեռքն է, իսկ փոքրամասնության համար՝ ձախը:

Ինչու՞ է փոքրամասնությունը հիմնականում օգտագործում ձախ ձեռքը՝ չգիտենք, բայց նաև ինչու՞ է դա մեզ անհանգստացնում անհատներին արժևորելու առումով:

Ըստ այսօրվա մեր իմացածի՝ ուղեղի ձախ կողմը վերահսկում է մարմնի աջ կողմը, իսկ աջ կողմը վերահսկում է մարմնի ձախ կողմը, և ձախիկ մարդկանց մոտ աջ կիսագնդի շարժիչ կեղևը գերակայող է: Հայտնի է, որ այն վայրերում, որտեղ ձախիկությունը չի պատժվում, դրսևորվում է բնակչության մոտավորապես 10-15%-ի մոտ: Մենք գիտենք, որ մոտավորապես 40 գեն դեր է խաղում «ձեռքի գործածության» համար: Գիտենք, որ նախաձննդյան միջավայրը նույնպես դեր է խաղում: Գիտենք, որ եթե ծնողը ձախիկ է,

ապա ձախիկ երեխա ծնվելու հավանականությունը մոտավորապես 25% է: Գիտենք, որ շատ երկվորյակներ տարբերվում են «ձեռքի գործածության» առումով<sup>7</sup>: Գիտենք, որ ձախիկ անհատները միշտ էլ գոյություն են ունեցել, չնայած խտրականությանը և ճնշումներին: Այսքանը՝ այն ամենի մասին, ինչ գիտենք:

Թեև որոշ փորձարկումների համաձայն՝ կա կապ ձախիկության և հատուկ հմտություններ կամ որոշ հատկանիշներ ունենալու միջև, կան գիտնականներ, որոնք կասկածի տակ են առնում այդ կապը և հարցականի տակ դնում կիրառվող մեթոդաբանությունները: Ձախիկների մասին ինչ-որ բան բացահայտող փորձարկումները հիմնվում են նրանց կենսաբանական տարբերությամբ՝ վրա, թե՞ այդ զուգորդումներն արտացոլանքն են աջիկների աշխարհում ձախիկ լինելու. չէ՞ որ դա ոչ թե կենսաբանություն, այլ հոգեբանություն է<sup>8</sup>: Առավել կարևորը սա է՝ բազմազանության համար պատճառ պետք չէ. կապ չունի՝ ձախիկներն ավելի ստեղծարար են, լեզվական առումով ավելի հմուտ, թե ոչ: Բազմազանությունը ստեղծում է ներուժ՝ հարմարվելու անհայտին, ոչ թե հայտնիին: Է՛լ ավելի կարևոր է այն, որ ձեռքի գործածության գերակայության հիման վրա որևէ մեկին ավելի շատ գնահատելու կամ ավելի քիչ գնահատելու պատճառ չկա: Նման համապատասխանելիություն պահանջելն անիմաստ է:

Անցյալի սխալ պատկերացումները ձեռքի գործածության մասին նման են սեռական կողմնորոշման մասին այսօրվա սխալ պատկերացումներին: Քանի որ մեծամասնությունը հակադիրների տիրույթում մտածողության կրող է, այն կենտրոնանում է իր վրա՝ որպես նորմալի, իսկ փոքրամասնությանը նկարագրում որպես աննորմալ և պահանջում, որ վերջինը գործի մեծամասնության փորձին համապատասխան, ինչը, ըստ մեծամասնության, նորմալ է: Այսպիսով, մեծամասնությունն իրեն բնորոշում է որպես *Нормал*, իսկ փոքրամասնությունը սահմանում որպես իրեն հակադիր: Բայց «ձախիկության» և ավելի օբյեկտիվ եզրույթի՝ «ձեռքի գործածության» տարբերության վերաբերյալ վերը նշվածի նմանությամբ՝ կայուն «հուզական, ռոմանտիկ և սեռական գրավչության օրինաչափությունների» վերաբերյալ օբյեկտիվ անդրադարձը «սեռական կողմնորոշում» է, և յուրաքանչյուրն այն ունի:

Դու ունես սեռական կողմնորոշում ճիշտ այնպես, ինչպես հակվածություն՝ օգտագործելու քո աջ կամ ձախ ձեռքը:

«Սեռական կողմնորոշումը կարող է սահմանվել որպես մեկ այլ սեռի (տարասեռականություն/հետերոսեքսուալություն), նույն սեռի (նույնասեռականություն/հոմոսեքսուալություն), երկու սեռերի (երկսեռականություն/բիսեքսուալություն) կամ ոչ մի սեռի (անսեռականություն/ասեքսուալություն) նկատմամբ համեմատաբար կայուն սեռական գրավչություն»<sup>9</sup>:

7. Is handedness determined by genetics, <https://medlineplus.gov/genetics/understanding/traits/handedness/>

8. Hardie, Differences between left- and right-handers in approach/avoidance motivation: influence of consistency of handedness measures, <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3929948/>

9. Bogaert, A short review of biological research on the development of sexual orientation, <https://www.sciencedirect.com/science/article/pii/S0018506X19304660>

Մարդկանց մեծամասնությունը կարծես ունի տարասեռական սեռական կողմնորոշում, իսկ փոքրամասնությունը՝ նույնասեռական է (գեյ կամ լեսբի), երկսեռական կամ անսեռական: Հաշվի առնելով սեռական կողմնորոշման հետ կապված տաբուները՝ շատերը չեն բացահայտում իրենց գրավչությունները, և հետևաբար դժվար է գնահատել նման փոքրամասնության չափը: Այնուամենայնիվ, դա կայուն փոքրամասնություն է նույնասեռական, երկսեռական և անսեռական անհատներ միշտ էլ գոյություն են ունեցել: Էական չէ՝ դու մեծամասնության մեջ ես, թե փոքրամասնության: Բոլորն ունեն սեռական կողմնորոշում, նույնիսկ եթե ընդհանրապես սեռական գրավչություն չունեն:

Ինչու՞ է փոքրամասնությունը հիմնականում նույնասեռական, երկսեռական կամ անսեռական: Մենք չգիտենք: Բայց նաև ինչու՞ է դա մեզ անհանգստացնում անհատներին արժևորելու տեսանկյունից:

Կենսաբանության ոլորտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուղեղի հիպոթալամուսի որոշակի հատված տարբերվում է տարասեռական և նույնասեռական ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների մոտ (այո, փաստագրված է, որ նույնասեռական վարքագիծը բնականոն է կենդանիների մոտավորապես 1000 տեսակների մոտ<sup>10</sup>): Նախաձննդյան հորմոնները, մասնավորապես անդրոգենի մակարդակը կարող են դեր խաղալ հիպոթալամուսի նման փոփոխության համար: Որոշ ուսումնասիրություններ բացահայտում են, որ երկվորյակների, ինչպես նաև քույրերի և եղբայրների միջև կան զուգորդումներ, որոնք վկայում են գենետիկ և Էպիգենետիկ գործընթացների մասին, սակայն ծննդի հաջորդականությունը նույնպես ստեղծում է մի շարք զուգորդումներ, ուստի ավելի շատ հետազոտությունների կարիք կա: Հասարակական գիտությունների բնագավառում ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ նույնասեռականության և բարձր մակարդակի մարդամոտության և ստեղծարարության միջև կան զուգորդումներ: Եվ կան մեկնաբանություններ, որ նույնասեռական անհատները կարծես դրականորեն են ազդում սոցիալական խմբի համախմբվածության վրա՝ լինի ընտանիք թե հասարակություն<sup>11</sup>:

Ավելին, հասարակություններում, որտեղ ընդունված է տարբեր սեռական կողմնորոշում ունենալը, բոլոր սեռական կողմնորոշումների տեր անհատները ձևավորում են փոխադարձաբար աջակցող, նվիրված հարաբերություններ և ընտանիքներ: Ի տարբերություն կարծրատիպերի՝ հասարակական գիտության բնագավառի ուսումնասիրությունները պարզել են, որ գեյերի և լեսբիների հարաբերությունները Էապես նույնն են, ինչ տարասեռական անձանց հարաբերությունները ֆունկցիոնալության և երջանկության, կայունության և նվիրվածության տեսանկյունից: Ավելին, գեյ և լեսբի զույգերը մեծացնում են երեխաներ, որոնք կամ կենսաբանորեն իրենցն են, կամ որդեգրված: Հետազոտությունները ցույց են տալիս, որ, հակառակ կարծրատիպային համոզմունքների, «լեսբի և գեյ ծնողների երեխաները իրենց զարգացմամբ, հարմարվողականությամբ կամ ընդհանուր բարեկեցությամբ Էապես չեն տարբերվում տարասեռական ծնողների երեխաներից»<sup>12</sup>:

10. Bawagan, Scientists explore the evolution of animal homosexuality, <https://www.imperial.ac.uk/news/190987/scientists-explore-evolution-animal-homosexuality/>

11. O'keefe, Homosexuality: it's about survival - not sex, [https://youtu.be/4Khn\\_z9FPmU](https://youtu.be/4Khn_z9FPmU)

12. Նույն տեղում:



Բազմազան անհատների (կամ գեյ են, կամ լեսբի, կամ երկսեռական) ճնշող մեծամասնությունը նշում է, որ ինքը չի ընտրել իր սեռական կողմնորոշումը, ինչպես մեծամասնությունը երբեք չի ընտրել տարասեռական լինելը, և որևէ մեկը՝ աջիկ կամ ձախիկ լինելը: Ավելին, հոգեբանները շեշտում են, որ թեև սեռական կողմնորոշումը սովորաբար քննարկվում է որպես անհատական հատկանիշ, այս դիտարկումը թերի է, քանի որ սեռական կողմնորոշումը բնութագրվում է անհատների միջև փոխհարաբերություններով:

Մարդիկ իրենց սեռական կողմնորոշումն արտահայտում են ուրիշների հանդեպ իրենց վարքագծի միջոցով, ներառյալ այնպիսի պարզ գործողություններով, ինչպիսիք են ձեռք բռնելը կամ համբուրելը: Այսպիսով, սեռական կողմնորոշումը սերտորեն կապված է ինտիմ անձնական հարաբերությունների հետ, որոնք բավարարում են սիրո, կապվածության և մտերմության խիստ կարիքները: Սեռական վարքագծից բացի՝ այս կապերը ներառում են ոչ սեքսուալ ֆիզիկական ջերմություն զուգընկերների միջև, ընդհանուր նպատակներ և արժեքներ, փոխադարձ աջակցություն և մշտական նվիրվածություն: Հետևաբար սեռական կողմնորոշումը անհատի համար սոսկ անձնական հատկանիշ չէ: Սեռական կողմնորոշումը նկարագրում է մարդկանց այն խումբը, որտեղ հավանաբար կգտնվեն գոհացող և բավարարող ռոմանտիկ հարաբերություններ, որոնք շատերի համար անհատական ինքնության էական բաղադրիչն են<sup>13</sup>:

Այսպիսով, իրականությունն այն է, որ, անկախ սեռական կողմնորոշումից՝ տարասեռական, նույնասեռական թե որևէ այլ, անհատները կարիք ունեն և ստեղծում են ֆիզիկական, ռոմանտիկ և փոխաջակցող սոցիալական կապեր նրանց հետ, ովքեր կիսում են իրենց սեռական կողմնորոշումը: Ըստ սահմանման՝ այսպիսի անձնական բավարարվածության հասնելու համար անհատին անհրաժեշտ է նման անհատների համայնք՝ ոչ միայն զուգընկերներ գտնելու, այլև իրենց ընդհանուր փորձը կիսելու և հասկանալու համար: Հարաբերվելու համար նրանց հետ, ում հետ ունես ընդհանուր հատկանիշներ, անհրաժեշտ է, որ համայնքը հասանելի, այսինքն՝ հանրային լինի:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ «չհամապատասխանող» փոքրամասնության հետ կապվող ենթադրյալ վնասները, օրինակ՝ ընտանիքներին և հասարակությանը պատճառվող որոշ անդամների վնասներ, որոնցից մեծամասնությունը վախենում է, իրականում հերքվում են հասարակագիտական ուսումնասիրությունների կողմից: Ինչպես ձեռքի գործածության դեպքում, այնպես էլ այստեղ ապացուցվում է, որ անհիմն են մեծամասնության կարծրատիպերն ու զուգորդումները: Թեև սեռական կողմնորոշման պատճառների վերաբերյալ ամենատարածված եզրահանգումն այն է, որ ավելի շատ հետազոտություններ են անհրաժեշտ, միակ բանը, որ գիտենք, այն է, որ միշտ եղել են տարբեր սեռական կողմնորոշման տեր անհատներ, և բազմազանությունը բնական է և էական հարմարվելու համար:

13. American Psychological Association, Sexual Orientation and Homosexuality, <https://www.apa.org/topics/lgbtq/orientation>

Այսպիսով, հնարավորությունը թույլ է տալիս փոփոխականություն ունենալ մարդու զարգացման ընթացքում հատկապես ուղեղի մասով, և տարբեր ուղեղների ամկայության արդյունքում անհատները լինում են տարբեր: Բազմազանությունը դրսևորվում է անհատականությունների, եզակի հետաքրքրությունների և ընդունակությունների, ձեռքի գործածության, սեռական կողմնորոշման և շատ այլ մարդկային հատկանիշների տեսքով: Ամենակարևորը, բազմազանությունը հարմարվելու բանալին է, պատասխանը նրա, ինչը դեռ անհայտ է, և իր բոլոր դրսևորումներով այսօր կարող է դրական դեր խաղալ դեռևս մեզ անհայտ եղանակներով հարմարվելու համար:

- *Երբ խոսքը մարդու ներքին բնության մասին է, որևէ մեկն ընտրություն ունե՞ր՝ հաշվի առնելով մարդու ֆիզիոլոգիական զարգացման մեջ հնարավորության դերը և վարքագծային հետևանքները: Կարո՞ղ է որևէ մեկը փոխել իր ներքին բնությունը:*
- *Ի՞նչ է ենթադրում կամ ինչի՞ է հանգեցնում այն փաստը, որ անհատները բնածին տարբեր են՝ ֆիզիոլոգիապես և վարքագծով, զարգացման ընթացքում հնարավորությամբ պայմանավորված փոփոխականության արդյունքում:*
- *Քննարկի՞ր մյուսների հետ՝ արդյոք մենք պետք է հարգենք և պաշտպանենք անհատների բազմազանությունը: Ինչպե՞ս կարող են դու անձամբ դա անել: Ինչպե՞ս կարող են դա անել այն խմբերը, որոնց դու պատկանում ես: Ինչպե՞ս կարող է հասարակությունը դա անել:*

**Ընտրություն. նախագործողություն, գործողություն և բազմազանության դրսևորման կերպն իրականության մեջ:**

- *Երբ ինչ-որ բան ես անում, արդյո՞ք դա չի նշանակում նաև, որ կարող էիր հակառակն անել կամ ընդհանրապես ոչինչ չանել: Յուրաքանչյուր գործողություն որևէ այլ տարբերակ մերժելու արտացոլա՞նքն է: Այս համատեքստում ցանկացած գործողություն և ցանկացած բացթողում ընտրության տարբերակի արտացոլու՞մ է՝ անկախ նրանից՝ գիտակցում ես, թե ոչ:*
- *Արդյո՞ք գիտակցում ես, թե ինչու ես վարվում այնպես, ինչպես վարվում ես: Ե՞րբ ես գործում մեր ներքին բնությանը համահունչ և ե՞րբ՝ սոցիալական ակնկալիքներին համապատասխան կամ ենթագիտակցական մակարդակում ծրագրելու արդյունքում: Կարո՞ղ ես ավելի գիտակցորեն մոտենալ այն հարցին, թե ինչպես ես գործում:*
- *Քանի որ յուրաքանչյուրս տարբեր է, կարևո՞ր է արդյոք թողնել, որ այդ բազմազանությունը դրսևորվի իրականության մեջ: Դա նույնքան արժեքավո՞ր կլիներ համայնքի համար, որքան անհատի համար:*
- *Որքանո՞վ ես վերահսկում քո կյանքը: Գնահատու՞մ ես այն գաղափարը, որ դու ես քո կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնողը: Եթե այո, ինչու՞ է դա կարևոր քեզ համար:*

Կա հնարավորություն, բայց կա նաև ընտրություն: Քո գոյությունը հնարավորության արդյունք է: Բայց դու գիտակից էակ ես և, որպես այդպիսին, գործում ես (քայլ ես ձեռնարկում), և ցանկացած գործողություն արտացոլում է ընտրություն: Երբեմն մենք գործում ենք անգիտակցաբար՝ չգիտակցելով ընտրության հնարավորությունը: Երբեմն գործում ենք սոցիալական ակնկալիքներին համապատասխանելու համար՝ հաճախ վախից դրդված: Երբեմն մենք խորհում և դիտարկում ենք տարբերակները և նույնիսկ խորհուրդ հարցնում գործելուց առաջ: Եվ երբեմն պարզապես անում ենք այն, ինչ ցանկանում ենք: Ավելին, այն, թե ինչպես ենք վարվում և արձագանքում, ինչպես ենք ապրում, գուցե տարբեր է յուրաքանչյուր մարդու դեպքում, կամ ցանկալի է, որ տարբերվեր, քանի որ հնարավորության արդյունքում մեր ուղեղները և մեր բնությունները տարբեր են: Տարբեր անհատների տարբերվող վարքագիծն ու ընտրությունը ստեղծում են բազմազանություն, քանի որ հնարավորություն են ստեղծում տարբեր հեռանկարների, մոտեցումների կամ արձագանքների գոյության, և այս ամենը միասին մեծացնում է հարմարվողականության ներուժը:

Սկզբունքորեն գիտակցության արդյունքում հնարավոր է լինում ընկալել շրջապատը և արձագանքել դրան. առօրյա կյանքում անում ենք տարբեր բաներ, այդ թվում՝ տարրական: Դրանցից են շոգին կամ ցրտին, ծարավին կամ քաղցին արձագանքելը կամ զգալն ու խուսափելը ակնկալվող վտանգներից: Բացի դրանից, ինչպես նշվեց վերևում, դասակարգման և վերադասակարգման միջոցով մենք օգտագործում ենք սահմանումներ՝ ստեղծելով ընդհանրացումներ: Այնուհետև, երբ հանդիպում ենք որևէ նոր բանի՝ լինի իր կամ փորձառություն, այն համեմատում ենք մինչ այդ իմացածի կամ մինչ այդ տեղի ունեցածի հետ ու այնուհետև նորը զուգորդում մեր նախապես ստեղծած դասակարգերից մեկի հետ: Կարևորն այն է, որ սա մեզ թույլ է տալիս ինչ-որ նոր բանի արձագանքել այնպես, ինչպես մենք միշտ արձագանքել ենք նմանօրինակ դեպքերում: Այս կերպ մենք սովորում ենք արձագանքել՝ առանց գիտակցելու, քանի որ դա ավելի հեշտ է և օգնում է մեզ պահպանելու մեր մտավոր էներգիան:

Ինքնաբերաբար արվող արձագանքները հիմնված են ավելի շատ հույզերի, քան տրամաբանության վրա, իսկ փորձարկումների արդյունքում պարզվել է, որ մեր ուղեղի հուզական կենտրոնները մեզ համար ընտրություն են կատարում մոտավորապես յոթ վայրկյանի ընթացքում, նախքան անգամ մենք կգիտակցենք, որ ընտրություն ենք կատարել<sup>14</sup>: Սրանք մեր կողմից գիտակցված ընտրություններ չեն, այլ ընտրություններ են այն իմաստով, որ եթե մտածեինք մինչ գործելը, հնարավոր է՝ այլ կերպ վարվեինք, կարող էինք ընտրել այլ ընտրանքային կերպով գործելը: **Մտածիր քո առօրյա գործողությունների և այն մասին, թե ինչպես ես գործում առանց նախապես ակտիվ մտածելու: Քանի՞ բան ես անում առանց գիտակցաբար որոշելու:**

Նմանապես, հաճախ մենք վարվում ենք այնպես, ինչպես հասարակությունն է ակնկալում մեզից, և դա նույնպես կապված է մեր դասակարգումների հետ: Այդ դասակարգումների մեծ մասը մեզ սովորեցնում է, և մենք գործում ենք նրանց հիման վրա՝ առանց

14. Liljenstrom, Consciousness, decision making, and volition: freedom beyond chance and necessity, 2021, <https://link.springer.com/article/10.1007/s12064-021-00346-6>

դրանք գիտակցորեն դիտարկելու: Օրինակ՝ ամուսնության թեման քննարկելիս հասարակագիտության տասներորդ դասարանի դասագրքում նշված է հետևյալը.

«Ամերիկացի հոգեբան Ու. Ֆ. Հարլին առանձնացնում է տղամարդկանց և կանանց հինգական հիմնական պահանջմունքներ, որոնց բավարարումն ապահովում է ամուսնության կայունությունը, իսկ անբավարարվածությունը հանգեցնում է կոնֆլիկտի՝ ընդհուպ ամուսնալուծության: Տղամարդկանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) սեռական բավարարվածություն, 2) հանգստի ուղեկից, 3) հմայիչ կին, 4) տնային տնտեսության վարում, 5) հիացմունք: Կանանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) քնքշություն, 2) խոսելու, զրուցելու հնարավորություն, 3) ազնվություն և անկեղծություն, 4) ֆինանսական աջակցություն, 5) ընտանիքին նվիրվածություն»:

Հետաքրքրական է, որ պարոն Հարլին ոչ թե ակադեմիկոս, այլ թերապևտ է և իր՝ ուղեցույց հանդիսացող գրքում նա երբեք չի նշել այն, ինչ նկարագրված է հայկական դասագրքում: Պարոն Հարլին գրել է, որ բոլոր անհատները (և՛ տղամարդիկ, և՛ կանայք) ունեն տասը կարիքներ, այլ ոչ թե տղամարդիկ և կանայք ունեն իրարից տարբերվող հինգական կարիքներ: Ըստ պարոն Հարլիի՝ տղամարդիկ և կանայք սովորաբար առաջնահերթություն են տալիս իրենց տասը կարիքներին՝ հակադրվելով միմյանց: Վերջիվերջո հայկական դասագրքում նշված «պահանջմունքները» ճիշտ չեն ներկայացնում պարոն Հարլիի նշած տասը կարիքները:

Ինչու՞ էին թերապևտի մտքերը աղավաղված ներկայացված հայկական դասագրքում: Ամենայն հավանականությամբ դա հակադիրների տիրույթում մտածելու արդյունքն է, համաձայն որի՝ այն դասակարգը, որը մենք անվանում ենք տղամարդիկ, պետք է հակադիր լինի այն դասակարգին, որը մենք անվանում ենք կանայք, որպեսզի տղամարդն ու կինը նկարագրվեն հակադրության մեջ, ու այսպիսով հայ հեղինակները յուրաքանչյուրի համար գրել են հինգ հակադիր պահանջմունքներ: Սա օրինակ է այն բանի, թե ինչպես է մշակույթը թելադրում դասակարգեր, և ինչպես է հասարակությունը շարունակական կերպով մտածում հակադիրների տիրույթում: Բայց նման զուգահեռ, «կամ-կամ» ընկալումը չի համապատասխանում իրականությանը:

Պարզ լինելու համար նշենք, որ տղամարդկանց և կանանց հակադրորեն դասակարգելով՝ դասագիրքը տպավորություն է ստեղծվում, որ, օրինակ, հարաբերություններում կանայք սեռական կարիքներ չունեն, իսկ տղամարդիկ չունեն շփման, ազնվության և անկեղծության կարիք: Բացի դրանից՝ ինչու՞ ընտանիքին նվիրվածությունը սեռերից մեկի պահանջմունքը պետք է լինի՝ հաշվի առնելով, թե ինչքան հաճախ է մեզ ասվում, որ հայերը գնահատում են ընտանիքը: Ինչպես նաև հայկական իրականությունն այն է, որ ավելի հաճախ կանայք աշխատում և վաստակում են տղամարդկանց չափ: Այսպիսով, նկարագրված հակադրությունների մոդելը չի համապատասխանում իրականությանը: Հետաքրքիր է, որ դասագիրքը չի առաջարկում, որ հարաբերությունների մեջ գտնվող զույգերը միմյանց հետ խոսեն իրենց առանձնահատուկ կարիքների և ցանկությունների մասին որպես տարբեր անհատներ:

Է՛լ ավելի վատ է այն, որ, ըստ դասագրքի, բոլոր տղամարդիկ համարվում են նույնը, և բոլոր կանայք՝ կրկին նույնը, քանի որ դասագիրքը ներկայացնում է երկու հակադիր ընդհանրացումներ՝ հիմնված սեռի վրա: Այս կերպ դասագիրքը ամրապնդում է սոցիալական ակնկալիքը, որ տղամարդ լինելու համար արական սեռի ուսանողները պետք է համապատասխանեն արականի ընդհանրացմանը, իսկ կին լինելու համար իգական սեռի ուսանողները պետք է համապատասխանեն հակառակ ընդհանրացմանը: Հաճախ անհատները վախենում են, որ եթե չհամապատասխանեն ընդհանրացմանը կամ սոցիալական ակնկալիքին, ապա կքննադատվեն կամ կօտարվեն: Այսպիսով, նման սոցիալական ակնկալիքները ճնշում են անհատական բնությունը կամ առնվազն թույլ չեն տալիս, որ դրսևորվի անհատական բազմազանությունը, քանի որ ակնկալիքները թելադրում են, թե ինչպես վարվեն անհատները: Ընտրությունը սահմանափակված է կամ ժխտված:

Սոցիալական ակնկալիքները կամ մշակույթի վրա հիմնված զուգորդումները, ինչպիսիք են նրանք, որոնք վերաբերում են տղամարդկանց և կանանց, կարող են սահմանափակել ընտրությունը և հետևաբար խաթարել անհատական բազմազանությունը տարբեր ձևերով: Մի քանի տարի շարունակ ես իրավաբանություն էի դասավանդում Հայաստանում, և իմ ամենամոտիվացված ուսանողներից մեկը մի երիտասարդ կին էր, որ միշտ իմացել էր, որ ցանկանում է իրավաբան լինել, բայց փոխարենը բակալավրիատում ջութակ նվագել էր սովորել, քանի որ ծնողներն էին որոշել իր փոխարեն: Հաճախ լսում ենք, որ ծնողներն ընտրում են, որ իրենց դուստրերը լեզուներ սովորեն, քանի որ դա կանանց համար հարմար մասնագիտություն է: Տղամարդիկ նույնպես ուղղորդվում են դեպի «տղամարդկանց համապատասխան» կարիերան: Միշտ, սակայն, նկատել եմ, որ լավագույն ու ամենանվիրված ուսանողը նա է, ով ընտրել է այն, ինչ սովորում է, քանի որ խանդավառված է այդ բնագավառով: Ուսանողուհին, որը սովորում էր ջութակ նվագել, բայց ցանկանում էր իրավաբան լինել, ստիպված էր պայքարել, որպեսզի սկսի ուսումնասիրել իրավաբանություն: Նա ուշ սկսեց և մյուս ուսանողների համեմատ անբարենպաստ վիճակում էր, բայց նա հաջողեց և այժմ առաջ է գնում որպես իրավաբան ու երջանիկ է: Երբ անհատը կատարում է ընտրություն և գործում է իր բնությանը և ներքին հետաքրքրությանը համապատասխան, նա գերազանց արդյունք է ունենում:

Ապահովելը, որ անհատները կարողանան իրենց առանձնահատուկ բնությանը համընկնող ընտրություն կատարել, լավ է ոչ միայն անհատի համար, այլ նաև հասարակության: Նոբելյան մրցանակի դափնեկիր Ամարտյա Սենը իր «Չարագցումը՝ որպես ազատություն» գրքում ցույց է տալիս, որ զարգացումը տնտեսության մասին չէ, քանի որ իրականում զարգացած հասարակությունը զարգացած անհատների համախումբ է<sup>15</sup>: Հասարակությունը բաղկացած է անհատներից: Չարագցած անհատն ավելի շատ ներդրում կարող է ունենալ հասարակության համար: Որքան զարգացած լինեն անհատները, և որքան շատ լինեն հասարակության մեջ զարգացած անհատները, այնքան ավելի լավ որակի ու քանակի մարդկային ռեսուրս կունենա հասարակությունը: Բայց ինչպե՞ս են այդ անհատները զարգանում: Հասարակությունը չգիտի յուրաքանչյուր անհատի թաքնված տաղանդի կամ ներքին հետաքրքրությունների մասին: Հասարակութ-

15. Sen, Development as Freedom, 1999, <https://www.uio.no/studier/emner/matnat/ifi/INF9200/v10/readings/papers/Sen.pdf>

յունը չի կարող քեզ զարգացնել առանց քո մասնակցության: Ես ուսուցիչ եմ, բայց չեմ կարող ստիպել քեզ սովորել:

Անհատական զարգացման բանալին «դերակատար» լինելն է, այսինքն՝ պատասխանատու ընտրությունը: Միայն անհատը կարող է բացահայտել ինքն իրեն, բացահայտել, թե ինչն է իրեն ամենաշատը հետաքրքրում, ինչով է խանդավառված, և որն է իր կոչումը, և այնուհետև ընտրել իր հետաքրքրությունների հետևից գնալը: Հասարակությունը կարող է անհատներին հնարավորություններ տալ, բայց միայն անհատը կարող է որոշել, թե որ հնարավորությունից օգտվի՝ հուսանք՝ հիմնվելով իր հետաքրքրություններին, տաղանդին և ներքին բնությանը լավագույն համապատասխանող հնարավորությունների վրա: Հետևաբար ցանկացած ծնողի, ուսուցչի կամ դաստիարակի դերը ոչ թե ինչ-որ մեկի փոխարեն որոշում կայացնելն է, այլ օգնելը՝ ունենալու իր ներքին հավանություններն ու հակակրանքները, տաղանդն ու հետաքրքրությունները բացահայտող նոր փորձառություններ, որպեսզի անհատը կարողանա պատասխանատու ընտրություն կատարել իր համար: Մենք բոլորս ընտրություն կատարելու փորձ ունենալու կարիք ունենք:

Ինչպես նախանշում է Սենի գրքի վերնագիրը, ազատությունները պատասխանատու ընտրության հիմքն են, և ընտրությունը թույլ է տալիս անհատներին զարգանալ՝ բացահայտելով և իրականում դրսևորելով իրենց եզակիությունը: Հասարակությունը չի կարող ենթարկվել ինժեներական աշխատանքների և մարդկային անօդաչու սարքերի կարիք չունի: Հասարակությունը պետք է լինի օրգանական՝ թույլ տալով, որ անհատների բնական բազմազանությունն ի հայտ գա, զարգանա և արտահայտվի անհատների կողմից: Ըստ Սենի՝ նման հիմնարար ազատություններն ավելին են, քան պարզապես ընտրությանը աջակցելը կրթական տեսանկյունից: Որպեսզի անհատներն ազատ լինեն ընտրություն կատարելու համար, հասարակությունը պետք է հիմնարար երաշխիքներ տրամադրի բոլոր այն չարիքների դեմ, որոնք խանգարում են անհատին ինքնագարգանալ, ներառյալ հիվանդացությունը և վատառողջությունը, աղքատությունը, սոցիալական և տնտեսական բացառումը, ինչպես նաև կոռուպցիայից բխող անարդարությունը, այսինքն՝ մյուսների հաշվին հարստացած խաբեբաները: Նման երաշխիքները համապատասխանում են մարդու հիմնարար իրավունքներին, ինչպիսիք են կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության, առողջապահության, բավարար կենսամակարդակի, հավասարության և խտրականության բացակայության իրավունքները, ինչպես նաև այնպիսի համակարգերին, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը և թափանցիկության այլ երաշխիքներ, որոնք ապահովում են հաշվետվողականություն և արդարություն: Այսպիսով, մարդու իրավունքները պաշտպանում են ազատությունները, որոնք անհատների համար պատասխանատու ընտրություն իրականացնելու հիմքն են, և միայն պատասխանատու ընտրության միջոցով են անհատներն իրականում դրսևորում իրենց բազմազանությունն ու եզակիությունը, ինչը կարևոր է հարմարվողականության համար:

Բայց նույնիսկ սա ամբողջ պատմությունը չէ: «Չարգացումը՝ որպես ազատություն» գրքում Սենը նշում է, որ անհատներն իրենց ամենաշատը լավ են զգում և անում են իրենց լավագույնը, երբ երջանիկ և բավարարված են, երբ ապրում են այնպիսի կյան-

քով, որն իմաստ է հաղորդում: Ինքնաբավ կյանքով ապրելը պետք է համապատասխանի մարդու սեփական, այլ ոչ թե ուրիշի բնությանը, և բավարարված ու երջանիկ մարդն ավելի հավանական է, որ իր նպաստն ու ներդրումը բերի իր հասարակությանը և նրա հետագա զարգացմանը: Այսպիսով, մարդու իրավունքները, որոնք ապահովում են ազատություններ, ոչ միայն ազատություններ են, որոնք օգնում են մարդուն զբաղվելու իրենց ընտրած կարիերայով, այլև իրավունքներ և ազատություններ են՝ ապրելու այնպես, ինչպես կանք՝ ներառյալ կրթությանը և կարիերային վերաբերող հարցերից մինչև այնպիսի հիմնարար հարցեր, ինչպիսին է սեռական կողմնորոշումը: Երբ մարդիկ չեն կարողանում ապրել իրենց համար իմաստալից կյանքով, երբ մարդիկ երջանիկ չեն, նրանք հեռանում են: Քանի՞ հոգի է արտագաղթել Հայաստանից: Դու գիտես գոնե մեկին: Ինչու՞ հեռացան:

Հաշվի առնելով, թե որքան հաճախ են դասակարգումը և սոցիալական ակնկալիքները ավտոմատ կերպով տրվող պատասխանների պատճառ լինում և արգելակում այլընտրանքներ դիտարկելու մեր կարողությունները նախքան մեր գործելը, հարց է առաջանում, թե որքանով ենք ընտրություն կատարում և որոշումներ կայացնում մեր իսկական ներքին «ես»-ին համապատասխան: Եթե մենք չենք վերահսկում մեր սեփական կյանքը, ապա ո՞վ է այն վերահսկում: Երբ չենք կատարում այնպիսի ընտրություն, որը համապատասխանում է մեր ճշմարիտ բնությանը, ինչպե՞ս կարող ենք հետևել մեր ներքին բնությանը և իրականում դրսևորել հեռանկարների, մոտեցումների և վարքագծի բազմազանություն, որը կարող է հարմարվողականություն ստեղծել: Բացի դրանից՝ ինչպե՞ս կարող ենք երջանիկ լինել:

Անհատի խնդիրն է զարգացնել ինքն իրեն, քանի որ ոչ ոք չի կարող բացահայտել քո հետաքրքրությունները, տաղանդն ու ներքին բնությունը, և, ի վերջո, դու կատարում ես այնպիսի ընտրություններ, որոնք կարող են քո միջի բազմազանության ինքնադրսևորման համար ավելի մեծ հարթակ լինել: Հասարակության խնդիրն է մարդու իրավունքների միջոցով երաշխավորել այն հիմնարար ազատությունները, որոնք թույլ են տալիս և աջակցում անհատի ինքնաբացահայտմանը, ինքնազարգացմանը և, վերջիվերջո, անհատական կատարելագործմանը՝ ստեղծելով զարգացած անհատ, որը մյուսների հետ միասին ստեղծում է զարգացած հասարակություն:

- *Ինչպե՞ս կարող ենք ապահովել, որ բազմազանությունը, որն արտացոլում է մեր իրական բնությունը որպես անհատ, դրսևորվի իրականում, որպեսզի նպաստի հարմարվողականությանը:*
- *Այս առումով ի՞նչ պատասխանատվություն է կրում անհատը: Ինչպե՞ս պետք է անհատը բացահայտի իր տաղանդն ու հետաքրքրությունները և զարգացնի դրանք:*
- *Եթե մենք չենք վերահսկում մեր սեփական կյանքը, ապա ո՞վ է այն վերահսկում:*
- *Բացի այդ, ո՞րն է մեր պատասխանատվությունը որպես քույր, եղբայր կամ ընկեր և մի օր որպես ծնող նրանց նկատմամբ, ովքեր բացահայտում են իրենց ներքին բնությունը և ինքնազարգանում:*
- *Ի վերջո, ո՞րն է հասարակության դերը նպաստելու այն գործընթացին, որով անհատները կարող են բացահայտել և զարգացնել իրենց ներքին բնությունը: Ինչպե՞ս են մարդու իրավունքները հարաբերվում այս թեմայի հետ:*

## Արժանապատվություն

*Դու գիտե՞ս՝ երբ են քեզ վերաբերվում այնպես, ինչպես մյուսներին, և երբ են քեզ այլ կերպ վերաբերվում: Որտեղի՞ց գիտես: Չգու՞մ ես:*

*Ո՞ւմ կյանքն ես ապրում: Ինչպե՞ս ես զգում, երբ ինքդ ես քեզ համար ընտրություն կատարում և ինչպե՞ս, երբ ուրիշներն են ընտրում քո փոխարեն:*

Արժանապատվությունը անհատական արժեք է: Արժանապատվությունը այն պնդումն է, որ յուրաքանչյուրս մեզնից արժեք է ներկայացնում ելնելով մեր ընդհանուր մարդկային արժանությունից: Դրա հիմքում հավասար վերաբերմունքը, արդարությունը և ընտրությունն են: Արժանապատվությունն առավելապես հայտնի է նրանով, որ խախտվում է:

Ապացուցված է, որ հավասար վերաբերմունքի արժանանալու ներքին ակնկալիքը խախտելը խախտում է արժանապատվությունը: Կենդանիների բարոյականության վերաբերյալ մի շարք փորձարկումների ժամանակ երկու կապիկների տրվում է նույն առաջադրանքը պարզևի դիմաց: Առաջադրանքը կատարելուց հետո առաջին կապիկը որպես պարգև ստանում է վարունգի մի կտոր և վերցնում այն: Երկրորդ կապիկը այնուհետև որպես պարգև խաղող է ստանում: Տեսնելով, որ երկրորդ կապիկը խաղող է ստացել և ոչ վարունգ, երկրորդ անգամ առաջադրանքը կատարելիս առաջին կապիկը մերժում է վարունգը և փոխարենը պահանջում խաղող<sup>16</sup>: Այլ կերպ ասած՝ առաջին կապիկը տեսնում է անհավասար վերաբերմունք և բնազդաբար արձագանքում՝ պահանջելով հավասար վերաբերմունք: Սա *արդարություն* հասկացության արտացոլանքն է, ինքնազնահատականի՝ արտացոլանքն է, արժանապատվության արտացոլանքն է:

Որպես գիտակից էակներ՝ մարդիկ (և ոչ միայն մարդիկ) ընկալում են միջավայրը և արձագանքում դրան, այդ թվում՝ անարդարությանը: Թեև մեր առօրյա կյանքը բաղկացած է այնպիսի գործողություններից, ինչպիսիք են շոգին կամ ցրտին, ծարավին կամ քաղցին արձագանքելը կամ զգալը և ակնկալվող վտանգներից խուսափելը, մեկ այլ հարթության վրա մենք ընկալում ենք մեզ և ուրիշներին որպես անհատներ, որոնցից յուրաքանչյուրը մի բաղադրյալ սուբյեկտ է թե՛ ֆիզիկապես, թե՛ զգայապես՝ ցանկություններով ու կարիքներով, հույսերով ու երազանքներով: Այս համատեքստում մենք ոչ միայն արձագանքում, այլև հարաբերվում ենք միմյանց հետ, հաճախ օգնում միմյանց, կիսվում միմյանց հետ, նույնիսկ միասին կերտում երևակայական ապագա:

Սրանից բխում է, որ մարդիկ սոցիալական էակներ են, ուրեմն մենք գոյատևում և բարգավաճում ենք խմբերով, և արդարությունը էական է այս խմբի դինամիկայի համար: Դա հիմնավորվում է Էվոլյուցիոն գիտությամբ, որը կարևորում է թե՛ անհատական պատրաստվածության (երբ անհատը լավագույնս պատրաստ է գոյատևման համար), թե՛ խմբային պատրաստվածության (երբ խումբը լավագույնս պատրաստ է գոյատևման համար) դերը: Երբ խմբի ֆունկցիոնալությունը բարձր է, դա նպաստում է խմբի ներսում անհատների գոյատևմանը և զարգացմանը: Միևնույն ժամանակ բարձր ֆունկցիոնա-

16. Frans de Waal, Moral Behavior in Animals, <https://www.youtube.com/watch?v=meiU6TxysCg>



լությամբ խմբի հիմքում անհատների համագործակցությունն է: Էվոլյուցիոն հոգեբանությունը ներկայացնում է երեխաների խմբային խնամքի օրինակը. պրիմատների մեծ մասի դեպքում ծնողը հոգ է տանում միայն իր սերնդի մասին, իսկ մարդկային խմբերում զարգացման ընթացքում բոլոր մեծահասակները աջակցել են խմբի բոլոր երեխաների խնամքին և զարգացմանը: Դա հանգեցրել է երեխաների գոյատևման թվի աճին, որոնք նաև ավելի հմուտ էին գոյատևման հարցում, բարձրացրել է խմբի պատրաստվածությունը, որն իր հերթին օգուտ է բերել խմբի անհատներին: Այսպիսով, հայտնի է, որ մարդիկ զարգացել են, որ բարգավաճեն՝ հիմնվելով խմբային պատրաստվածության վրա (ոչ թե անհատական պատրաստվածության վրա), և հայտնի է, որ խմբային պատրաստվածությունը հիմնված է համագործակցության վրա<sup>17</sup>:

Հասարակական գիտությունների բնագառում փորձարկումներն այսօր նաև ապացուցում են, որ պրոսոցիալական վարքագիծը՝ «սիրալիր, համագործակցաբար և ուրիշների հանդեպ կարեկցանքով գործելը»<sup>18</sup>, տարածված է մարդկանց շրջանում: Իրականում պարզվում է, որ պրոսոցիալական վարքագիծը ոչ միայն նպաստում է խմբի ֆունկցիոնալությանը և դրանով իսկ անուղղակիորեն օգուտ բերում անհատներին, այլև այն ուղղակիորեն օգուտ է բերում անհատներին հոգեբանորեն և ֆիզիոլոգիապես: Փորձարկումները ցույց են տալիս, որ բարությանը գործելը և բարությանը ականատես լինելն արտադրում են օգտակար հորմոններ, որոնք մեզ երջանիկ են դարձնում<sup>19</sup>: Փորձարկումները նաև ցույց են տալիս, որ նման դրական հույզերը խթանում են Էլ ավելի պրոսոցիալական շփում, և որ «[նման] ընտրությունները դրական հույզերի հետ միասին ուժեղացնում են սրտանոթային և ֆիզիոլոգիական իմունային ազդակները՝ այդպիսով բարելավելով առողջությունը և նպաստելով երկարակեցությանը»<sup>20</sup>: Այսպիսով, պրոսոցիալական լինելը և՛ շահավետ է, և՛ նորմ. ավելի հավանական է, որ մենք միմյանց նկատմամբ վարվենք պրոսոցիալական կերպով, քան հակառակը:

Ավելին, կան նաև ապացույցներ, որ ալտրուիզմը՝ սեփական անձի բարօրության հաշվին հոգուտ ուրիշների որոշակիորեն գործելը, նույնպես համատարած է մարդկանց մեջ: Փաստորեն դա կարող է լինել մեր սկզբնական «կարգավորումը»: Օրինակ՝ մի իրական դեպք է եղել, երբ Լոնդոնում ջրանցքի կողքով զբոսնող տղամարդը տեսնում է ջրին վախեցած նայող աղջկա և.

«Նախքան իմանալը, թե ինչու, նա վերարկուն ու փողկապը հագին ցատկում է ջրի մեջ: Եվ միայն այն ժամանակ, երբ արդեն ջրի մեջ էր, հասկանում է, որ աղջիկը ցնցված նայում էր մի փոքրիկի, որ ընկել էր ջրի մեջ, և որին ինքը կարողացավ փրկել»:

«Ի՞նչը ստիպեց նրան ցատկել ջրի մեջ նախքան կհասկանար, թե ինչու: Շատ հավանական է, որ դրա պատասխանը նրա ուղեղի ամիգդալայի հետ էր կապված: Լեդուի աշխատանքը, որը հույզերի մասին վերջին տասնամյակի ամենահայտնի

17. David Sloan Wilson, Does Altruism Exist? Culture, Genes and the Welfare of Others. New Haven: Yale University Press, 2015, էջ 9:

18. Hui, Rewards of Kindness? A Meta-Analysis of the Link Between Prosociality and Well-Being, <https://www.apa.org/pubs/journals/releases/bul-bul0000298.pdf>, էջ 2:

19. The Science of Kindness, <https://www.randomactsofkindness.org/the-science-of-kindness>

20. Hui, Rewards of Kindness? A Meta-Analysis of the Link Between Prosociality and Well-Being, <https://www.apa.org/pubs/journals/releases/bul-bul0000298.pdf>, էջ 3:

հայտնագործություններից մեկի մասին է, բացահայտում է, թե ինչպես է ուղեղի կառուցվածքը ամիգդալային տալիս արտոնյալ դիրք՝ որպես էմոցիոնալ պահակ, որ կարող է զավթել ուղեղը: Նրա հետազոտությունը ցույց է տվել, որ աչքի կամ ականջի զգայական ազդանշանները սկզբում ուղեղով անցնում են թալամուս, իսկ հետո՝ մեկ սինապսով դեպի ամիգդալա: Թալամուսից երկրորդ ազդանշանն ուղղվում է դեպի նեոկորտեքս՝ մտածող ուղեղ: Այս ճյուղավորումը թույլ է տալիս, որ ամիգդալան սկսի արձագանքել նեոկորտեքսից առաջ, որը տեղեկությունը վերլուծում է ուղեղի շղթաների մի քանի մակարդակներով նախքան այն ամբողջությամբ ընկալելը և վերջապես տալիս է իր ավելի թիրախային արձագանքը»<sup>21</sup>:

Այսպիսով, մարդիկ «կառուցված» են էմոցիաներով արձագանքելու և ալտրուիզմի հիման վրա փոխգործակցելու համար: Իհարկե, սա միակ օրինակը չէ: Ձեզ հայտնի են տարբեր հերոսներ, որոնք տարբեր չափի զոհաբերությունների են գնում հանուն այլ անհատների և այդպիսով բարձրացնում են խմբի ֆունկցիոնալության մակարդակը: Գործելը, շփվելը, ուրիշներին օգնելու համար քայլ անելը մարդկային սկզբնական «կարգավորում» է. դա մեր բնույթն է:

Բայց մենք միշտ չէ, որ բարյացակամորեն, համագործակցաբար կամ ալտրուիզմից դրդված ենք վարվում միմյանց հետ, և դա փոխադարձության և վստահության խնդիր է: Ալտրուիզմը հետազոտելիս ակադեմիկոս Դեյվիդ Սլոան Ռիլսոնը բացահայտել է, որ եսասեր անհատները առավելություն ունեն խմբի ներսում անշահախնդիր անհատների նկատմամբ, բայց ալտրուիզմով առաջնորդվող անհատների մեծ քանակ ունեցող խմբերը հարաբերական առավելություն ունեն տարբեր խմբերի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ «խմբերի ներսում եսասիրությունը հաղթում է ալտրուիզմին: Ալտրուիզմով առաջնորդվող խմբերը հաղթում են եսասեր խմբերին»<sup>22</sup>: Միշտ խաբեբաներ կան. խաբեբաները խաթարում են խմբերի ֆունկցիոնալությունը՝ ի վնաս խմբի մյուս անդամների, և, ի վերջո, ի վնաս նաև իրենց՝ թուլացնելով խումբը:

Այսպիսով, համագործակցությունը խթանվում է խմբի բոլոր անհատների միջև, երբ ամեն ինչ արդար է, քանի որ արդարությունը յուրաքանչյուր անհատի՝ իր անհատական ներդրումներին համարժեք օգուտ ստանալն է, այդպիսով անհատը խրախուսվում է համագործակցությունը շարունակելու համար: Այնուամենայնիվ, երբ որոշ անհատներ խաբում են, կամ երբ իրավիճակները, գործընթացները կամ համակարգերը արդար չեն, մենք վիրավորված ենք զգում, զգում ենք, որ մեր անհատական արժեքը՝ մեր արժանապատվությունը, անարդարացիորեն նվազագույնի է հասցվում: Որպես սոցիալական էակներ՝ մենք զարգացրել ենք անարդարությունը զգալու, վիրավորանքը զգալու կարողությունը, ինչն իր հերթին ապացուցում է, որ յուրաքանչյուրս արժանապատվություն ունի, քանի որ կարող է դադարեցնել համագործակցությունը, որպեսզի պաշտպանի այդ արժանապատվությունը և ինքնազնահատականը մյուսների անարդար առավելությունից:

21. Goleman, Emotional Intelligence, <https://asantelim.files.wordpress.com/2018/05/daniel-goleman-emotional-intelligence.pdf>

22. David Sloan Wilson, Does Altruism Exist? Culture, Genes and the Welfare of Others. New Haven: Yale University Press, 2015, էջ 23:

Ի հավելումն անհավասար վերաբերմունքի և անարդարության՝ ուրիշի կամ սեփական արժանապատվությունը վիրավորելու մեկ այլ ձև է կամքը կամ պատասխանատու ընտրությունը պարտադրելը՝ մյուսի փոխարեն որոշումներ կայացնելով՝ նրա հետ խորհրդակցելու փոխարեն: Ընկերներիցս մեկը պատմում է, որ տասնամյակներ առաջ, երբ ապրում էր արտասահմանում, հայրը, ծանր հիվանդանալով, ի վերջո մահացել է: Իմանալով, որ նրա համար դժվար կլինի վերադառնալ տուն՝ տեսնելու հորը նախքան վերջինիս մահը կամ մասնակցելու նրա հուղարկավորությանը, նրա քույրերն ու եղբայրները որոշել են իրեն չպատմել հոր վիճակի մասին մինչև նրա թաղումը: Միգուցե նրա համար հնարավոր չլիներ ժամանակին տուն վերադառնալ կամ գուցե հնարավոր լիներ, բայց ամեն դեպքում, երբ նա իմացել է, արդեն ուշ է եղել ընտրություն կատարելու համար: Ընկերս բողոքել է իր քույր-եղբայրներին, որ ինքը պետք է տեղեկացված լիներ, որպեսզի որոշում կայացնել՝ ճամփորդել, թե ոչ: Բայց մի քանի տարի անց նույն իրավիճակը կրկնվել է. մայրը հիվանդացել և հետո մահացել է, բայց ընկերս նորից տեղեկացել է դրա մասին միայն թաղումից հետո:

Մշակութային տեսանկյունից կարելի է պնդել, որ քույրերն ու եղբայրները փորձում էին պաշտպանել իրենց քրոջը ճամփորդելու ընտրության սթրեսից. նա պետք է որոշեր, թե արդյոք կկարողանար ժամանակին հետ գնալ իր ծնողներին տեսնելու կամ նրանց հուղարկավորությանը մասնակցելու: Բայց հոր մահից հետո ընկերս հստակ ասել էր իր քույրերին ու եղբայրներին, որ իրեն տեղեկացնեն նման լուրջ իրադարձությունների մասին: Արդյունքում նա վիրավորված էր իրեն զգում: Նա զգում էր, որ իր եղբայրներն ու քույրերը չեն հարգում իրեն, քանի որ չեն հարգում դժվար որոշումներ կայացնելու իր կարողությունը: Նրա հետ խորհրդակցելու փոխարեն նրա համար ընտրություն է կատարվել: Մյուսները վերահսկել են նրա կյանքը:

Բայց պատմությունն այսքանով չի ավարտվում: Հաջորդ անգամ, երբ ընկերս վերադարձել է տուն իր մեծ ընտանիքի մոտ, հավաքել է իր զարմիկներին ու զարմուհիներին և նրանց բացատրել տեղեկատվության կարևորությունն ու արժեքը, որպեսզի հարգանքի արժանանա յուրաքանչյուր անհատի՝ սեփական ընտրություն կատարելու իրավունքը: Այդ ժամանակից ի վեր ընտանեկան մշակույթը փոխվել է, և տեղեկությունը չի թաքցվում ուրիշներին պաշտպանելու պատրվակով, այլ ավելի շուտ տեղեկությունը կիսվում է, որպեսզի յուրաքանչյուրն ունենա ընտրության հնարավորություն:

Այսպիսով, քանի որ յուրաքանչյուրս վիրավորվում է անհավասար վերաբերմունքից, անարդարությունից և ընտրության հարցում իրավագրկումից, յուրաքանչյուրս ունի արժանապատվություն: Արժանապատվությունը բնորոշ է մեզնից յուրաքանչյուրին: Արժանապատվությունը անհատական ինքնագնահատականի մեր ներքին զգացողությունն է, որն արմատավորված է մեր ընդհանուր մարդասիրության մեջ: Ավելին, արժանապատվությունը մեր անձնական ուղեցույցն է, քանի որ դրա շեղումը մեզ հուշում է, որ ենթարկվում ենք անհավասար վերաբերմունքի, անարդարության, կամ որ ուրիշները մեր կյանքը մեզնից շատ են վերահսկում: Որքան ավելի հավասար վերաբերմունք լինի, որքան ավելի արդար լինի իրավիճակը, որքան ավելի շատ կատարենք ընտրություն, այնքան բարձր կլինեն մեր արժանապատվությունը և ինքնագնահատականը և հետևա-

բար մեր և ուրիշների միջև համագործակցության ներուժը և խմբի ֆունկցիոնալության ներուժի մակարդակը: Որքան անհավասար է վերաբերմունքը, այնքան անարդար է իրավիճակը, որքան քիչ ընտրություն ենք կատարում, այնքան ցածր են մեր արժանապատվությունը և ինքնագնահատականը, հետևաբար ավելի ցածր է մեր և այլոց միջև համագործակցության ներուժի մակարդակը և նույնքան ցածր՝ խմբային ֆունկցիոնալության ներուժի մակարդակը: Այս պատճառով մեզնից յուրաքանչյուրի արժանապատվության պահպանումը ծառայում է թե՛ անհատին, թե՛ իր համայնքին: Այս պատճառով մարդու իրավունքները հռչակում են, որ յուրաքանչյուրս ծնվել է ազատ (այսինքն՝ մեզ հնարավորություն է տրված իրականացնելու պատասխանատու ընտրություն), և յուրաքանչյուրս հավասար է արժանապատվությամբ (այսինքն՝ արժեքով), ինչպես նաև իրավունքներով: Ուրեմն, ի՞նչ են իրավունքները:

## Իրավունքներ

*Քո զգացողությամբ՝ ի՞նչ իրավունքներ ունես:*

*Պատրաստ ես հարգել այն փաստը, որ մյուսները նույնպես ունեն նույն իրավունքները:*

*Երբևէ զգացել ես, որ քո իրավունքներից որևէ մեկը խախտվել է: Ի՞նչը կարող է լինել արժանապատվության և իրավունքների միջև կապը:*

*Ի՞նչ ես պատրաստ անել մյուսների իրավունքները պաշտպանելու համար, որպեսզի մյուսներն էլ պաշտպանեն քո իրավունքները:*

Իրավունքները ձևակերպում են արժանապատվության ասպեկտները: Իրավունքներն արտահայտում են, թե ինչպես ենք հավաքականորեն և համագործակցաբար պաշտպանում մեզնից յուրաքանչյուրի արժանապատվությունը: Իրավունքները հարգանքի անհատական պահանջի արտացոլանքն են, ինչը հավասարակշռվում է բոլոր մյուսների՝ հարգանքի հավասար պահանջի հետ: Իրավունքները կերտում են իրականություն, որտեղ հավասար վերաբերմունքը, արդարությունը և անհատական ընտրությունը պաշտպանում են անհատական արժանապատվությունը և հետևաբար մեծացնում համագործակցության ներուժը և դրանով իսկ ծառայում յուրաքանչյուր անհատի, ինչպես նաև համայնքին՝ որպես ամբողջություն:

Որպես մարդ՝ յուրաքանչյուրս գիտակից է և ունի պատճառաբանելու կարողություն: Հավանաբար մեզնից յուրաքանչյուրը տարբեր չափով զգում է, թե ինչն է վիրավորական մյուսների համար: Թերևս տարբեր չափով յուրաքանչյուրս դասակարգում և վերադասակարգում է մեր իրականությունը և կառուցում տրամաբանության շրջանակ: Յուրաքանչյուր անհատ կարող է ամրապնդել այս երկու հատկանիշները կամ ճնշել դրանք: Բայց երբ կարեկցում ենք մյուսներին, ինչը մեր իսկական բնությունն է, մենք կառուցում

ենք համագործակցության և խմբային ֆունկցիոնալության հիմքերը: Բացի այդ, երբ կարեկցում ենք, գիտակցում ենք, որ այն, ինչ ուզում ենք կամ ինչի կարիքը ունենք, գուցե նույնն է, ինչ մյուսները նույնպես ուզում են, կամ ինչի կարիքն իրենք ունեն իրենց համար, որպեսզի մեզնից յուրաքանչյուրն ամբողջական լինի արժանապատվությամբ և մարդասիրությամբ: Այդ իսկ պատճառով մարդու իրավունքները հռչակում են, որ մենք օժտված ենք բանականությամբ և գիտակցությամբ:

Ավելին, բանականությունն ու գիտակցությունը թելադրում են կյանքի պահանջ. յուրաքանչյուրն ծնվել է, և յուրաքանչյուրն բնագդաբար ձգտում է գոյատևելու և բարգավաճելու: Վախենալը և մահից խուսափելը գերակայող նորմ են ռիսկի ի հայտ գալու դեպքում: Մենք ուզում ենք ապրել: Ապրելն ամեն ինչի, ներառյալ արժանապատվության հիմքն է: Ե՛վ բանականությունը, և՛ գիտակցությունը թելադրում են, որ այն, ինչ ես ուզում եմ ինքս ինձ համար, մյուսներն ուզում են իրենց համար, և բանականությունն ու գիտակցությունը թելադրում են, որ կարող ենք համագործակցելով նվազագույնի հասցնել կյանքի ռիսկերը և բարելավել կյանքը միմյանց համար՝ կյանքի իրավունքը ձևակերպելու, կյանքի իրավունքը համագործակցելով պաշտպանելու և խթանելու ու այլոց կյանքի իրավունքին համապատասխան գործելու միջոցով: Հարգելով ուրիշների կյանքի իրավունքը՝ ես նույնպես պաշտպանված եմ կյանքի իրավունքով, որովհետև կյանքի իրավունքը գոյություն ունի մեր փոխադարձ և հավաքական գործողությունների արդյունքում:

Օրինակ՝ Միացյալ Նահանգներում ստացվել են ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ երբ պետությունը մահապատժի է ենթարկում դատապարտյալին, համայնքում աճում է բռնի հանցագործության մակարդակը: Մասնավորապես Նյու Յորքի նահանգի մասին ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «նահանգային մակարդակում արված մահապատժերը զսպող ազդեցություն չեն ունենում մահապատժի արժանի հանցագործությունների կատարման համար, այլ դաժան ազդեցություն են ունենում, որն արտացոլվում է մահապատժերից հետո ամիսների ընթացքում սպանությունների թվի աճով»<sup>23</sup>: Երբ իրավունքները մերժվում են, մարդկային արժանապատվությունը արժեզրկվում է, և հետևաբար անհատները միմյանց համարում են պակաս արժանի արժանապատվությանը: Հավանաբար ինչ-որ չափով նույնն էս զգացել խմբերում, որոնցում ներգրավված են, երբ սոցիալական դիսամիական վատթարանում է, քանի որ ինչ-որ մեկը անհարգալից է վերաբերվում մյուսի հանդեպ: Ինչպես բռնությունն է ծնում բռնություն, այնպես էլ անհարգալից վերաբերմունքն՝ ավելի անհարգալից վերաբերմունք: Ընդհակառակը, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն երկրներում, որտեղ մահապատժը վերացված է, սպանությունների թիվը նվազում է<sup>24</sup>: Այսպիսով, ճիշտ է նաև հակառակը, որ կարեկցանքն ավելի շատ կարեկցանք է առաջացնում, և բոլորի իրավունքները հարգելու և պաշտպանելու միջոցով անհատական արժանապատվությունը հարգելը պաշտպանում է մեր բոլորի արժանապատվությունը: Այսպիսով, իրավունքները պետք է տարածվեն բոլորի վրա, որպեսզի հասանելի լինեն մեզնից յուրաքանչյուրին, քանի որ իրավունքները հարգանք են վայելում, և արժանապատվությունը գնահատվում է այն-

23. Deterrence or Brutalization - What Is the Effect of Executions,

<https://www.ojp.gov/ncjrs/virtual-library/abstracts/deterrence-or-brutalization-what-effect-executions>

24. Study: International Data Shows Declining Murder Rates After Abolition of Death Penalty,

<https://deathpenaltyinfo.org/news/study-international-data-shows-declining-murder-rates-after-abolition-of-death-penalty>

քանով, որքանով իրավունքները վերաբերելի են բոլորին, նույնիսկ դատապարտված հանցագործներին:

Ավելին, խտրականությունը բացառում է, և սկզբունքորեն անհավասար և անարդար է, երբ անհատներին զրկում են իրավունքների պաշտպանությունից և դրանցից օգտվելու հնարավորությունից՝ ելնելով նրանց անքակտելի հատկանիշներից, որոնք իրենք չեն ընտրել կամ չեն կարող փոխել, կամ որոնք փոխելը կխաթարի ընտրության հիմնական բաղադրիչը և անհատականությունը: Նման հատկանիշների ցանկը, որոնց հիմքով անհավասար վերաբերմունքը հավասար է խտրականության, աճում է ինքներս մեզ և մարդկությանը ավելի լավ հասկանալու գործընթացի զարգացմանը զուգահեռ: Որոշ նման հատկանիշներ ներառում են «ռասա, գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ կարծիք, ազգային կամ սոցիալական ծագում, ունեցվածք, ծնունդ կամ այլ կարգավիճակ»<sup>25</sup>: Բացի այդ, միջազգային մակարդակում (օրինակ՝ ՄԱԿ-ում) և տարածաշրջանային մակարդակում (Եվրոպական միություն) ընդհանուր առմամբ ընդունված է, որ սեռ տերմինը ներառում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հարցեր, քանի որ նման հատկանիշները վաղուց են օգտագործվել՝ մերժելու համար տարատեսակ, փոքրամասնությանը պատկանող սեռական կողմնորոշում ունեցող և գենդերային ինքնության տեր անհատների հիմնարար իրավունքները, և քանի որ, տարասեռականից բացի, այլ սեռական կողմնորոշում ունեցող անձինք և/կամ ոչ համապատասխան գենդերային ինքնություն ունեցող անձինք չեն ընտրել իրենց ներքին բնությունը, չեն կարող փոխել իրենց ներքին բնությունը, և նրանցից պահանջելը թաքցնել իրենց բնածին բնությունը, մեծամասնության հարմարությունից ելնելով, կնշանակի լռեցնել և ճնշել այդպիսի անհատներին և նրանց բնածին բազմազանությունը: Որևէ մեկին իրավունքներից զրկելը նվազեցնում է արդարությունը, խաթարում է փոխադարձությունը և ցածրացնում մեր բոլորի արժանապատվությունը:

Իրավունքները, այսպիսով, արտահայտում են արժանապատվության ասպեկտները և հիմնված են գիտակցության և բանականության վրա: Իրավունքները ներառում են տրամաբանական բոլոր ածանցումները, որոնք անհրաժեշտ են կյանքի և ազատության ամենակարևոր իրավունքները պաշտպանելու և խթանելու համար: Նաև մենք բոլորս պետք է հավասար լինենք իրավունքներով, որպեսզի իրավունքներն ունենան իրականության մեջ դրսևորվելու փոխադարձության և համագործակցության ուժ, և այդ պատճառով խտրականությունը (հիմնված է այն հատկանիշների վրա, որոնք մարդը չի կարող փոխել, և չպետք է պահանջել, որ նա փոխի, քանի որ դրանք մարդու բնածին և բազմազան բնության հիմքն են) արգելված է:

***Քո հասարակության մեջ մարդու իրավունքները երաշխավորելու համար ինչի՞ ես պատրաստ:***

**Իրավունքները պատկանում են բոլորիս: Իրավունքները բոլորիս պարտականությունն են:**

25. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (ICCPR), հոդված 2, <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights>

## Ինչպե՞ս է հասարակությունը հարգում, պաշտպանում և իրացնում իրավունքները:

Ավանդաբար ուսուցանվում է, որ պետությունը պարտավոր է «հարգել, պաշտպանել և իրացնել» մարդու իրավունքները: Ըստ այսմ, «հարգել» նշանակում է չխախտել իրավունքը, «պաշտպանել» նշանակում է կանխել, որ որևէ անհատ ոտնահարի մյուսի իրավունքը, և «իրացնել» նշանակում է ստեղծել սոցիալական միջավայր, որտեղ բոլորը կարող են հավասարապես օգտվել իրավունքներից: Բայց պետությունը զուտ մեր ստեղծած մեխանիզմն է մեզ՝ բնակչությանը ծառայելու համար: Վերջին հաշվով պետությունը մենք ենք, և եթե որևէ շրջանում դա այդպես չէ, մենք պետք է դարձնենք այդպես, ինչպես հայերը՝ 2018 թվականին:

2018 թվականին մարդիկ մերժեցին գործող իշխանություններին, և ձևավորվեց նոր կառավարություն: Դա տեղի չունեցավ որևէ ընտրական գործընթացի միջոցով: Հաստատելու համար, որ նոր իշխանությունը ժողովրդի ներկայացուցիչն է, տրամաբանական էր անցկացնել ընտրություններ: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության շատ առաջնորդներ ի սկզբանե ասում էին, որ մենք չենք կարող ազատ և արդար ընտրություններ անցկացնել, քանի դեռ Ընտրական օրենսգիրքը չի վերանայվել: Քանի որ նախորդ ընտրությունները հայտնի էին բարձր աստիճանի անարդարությամբ, շատերը կարծում էին, որ դրա մեղավորը կանոններն են: Բայց սա ճիշտ էր:

Ի վերջո, քաղաքական իրավիճակը պահանջում էր, որ ընտրություններ լինեն, և 2018 թվականի դեկտեմբերին Հայաստանում անցկացվեցին ընտրություններ՝ առանց, սակայն, նախապես վերանայելու Ընտրական օրենսգիրքը: Չնայած սրան՝ ընդհանուր առմամբ կա համաձայնություն, որ 2018 թվականի դեկտեմբերի ընտրությունները Հայաստանում երբևէ եղած ամենաազատ և ամենաարդար ընտրություններն էին: Քանի որ Ընտրական օրենսգիրքը չէր վերանայվել, ուրեմն կանոնները չէին, որոնց պատճառով անցյալում տեղի էին ունենում կեղծ ընտրություններ: Եթե կանոնները տարբեր չէին, ապա ինչո՞վ էր պայմանավորված անցյալի կեղծ ընտրությունների և 2018 թվականի ազատ ու արդար ընտրությունների միջև տարբերությունը:

Տարբերությունը մեր հավաքական վերաբերմունքն էր: Ակադեմիկոս Ռոբերտ Փութնամն այս հավաքական վերաբերմունքն անվանում է *սոցիալական կապիտալ*: *Սոցիալական կապիտալ* եզրույթը վերաբերում է «մասնակցային ներուժի, քաղաքացիական կողմնորոշման և մյուսների նկատմամբ վստահության աստիճանին», որն առկա է ցանկացած հասարակության մեջ<sup>26</sup>: Այլ կերպ ասած՝ սոցիալական կապիտալը վերաբերում է նրան, թե որքանով են մարդիկ վստահում միմյանց և հետևաբար միասին համագործակցում ստեղծելու իրենց ուզած հասարակությունը:

Կարելի է պնդել, որ մինչև 2018 թվականը մեր սոցիալական կապիտալը ցածր էր: Որպես դրա արտացոլում մինչև 2018 թվականը որոշ անհատներ վաճառում էին իրենց ձայները, քանի որ չէին վստահում, որ ընտրություններն արդար են լինելու՝ անկախ նրա-

26. Putnam on Social Capital - Democratic or Civic Perspective, <https://www.socialcapitalresearch.com/putnam-on-social-capital-democratic-or-civic-perspective/>

նից, թե որպես անհատներ իրենք ինչպես կվարվեին, և այս մարդկանց համար տրամաբանական էր անհատական օգուտ ստանալը իրենց քվեն վաճառելու դիմաց: Առանց արդար ընտրությունների հույսի՝ մարդիկ մտածել և գործել են՝ ելնելով կարճաժամկետ և անհատական հեռանկարից: Սոցիալական կապիտալը բավարար չէր:

Ի տարբերություն նշվածի՝ 2018 թվականին մեր սոցիալական կապիտալը բարձր էր: Մարդիկ հասել էին մի հավաքական նպատակի (իշխանության փոփոխություն) իրենց փոխադարձ համագործակցությամբ: Այս համագործակցային ձեռքբերումը զորացնող էր, միավորող, ոգեշնչող և օգնեց մարդկանց հավատալու, որ իրենք կարող են համագործակցել՝ իրենց ուզած հասարակությունը ստեղծելու համար, արդար՝ հասարակությունը: Այսպիսով, 2018 թվականին սոցիալական միջավայրը համագործակցային էր և հիմնված էր արդարության վրա, այնպես, որ մարդիկ միասին ընտրեցին ազատ և արդար ընտրություններ ունենալը և գործեցին համապատասխանաբար՝ հարգելով, պաշտպանելով և իրացնելով ընտրական իրավունքը: Այս կերպ գրանցվեց հավասար վերաբերմունք, արդարություն և ընտրություն, քանի որ յուրաքանչյուր անձի ձայնը նույն արժեքն ուներ:

Իր աշխատության մեջ Փուլնամը շեշտում է, որ սոցիալական կապիտալը «հանրային բարիք» է, ինչը նշանակում է, որ դա մի բան է, որն օգուտ է բերում մեզ բոլորիս, պատկանում է մեզ բոլորիս, և դա պաշտպանելը մեր հավաքական պարտականությունն է, ճիշտ ինչպես մաքուր և առողջ միջավայրը: Ինչպես սոցիալական կապիտալն է հանրային բարիք, այնպես էլ մարդու իրավունքներն են հանրային բարիք, քանի որ իրավունքները ծառայում են մեզ բոլորիս և գոյություն ունեն այնքանով, որքանով մենք հարգում, պաշտպանում և իրացնում ենք դրանք մեզնից յուրաքանչյուրի համար՝ հավաքականորեն և համագործակցելով: 2018 թվականի ընտրություններն ապացուցեցին, որ այնքանով, որքանով մենք հավաքականորեն ընտրություն ենք կատարում և գործում ենք ընտրական իրավունքն ապահովելու համար, ազատ և արդար ընտրությունները դրսևորվում են: Իսկ նախորդ ընտրություններն ապացուցում էին, որ այնքանով, որքանով մենք չենք հարգում, պաշտպանում և իրացնում ընտրելու իրավունքը, ընտրությունները պակաս ազատ են և պակաս արդար: Այսպիսով, իրավունքների պաշտպանության կամ հանրային ցանկացած բարիք պաշտպանելու համար մենք պետք է վերահսկենք խաբեբաներին:

Քանի որ մարդու իրավունքները հանրային բարիք են, դրանք նույնն են, ինչ ընդհանուր ռեսուրսը, որը նման է մեր շնչած օդին կամ գյուղի շրջակայքի բաց արոտավայրերին կամ անտառներին: Գյուղերում շրջակա արոտավայրերը համատեղ ռեսուրս են, բայց այս ռեսուրսից օգուտ քաղելու համար պետք է անասուններին արածեցնելու տանել: Եթե յուրաքանչյուր անհատից պահանջվի, որ ամեն օր ինքը տանի իր հոտը, նա այլ գործունեությամբ զբաղվելու ժամանակ չի ունենա: Այսպիսով, գյուղացիները համագործակցում են խմբերով, որտեղ յուրաքանչյուր անհատի հանձնարարվում է շաբաթվա մեկ օր՝ խմբի բոլոր անդամների հոտերը արածեցնելու տանելու համար: Յուրաքանչյուրի ներդրումը ուղիղ համեմատական է յուրաքանչյուրի օգուտին: Ինչպես նաև, եթե որևէ մեկի ներդրումն արդար չէ, նա համագործակցային մեխանիզմից օտարվելու ռիսկի տակ է հայտնվում: Այսպիսով, ռեսուրսը կիսվում է, և ռեսուրսից օգուտ քաղելու համար



պահանջվող աշխատանքը (հովվի աշխատանքը) նույնպես կիսվում է: Ե՛վ սոցիալական կապիտալը, և՛ մարդու իրավունքները նույնն են, քանի որ դրանք օգուտ են բերում բոլորին և պահանջում ներդրումներ բոլորից: Ինչպես ցույց է տալիս ընտրությունների օրինակը, ազատ և արդար ընտրությունների օգուտը (համայնքի հավաքական ընտրության արտահայտություն) ստեղծվում է յուրաքանչյուրի կողմից՝ հարգելով, պաշտպանելով, իրացնելով ընտրական իրավունքը: Այլ կերպ ասած՝ բոլորի հավաքական, համատեղ ջանքերն են, որ ստեղծում են հավասար վերաբերմունք, արդարություն և ընտրություն:

Նման համատեղ ռեսուրսները պետք է կառավարվեն բոլորի բարօրության համար, իսկ խաբեբաները պետք է վերահսկվեն: Նորբեյյան մրցանակի դափնեկիր Էլենոր Օստրոմը ձևակերպել է 8 սկզբունք, որոնցով ցանկացած խումբ կամ համայնք կարող է հավաքականորեն և հաջողությամբ կառավարել ընդհանուր ռեսուրսը: Այլ կերպ ասած՝ նա բացահայտել է հանրային բարիքների համայնքային կառավարման բանալիները: Ի հավելումս, համայնքը և ընդհանուր ռեսուրսը (կամ հանրային բարիքը) հստակ սահմանելուն և հավաքական որոշումների կայացման համակարգի զարգացմանը զուգահեռ համայնքը նաև անհատների համար պետք է ապահովի ծախսերի և օգուտների հավասարություն՝ վերահսկելով խաբեբաներին. խաբեբաներին՝ մշտադիտարկում, խաբեբաներին՝ աստիճանական պատժամիջոցներ և վեճերի լուծման միջոց<sup>27</sup>:

Հիմնվելով Փութնամի և Օստրոմի ակադեմիական աշխատանքների վրա՝ կարելի է եզրակացնել, որ խաբեբաների համար պատասխանատվություն ստեղծելը անհրաժեշտ է համագործակցության, հետևաբար խմբային ֆունկցիոնալության համար: Մտածեք, թե ինչ է կատարվում, երբ մեծ թվով մարդիկ խաբում են՝ ասելով. «Ես Էլ տուն եմ պահում»: Անցյալում սա սովորական հիմնավորում էր իրենց սեփական կոռուպցիան արդարացնելու համար: Գաղափարն այն էր, որ քանի որ յուրաքանչյուրը գործում էր իր համար՝ առանց հաշվի առնելու օրենքը, հանրային բարիքը կամ մյուսների շահը, բոլորը «պարտք» էին մնում սեփական ընտանիքին, որպեսզի նույնպես խաբեին: Այլ կերպ ասած, եթե մյուսները եսասեր են, իմաստ չունի լինել ավտրոլիստ. եթե շատ ուրիշներ խաբում են, նրանք, ովքեր չեն խաբում, պարտվողներ են: Բայց այս վարքագիծը նաև խաթարում է խմբի ֆունկցիոնալությունը, որը վնասակար է խմբում բոլորի համար, ներառյալ նրանց, ովքեր խաբում են:

Օստրոմի 8 սկզբունքները ցույց են տալիս, որ հաշվետվողականությունը պահանջում է թափանցիկություն և մասնակցություն: Պատասխանատվությունը նշանակում է, որ խաբողների համար գոյություն ունի հետևանք, որպեսզի կանխվի հետագա խաբեությունը, ինչը խաթարում է խմբի համագործակցությունն ու ֆունկցիոնալությունը: Թափանցիկությունը նշանակում է, որ խաբեբայության ու խաբեբաների մասին պետք է իմանան կամ նրանց բացահայտեն, որպեսզի հետևանքներ լինեն: Մասնակցությունը նշանակում է, որ բոլորը հավասարապես նպաստում են օգուտների ստեղծմանը, որոնցից յուրաքանչյուր ոք օգտվում է խմբի համագործակցության և ֆունկցիոնալության արդյունքում: Այս ամենն անհրաժեշտ է հավասար վերաբերմունքը, արդարությունը և ընտրությունը պահպանելու կամ ստեղծելու համար:

27. Ostrom, Elinor. *Governing the Commons: The Evolution of Institutions for Collective Action*. Cambridge University Press, 1990.

Թերևս թափանցիկության, մասնակցության և հաշվետվողականության պակասի օրինակն ապացուցում է այս միտքը: 2011 թվականին Ռուսաստանը բարձրացրեց բնական գազի սակագինը հայ սպառողների համար, բայց Հանրապետական կուսակցությունը գաղտնի կերպով կազմակերպեց, որ պետությունը պարտք վերցնի գնի տարբերությունը սուբսիդավորելու համար, որպեսզի սպառողները չիմանան թանկացման մասին: Հանրապետական կուսակցությունը գալիք ընտրությունների պատճառով թաքցրեց թանկացումը: 2013 թվականին «Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը չթաքցրեց այն փաստը, որ եթե Հայաստանը չհամաձայնեի անդամակցել Մաքսային միությանը և չվճարեի Ռուսաստանին «ՀայՌուսգազարդ»-ի բաժնետոմսերի մնացած 20 տոկոսը, ապա ստիպված կլինեի բնական գազի դիմաց վճարել 300 միլիոն դոլարի հասնող պարտքը, որ կուտակվել էր 2011 թվականից ի վեր»<sup>28</sup>:

Սա խաբեության և Օստրոմի 8 սկզբունքները խախտող խաբեբայության և խաբեբաների օրինակ է: Նախ սեփական շահից ելնելով (վերընտրվելու համար)՝ իշխող Հանրապետական կուսակցությունը որպես խումբ սահմանեց իր սեփական քաղաքական կուսակցությունը՝ փոխանակ ճանաչելու, որ իրական խումբն այն ազգն ու պետությունն է, որի շահերից ելնելով՝ կուսակցությունը պարտավոր էր գործել: Երկրորդ, սուբսիդավորումն ու պարտքը գաղտնի էին պահվել (ոչ թափանցիկ), և դրա շարժառիթն այն էր, որ ընտրություններին մասնակցող ընտրողները Հանրապետական կուսակցությանը պատասխանատվության չենթարկեին՝ քվեարկելով ընդդիմության օգտին: Այլ կերպ ասած՝ առանց թափանցիկության՝ մասնակից ընտրողները չունեին բավարար տեղեկություն՝ լիովին իրազեկված ընտրություն կատարելու համար, և չեղավ պատասխանատվություն: Նկատենք նաև, որ Էներգետիկայի նախարարի խոսքով՝ այս գաղտնի պարտքի պատճառով Հայաստանը անդամակցել է Եվրասիական տնտեսական միությանը, ինչը Հայաստանում բացարձակապես ոչ ոք երբեք չի ընտրել: Թեև այս գաղտնի պարտքից բացի՝ լրացուցիչ գործոններ կարող էին իրենց դերն ունենալ այս որոշումների մեջ, հարցը մնում է այն, որ թափանցիկության, մասնակցության և հաշվետվողականության պակասը հանգեցնում է հավասար վերաբերմունքի, արդարության և ընտրության սկզբունքների խախտումների:

Հետևաբար հավասար վերաբերմունքը, արդարությունը և ընտրությունը (արժանապատվության հիմնական տարրերը) երաշխավորելու, ինչպես նաև մարդու իրավունքները (հանրային բարիք) երաշխավորելու համար հասարակության անդամները պետք է նվիրված լինեն թափանցիկության, մասնակցության և հաշվետվողականության սկզբունքներին, որոնք իրենց հերթին ստեղծում են սոցիալական կապիտալ, որպեսզի անհատները կարողանան շարունակել վստահել միմյանց և համագործակցել միմյանց հետ՝ ստեղծելու այն հասարակությունը, որը նրանք ձգտում են ունենալ:

Այսպիսով, քանի որ յուրաքանչյուրս եզակի է և գիտակից, և մարդիկ սոցիալական էակներ են, մեր ընտրությունների, արարքների և փոխհարաբերությունների միջոցով մենք համագործակցում ենք՝ ստեղծելու այն սոցիալական իրականությունը, որը մենք կարող ենք վայելել: Իրավունքները վերացական հասկացություններ են, որոնք հաստատ

28. "Gas Politics: Russia tightens grip on Armenian energy sector with new Gazprom acquisition", ArmeniaNow.com, 5 դեկտեմբերի, 2013 թ.:

տում են արժանապատվության մասին պատկերացումները (յուրաքանչյուր անհատի արժեքը), և, կախված նրանից, թե որքանով ենք նպաստում թափանցիկությանը, մասնակցությանը և հաշվետվողականությանը՝ կարող ենք հարգել, պաշտպանել և իրացնել իրավունքները մեզնից յուրաքանչյուրի և բոլորի համար: Փոխադարձ վստահությամբ, համագործակցությամբ և մարդու իրավունքներին նվիրվածությամբ մենք միասին կառուցում ենք մի աշխարհ, որտեղ յուրաքանչյուր եզակի անհատ կարող է լիարժեք և իմաստալից կյանք վարել, և դա ծառայում է ինչպես անհատին, այնպես էլ հասարակությանը, որտեղ նրանք ապրում են, քանի որ ինքնաբավ անհատները ավելի շատ ներդրում են ունենում համայնքում: Մտապահե՛ք այս հիմնարար գաղափարները մարդու իրավունքների ուսումնասիրությունը շարունակելիս:

## 1.2. Մարդու իրավունքների հայեցակարգի զարգացման պատմական ակնարկ

Պատմության մեծ մասի ընթացքում մարդիկ ձեռք էին բերում իրավունքներ և պարտականություններ որոշակի խմբերով՝ ընտանիք, բնիկ ազգ կամ ժողովուրդ, կրոնական խումբ, դաս, համայնք կամ պետության հպատակություն և այլն: Մարդու իրավունքների հնագույն աղբյուրները՝ հինդու վեդաները, բաբելոնյան Համուրաբի թագավորի օրենքները, Աստվածաշունչը, Ղուրանը, Կոնֆուցիոսի փիլիսոփայությունը, ունեին մեկ ընդհանրություն. բոլորը վերահաստատում էին *«Մի՛ անիր մարդուն այն, ինչը չես ուզում, որ արվի քեզ»* ոսկե կանոնը: Կարելի է ասել, որ այս կանոնը փաստացի վերածվեց որոշակի հիմնարար սկզբունքի և վերաիմաստավորվեց հետագա զարգացումների համատեքստում:

Մարդու իրավունքներն առաջին հերթին նշանակում են մարդու իրավասուբյեկտության և իրավունակության ճանաչում, և դրանց բովանդակությունը պատմական ժամանակաշրջաններում կրում է որոշակի փոփոխություններ՝ աստիճանաբար ընդլայնելով մարդու իրավունքների սահմանները: Մարդու իրավունքների զարգացման պատմությունը ձևական հավասարության սկզբունքի աստիճանական ընդլայնման և վերաիմաստավորման գործընթաց է: Եվ ցանկացած զարգացման շրջափուլ, որպես կանոն, ուղեկցվում էր առանցքային կամ գլոբալ փոփոխություն հանդիսացող գործընթացով՝ հեղափոխությամբ, պատերազմներով և այլն:

Հինդու վեդաները, բաբելոնյան Համուրաբիի օրենսգիրքը, Աստվածաշունչը, Ղուրանը և Կոնֆուցիոսի անալեկտները հինգն են ամենահին գրավոր աղբյուրներից, որոնք անդրադառնում են մարդկանց իրավունքներին և պարտականություններին: Բացի այդ, ինկերի և ացտեկների վարքագծի և արդարադատության կանոնները և իրոկեզի սահմանադրությունը բնիկ ամերիկացիների աղբյուրներն էին: Իրականում բոլոր հա-

սարակությունները բանավոր կամ գրավոր ավանդույթներով ունեցել են պատշաճության և արդարության համակարգեր, ինչպես նաև իրենց անդամների առողջության և բարեկեցության ապահովման ուղիներ: Շատ հակիրճ ստորև ներկայացվում են հիմնական փիլիսոփայական ուղղությունները և գաղափարները, որոնք հետագայում հիմք են ծառայել մարդու իրավունքների ժամանակակից արժեքային համակարգի ձևավորման համար:

## Հին Հունաստան և Հին Հռոմ

Անտիկ աշխարհում մարդու իրավունքների զարգացման կարևոր ինստիտուտ է եղել քաղաքացիության ինստիտուտի կայացումը անտիկ պոլիսներում, որտեղ ծնունդ է առել ժողովրդավարությունը: Հին պոլիսներում քաղաքացիության հետ կապում էին հիմնականում քաղաքական իրավունքները՝ ազատությունը, պետական գործերի որոշումներին մասնակցելու իրավունքը, արդարադատությանը մասնակցելու իրավունքը և այլն: Ընդ որում, նման իրավունքներով օժտվում էին միայն նրանք, ովքեր կատարում էին ֆիզիկական աշխատանք<sup>29</sup>: Քաղաքացիությունը խորհրդանշում էր կապը պետության և անհատի միջև:

Դեռևս անտիկ ժամանակների ականավոր մտածողները՝ Պլատոնը, Սոկրատեսը, Արիստոտելը, Պերիկլեսը, Դեմոսֆենեսը և այլք, օրենքը և օրինականությունը ներկայացնում էին իբրև բարձրագույն մարդկային արժեքներ: Հետագա զարգացումները վերստին հիմնավորեցին մարդու իրավունքների և իրավունքի գերակայության անխզելի կապը, ինչը վկայում է հին ժամանակաշրջանի մտածողների հանճարեղ մտքի թռիչքի և խորության մասին<sup>30</sup>:

Այս ժամանակաշրջանի առավել ականավոր մտածողներից Սոկրատեսի, Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայական հայացքները առանցքային ազդեցություն ունեցան իրավունքի և մարդու իրավունքների հայեցակարգի հետագա զարգացման համար: Ստորև համառոտ ներկայացնենք նրանց փիլիսոփայական հայացքները մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերի առնչությամբ:

Սոկրատեսը (մ.թ.ա. 469-399) ապրել է մի ժամանակաշրջանում, երբ Հին Հունաստանում ընթանում էին լուրջ միջդասային հակասություններ և պատերազմ Պելոպոնեսյան պատերազմ: Սոկրատեսը աթենական արիստոկրատիայի գաղափարական առաջնորդն էր և կողմնակիցը և շատ կարճ ժամանակահատվածում իր շուրջը հավաքեց գաղափարակից մարդկանց և սկսեց իր հայտնի ելույթները<sup>31</sup>:

Սոկրատեսի փիլիսոփայության կենտրոնում մարդն է և մարդու ինքնաճանաչողությունը: Որպես հիմնական առաքինություններ՝ Սոկրատեսը առաձնացնում էր **գսպվա-**

29. Права человека и процессы глобализации современного мира. Ответственный редактор Е. А. Лукашева, էջ 32:

30. Նույն տեղում, էջ 32:

31. История философии в кратком изложении. Перевод в чешского. М., 1991, էջեր 127-129:

**ծությունը (ինչպես կառավարել կրքերը), արիությունը (ինչպես հաղթահարել վտանգները) և արդարությունը (ինչպես ենթարկվել աստվածային և մարդկային օրենքներին):** Մարդը կարող է այս առաքիլությունները ձեռք բերել ճանաչողության և ինքնաճանաչողության ճանապարհով: Ինքնաճանաչողության անհրաժեշտությունը Սոկրատեսն ընդգծում էր նաև իր հայտնի արտահայտությամբ. «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»: Սոկրատեսը համոզված էր, որ վերը նշված առաքիլությունների առկայության պայմաններում է միայն հնարավոր կատարել հասարակական կամ պետական գործառույթները պոլիսում, այլ ոչ թե վիճակահանության օգնությամբ, ինչպես դա ընդունված էր դեմոկրատական կուսակցության իշխանության ժամանակ՝ Աթենքում<sup>32</sup>:

Սոկրատեսի այս մոտեցումը կրթությունը՝ ճանաչողությունը և ինքնաճանաչողությունը, դնում էր փաստացի ամեն ինչի հիմքում այդպիսով, կարելի է ասել, դնելով ողջամիտ և ռացիոնալ կառավարման հենքը, ինչն այսօր առանցքային է պետականաշինության, պետական կառավարման, այդ թվում նաև մարդու իրավունքների երաշխավորման և առաջնայնության ապահովման տեսանկյունից:

Պլատոնը (մ.թ.ա. 427-347) Սոկրատեսի աջակերտն էր, որն իր ուսուցչի փիլիսոփայության շարունակողն էր: Ըստ Պլատոնի՝ *յուրաքանչյուրին իրենը* սկզբունքը բնակաիրավական գաղափարի հիմքն է: Պլատոնը մասնավորապես պնդում էր. «Իրավունքը (dikaion) և արդարությունը (dikaiosyne) հանգում են նրան, որ յուրաքանչյուրն ունի և անում է իրենը այնպես, որ ոչ ոք չտիրանա օտարի ունեցածին և չզրկվի իր ունեցածից»<sup>33</sup>:

Պլատոնը, հղում կատարելով Սոկրատեսին, առանձնացնում էր հավասարության երկու տեսակ՝ երկրաչափական և թվաբանական: Առավել կատարյալ հավասարության տեսակ Պլատոնը համարում էր երկրաչափական հավասարությունը, որը յուրաքանչյուրին տալիս է այն, ինչ համահունչ է իր բնույթին<sup>34</sup>:

Պլատոնը, հենվելով Սոկրատեսի գաղափարների վրա, առանձնացնում էր հետևյալ որակները կամ առաքիլությունները, որոնք պետք է ունենա պետությունը. **իմաստություն, արիություն, կարգապահություն և արդարություն:** Ըստ Պլատոնի՝ իմաստությունը հիմնվելու է կառավարողների ունեցած գիտելիքների վրա, արիությունը՝ օգնականների խիզախության, կարգապահությունը՝ երեք դասերի միջև ներդաշնակության և կառավարողի հարցում համաձայնության: Եվ արդարությունը, ըստ Պլատոնի, այն սկզբունքն է, որը պետք է պահպանվի, այսպես՝ մեկ մարդ՝ մեկ աշխատանք, միայն իր գործի մասին մտածելը, այլ խոսքով՝ կատարել աշխատանք, որին մարդը բնականորեն համապատասխանում է, և չմիջամտել այլ մարդկանց գործերին<sup>35</sup>: Փաստացի Պլատոնի գաղափարներում հստակ ուրվագծվում են իրավունքի գերակայության և արդարության սկզբունքի առանցքայնության հարցերը, որոնք այսօր ևս առանցքային են ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում:

32. История философии в кратком изложении. Перевод в чешского. М., 1991, էջեր 127-131:

33. Reiner H. Die Hauptgrundlagen der fundamentalsten Normen des Naturrechts. Basel, 1976, էջ 2. Հղումը՝ ըստ В.С. Нерсисянц, Философия права. 2001, էջ 410:

34. В.С. Нерсисянц, Философия права. 2001, էջ 410:

35. Plato, The Republic. Translated by Desmond Lee, with an introduction by Melissa Lane. Second Edition. 2007, էջ 130:

Խոշորագույն հույն փիլիսոփա Արիստոտելը (մ.թ.ա. 384 թ.- 322 թ.), կարծում ենք, ոչ միայն իրեն նախորդող հունական փիլիսոփայության ամփոփումն էր, այլև դրա տրամաբանական շարունակությունը և եզրափակումը: Արիստոտելը, շարունակելով Պլատոնի կողմից արդեն իսկ քննարկված արդարության թեման, զարգացրեց այն՝ առանձնացնելով արդարության երկու տեսակ՝ բաշխիչ արդարություն (վերաբերում էր յուրաքանչյուրին համամասնորեն բաշխված իրավունքներին և պարտականություններին) և ուղղիչ արդարություն (ներառում էր իրավունքների կամ հատուցման կիրառման համար անհրաժեշտ գործառույթները): Այն դեպքում, երբ բաշխիչ արդարությունը ունենում էր բացեր, կիրառվում էր ուղղիչ արդարությունը, որը նպատակ ուներ մարդուն առավել մոտեցնելու նրան, ինչ պատկանում էր իրեն<sup>36</sup>: Արիստոտելը ևս իրավունքի գերակայությունը կարևորում էր պետության ամրության տեսանկյունից: Գտնում էր, որ օրենսդրությունը քաղաքականության մի մասն է, և օրենսդիրը պետք է ընդունի այնպիսի օրենքներ, որոնք արտացոլում են տվյալ պետական կարգի առանձնահատկությունները և միտված են գոյություն ունեցող հարաբերությունների համակարգի կայունացմանը<sup>37</sup>: Արդարության հասնելու ճանապարհին Արիստոտելը կարևորում էր որևէ նեյտրալ հանգամանքի առկայությունը և կարծում, որ հենց օրենքը պետք է խաղա այդ դերը<sup>38</sup>: Ըստ Արիստոտելի՝ ազատ մարդկանց հասարակությունը, որը չէր ներառում ստրուկներին, բաղկացած էր հետևյալ հիմնական դասերից՝ շատ հարուստներ, ծայրահեղ աղքատներ և նրանց միջև գտնվող միջին խավը: Արիստոտելը գտնում էր, որ պետության զարգացման համար հատկապես կարևոր դեր է խաղում հենց միջին դասը<sup>39</sup>:

Հռոմեական կայսրության շրջանակներում մարդու իրավունքների վերաբերյալ մոտեցումները և կարգավորումները հիմնականում փոխառված էին Հին Հունաստանից:

Այսպես, Ուլպիանոսը գրում է. «Չնայած որ մենք բոլորս անվանվում ենք «մարդ», սակայն, ժողովուրդների իրավունքի (jus gentium) համաձայն, կա երեք դաս՝ ազատներ և, դրանց հակառակ, ստրուկներ, և երրորդ դասը՝ ազատություն ստացածներ, այսինքն՝ նրանք, որոնք այլևս ստրուկ չեն»<sup>40</sup>: Աթենական և հռոմեական իրավունքի տեսանկյունից ստրուկը չէր համարվում մարդ և իրավունքի օբյեկտ էր, այլ ոչ թե սուբյեկտ<sup>41</sup>: Այսինքն՝ ստրուկները գործարքի առարկա էին կամ օբյեկտ:

Ուլպիանոսի առանձնացրած մարդկանց երեք դասերը, իհարկե, այսօրվա իրողությունների տեսանկյունից թվում են բոլորովին ոչ պատշաճ, սակայն իրականում բնական հավասարության փիլիսոփայական հիմքերը դրվել են հենց այս մոտեցումների արդյունքում<sup>42</sup>:

Հին Հռոմում կենտրոնական տեղ էր զբաղեցնում դաժանությունների դեմ պայքարը, ինչը արտահայտված է Կիկերոնի աշխատություններում: Մասնավորապես Կիկերոնն

36. Luis Kutner, *Legal Philosophers: A Trilogy on Great Philosophers and the Law: Plato and Aristotle: Precursors of the Human Rights of World Habeas Corpus*, 55 Marq. L. Rev. 255 (1972).

37. В.С. Нерсисянц, *Философия права*. 2001, էջ 419:

38. Նույն տեղում, էջ 420:

39. *История философии в кратком изложении*. Перевод в чешского. М., 1991, էջ 160:

40. В.С. Нерсисянц, *Философия права*. 2001, էջ 107.

41. В.С. Нерсисянц, *Философия права*. 2001, էջ 107.

42. Նույն տեղում:

առանձնացնում է մարդկության դրական և բացասական կողմերը և նշում այն, ինչ չի կարելի անել՝ առաջ քաշելով բարեգործության (philantropia) և բարության գաղափարները<sup>43</sup>:

Հռոմեական իրավունքի ազդեցությունը ահռելի է, և դժվար է թերագնահատելը: Հռոմեական իրավունքի մեջ առանձնանում էր jus civile-ն, որը մշակվել էր հանրապետության ժամանակ (մ.թ.ա. 753-731) և կիրառվում էր միայն կայսրության հպատակների համար՝ կարգավորելով անձանց, ընտանիքների և անձանց խմբերի հարաբերությունները: Մ.թ.ա. 3-րդ դարում մշակվեց *ժողովուրդների իրավունքը* (jus gentium), որը կիրառվում էր թե՛ հռոմեացիների, թե՛ օտարերկրացիների նկատմամբ: Jus gentium-ը մշակվել էր հիմնականում դատավորների և կառավարիչների կողմից, որոնք լուծում էին առավելապես օտարերկրացիներին առնչվող վեճերը<sup>44</sup>:

Հռոմեական իրավունքի զարգացման շրջափուլերում կարևորագույն փուլ են եղել Հուստինիանոս կայսրի (մ.թ. 527 թ.-ից) կանոնակարգումները, որոնք առավել հայտնի են որպես Հուստինիանոսի կանոնակարգ կամ Corpus Juris Civilis. այն ամբողջացնում և համակարգում էր մինչ այդ գոյություն ունեցած հռոմեական իրավունքի կարգավորումները:

Ամփոփելով՝ անտիկ ժամանակաշրջանի մտածողների հայացքները հիմնված էին իրենց ժամանակ գոյություն ունեցած պետական կարգի վրա, որի բաղկացուցիչ մասն էր ստրկատիրությունը: Սակայն վերը շարադրված հայացքները առանցքային նշանակություն ունեցան մարդու իրավունքների հետագա զարգացման, վերափոխման և ընդլայնման տեսանկյունից: Մասնավորապես այդ նպատակի համար կարևոր դեր խաղացին այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը, հավասարության որոշակի տրամաբանություն առաջ քաշելը, արդարության մասին հստակ և համակարգային պատկերացումները, պետականության և դրա կազմակերպման մասին մտքերը: Այս ամենը հետագայում հիմք հանդիսացավ այլ մտածողների կողմից իրավունքի գերակայության և մարդու իրավունքների փիլիսոփայությունը զարգացնելու համար:

## Մարդու իրավունքների զարգացումը միջնադարյան ժամանակաշրջանում

Մարդու իրավունքների զարգացումը միշտ եղել է դասակարգային սուր պայքարի կիզակետնորոնում, և յուրաքանչյուր հաջորդ պատմական շրջափուլին անցումը զուգորդվել է հասարակական մեծ կատակլիզմներով, փոփոխություններով, այդ թվում՝ նաև հեղափոխություններով: Ցավալիորեն, մարդու իրավունքների զարգացման գործում կարևորագույն նվաճումները, որպես կանոն, ձեռք են բերվել մեծ զրկանքների, տառապանքների և մարդկային կյանքերի գնով:

43. Richard A. Bauman, Human Rights in Ancient Rome, 2000, էջ 3:

44. Առավել մանրամասն տե՛ս Richard A. Bauman, Human Rights in Ancient Rome. 2000; Roman law, Britannica, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.britannica.com/topic/Roman-law/The-law-of-Justinian>

Այս առումով էլ առանձնանում է նաև միջնադարյան ժամանակաշրջանը: Միջնադարյան ժամանակահատվածում ընթացող գործընթացները հանգեցրին մի շարք կարևորագույն փաստաթղթերի ընդունման, որոնք առանցքային դեր խաղացին մարդու իրավունքների բազմաթիվ նոր երաշխիքների ամրագրման և հետագա զարգացման համար:

Մարդու իրավունքների տեսանկյունից միջնադարյան ժամանակահատվածը, ի համեմատ անտիկ ժամանակաշրջանի, պակաս բևեռացված էր, և առկա էին մարդու իրավունքների և փոխհարաբերությունների առավել ճյուղավորված և բազմաշերտ համակարգեր, որոնց բովանդակությունը պայմանավորված էր ֆեոդալական հասարակության դասակարգային կառուցվածքով: Մարդու իրավունքների ծավալը անհատի համար որոշվում էր դասակարգային պատկանելության հիմքով: Ի համեմատ անտիկ ժամանակաշրջանի՝ իրավահավասարության սկզբունքը սկսեց տարածվել առավել լայն շրջանակների և խմբերի մարդկանց նկատմամբ:

Միջնադարյան ժամանակաշրջանում մարդու իրավունքները ներառված էին այսպես կոչված *ius commune*-ի շրջանակներում, որը հռոմեական իրավունքի և կանոնական իրավունքի համակցություն էր<sup>45</sup>: Մարդու իրավունքների գոյությունը միջնադարյան *ius commune*-ի շրջանակներում պայմանավորված էր ոչ թե այն հանգամանքով, որ անհրաժեշտ է պաշտպանել և ապահովել մարդու ընտրությունը, այլ Աստծո նախախնամությունը ապահովելու և խթանելու նպատակով: Այսինքն՝ իրավունքների մասին ընկալումն առավելապես օբյեկտիվ էր, ոչ թե սուբյեկտիվ<sup>46</sup>: Կրոնական իրավունքի ազդեցությունը միջնադարյան ժամանակաշրջանում էական է եղել:

Կարելի է ասել, որ մի շարք իրավունքներ ճանաչված են եղել միջնադարյան *ius commune* -ի շրջանակներում: Օրինակ՝ բարեկեցության իրավունքը, քվեարկելու իրավունքը (եկեղեցին հատկապես կիրառում էր ընտրության ինստիտուտը), դավանանքն ընտրելու իրավունքը (կարող է զարմանալի թվալ, սակայն միջնադարյան եկեղեցական հնագույն կանոնակարգ տեքստերում խոսվում էր այն մասին, որ ոչ ոք չպետք է ուժով դառնա քրիստոնեության հետևորդ), պատշաճ դատավարական ընթացակարգի իրավունքը<sup>47</sup>:

Այս ժամանակաշրջանի առավել կարևոր փաստաթուղթն էր «Ազատությունների մեծ խարտիա»-ն (*Magna Carta*), որն ընդունվեց Անգլիայում դեռևս 1215 թ.-ին: Այս փաստաթուղթն ինքնին ընդունվել է թագավորական իշխանության կամայականությունների սահմանափակման նպատակով: Ամրագրվում էին սկզբունքներ, որոնք միտված էին պաշտպանելու մարդկանց պետական պաշտոնյաների կամայականություններից: Օրինակ՝ խոսվում էր իրավախախտումների համար համարժեք պատասխանատվության սկզբունքի մասին՝ կախված արարքի բնույթից և ծանրությունից: «Ազատությունների մեծ խարտիա»-ն սահմանում էր արդեն իսկ այն ժամանակահատվածում կարևորագույն մի սկզբունք, համաձայն որի՝ ազատ մարդիկ չէին կարող բանտարկվել, զրկվել

45. Richard H. "Helmholz, Fundamental Human Rights in Medieval Law" (Fulton Lectures 2001), հասանելի է այստեղ՝

[https://chicagounbound.uchicago.edu/cgi/viewcontent.cgi?article=1006&context=fulton\\_lectures](https://chicagounbound.uchicago.edu/cgi/viewcontent.cgi?article=1006&context=fulton_lectures)

46. Annabel S. Brett, *Liberty, Rights and Nature: Individual Rights in later scholastic thought* (Cambridge 1997), էջեր 10-48:

47. Ավելի մանրամասն տե՛ս Richard H. "Helmholz, Fundamental Human Rights in Medieval Law" (Fulton Lectures 2001), հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://chicagounbound.uchicago.edu/cgi/viewcontent.cgi?article=1006&context=fulton\\_lectures](https://chicagounbound.uchicago.edu/cgi/viewcontent.cgi?article=1006&context=fulton_lectures)



սեփականությունից այլ կերպ, քան օրենքներին համապատասխան կայացված դատավճռով: Խարտիան նախատեսում էր յուրաքանչյուրի իրավունքը՝ դուրս գալու թագավորությունից և վերադառնալու թագավորություն<sup>48</sup>:

## Լուսավորության ժամանակաշրջան

Եվրոպական մայրցամաքում ընթացող զարգացումները և փոփոխությունները կարևոր նախադրյալներ ստեղծեցին մարդու իրավունքների արժեքային հիմքերի ստեղծման և զարգացման համար: Անկյունաքարային զարգացումները շարունակվեցին Անգլիայում, որտեղ 1679 թ.-ին թագավորական իշխանության կամայականությունների սահմանափակման նպատակով ընդունվեց «Հաբեաս կորպուս ակտ»-ը (Habeas Corpus Amendment Act)-ը: Այս փաստաթուղթը կարևորագույն հիմք էր ընթացակարգային երաշխիքների, ներառյալ անձի անձեռնմխելիության իրավունքի սահմանման համար: «Հաբեաս կորպուս»-ն ինքնին դատական որոշումն էր, որի նպատակն էր բացառել անձին անհարկի երկար ազատությունից գրկելը և պարտավորեցնում էր անձին անազատության մեջ պահող պաշտոնյային ներկայացնել ձերբակալվածին լորդ-կանցլերին: Փաստացի դեռ 17-րդ դարում Անգլիայում նախատեսվում էր անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը՝ ներառյալ բոլոր ընթացակարգային երաշխիքները, որոնք անհրաժեշտ են անազատության մեջ պահվող անձի իրավունքները երաշխավորելու համար: Այս մոտեցումները հետագայում սկսեցին տարածվել նաև այլ եվրոպական երկրներում:

17-18-րդ դարերին տեղի ունեցած իրադարձությունները և այդ ժամանակաշրջանում ապրած մեծ մտածողները առանցքային հետք թողեցին մարդու իրավունքների սրընթաց զարգացման և դեռևս անտիկ աշխարհից եկող համընդհանուր հավասարության սկզբունքի ամրագրման տեսանկյունից: Նման խոշոր մտածողներից էին Հուգո Հրոցիուսը, Բարուխ Սպինոզան, Ջոն Միլտոնը, Թոմաս Հոբսը, Ջոն Լոքը, Վոլտերը, Շառլ Մոնտեսքյոն, Ժան-ժակ Ռուսոն և այլք: Այս մտածողներն իրականում սահմանեցին մարդու և հասարակության փոխհարաբերությունների նոր ելակետեր:

Ֆրանսիական մեծ հեղափոխությունն իրականում մարդու իրավունքների առաջադեմ գաղափարների իրացման նպատակ ուներ, և այդ տեսանկյունից այն կարելի է համարել հաղթանակ: Իհարկե, դա միևնույն ժամանակ ողբերգություն էր ֆրանսիական ժողովրդի համար, քանի որ վերջինս ապրել էր յակոբինյան դիկտատուրայի սարսափները: Այս գաղափարների գագաթնակետը 1789 թ.-ին ընդունված Մարդու իրավունքների հռչակագիրն էր, որը փաստացի ամրագրում էր ժամանակի խոշոր մտածողների գաղափարները: Այսպես, Հռչակագիրն ամրագրում էր ազատությունը, հավասարությունը, ժողովրդի ինքնիշխանությունը, հասարակական պայմանագիրը, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքները: Վոլտերի, Մոնտեսքյոյի, Ռուսոյի գաղափարներն այն

48. Առավել մանրամասն տե՛ս Права человека и процессы глобализации современного мира. Ответственный редактор Е. А. Лукашева, էջ 34:

գաղափարական հենքն են, որի վրա զարգացան ազատամտությունը, կամայականության անթույլատրելիությունը և այլ համամարդկային արժեքներ:

Այստեղ հարկ է կանգ առնել ժամանակի մտածողներից մի քանիսի հայացքների վրա, որոնք հիմնաքարային էին արժեքների և մարդու իրավունքների տեսանկյունից:

**Շառլ Մոնտեսքյոն** (1689-1755)՝ ականավոր ֆրանսիացի մտածողը, իր փիլիսոփայական ուսումնասիրություններում մեծ տեղ էր հատկացրել հենց քաղաքական ազատության գաղափարի ուսումնասիրությանը: Մոնտեսքյոն համոզված էր՝ քաղաքական ազատության կյանքի կոչման համար անհրաժեշտ են արդար օրենքներ և պետականության պատշաճ կազմակերպում<sup>49</sup>: Մոնտեսքյոն ներկայացրեց գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատման գաղափարը՝ ի հակադրություն Լյուդովիկոս 14-րդի ժամանակահատվածի ֆրանսիայի: Նա կարծում էր, որ դեսպոտիզմից խուսափելու համար իշխանությունների տարանջատումը և փոխադարձ հավասարակշռումն ունեն առանցքային նշանակություն:

Ֆրանսիական իրականության և լուսավորության ժամանակաշրջանի ամենավառ մտածողներից էր **ժան-ժակ Ռուսոն** (1712-1778): Ռուսոյի գաղափարներում առանցքային է հավասարության անհրաժեշտությունը, և նա բավական սուր քննադատում էր իր ժամանակների անհավասարությունը և դեսպոտիզմը: Ըստ Ռուսոյի՝ հասարակության մեջ որևէ քաղաքացի չպետք է այնքան ունեցվածք ունենա, որ կարողանա գնել մեկ ուրիշին, և ոչ մի քաղաքացի չպետք է այնքան աղքատ լինի, որ ստիպված լինի իրեն վաճառել: Ռուսոն սուր քննադատում է իր ժամանակների անհավասարությունը և հանդես գալիս պատմությունն ուղղելու առաջարկով՝ հասարակական պայմանագրի տեսությամբ: Հասարակական պայմանագրի տրամաբանությամբ՝ յուրաքանչյուր մարդ փոխանցում է իր ունեցածը ընդհանուրին և ենթարկվում համընդհանուր կամքին՝ դառնալով ամբողջի մաս<sup>50</sup>: Ռուսոն տարբերակում էր մարդու՝ որպես քաղաքացու և քաղաքացիական հասարակության անդամի կարգավիճակները, ինչը փաստացի բխում է անտիկ ժամանակների մտածողների գաղափարներից:

Ականավոր գերմանացի փիլիսոփա **Գեորգ Ֆրիդրիխ Հեգելի** գաղափարները և տեսակետները շատ կարևոր դեր խաղացին իրավունքի և մարդու իրավունքների վերաբերյալ պատկերացումների հետագա զարգացման համար: Ըստ Հեգելի, օրինակ, քաղաքացիական հասարակության կարևորագույն բաղադրիչ էր համարվում մասնավոր սեփականությունը, որը պետք է պաշտպանվեր օրենքով, դատարանի և ոստիկանության միջոցով: Հետաքրքրական է, որ Հեգելը դեռևս 18-րդ դարում կարևորում էր օրենքների հրապարակայնացումը, հրապարակային դատավարությունը և երդվյալների ինստիտուտը դատավարության ժամանակ<sup>51</sup>: Հեգելը քննադատում էր ոստիկանական պետությունները և սահմանում ոստիկանության միջամտության սահմանները: Քաղաքացիական հասարակության բարձրագույն շահերը, որոնք պաշտպանվում են օրենսդ-

49. В.С. Нерсисянц, Философия права. 2001, էջ 472:

50. Руссо Ж. Ж. Об общественном договоре , или Принципы политического права// Трактаты. М., 1969, հղումն ըստ В.С. Нерсисянц, Философия права. 2001, էջ 472:

51. Георг Вильгельм Фридрих Гегель, Философия права. М. 1990, էջ 21:

րությամբ, դատարանով և ոստիկանությամբ, իրավունքի հասկացության զարգացմանը համապատասխան դուրս են բերում քաղաքացիական հասարակության սահմաններից դեպի պետության տիրույթ<sup>52</sup>: Հեգելի գաղափարները պետության և քաղաքացիական հասարակության մասին հիմնվում են, ի թիվս այլևի, նաև Պլատոնի և Արիստոտելի հայացքների վրա:

Այս ժամանակաշրջանի կարևորագույն փաստաթղթերից Էր նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների Անկախության հռչակագիրը, որն ընդունվեց 1787 թ.-ին, ինչպես նաև Մարդու իրավունքների բիլլը (1791 թ.):

## 20-րդ դարի մարդու իրավունքների փաստաթղթերի նախադրյալները

Մարդու իրավունքների ժամանակակից միջազգային իրավունքը և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ստեղծումը կարևոր պատմական նախադրյալներ ունեն:

19-րդ դարում ստրկության արգելքի և պատերազմները սահմանափակելու ջանքերը վառ օրինակ են: 1919 թվականին երկրները ստեղծեցին Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), որը նպատակ ուներ վերահսկելու պայմանագրերը, որոնք պաշտպանում են աշխատողների իրավունքները, ներառյալ նրանց առողջությունը և անվտանգությունը: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հիմնվեց Ազգելի լիգան, որը կարելի է համարել ՄԱԿ-ի իրավանախորդ կազմակերպությունը: Այն հաղթող դաշնակիցների կողմից ստեղծված միջազգային խաղաղության և համագործակցության կազմակերպություն էր: Ցավոք, Ազգերի լիգան կարճ ժամանակ անց կազմալուծվեց: Ամերիկայի Միացյալ Նահանգները հրաժարվեց միանալ, և, ավելին, Ազգերի լիգան չկարողացավ կանխել Ճապոնիայի ներխուժումը Չինաստան (1931), ինչպես նաև Իտալիայի հարձակումը Եթովպիայի վրա (1935): Այն վերջապես կազմալուծվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբով՝ 1939 թ.-ին:

**Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը:** Մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունն առավել սուր դրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Երկրորդ աշխարհամարտի ընթացքում մարդկային կյանքի կորուստները, տառապանքները, ներառյալ Հոլոքոսթը, մարդկությանը ամերեսեցին մարդկային որակների վատագույն դրսևորման հետ: Եվ պատահական չէ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Նյուրնբերգում և Տոկիոյում հաղթող պետությունների կողմից կազմակերպվեցին հատուկ դատավարություններ՝ ստեղծվեցին այսպես կոչված ad hoc տրիբունալներ: Այդ տրիբունալների նպատակն էր պատասխանատվության ենթարկել Գերմանիայի և Ճապոնիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը պատերազմի ընթացքում գործած ծանրագույն հանցագործությունների համար՝ մարդկության դեմ հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ, ագրե-

52. Георг Вильгельм Фридрих Гегель, Философия права. М. 1990, С. 21:

սիայի հանցագործություն և այլն: Կարող ենք ասել, որ այս գործընթացը մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմքերի ձևավորման հիմքը դրեց:

Հետագա զարգացումները բերեցին նրան, որ պետությունները հիմնադրեցին Միավորված ազգերի կազմակերպությունը՝ որպես ունիվերսալ միջազգային կազմակերպություն: ՄԱԿ-ի առաջնահերթ նպատակն է ամրապնդել միջազգային խաղաղությունը և անվտանգությունը, ինչպես նաև կանխարգելել պատերազմները և խթանել վեճերի խաղաղ կարգավորումը: Մարդու իրավունքների երաշխավորումը և որպես առաջնահերթություն դիտարկելը ՄԱԿ-ի կարևորագույն առաքելություններից են:

Մարդու իրավունքների այս ձևավորվող սկզբունքների Եությունը դրսևորվել է նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի 1941 թվականի ելույթում, երբ նա խոսում էր աշխարհի մասին, որը հիմնված է չորս հիմնական ազատությունների վրա՝ **խոսքի և կրոնի ազատություն, կարիքից ու վախից ազատություն**: Կոչերը հնչեցին ամբողջ աշխարհից՝ պահանջելով մարդու իրավունքների չափանիշներ՝ քաղաքացիներին իրենց կառավարությունների չարաշահումներից պաշտպանելու համար, չափանիշներ, որոնց դեմ ազգերը կարող են պատասխանատվության ենթարկվել իրենց սահմաններում ապրողների նկատմամբ վերաբերմունքի համար: Այս ձայները վճռորոշ դեր խաղացին 1945 թվականին Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած կոնֆերանսի ընթացքում, որի արդյունքում մշակվեց և ընդունվեց Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը՝ հիմք հանդիսանալով մարդու իրավունքների վերաբերյալ հսկայածավալ փաստաթղթերի մշակման և ընդունման համար:

ՄԱԿ-ի համակարգում հստակ ձևավորվեցին այն անհրաժեշտ փաստաթղթային հիմքերը, որոնք, կարելի է ասել, ամփոփեցին դարերի ընթացքում մարդկության տառապանքների արդյունքում ունեցած ձեռքբերումները՝ մարդու իրավունքների հիմք հանդիսացած արժեքային համակարգը:

### Հարցեր լսարանին

1. Ինչպիսի՞ փուլերի կարելի բաժանել մարդու իրավունքների զարգացումը:
2. Ի՞նչով էր առանձնանում մարդու իրավունքների վերաբերյալ միջնադարյան միտքը:
3. Ի՞նչ հիմնական գաղափարներ ունեին լուսավորության ժամանակաշրջանի մտածողները:

# ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ



«Սահմանադրության և առողջ բանականության միջև հակասություն չկա»<sup>53</sup>:

**Թոմ Զլարք, ԱՄՆ Գերագույն դատարանի դատավոր, 1949-1967 թթ.**

Այս գլխում կուսումնասիրենք, թե որոնք են պետության և իրավունքի, ինչպես նաև դատարանի գաղափարի ծագման և Էության այն ընկալումները, որոնք ընկած են ժամանակակից քաղաքակրթության հիմքում: Կներկայացվեն այդ քաղաքակրթության ներկայումս ամենաարդյունավետ իրավական գործիքի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ.-ի եվրոպական կոնվենցիայի իմացաբանական հիմունքները, այն, թե ինչ նորմատիվ, այսինքն՝ պարտադիր բովանդակություն ունեն մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, և թե ինչպես դրանք պետք է պաշտպանվեն ժամանակակից քաղաքակրթ երկրում՝ հիմք ընդունելով **աշխարհի անձնակենտրոն ընկալումը կամ պատկերը**: Կբացատրվեն նաև այդ ընկալումից բխող՝ պետության և դատարանի՝ զուտ մարդու իրավունքների իրացման նկատմամբ **հասցեատիրության** շնորհիվ գոյություն ունենալու փաստը, ողջամտության իրավունքը՝ ի տարբերություն կամքի կամ իշխանության իրավունքի, և վերջապես այն ողջամիտ դիտորդի գաղափարը, որն իրական գոյություն է հաղորդում նման հայտ ներկայացնող ինստիտուտներին:

53. Энн Джинджер, Верховный суд и права человека в США, М., Юрид. лит., 1981, էջ 194:

## 2.1. Պետության, իրավունքի և դատարանի ծագումն ու էությունը

### Աշխարհի անձնակենտրոն ընկալումը

Ինչ ենք հասկանում *աշխարհի անձնակենտրոն ընկալում* ասելով: Այս հարցի պատասխանը շատ կարևոր է, քանի որ մարդկային միավորման բոլոր կամավոր գործընթացները՝ լինեն անձանց թե պետությունների միջև, ենթադրում են համաձայնություն ամենակարևոր կետում, որի վրա հետագայում կառուցվում են բոլոր հարաբերությունները: **Աշխարհի անձնակենտրոն ընկալումը նշանակում է, որ ֆիզիկապես, բնության մեջ գոյություն ունի միայն մարդը, իսկ մարդկային կազմավորումները գոյություն ունեն նրա գիտակցության, սուբյեկտիվ իրականության մեջ՝ լինելով մարդկանց՝ իրենց սմանների հետ շփվելու կայուն հաստատված ձևեր:** Այդ ձևերն են ընտանիքը, համայնքը, պետությունը, պետությունների միությունները, որոնք չունեն իրենց սեփական ֆիզիկական գոյությունը բնության մեջ՝ ի տարբերություն դրանք կազմող կոնկրետ քաղաքացիների: Անձնակենտրոն աշխարհայացքի փիլիսոփայական ակունքները Հին Հունաստանում են: Սրա բանաձևված արտացոլումն է տվել Պրոտագորասը իր հայտնի ասույթում.

*«Մարդն է չափը բոլոր իրերի՝ գոյություն ունեցող առ այն, որ դրանք գոյություն ունեն, և գոյություն չունեցող առ այն, որ դրանք գոյություն չունեն»<sup>54</sup>:*

### **Արդյո՞ք հնարավոր է պետության, իրավունքի, արդարադատության և դատարանի մասին ապրիորի (փաստերից անկախ) գիտելիքը:**

Մարդիկ, իրենց առօրեական գիտակցությամբ հանդիպելով աղաղակող անարդարության, ասում են՝ այստեղ արդարադատություն չկա, դատարան չկա: Նրանք չեն ասում արդարադատություն կար, բայց վատն էր, կամ դատարան կար, բայց վատն է, քանի որ...: Նրանք փաստում են նշված «իրերի», տվյալ դեպքում *արդարություն* և *դատարան* երևույթների բացակայությունն այն պատճառով, որ դրանք չեն համապատասխանում այդ **գաղափարների իրենց ընկալմանը, այսինքն՝** ինչպիսին պետք է լինի դատարանը կամ արդարադատությունը: Է՛լ ավելի հետաքրքիր հանգամանք. սման կերպ արտահայտվողների գերակշիռ մասը երբեք չի տեսել, թե իրականում ինչպես է իրականացվում իրենց պատկերացրած արդարադատությունը այլ երկրներում, որպեսզի այն համեմատեին անարդարության հետ: Սա նշանակում է, որ արդարության բնագիրը հենց մարդու մեջ է, տրված է նրան ի ծնե: Այս առթիվ վերհիշենք Պլատոնի այն միտքը, որ մարդիկ ծնվում են գաղափարների աշխարհում ու այս կյանքում պարզապես մտաբերում են այն, ինչ իմացել են իրենց ծնվելուց առաջ:

54. И.Т.Фролов, Введение в философию, (в 2-х частях), часть 1, М., Политиздат, 1989, էջ. 105:

**Պետությունը՝ որպես մարդկային հարաբերությունների գոյության կայուն ձև, իրավունքը՝ որպես իրար հետ շփվող մարդկանց ազատության ձև**

Արիստոտելն ասում էր, որ մարդն *«իր Էությունը քաղաքական կենդանի է»*<sup>55</sup>: Այդ եզրակացությանը նա հանգել էր մարդու՝ իր նմանների հետ շփվելու, հարաբերվելու բնագոյն ուսումնասիրելու արդյունքում.

«Առօրեական ... պահանջմունքների բավարարման համար բնականորեն ծագած հարաբերությունը ընտանիքն է», «հարաբերությունը, որը բաղկացած է մի քանի ընտանիքից, գյուղ է», իսկ «հասարակությունը, որը բաղկացած է մի քանի գյուղից՝ լրիվ կազմավորված պետություն է»՝ որպես «բնական ծագման պտուղ, ինչպես և սկզբնական հարաբերությունները. այն նրանց ավարտն է, ավարտի մեջ էլ ի հայտ է գալիս Էությունը: Չէ՞ որ մենք ամեն մի օբյեկտի Էությունն ենք կոչում ... նրա այն վիճակը, որը ստացվում է նրա զարգացման ավարտին»<sup>56</sup>:

Այսինքն՝ պետության՝ որպես մարդու սոցիալականացման (մարդկայնացման) վերջնական վիճակի մեջ ի հայտ է գալիս մարդու բնույթը, Էությունը: Եվ քանի որ «Էությունը առաջնային է հարաբերությունից»<sup>57</sup>, ուստի մարդը առաջնային է այն կազմավորումներից, որոնք առաջանում են նրա՝ իր նմանների հետ շփման արդյունքում: Եվ վերջապես, «պետական շփումն ընդհանրապես անպատկերացելի է առանց դատարանի»<sup>58</sup>: **Այսինքն՝ մարդը, որքան քաղաքական, հասարակական, պետական, այնքան էլ դատական էակ է:**

Ժամանակակից քաղաքակրթության հիմքը դրած հույն փիլիսոփայի այս մտքերը վերացարկելով ևս մեկ մակարդակով՝ այսօր արդեն իսկ ականատեսն ենք պետությունների, մասնավորապես եվրոպական պետությունների շփմանը՝ որպես եվրոպական մայրցամաքի բնակիչների՝ եվրոպացիների շփման բարձրագույն ձևի, որը նույնպես միջնորդավորվում է ընդհանուր դատարանի գործունեությամբ, ինչպիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է: **Պետությունը, այսպիսով, պետք է ընկալել իբրև սկզբնական սուբստանցի՝ ինքնագիտակցությամբ օժտված մարդ էակի՝ իր նմանների հետ շփվելու կայուն ձև: Հակառակ մոտեցումը, որը հատուկ է ավտորիտար գաղափարախոսություններին, օժտելով պետությանը ինքնուրույն, մարդու հետ զուգահեռ ունեցած կեցությամբ, մարդուն դիտում է և ապա դարձնում իշխանության օբյեկտ՝ այդ պետության հետ իրենց նույնացնող այլ մարդկանց կամ խմբերի համար:**

Բնական է, որ, իբրև քաղաքական, հասարակական էակ, մարդը *իր նմանների հետ շփվելու ընթացքում կարիք ունի արդարության, քանի որ շփվելու բնագոյն հենց արդար հարաբերության մասնակից լինելու ձգտում է*: Այստեղ է, որ առաջ է գալիս իրավունքի գաղափարը, որը Հեգելը՝ Միտե-ի իրավափիլիսոփայական հիմքերը նախանշած

55. Аристотель, Сочинения, в 4-х т., т. 4, М., Мысль, 1984, էջ 379:

56. Նույն տեղում, էջ 377-378:

57. Նույն տեղում, էջ 59:

58. Նույն տեղում, էջ 584:

գերմանացի փիլիսոփան, բնորոշում է որպես «ազատություն»<sup>59</sup>: «Իրավունքն ընդհանրապես սուրբ մի իրողություն է»<sup>60</sup>, այն «վերաբերում է ազատությանը, ինչն ամենաարժանին ու սրբագանն է մարդու մեջ, և նա ինքը, քանզի այն իր համար պարտադիր է, պետք է իմանա այն»<sup>61</sup>: «Երբ իրավունքը ընկալվում է որպես ակտիվ, ապրող մարդկային գործընթաց, այդ ժամանակ նկատվում է, որ այն ընդգրկում է, ինչպես և կրոնը, մարդու ողջ էությունը՝ ներառյալ նրա երազանքները, զգացմունքները, գերագույն շահերը»<sup>62</sup>: Այդ իսկ պատճառով արդի իրավունքի իրավաբանական-ազատական (լիբերտար) ժամանակակից ընկալման մեջ իրավունքը բնութագրվում է որպես «**մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձև**»<sup>63</sup>:

Արդարության կամ ազատության առկայությունը, այսպիսով, գնահատվում է որպես այդպիսին միայն այն ժամանակ, երբ այն ընդունելի է հարաբերության մյուս մասնակիցների, քաղաքացիական հասարակության մյուս անդամների համար: Եվ անլուրջ կլինե՞ր մտածել, որ մարդը, ծնելով արդարության կամ իրավունքի, այսինքն՝ իր և իր նմանների համընդհանուր և միասնական ազատության գաղափարը, այդ նույն պահին չծնեց նաև այդ ազատությունը պահպանողի գաղափարը: Իրապես «դատավորի և դատարանի գաղափարը Երկրի վրա ծագել է այն հնագույն ժամանակներից, երբ մարդը սկսեց գիտակցել իրեն որպես խմբի, հասարակության անդամ»<sup>64</sup>:

Այսպիսով, այն պահից, երբ մարդը ձեռք բերեց ինքնագիտակցություն, իսկ նա դա արեց հենց իր նմաններից կազմված հասարակությունը իրենից տարանջատելու<sup>65</sup> և իրեն, այդպիսով, այդ հասարակության մաս համարելու արդյունքում, նրա մոտ ծագեց նաև իր նկատմամբ դատավորի գիտակցումը՝ ի դեմս այդ հասարակության, և իր ինքնագիտակցումը՝ որպես այդ հասարակության մի մասի՝ իբրև համընդհանուր դատավորի մի մասի՝ իր նմանների նկատմամբ: **Այսինքն՝ իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու գաղափարը մարդու մոտ ծագել է ինքնագիտակցության ձևավորման հետ միաժամանակ:**

Մարդկության ողջ պատմության ընթացքում, այսինքն՝ նրա ինքնագիտակցության, այն է՝ մարդու ծագումից ի վեր, մենք չենք կարող չտեսնել այն իրավական ձևերը, որոնք կոչված են եղել այս կամ այն կերպ ընկալվող արդարադատության ապահովմանը: Այդ իրավական ձևերը բազմապիսի են, և դրանց չպետք է մոտենալ իրավական նորմերի ժամանակակից ընկալմամբ. չէ՞ որ «անցյալին պարտադրված եզրույթաբանությունն անխուսափելիորեն հանգեցնում է դրա աղավաղմանը»<sup>66</sup>: Իրավական նորմերին այս տեսանկյունից նայելով՝ մենք անպայմանորեն տեսնում ենք, որ դատարանի գաղափարը նախորդում է այն գործառույթների կամ մարմինների գաղափարներին, որոնք այսօր ընդունված է կոչել *օրենսդիր* և *գործադիր*:

59. Гегель, Философия права, М., Мысль, 1990, էջ 59:

60. Նույն տեղում, էջ 90:

61. Նույն տեղում, էջ 253:

62. The Judge's Book, 2<sup>nd</sup> Edition, American Bar Association and the National Judicial College, 1993, University of Nevada, Reno, Nevada, 1994, էջ 16:

63. В.С. Нерсесянц, Философия права, М., Норма, 1997, էջ 34-35:

64. Отец Николай Соколов, в кн. П. Д. Баренбойма "Первая Конституция мира. Библийские корни независимости суда", М., Белые альвы, 1997, էջ 14:

65. Философская энциклопедия, т. 4, М., Советская энциклопедия, 1967, էջ 552:

66. М. Блок, Апология истории, М. 1973, էջ 94, մեջբերումն ըստ՝ П. Д. Баренбойм, "Первая Конституция мира. ...", էջ 74:



Դատարանի կամ դատական պաշտպանության իրավունքը, այսպիսով, ուղեկցում է մարդուն իր պատմության ողջ ընթացքում պատմություն, որը, իհարկե, միաժամանակ քաղաքականության, իրավունքի, մշակույթի և արդարադատության պատմությունն է: Վերածնունդը, որը խորհրդանշում է անձնակենտրոն աշխարհընկալման վերադարձը և մարդու արժանապատվության վերականգնումը, ի դեմս նրա մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ռաֆայել Սանտիի, արդարադատությունը պատկերում էր որպես մարդու հոգևոր կյանքի չորս ոլորտներից մեկը՝ փիլիսոփայության, աստվածաբանության և պոեզիայի հետ միասին (տե՛ս Ստանցա դելա Սենտուրայի ֆրեսկաները՝ «Աթենական դպրոց», «Բանավեճ», «Պառնաս», «Իմաստություն, ժուժկալություն, ուժ», 1509-1511թթ., Վատիկանի պալատ, Հռոմ)<sup>67</sup>:

Արդարադատությունը որպես բնական, աստվածատուր բարիք էր ընդունվում հնագույն իրավական հուշարձաններում: Մասնավորապես Մանուի օրենքների 8-րդ գլխի 17-րդ կետը ազդարարում էր և միաժամանակ նախազգուշացնում. «Միակ ընկերը, որն ուղեկցում է մեզ անգամ հետմահու, արդարադատությունն է, քանզի մնացյալ ամեն ինչ մահանում է մարմնի հետ»<sup>68</sup>: Հետաքրքիր է, որ մարդ էակը իր մահից հետո էլ է ցանկանում գտնել արդար դատարան՝ թույլ տալով արդարադատությանը (ի տարբերություն պետական մյուս բոլոր գործառույթների) ուղեկցել իրեն նաև «երկնքում»: Դրա օգտին են խոսում բոլոր ավանդական հավատ-ուսմունքները, ինչում արտահայտվում է մի կողմից՝ իրավունքի և դատարանի (որպես գործառույթի, այլ ոչ թե մարմնի) աստվածային բնույթը, իսկ մյուս կողմից՝ մարդկության՝ արդարության պատմականորեն չհագեցած ծարավը: Եվ այս առումով միանգամայն տեղին է հիշել ամերիկացի պետական գործիչ և գրող Դենիել Վեբսթերի (1782-1852 թթ.) այն կոչը, որ «արդարադատությունը մարդուն ամենից շատ հարկավոր է երկրի վրա: Եկեք չկտրենք նրա կոկորդը»<sup>69</sup>:

## **Պետության՝ մարդու իրավունքների հանդեպ հասցեատիրությունը որպես դրա լեգիտիմության հիմք**

Առաջին հայացքից կարող է թվալ, որ պետության և իրավունքի անձնակենտրոն ընկալման պարագայում մարդն «Էգոիստաբար» օտարվում է իր նմաններից կազմված գոյացություններից՝ ընտանիքից, համայնքից կամ պետությունից: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ **հենց աշխարհի անձնակենտրոն ընկալմամբ է, որ մի կողմից մարդը հնարավորություն է ստանում ստեղծելու այդ կազմավորումներն իր «սեփական կերպարով»**, իսկ մյուս կողմից բացառվում է այդ կազմավորումների ինքնաբավ գոյությունը իրենց անընդհատ ստեղծողի՝ մարդու ֆիզիկական գոյությանը զուգահեռ: Հենց վերմարդկային կազմավորումներին ինքնուրույն, մարդուց առանձին ֆիզիկական գոյություն հաղորդելն է, որ մարդուն օտարում է իր իսկ ընտանիքից, պետությունից և համայնքից, հատկապես եթե հաշվի առնենք, որ մարդու **կողքին զուգահեռ, ինքնաբավ**

67. "Мировая живопись. Энциклопедия", М., Олма-пресс, 2002, էջ 294:

68. Хрестоматия по Всеобщей истории государства и права, в 2-х т., под ред. К. И. Батыра и Е. В. Поликарповой, М., Юристь, т. 1-й, 1996, էջ 25-55:

69. Энн Джинджер, Верховный суд и права человека в США, М., Юрид. лит., 1981, էջ 245:

գոյություն ունեցող այդ կազմավորումներն անխուսափելիորեն սկսում են հանդես գալ առանձին մեկ մարդու կամ մարդկանց կազմակերպված խմբի դեմքով: Այս պարագայում մարդը դառնում է մի հսկա, իր համար խորթ մեքենայի պտուտակ, պետության հետ իրենց նույնականացնող այլ մարդկանց իշխանության օբյեկտ՝ արդյունքում իրականում օտարվելով և մեկուսացվելով այդ պետությունից և տառապելով դրան տիրացած իր պես մարդկանց անպատժելիության ու սեփական անզորության հոգեկան ցավից:

**Աշխարհի անձնակենտրոն պատկերի մեջ հենց շփվող մարդն է կեցություն հաղորդում պետաիրավական իրականությանը, պետական և հասարակական ինստիտուտներին, իսկ վերջիններս գոյություն ունեն միմիայն և պարզապես իբրև մարդու իրավունքների և պահանջմունքների բավարարման անհրաժեշտությամբ կյանքի կոչված հասցեատերեր:**

Այսինքն՝ պետության (պետական մարմնի) գոյության իրավունքը՝ **լեգիտիմությունը կամ հայերեն՝ իրավագոյությունը**, պայմանավորված է նրանով, թե որքանով է պետությունը իրացնում մարդու իրավունքները, իսկ պետական մարմինները որպես այդպիսիք կան բացառապես այնքանով, որքանով իրացնում են մարդու այս կամ այն պահանջմունքը կամ իրավունքը: Դրանք են՝ արդար դատարանի իրավունքը, անվտանգության, առողջության, կյանքի իրավունքը, ընդհանրապես՝ բոլոր քաղաքական և քաղաքացիական, մշակութային և սոցիալ-տնտեսական իրավունքները: Օրինակ՝ դատարանը գոյություն ունի որպես մարդու արդար դատաքննության իրավունքի հասցեատեր, մամուլը՝ որպես տեղեկություններ և գաղափարներ փնտրելու և տարածելու իրավունքի հասցեատեր, անվտանգության մարմինները՝ պաշտպանված լինելու, կյանքի իրավունքի հասցեատեր և այլն:

Հենց այդ **հասցեատիրության շնորհիվ էլ** օրենսդրորեն և բնական իրավունքով պետությանը և համապատասխան գործառույթներով օժտված մարմիններին վերագրվում են որոշակի պարտադիր հատկանիշներ կամ ատրիբուտներ, այն է՝ առարկայի կամ երևույթի անօտարելի հատկություններ, «որոնց բացակայությամբ այն չի կարող ոչ գոյություն ունենալ, ոչ էլ պատկերացվել»<sup>70</sup>: Օրինակ՝ դատարանի դեպքում դրանք են՝ օրենքի հիման վրա ստեղծված լինելը, անկախությունը, մատչելիությունը և լիազորվածությունը, որոնց մասին կիսովի սույն Ձեռնարկի՝ մարդու արդար դատաքննության իրավունքին նվիրված գլխում:

**Եվ եթե պետությունը կամ որևէ առանձին պետական մարմին չի համապատասխանում նշված հասցեատիրությունից բխող պահանջներին, ապա գոյություն չունեն իրականում որպես այդպիսիք, օտարված են բնությունից, իրենց կյանքի կոչող մարդուց, գոյություն ունեն ոչ թե իրականում, այլ երևակայության մեջ, ձևականորեն, իսկ բովանդակային առումով առկա են որպես զուտ պետության հետ իրենց նույնականացնող, այդ պետության կամ մարմնի անունից հանդես եկող մարդկանց անձնական կամ խմբային շահերի գործիք:**

70. Философский словарь, под ред. М. М. Розенталя и П. Ф. Юдина, М., Изд-во полит. литературы, 1963, էջ 37:

Այսպիսով, հենց մարդու իրավունքների նկատմամբ հասցեատիրությունն է, որ նշված պետական մարմիններին օժտում է լեգիտիմությամբ կամ, այլ խոսքով ասած, գոյության իրավունքով: Հասցեատիրության կոնցեպցիայից անմիջապես բխում է իրավունքների միաժամանակյա իրացման և սահմանափակման **համաչափության մեթոդը**, որի հիմքում ընկած է ընդհանրապես իրավունքի հասկացությունը՝ դրա լիբերտար բնորոշմամբ և այն թեզը, որ մարդու իրավունքը կարող է սահմանափակվել միայն նրա մեկ այլ, այդ թվում որպես խմբի կամ հանրության անդամ ունեցած իրավունք ապահովելու համար: Իրավունքի սահմանափակումների լեգիտիմության հարցերին կանդիդատականք սույն Ձեռնարկի «Մարդու իրավունքների սահմանափակումների լեգիտիմությունը» գլխում:

## 2.2. Ողջամիտ դիտորդի գաղափարը

Մարդը, որը հելլենիստական աշխարհում չափն էր բոլոր իրերի՝ դրանց գոյությունը կամ գոյագրկվածությունը արձանագրելու համար, ժամանակակից աշխարհի **ողջամտության իրավունքի (ի տարբերություն իշխանության կամ կամային իրավունքի)** համակարգերում դարձավ այն ողջամիտ, տեղեկացված և անաչառ դիտորդը, որի **կարծիքը որոշիչ է առ այն, թե արդյոք օրենսդրությամբ պահպանված են այս կամ այն իրավական երևույթին վերագրվող հատկանիշները կամ պահանջները**: Օրինակ՝ այն, թե արդյոք կարող էր դատավորը անաչառ և անկախ լինել տվյալ գործով, արդյոք ողջամիտ է եղել կոնկրետ բարդության աստիճան ունեցող տվյալ գործի քննությունը տվյալ ժամկետներում, արդյոք տվյալ գործով մինչդատական վարույթում հայտնի դարձած տեղեկությունները կամ փաստերը թույլ են տալիս ողջամտորեն պնդելու, որ մեղադրյալը կարող է առաջություն ունենալ հանցագործությանը, իսկ ազատ մնալու դեպքում ազդել վկաների վրա, դիմել փախուստի, կատարել նոր հանցանք, և հետևաբար արդյոք թույլատրելի է նրան կալանավորելը, թե ոչ, արդյոք գործով հետազոտված ապացույցներով անձի մեղավորությունը հանցագործության կատարման մեջ ողջամիտ կասկածից վեր է, և հետևաբար թույլատրելի է նրան դատապարտելը, և նման ցանկացած հարց որոշվում է՝ հղում անելով ողջամիտ դիտորդի գաղափարին ու նրա կարծիքին կամ համոզվույթին:

Ողջամիտ դիտորդի գաղափարը ձևակերպել է ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերը «Կրոնական հանդուրժողականության մասին» տրակտատում, որտեղ նա գրել է. «Ձեր դատավորներն են յուրաքանչյուր մարդու բանականությունն ու խիղճը»<sup>71</sup>: Մինչ այդ այս գաղափարն արդեն իսկ առկա էր Աստվածաշնչում: Մասնավորապես Նոր կտակարանում<sup>72</sup>, երբ Քրիստոսին հանդիմանում են, թե այդ ինչպես ես, մարդ լինելով, քեզ հռչակում Աստծո որդի, Քրիստոսը, վկայակոչելով սաղմոսներից մեկը (82:6 Սաղմոսը), պատասխանում է, որ արդյո՞ք նրանց գրքերում գրված չէ, և այդ գրվածը չափիտի այրվի.

71. Сочинения Вольтера, перев. с фр. М.Н.Тимофеевой, под ред. В.В.Битнера, "Трактат о веротерпимости", С.-Петербург, Изд-во "Вестника Знания", էջ 147:

72. Ավետարան ըստ Հովհաննու, 10: 34-36:

«Ես ասացի՝ Դուք աստվածներ եք», նշելով, փաստորեն, որ եթե հրեաների օրենքը մարդ Էակներին ասում է աստվածներ, ապա ինչու են նրանք նեղանում, երբ Նա ասում է, որ ինքն Աստծո Որդին է»:

Ժամանակակից աշխարհում ողջամտության իրավունքի հիման վրա առավել գործուն դատական մեկնաբանությունը, ՄԻԵԿ-ի նախատեսված իրավունքները երաշխավորելով, տալիս է ՄԻԵԴ-ը: ՄԻԵԿ-ը բոլոր, առաջին հերթին գնահատողական հասկացությունները մեկնաբանելիս (անկախ, անաչառ դատարան, հիմնավոր կասկած և այլն) որպես ելակետային է ընդունվում **ողջամիտ, անաչառ և տեղեկացված** դիտորդի գաղափարը, և Դատարանը Կոնվենցիայի կիրառելիությունը, խախտման փաստի առկայությունը կամ բացակայությունը որոշելիս հաշվի է առնում այն կարծիքի հնարավորությունը և համոզմունքի անհրաժեշտությունը, որը տվյալ իրավիճակում ողջամտորեն կարող է առաջանալ նշված դիտորդի մոտ:

ՄԻԵԿ-ն իրավունքի անձնակենտրոն Էությունից բխող **ողջամտության իրավունքի** նորմատիվ աղբյուր է, որտեղ գոյություն ունեցող ցանկացած իրավական երևույթ բնորոշվում է պրոտագորասյան «իրերի չափ» հանդիսացող մարդուց «ողջամիտ դիտորդի» վերածված մարդու միջոցով՝ ի տարբերություն **իշխանության իրավունքի**, որն իրավունքը լեգիտորեն դիտում է սոսկ որպես իրավական նորմերի ամբողջություն (միատեղելով Էությունը և երևույթը և մերժելով գրավոր չձևակերպված իրավունքի գործողությունը): Լեգիտատական ընկալման դեպքում բացառվում է պոզիտիվ օրենսդրությունը մեկնաբանելիս իրավունքի նոր աղբյուրի ստեղծումը, քանի որ ամեն ինչ արդեն ամրագրված է օրենքում կամ կիրառման ենթակա իրավական այլ ակտում: Որպես հետևանք՝ բացառվում է դատական մեկնաբանությունը, և դատարանը զրկված է *ինչ է ասում օրենքը* ասելու իրավունքից, այսինքն՝ միշտ գտնվում է մեծամասնության կամքը արտահայտող օրենքի ծառան՝ անկախ այդ օրենքի բովանդակությունից, խտրական կամ որևէ այլ պատճառով ոչ իրավական լինելուց և այլն:

Իսկ **ո՞վ է ողջամիտ դիտորդը**, ի՞նչ պահանջներ են ներկայացված նրան: Անվանումից արդեն իսկ երևում է, որ սա կողքից նայող, ինքնուրույն շահ չհետապնդող սուբյեկտ է, հավաքական կերպար, որի կարծիքը նրա տեղում լինելու դեպքում ողջամտորեն կկիսեին հասարակության այլ շարքային անդամները: Մյուս կողմից այս սուբյեկտը բնորոշվում է ոչ թե իր դիտորդությամբ, այլ **ողջամտության կրողը լինելու հատկանիշով**: Այս տեսակետից ասել, որ «ողջամիտ դիտորդը կարող է կարծել» նույնն է, ինչ «ողջամտորեն կարելի է կարծել» ասելը: Պարզապես ողջամտությունը անձնավորված է այն կրող հավաքական սուբյեկտով՝ երաշխավորելով վերջինիս ողջամտության թեստի օբյեկտիվությունը: Մասնավորապես ողջամիտ դիտորդն **ունի անհրաժեշտ նվազագույն տեղեկացվածություն**՝ այնքան, որ կարող է, օրինակ, ողջամտորեն պնդել, որ դատավորը, իր կարծիքով, օբյեկտիվորեն անաչառ չէ, չի կարող այդպիսին լինել, եթե նրա հարազատը կամ ինքը շահագրգռված է գործի ելքով: Մասնավորապես ՄԻԵԴ-ը ազգային դատարանների կողմնակալության մասին դիմումներով կայացված վճիռներում կիրառում է տեսանելի կամ օբյեկտիվ անաչառության թեստը՝ որքանո՞վ է կողմնակի դիտորդի համար համոզիչ, որ, օրինակ, դատավորը, որը գործով մեղադրյալի համադասարանցին

Է, կամ որը նախնական կալանք կիրառելիս իր որոշման մեջ գնահատողական դատողություններ Է արել անձի մեղավորության մասին, կարող Է անաչառ լինել գործն ըստ Էության քննելու և լուծելու համար:

Եթե ողջամիտ դիտորդի այս թեստի արդյունքում «որոշվում Է», որ անաչառությունը տեսանելի չԷ, այսինքն՝ ողջամիտ դիտորդը նշված հանգամանքներում «այնտեղ նստած» անձի մեջ անաչառ դատավոր չԷր տեսնի, ապա այդ դատավորը համարվում Է ոչ անաչառ դատավոր և չի կարող հանդես գալ որպես այդպիսին, այսինքն՝ **լինել դատավոր այդ կոնկրետ գործով: Նրա՝ տվյալ գործով դատավոր լինելու լեգիտիմությունը կամ, որ նույնն Է, տվյալ գործով դատավոր հանդես գալու իրավունքը չեղարկված Է ողջամիտ դիտորդի կողմից:** Ընդ որում, օրենսդիրը, օրինակ՝ Քրեական դատավարության օրենսգիրքը, ողջամիտ դիտորդի նման որոշումները կանխատեսելով, շատ կոնկրետ հիմքեր նախատեսել Է որպես դատավորի՝ գործով մասնակցությունը **բացառող** հանգամանքներ: Օրինակ, եթե դատավորը նույն գործով կայացրել Է դատավճիռ, նա չի կարող քննել այն բողոքարկման ատյանում, կամ եթե նա կողմերից մեկի մերձավոր ազգականն Է: Երկու դեպքում Էլ օրենսդիրը ողջամիտ դիտորդի հնարավոր մտահոգությունը բացառելու համար նշված դեպքերը սահմանել Է որպես դատավորի ինքնաբացարկի հիմքեր: Այսպիսով, չնայած դատավորը դեռևս չի դրսևորել իր կողմնակալությունը, օրենսդիրն արդեն ողջամիտ դիտորդի համար դատավորի տեսանելի անաչառությունը ապահովելու նպատակով սահմանել Է, որ այդ հիմքերի առկայությամբ դատավորը անաչառ չԷ, այսինքն՝ սահմանել Է «**դատավորի կողմնակալության կանխավարկածը**», որը **չի կարող հաղթահարվել դատավորի կողմից:** Օրինակ՝ վերջինս չի կարող սկսել ապացուցել, որ ինքը անաչառ կլինի, քանի որ, օրինակ, իր մերձավոր ազգականի հետ չի շփվում:

### Հարցեր լսարանին

1. Կարո՞ղ եք նշել այլ իրավիճակներ, որոնցում իրականության գնահատման չափանիշը ողջամիտ դիտորդն Է: Նման հասկացություններից են՝
  - ողջամիտ հիմքեր՝ մասնավորապես ենթադրելու, որ մեղադրյալը կդիմի փախուստի՝ որպես նրան կալանավորելու հիմք.
  - մեղավորության առթիվ ողջամիտ կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը:

## 2.3. Իրավունքի մեկնաբանություն և իրավունքի գերակայություն, ինքնավար հասկացություններ

Մարդ Էակը ստեղծում է պետություն իր կերպարով և կենսագործունեության համակարգով, ինչպես նաև գիտակցությամբ և մարդուն բնորոշ ֆունկցիոնալ հատկություններով: Դրանց թվին է պատկանում գիտակցության ակտիվ բնույթը, որը թույլ է տալիս թե՛ մարդուն և թե՛ պետությանը իրականության զարգացման կռահելի տարբերակների միջից ընտրել ցանկալին և ձևակերպել այն որպես **նպատակ**, որն էլ իր հերթին «իբրև օրենք որոշում է նրա գործողությունների եղանակն ու բնույթը, և որին նա պետք է ենթարկի իր կամքը»<sup>73</sup>:

1999 թվականի հունվարի 25-ին մեր պետությունը՝ որպես «ինքնագիտակցությամբ օժտված բարոյական սուբստանց»<sup>74</sup>, կատարեց ցանկալի իր ընտրությունը: Եվրոպայի խորհրդին անդամագրվելու և հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան վավերացնելու պահից ի վեր Հայաստանի Հանրապետության «կեցության օբյեկտիվ նպատակը», զարգացման ալգորիթմը դարձան եվրոպական համայնքում որդեգրված արժեքներն ու գաղափարները: **Սա նույնպես չափազանց կարևոր է ընդգծել՝ ցույց տալու համար, որ Ես-ին միանալը, այնուհետև Կոնվենցիան վավերացնելուց հետո ՄԻԵԴ-ի պարտադիր իրավագործությունը ճանաչելը եղել են Հայաստանի Հանրապետության՝ իբրև ՀՀ քաղաքացիների միմյանց հետ շփման կայուն ու վերջնական ձևի՝ Ես մյուս պետությունների հետ շփվելու ինքնիշխան և գիտակցված ընտրության արդյունքը:**

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի («Իրավական նորմերի աստիճանակարգությունը») 3-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը», այսինքն՝ Կոնվենցիայի, ինչպես և ՀՀ վավերացրած միջազգային բոլոր պայմանագրերի նորմերը ՀՀ իրավական համակարգի **գերակայող** բաղկացուցիչ մասն են: Վերջինս էլ բաղկացած է սահմանադրական և ընթացիկ օրենսդրությունից:

Այսպիսով, իրավական համակարգում վավերացված միջազգային պայմանագրերը դասվում են որպես սահմանադրական նորմերի աղբյուրներ և Սահմանադրության ուժով որպես բարձրագույն իրավաբանական ակտեր ունեն անմիջական գործողություն: Այդպիսի կարգավիճակ ունեն նաև ՄԻԵԴ-ի նախադեպերը՝ անկախ նրանից, թե Եվրոպայի խորհրդի անդամ ո՞ր երկրի վերաբերյալ են կայացված, քանի որ հենց այդ նախադեպերով է բացահայտվում ՄԻԵԿ-ի տեքստը և ապահովվում Կոնվենցիայի՝ ՄԻԵԴ-ի ձևակերպմամբ «կենդանի փաստաթուղթ» լինելը և միատեսակ մեկնաբանությունը ամբողջ Եվրոպայում:

73. К.Маркс, Маркс К. и Энгельс Ф., Сочинения, М., 2-е изд-ие, т. 12, Стр 717:

74. Гегель, Энциклопедия философских наук, т. 3, М., Мысль, 1977, Стр 350:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի («Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան») 1-ին մասի համաձայն՝

«Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

Սահմանադրության և օրենքների մեկնաբանությունը կատարում է դատարանը կոնկրետ գործով դրանք կիրառելիս: Ինչպես նշել է Թոմաս Հոբսը 350 տարի առաջ, «օրենքը մեկնաբանողը դատավորն է, որը կարդում է դատավճիռը *viva voce* (յուրաքանչյուր առանձին դեպքում)»<sup>75</sup>: Սա ենթադրում է նաև դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախության սկզբունքից բխող՝ բոլոր դատարանների կողմից Սահմանադրությունը (նաև վավերացված միջազգային պայմանագրերը) մեկնաբանել-կիրառելու միջոցով օրենսդրության դրվագային վերանայման լիազորությունը:

Ես Նախարարների կոմիտեի Ես անդամ պետություններին ուղղված «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» 94/12 հանձնարարականի (ընդունվել է 1994 թ. հոկտեմբերի 13-ին) 5-րդ՝ «Դատավորների պարտականությունները» սկզբունքի 3 -րդ մասի Գ կետը սահմանում է, որ դատավորը պարտավոր է «գործից կամ համապատասխան գործողություններից հրաժարվել **միայն** այն դեպքում, երբ դրա համար կան ծանրակշիռ հիմքեր: Այդպիսի հիմքերը պետք է նախատեսված լինեն օրենքով և կարող են, օրինակ, կապված լինել լուրջ հիվանդության, շահերի բախման կամ արդարադատության շահերի հետ»:

Մեկնաբանման իրավունքը պետք է ավելի լայն ընկալվի, քան գրված բարձրագույն օրենքը (Սահմանադրությունը) մեկնաբանելու իրավունք: Այն պետք է ընկալվի որպես դատավորի կողմից **ցանկացած դեպքում որոշում կայացնելու պարտականություն**. այո՛ կամ ո՛չ, երբեք՝ չգիտեմ: Հակառակ դեպքում արդարադատություն իրականացնելուց հրաժարվելն անխուսափելի է: Այս հարցում ուսանելի է Խրաեյի փորձը, որտեղ 1980 թ.-ին ընդունված դեկրետով սահմանվեց, որ «եթե դատարանը տեսնում է լուծում պահանջող որևէ իրավական խնդիր, բայց չի գտել դրա պատասխանը ո՛չ օրենսդրական նորմի, ո՛չ նախադեպային իրավունքի մեջ և ո՛չ էլ անալոգիայի միջոցների գործադրմամբ, ապա նա այդ հարցը կլուծի ազատության, արդարադատության, արդարության և խաղաղության սկզբունքների լույսի ներքո՝ Խրաեյի ավանդույթների շրջանակներում»<sup>76</sup>:

Փաստորեն դատավորը պետք է մեկնաբանի նաև իրավունքը, որպես «մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձև», որը պոզիտիվ (գրված) օրենսդրությանը հարաբերվում է ինչպես Էությունը երևույթին: «Օրենքը իրավունքի ձևն է»<sup>77</sup>, նրա

75. Տե՛ս Մ.Գ.Խաչատրյան, Օրենքի մեկնաբանման պատմությունից, Երևան, Օրենք և իրականություն հրատարակչություն, 2001, էջ 20-23:

76. Аарон Барак, Судейское усмотрение, перев. с англ., М., Норма, 1999, էջ 118 (перев. с Aharon Barack, Judicial Discretion, Yale University Press, 1989.

77. Г.Ф.Шершеневич, Теория права, М., изд-во бр. Башмаковых, 1911, էջ 381:

արտահայտչամիջոցը: Եթե օրենսդիրը դեռևս չի երևութականացրել Էությունը, որպեսզի հնարավոր լիներ գործը լուծել գրված օրենքների շրջանակներում, ապա դատավորը պարտավոր է, մեկնաբանելով իրավունքը կոնկրետ գործով, ստեղծել իրավունքի գրված աղբյուր՝ դատական որոշման (նախադեպի) տեսքով:

Այս հարցերը քննարկելիս անհնար է շրջանցել **օրենքի իրավականության** հարցը.

«Միայն իբրև իրավունքի արտահայտման ձև օրենքն իրենից ներկայացնում է իրավական երևույթ: ... Իրավական օրենքը հենց իրավունքն է ..., որը ստացել է ճանաչման, կոնկրետացման և պաշտպանության պաշտոնական ձևը, մի խոսքով՝ օրենքի ուժ:... Օրենքի իրավական բնույթն ու Էությունը ճանաչելու դիրքերից պարզ է, որ համապարտադիր ուժով օժտված պետք է լինի միայն իրավական օրենքը: Այլապես պետք էր ընդունել, որ որևէ իրավական բան գոյություն չունի, և ուժի ու բռնության օգնությամբ ցանկացած կամայականություն կարելի է փոխակերպել իրավունքի»<sup>78</sup>:

Այսպիսով, դատարանը մեծ դեր ունի կատարելու օրենքների իրավականության ապահովման գործում, ինչը կարող է արվել միայն Սահմանադրությունը (ևսև վավերացված միջազգային պայմանագրերը) մեկնաբանելու և կիրառելու միջոցով: Վերջապես ցանկացած դատարան, ինչպես տեսանք դատարանի սերումից (գենեզիսից), ունի **անտրոպոգեն** (մարդածին) **ֆունկցիա: Կախված նրանից, թե ինչպես են լուծվում վեճերը, այդպիսի քաղաքացի էլ երկրում դաստիարակվում է: Եթե դատարանը մշտապես կանգնում է գործատուի կողքին՝ արհամարհելով աշխատողների օրինական շահերը, ապա տարիների ընթացքում ծնելու է հարմարվող աշխատողի պահանջարկ: Ընտրակաշառք բաժանողին պատժից ազատող դատարանը ձևավորում է սեփական ձայնը վաճառելուն պատրաստ քաղաքացու, լեգիտիմացնում է այդ վարքագիծը:**

ՄԻԵԴ-ի իրավագործությունը ճանաչած բոլոր երկրներում Կոնվենցիան ունի գործող և առաջնային իրավաբանական փաստաթղթի ուժ: Ինչպե՞ս է ապահովվում դրա միատեսակ կիրառումը (գործողությունը), և ինչպե՞ս է հնարավոր լինում Կոնվենցիայում առկա դրույթները կիրառել ամենատարբեր իրավական համակարգեր և ավանդույթներ ունեցող երկրներում: Թե՛ ներպետական և թե՛ վերազգային մակարդակով իր գործառնությունները՝ վեճի անմիջական լուծումից սկսած մինչև ածանցյալ՝ անտրոպոգեն և տարբեր համակարգերի ներդաշնակեցման գործառնություններ, արդյունավետորեն իրականացնելու համար ցանկացած դատարանի անհրաժեշտ է, որ լինի ընդհանուր հայտարար առ այն, թե ինչ նորմատիվ բովանդակություն ունեն դատարանի կողմից կիրառվող հասկացությունները:

**Ամենահզոր գաղափարը, որ գործի է դրվում ՄԻԵԴ-ի կողմից՝ ապահովելով անդամ երկրներին ընդհանուր, հետզհետե ավելի բարձր հայտարարի բերելու խնդրի իրագործումը, ինքնավար (ավտոնոմ) հասկացությունների գաղափարն է:** Սրա

78. В.С.Нерсесянц, *Философия права*, М., Норма, 1997, էջ 36-37:



Եութիւնս այն է, որ Կոնվենցիայում ամրագրված հասկացութիւնները գործում են այնպէս, ինչպէս դրանք մեկնաբանվում են միջազգայնորէն՝ ՄԻԵԴ-ի կողմից, և անդամ պետութիւնները չեն կարող սեփական ազգային իմաստը կամ բովանդակութիւնը հաղորդել նշված հասկացութիւններին՝ այդ կերպ խուսափելով իրենց միջազգային պարտավորութիւնների կատարումից:

Պետութիւնները «պետք է իրենց ազգային օրէնսդրութիւնը համապատասխանեցնեն միջազգային չափանիշներին՝ ինչպէս որ դրանք մեկնաբանվում և կիրառվում են միջազգայնորէն. անդամ պետութիւններին վերապահված չէ ինքնուրույն որոշել, թէ ինչպիսի ներգործութիւն պետք է ունենան միջազգային չափանիշները - նրանց տրված է «հայեցողական գնահատման» (“margin of appreciation”) միայն սահմանափակ իրավունք: ... Միջազգային պայմանագրերը կիրառվում են բազմաթիվ միմյանցից տարբերվող համակարգերի նկատմամբ, և այն եղանակը, որով այդ պայմանագրերը կիրառվում են տվյալ համակարգերում, չի կարող պայմանավորված լինել օգտագործվող եզրույթների ազգային նշանակութամբ: Հակառակ դեպքում պետութիւնները կարող էին հեշտութամբ խուսափել իրենց պարտավորութիւնների կատարումից»<sup>79</sup>:

Միայն Կոնվենցիայի՝ *արդար դատաքննութիւն իրավունքն* ամրագրող 6-րդ հոդվածի հետ կապված վերջիններիս թվում կարելի է նշել *դատարան, մեղադրանք, քրեական, արդար, ողջամիտ ժամկետում* և այլ հասկացութիւններ: Սրանց տրվող մեկնաբանման, այլ խոսքով ասած՝ դրանց հաղորդվող բովանդակութիւնի հիմքում ընկած է այն ողջամիտ դիտորդի, հասարակութիւնի շարքային անդամի գաղափարը, որն իր հերթին անձնակենտրոն աշխարհայացքի արտահայտութիւնն է քրեական և ցանկացած այլ տեսակի դատավարութիւնում: Օրինակ, եթէ որևէ արարքի համար նախատեսված պատիժը անձի համար առաջացրել է կամ կարող էր առաջացնել այնպիսի զրկանքներ, որոնք իրենց բնույթով կամ նպատակով հավասարազոր են քրեական պատժին, ապա պետութիւնը չի կարող խուսափել 6-րդ հոդվածով անձին տրամադրված երաշխիքներն ապահովելուց՝ փաստարկելով, որ անձը չի համարվում *քրեական հանցագործութիւնի մեջ մեղադրվող*, քանի որ տվյալ արարքը նախատեսված չէ քրեական օրէնսգրքով:

Սա վերաբերում է ինչպէս դատավարական գործառնութիւններին, կարգավիճակներին, գործողութիւններին, այնպէս էլ այդ գործողութիւնները կատարող մարմիններին: **Այդ սահմանումները տրվում են՝ ելնելով մարդ անհատի վրա դրանց ներգործութիւնի հնարավոր կամ իրական հետևանքների բնույթից: Այլ խոսքով՝ բոլոր սահմանումներում իրավական բանաձևի մշտական անդամ է մարդը, նրա իրավունքները, ինչի շնորհիվ էլ միջազգային պայմանագրերը, այդ թվում՝ ՄԻԵԿ-ը, անդամ բոլոր պետութիւններում կիրառելի են միատեսակ ձևով:**

79. Տե՛ս Douwe Korff (professor of international law, London Metropolitan University London (UK)), “International standards in criminal procedure (with particular reference to the International Covenant on Civil and Political Rights and the European Convention on Human Rights and an overview of the requirements of the UN Convention Against Torture)”, March, 2003, էջ 10-11, <http://www.coehelp.org/course/view.php?id=11>:

Միջազգային պայմանագրերի և մասնավորապես ՄԻԵԿ-ի՝ որպես անմիջականորեն կիրառման ենթակա իրավական աղբյուրի տեքստում օգտագործվող հասկացությունների հետև ինքնավար նշանակությունն է, որ ապահովում է դրանց կիրառելիությունը՝ անկախ յուրաքանչյուր երկրի ազգային օրենսդրությամբ այս կամ այն եզրույթին հաղորդած բովանդակությունից:

**Իրապես, եթե ողջամտությունը ունիվերսալ կատեգորիա է, ապա ֆրանսիացի ողջամիտ դիտորդը չի կարող տարբերվել հայ ողջամիտ դիտորդից: Մարդու իրավունքների համընդհանուր բնույթը արգելում է ազգային օրենսդիրներին ստեղծել այնպիսի նորմեր, որոնք օրենքի անվան տակ կխախտեն իրավունքը՝ որպես Էություն:**

Վավերացնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ պետությունները պարտավորվել են մեկնաբանել կոնվենցիան և կիրառել այն նրանում օգտագործվող հասկացությունների միջազգայնորեն ընդունված իմաստով: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ԵԽ անդամ պետություն, միացել է այդ կազմակերպության կանոնադրությանը (ընդունվել է 05.05.1949 թ.), որի 3-րդ հոդվածն ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր ոք, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից»:

Անդամ երկրների նույն պարտավորությունը հռչակված է նաև ՄԻԵԿ-ի նախաբանում: Այդ պարտավորությունն իրացվում է մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Իսկ եթե ընդունենք, որ մարդու իրավունքներն ու ազատությունները «ելակետային իրավական սկզբունք»<sup>80</sup> են, ապա հասկանալի կդառնա, թե ինչու է ՄԻԵԿ-ը հետևողականորեն զարգացնում այն թեզը, որ, ***վավերացնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, անդամ պետությունները պարտավորվել են ապահովել իրավունքի գերակայությունը:***

Մարդու իրավունքների նախապատվության և իրավունքի գերակայության նույնականացումից բխում է, որ պետական մարմինների գործառնությունները, գործողությունները, որոշումները և անգամ այդ մարմինների կարգավիճակը որոշվում են՝ ելնելով իրավահարաբերության բանաձևի մշտական անդամ մարդ անհատի իրավունքների վրա դրանց ներգործության իրական կամ հնարավոր արդյունքից: Հենց սրա շնորհիվ է, որ մի կողմից իրավունքը՝ որպես Էություն և դեռևս չգրված, նախակեցական վիճակում դառնում է գործող իրավաբանական երևույթ, իսկ մյուս կողմից մարդ անհատը՝ որպես արբտրակտ՝ իրավահարաբերության մշտական ու անփոփոխ մասնակից՝ անկախ ազգային օրենսդրությամբ իրեն ընձեռնված կոնկրետ կարգավիճակներից և դրանցից բխող իրավունքների ու պարտականությունների շրջանակից:

80. В.С.Нерсесянц, Философия права, էջ. 375:

«Իրավունքն ընդհանրապես և մարդու իրավունքները տարբեր ֆենոմեններ չեն (իրենց Էությունմբ, գործառույթներով և Նշանակվածությամբ), որոնք միմյանցից անկախ կյանք են վարում, այլ սկզբունքորեն Նույն կարգի, Նույն Էության երևույթներ են: Մարդու իրավունքները .... ցանկացած իրավունքի անհրաժեշտ, անբաժան և անխուսափելի տարրն են, մարդկանց ազատության և հավասարության ձևի կեցության և իրականացման որոշակի (այն Է՝ սուբյեկտամարդկային) կողմը: Իրավունքն առանց մարդու իրավունքների Նույնքան անհնար Է, որքան մարդու իրավունքները՝ առանց իրավունքի և դրանից դուրս»<sup>81</sup>:

Այսինքն՝ իրավունքի գերակայությունն անհնար Է թե՛ պատկերացնել և թե՛ ապահովել՝ առանց մարդու իրավունքների կամ ընդհանրապես մարդու ավտոնոմ բնույթը պատկերացնելու և այդ իրավունքների «իրականությունն ու արդյունավետությունը» երաշխավորելու: Այս գաղափարն իր հերթին բխում Է պետության՝ իբրև քաղաքացու իրավունքների իրացման հասցեատեր լինելու գաղափարից և արտացոլված Է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ «հանրային իշխանությունը սահմանափակված Է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: **Այսինքն՝ պետությունը չի կարող հրաժարվել մարդու իրավունքների իրացման իր առաքելությունից՝ վկայակոչելով դրա իրացման մեխանիզմների գոյություն չունենալը, այն Է՝ սեփական անգործությունը:**

Իրավունքի գերակայության ընդունումը համաեվրոպական մակարդակով խոչընդոտում Է ազգային լեգիզմի դրսևորումները և այդպիսով Նպաստում տարբեր իրավական համակարգերի կոնվերգենցիային (համատեղմանը, մերձեցմանը), ինչը կատարվում Է հենց ՄԻԵԴ-ի միջնորդությամբ: «Լեգիզմը .... իրավունքը հանգեցնում Է օրենքին, օրենքը կտրում Է իր իրավական Էությունից, ժխտում Է օրենքի իրավական հատկությունները, որակները, բնութագրերը, մեկնաբանում այն որպես օրինաստեղծ իշխանության կամքի (և կամայականության) արդյունք», ինչի շնորհիվ «իրավունքի յուրահատկությունն անխուսափելիորեն հանգեցվում Է իրավունքի հարկադրական բնույթին»: Արդյունքում, տվյալ գաղափարախոսության համաձայն, իրավունքի մասին ճշմարտությունը «տրված Է օրենքում, որն արտահայտում Է օրենսդրի կամքը, դիրքորոշումը, կարծիքը», ուստի և միայն օրենսդիրն Է տեղեկացված Նրանից, թե «ինչ Է իրավունքը, և ինչով Է այն տարբերվում ոչ իրավունքից»<sup>82</sup>:

Այս հարցի լուծումը բանաձևված Ներկայացնում Է Արիստոտելը, որը Նշում Է, որ **«օրենքը չի կարող բնությունը դարձնել իրավունք կամ ուժը Ներկայացնել որպես իրավունքի աղբյուր»**<sup>83</sup>: Հետաքրքիր Է, որ Էվոլյուցիան, որն ընթանում Է և՛ կենդանաբանական, և՛ բուսական աշխարհում, առաջինի դեպքում ընդունում Է կոնվերգենտ, իսկ երկրորդի դեպքում՝ Նաև զուգահեռ տարբերակը: Այլ խոսքով ասած՝ մարդը՝ որպես կենսաբանական Էակ, ընդունակ Է (ասել Է թե՛ ենթակա Է) կոնվերգենտ (համատեղված) զարգացման: Նույնը, ինչ խոսք, պետք Է ընդունել Նաև այդ զարգացման արդյունքում

81. В.С.Нерсесянц, Философия права,, էջ 376:

82. Նույն տեղում, էջ 66:

83. Մեջբերումն ըստ՝ Գ.Գ.Հարությունյան, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Երևան, «Նժար», 2003, էջ 35:

ստեղծվող հանրային և պետական կազմավորումների համար: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը չի կարող զարգանալ Եվրոպային կամ ամբողջ աշխարհին զուգահեռ. ցանկացած պետության գոյության հիմքում ընկած է կոնվերգենտ Եվրոյուցիայի օրենքը, որը հսկող մարմինների և իրավաբանների կողմից գրի է առնվում որպես համատեղելիության նորմերի ամբողջություն և ձևակերպվում իբրև իրավունքի գերակայություն կամ մարդու իրավունքների նախապատվություն:

**Վերջապես, օրենքի նկատմամբ հենց իրավականություն կատեգորիայի կիրառումն է, որ իրավունք մասնագիտությունը դարձնում է գիտություն:** Այսինքն՝ այստեղ, իրավագիտության ոլորտում նույնպես գործում են *Էություն* և *երևույթ* կատեգորիաների հարաբերակցության օրինաչափությունները, որոնց բացահայտմանն էլ հենց կոչված է ցանկացած գիտություն: Իսկ լեգիստական «իրավա»ընկալումը, իրավունքը դիտելով որպես նույն իրավական նորմերի ամբողջություն, ժխտում է նշված օրինաչափությունների հենց բուն հնարավորությունը: Մինչդեռ, ինչպես իրավագիտորեն նկատել է Կ.Մարքսը, եթե «իրերի Էությունը և արտահայտման ձևերն անմիջականորեն համընկնեին, ցանկացած գիտություն կլիներ ավելորդ»<sup>84</sup>:

Օրենսդիրն ու իրավակիրառը պետք է միշտ հիշեն, որ իրավագիտության, ինչպես և ցանկացած գիտության մեջ հայտնագործական մոտեցումները բացառվում են. գիտությունը միայն մեկնում է գոյություն ունեցող օրենքները և ոչ թե ստեղծում դրանք: Չնայած որ Նյուտոնի օրենքները կոչվում են այդպես, սակայն դա չի նշանակում, որ մինչև դրանք հայտնաբերելը դրանք չեն եղել և չեն գործել: Մարդկությունը միայն գրի է առնում բնության օրենքները, որոնք, այսպիսով, բացառապես պետք է դիտել որպես բնության օրենքների մեկնության արդյունք, այդ թվում՝ նաև դատական նախադեպերի տեսքով:

Այսպիսով, ասելով, թե վավերացնելով ՄԻԵԿ-ը, անդամ երկրները պարտավորվել են **ապահովել իրավունքի գերակայությունը**, ՄԻԵԿ-ը արձանագրում է պետությունների՝ դատավորների կողմից օրենքը մեկնաբանելու իրավունք-պարտականությունը: Դատավորների կարգավիճակի մասին 1998 թ.-ի Եվրոպական խարտիայի բացատրական հուշագրի 2.1 կետը, ամրագրելով այն հատկությունները, որոնք անհրաժեշտ է վեր հանել դատավորների թեկնածուների մոտ, որպես պահանջ նշում է հետևյալը. «Խոսքն այն մասին է, որ սկզբից վեր հանվի թեկնածուների ունակությունը՝ ազատորեն գնահատելու իրավիճակները, որոնք ներկայացվում են դատավորի քննությանը, ինչը ենթադրում է **բանականության ազատություն**»<sup>85</sup>:

Դատավորի կողմից օրենքը մեկնաբանելու պարտականությունը բխում է նաև դատական իշխանության այնպիսի հատկությունից, ինչպիսին է նրա ինքնիշխանությունը (սուվերենությունը): Սուվերենության հատկությունն ընդգծում է դատական իշխանության անկախությունը իշխանության օրենսդիր ճյուղից: Հնարավոր է, որ վերջինս, կատարելով իր ընտրազանգվածի մեծամասնության պատվերը, ընդունի այնպիսի օրինագծեր, որոնք խախտում են փոքրամասնությունների կամ առանձին անհատների

84. К.Маркс и Ф.Энгельс, Сочинения, т. 25, Стр 384:

85. Խարտիան և դրա բացատրական հուշագիրը ընդունվել են 1998 թ.-ին Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի կողմից, տե՛ս <https://rm.coe.int/16807473ef>

իրավունքները և օրինական շահերը: Այստեղ է, որ դատարանը պետք է ապահովի մարդու սահմանադրական իրավունքները, որոնք խախտվում են օրենսդիր և ընդհանրապես իրավաստեղծ գործունեության այլ մարմինների ակտերով: Մարդու իրավունքները կարող են ոտնահարվել ոչ միայն տարաբնույթ գործողությունների ու անգործության, այլև «քաղաքական համաձայնության արդյունք հանդիսացող օրենքների կամ այլ նորմատիվ ակտերի միջոցով», ուստի դրանց «պաշտպանությունը երաշխավորված կլինի միայն ու միայն այն դեպքում, երբ մարդն օժտված է նաև սահմանադրական արդարադատության իրավունքով»<sup>86</sup>:

### **Հարցեր լսարանին**

1. Արդյո՞ք դատարանի կողմից մեծամասնության կամքն արտահայտող օրենքների կիրառումից հրաժարվելը չի նշանակում հակաժողովրդական գործունեություն:
2. Արդյո՞ք կարծիքի՝ մեծամասնության կողմից ճշմարիտ դիտվելը այն դարձնում է իրավացի:

86. Գ.Գ.Հարությունյան, իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, էջ 31:

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ



Այս գլխում կներկայացվեն մարդու՝ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով երաշխավորված իրավունքները և դրանց խախտման հարցը ՄԻԵԴ-ի կողմից գնահատելու մեթոդը: Ուսումնասիրվում են մարդու իրավունքների տեսակները՝ ըստ դրանց սահմանափակման հնարավորության (բացարձակ և սահմանափակելի իրավունքներ), իրավունքի խախտման և սահմանափակման տարբերակումը, իրավունքները երաշխավորելու ուղղությամբ պետության ունեցած նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների դասակարգման չափանիշները:

### 3.1. Պետության նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունները

Ընդհանուր կանոնն այն է, որ պետությունները պետք է հարգեն մարդու իրավունքները, ինչն ուղղակիորեն նախատեսված է ՄԻԵԿ-ի հենց 1-ին հոդվածով: Ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Այսինքն՝ պետությունը չի կարող հրաժարվել մարդու իրավունքների իրացման իր առաքելությունից՝ դրա իրացման մեխանիզմների բացակայությունը վկայակոչելով:

Մարդու իրավունքների իրացումը երաշխավորելու ուղղությամբ պետությունների ունեցած պարտավորությունները դասակարգվում են **նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների**: Առաջինների իմաստն այն է, որ պետությունը պետք է ձեռնպահ մնա որոշակի գործողություններից, օրինակ՝ մահապատիժը որպես պատժատեսակ խաղաղ թե պատերազմական պայմաններում նախատեսելուց, կոնվենցիոն իրավունքների իրացումը քրեականացնելուց և այլն: Օրինակ, եթե գործով պաշտպանը տեղեկություններ է ձեռք բերում այն մասին, որ իր պաշտպանյալի դեմ ցուցմունք տվող վկան նախկինում երեք անգամ դատապարտվել է սուտ մատնության համար, ապա պաշտպանը չի կարող պատասխանատվության ենթարկվել տվյալ վկայի անձնական կյանքին վերաբերող տվյալներ ձեռք բերելու և հրապարակելու համար, քանի որ դրանով իրացնում է իր պաշտպանյալի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված **արդար դատաքննության իրավունքի** մաս հանդիսացող **մեղադրյալի պաշտպանության իրավունքը**: Օրինակ՝ *Ջերսիլդն ընդդեմ Դանիայի գործով* 1994 թ.-ի սեպտեմբերի 23-ի վճռով<sup>87</sup> **լրագրողի նկատմամբ քրեական հետապնդումը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը դրա իրացման թուլատրելի շրջանակներում իրացնելու համար դիտվել է որպես այդ հոդվածով սահմանված արտահայտվելու ազատության իրավունքի մաս կազմող տեղեկություններ և գաղափարներ տարածելու իրավունքի խախտում**<sup>88</sup>:

Մյուս կողմից պետությունը չի կարող ձեռնպահ մնալ կոնվենցիոն իրավունքների հնարավոր խախտումները կանխելու պարտականությունից՝ անգամ այն դեպքերում, երբ նշված խախտման վտանգը ստեղծվել կամ նյութականացվել է մասնավոր անձանց գործողությունների հետևանքով: Պոզիտիվ պարտավորությունները մանրամասն քննարկվում են սույն Ձեռնարկի՝ խոշտանգումների և կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության դեմ պայքարին նվիրված գլուխներում:

87. Jersild v. Denmark, para. 37, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-57891%22%7D>

88. Կոնվենցիայի խախտումները կանխող օրենսդրական և իրավակիրառ կոնկրետ միջոցառումներ է նախատեսում ԵՆ Նախարարների կոմիտեի՝ 2004 թ.-ի մայիսի 12-ի անդամ երկրներին ուղղված Rec(2004)5 հանձնարարականը՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված չափանիշներին օրենքների նախագծերի, գործող օրենքների և վարչարարական պրակտիկայի համապատասխանությունը հավաստելու վերաբերյալ», [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectId=09000016805dd194](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805dd194)

### 3.2. Մարդու իրավունքների սահմանափակումների թույլատրելիությունը բացառապես այլ իրավունքների երաշխավորման համար

Ինչպես արդեն նշվեց, ժամանակակից ազատական (լիբերտար) ընկալման մեջ իրավունքը մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է: Իրավունքը ազատության մաթեմատիկան է, պարզապես տարբեր է բանաձևերի և հավասարումների անհայտների բովանդակային արտացոլումը: Իրավունքը օրենք հռչակած իշխող դասակարգի, Էլիտայի, այս կամ այն խմբի կամ մեկ իշխանավորի կամքը չէ, որը պարտադրվում է ոչ իշխող դասակարգին, փոքրամասնության մեջ գտնվող խմբերին կամ անհատին ընդհանրապես, այլ **սեփական ազատությունը գտնելու և վայելելու բոլորի կամքն է՝ ընդունելով դրանց սահմանափակումները՝ թույլատրելի հիմքերով և կարգով, վերջին հաշվով նույն սեփական ազատությունների և իրավունքների իրականացման համար:**

Եվ այսպես, **հասցեատիրության կոնցեպցիայից և իրավունքի լիբերտար սահմանումից անմիջապես բխում է իրավունքի սահմանափակման համաչափության մեթոդը:** Սա ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն, նախ և առաջ այն հնարավոր բախումների (կոլիզիաների) տեսանկյունից, որոնք առաջանում են անհատի իրավունքները սահմանափակելու միջոցով մեկ այլ անհատի կամ անհատների խմբի կամ հասարակության, այսինքն՝ վերջին հաշվով դարձյալ անհատի իրավունքները պաշտպանելիս: Մասնավորապես ՄԻԵԴ-ը հենց այս մեթոդով է լուծում այն հարցը, թե արդյոք անձի իրավունքի սահմանափակումը հանգեցրել է դրա խախտման, թե ոչ: Գնահատման հիմքում ընկած է համաչափությունը՝ որքանով է անհրաժեշտ եղել այս կամ այն սահմանափակումը մարդու իրավունքների և պահանջմունքների նկատմամբ իր հասցեատիրության ուժով լեգիտիմ դարձած ընդհանրության՝ հասարակության շահերի ապահովման տեսանկյունից:

Նման կոլիզիաների ամենացայտուն օրինակը **քրեական արդարադատության ոլորտում մեղադրյալի իրավունքների սահմանափակումն է** հանցագործությունը բացահայտելու, մեղավորներին հայտնաբերելու և արդյունավետորեն պատժելու լեգիտիմ շահի ուղղությամբ: Այդ կոլիզիաներն առաջանում են **ցանկացած կոնկրետ քրեական գործի շրջանակներում** ցանկացած փուլում, և դրանք կարող են ստանալ այլ դրսևորումներ ևս, որոնց անընդհատ անդրադառնում է ՄԻԵԴ-ը՝ Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքի ներքո բերված դիմումները քննելիս, և որոնց մենք կանդրադառնանք դասընթացի համապատասխան թեմաները լուսաբանելիս: Օրինակ՝ իրար հետ են խաչվում այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են.

- *մեղադրյալի կողմից իր դեմ ցուցմունք տված վկաներին առերես հարցաքննելու իրավունքը և վկաների, այդ թվում տուժող անձանց անվտանգության ապահովման լեգիտիմ շահը.*



- լրագրողի կողմից իր տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իրավունքը և ապացույցներն սկզբնաղբյուրից հետագոտելու՝ արդարադատության իրականացման լեգիտիմ շահից բխող քրեական դատավարության անմիջականության սկզբունքը կամ նույն աղբյուրի չբացահայտման իրավունքը և հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ կատարվող հանցագործության կամ առկա վտանգի մասին հասարակության, այսինքն՝ վերջին հաշվով՝ այլ մարդկանց տեղյակ լինելու իրավունքը:

Այս ցանկը կարելի է անվերջ շարունակել, քանի որ նման օրինակներ ամեն օր ու ամեն պահի առաջանում են առօրյա իրականության մեջ՝ կազմելով իրավունքի բուն կենսագործունեությունը: Պետք է հիշել, սակայն, որ, անկախ այդ խաչվող իրավունքների և օրինական շահերի կոնկրետ բովանդակությունից, հասցեատիրության՝ իբրև անձնակենտրոն աշխարհայացքից բխող մեթոդի գործնական նշանակությունը հենց այն է, որ նշված **բոլոր կողիզիաները լուծվում են**՝ ելնելով անմիջականորեն կամ հասարակական շահի միջնորդավորմամբ հանդես եկող մարդու տարբեր իրավունքները կոնկրետ գործով **հավասարակշռելու** շահերից: Մասնավորապես նշված օրինակներում հակակշռվում են մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը և մարդու՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը կամ մեղադրյալի իրավունքներն ու մարդու՝ հանցագործություններից իրեն անվտանգ զգալու և լինելու լեգիտիմ շահը: **Միանգամից մեկից ավելի լեգիտիմ շահերը իրացնելու կարողությունն էլ հենց կոչվում է իրավականություն:**

**Որպես օրինակ վերցնենք քրեական գործով վարույթը:** Նպատակադրվածության տեսանկյունից քրեական վարույթը լիազորված մարմինների գործունեություն է՝ ուղղված հանցագործությունը և այն կատարած անձին բացահայտելուն և դրա մասնակիցների իրավունքները պաշտպանելուն: Քրեական դատավարությունը, այսպիսով, ունի երկու խնդիր, **բայց մեկ նպատակ**՝ հնարավոր չէ խոսել խնդիրներից մեկի մասին առանց մյուսը պաշտպանելու և հակառակը:

Այստեղ է, որ առաջ է գալիս քրեական **դատավարական ձևի միասնականությունը**, որը բավականին լուրջ հետազոտվել է խորհրդային դատավարագիտության մեջ և նոր շնչով է լցվում իրավունքի լիբերտար փիլիսոփայության ձեռքբերումների ներքո: Ըստ դրա՝ քանի որ իրավունքը մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է, **քրեական դատավարությունը նրա մասնակիցների ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է:** Քրեական դատավարության ցանկացած մասնակցի ցանկացած իրավունքի խախտում, ըստ սահմանման, (*a priori*) մյուս բոլոր մասնակիցների իրավունքների խախտումն է, քանի որ այդպիսով խախտվում են **դատավարական այն միասնական ձևի** պահանջները, որում և միայն որում դատավարության մյուս բոլոր մասնակիցները դրսևորում են իրենց իրավասուլթելիությունը, հետևաբար և գործում որպես այդպիսիք:

Այստեղ է, որ անհրաժեշտ է հստակ արձանագրել, որ քրեական դատավարությունը ոչ թե պարզապես պետաիշխանական լիազորություններով օժտված մարմինների գործունեությունն է՝ ուղղված իրենց՝ վերը նշված խնդիրների լուծմանը, այլ նաև այն անձանց իրավունքների արտահայտման ձևը, որոնց այդ գործունեությունն ուղղված է: **Այլ խոսքով ասած՝ այն անձինք, որոնց ուղղված է պետական մարմինների գործունեությունը, երբեք չեն դառնում այդ գործունեության օբյեկտներ, այլ իրավագոր սուբյեկտներ են:** Անգամ, երբ անձը մեղավոր է ճանաչվում հանցագործության կատարման մեջ, նա չի հայտարարվում օրենքից դուրս, չի զրկվում իր սուբյեկտայնությունից և պահպանում է այն բոլոր իրավունքները, որոնցից չի զրկվել դատավճռի համաձայն նշանակված պատժով և, իհարկե, պահպանում է բոլոր բացարձակ իրավունքները, որոնց մասին կխոսվի քիչ անց:

### 3.3. Բացարձակ և սահմանափակելի իրավունքների դասակարգման հիմքը, նշանակությունը և չափանիշները: Իրավունքի խախտում և իրավունքի սահմանափակում

Այսպիսով, մարդու իրավունքը սահմանափակելու հիմք կարող է լինել նրա՝ թեկուզ իբրև հանրության առանձին մասնիկի ունեցած մեկ այլ իրավունքը երաշխավորելու կարիքը: Սակայն գոյություն ունեն այնպիսի իրավունքներ, որոնք ոչ միայն չեն կարող խախտվել, այլև չեն կարող անգամ սահմանափակվել, այսինքն՝ դրանց ցանկացած սահմանափակում արդեն իսկ իրավունքի խախտում է: **Մասնավորապես մարդկային արժանապատվությունը՝ որպես եզրային իրավական երևույթ, անձնակենտրոն, այդ թվում՝ ՄԻԵԿ-ի համակարգում, չի կարող ենթարկվել որևէ սահմանափակման: Ինչպես ֆիզիկայում ամենափոքր տարրերը էլեմենտար մասնիկներն են, որոնք այլևս չեն կարող տրոհվել, բայց որոնցից հենց դրա ուժով կազմված է ողջ նյութական աշխարհը, այնպես էլ իրավունքում արժանապատվությունն է այլևս անբաժանելի տարրը, որը չի կարող օտարվել, սահմանափակվել որևէ մասով, սակայն դրա արտացոլմանն ու իրացմանն է ուղղված ամբողջ իրավական մշակույթը:**

Մարդը չի կարող սահմանափակել իր արժանապատվությունը, որևէ նպատակով, հիմքով հրաժարվել դրանից, տալ մյուսին: Ցանկացած նպատակ խամրում է դրա առաջ: Հենց արժանապատվությունից են բխում **բացարձակ իրավունքները, այսինքն՝ այն իրավունքները, որոնց ցանկացած սահմանափակում արդեն իսկ իրավունքի խախտում է:** Անգամ անձի համաձայնության դեպքում դրանց սահմանափակումը չի կարող համարվել լեգիտիմ, որևէ լեգիտիմ շահ չի կարող արդարացնել դրանց որևէ սահմանափակում: Այս իրավունքները չեն կարող սահմանափակվել անգամ արտակարգ դրության ժամանակ (տե՛ս ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի 2-րդ մասը):

Փաստից, որ ոչ մի լեգիտիմ շահ չի կարող արդարացնել բացարձակ իրավունքների սահմանափակումը, ուղղակիորեն բխում է, որ այս իրավունքների սահմանափակմամբ ծագած փաստերը, օրինակ՝ անձի՝ գործարք կնքելու համաձայնությունը, խոստովանական ցուցմունքը և այլն, չեն կարող համարվել թույլատրելի և որևէ կերպ օգտագործվել: Ավելին, քրեական դատավարությունում, եթե մարդու այլ իրավունքների (օրինակ՝ մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի կամ անձի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքի) խախտման դեպքում ՄԻԵԴ-ը անձի արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը գնահատելիս ուսումնասիրում է, թե արդյոք այդ իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցները **վճռորոշ նշանակություն** են ունեցել անձի դատապարտման համար, ապա, օրինակ, խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցը (այդպիսին կարող է լինել, օրինակ, խոստովանական ցուցմունքը) որպես ապացույց դատարանի կողմից օգտագործված լինելու դեպքում դատապարտումը դարձնում է անօրինական: Սա այդպես է՝ անկախ այդ ցուցմունքի՝ գործով ունեցած նշանակությունից և մեղքը հիմնավորող այլ ապացույցների առկայությունից:

**Այնուհետև՝ բացարձակ են այն իրավունքները**, որոնք ունի յուրաքանչյուր ոք՝ անկախ այն իրավահարաբերությունների (այսինքն՝ իրավական նշանակություն ունեցող կամ իրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների) բնույթից և բովանդակությունից, որոնց մեջ նա մտնում է, և անկախ այդ իրավահարաբերությունների մեջ մտնելու փաստից և ձեռքբերվելիք կարգավիճակից: Իրավունքների՝ բացարձակ և ոչ բացարձակ կամ սահմանափակելի դասակարգման հիմքում, այսպիսով, ընկած են հետևյալ չափանիշները՝

- *չկա որևէ լեգիտիմ շահ, անգամ համապետական նշանակության, որը կարող է արդարացնել բացարձակ իրավունքների սահմանափակումը.*
- *բացարձակ իրավունքի ցանկացած սահմանափակում արդեն իսկ այդ իրավունքի խախտում է.*
- *անձը չի կարող հրաժարվել իր բացարձակ իրավունքներից, իսկ հրաժարվելու դեպքում այդ հրաժարումն առոչինչ է.*
- *բացարձակ իրավունքի առկայությունը կախված չէ այն կոնկրետ կարգավիճակներից, որոնք անձը ձեռք է բերում իրավահարաբերությունների մեջ մտնելով, այսինքն՝ կախված չէ այդ հարաբերությունների բովանդակությունից:*

Բացի սրանից՝ նշված դասակարգման հիմքում ընկած է նաև **խտրականության անթույլատրելիությունը**: Մասնավորապես բացարձակ իրավունքների պարագայում, երբ ցանկացած սահմանափակում անընդունելի է, անդամ պետությունն իրավունք չունի վկայակոչելու, որ նույն վերաբերմունքն է դրսևորում նույն կարգավիճակը ունեցող մյուս բոլոր անձանց նկատմամբ: Օրինակ՝ **Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2002 թ.-ի հուլիսի 15-ի վճռում Դատարանը, ելնելով ուղղիչ-աշխատանքային հիմնարկում պահվող անձանց՝ շնչին ընկնող տարածքից և այլ խոշտանգման հանգեցնող պահման պայմաններից, արձանագրեց «նվաստացուցիչ վերաբերմունքի» առկայություն՝ չհամաձայնելով Ռուսաստանի Կառավարության այն փաստարկի հետ, որ այդ պայմանները նույնն են կամ ավելի վատը չեն երկրի մյուս քրեակատարողական հիմնարկ-

ների համեմատ, և որ ՌԴ իշխանությունները նպատակ չեն ունեցել խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի ենթարկելու դիմումատուին<sup>89</sup>:

Մյուս կողմից բացարձակ իրավունքների կոնցեպցիան սերտորեն կապված է **մարդկային քաղաքակրթության պրոգրեսի (այսինքն՝ առաջընթացի զարգացման) հետ**, ներառյալ՝ կենցաղային պայմանների ապահովման առաջընթացը. այն, ինչ նախկինում կարող էր սովորական համարվել որոշ պահանջմունքներ հոգալու համար, այժմ կարող է դիտվել որպես արժանապատվությունը նվաստացնող վիճակ: **Միլիադինն ընդդեմ Ֆրանսիայի** գործով 2005 թ.-ի հուլիսի 26-ի վճռում<sup>90</sup> Դատարանը Դիմումատուի՝ բուն ծանր բնակարանային պայմանները (Տոգոյից եկած անչափահաս աղջկա՝ իրեն հարկադիր աշխատանքի մատնած ամուսինների տանը նրանց երեխաների հետ սենյակում քնելը) ինքնին խախտում չհամարեց, բայց գնահատեց դա այլ հանգամանքների հետ համակցությամբ (անձնագիրը վերցնելը, օրական 15 ժամ առանց հանգստյան օրերի անվճար աշխատելը և այլն)՝ արձանագրելով ՄԻԵԿ-ի՝ ստրկությունն ու համանման վիճակն արգելող 4-րդ հոդվածի խախտումը: Այս գործով (կետ 123) ՄԻԵԿ-ը վերահաստատեց **Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի** գործով 1999 թ.-ի հուլիսի 28-ի վճռում մեկ այլ բացարձակ իրավունքի՝ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման արգելքի խախտում արձանագրելիս իր արտահայտած հետևյալ դիրքորոշումը՝

«... Առանձին գործողություններ, որոնք նախկինում դասակարգվում էին որպես «անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք» (այլ ոչ «խոշտանգում»), ապագայում կարող են դասակարգվել այլ կերպ... քանի որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում հետզհետե ավելի արդիական է դառնում չափորոշիչների բարձրացման անհրաժեշտությունը, ինչն անխուսափելիորեն պահանջում է ավելի խիստ լինել ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքների խախտված լինելը գնահատելիս»<sup>91</sup>:

Նախադեպային այս դիրքորոշման մեջ ընկած է մարդկային արժանապատվության, մարդկային կյանքի անանց արժեք ունենալու և վերջինիցս բխող առաջընթացի գաղափարը: Այսինքն՝ գնալով՝ կիրառելի նորմատիվների պահանջները անելու են, հետևաբար բարձրանալու է նաև այն սահմանագիծը, նորման, որից ցածր բնակության պայմանները դիտվելու են որպես նվաստացուցիչ իրավիճակ ստեղծող: Պետք է հիշել, որ առաջընթացը նվազագույն չափանիշների զարգացումն է, ընդհանուր հայտարարի մեծացումը, այլ ոչ թե այսպես կոչված Էլիտայի առաջընթացը: **Այլ խոսքով ասած՝ ճիշտ է, պետությունը չի կարող պարտավորված լինել ապահովել անձի համար այն ամենը, ինչն իրենց կարող են թույլ տալ առանձին՝ առավել վճարունակ մարդիկ, սակայն պարտավոր է ապահովել այն, ինչ առաջընթացի ուժով արդեն իսկ համարվում է նվազագույն մակարդակ:**

89. Kalashnikov v. Russia, para. 93, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-60606%22%7D>

90. Siliadin v. France, para. 121, 126-129, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-69891%22%7D>

91. Selmouni v. France, para. 101, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-58287%22%7D>

Վերջապես, ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից»:

Այսպիսով, մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համակարգում բացարձակ են հետևյալ իրավունքները.

- Ոչ ոքի չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից (2-րդ հոդվածի 1-ին մաս):
- Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանազումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի (3-րդ հոդված):
- Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում (4-րդ հոդվածի 1-ին մաս):
- Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին (7-րդ հոդվածի 1-ին մաս):

## **Հարցեր լսարանին**

1. Արդար դատաքննության իրավունքը բացարձակ է, թե՞ սահմանափակելի:

### 3.4. ՄԻԵԴ-ի թեստը իրավունքի սահմանափակումների իրավաչափության վերաբերյալ: Մարդու իրավունքները սահմանափակող նորմերի սահմանափակ մեկնաբանման կանոնը

Մարդու իրավունքների սահմանափակման սահմանները քննարկենք ՄԻԵԴ-ի կողմից իրականացվող թեստի հիման վրա՝ հաշվի առնելով դրա կիրառման հարուստ փորձը և ՄԻԵԴ-ի պրակտիկայի պարտադիր լինելը Հայաստանի համար: Ինչպես արդեն նշեցինք, **գոյություն ունեն մարդու բացարձակ իրավունքներ, որոնք չեն կարող սահմանափակվել որևէ պարագայում, և հետևաբար դրանց ցանկացած սահմանափակում արդեն իսկ խախտում է:** Սրան հակառակ՝ մյուս իրավունքները կարող են սահմանափակվել, և ՄԻԵԴ-ի կայուն հաստատված նախադեպային իրավունքում մշակվել է այն մեթոդաբանությունը, որով գնահատվում է, թե արդյոք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տվյալ իրավունքի սահմանափակումը կա, այլ կերպ ասած՝ իրավունքին միջամտությունը հանգեցրել է դրա խախտման, թե ոչ: Այդ մեթոդաբանությունը կամ թեստը կազմված է մի քանի քայլերից, որոնցով ՄԻԵԴ-ը հերթականությամբ պարզում է, թե արդյոք.

- գործով փաստերը վերաբերում են ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքին.
- երաշխավորված իրավունքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն.
- միջամտությունը նախատեսված է եղել օրենքով.
- օրենքով նախատեսված միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ.
- իրավունքի սահմանափակումը անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, այսինքն՝ եղել է նպատակին համաչափ, և եթե այո, ապա արդյոք միջամտությունը կրել է խտրական բնույթ, թե ոչ:

Սկսենք ՄԻԵԴ-ի կողմից անձնակենտրոն աշխարհայացքի և ինքնավար հասկացությունների կիրառմամբ առավել կարևորություն ներկայացնող քայլերից՝ այն պահից, երբ կարող ենք ասել, որ սահմանափակվել է գոյություն ունեցող իրավունք, կամ, ինչպես ՄԻԵԴ-ն է ձևակերպում, վերջինիս նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն: Եվ այսպես, ցանկացած սահմանափակում խախտում է դառնում հենց նրա ուժով, որ **այդ սահմանափակումը նախատեսված չէ օրենքով:** Այսինքն, եթե միջամտությունը՝ դրա հիմքերը և կարգը, նկարագրված չեն օրենքում, ապա ուսումնասիրության հետագա քայլերն առարկայազուրկ են՝ իրավունքի խախտումն արձանագրվում է արդեն իսկ միջամտության պահից:

Սակայն, ինչպես հիշում ենք, վավերացված միջազգային պայմանագրերում, այդ թվում Կոնվենցիայում առկա հասկացությունները, տվյալ դեպքում *օրենք* հասկացությունը, ունեն ինքնավար նշանակություն: Այսինքն այդ եզրույթի բովանդակությունը տրված է ոչ թե Կոնվենցիայի յուրաքանչյուր անդամ պետության, տվյալ դեպքում ՀՀ օրենսդրության մեջ, այլ Կոնվենցիան մեկնաբանող վերաբնակական դատական մարմնի՝ ՄԻԵԴ-ի նախա-

դեպերում: **Մալոնս ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով 1984 թ. օգոստոսի 2-ի վճռում ՄԻԵԴ-ը հստակ նշել է, որ.

«Իրավունքի գերակայությանը կհակասեր գործադիրին վերապահված իրավական որևէ հայեցողություն, որն արտահայտված կլիներ անկաշկանդ լիազորություն ևսխատեսող եզրույթներով: Հետևաբար օրենքը պետք է բավարար հստակությամբ սահմանի իրավասու մարմիններին վերապահված ցանկացած նման հայեցողության սահմանները և դրանց իրացման կարգը՝ հաշվի առնելով ինդրո առարկա միջամտության միջոցի իրավաչափ նպատակը՝ այն հաշվով, որ անհատին համարժեք պաշտպանություն տրամադրի կամայական որևէ միջամտությունից»<sup>92</sup>:

**Նիեդբալան ընդդեմ Լեհաստանի** գործով 2000 թ.-ի հուլիսի 4-ի վճռում ՄԻԵԴ-ը նշել է.

«79. «Օրենքին համապատասխան» արտահայտությունը ոչ միայն չի պարտադրում ներպետական իրավունքի հետ համապատասխանություն, այլ վերաբերում է այդ օրենքի առանձնահատկությանը ...: Դատարանը վերհիշում է, որ ներպետական օրենսդրությունը պետք է հիմնավոր պարզ կերպով նշի համապատասխան այն իրավասության սահմանները և իրականացման ձևը, որով օժտված են հանրային ղեկավար մարմինները, որպեսզի երաշխավորի քաղաքացիներին պաշտպանության նվազագույն աստիճանով, որով քաղաքացիները օժտված են օրենքի գերակայության սկզբունքով ապրող ժողովրդավարական հասարակությունում...»<sup>93</sup>:

**Իրավական որոշակիության պահանջը սերտորեն կապված է կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և վերացման հետ, քանի որ նշված պահանջն ուղղակիորեն նպատակ ունի անձին պաշտպանելու իրավակիրառների կամայականություններից և ոչնչով չկաշկանդված հայեցողությունից**<sup>94</sup>: Այսպիսով, «օրենք» համարվելու, հետևաբար և իրավունքի նկատմամբ միջամտությունը որպես «օրենքով նախատեսված» դիտարկելու համար բավարար չէ, որ իրավական աղբյուրը «օրենք» համարվի երկրի ներպետական օրենսդրության համաձայն. ՄԻԵԴ-ը պահանջում է, որ այդ «օրենքը» համապատասխանի իրավականության, տվյալ դեպքում **իրավական որոշակիության պահանջներին կամ որակներին: Այդ պահանջներն են կանխատեսելիությունը և հասանելիությունը:**

**Իրավական նորմի կանխատեսելիությունը** նշանակում է, որ այն պետք է տրամադրի կիրառողի կամայականությունից անձին պաշտպանող բավարար երաշխիքներ, այսինքն՝ լինի այնքան որոշակի, որ նորմի հասցեատեր անձը՝ այն մարդը, որի նկատմամբ կիրառելի է դրա պահանջը, **կարողանա հասկանալ այն և համակերպել իր վարքագիծը այդ պահանջի հետ՝ անհրաժեշտության դեպքում իրավաբանական խորհրդատվություն ստանալուց հետո:** Մասնավորապես օրենքը չի կարող որոշակի համարվել, եթե, օրինակ, նախատեսում է, որ անձի հեռախոսային խոսակցությունները

92. Malone v. the United Kingdom, para. 68.

<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22item%22%3A%22001-57533%22%7D>

93. Niedbala v. Poland, para. 79, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22item%22%3A%22001-58739%22%7D>

94. Այս հարցերը մանրամասն ներկայացված են «Կոռուպցիան և մարդու իրավունքները» գլխում:

րի գաղտնալսման թույլտվությունը կարող է տրվել անորոշ ժամանակով կամ անորոշ հիմքերով: Այսպես, **Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով** 2012 թ.- հոկտեմբերի 12-ի վճռով ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի (Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք) խախտում արձանագրելիս նշվեց, որ օրենքով նախատեսված չէր գաղտնալսման համար հստակ առավելագույն ժամկետ, և թեպետ գաղտնալսման իրականացում թույլատրող դատական որոշման գործողության ժամկետը սովորաբար սահմանափակվել է վեց ամսով, այդուհանդերձ, դատավորն ազատ է եղել կայացնելու այլ որոշում: Բացի այդ, օրենքով նախատեսված չէր միջոցառման իրականացման նկատմամբ պարբերական վերահսկողություն կամ դրա կիրառման նկատմամբ դատական կամ նմանաբնույթ այլ անկախ հսկողություն իրականացնելը կամ տվյալներն ուսումնասիրելու, օգտագործելու, պահելու և ոչնչացնելու որևիցե կանոն<sup>95</sup>:

**Իրավական նորմի հասանելիությունը** նշանակում է այն համընդհանուր սկզբունքի պահպանումը, որ մարդու իրավունքների սահմանափակումներ նախատեսող նորմերը չեն կարող լինել գաղտնի, նախատեսվել այսպես կոչված «ծառայողական օգտագործման համար», այլ պետք է լինեն հրապարակված: Ընդ որում, **պահանջվում է, որ անձը հնարավորություն ունեցած լինի ծանոթանալու այդ հրապարակված օրենքի պահանջին**: Մյուս կողմից ՄԻԵԿ-ը պարտադիր չի համարում, որ իրավունքի սահմանակում նախատեսող նորմը սահմանված լինի միայն «օրենքում»: այդպիսին կարող է դիտվել հաստատված նախադեպային իրավունքը կամ վարչարարական պրակտիկան՝ կայունության և կանխատեսելիության պայմանով:

**Արդյո՞ք ստորև նկարագրված իրավիճակում ապահովված են օրենքի կանխատեսելիության և հասանելիության պահանջները:**

Տարիներ շարունակ դեպի միջպետական մայրուղի թեքվող ճանապարհային հատվածում սահմանված էր առավելագույնը 60 կմ/ժամ արագություն: Պետության իրավասու մարմինների կողմից որոշում է կայացվել այդ հատվածի համար սահմանված արագությունը դարձնել 40 կմ/ժամ: Դեպի այդ հատվածը տանող ճանապարհի և մայրուղու համար սահմանված արագության առավելագույն չափերը չեն փոփոխվել՝ մնալով համապատասխանաբար 60 և 90 կմ/ժամ արագություն: Որոշման հրապարակման հաջորդ օրը վարորդը տուգանվել է այն բանի համար, որ դեպի մայրուղի թեքվող ճանապարհային հատվածում մեքենան վարել է 55 կմ/ժամ արագությամբ:

Իրավունքի սահմանափակման արդյունքում այն նաև խախտելու հարցի ուսումնասիրության հաջորդ քայլն է պարզել, թե **արդյոք կիրառված սահմանափակումը հետապնդել է իրավաչափ նպատակ**: Այդ նպատակները պետք է նույնպես նախատեսված լինեն օրենքով: Մասնավորապես սահմանափակելի իրավունքների պարագայում այդ հիմքերը նախատեսված են իրավունք սահմանող նորմից անմիջապես հետո՝ 8-11-րդ հոդվածների 2-րդ մասերում, օրինակ՝ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտ-

95. Sefilyan v. Armenia, 130-132, <https://hudoc.echrcoe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22,%22itemid%22:%7B%22001-113296%22%7D%7D>



պանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները:

Մարդու իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք հանդիսացող նպատակների մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ, բացի ժողովրդավարական հասարակության մեջ արժևորվող նպատակներին համապատասխանելուց, դրանք նաև պետք է սահմանված լինեն **սպառիչ կերպով**: Օրինակ, չի կարող նշվել, որ նույն մասնավոր կյանքի իրավունքը կարող է սահմանափակվել Ա, Բ, Գ նպատակներով, ինչպես նաև «այլ» նպատակներով: Հարկ է նշել, որ մարդու մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը սահմանափակող միջամտության նպատակը կարող է լինել միայն գերակա հանրային շահը, օրինակ՝ դատարանի՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման թույլատրման արդյունքում ձեռք բերվող ապացույցների նպատակը կարող է լինել ծանր հանցագործության բացահայտումը, այլ ոչ մասնավոր մարդկանց մասին տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը, որը լեգիտիմ չէ:

Մարդու իրավունքի սահմանափակման համար հիմք ծառայած **նպատակի իրավաչափությունը ստուգելուց հետո ստուգվում է, թե արդյոք տվյալ նպատակով տվյալ իրավունքի տվյալ սահմանափակումը տվյալ իրավիճակում անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակության մեջ**: Այսինքն՝ անհրաժեշտ է պարզել միջամտության համաչափությունը, որը ենթադրում է, որ միջամտությունը պետք է համաչափ լինի հռչակված նպատակին կամ, այլ կերպ ասած, **պետք է ռացիոնալ կապ լինի հետապնդվող լեգիտիմ նպատակի և որպես դրան հասնելու միջոց ընտրված միջամտության միջև**: Ինչպես նշել է ՄԻԵԴ-ը *Սյորինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով* 1989 թ.-ի հուլիսի 7-ի վճռում,

«ամբողջ Կոնվենցիային ներհատուկ է համայնքի ընդհանուր շահից բխող պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանությունից բխող պայմանների միջև արդարացի հավասարակշռության որոնումը»<sup>96</sup>:

Վերջապես մարդու իրավունքի՝ օրենքով նախատեսված, իրավաչափ նպատակ հետապնդող և համաչափ սահմանափակումը չպետք է լինի խտրական, այսինքն՝ պետք է բացառվի համանման դեպքերում օրենքով չնախատեսված հիմքով տարբերակված մոտեցման հնարավորությունը: Միջամտության համաչափության և ընդհանրապես օրինականության ապացուցման պարտականությունը ընկած է պետության վրա:

Վերջապես, **քննարկելով այն հարցը, թե արդյոք իրավունքի սահմանափակումը հանգեցրել է դրա խախտման, թե ոչ, ՄԻԵԴ-ը կիրառում է մարդու իրավունքը սահմանափակող նորմերի սահմանափակ մեկնաբանման կանոնը**: ՄԻԵԴ-ի՝ կայուն հաստատված նախադեպային իրավունքի համաձայն՝ մարդու իրավունքի սահմանափակումը չի կարող մեկնաբանվել ավելի լայն, քան ուղղակիորեն բխում է օրենքից: Այս միջամտության համաչափության սկզբունքին ներհատուկ պահանջն է հետևյալը. եթե թույլատրելի է այն միջամտությունը, որը նախատեսված է օրենքով, իսկ մյուս կողմից

96. Soering v. UK, para. 89, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-57619%22%7D>

պետությունը պետք է ապացուցի, որ այն եղել է համաչափ, այսինքն՝ որ տեղի է ունեցել անհրաժեշտից ոչ ավելի միջամտություն, ապա սրանից ուղղակիորեն բխում է, որ իրավունքի սահմանափակման հիմքը չի կարող մեկնաբանվել որպես պետությանը օրենքով նախատեսվածից ավելի շատ հայեցողություն ընձեռող:

Սրա օրինակներից են այն դեպքերը, երբ դռնբաց քննություն անցկացնող դատավորը որոշում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներից մեկի հիմքով, օրինակ՝ «արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու» համար, լրագրողների՝ նիստը լուսաբանելու իրավունքը սահմանափակել 30 րոպեով: Ներպետական **օրենսդրությունը, սակայն, որպես նշված նպատակով ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի, մասնավորապես տեղեկություններ փնտրելու և տարածելու իրավունքի սահմանափակման եղանակ արդեն իսկ նախատեսել է նիստը դռնփակ անցկացնելը: Այսինքն՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով նախատեսված իրավունքի սահմանափակման հնարավորությունը թույլատրելի է միայն նիստը դռնբաց կամ դռնփակ անցկացնելու հարցը քննարկելիս և չի կարող նորից կիրառվել արդեն դռնբաց որոշված նիստում ընդ որում կամայական որոշելով սահմանափակման տևողությունը:** Վերջապես, ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ



Մարդու իրավունքների իրացման և իմպլեմենտացիայի կարևորագույն երաշխիքն է գործուն պաշտպանության համակարգը: Պաշտպանության այդ համակարգը բաղկացած է երկու առանցքային մակարդակներից՝ ներպետական և միջազգային:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի.

- «1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:
- 2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք»:

Սահմանադրական այս դրույթի տրամաբանությունը ելնում է այն մտայնությունից, որ պետությունները ժամանակակից աշխարհում ստանձնում են որոշակի միջազգային պարտավորություններ, համաձայն որոնց՝ պարտավորվում են երաշխավորել մարդու իրավունքների և ազատությունների որոշակի նվազագույն պաշտպանության երաշխիքներ: Եվ ելնելով միջազգային իրավունքի հիման վրա ստանձնած միջազգային պարտավորություններից՝ պետությունները սահմանադրությամբ և օրենքներով և այլ անհրաժեշտ իրավական ակտերով և կառուցակարգերով ապահովում են մարդու իրավունքների և ազատությունների իմպլեմենտացիայի և իրացման համար անհրաժեշտ միջավայր և պայմաններ:

Ստորև համառոտ ներկայացվում են մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային համակարգերի բովանդակությունը և բաղադրիչները:

## 4.1. Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգը

Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգի տարրերը կարելի է դասակարգել երկու մեծ խմբի՝ **դատական համակարգ և ոչ դատական մարմիններ**: Դատական համակարգը ներառում է երկրի դատարանները, որոնք կոչված են ապահովելու մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների կյանքի կոչումը: Ոչ դատական մարմինների շարքին կարելի է դասել դատախազությանը և քննչական մարմիններին, որոնք, քրեական վարույթի շրջանակներում հետապնդելով հանրային շահ, նաև իրականացնում են խախտված իրավունքների վերականգնում և մարդու իրավունքների խախտումների կանխարգելում: Ոչ դատական մարմինների համակարգի մեջ կարևոր և առանձնակի դեր է խաղում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որը սահմանադրությամբ նախատեսված առանցքային մարմին է՝ օժտված անհրաժեշտ երաշխիքներով և լիազորություններով և միտված է առավել ճկունություն հաղորդելու մարդու իրավունքների պաշտպանության, խախտումների վերականգնման և կանխարգելման ուղղություններին: Իհարկե, մարդու իրավունքների պաշտպանության հարցում կարևոր դեր են կատարում այնպիսի պետական մարմիններ, ինչպիսիք են ՀՀ դատախազությունը, որն իր առաքելությունն իրականացնելիս կոչված է հանցավոր ոտնձգություններից պաշտպանելու մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Այլ պետական մարմիններ ևս որոշակի ներգրավվածություն ունենում են մարդու իրավունքների պաշտպանության գործում, սակայն մենք կանգ կառնենք միայն ամենաառանցքային ինստիտուտների նկարագրության վրա:

### Ներպետական դատարաններ

Համաձայն ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են **Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները**, ինչպես նաև **վարչական դատարանը**: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ: Դատական համակարգի բուրգի վերևում է **Վճռաբեկ դատարանը**:

Յուրաքանչյուր ոք իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով իրավունք ունի դիմելու դատարաններ և այդպիսով պաշտպանելու իր իրավունքները: Առաջին ատյանի դատարանների որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարաններ, որոնք իրականացնում են գործի ըստ էության վերաքննություն: Իսկ եթե անձը չի բավարարվում նաև վերաքննիչ դատարանների որոշումներով, ապա իրավունք ունի

բողոքարկելու նաև Վճռաբեկ դատարան, որը, համաձայն ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի.

1. *ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.*
2. *վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները»:*

Դատական համակարգի հիմքում դրված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության փիլիսոփայությունը, իսկ օրենքների միատեսակ կիրառելիության կարևորությունն առաջին հերթին մարդու իրավունքների պաշտպանության համակարգի՝ Սահմանադրությանը և միջազգային պայմանագրերով նախատեսված սկզբունքներին համահունչ գործելն է: Նման գործառույթին նաև նպաստում են մարդու իրավունքների պաշտպանության քիչ թե շատ կանխատեսելի համակարգ ունենալը և իրար հակասող ու տարաբնույթ մեկնաբանությունները բացառելը:

Մարդու իրավունքների պաշտպանության տրամաբանության համատեքստում, կարծում ենք, կարևոր դեր են խաղում վարչական դատարանները: Համաձայն Վարչական դատավարության մասին ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

- 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝
  - ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,
  - բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.
- 2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.
- 3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության»:

Ինչպես ակնհայտ երևում է վերը նշվածից, Վարչական դատարանն առանցքային դեր է ստանձնում անձի իրավունքների և ազատությունների վերականգնման դեպքում, երբ դրանք խախտվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց վարչական ակտով, գործողություններով կամ անփորձությամբ:

Անձն իր իրավունքների պաշտպանության ամբողջական իրականացման նպատակով կարող է նաև բոլոր երեք դատական աստիճանները՝ առաջին աստիճանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները, սպառելուց հետո դիմել **Սահմանադրական դատարան**: Սահմանադրական դատարանն իր ուրույն առաքելությունն ունի՝ **իրականացնել սահմանադրական վերահսկողություն**: Սահմանադրական վերահսկողության գործառնությունն արտահայտվում է օրենքների և մի շարք այլ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով: Ժամանակակից ժողովրդավարական պետություններում սահմանադրական վերահսկողության գործառնությամբ դարձել է առանցքային մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման գործում: Եվրոպական երկրների մեծ մասում գործում են սահմանադրական վերահսկողության առանձին ինստիտուտներ՝ սահմանադրական դատարաններ կամ խորհուրդներ: Իհարկե, Սահմանադրական դատարանն իրականացնում է նաև մի շարք գործառնություններ, որոնցից են. մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը, լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ, եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին և այլն: Այնուամենայնիվ, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից առաջնային է բուն սահմանադրական վերահսկողության գործառնությամբ, այն է՝ **օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելը**:

Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական դատարանը ստեղծվել է 1995 թ.-ին: 2005 թ.-ի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունները ՀՀ Սահմանադրության մեջ ներմուծեցին մի շարք դրույթներ, որոնք նոր երաշխիքներ ստեղծեցին մարդու իրավունքների պաշտպանության համար: Նման նորամուծություններից էր նաև ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել **յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը**:

2015 թ.-ի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում որոշակի լրացվեց վերը նշված դրույթը, և, համաձայն 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Սահմանադրական դատարան կարող է դիմել.

*«8) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է*

*այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:*

Նշված դրույթի լրացումները բխել են Սահմանադրական դատարանի պրակտիկայից և, ինչպես հստակ երևում է վերը նշված ձևակերպումից, իրավական ակտի սահմանադրականությունը ստուգելիս Սահմանադրական դատարանը ոչ միայն ելնում է **խնդրո առարկա իրավական ակտի բովանդակությունից, այլ նաև այդ ակտի համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունից**: Կարծում ենք, որ նման ձևակերպումը առանցքային նշանակություն ունի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործունե երաշխիքներ ապահովելու հրամայականի տեսանկյունից:

Սահմանադրական դատարան դիմելու իրավունքով օժտված է նաև Մարդու իրավունքների պաշտպանը՝ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Այս տեսանկյունից կարծում ենք, որ Մարդու իրավունքների պաշտպանին՝ որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ զբաղվող սահմանադրական ինստիտուտին նման մանդատով օժտելը Էապես բարձրացնում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները, հատկապես որ Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության ընթացքում ամենօրյա ռեժիմով առերեսվում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում առկա խնդիրներին, առավել լավ է պատկերացնում, թե ինչպես են դրանք խոչընդոտում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և երաշխավորումը և հակասում Սահմանադրությանը:

## **Մարդու իրավունքների պաշտպան**

Մարդու իրավունքների պաշտպանը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ուրույն մանդատով օժտված սահմանադրական ինստիտուտ է: Ժողովրդավարական պետություններում օմբուդսմենի կամ մարդու իրավունքների պաշտպանի դերը հատկապես ընդգծվում է պետական կառավարման մարմինների կամայականությունների զսպման և մարդու իրավունքների առավել առարկայական պաշտպանության և խնդիրների առարկայական հասցեագրման նպատակով:

Իր լիազորությունների պատշաճ իրականացման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է մի շարք սահմանադրական և օրենսդրական երաշխիքներ

րով: Նախ՝ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ է և անձեռնմխելի, և իր գործունեությունն իրականացնում է՝ հիմնվելով Սահմանադրության և օրենքների վրա: Համաձայն ՀՀ Սահմանադրության Հոդված 191 -ի՝ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը **հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:** Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները և երաշխիքներն առավել մանրամասն ամրագրված են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում: **Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը, օրենքին և միջազգային պայմանագրերին:** Օրենքով սահմանվում են նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ֆինանսական, սոցիալական և անվտանգային երաշխիքներ:

Մարդու իրավունքների պաշտպանի կարևորագույն դերերից է ազգային կանխարգելման մեխանիզմի կարգավիճակը, համաձայն որի՝ Պաշտպանի գործունեության **նպատակն է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելումը:** Այս կարգավիճակից բխող լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը օրենքով օժտվում է հատուկ լիազորություններով, որոնք, ի թիվս այլնի, ներառում են հետևյալները՝ իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ իր ընտրությամբ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով, իր ընտրությամբ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) և անարգել տեսակցել ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև առանձնազրույցներ ունենալ նրանց հետ, համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ, անհրաժեշտության դեպքում ներգրավել թարգմանչի, օգտագործել տեխնիկական միջոցներ, իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնել առաջարկություններ՝ ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով և այլն: Առանձնազրույցները ենթակա չեն միջամտության կամ գաղտնալսման որևէ մարմնի կամ երրորդ անձի կողմից:



## 4.2. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգը

Ժամանակակից միջազգային իրավունքը պարունակում է մի շարք մեխանիզմներ, որոնք կամ լրացնում, կամ որոշ դեպքերում փոխարինում են ներպետական համակարգը: Պետությունները ստանձնում են միջազգային պարտավորություններ՝ մասնակցելով մարդու իրավունքների ոլորտում առկա միջազգային պայմանագրերին և անդամակցելով միջազգային միջպետական կազմակերպություններին: Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից ի վեր սրընթաց զարգացում է ապրել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի միջազգային պայմանագրային և միջազգային սովորույթային իրավական համակարգը, կնքվել են կարևորագույն միջազգային պայմանագրեր, ստեղծվել են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպություններ, հանձնաժողովներ և դատարաններ:

Հայաստանի Հանրապետության տեսանկյունից այս առումով կարևոր է անդրադառնալ նախ Միավորված ազգերի կազմակերպության համակարգում մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի ներկայացմանը, ապա Եվրոպայի խորհրդի շրջանակներում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կառուցակարգերին: Իհարկե, ՀՀ-ն անդամակցում է նաև այլ միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, Անկախ պետությունների համագործակցությունը, սակայն իրենց կարևորությամբ և ընդգրկունությամբ ՄԱԿ-ի և ԵԽ համակարգերը առանձնանում են: Հետևաբար ստորև ներկայացվում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ՄԱԿ-ի և ԵԽ կառուցակարգերի առանձնահատկությունները:

### Մարդու իրավունքների ՄԱԿ-ի համակարգ

ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված մարդու իրավունքների փաստաթղթերի լոկալիզացիան պատկառելի տպավորություն կարող է թողնել: ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ արդեն ամրագրվեցին մարդու իրավունքների պաշտպանության անկյունաքարային արժեքները և դրույթները՝ ներառյալ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը: Մարդու իրավունքների տրամաբանությանն ինքնին ընդգծվեց ՄԱԿ-ի հիմնադրմամբ, և միջազգային իրավունքի զարգացումն ընթացավ մարդակենտրոն փիլիսոփայության հունով:

1948 թ.-ի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը թերևս մարդու իրավունքների հիմնարար արժեքներն ամրագրող հիմնարար փաստաթուղթն է, չնայած այն հանգամանքին, որ այն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևի տեսքով, ինչ իր բնույթով իրավաբանորեն պարտադիր բնույթ չի կրում: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի կարևորությունը հատկապես դրսևորվում է այն հանգամանքով, որ այն հիմք հանդիսացավ, որ ՄԱԿ-ի շրջանակներում նախագծվեց և ընդունվեց այնպիսի կարևորագույն փաստաթղ-

թեր, ինչպիսիք են Քաղաքական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ.-ի դաշնագիրը, Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին 1966 թ.-ի դաշնագիրը, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1965 թ.-ի միջազգային կոնվենցիան և շատ այլ միջազգային պայմանագրեր:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության համակարգը կարելի է բաժանել երկու մասի՝ մարդու իրավունքների մասին կոնվենցիաների հիման վրա գործող **պայմանագրային մարմիններ և ՄԱԿ-ի կանոնադրության վրա հիմնված մարմիններ**:

Թվով տասը պայմանագրային մարմինները կազմված են ոլորտի հայտնի փորձագետներից, և այդ մարմինների նպատակն է վերահսկել անդամ պետությունների կողմից մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի կատարման ընթացքը:

ՄԱԿ-ի կանոնադրության վրա հիմնված մարմիններից է Մարդու իրավունքների խորհուրդը: Ստորև ներկայացվում է մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի մարմինների համակարգի ընդհանուր նկարագիր-կառուցվածքը:

Պայմանագրային մարմիններ	Կանոնադրության հիման վրա գործող մարմիններ
<ul style="list-style-type: none"> <li>● Ռասայական խտրականության վերացման կոմիտե</li> <li>● Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե</li> <li>● Մարդու իրավունքների կոմիտե</li> <li>● Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե</li> <li>● Խոշտանգումների դեմ կոմիտե</li> <li>● Երեխայի իրավունքների կոմիտե</li> <li>● Միգրանտ աշխատողների իրավունքների կոմիտե</li> <li>● Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտե</li> <li>● Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե</li> <li>● Բռնի անհետացումների կոմիտե</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>● Մարդու իրավունքների խորհուրդ               <ul style="list-style-type: none"> <li>• Հատուկ ընթացակարգեր</li> <li>• 45 թեմատիկ մանդատներ</li> <li>• 13 մանդատներ՝ ըստ երկրների</li> </ul> </li> <li>● Համընդհանուր պարբերական վերանայում</li> <li>● Անկախ ուսումնասիրություններ</li> </ul>

## Մարդու իրավունքների խորհուրդ և ընթացակարգեր

Մարդու իրավունքների խորհուրդը միջպետական մարմին է, որը պատասխանատու է մարդու իրավունքների պաշտպանությունը գլոբալ մակարդակում ամրապնդելու և խթանելու համար: Մարդու իրավունքների խորհուրդը ստեղծվել է Գլխավոր ասամբլեայի 60/251 բանաձևի հիման վրա 2006 թ.-ի մարտի 15-ին՝ փոխարինելով Մարդու իրավունքների հանձնաժողովին: Մարդու իրավունքների խորհուրդն ունի մի քանի կարևոր մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնցից առանձնանում է Համընդհանուր պարբերական վերանայումը (Universal Periodic Review): Այն փաստացի գնահատում է երկրներում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր վիճակը: Մարդու իրավունքների խորհուրդը տեղակայված է ժնևում (Շվեյցարիա): Իր աշխատանքը կազմակերպում է պարբերական նիստերի միջոցով: Խորհուրդը կազմված է 47 անդամ երկրներից, որոնք ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից պարզ մեծամասնությամբ, երեք տարի ժամկետով: Անդամ երկրները պետք է հավասարաչափ ներկայացնեն աշխարհի բոլոր տարածաշրջանները՝ 13 երկիր՝ Աֆրիկա մայրցամաքից, 13 երկիր՝ Ասիայից և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանից, 8 երկիր՝ Լատինական Ամերիկայից և Կարիբյան ավազանից, 7 երկիր՝ Արևմտյան Եվրոպայից, 6 երկիր՝ Արևելյան Եվրոպայից<sup>97</sup>:

Մարդու իրավունքների խորհուրդը օգտագործում է մի շարք ընթացակարգեր և գործիքներ, սակայն առավել կարևոր է ընդգծել անհատական մանդատով ստեղծված հատուկ ընթացակարգերը, մասնավորապես հատուկ զեկուլցողները (Special Rapporteurs) և միջազգային փորձագետները: Վերջիններս ուղարկում են հաղորդակցություններ (կոմունիկացիաներ) պետություններին, առաքելություններով մեկնում են պետություններ, և պետությունների կողմից ներկայացվում են տարեկան զեկուլցներ: Որոշ դեպքերում այդ զեկուլցները ներկայացվում են Գլխավոր ասամբլեային: Վերը նշված փորձագետները նաև նպաստում են մարդու իրավունքների միջազգային չափանիշների զարգացմանը և այլն:

## Պայմանագրային մարմիններ

Մարդու իրավունքների վերաբերյալ կոնվենցիաներից մի քանիսն ունի վերահսկողության ուրույն համակարգ՝ պայմանագրի հիման վրա ստեղծված փորձագետային կոմիտեներ:

Ինչպես արդեն նկարագրված է վերը ներկայացված աղյուսակում, այսօրվա դրությամբ գործում են 10 պայմանագրային մարմիններ՝ կոմիտեներ՝ Ռասայական խտրականության կոմիտե (CERD), որը գործում է 1969 թ.-ից, Մարդու իրավունքների կոմիտե (ICCPR)՝ 1976 թ. -ից, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե՝ 1987 թ.

97. Մարդու իրավունքների խորհրդի մասին առավել համափարփակ և մանրամասն տեղեկատվությունը հասանելի է պաշտոնական կայքէջում <https://www.ohchr.org/en/hrbodies/hrc/home>

-ից, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW)՝ 1981 թ. -ից, Խոշտանգումների դեմ կոմիտե (CAT)՝ 1987 թ.-ից, Երեխայի իրավունքների կոմիտե (CRC)՝ 1990 թ.-ից, Միգրանտ աշխատողների կոմիտե (CMW)՝ 2003 թ. -ից, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե (CRPD)՝ 2008 թ.-ից, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտե (SPD)՝ 2006 թ.-ից: Նշված պայմանագրային մարմիններից բոլորի, բացառությամբ մեկի, կազմը և դերը սահմանվում են համապատասխան միջազգային պայմանագրի դրույթներով: Բացառությունը վերաբերում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին, որը հիմնադրվել է Տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC) 1985/17 բանաձևով, որը ստեղծվել է Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի հիման վրա ստեղծված Մարդու իրավունքների կոմիտեի օրինակով:

Պայմանագրային մարմինների, որոնք, ըստ Էության, փորձագիտական են իրենց բնույթով, հիմնական իրավասությունն է ստանալ պետությունների զեկույցները մարդու իրավունքների պայմանագրերի կատարման վերաբերյալ և իրականացնել մշտադիտարկում և ընդունել *եզրափակիչ դիտարկումներ* իրենց մոտ առկա տեղեկատվության հիման վրա: Ի հավելումս, մարդու իրավունքների պայմանագրային մարմիններից գրեթե բոլորը կարող են նաև ընդունել անհատական դիմումներ/կոմունիկացիաներ անձանցից, որոնք հանդիսանում են մարդու իրավունքների խախտումների զոհ: Իհարկե, այս մարմիններն ունեն նաև այլ գործառույթներ, ինչպիսին է միջպետական կոմունիկացիաներ ընդունելը, սակայն դրանք առավել երկրորդական բնույթ են կրում: Պետությունների կողմից կոմունիկացիաները կարող են վերաբերել որևէ իրավիճակի և ներառել այցեր իրավիճակին ծանոթանալու նպատակով, օրինակ՝ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի դեպքում դա վերաբերում է անձանց պահման պայմաններին ծանոթանալուն՝ ազատագրվման վայրեր այցեր կազմակերպելով և ծանոթանալով անձանց պահման պայմաններին: Այլ դեպքերում պետության կողմից ներկայացվող կոմունիկացիաները կարող են վերաբերել այլ պետության հետ ունեցած վեճին, օրինակ՝ Ռասայական խտրականության վերացման կոմիտեն Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965 թ.-ի միջազգային կոնվենցիայի հոդված 11-ի հիման վրա ընդունում է նման կոմունիկացիաներ և կարող է իրականացնել միջնորդական ծառայություններ: Բռնի անհետացումների կոմիտեն Բռնի անհետացումներից բոլոր անձանց պաշտպանելու մասին 2006 թ.-ի միջազգային կոնվենցիայի հոդված 34-ի հիման վրա կարող է որոշում կայացնել այս կամ այն հարցը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ուշադրությանը ներկայացնելու նպատակով, եթե լավ հիմնավորված փաստեր կան ենթադրելու, որ որևէ պետության իրավազրույթյան տակ գտնվող տարածքում բռնի անհետացումները լայնատարած և պարբերական բնույթ են կրում:<sup>98</sup>

98. Առավել մանրամասն տե՛ս Olivier de Schutter, *International Human Rights Law. Cases, Materials and Commentaries*, 2010:

## **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա և Մարդու իրավունքների եվրոպական դատարան**

Եվրոպայի խորհրդի շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության համակարգը սկսել է ձևավորվել կազմակերպության հիմնադրումից անմիջապես հետո: Եվրոպայի խորհուրդը հիմնադրվել է 1949 թ.-ին, իսկ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիան ընդունվել է 1950 թ.-ին: Եվրոպական կոնվենցիայի հիման վրա ստեղծվել է երկու մարմին՝ Մարդու իրավունքների հանձնաժողովը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մարդու իրավունքների հանձնաժողովն իրավասու էր քննելու հիմնականում անհատական գանգատները (առանձին դեպքերում նաև պետություններից ստացված կոմունիկացիաներ) և կայացնում էր որոշում Կոնվենցիայի խախտման վերաբերյալ, որը ներկայացվում էր կամ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե՝ քաղաքական մարմնին, կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին:

Հետագայում Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություններ 9-ը և 11-ը փոփոխեցին ԵՄ մարդու իրավունքների պաշտպանության համակարգը՝ վերացնելով Հանձնաժողովը, և այդպիսով 1998 թ.-ից Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դարձավ մարդու իրավունքների պաշտպանության հիմնական մարմինը: Եվրոպական դատարանը քննում է թե՛ անհատական գանգատներ, թե՛ միջպետական գանգատներ: 46 անդամ պետություններ ներկայումս պարտավորվել են հիմնական իրավունքները և ազատությունները երաշխավորել ոչ միայն իրենց քաղաքացիների համար, այլև իրենց իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց, ներառյալ ոչ եվրոպացիների:

ՄԻԵԴ-ը իր նախադեպային վճիռներով (դրանք ունենում են նախադեպային նշանակություն) կիրառում և մեկնաբանում է Եվրոպական կոնվենցիան: Հայտնի փաստ է, որ Եվրոպական կոնվենցիան ինքնին ապրող փաստաթուղթ է, ինչը նշանակում է, որ այն պետք է հասկանալ և կիրառել ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի օգնությամբ: ՄԻԵԴ-ը իր վճիռներում և որոշումներում մանրամասն կերպով մեկնաբանում և կիրառում է Եվրոպական կոնվենցիայի դրույթները ժամանակին համահունչ: Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան հարուստ է և վերաբերում է բազմաթիվ տարբեր ոլորտների: Դատարանի կողմից առավել հաճախ արձանագրվող Կոնվենցիայի խախտումը վերաբերում է արդար դատաքննության իրավունքին՝ պայմանավորված վարույթի ընթացքում ՄԻԵԴ-ի չափանիշների խախտումներով, օրինակ՝ չափազանց երկար տևողությամբ դատավարություն, վճիռների չկատարում, արդարադատության հասանելիության իրավունքի ոտնահարում, կողմերի անհավասարություն և այլն: Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի և սեփականության պաշտպանության իրավունքի խախտումներ նույնպես հաճախ են արձանագրվում, որոնք կարող են վերաբերել ամենատարբեր հարցերի՝ ընտանիքների վերամիավորում, հաղորդակցության գաղտնիության խախտում և այլն: Դատարանն իր վճիռներով բազմիցս անդրադարձել է հասարակական տարաբնույթ խնդիրների՝ հղիության արհեստական ընդհատմանը, աջակցվող ինքնասպանությանը, մարմնի խուլզարկությանը, կենցաղային ստրկությանը:

նը, նույնաստեռականների կողմից որդեգրմանը, դպրոցներում կրոնական խորհրդանիշներ կրելուն, լրագրողների աղբյուրների պաշտպանությանը և ԴՆԹ տվյալների պահպանմանը:

Եվրոպական կոնվենցիայի հոդված 35-ը սահմանում է ընդունելության չափանիշները (ընդգծումները մերն են):

### **Հոդված 35. Ընդունելության պայմանները**

- 1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և չորս ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:**
2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝
  - ա. անանուն է կամ,
  - բ. ըստ Էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:
3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ
  - ա. այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ կամ ակնհայտորեն անհիմն է կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում, կամ
  - բ. դիմումատուն չի կրել Էական վնաս, բացառությամբ եթե Կոնվենցիան կամ դրան կից Արձանագրությունները պահանջում են գանգատի ըստ Էության քննություն:
4. Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում սույն հոդվածին համապատասխան: Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

ՄԻԵԴ-ի կողմից խախտում ճանաչող վճիռների և որոշումների ընդունման դեպքում պետությունները, համաձայն Կոնվենցիայի, պարտավոր են կատարել դրանք, որոնք ներառում են ոչ միայն խախտման զոհին արդարացի փոխհատուցման՝ գույքային և ոչ գույքային վնասի վճարումը, այլև կարող են ներառել ընդհանուր և անհատական բնույթի այլ միջոցառումներ: Ընդհանուր միջոցների շարքին են դասվում, օրինակ, օրենսդրական բարեփոխումները, որոնց նպատակն է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք միտված են կանխարգելելու նմանօրինակ խախտումները ապագայում: ՄԻԵԴ-ի

վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն Է, որը, իր կանոնների համաձայն, քննարկում Է պետությունների կողմից ներկայացված գործողությունների ծրագրերը և զեկույցները և հետևում Է, որ ՄԻԵԴ-ի վճռով սահմանված բոլոր անհրաժեշտ միջոցառումները կատարվեն պետության կողմից:

### **Հարցեր լսարանին**

1. Որո՞նք են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական համակարգերի միջև առկա առանցքային տարբերությունները:
2. Ի՞նչ գործիքակազմեր են կիրառում ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա գործող մարմինները մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու նպատակով:

ԳԼՈՒԽ 5.

# ՄԱՐԴՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ





## 5.1. Կյանքի իրավունք

Կյանքի իրավունքը, հաշվի առնելով մարդու իրավունքների համակարգում ունեցած կարևորությունը, ինչպես նաև դրանով պաշտպանվող արժեքը՝ մարդկային կյանքը, մարդու իրավունքների կառուցակարգի հիմնական իրավունքների հիերարխիայում զբաղեցնում է ամենաբարձր դիրքը, քանի որ առանց կյանքի պաշտպանության մարդու իրավունքները չեն կարող լինել բովանդակալից. դրանք իմաստագրվում են առանց համապատասխան հասցեատեր իրավատիրոջ:

### Պատմական ակնարկ

Հայաստանի Հանրապետության իրավունքում կյանքի իրավունքի կառուցակարգը գերակշռաբար փոխառված է միջազգային իրավունքում մարդու իրավունքների շրջանակում ձևավորված մոտեցումներից: Դրանք իրենց հերթին, այն տեսքով որ տեսքով հասել են մեր ժամանակներում զարգացման աստիճանին, իրենց պատմական ծագումնաբանությամբ մեծապես պարտական են 1215 թվականին Անգլիայում ստորագրված և ապա ուժի մեջ մտած «Ազատությունների մեծ խարտիային» (Magna Carta Libertatum), որը խոշորարար ազնվականների և Անգլիայի միապետի միջև կնքված այն պայմանագիրն էր, որը ուսումնասիրողները անվանում են երեք «L»-երի պայմանագիր՝ «Life, Liberty, Land» (կյանք, ազատություն, հող կամ պաշտպանված ունեցվածք): Խոշորարարներ ազնվականները խաղաղության և իրենց հպատակության վերահաստատման դիմաց միապետի փոփոխություն պահանջելու փոխարեն նրան առաջադրել էին պայմաններ, որոնք վերաբերում էին իրենց համար կարևորագույն արժեքների՝ կյանքի, ազատության և ունեցվածքի պաշտպանությանը: Այդ պահանջները հիմնականում ուղղված էին այս արժեքների նկատմամբ միջամտության նպատակով արդարության բոլոր պահանջներին բավարարող ընթացակարգերի ապահովմանը, որպիսիք մինչ այդ բացակայում էին՝ երաշխավորելով այդ արժեքների նկատմամբ միապետի սանձարձակ իշխանությունը: Որևէ ազնվականի կյանքին, ունեցվածքին կամ ազատությանը միջամտելիս միապետն այլևս պարտավորված էր լինելու ապահովել ընթացակարգային արդարություն, այլ խոսքով՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ ընթացակարգ, որը ժամանակակից ընկալմամբ կարելի է նույնացնել արդարադատության հետ: Ներկայացվածը ուշագրավ է նաև այն առումով, որ խոշորարարները, եկեղեցու հետ մեկտեղ ունենալով բավական մեծ ազդեցություն, իրենց միապետին չպարտադրեցին միապետի փոփոխություն, ինչը նման խոշովությունների տրամաբանական պահանջն էր իր ժամանակին, այլ նախընտրեցին պատշաճ ընթացակարգերի ներդրումը, որոնց ուրվագծումն էլ դարձավ այս իրավունքների զարգացման հիմնական ուղղությունը՝ հետագայում արտացոլվելով նաև միջազգային իրավունքում: Թեպետ հիշատակված փաստաթուղթը պետք է վերաբերեր բացառապես ազնվականության իրավունքներին, մարդկանց իրավակապասարության գաղափարի աստիճանական գերիշխանության պայմաններում ազնվականների այս իրավունքները սկսեցին տարածվել բոլորի վրա:

## **Կյանքի իրավունքի բովանդակությունը. պետության պարտավորությունները**

Սահմանադրությամբ (հոդված 24) ամրագրված կյանքի իրավունքի վերաբերյալ դրույթները վերաբերում են անձի և պետության հարաբերություններին, այսինքն, պատկերավոր նկարագրած, դրանք ուղղահայաց հարաբերություններ են կարգավորում: Այս դրույթի շրջանակում պետությունն ունի նեգատիվ և պոզիտիվ պարտավորություններ:

Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝

1. *Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:*
2. *Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:*
3. *Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:*

Կյանքի իրավունքի շրջանակում պետության նեգատիվ պարտավորության բովանդակությունը կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալն է: Այլ խոսքով՝ մարդու կյանքին պետության միջամտությունը բացառելն է (այստեղից էլ՝ պարտավորության պայմանական անվանումը՝ որպես որևէ գործողություն բացառող): Այս պարտավորության բերումով պետությունը պարտավոր է մահաբեր ուժի կիրառումից ձեռնպահ մնալ՝ անկախ նրանից, թե պետությունը իր որ պաշտոնյայի կամ մարմնի միջոցով է գործում՝ զինված ուժեր, ոստիկանություն, այլ հատուկ ծառայություններ և ուժային մարմիններ: Կյանքի իրավունքի պաշտպանության իմաստով պետության նեգատիվ պարտավորության հակիրճ բովանդակությունը «Մի՛ սպանիր» պատվիրանն է: Այս իմաստով «Մի՛ սպանիր»-ը նշանակում է ոչ միայն պետության ուժային կառույցների կողմից մահաբեր ուժի կամայական կիրառման արգելք, այլ նաև մահապատիժը որպես պատժի տեսակ բացառելու պարտականություն:

Ինչ վերաբերում է կյանքի իրավունքի շրջանակներում պետության միջամտելու, այսինքն՝ պոզիտիվ պարտավորություններին, ապա դրա իրավական բովանդակությունն այն է, որ պետությունը պարտավոր է ձեռնարկել կյանքի պաշտպանությանն ուղղված օրենսդրական և գործադիր-իրավակիրառ բնույթի միջոցառումներ, որոնք ուղղված են լինելու կյանքի նկատմամբ ոտնձգությունների քրեականացմանը կամ այլ կերպ՝ նորմատիվ արգելքներով այն պաշտպանելուն, կյանքի նկատմամբ ոտնձգություններ կատարողներին հայտնաբերելուն և պատասխանատվության ենթարկելուն:

## **Կյանքի իրավունքի պաշտպանության պետության նեգատիվ պարտավորությունները**

### **Մահապատժի բացարձակ արգելք**

Սահմանադրության 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանում մահապատիժն արգելված է: Սա սահմանադրական դրույթի աստիճանով արձանագրված է աշխարհի ոչ բոլոր պետություններում, թեպետ մարդու իրավունքների վերաբերյալ միջազ-

գային ակտերում մահապատժի արգելքը շարունակաբար գերակշռող է դառնում այն ընդունող պետությունների քանակի իմաստով:

Մահապատժի սահմանադրական արգելքը ոչ միայն Հայաստանի Հանրապետությանն արգելում է իր արդարադատության համակարգի միջոցով նշանակել, իսկ գործադիր համակարգի միջոցով կիրառել մահապատժի որպես պատժի տեսակ, այլ նաև պարունակում է անհատական այս իրավունքին հատուկ պետության ներկա պարտավորություն՝ չարտահանձնել որևէ մեկի այնպիսի պետության, որտեղ նա կարող է մահապատժի ենթարկվել:

### **Մահաբեր ուժի կամայական կիրառման արգելք**

Մահաբեր ուժի կամայական կիրառման արգելքն ուղղակիորեն բխում է Սահմանադրության 24-րդ հոդվածի 2-րդ մասից, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող **կամայականորեն** գրկվել կյանքից: Սահմանադրության այս դրույթը մահաբեր ուժի կիրառման նկատմամբ բացարձակ արգելք չի նախատեսում, այլ նման ուժի գործադրությունը իրավաչափ է համարում մահաբեր ուժի կիրառման հարցում որոշում կայացնելիս և այդ որոշումն ի կատար ածելիս միայն «բացարձակ անհրաժեշտության» դեպքերում:

Մահաբեր ուժի գործադրման արգելքն առաջին հերթին վերաբերում է ոստիկանության, զինված ուժերի և այլ ուժային հատուկ ծառայությունների կողմից մահաբեր զենքի, զինատեսակների և այլ միջոցների գործադրմանը: Ըստ սահմանադրական այս արգելքի՝ մահաբեր ուժի գործադրման բոլոր որոշումները պետք է կայացվեն որպես միջամտության վերջին և ծայրահեղ միջոց՝ հաշվի առնելով մահաբեր ուժի գործադրման նպատակը և պետք է լինեն մահաբեր՝ ուժի գործադրման համար իրավիճակին խիստ համաչափ:

Մահաբեր ուժի գործադրման արգելքի արդյունավետ կիրառման հրամայականը պետությանը պարտավորեցնում է ապահովել դրա կիրառման նպատակով անհրաժեշտ (ենթա)օրենսդրական միջավայրի ձևավորում, որի դրույթները կարգավորում են իրավապահ մարմինների աշխատակիցների լիազորությունների և պարտականությունների այնպիսի գործուն համակարգ, որոնց հետևելիս մահաբեր ուժի գործադրման հարցում կամայականությունները կբացառվեն:

Իրավական անհրաժեշտ շրջանակի ձևավորումից բացի՝ պետությունը պարտավոր է ապահովել մահաբեր ուժ գործադրելու լիազորություն ունեցող իր աշխատակիցների կամ այլ ներկայացուցիչների՝ դրա գործադրման գործիքների հմտորեն տիրապետելու, իրավական բավարար գիտելիքների, ֆիզիկական անձանց վտանգավոր իրավիճակներում կառավարելու, նրանց զսպելու և այլ անհրաժեշտ հմտություններ, որոնց գործադրումն ի գորու է լինելու կանխել մահաբեր ուժի գործադրման անհրաժեշտությունը:

Վերը նշված բոլոր միջոցների ապահովումը ամեն դեպքում չի բացառում կյանքում այնպիսի իրավիճակներ, երբ մահաբեր ուժի կիրառումը կարող է «բացարձակապես անհրաժեշտ» լինել սահմանադրական որոշ նպատակների ապահովման համար, մասնավորապես այլոց կյանքի և առողջության պաշտպանության կամ ձերբակալման կամ կալանավորված անձի փախուստը կանխելու նպատակով՝ հաշվի առնելով կոնկրետ դեպքի հանգամանքները:

Մահաբեր ուժ գործադրող պետական պաշտոնյաների գործողությունների իրավաչափության պայմանն այն է, թե որքանով է կոնկրետ իրավիճակի հանգամանքներում դրա կիրառումը «բացարձակապես անհրաժեշտ» եղել:

### **Կյանքի իրավունքի պաշտպանության պետության պոզիտիվ պարտավորությունը.**

Պետության պոզիտիվ պարտավորությունը գործնականում նշանակում է, որ պետությունը պարտավոր է կյանքին վտանգ սպառնացող հնարավոր իրավիճակներին հանդիման ապահովել կյանքի պաշտպանության համար ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները:

Անհատի կյանքն ամբողջությամբ պետության վերահսկողության ներքո գտնվող իրավիճակում, օրինակ՝ կալանավայր, զորամաս, հատուկ ռեժիմի հոգեբուժական հաստատություն, պետության համար առաջացնում է կյանքը պաշտպանելու հատուկ պատասխանատվություն: Մահն այսպիսի հաստատություններում կամ պետության բացառիկ և ամբողջական վերահսկողության ներքո գտնվող այլ հանգամանքներում, անկախ նրանից՝ վրա է հասել բռնության, թե ինքնահասցման միջոցով, վերագրելի է դառնում պետությանը, եթե նրա ներկայացուցիչներն այն կանխելու ողջամիտ միջոցներ չեն ձեռնարկել:

Առողջապահության ոլորտում պետությունը նույնպես ունի պոզիտիվ պարտավորություններ՝ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ կանխելու բժշկական սխալը, իսկ այն վրա հասնելու դեպքում իրականացնել համապատասխան քննություն՝ մեղավորներին արդարադատության առջև կանգնեցնելու համար:

### **Կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում պետության պարտավորությունները**

Կյանքի իրավունքի շրջանակում պետության պարտավորությունները կախված են կյանքին վտանգ սպառնացող իրավիճակի բնույթից և, իհարկե, կոնկրետ դեպքի հանգամանքներից: Մասնավորապես.

- **Բնական աղետների կամ մարդածին վթարների** դեպքում պետության պատասխանատվությունը ծագում է այնքանով, թե այն տեղեկացված լինելու կամ ողջամտորեն կանխատեսելու հնարավորության պայմաններում արդյոք իր պոզիտիվ պարտականությունների շրջանակում ձեռնարկել է կյանքի պաշտպանությանն ուղղված բոլոր միջոցները, օրինակ՝ վերահաս վտանգի մասին ազդեցության հնարավոր կրողներին տեղեկացնելը, նրանց պատշաճ խորհրդատվություն մատուցելը, քաղաքային կառուցապատումներից կյանքին հասցված վտանգի դեպքում արդյոք բավարար չափով վերահսկվել է իրականացվող կառուցապատումը և կառավարել ռիսկերը՝ դրանք հնարավորինս բացառելու համար:
- **Անազատության մեջ մահերի** դեպքում պետությունը պարտավոր է ներկայացնել բավարար և համոզիչ բացատրություն մահվան հանգամանքների վերաբերյալ: Նման իրավիճակներում կյանքի իրավունքին միջամտության դեպքում գործում է պետության պատասխանատվության կանխավարկածը: Այսինքն՝ պետությունն է կրում պատասխանատվություն մահվան դեպքի համար քանի դեռ և որքանով որ այն բավարար և համոզիչ բացատրություններ չի ներկայացրել մահվան հանգամանքների վերաբերյալ, ինչի արդյունքում կարելի է եզրահանգել, որ պետությունը (իրավասու պետական պաշտոնյաները) ձեռնարկել էր ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վերահաս վտանգը կանխելու համար, ինչը հնարավոր չէր եղել իր կամքից անկախ պատճառներով:
- **Ինքնասպանությունների** դեպքում պետությունն ունի պարտավորություն՝ երաշխավորելու և պաշտպանելու իր հսկողության տակ գտնվող անձանց կյանքը, նույնիսկ երբ մահը պատճառվել է ինքնասպանությամբ: Այսինքն՝ անազատության մեջ գտնվող անձանց ինքնասպանությունների դեպքում պետությունը կրում է պատասխանատվություն բոլոր այն դեպքերում, երբ տուժողի կյանքին սպառնացող վտանգի մասին համապատասխան մարմինները բավարար տեղեկություն են ունեցել, սակայն համարժեքորեն չեն արձագանքել կյանքին սպառնացող վտանգը չեզոքացնելու համար:
- **Բժշկական սխալի պատճառով վրա հասած մահերի** դեպքերով պետությունը պատասխանատվություն կրում է այնքանով, որքանով որ պարտավոր է ընդունել և կիրառել այնպիսի իրավական կարգավորումներ, որոնց ուժով բացառվի խտրական մոտեցումը հիվանդների նկատմամբ նրանց բուժօգնություն ցուցաբերելիս, իսկ հնարավոր բժշկական սխալի դեպքում ապահովել արդյունավետ քննություն մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և տուժողի իրավահաջորդներին համապատասխան փոխհատուցում տրամադրելու համար:

## Կյանքի իրավունքի պաշտպանության ընթացակարգային պարտավորությունները

Կյանքի իրավունքը, այնուամենայնիվ բացարձակ չէ: Մահաբեր ուժի կիրառման օրինականության հարցի գնահատականը տալիս է այն հարցի պատասխանը, թե արդյոք կյանքից զրկումը տեղի է ունեցել կամայականորեն: Սա նշանակում է, որ երբ կյանքին միջամտությունը ուղղված է եղել սահմանադրորեն ամրագրված նպատակների ապահովմանը, և խստիվ պահպանվել է միջամտության համաչափությունը, պետության ներկայացուցիչների կողմից մահաբեր ուժի կիրառումը չի կարող համարվել կյանքի իրավունքի խախտում:

Իրավաչափ հիմքի առկայության դեպքում անգամ մահաբեր ուժի գործադրման իրավաչափության ստուգման թեստի կարևոր բաղադրիչը դրա բացարձակ անհրաժեշտությունն է. համաչափության գնահատման աստիճանն այս իրավունքի մասով շատ ավելի խիստ է, քան մնացած բոլոր իրավունքներին վերաբերող միջամտությունների մասով: Բացարձակ անհրաժեշտությունը նշանակում է, որ տվյալ իրավիճակում որևէ այլ կերպ հնարավոր չէր կանխել առաջացած վտանգը կամ վերահաս վնասը, օրինակ՝ մահաբեր ուժի գործադրումը ոստիկանի կողմից զինված հանցավորին վնասագերծելու նպատակով, որի կողմից զենքի գործադրման իրական վտանգ կա շրջապատում գտնվող այլ անձանց նկատմամբ:

Կյանքի իրավունքը ներառում է մի շարք ընթացակարգային բաղադրիչներ, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով և Սահմանադրության 81-րդ հոդվածի ուժով կազմում են նաև Սահմանադրության 24-րդ հոդվածի բովանդակության բաղադրիչը: Կյանքի իրավունքի ընթացակարգային բաղադրիչը մասնավորապես ներառում է հետևյալ պարտադիր պայմանները.

- կյանքի իրավունքին միջամտության հարցով քննությունը պետք է լինի անկախ, այսինքն՝ քննության բոլոր փուլերում (մինչդատական և դատական) պետք է բացառվի վարույթն իրականացնող պաշտոնյաների նկատմամբ միջադեպի մասնակիցների թե՛ անհատական, թե՛ համակարգային ազդեցությունը.
- քննությունը պետք է լինի արդյունավետ, այսինքն՝ ապահովի մահվան կամ դրա իրական վտանգին հանգեցրած բոլոր հանգամանքների մանրամասն բացահայտումը՝ դրանց կապակցությամբ սպառնիչ բացատրություններով, և անցկացվի հնարավորինս արագ.
- տուժողների մասնակցային իրավունքները պետք է ապահովված լինեն՝ նրանց օրինական շահերը արդյունավետորեն իրականացնելու նպատակով:

Ընթացակարգային թվարկված բաղադրիչները ընդհանրական են, և դրանց ներքո Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կյանքի իրավունքի խախտման գանգատներով ընթացակարգային այնպիսի կոնկրետ հանգամանքների, ինչպիսիք են դեպքի վայրի անպատշաճ արձանագրումը, օգտագործ-

ված գեղքի լուսանկարների բացակայությունը, տեղի ունեցած իրավիճակի վերհանման թերացումը, դատաձգաբանական փորձաքննությունների նշանակման և իրականացման բազմաթիվ տեխնիկական թերացումները, մատնահետքեր վերցնելուց թերանալը, դիակի դատաբժշկական փորձաքննության ենթարկելու մասին որոշման և դրա իրագործման թերությունները, վկաների հարցաքննության ընթացքում անբավարար ջանասիրությունը, դեպքի մանրամասների նկատմամբ անբավարար ուշադրությունը և այլն: Այսինքն՝ կյանքի իրավունքի խախտումների մասին պնդումները, ինչպես միջազգային ատյաններում և առավել ևս հայաստանյան մինչդատական և դատական քննությունների ընթացքում, պետք է քննվեն բարձր արդյունավետությամբ՝ մահվան կամ կյանքի նկատմամբ այլ իրական վտանգի հանգամանքները մանրամասն վեր հանելու նպատակով:

### **Հարցեր լսարանին**

1. Ո՞րն է կյանքի սահմանադրական հիմնական իրավունքի տեղը մարդու հիմնական իրավունքների համակարգում:
2. Ի՞նչ բնույթի պարտավորություններ ունի պետությունը կյանքի իրավունքի պաշտպանության հարցում. որո՞նք են նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների շրջանակները:
3. Ո՞րն է կյանքին միջամտելու կամ միջամտության փորձի համար «բացարձակապես անհրաժեշտ է» պայմանի ձեր ընկալումը և բացատրությունը:

## **5.2. Խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի բացարձակ արգելքը**

### **Խոշտանգումների բացարձակ արգելքից բխող պետության նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունները**

Խոշտանգման արգելքը՝ որպես մարդու արժանապատվությունից բխող խոշտանգման կամ նմանատիպ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունք, ամրագրված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում.

*«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

իրավունքի բացարձակ լինելը նշանակում է, որ.

1. չկա որևէ լեգիտիմ շահ, որով կարող է արդարացվել իրավունքի սահմանափակումը, և խոշտանգման արգելքից որևէ վերապահում թույլատրելի չէ անգամ ազգի կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի պայմաններում.
2. իրավունքի ցանկացած սահմանափակում արդեն իսկ իրավունքի խախտում է.
3. այս իրավունքի խախտմամբ ձեռք բերված ցանկացած կամահայտնություն առօրինակ է, օրինակ՝ նման ապացույցի ցանկացած օգտագործում նշանակում է, որ տեղի է ունեցել նաև արդար դատաքննության իրավունքի խախտում՝ անկախ նրանից, թե ինչ նշանակություն է ունեցել այդ ապացույցը անձի դատապարտման համար:

Բովանդակային առումով խոշտանգման բացարձակ արգելքից բխող պետության պարտավորությունները հետևյալն են.

1. **Նեգատիվ պարտավորություն՝ զերծ մնալ** խոշտանգումներից և այլ վատ վերաբերմունքից: Այս պարտավորությանը մենք առանձին չենք անդրադառնա և ավելի մանրամասն կքննարկենք պոզիտիվ պարտավորությունները: Պարզապես նշենք, որ պետությունը իր ներկայացուցիչների միջոցով պետք է ձեռնպահ մնա խոշտանգում և համանման վերաբերմունք դրսևորելուց:
2. Պոզիտիվ պարտավորություններ
  - **քրեականացնել** խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի բոլոր ձևերը՝ ընդունելով խոշտանգման<sup>99</sup> արգելքի՝ *erga omnes* բացարձակ սկզբունք լինելու հանգամանքը և սահմանելով զսպող պատիժներ և թույլ չտալով այս գործերով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների նախատեսում.
  - **կանխել** խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի վտանգի նյութականացումը, որը պետությանը հայտնի էր կամ պետք է հայտնի լիներ տվյալ հանգամանքներում, ներառյալ խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելը՝ խոշտանգման պահանջարկը չստեղծելու համար.
  - նշված վտանգի պնդվող կամ ամերևույթ առկա նյութականացման դեպքում **կատարել** խոշտանգման մասին հայտարարությունների առթիվ **արդյունավետ** և **անկախ քննություն**, որը տրամադրում է գործը բացահայտելու, մեղավոր անձնաց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ողջամիտ հեռանկարներ.
  - խոշտանգման մասին հայտարարությունների քննության արդյունքում հայտնաբերված մեղավոր անձանց նկատմամբ **նշանակել և ի կատար ածել** բավականաչափ **զսպող, արդյունավետ և համաչափ պատիժներ**.
  - **հատուցում տրամադրել** խոշտանգման զոհերին:

99. Հետագա շարադրանքում *խոշտանգում* եզրույթի ներքո, եթե այլ բան ուղղակիորեն չի բխում համատեքստից, նկատի ենք ունենում վատ վերաբերմունքի մյուս դրսևորումները, այն է՝ անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը և:



Այս պարտավորություններից յուրաքանչյուրը սերտորեն կապված է մյուս բոլորի հետ: Օրինակ՝ խոշտանգում հանդիսացող գործողությունների ոչ պատշաճ որակումը անխուսափելիորեն ազդում է քննության արդյունավետության և ամեն դեպքում նշանակվող պատժի անխուսափելիության վրա, քանի որ պետք է ապահովվի նաև իրավական որոշակիության և «պատասխանատվություն միայն օրենքի խախտման դիմաց» սկզբունքների իրագործումը (ՄԻԵԿ-ի 7-րդ հոդված): Կամ խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցները մեղադրական դատավճռում օգտագործելը ինքնին չի նպաստում կանխման պոզիտիվ պարտավորության կատարմանը, այլ հակառակը՝ պաշտոնատար անձանց մոտ ստեղծում է «գործեր բացահայտելու» մղում՝ անպատիժ մնալով, ցանկացած եղանակով, այդ թվում՝ նոր հանցագործություն կատարելու գնով (ի դեմս 3-րդ հոդվածի խախտման): Վերջապես, դատարանների կողմից խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցները օգտագործելը ստեղծում է խոշտանգումների պահանջարկ՝ հակառակ խոշտանգման դրսևորումները կանխելու պարտավորության:

### **Քրեականացնել խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի բոլոր ձևերը**

Երբեմն ձևավորվում է այն թյուր պատկերացումը, որ կոնվենցիոն պարտավորությունները առնչվում են զուտ դատավարական իրավունքներին, և որ ազգային պետության սուվերեն բացարձակ իրավունքն է իր քրեական օրենսգրքում ամրագրել այն արարքները, որոնք հանցագործություն են, և իր հայեցողությամբ պատիժներ նախատեսել այդ արարքների համար: Եվ առավել ևս, ժխտվում է պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության՝ կոնվենցիոն պարտավորություններով սահմանափակված լինելու փաստը:

**խոշտանգման արգելքի քրեականացման հիմքում ընկած է** խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելված լինելու՝ **erga omnes** բացարձակ սկզբունք հանդիսանալու հանգամանքը, ինչը ենթադրում է խոշտանգման հանցակազմի համապատասխանեցումը դրա միջազգայնորեն ընդունված բնորոշմանը, ինչպես նաև խոշտանգման համար խիստ սանկցիաների և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների հստակ սահմանումը, բացարձակ արգելքների ամրագրումը՝ պետության կողմից այնպիսի գործողությունների կանխումն ապահովելու համար, որոնք ուղղված կլինեն խոշտանգումներն արդարացնելուն կամ դրանց ու դրանք կատարողների նկատմամբ ներողամիտ վերաբերմունք դրսևորելուն: Նման անթույլատրելի գործողություններից են խոշտանգման դեպքում քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներ նախատեսելը, խոշտանգման համար դատապարտված անձանց նկատմամբ ներում և համաներում թույլատրելը, նրանց նկատմամբ պայմանական կամ քրեական սանկցիայի նվազագույնից ցածր պատիժ նշանակելու կամ նրանց պայմանական վաղաժամկետ ազատվելու հնարավորություն նախատեսելը:

խոշտանգման արգելքի ծանր խախտումները քրեականացնելու պարտավորությունը, ինչպես նաև մյուս թվարկված պոզիտիվ պարտավորությունները տարածվում են թե՛ պետության ներկայացուցիչների և թե՛ մասնավոր անձանց կողմից կատարվող արարք-

ների վրա: Այս առումով, սակայն, ավանդաբար, Հայաստանում երկու խնդիր է եղել՝ ՀՀ քրեական օրենսգրքի՝ խոշտանգումներին նվիրված առանձին հոդվածի համապատասխանեցումը ՄԱԿ-ի կոնվենցիային՝ հենց պաշտոնատար անձանց համապատասխան վարքագծի պատշաճ քրեականացման և տվյալ արարքի ծանրության աստիճանին համաչափ պատիժների նախատեսման ու դրանց լրիվ կրման անխուսափելիության ապահովման նպատակով: Պետք է ասել, որ մեծամասամբ այս խնդիրները լուծված են 2021 թ.-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքով: Բացի այդ, քրեականացված են նաև մասնավոր անձանց կողմից կատարվող՝ խոշտանգում և այլ վատ վերաբերմունք հանդիսացող գործողությունները:

Այսպիսով, անկախ խոշտանգման արգելքի խախտումը պետության ներկայացուցչին կամ մասնավոր անձին վերագրվելու հանգամանքից, շատ կարևոր է բացահայտել, թե որոնք են խոշտանգման արգելքի խախտում, այն է՝ բուն խոշտանգում և համանման այլ վերաբերմունք, այսինքն՝ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք հանդիսացող գործողությունները: Սա անհրաժեշտ է, որ *խոշտանգում* հանցագործությունը բավարարի իրավական որոշակիության պահանջներին: Սրա համար նախ և առաջ անհրաժեշտ է հստակ օրենսդրական տարբերակում անցկացնել վատ վերաբերմունքի շեմերի միջև, որպեսզի խոշտանգում գործադրողները չխուսափեն քրեական պատասխանատվությունից՝ ենթարկվելով միայն կարգապահական կամ վարչական պատասխանատվության կամ ընդհանրապես ազատվեն որևէ պատասխանատվությունից՝ օրենքի անորոշությունը հոգուտ իրենց մեկնաբանվելու հանրաճանաչ սկզբունքի կիրառման արդյունքում:

Մասնավորապես եթե քրեականացվում է միայն *խոշտանգումը*, իսկ վատ վերաբերմունքի մյուս երկու դրսևորումները՝ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, փաստորեն դառնում են վարչական կամ կարգապահական պատասխանատվության հիմքեր, ապա դա չի կարող ճիշտ համարվել, քանի որ գործնականում դրանց տարանջատումը չափազանց դժվար է՝ կախված գործի կոնկրետ հանգամանքներից: Մտավախությունն այն է, որ *խոշտանգման* և վատ վերաբերմունքի մյուս երկու ձևերի դրսևորման առկայության մասին կասկածների դեպքում դրանք փարատվեն հոգուտ ենթադրյալ խոշտանգողների, և նրանք ազատվեն քրեական պատասխանատվությունից: Հետևաբար անհրաժեշտ է կամ վատ վերաբերմունքի մյուս երկու դրսևորումները ևս ներառել նոր հոդվածում, կամ դրանք նախատեսել առանձին հոդվածներով: Ընդ որում, պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ ժողովրդավարական հասարակության առաջընթացը՝ պայմանավորված ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով սահմանված արգելքի բացարձակ բնույթով, գնում է վատ վերաբերմունք հանդիսացող գործողությունները հետզհետե *խոշտանգում* եզրույթի ներքո դիտարկելու ճանապարհով, եթե իհարկե, հաղթահարված է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով պահանջվող վատ վերաբերմունքի դաժանության շեմն ընդհանրապես:

Մասնավորապես խոսքը վերաբերում է այս հանցակազմերի օբյեկտիվ կողմի (օրինակ՝ հոգեբանական ճնշում, ֆիզիկական հարկադրանք և այլն), սուբյեկտիվ կողմի (ցուցմունք ստանալու նպատակ, ֆիզիկական և/կամ հոգեկան ցավ պատճառելու նպատակ

տակ և այլն), սուբյեկտի (պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրոմամբ և այլն) և օբյեկտի (արդարադատության դեմ, մարդու դեմ ուղղված հանցագործություն) հստակ օրենսդրական նկարագրմանը: Ի տարբերություն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի, որն «...անհրաժեշտ չի համարում մշակել արգելված գործողությունների ցանկը կամ հստակ տարբերակումներ սահմանել վատ վերաբերմունքի կամ պատժի տարբեր ձևերի միջև, քանի որ այդ տարբերակումները յուրաքանչյուր դեպքում կախված են գործադրվող վերաբերմունքի բնույթից, նպատակից և դաժանության աստիճանից»<sup>100</sup>, ՄԻԵԴ-ը նման տարբերակում անցկացրել է **Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի** գործով 2010 թ.-ի հունիսի 1-ի վճռում:

«88. Որպեսզի վատ վերաբերմունքը ընկնի 3-րդ հոդվածի գործողության տակ, այն պետք է հասնի ծանրության նվազագույն աստիճանի: Այս գնահատականը կախված է մի շարք հանգամանքներից, որոնք են՝ վատ վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեբանական ազդեցությունը, որոշ դեպքերում տուժողի սեռը, տարիքը, առողջական վիճակը ...: Այլ գործոնները ներառում են այն նպատակը կամ շարժառիթը, որի համար այդ վերաբերմունքը դրսևորվել է..., ինչպես նաև համատեքստը, օրինակ՝ լարված մթնոլորտը և Էմոցիաները...:

89. .... վերաբերմունքը հանդիսանում է «անմարդկային», եթե ի թիվս այլնի, եղել է կանխամտածված, տևել է ժամեր շարունակ, և պատճառել կամ մարմնական վնասվածք կամ ինտենսիվ ֆիզիկական ցավ, կամ հոգեբանական տառապանքներ...: Վերաբերմունքը դիտվել է որպես «նվաստացնող», երբ եղել է այնպիսին, որ զոհերի մոտ առաջացրել է վախի, ընկճվածության և ստորադասվածության այնպիսի զգացում, որն ունակ է եղել ստորացնելու կամ նսեմացնելու նրանց և կոտրելու նրանց ֆիզիկական կամ հոգեբանական դիմադրությունը, կամ եղել է այնպիսին, որ զոհին մղել է գործելու իր կամքին կամ խղճին հակառակ (Քինսանն ընդդեմ ՄԹ, *Keenan v. the United Kingdom*, № 27229/95, կետ 110, ECHR 2001-III, և *Ջալլոհի գործը*, կետ 68-րդ)»<sup>101</sup>:

Եվ այսպես, ՀՀ գործող, այն է՝ 2021 թ.-ին ընդունված Քրեական օրենսգրքի 43-րդ գլխում («Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններ») նախատեսվել է 450-րդ հոդվածը (հոշտանգումը), որի տեքստը համապատասխանում է ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածով տրված բնորոշմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն «չի խոչընդոտում միջազգային որևէ փաստաթղթի կամ ներպետական օրենսդրության, որոնք բովանդակում են կամ կարող են բովանդակել ավելի լայն կիրառման դրույթներ»: Այս նորմում արտացոլվում է *խոշտանգում* հասկացությունը հետզհետե ավելի լայն կիրառելու միտումը:

Միջազգային պարտավորություններին համահունչ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսվում են նաև խոշտանգման՝ որպես հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության ծանրացուցիչ հանգամանքները, որպիսիք են արարքը

100. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություններ, հոդված 7, 44-րդ նստաշրջան, 1992 թ., ՄԱԿ-ի փաստաթղթեր՝ HRI/GEN/1/Rev.1.30 (1994), կետ 4:

101. *Gafgen v. Germany*, <https://hudoc.echr.coe.int/eng/#!%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-99015%22>

կատարելը՝ 1) անձի, նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, 2) հղի կնոջ նկատմամբ, 3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ, 4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ, 5) անչափահասի նկատմամբ կատարելը, 6) առանձին դաժանությամբ, 7) մի խումբ անձանց կողմից կատարելը և 8) արարքով անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք առաջացնելը (պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով), և նշված արարքները հանցավոր կազմակերպության կողմից կատարելը (պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով):

Բացի այդ, օրենսդրորեն պետք է բացառել խոշտանգումը արդարացնող նորմերի որևէ կարգի գոյությունը և խոշտանգողների հանդեպ մեղմ վերաբերմունքի դրսևորումը: Մասնավորապես անհրաժեշտ է ամրագրել, որ.

1. Որևէ նպատակ չի կարող իրավաչափ համարվել «սույն հողվածով արգելված արարքները» արդարացնելու կամ դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառելու, ինչպես նաև սույն հողվածով սահմանված պատիժը մեղմացնելու համար:
2. Քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանքները չեն տարածվում այս գործերի վրա: Մասնավորապես հրաման կատարելը կամ ծայրահեղ անհրաժեշտությունը (սյուրնբերգյան սկզբունք) չի կարող այդպիսի հիմք հանդիսանալ:

**Ինչ վերաբերում է ոչ պաշտոնական հանցագործություններ հանդիսացող գործողություններով կամ մասնավոր անձանց կողմից խոշտանգման արգելքի խախտումը քրեականացնելուն**, ապա ՀՀ նոր քրեական օրենսգրքում համապատասխան գործողությունները նախատեսված են 135, 137, 194-196-րդ հողվածներում:

### **Կանխել խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի՝ պետությանը հայտնի վտանգի նյութականացումը**

խոշտանգումները կանխելու ուղղությամբ պետության ունեցած պոզիտիվ պարտավորությունները ներառում են.

- *խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցները որևէ կերպ օգտագործելու արգելքը՝ որպես խոշտանգումները կանխելու նախապայման.*
- *պետությանը հայտնի խոշտանգման վտանգի նյութականացումը կանխելը՝ որպես պոզիտիվ պարտավորություն:*

Պետությունը պետք է ապահովի այնպիսի միատեսակ իրավապահ և դատական պրակտիկա, որ բոլոր «ապագա խոշտանգողներին» գերծ կպահի հակաիրավական գործողություններից, քանի որ նրանք կգիտակցեն, որ «խոշտանգումն անիմաստ է», և որ անթույլատրելի եղանակներով ձեռք բերված ապացույցները կարող են օգտագործվել միայն խոշտանգողների դեմ՝ իրենց իսկ դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում<sup>102</sup>: ՀՀ Վճռաբեկ դատարանը, հղում անելով *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ-ի 2007 թ.-ի հունիսի 28-ի վճռին<sup>103</sup>, նշել է.

«24. ՄԻԵԴ-ը գտել է, որ քրեական դատավարության ժամանակ որպես ապացույց օգտագործվել են խոշտանգումների ազդեցության տակ տրված ցուցմունքներ, և եզրահանգել է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար»<sup>104</sup>:

Մեկ այլ՝ *Հիլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի* գործով 2003 թ.-ի հունիսի 19-ի վճռում ՄԻԵԴ-ը նշեց հետևյալը.

«Չնայած ՄԻԵԴ-ի խնդիրը չէ վերացական ձևով քննել ապացույցների թույլատրելիության հարցը քրեական իրավունքի ոլորտում, Դատարանն իր ափսոսանքն է հայտնում առ այն, որ սույն գործով ... [ազգային]... դատարանը այդ խնդիրը չի լուծել նախքան գործն ըստ Էության քննելը»<sup>105</sup>:

ԽԴԿ-ն նույնպես կոչ է անում, որ դատարանները իրականացնեն որևիցե միջանկյալ վարույթ վատ վերաբերմունքի հիմքով ապացույցի անթույլատրելիության մասին հայտարարության առթիվ. «Որոշ դեպքերում դատավորները կարող են առանձին լսում նշանակել («դատաքննություն՝ դատաքննության շրջանակներում») նման հայտարարություններով՝ նախքան հիմնական դատական նիստում կոնկրետ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելը»<sup>106</sup>:

Ապացույցը պետք է անթույլատրելի ճանաչվի՝ անկախ վատ վերաբերմունքի ծանրության աստիճանից.

«Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի... մեղքի ապացույցի հիմքում անկախ նրա ապացուցողական նշանակությունից: Ցանկացած այլ եզրահանգում միայն կծառայի բարոյապես դատապարտելի արարքը անուղղակիորեն արդարացնելուն, որը Կոնվեն-

102. ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 15:

103. Harutyunyan v. Armenia, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%222001-81352%22%7D>

104. ՀՀ ՎԴ 26.03.2010 թ. ՎԲ-04/10 գործով և 10.04.2009 թ.-ի ՀԲԴ 2/0028/01/08 որոշումներ:

105. Hülki Gunes v. Turkey, para. 91, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%222001-61169%22%7D>

106. Конофор Фили, "Борьба с пытками: руководство для судей и прокуроров", Центр по защите прав человека, Эссекский университет, 2003, էջ 59:

ցիայի հոդված 3-ի հեղինակները ջանացել են արգելել, այլ կերպ ասած՝ «թույլ կտա դաժանությունների գործադրումն օրենքի քողի տակ» (տե՛ս վերջին աղբյուրներից Ջալոհն ընդդեմ Գերմանիայի (Jalloh v. Germany) [GC], № 54810/00, կետեր 9 և 105, ECHR 2006-....)»<sup>107</sup>:

ՄԻԵԴ-ը, ըստ Էության, հստակորեն ամրագրում է այն կանխավարկածը, որ եթե նախքան դատավճիռ կայացնելը խնդրո առարկա ապացույցը մնում է ապացուցողական զանգվածի մեջ, ապա այն **ինչ-որ ձևով** ազդած է լինում դատավորի որոշման վրա, և, անկախ այդ ազդեցության չափից, ելնելով խոշտանգման արգելքի բացարձակ բնույթից, այդ որոշումն ամբողջությամբ դարձնում է արատավորված: Այսինքն՝ ՄԻԵԴ-ի ուղերձն է խոշտանգման հիմքով ապացույցն անթույլատրելի ճանաչելու մասին միջևորդության դեպքում այդ միջևորդությունը լուծել նախքան դատավճիռը, և եթե այդ ապացույցին նշանակություն չի տրվելու դատավճռում, ապա իրական երաշխիքը ապացուցողական զանգվածից այն հանելն է՝ զրկելով դատախազին իր ճառում որևէ կերպ դրա վրա հենվելու հնարավորությունից: Այսինքն՝ գործում է այն կանխավարկածը, որ եթե ապացույցը չի հանվել զանգվածից, ապա այն, ի խախտումն Կոնվենցիայի, ինչ-որ չափով օգտագործվել է, այսինքն՝ խախտումն առկա է՝ անկախ օգտագործված ապացույցի ունեցած նշանակությունից, անկախ գործով միակ կամ վճռորոշ ապացույցը լինելու հանգամանքից:

«24. ՄԻԵԴ-ը գտել է, որ քրեական դատավարության ժամանակ որպես ապացույց օգտագործվել են խոշտանգումների ազդեցության տակ տված ցուցմունքներ, և եզրահանգել, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար»<sup>108</sup>:

**Պետությունն ունի նաև խոշտանգման՝ իր պաշտոնյաներին հայտնի վտանգի իրացումը կանխելու պարտավորություն:** Կարևորագույն հարցն այստեղ այն է, թե որոնք են այն չափանիշները, որոնցով պարզվում է, որ պետությունը տեղյակ էր կամ պետք է տեղյակ լիներ նշված իրավունքներին սպառնացող վտանգի մասին: Իսկ այդ հարցի պատասխանը ՄԻԵԴ-ի կողմից տրվում է **կոնկրետ գործի հանգամանքների ամբողջության լույսի ներքո:**

Օրինակ՝ ուսուցչի կողմից երեխայի սպանությանն առնչվող **Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով** 1998 թ.-ի հոկտեմբերի 28-ի վճռում<sup>109</sup> ՄԻԵԴ-ը, արձանագրելով, որ «դիմումատուի համար բավարար է ցույց տալ, որ իշխանությունները չեն արել այն ամենը, ինչ ողջամտորեն ակնկալելի էր իրենցից այն **իրական և վերահաս վտանգից խուսափելու համար**, որի մասին իրենք տեղյակ էին կամ պետք է տեղյակ լինեին» (կետ 116-րդ), նշեց, որ «չնայած դիմումատուների կողմից նշվել էին մի շարք բաց թողնված հնարավորություններ, որոնցից օգտվելը ոստիկանությանը թույլ կտար

107. Harutyunyan v. Armenia, para. 63.

108. ՀՀ ՎԴ որոշում, 29.04.2010 թ.:

109. Osman v. the United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/eng#f1%22tabview%22:f%22document%22,%22itemid%22:%22001-58257%22>

չեզոքացնել» հանցագործից եկող վտանգը, օրինակ՝ խուզարկություն կատարել նրա բնակարանում սպառնալից գրաֆիտին նրան վերագրելու ապացույցներ ձեռք բերելու համար կամ կալանավորել նրան կամ ավելի ակտիվ քայլեր ձեռնարկել նրա անհետացումից հետո, «չի կարելի ասել, որ այդ քայլերը, դրանք ողջամտորեն գնահատելով» կարող էին բերել վտանգի չեզոքացման, կամ որ դատարանը դրանց արդյունքների հիման վրա կդատապարտեր այդ անձին կամ նրան հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու որոշում կկայացներ: Դատարանը, հանցանքը կանխելու պոզիտիվ պարտավորության խախտում չարձանագրելով, նշեց (կետ 121-րդ), որ.

«Ոստիկանները պետք է իրենց պարտականությունները կատարեն անձանց իրավունքների և ազատությունների հետ համատեղելի եղանակով, իսկ տվյալ գործի շրջանակներում նրանք չեն կարող քննադատվել անմեղության կանխավարկածին կշիռ տալու համար կամ ձերբակալման, խուզարկության և առգրավման իրենց լիազորությունները չկատարելու համար՝ հաշվի առնելով իրենց ողջամտորեն ունեցած այն կարծիքը, որ իրենք համապատասխան պահերի հաղթահարած չեն եղել կասկածի՝ այդ լիազորություններն իրացնելու համար պահանջվող շեմը կամ որ ձեռնարկվելիք որևէ միջոց փաստացի կարող էր բերել կոնկրետ արդյունքների»:

Տասը տարի անց, սակայն, ՄԻԵԴ-ն ավելի **զոհակենտրոն մոտեցում** որդեգրեց և դարձյալ սպանությամբ ավարտված, այս անգամ ընտանեկան բռնության դեպքի հետ կապված **Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով** 2009 թ.-ի հունիսի 9-ի վճռում<sup>110</sup> նշեց.

«147. .... Ամեն դեպքում, Դատարանը կցանկանար ընդգծել, որ ընտանեկան բռնության գործերով կատարողների իրավունքները չեն կարող գերակայել տուժողների կյանքի և ֆիզիկական ու հոգեբանական անձեռնմխելիության մարդու իրավունքների նկատմամբ (տես՝ ԿԽՎԿ կոմիտեի որոշումները Ֆաթմա Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի և Ա.Թ-ն ընդդեմ Հունգարիայի գործերով, երկուսն էլ վկայակոչված վերը, համապատասխանաբար՝ 12.1.5-րդ և 9.3-րդ կետերում):

... 153. ....Դատարանն այս կապակցությամբ կրկնում է, որ այն պահից սկսած, երբ իրավիճակը ներկայացվում է ազգային մարմինների ուշադրությանը, ազգային մարմինները չեն կարող վկայակոչել տուժողի դիրքորոշումը՝ ի հիմնավորում նրա, որ իրենք չեն ձեռնարկվել այնպիսի բավարար միջոցներ, որոնք կարող էին կանխել բռնարարի կողմից տուժողի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ արված սպառնալիքների ի կատար ածման հավանականությունը (տես՝ Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության... կետ 116-րդ): Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում»:

110. Opuz v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-92945%22%7D>

## Այսպիսով՝

- տուժողը ունի վտանգի առկայությունը ոչ թե ապացուցելու, այլ դրա մասին ահազանգելու, «ձգանը սեղմելու» պարտավորություն.
- պետության պահանջվող ջանասիրությունը նշանակում է այնպիսի գործընթաց, որն ունեի արդյունքը փոխելու ողջամիտ հեռանկար առաջարկելու հնարավորություն.
- տուժողի հրաժարվելը չի ազատում ռիսկը գնահատելու և կանխելու պարտավորությունից.
- կանխումը ոչ թե արդյունքի, այլ քայլերի պարտավորություն է:

## Իրականացնել արդյունավետ և անկախ քննություն

### Խոշտանգման մասին հայտարարությունը և խոշտանգման նշանների առերևույթ առկայությունը՝ որպես քննություն սկսելու հիմք

ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ խոշտանգման մասին հայտարարությունը պատշաճ, այսինքն՝ արդյունավետ և անկախ ձևով քննելու պետության պոզիտիվ պարտավորությունն առաջանում է փաստի մասին իմանալու, այդ թվում խոշտանգման ենթադրյալի գոհի կողմից հայտարարությունն անելու պահից, ընդ որում, ենթադրյալ գոհի վրա դրված է «ձգանը սեղմելու», արժանահավատ՝ «համապատասխան ապացույցներով հիմնավորվող»<sup>111</sup> պնդումն անելու պարտականությունը (burden of allegation): Սակայն նա չի կրում ենթադրյալ խոշտանգողի մեղքն ապացուցելու պարտականություն (burden of proof), իսկ երբ անձը առաջ է քաշում նման պնդում, ապա պետության պարտականությունն է իրականացնել արդյունավետ քննություն <sup>112</sup>: Խոշտանգման գոհը, ինչպես և ցանկացած հանցագործությունից տուժած անձ չպետք է ինքը բացահայտի հանցագործությունը, որպեսզի իրավապահ մարմինները գործ հարուցելու, քննություն կատարելու, մեղադրանք առաջադրելու և գործը դատարան ուղարկելու հիմք ունենան:

Բացի այդ, քննությունը սկսելու պարտավորությունը ծագում է նաև հայտարարության բացակայության դեպքում, եթե առկա են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են «տեսանելի վնասվածքները, անձի ընդհանուր տեսքը կամ վարքագիծը»<sup>113</sup>: Այսինքն՝ բացի «խոշտանգման մասին վստահելի հայտարարությունից»<sup>114</sup> «ձգանը» կարող է սեղմվել նաև այլ գործոններով պայմանավորված, ինչը կարելի է բնորոշել որպես ՄԻԵԴ-ի դիրքորոշման խստացում<sup>115</sup>: Պետությունը պարտավոր է քննել խոշտանգման բոլոր դեպքերը՝ անգամ դրանց մասին հայտարարության բացակայությունից<sup>116</sup>:

111. Barabanshchikov v. Russia, 08.01.2009, para. 41.

<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22item%22%3A%22001-90413%22%7D>

112. Barabanshchikov v. Russia, 08.01.2009, para. 54.

113. ԽԿԿ գեկույցը Ռուսաստան 27.04.-06.05.2011 թ.-ին կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2013)1, կետ 20, ԽԿԿ գեկույցը Հայաստան

10-21.05.2011 թ.-ին կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2011)24, կետ 27, ՄԻԵԴ վճիռը Տարաբուրկան ընդդեմ Մոլդովայի, 06.12.2011, կետ 56:

114. Bati and others v. Turkey, 03.06.2004, կետ 100, հղումը ըստ՝ Erik Svanidze, Effective investigation of ill-treatment: Guidelines on European standards, Council of Europe, 2014, էջ 38:

115. Erik Svanidze, նույն տեղում:

116. ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 12:



ՄԻԵԴ-ը հաղորդում ներկայացնողից, այնուամենայնիվ, պահանջում է որոշակի փաստական հիմքերի տրամադրում, հետևաբար պետությունը պետք է ապահովի նման հնարավորությունը ևս: Խոսքը նախ և առաջ վերաբերում է ենթադրյալ զոհի՝ ինքնուրույն, առանց վարույթ իրականացնող մարմնի միջնորդավորված որոշման, դատաբժշկական փորձաքննության եզրակացություն ստանալու, այն է՝ դատական բժշկին դիմելու և համապատասխան **ապացույց** ձեռք բերելու իրավունքին: Խոշտանգման մասին հայտարարության դեպքում դրան պետք է վերաբերվել որպես հանցագործության մասին հաղորդման և կիրառել դատավարական ընդհանուր կարգ՝ առանց հնարավոր սուտ մատնության վարկածը միանգամից հավասար քննության առարկա դարձնելու: Չնայած ՀՀ օրենսդրությամբ դեռևս տրված չէ վատ վերաբերմունքի տարբեր աստիճանների դրսևորումների հստակ նկարագրությունը, դատարանները պետք է ղեկավարվեն դրանց միջազգային նկարագրությամբ (տե՛ս վերևում): Խոշտանգման մասին հայտարարության գրանցումը պետք է լինի պարզ, արագ և սկզբնական շրջանում գաղտնի:

Վերջապես անհրաժեշտ է նախատեսել, որ **պետությունը պետք է պաշտպանության միջոցներ ձեռնարկի՝ հնարավոր վրեժխնդրությունից խոշտանգման ենթադրյալ զոհ հանդիսացած անձին և նրա հարազատներին պաշտպանելու ուղղությամբ:** Ընդհուպ եթե հայտարարությունը ակնհայտորեն անհիմն չէ, կարող է անհրաժեշտ լինել ենթադրյալ խոշտանգողի պաշտոնավարման կասեցումը, հայտարարություն տվողին այլ, ավելի անվտանգ վայրում պահելը և այլն<sup>117</sup>: Նաև պետք է հիշել, որ **խոշտանգման ենթադրյալ փաստի առթիվ վարույթի հարուցման կամ ահազանգման պարտականությունը քրեական վարույթի մասնակիցների վրա դրված է ի պաշտոնե՝ անկախ այդ մասին հայտարարության առկայությունից կամ բացակայությունից**, եթե առկա են վատ վերաբերմունքի տեսանելի հետքեր<sup>118</sup>:

## Անկախ քննություն

Խոշտանգման ենթադրյալ փաստը քննող մարմինը չպետք է շահերի որևէ միասնություն ունենա այն մարմնի հետ, որտեղ աշխատում է ենթադրյալ խոշտանգողը: Բացառված պետք է լինի նաև ստորադասվածության ցանկացած հարաբերություն: Անհրաժեշտ է ապահովել ոչ միայն քննության անկախությունը, այլև այդ անկախության տեսանելի լինելը: Քննության անկախության պահանջի իմաստը հետևյալն է. ենթադրյալ խոշտանգողը և խոշտանգման մասին հայտարարությունը քննող պաշտոնատար անձը կամ այն անձը, որի անցկացրած քննության արդյունքները վճռորոշ նշանակություն են ունենում նախաքննական մարմնի որոշման համար, չպիտի գտնվեն ինստիտուցիոնալ և շահերի անձնական միասնության հարաբերություններում: Օրինակ՝ հայտարարությունը քննող մարմինը չի կարող պարզապես հաստատել ոստիկանության ծառայողական քննության արդյունքները՝ ընդունելով դրանց փաստական հիմնավորվածության կանխավարկածը:

117. ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 13:

118. ԽԿԿ զեկույցը Ռուսաստան 2011 թ.-ի ապրիլի 27-ից մայիսի 6-ը կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2013)1, կետ 20, ԽԿԿ զեկույցը Հայաստան 2011 թ.-ի մայիսի 10-21-ը կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2011)24, կետ 27:

Անկախությունն ինքնին արդյունավետ քննության երաշխիք է, և դրա բացակայությունն արդեն իսկ կանխորոշում է արդյունավետ քննության բացակայությունը՝ այնպես, ինչպես, օրինակ, կանխավարկածվում է կախյալ դատարանի կողմից անարդար դատական քննության անխուսափելիությունը: Արդյունավետ քննության համար անհրաժեշտ է նաև դրա լիազոր մարմնի ինքնուրույնություն, և դատարանները պետք է ստուգեն դա: **Բարաբանշիկովն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2009 թ.-ի հունվարի 8-ի՝ արդեն մեջբերված վճռում Դատարանը նշել է, որ.

«48. .... ցնցված է այն փաստից, որ դատաբժշկական փորձաքննությունը նշանակված էր ոստիկանության այն նույն քննիչի կողմից, որը դիմումատուին հարցաքննել էր ձերբակալությունից հետո և կարող էր ականատես եղած լինել պնդվող ծեծի»:

Պետք է հիշել, որ, ըստ ՄԻԵԴ-ի, խոշտանգում իրականացրած անձանց նկատմամբ ծառայողական քննության արդյունքում նրանց կարգապահական տույժի ենթարկելը նույնպես չի կարող համարվել խախտված իրավունքի վերականգնում: Այդ է պատճառը, որ եթե **ծառայողական քննության** ընթացքում ի հայտ են գալիս առերևույթ հանցագործության հետքեր, ապա անհրաժեշտ է իրականացնել քրեական հետապնդում:

Վերջապես, անկախ քննության պարտավորությունը տարածվում է ոչ միայն քննություն իրականացրած մարմնի, այլ նաև այն անձանց վրա, որոնք դատավարական հարաբերությունների մեջ են մտնում այդ մարմնի հետ, տրամադրում ապացույցներ կամ գնահատում դրանք: Խոսքը վերաբերում է նախ և առաջ դատական բժիշկներին, որոնց անկախության մասով ՄԻԵԴ-ի դիրքորոշումը առավել քան հստակ է.

«59. .... Դատարանը .... կրկնում է, որ պատշաճ բժշկական քննություններն էական երաշխիք են վատ վերաբերմունքի դեմ: Դատական բժիշկը պետք է օգտվի իրավական և փաստացի անկախությունից, անցած լինի հատուկ վերապատրաստում և ունենա լայն մանդատ ....»<sup>119</sup>:

## Արդյունավետ քննություն

Խոշտանգման փաստի կամ հայտարարության առթիվ արդյունավետ քննություն անցկացնելու պահանջը՝ որպես պոզիտիվ պարտավորություն, սահմանվում է որպես պետության կողմից անհրաժեշտ այնպիսի գործողություններ կատարելու ջանասիրություն, որոնք տրամադրում են խոշտանգման հնարավոր փաստը բացահայտելու և մեղավորներին հայտնաբերելու ողջամիտ հեռանկար: Օրինակ՝ պետք է ճշմարտացիության հավասարաչափ կանխավարկածով մոտենալ թե՛ խոշտանգման ենթադրյալ զոհի, թե՛ ենթադրյալ խոշտանգողի ցուցմունքներին:

119. Barabanshchikov v. Russia, para. 59.

Պրակտիկայում, նաև Հայաստանի Հանրապետության, շատ են եղել դեպքեր, երբ ենթադրյալ գոհի հայտարարությունները դիտվել են ի սկզբանե անարժանահավատ, տուժողի վրա դրվել է ըստ Էության իր հայտարարության հիմքում ընկած փաստերը ողջամիտ կասկածից վեր չափանիշով ապացուցելու պարտականություն, մինչդեռ հակառակ կողմի (ենթադրյալ խոշտանգող)՝ սեփական մեղքն ու առնչությունը պարզապես հերքող բացատրությունները դրվել են վարույթը չնախաձեռնելու կամ արդեն իսկ սկսված վարույթը կարճելու հիմքում:

Բացի այդ, երկու կողմերն էլ պետք է ունենան ապացույցներ ներկայացնելու հավասար հնարավորություն, մինչդեռ, թե՛ նախկին, թե՛ նոր քրեադատավարական օրենսդրության համաձայն, խոշտանգման ենթադրյալ գոհը պետք է դիմի պետության ներկայացուցչին՝ ապացույցի կարգավիճակ ունեցող աղբյուրի միջոցով, այն է՝ փորձագիտական եզրակացությամբ սեփական պնդումները հիմնավորելու համար: Մասնավորապես խոսքը վերաբերում է նրան, որ ենթադրյալ գոհի ներկայացրած բժշկական բնույթի ապացույցները չունեն ապացույցի կարգավիճակ, որպիսին ունի քննիչի կողմից նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը:

Արդյունավետ քննության պոզիտիվ պարտավորությունը բանաձևվում է հետևյալ կերպ. **արդյո՞ք պետությունը օգտվել է այն կատարելու, տվյալ դեպքում՝ փաստերը պարզելու և մեղավորներին հայտնաբերելու և այնուհետև պատասխանատվության ենթարկելու ողջամիտ հեռանկար տրամադրող հնարավորությունից:** Այս հնարավորությունից պետության չօգտվելու ձևերը բազմապիսի են, օրինակ.

- *անձը ներկայացնում է խոշտանգման մասին հայտարարություն՝ նշելով, որ իր նկատմամբ գործադրվել է բռնություն, սակայն փորձաքննությունը նշանակվում և իրականացվում է պնդվող դեպքից այնքան ժամանակ անց, որ մարմնական վնասվածքները կամ վերանում են, կամ չունեն ծանրության նախկին աստիճանը, այսինքն՝ հետքերը մեղմվել են կամ վերացել.*
- *ոչ պատշաճ ջանասիրության պատճառով ձեռք չեն բերվում մեղադրանք առաջադրելու հիմք հանդիսացող ապացույցները, օրինակ՝ հնարավոր վկաների ցուցմունքները, ինչի հետևանքով ենթադրյալ խոշտանգողը, չունենալով մեղադրյալի կարգավիճակ, թաքնվում է քննությունից, լքում է երկիրը և նրա նկատմամբ հնարավոր չի լինում հետախուզում հայտարարել.*
- *քննչական մարմինը քայլեր չի ձեռնարկում ենթադրյալ խոշտանգողների պաշտոնավարումը կասեցնելու համար<sup>120</sup>, կամ չեն կիրառվում խափանման այնպիսի միջոցներ, որոնք կկանխեին ենթադրյալ խոշտանգողի կողմից վկաների վրա ազդելը:*

Այս և այլ գործողությունների մասին ներկայացնենք մի քանի դիտարկումներ՝ միջազգային մարմինների, առաջին հերթին ՄԻԵԴ-ի և խոշտանգումների կանխարգելման

120. Տե՛ս Յամանն ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԴ-ի 02.11.2004 թ.-ի վճիռը, կետ 55-րդ, նաև Բեկուրը և Կուտրուպուլոսն ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԴ-ի 13.12.2005 թ.-ի վճիռը, կետ 54-րդ: Ստամբուլյան արձանագրություն, կետ 80-րդ (Աղբյուրների վկայակոչումը՝ ըստ՝ Էրիկ Սվանիձե, Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարը. Կալանավորվածների իրավունքները և իրավապահ մարմինների աշխատակիցների պարտականությունները, Երևան, 2010, էջ 27):

կոմիտեի դիրքորոշումների հիման վրա: Նախ և առաջ անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել բժշկական հետազոտության արագ և կանոնավոր անցկացումը՝ առավազն արգելանքի տակ գտնվող անձի տեղաշարժերից առաջ և հետո՝ նրա առողջական վիճակի համար պատասխանատվության անհատականացումն ապահովելու նպատակով: Անհրաժեշտ է ՔԴՕ-ում սահմանել, որ անձը կամ նրա փաստաբանը կարող է դիմել և ստանալ դատական բժշկի փորձագիտական եզրակացությունը, որը կունենա հավասար ապացուցողական ուժ, ինչ վարույթն իրականացնող մարմնի կողմից նշանակված փորձաքննության արդյունքները:

**Այս առթիվ ԽԿԿ-ն նշել է, որ «չպետք է որևէ «պատնեշ» լինի դատական բժիշկների և վատ վերաբերմունքի մասին պնդող անձանց միջև՝ անկախ նրանից, թե արդյոք այդ բժիշկների ծառայությունները պաշտոնապես հայցված են եղել քննչական, դատախազական կամ այլ պաշտոնյաների կողմից, թե ոչ»<sup>121</sup>:** Այնուհետև ԽԴԿ-ն մասնավորեցնում է.

«Այն անձինք, որոնք պնդում են իրավապահ կամ անվտանգության մարմինների կողմից դրսևորված վատ վերաբերմունքի մասին, պետք է հնարավորություն ունենան սեփական նախաձեռնությամբ ենթարկվելու հավատարմագրված դատական բժշկի զննության՝ առանց քննչական կամ դատական մարմնի նախապես տրված լիազորման և անկախ անազատության մեջ գտնվելու հանգամանքից»<sup>122</sup>:

ՀՀ թե՛ օրենսդրական, թե՛ իրավակիրառ տեսակետից չափազանց կարևոր է ***Բյունիշն ընդդեմ Ավստրիայի գործով*** 1985 թ.-ի մայիսի 6-ի վճիռը<sup>123</sup>, որում ՄԻԵԴ-ը հստակ նշել է, որ խոշտանգման մասին հայտարարություն անող մեղադրյալն իրավունք ունի կասկածի տակ դնելու «պետական» փորձագետի անկողմնակալությունը, երբ վերջինս, ըստ էության, հանդես է գալիս որպես իր դեմ վկայող անձ:

ՄԻԵԴ-ի մեջբերված դիրքորոշումները մեկ անգամ ևս ապացուցում են պաշտպանական կողմի՝ փորձագետ իրավիրելու իրավունքի, ինչպես նաև, անկախ կարգավիճակից, հավասար դատավարական պայմաններում գործելու, առաջին հերթին ապացույցը որպես այդպիսին դատարանին ինքնուրույն ներկայացնելու և այդ ընթացքում դատավարական հավասար իրավունքներից օգտվելու անհրաժեշտությունը:

Միաժամանակ դատավորները, այդ թվում, սեփական նախաձեռնությամբ պետք է իրենց մոտ այդպիսի կասկածներ ծագելու դեպքում (երբ տեսանելի են ֆիզիկական վնասվածքները, կամ մեղադրյալը իր վարքագծով որոշումներ կայացնելուն և դատողություններ անելուն անընդունակ անձի տպավորություն է թողնում) ահազանգեն համապատասխան մարմիններին՝ նախաձեռնելով մեղադրյալի նկատմամբ վատ վերաբերմունքի կիրառման ենթադրյալ փաստի քննության վարույթ<sup>124</sup>: Պետք է նշել նաև, որ

121. ԽԿԿ քեկույցը Ալբանիա 2005 թ.-ի մայիսի 23-ից հունիսի 3-ը կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2006)24, կետ 49:

122. ԽԿԿ զեկույցը Ռուսաստան 2011 թ. ապրիլի 27-ից մայիսի 6-ը կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2013)1, կետ 28:

123. Bönisch v. Austria, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%222001-57443%22%7D>

124. ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքն այս առումով խստացվել է, տե՛ս ԽԿԿ զեկույցը Ռուսաստան 06-27.04.2011 թ.-ին կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2013)1, կետ 20, ԽԿԿ զեկույցը Հայաստան 10-21.05.2011 թ.-ին կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2011)24, կետ 27:

ապացույցն անթույլատրելի ճանաչելը դատարանին չի ազատում մեղքի վարույթ հարուցելու ուղղությամբ պոզիտիվ քայլեր ձեռնարկելու պարտավորությունից:

Խոշտանգման հնարավոր փաստը **քննող մարմինը** պետք է իրավունք ունենա ստանալու ցանկացած տեղեկատվություն, որն անհրաժեշտ կհամարի բողոքը լրիվ և բազմակողմանի քննելու համար: **Դատարանները** իրենց հերթին պետք է ստուգեն, թե արդյոք համաչափորեն ուսումնասիրվել են **բոլոր վարկածները**, թե՞ քննության մարմինը հապշտապ ձևով կառչել է բացառապես ենթադրյալ խոշտանգողի «անմեղության» և հայտարարություն տվողի «ստելու» կանխավարկածը հիմնավորելու վարկածից և իրական գործողություններ արել միայն այդ վարկածն ամրապնդելու համար, կամ արդյո՞ք ժամանակին են նշանակվել ցանկացած վարկածի ճշմարտացիությունն ապացուցելուն ունակ փորձաքննությունները և այլն:

Այս ամենը ՄԻԵԴ-ի իրավունքում բնորոշվում է իբրև այնպիսի քննություն, որն ունակ է հայտնաբերելու մեղավորներին: Այս պարտավորությունը համարվում է առաջացած անգամ այն դեպքում, երբ խոշտանգման վարկածը հետագայում օբյեկտիվորեն ժխտվել է: **Քննության պոզիտիվ պարտականությունը ջանքի, գործընթացի, ոչ թե արդյունքի պարտականություն է, սակայն այնպիսի ջանքի, որը կարող է ողջամիտ դիտորդին համոզել, որ այն օբյեկտիվորեն կարող էր հանգեցնել խոշտանգման փաստի բացահայտմանը և մեղավորների հայտնաբերմանը<sup>125</sup>, եթե դրանք եղած լինեին իրականում:**

Խոշտանգման փաստը չհաստատվելու կամ մեղավորներին չհայտնաբերելու դեպքում քննող մարմինը պետք է կայացնի պատճառաբանված որոշում, իսկ դատարաններն էլ, որոնք քննության կառնեն քրեական գործի հարուցումը մերժելու կամ հարուցված քրեական գործը կարճելու մասին բերված բողոքները, պետք է ուշադրություն դարձնեն անկախության և արդյունավետության վերը նշված պահանջների պահպանմանը՝ ստուգելով, թե արդյոք իրականացվել են ողջամտորեն անհրաժեշտ գործողությունները, և, եթե այո, ապա արդյոք դրանք իրականացվել են այնպես, որ տրամադրեն խոշտանգման հնարավոր փաստերը և մեղավորներին բացահայտելու ողջամիտ հեռանկար, արդյոք այդ գործողությունների արդյունքները գնահատվել են համարժեք և անաչառ կերպով, արդյոք պատշաճ արագությամբ է տեղի ունեցել քննությունը և այլն:

Արդյունավետ լինելու համար քննությունը չպետք է սահմանափակվի միայն ենթադրյալ խոշտանգողներին կամ լռության շղթայի մյուս մասնակիցներին, այսինքն՝ հնարավոր հանցակիցներին հարցաքննելով: Վերջապես, **արդյունավետ քննությունը ենթադրում է այնպիսի որակյալ ապացուցողական զանգվածի ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող իրական ջանքեր, որոնք կբավարարեն ապացույցների թույլատրելիության և մեղքը հաստատելու համար դրանց բավարար լինելու ապացուցվածության անհրաժեշտ շեմը:** Հնարավոր է, որ մերկացնող ապացույցները դիտավորյալ ձեռք բերվեն այնպիսի խախտումներով, որ հետագայում անխուսափելիորեն հանգեցնեն դրանք

125. Barabanshchikov v. Russia, para. 54.

անթույլատրելի ճանաչելուն: Ուստի շատ սխալ է ամբողջ հույսը դնել ենթադրյալ խոշտանգողի խոստովանության վրա: Մյուս կողմից անգամ եթե հարցաքննվողը օգտվում է լռության իրավունքից, դա չի նշանակում, որ քննիչը իրավունք չունի հարցեր տալու նրան: Չպետք է սահմանափակվել հիմնական «գործող անձանց» շրջանակով, այլ փորձել ընդլայնել հնարավոր վկաների շրջանակը, օրինակ՝ հարցաքննել այլ կալանավորների ևս: Վերջապես, քննող մարմինը պարտավոր է նաև իրականացնել վատ վերաբերմունքի կրկնությունը կանխող միջոցառումներ<sup>126</sup>:

**Խոշտանգման փաստի առթիվ իրականացվելիք ապացուցողական գործունեության, մասնավորապես ապացույցների ձեռքբերման արդյունավետության տեսակետից** կարևոր է, որ իրեղեն ապացույցները պատշաճ ձևով հավաքվեն, մշակվեն, փաթեթավորվեն, պիտակավորվեն և հանձնվեն պահպանության կամ փորձաքննության, կատարվի բոլոր մարմնական վնասվածքների և վերքերի գույնավոր լուսանկարահանում օգտագործելով գույների քանոն և աղյուսակ, ինչը թույլ կտա ցուցադրել ստացված վնասվածքների չափը և խորության աստիճանը և այլն<sup>127</sup>: **Բժշկական գննության հետ կապված՝** անհրաժեշտ է հիմնականում հետևել խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների արդյունավետ քննության և փաստաթղթավորման ուղեցույցի՝ Ստամբուլյան արձանագրության պահանջներին: *Հիմնականում* բառի օգտագործումն այստեղ պատահական չէ: Են ԽԿԿ-ն (CPT) ավելի բարձր չափանիշներ է նախատեսում նշելով, որ **ենթադրյալ զոհը, առանց վարույթն իրականացնող մարմնի միջնորդության, իրավունք ունի դատական բժշկի կողմից փորձագիտական գննության ենթարկվելու՝** ի տարբերություն Ստամբուլյան արձանագրության, որը (կետ 123) միայն երաշխավորում է անձի՝ վարույթ իրականացնող մարմնին նման միջնորդություն ներկայացնելու իրավունքը<sup>128</sup>: **Խոշտանգման փաստով ապացույցների գնահատման հետ կապված** քննչական մարմինը և դատարանները պետք է հիշեն, որ «եթե այս կամ այն անձը արգելանքի է վերցվել առողջ վիճակում, սակայն արգելանքից ազատվելու պահի դրությամբ նրա մոտ առկա են մարմնական վնասվածքներ, ապա պետությունը պարտավոր է արժանափաստ բացատրություն տալ դրանց առաջացման պատճառների վերաբերյալ»<sup>129</sup>:

Այն գործոնները, որոնք խոշտանգման մեղադրանքը հիմնավորելիս կարելի է օգտագործել **որպես անուղղակի ապացույցներ**, ի թիվս այլնի, այն իրավիճակներն են, երբ անձը արգելանքի տակ է գտնվել դրա համար պաշտոնապես չնախատեսված վայրում կամ գաղտնի վայրում, անորոշ ժամկետով զրկված է եղել շփման և հաղորդակցման իրավունքից, ոչ լիարժեք է ծանուցվել իր իրավունքների մասին՝ արգելանքի տակ պահվելու սկզբնական շրջանում կամ հարցաքննությունից առաջ, արգելանքի վերցվելուց անմիջապես հետո նրան մերժել են փաստաբան տրամադրել, նրանից ցուցմունքներ են ստացել պաշտպանի բացակայությամբ, արգելանքի վերցվելուց անմիջապես հետո

126. Ստամբուլյան սկզբունքներ, Սկզբունք 1, Բ:

127. Копор Фоли, "Борьба с пытками...", էջ 74:

128. Erik Svanidze, Effective investigation of ill-treatment: Guidelines on European standards, Council of Europe, 2014, էջ 30:

129. Տե՛ս բազմաթիվ այլ աղբյուրների թվում Աքսոյն ընդդեմ Թուրքիայի (Aksoy v. Turkey), 18.12.1996, կետ 61,

<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-58003%22%7D>

անձը բժշկական գննություն չի անցել, հետագայում նման գննության պարբերաբար չի ենթարկվել, ժամանակի ընթացքում անձը փոխել է իր ցուցմունքները և այլն<sup>130</sup>:

### **Մեղավոր անձանց նկատմամբ նշանակել և ի կատար ածել բավականաչափ զսպող, արդյունավետ և համաչափ պատիժներ**

Վերջապես, պետության պոզիտիվ պարտավորությունները ենթադրում են ոչ միայն արարքի պատշաճ քրեականացում և բավականաչափ զսպող ու համաչափ պատիժների օրենսդրական ամրագրում, խոշտանգման փաստերի անկախ և արդյունավետ քննության իրականացում, այլ նաև **մեղավորների նկատմամբ նման պատիժների նշանակում և ռեալ և ամբողջությամբ կրում**: Այսպիսով, կարևոր է խոշտանգման համար բավականաչափ **զսպող, արդյունավետ և համաչափ պատիժներ նշանակելու և դրանք ի կատար ածելու հստակ օրենսդրական երաշխիքների ապահովումը**: Խոշտանգման արգելքի բացարձակ բնույթը պահանջում է խոշտանգումների հետ կապված հատուկ նորմեր նախատեսել՝ որևէ հանգամանք դրպես պատասխանատվությունը մեղմացնող դիտելու, պայմանական դատապարտելու, պատասխանատվությունից և պատժից ազատելու, օրենքով նախատեսված նվազագույն պատժից ցածր պատիժ նշանակելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, ներման, համաներման հարցերը լուծելիս:

**Պատժի նշանակման տեսակետից երկու նրբություն կա՝ դատարանի հայեցողությունը՝ քրեական օրենսգրքի շրջանակներում համապատասխան պատիժ նշանակելու, և դրա հետ կապված՝ վերպետական դատական մարմնի՝ ՄԻԵԴ-ի կողմից այնպիսի դիրքորոշումների առկայությունը, որոնք առերևույթ բախվում են երկրի ինքնիշխանության հետ**: Այս առումով ուսանելի է *Օքքալին ընդդեմ Թուրքիայի գործով* ՄԻԵԴ-ի 2006 թ. հոկտեմբերի 17-ին կայացված վճիռը, որում նշվել է.

«65. ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի դատավարական պահանջները գնում են նախաքննության փուլից այն կողմ, երբ .... նախաքննությունը բերում է նրան, որ գործը ուղարկվում է ազգային դատարաններին. վարույթն ամբողջովին վերցրած, ներառյալ դատաքննությունը, պետք է համապատասխանեն 3-րդ հոդվածում ամրագրված արգելքին: **Սա նշանակում է, որ ներպետական դատական իշխանությունները որևէ հիմնավորմամբ չպետք է պատրաստ լինեն անպատիժ թողնել պատճառված ֆիզիկական կամ հոգեբանական տառապանքը**: Սա էական է, որպեսզի պահպանվի հանրության վստահությունը և աջակցությունը օրենքի իշխանության նկատմամբ, ինչպես նաև՝ կանխելու այն արտաքին տպավորությունը, որ իշխանությունները հանդուրժում են ոչ իրավաչափ արարքները կամ հանցակցում դրանց ...»:<sup>131</sup>:

130. Кононр Фоли, “Борьба с пытками...”, էջ 93-94:

131. Okkali v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-148157&filename=CASE%20OF%20OKKALI%20v.%20TURKEY%20-%20%5BArmenian%20Translation%5D%20by%20the%20RA%20Association%20of%20Judges.pdf>

Այս գործով ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման կամ նվաստացուցիչ վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի խախտում արձանագրեց այն հիմքով, որ անդամ պետության դատական ընթացակարգերի արդյունքում ծանր հանցագործություն կատարած անձինք ազատվել էին պատժի կրումից: Մասնավորապես անչափահաս երեխային ծեծի ենթարկած ոստիկանները առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտվել էին մեկ տարվա ազատազրկման, որը վերադաս ատյանում փոխվել էր պայմանական դատապարտման: ՄԻԵԴ-ը գտավ, որ նման որոշումը տուժողի՝ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում է:

Միջազգային այս պարտավորության իրացման ուղղությամբ ՀՀ 2021 թ.-ի Քրեական օրենսգրքով արդեն իսկ կատարվել են կոնկրետ քայլեր: Մասնավորապես խոսքը համաներման, ներման, վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու արգելքների այն կարգավորումների մասին է, որոնց համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված արարքների և դրանք կատարած անձանց նկատմամբ կիրառելի չեն համաներումը (հոդված 91, մաս 2-րդ), ներումը (հոդված 92, մաս 2-րդ), պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (հոդված 90, մաս 7-րդ), քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (հոդված 83, մաս 9-րդ), և անգամ բացառություն է արվում նույն արարքի համար կրկին անգամ քրեական պատասխանատվության ենթարկվելու արգելքից՝ սահմանելով (հոդված 7, մաս 2-րդ), որ նման ենթարկումը թույլատրելի է, եթե անձը այլ պետության կողմից «անհիմն ազատվել է քրեական պատասխանատվությունից կամ անարդարացիորեն դատապարտվել է մեղմ պատժի կամ անհիմն լրիվ կամ մասնակիորեն ազատվել է պատժի կրումից»:

Ինչպես նշվեց, այս մոտեցումները բխում են ՀՀ միջազգային պարտավորություններից, մասնավորապես խոշտանգման բացարձակ արգելքից բխող՝ **որևէ կերպ խոշտանգողներին անպատիժ չթողնելու պարտավորությունից**: ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի եզրակացության համաձայն՝ համաներումն ու ներումը «խախտում են անվերապահ արգելքի սկզբունքը»<sup>132</sup>.

«Որոշ պետություններ «համաներում են հայտարարել խոշտանգումների կիրառողների նկատմամբ: Համաներումը, սովորաբար, անհամատեղելի է նման գործողությունները քննելու, իր իրավագրության ներքո դրանցից պաշտպանություն ապահովելու և ապագայում դրանք կանխելու պետության պարտականության հետ»<sup>133</sup>:

Իր հերթին ՄԻԵԴ-ը *Աբդուլսամեթ Յամանն ընդդեմ Թուրքիայի գործով* 2004 թ.-ի նոյեմբերի 2-ի վճռում նշել է հետևյալը.

«Եթե պետության ներկայացուցիչը մեղադրվում է վատ վերաբերմունքի կամ խոշտանգում գործադրելու մեջ, «արդյունավետ քննության» նպատակների տեսանկ-

132. Ընդհանուր մեկնաբանություն Հ-2, CAT/C/GC/2, կետ 5:

133. ՄԱԿ-ի ՄԻԿ-ի կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություններ 20, կետ 15:



յունից չափազանց կարևոր է, որ քրեական հետապնդման իրականացումն ու պատժի նշանակումը որոշակի ժամկետն անցնելուց հետո չլինեն անհնարին, իսկ ներման կամ համաներման շնորհումը՝ լինի անհնար»<sup>134</sup>:

Սակայն միջազգային պարտավորությունների տեսակետից դեռևս անհրաժեշտ է.

1. պատշաճ պատիժ ապահովել ոչ միայն բուն խոշտանգման, այլև, ինչպես տեսանք, ֆիզիկական և հոգեբանական ցանկացած տառապանք անպատիժ չթողնելու ուղղությամբ, այսինքն՝ անհրաժեշտ է 450-րդ հոդվածի կողքին ավելացնել առնվազն 194-րդ հոդվածը (Հոգեկան ներգործությունը), 195-րդ հոդվածը (Ֆիզիկական ներգործությունը) և 196-րդ հոդվածը (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը).
2. նշված արգելքները տարածել **նաև պատիժ նշանակելիս կիրառվող սահմանափակումների նկատմամբ, մասնավորապես պայմանական դատապարտումը և օրենքով նախատեսված նվազագույն պատժից ցածր պատիժ նշանակելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերը կարգավորելիս հետևելով ՄԻԵԴ-ի վերը մեջբերված այն իրավական դիրքորոշմանը, որ «դատական իշխանությունները որևէ հիմնավորմամբ չպետք է պատրաստ լինեն անպատիժ թողնել պատճառված ֆիզիկական կամ հոգեբանական տառապանքը»:**

Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածը («Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը») լրացնել պատժից վաղաժամկետ ազատելու նոր՝ նեգատիվ պայմանով՝ սահմանելով, որ այն չի կարող կիրառվել խոշտանգման համար դատապարտված անձանց նկատմամբ: Նույնպիսի նեգատիվ պայման պետք է նախատեսել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածում («Պատիժը պայմանականորեն չկիրառելը») և 72-րդ հոդվածում («Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը»)՝ հաշվի առնելով այս հանցագործությամբ **բացարձակ** արգելքի խախտվելու հանգամանքը, որը կատարվում է դիտավորությամբ և որը չունի որևէ արդարացում:

**խոշտանգման մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ զսպող, արդյունավետ և համաչափ պատիժ նշանակելու դատարանի պարտականությունը**, ի տարբերություն անկախ և արդյունավետ քննություն իրականացնելու պոզիտիվ պարտավորության, **ոչ թե «քայլերի, այլ արդյունքի պարտավորություն»** է, քանի որ անկախ և արդյունավետ քննության ապահովման ուղղությամբ վերը նշված բոլոր գործողություններն անիմաստ կլինեին, եթե մեղավորները վերջում ազատվեին իրական պատժից կամ ստանային չափազանց մեղմ պատիժ: ՄԻԵԴ-ը նման դեպքերում արձանագրում է, որ նման մեղմությամբ դատարանները խախտում են 3-րդ հոդվածը և հասարակությանը ազդակ են հնչեցնում, որ պետությունը խրախուսում է խոշտանգումը, անգամ հանցակցում դրան, և հետևաբար ինքն իրեն զրկում խոշտանգումների արդյունավետ կանխման հնարավորությունից: Մասնավորապես, ինչպես տեսանք *Օքթային ընդդեմ*

134. Abdülşamet v. Turkey, para. 55, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-67228%22%7D>

Թուրքիայի գործով, Դատարանը 3-րդ հոդվածի խախտում ճանաչեց խոշտանգում իրականացրած և դրանում մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ պայմանական ազատազրկումը պատիժ նշանակելը:

## Հատուցում տրամադրել խոշտանգման զոհերին

Պետությունը չի կարող անձին զրկել իրավունքի վերականգնման արդյունավետ միջոցի իրավունքից: ՄԻԵԴ-ը նյութական կամ ոչ նյութական վնասի դիմաց հատուցման տրամադրումը ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտման համար ինքնին իրավունքի վերականգնման միջոց չի համարում<sup>135</sup>: Հատուցում ապահովելու առկա խնդիրներից է նախկին վիճակի վերականգնման պահանջի ամրագրումը (restitution in integrum): Սա լուծվում է գործի նորոգման ինստիտուտի միջոցով (եթե անձը դատապարտվել է խոշտանգման արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա):

ՄԻԵԿ-ը պահանջում է օրենսդրորեն ամրագրել խոշտանգման զոհի՝ հատուցում ստանալու իրավունքը և այդ իրավունքին թղթակցող (համապատասխանող) պետության պարտավորությունը՝ անկախ մեղավորներին հայտնաբերելու հանգամանքից: Այս առումով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել, որ **պետությունը խոշտանգման զոհերին հատուցում է տրամադրում ոչ թե որպես ներկայացված քաղաքացիական հայցի բավարարում, այլ որպես պատասխանատվության միջոց**<sup>136</sup>:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի («Ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը») 2-րդ մասը սահմանում է, որ՝ «անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում՝ նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, ինամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառով ոչ նյութական վնասի հատուցում, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՄԻԵԿ-ի հիմնարար իրավունքները՝ այդ թվում՝ կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության և խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը»:

Կարևոր ձեռքբերում պետք է համարել ևս 2016 թ.-ի դեկտեմբերի 16-ին նույն օրենսգրքում ընդունված առանձին ենթագլխի ընդունումը՝ «խոշտանգումից տուժած անձանց փոխհատուցումը» վերտառությամբ, որի 1087.3 հոդվածի («խոշտանգումից տուժած անձանց փոխհատուցման հասկացությունը, բովանդակությունը, կարգն ու պայմանները») 1-ին մասում տրվում է **խոշտանգման զոհի** հասկացությունը, այն է՝

135. Տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Ռազզակովն ընդդեմ Ռուսաստանի (Razzakov v. Russia) 05.02.2015, կետ 50, <https://hudoc.echr.coe.int/eng/#i%22tabview%22:%22document%22:%22itemid%22:%22001-150790%22>

136. Նույն տեղում, կետ 63:

«անձը, որին պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրոմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք է պատճառվել այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով»:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ամրագրվում են խոշտանգումից տուժած անձանց տրամադրվող փոխհատուցման շրջանակները՝ ներառելով այդ անձանց կրած նյութական, ոչ նյութական վնասների հատուցումը և ռեաբիլիտացիայի իրավունքը՝ վերջինիս մեջ ընդգրկելով բժշկական օգնության և սպասարկման դիմաց հատուցում ստանալու, ինչպես նաև անվճար հոգեբանական և իրավաբանական ծառայություններից օգտվելու իրավունքը: Այնուամենայնիվ, նույն հոդվածի 5-րդ մասում խոշտանգումից տուժած անձի փոխհատուցման պահանջը պայմանավորում է՝ կամ խոշտանգում կատարողի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելով, կամ նույն հոդվածով ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կամ քրեական վարույթը կարճելու մասին չվերացված կամ չբողոքարկված որոշման ամփայությամբ, ինչը պետք է բացառել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունը պետք է նման հատուցում տրամադրի **խոշտանգման փաստի հաստատման ուժով**՝ այն կանխելու պարտավորությունը կատարած չլիսելու դեպքում անկախ մեղավորների դատապարտման հանգամանքից:

ՀՀ Նոր ԹԴՕ-ի 162-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Արդարացման դատավճիռ կայացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու դեպքում, ելնելով հայցի ապացուցվածությունից, դատարանն իրավասու է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու»:

Այս դրույթը բխում է ՄԻԵԴ-ի այն դիրքորոշումից, որ արդյունավետ քննության բացակայության պայմաններում դիմումատուն նույնպես կարող է պահանջել, որ դիտվի իր կողմից պնդվող վատ վերաբերմունքի գոհ<sup>137</sup>:

Վերջապես, **անհրաժեշտ է վավերացնել 1983 թվականի նոյեմբերի 24-ին Ստրասբուրգում ստորագրված «Բռնությամբ կատարված հանցագործությունների գոհեղին փոխհատուցելու մասին» եվրոպական կոնվենցիան**, որի վավերացման հարցը դեռևս 11.09.2003 թ.-ին մտել էր ՀՀ ԱԺ նիստերի օրակարգ, սակայն 10 տարի անց՝ 29.01.2014 թ.-ին, դրա վավերացման ընթացակարգը կասեցնելու մասին ՀՀ նախագահի հրամանագրի համաձայն, հարցը դուրս էր եկել ԱԺ չորսօրյա նիստերի օրակարգից<sup>138</sup>:

137. Razzakov v. Russia, para. 51.

138. [http://www.parliament.am/draft\\_history.php?id=5510](http://www.parliament.am/draft_history.php?id=5510)

Խոշտանգումների դեմ պայքարի ոլորտում պետության ունեցած պոզիտիվ պարտավորությունները նման մանրամասնությամբ ներկայացնելը պայմանավորված է ոչ միայն խնդրո առարկայի առթիվ ձևավորված հարուստ միջազգային փորձով, այլ նաև այն հանգամանքով, որ դրանք հավասարապես վերաբերելի են սույն Ձեռնարկում ներկայացվող մյուս հիմնահարցերին, այն է՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում պետության ունեցած պարտավորություններին, որոնք քննարկվում են 7-րդ գլխում:

## Հարցեր լսարանին

1. Խոշտանգման արգելքը պետք է գործի բոլոր դեպքերում:

- Պատկերացրեք, որ ոստիկանությանը անհրաժեշտ է տեղեկություններ ստանալ հնարավոր ահաբեկչական ակտի մասին. արդյո՞ք այդ դեպքում ճիշտ չէ ցանկացած ձևով այդ տեղեկությունների ձեռքբերումը՝ հարյուրավոր գոհերի կյանքը փրկելու համար:
- Պատկերացրեք, որ խոշտանգման, մասնավորապես դաժան ծեծի ենթարկելու սպառնալիքի տակ անձը խոստովանում է բնակարանային գողության կատարումը, ապա նշում այն հասցեն, որտեղ թացրել է գողոնը: Քննիչները այդ տեղեկության հիման վրա ժամանում են նշված բնակարանը և խուզարկությամբ հայտնաբերում գողոնը: Հայտնաբերումից 5 րոպե անց պարզվում է, որ դեռևս մինչև մեղադրյալին խոշտանգմամբ սպառնալի ու մեղադրյալից խոստովանություն ստանալը ոստիկանության հերթապահ մասում ստացվել է պատշաճ ձայնագրառված հեռախոսային հաղորդագրություն, որտեղ անհայտ իրազեկիչը փոփոխված ձայնով հայտնել է ոստիկանությանը, թե ով է կատարել հանցագործությունը, որտեղ է գտնվում գողոնը՝ նշելով նույն բնակարանի հասցեն:

2. Արդյո՞ք թույլատրելի է որպես ապացույց օգտագործել.

- մեղադրյալի խոստովանությունը.
- խուզարկությամբ ձեռք բերված իրեղեն ապացույց գողացված իրերը:

### 5.3. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Անձնական ազատության իրավունքը՝ որպես հիմնական անհատական իրավունքներից մեկը, ամրագրվել է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից մարդու իրավունքների ոլորտում վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով, մասնավորապես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով :

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով այս իրավունքի կարևորությանը, նշել է, որ ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածը (վերաբերում է ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքին) ՄԻԵԿ 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածների հետ միասին դասվում է կարևորագույն հիմնական իրավունքների շարքին<sup>139</sup>: Դատարանը շեշտել է, որ ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները հիմնարար կարևորություն ունեն ժողովրդավարական հասարակությունում անհատի՝ հանրային իշխանության կողմից կամայական կերպով իրեն ազատությունից զրկելուց զերծ մնալու իրավունքը ապահովելու տեսանկյունից<sup>140</sup>: Անձնական ազատության իրավունքի ամրագրման նպատակն է երաշխավորել անձի ազատությունը և մասնավորապես անձին տրամադրել երաշխիքներ ընդդեմ կամայական անազատության:

#### Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

- 1. անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.*
- 2. դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.*
- 3. օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.*
- 4. անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.*
- 5. անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.*

139. Ozdil and others v The Republic of Moldova, (App. 42305/18), 11 June 2019, § 46.

140. Husan (Abu Zubaydah) v Poland, (App. 7511/13), 24 July 2014, §§ 521-2.

6. հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով:
7. անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում նաև մեղադրանքի մասին:

3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

6. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները»:

## **ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի համաձայն՝**

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

- ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,
- բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,
- գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,
- դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դատտիրակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմինն ներկայացնելու նպատակով,

- ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,
- զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Անձնական ազատության իրավունքին վերաբերող առաջին հասկացությունը, որի մասին հարկ է հիշատակել, *ազատության կանխավարկածն* է: Այս կանխավարկածն իր արտացոլումն է ստացել Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված կարգով: Ցանկացած այնպիսի դեպքով, որը Սահմանադրությամբ նախատեսված չէ, և որի համար չկա օրենսդրի կողմից նախատեսված ընթացակարգ, անձնական ազատությունից զրկելն անթույլատրելի է: Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասում ներկայացված է անձին ազատությունից զրկելու հիմքերի սպառիչ ցանկը: Այդպիսի հիմքերն են իրավասու մարմնի կողմից անձին հանցանք կատարելու համար ազատազրկման դատապարտելը, դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելը, անձին իրավասու մարմնին ներկայացնելը, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով, հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելը և այլն: Եթե պետությանը չի հաջողվում ցույց տալ, որ անձի նկատմամբ բանեցված ներգործությունը (որը դրսևորվում է ազատությունից զրկմամբ) համընկնում է Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին

մասում, ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված դեպքերից որևէ մեկի հետ, ապա տեղ է գտել նույն դրույթներով սահմանված անձնական ազատության հիմնական իրավունքի խախտում:

Անձնական ազատության իրավունքը քննարկելիս տեղին է նաև հակիրճ անդրադառնալ Սահմանադրության 27-րդ հոդվածի կառուցվածքին: Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է ազատության իրավունքը, որին հետևում է անձին ազատությունից զրկելու արգելքը՝ բացառությամբ նույն 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերով նշված դեպքերի և օրենքով սահմանված կարգով: Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին, 2-5-րդ մասերը սահմանում են որոշ իրավունքներ ազատությունից զրկված անձանց համար, 4-րդ մասը վերաբերում է իրավասու մարմնին ներկայացնելու նպատակով անձին ազատությունից զրկելու դեպքին, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով: Սահմանադրության 27-րդ հոդվածի 6-րդ մասը, որպես հատուկ նորմ, սահմանում է անձին ազատությունից զրկելու արգելքը՝ քաղաքացիաիրավական պարտականությունները կատարելի վիճակի չլինելու պատճառով:

Անձնական ազատության իրավունքին վերաբերող սահմանադրական դրույթների մասով Սահմանադրական դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴՌ-827 որոշմամբ նշել է հետևյալը.

*«Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով հստակ նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Սահմանադրության այս հոդվածը, վերարտադրելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3 հոդվածի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9 հոդվածի դրույթները, սպառիչ կերպով սահմանում է անձին ազատությունից զրկելու դեպքերը՝ կանխորոշելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներ:*

*ՀՀ Սահմանադրության 43 հոդվածն անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշը, սահմանները և դեպքերը՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը:*

*Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասում ամրագրելով անձին ազատությունից զրկելու դեպքերը, սահմանա-*



դիրը միևնույն ժամանակ դրանցում արտացոլված նպատակներով և հիմքերով անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասին համահունչ, որպես դրանցում ամրագրված՝ առանձին իրավաչափ նպատակներին հասնելու դատավարական միջոցներ, նախատեսել է ձերբակալումը և կալանավորումը, միաժամանակ որոշակիացնելով դրանցից յուրաքանչյուրի գործառույթը, նպատակը և հիմքերը:

ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը՝ հետապնդելով անձին կամայականորեն ազատությունից զրկելը բացառելու նպատակ, իր 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում ամրագրում է այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են անձին պաշտպանելու ազատությունից անօրինական զրկվելուց»:

### **Անձնական ազատության իրավունքի բովանդակությունը և այդ կապակցությամբ հանրային իշխանության ունեցած պարտավորությունների բնույթը**

Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով՝ հիմնական իրավունքների և ազատությունների հասցեատերը հանրային իշխանությունն է, որը պարտավոր է հարգել և պաշտպանել դրանք: Այս առումով հիմնական իրավունքների կապակցությամբ հանրային իշխանության պարտականությունները ձեռք են բերում երկակի բնույթ. մի կողմից հանրային իշխանությունը պարտավոր է չմիջամտել այդ իրավունքներին կամ այլ կերպ չխախտել անձի իրավունքները, մյուս կողմից՝ պաշտպանել այդ իրավունքները երրորդ անձանց ոտնձգություններից:

Պատմականորեն հիմնական իրավունքները՝ որպես պոզիտիվ իրավունքի մաս, առաջ են եկել որպես անձանց համար իրավական երաշխիքներ ընդդեմ հանրային իշխանության կամայական միջամտությունների: Այս իմաստով անձնական ազատության իրավունքը առաջին հերթին ոչ այնքան վերաբերում է անձի ազատ լինելու հնարավորությանը (քանզի անձն ազատ է ի ծնե), որքան անձի իրավունքին՝ գերծ մնալու իր ազատության նկատմամբ հանրային իշխանության միջամտությունից:

Վերը մեջբերված 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴԴ-827 որոշմամբ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ. «հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորի մոտ տարվելու և լսվելու իրավունքի իրացումն անմիջականորեն և անխզելիորեն կապված է անձին փաստացիորեն անազատության մեջ պահելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու փաստի հետ, այդ իրավունքի իրացման երաշխավորման պարտականությունը պետության համար ծագում է անձին ազատությունից

*փաստացիորեն զրկելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու պահից»:*

Այսպիսով, Սահմանադրական դատարանը անազատությունը (անձին ազատությունից զրկելը) բնութագրել է որպես անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելը: Անձնական ազատության իրավունքի սահմանման նպատակն է երաշխավորել, որ հանրային իշխանության միջամտության արդյունքում անձը կամայականորեն անազատության մեջ չհայտնվի: Սրանում են արտահայտվում հանրային իշխանության նեգատիվ պարտավորությունները անձի նկատմամբ. զերծ մնալ ոչ իրավաչափ, կամայական կերպով անձին անազատության մեջ պահելուց:

Նեգատիվ պարտավորություններին զուգահեռ քննարկվելիք հիմնական իրավունքի կապակցությամբ հանրային իշխանությունը կրում է նաև պոզիտիվ պարտավորություններ, այն է՝ պաշտպանել անձի ազատությունը երրորդ անձանց ոտնձգություններից: Անձի հիմնական իրավունքը կհամարվի խախտված հավասարապես թե՛ այն դեպքում, երբ հանրային իշխանությունը կամայականորեն անձին զրկի իր ազատությունից, թե՛ այն, երբ ձախողի պաշտպանել անձի ազատությունը երրորդ անձանց ոտնձգություններից (կանխել կամ վերացնել նման խախտումը):

Նույնանման դիրքորոշումներ է արտահայտել նաև ՄԻԵԴ-ը՝ նշելով, որ ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ պետության վրա դրվում է պոզիտիվ պարտավորություն՝ պաշտպանելու անձանց ազատությունը, իսկ հակառակ որևէ եզրակացություն ոչ միայն կհակասի դատարանի ձևավորած պրակտիկային, հատկապես ՄԻԵԿ-ի 2-րդ, 3-րդ, 8-րդ հոդվածների մասով, այլև զգալի բաց կթողնի ազատությունից զրկվելուց պաշտպանության հարցում, որը ժողովրդավարական հասարակությունում անձնական ազատության կարևորության հետ համադրելի չի լինի<sup>141</sup>: ՄԻԵԴ-ը գտել է նաև, որ պետության պատասխանատվությունը պետք է վրա հասնի բոլոր այդ դեպքերի համար, երբ այն ձախողվում է մեկ մասնավոր անձի կողմից մյուսին ազատությունից զրկելը կանխելու հարցում<sup>142</sup>: Միաժամանակ հարկ է շեշտել, որ պետության պոզիտիվ պարտավորությունների խախտման մասին կարող է խոսք լինել այն դեպքում, երբ տվյալ իրավիճակում պետությունը գիտեր կամ պարտավոր էր ողջամտորեն իմանալ խախտման փաստի մասին:

Ինչպես նշվեց, անձնական ազատության իրավունքի սահմանման նպատակն է բացառել անձին ազատությունից կամայական զրկելը: Այս նպատակին հասնելու համար բավարար չէ միայն սահմանել, որ յուրաքանչյուր ոք ունի ազատության իրավունք, այլ նաև անհրաժեշտ է նախատեսել իրավական երաշխիքներ, որոնք կնախատեսեն ազատությունից զրկելու դեպքերի նկատմամբ դատական վերահսկողություն և այդպիսի միջոց կիրառած մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետվողականությանը վերաբերող ընթացակարգեր:

141. *Storck v Germany*, (App. 61603/00), 16 June 2005, (2006) 43 EHRR 96, ECHR 2005-V, § 102.

142. *Rantsev v Cyprus and Russia*, (App. 25965/04), 7 January 2010, §§ 319-321.

Այս առումով հարկ է նշել, որ անձնական ազատության իրավունքը ունի ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային բաղադրիչներ: Նյութական դրույթների շարքին են դասվում, օրինակ, ազատությունից զրկումը միայն Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված դեպքերում: Ընթացակարգային դրույթների շարքին են դասվում Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-5-րդ մասի դրույթները. օրինակ՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, ինչի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է, անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը և այլն:

Անդրադառնալով Սահմանադրության 27-րդ հոդվածի բովանդակությանը՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի սեպտեմբերի 2-ի ՍԴՈ-1295 որոշմամբ նշել է, որ «Սահմանադրության 27-րդ հոդվածի նորմերի իրավական բովանդակությունից, մասնավորապես, անմիջականորեն բխում է.

- անձնական ազատությունից զրկելու իրավական չափանիշները սահմանվում են Սահմանադրությամբ,
- անձնական ազատությունից զրկելու կարգը սահմանվում է օրենքով,
- անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը,
- ազատությունից զրկելու իրավաչափության հարցը դատարանը որոշում է սեղմ ժամկետում»:

Հարկ է շեշտել, որ երբ ազատազրկումը համապատասխանում է Սահմանադրության 27-րդ հոդվածի նախատեսված դեպքերից որևէ մեկին, ապա նույն դրույթով պահանջվում է նաև, որ ազատությունից զրկելու ցանկացած դեպք լինի օրինական:

Առաջին հերթին ազատությունից զրկումը կարող է օրինական համարվել, եթե ազատությունից զրկելու հիմքը և դրա իրականացման ընթացակարգը օրենքով սահմանված են: Միաժամանակ նշվածն ինքնին բավարար չէ ազատությունից զրկումը օրինական դիտարկելու համար. համապատասխան օրենքը պետք է համապատասխանի նաև որոշակի որակական չափանիշների, որոնց բացակայության պայմաններում կհամարվի, որ ազատությունից զրկումը տեղի չի ունեցել օրենքի հիման վրա, անօրինական է և հետևաբար առկա է անձնական ազատության իրավունքի խախտում:

ՄիԵԴ-ի պրակտիկայի համաձայն՝ օրենքը պետք է լինի մատչելի, այսինքն՝ անձինք հասանելիություն ունենան օրենքին, պետք է լինի բավարար չափով հստակ, որպեսզի անձը, անհրաժեշտության դեպքում նաև պատշաճ խորհրդատվություն ստանալով, հնարավորություն ունենա ողջամտորեն կանխատեսելու իր վարքագծի հետևանքները<sup>143</sup>: Այս մասով Սահմանադրական դատարանը մասնավորապես 2006 թվականի ապ-

143. Steel and others v United Kingdom, (App. 24838/94), 23 September 1998, (1998) 28EHRR 603, ECHR 1998-VII, § 54.

րիլի 18-ի ՍԴՈ-630 իր որոշմամբ նշել է, որ «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Միաժամանակ, անդրադառնալով ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի համատեքստում «օրինականության» պահանջին, ՄԻԵԿ-ը նշել է, որ ազատությունից զրկումը կարող է օրինական համարվել, եթե պահպանվել են նյութական և ընթացակարգային ազգային նորմերը, ինչպես նաև այն, որ այս պահանջը ենթադրում է, որ ազատությունից որևէ զրկում պետք է համապատասխանի ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի նպատակին, այն է՝ պաշտպանել անձանց կամայականությունից: Դատարանը նշել է նաև, որ ազգային իրավունքը առաջնահերթ կերպով պետք է մեկնաբանվի և կիրառվի ներպետական մարմինների, մասնավորապես դատարանների կողմից, սակայն հաշվի առնելով, որ, ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ազգային իրավունքը չպահպանելը հանգեցնում է ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի խախտման, ՄԻԵԿ-ը կարող է և պետք է որոշակի իրավասություն իրականացնի ազգային օրենսդրության պահպանված լինելը ստուգելու հարցում<sup>144</sup>:

Այսպիսով, «օրինականությանը» առաջադրվելիք պայման է նաև այն, որ կիրառելի ազգային իրավունքը պարունակի որոշակի երաշխիքներ, որոնք պետք է բացառեն ազատությունից կամայական զրկումը:

ՄԻԵԿ-ի պրակտիկայի համաձայն՝ «կամայականություն»-ը՝ մեկ այլ առանցքային եզր անձնական ազատության իրավունքի ընկալման համար, նշանակում է, որ ազատությունից զրկումը պետք է համապատասխանի ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածում ամրագրված նպատակներին: Պետք է որոշակի պատճառահետևանքային կապ լինի ազատությունից զրկելու պայմանների և ազատությունից զրկելու ընտրված միջոցի միջև, ինչպես նաև ազատությունից զրկումը պետք է անհրաժեշտ լինի իրավաչափ նպատակին (սպառիչ սահմանված են Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասում և ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին մասում) հասնելու համար: Ազատությունից զրկումը պետք է դիտարկվի որպես կիրառելի վերջին միջոց, երբ առավել մեղմ միջոցներով հնարավոր չի լինի հասնել նախանշված իրավաչափ նպատակի իրացմանը:

Կարևոր հարաբերակցություն կա անձնական ազատության իրավունքի և Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված մեկ այլ հիմնական իրավունքի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի միջև, որի բացահայտումն օգտակար է անձնական ազատության իրավունքի էության բացահայտման համար: Այս երկու իրավունքների սահմանափակումները իրենց էությամբ և բնույթով նույնական են, քանզի վերաբերում են մարդու ֆիզիկական ազատությանը և ազատ տեղաշարժին, դրանց սահմանափակմանը: ՄԻԵԿ-ի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ այս երկու իրավունքների տարբերակման (թե որ իրավունքն է սահմանափակվել) հիմքում ընկած

144. Benham v. the United Kingdom (Application no. 19380/92) judgment of 10 June 1996, Reports 1996-III, §§ 40-41.

Են ոչ այնքան դրանց բնույթին վերաբերող առանձնահատկությունները, որքան տեղ գտած սահմանափակման ուժգնությունը: Տարանջատում կատարելիս պետք է ուշադրություն հրավիրել այնպիսի հանգամանքների վրա, ինչպիսիք են միջամտության ձևը, տևողությունը, դրա ունեցած ազդեցությունները, իրականացման եղանակը:

Անձնական ազատության իրավունքի սահմանափակումները շատ ավելի ուժգին կամ ինտենսիվ են, քան ազատ տեղաշարժի իրավունքինը (օրինակ՝ անձին խցում փակի տակ պահելն իր ուժգնությամբ այնպիսին է, որ ակնհայտաբար Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված անձնական ազատության իրավունքի սահմանափակում է), և այդ իսկ պատճառով առաջինին առնչվող արգելքներին (սահմանափակումներին առհասարակ) վերաբերող սահմանադրական և օրենսդրական դրույթներից պահանջվում է որոշակիության շատ ավելի բարձր աստիճան:

### **Հարցեր լսարանին**

1. Ինչպիսի՞ պարտավորություններ ունի պետությունը մարդու անձնական ազատության պաշտպանության հարցում:
2. Ո՞րն է անձնական ազատության իրավունքը սահմանադրական և միջազգային իրավական մակարդակում ամրագրելու անհրաժեշտությունը, ինչու՞ դրա մանրամասները, օրինակ՝ անձնական ազատության սահմանափակման հիմքն ու իրավաչափ նպատակների շրջանակի սահմանումը չէր կարելի վերապահել օրենսդրին:
3. Արդյո՞ք մասնավոր անձանց կողմից մարդու անձնական ազատության նկատմամբ ոտնձգությունների դեպքում պետությունն ունի անձնական ազատության սահմանադրական իրավունքի շրջանակներում պարտականություններ, և, եթե այո, ապա ինչպիսին և որոնք են դրանք, եթե ոչ, ապա ի՞նչ հիմնավորմամբ:

## **5.4. Հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունք**

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առաջին հոդվածն ամրագրում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով:

Անձի արժանապատվության, հավասար հարգանքի և ինքնավարության, հասարակությունում բարիքների հավասար ու արդարացի բաշխման կարևորությունը որևէ մեկի մոտ կասկած չի հարուցում: Այս արժեքները արտացոլված են նաև կրոնական, փիլիսոփայական, քաղաքական և գիտական այլ ուսմունքներում: Այնուամենայնիվ, դրանք նաև ենթարկվում են տարաբնույթ մեկնաբանությունների, որոնցից շատերը հաճախ հակասում են հավասարության հիմունքներին: Իսկ անհավասարությունների ու խտրականության պայմաններում խորանում է այնպիսի մարտահրավերների բացասական ազդեցությունը, ինչպիսիք են կլիմայական փոփոխության հետևանքները, համավարակները, բնական աղետներն ու պատերազմները:

Ժամանակակից աշխարհի զարգացման արագությունը, տեխնոլոգիաների, առցանց տիրույթի, արհեստական բանականության կիրառման ծավալների աճը թեև ձևավորում են իրավունքի իրացման նոր հնարավորություններ և ուղիներ, սակայն մյուս կողմից առաջացնում են կանխակալությունների ամրապնդման հարթակներ ու խտրականության և անհավասարությունների նոր երանգներ ու վտանգներ: Անհավասարությունները և խտրական մոտեցումները բացասաբար են ազդում անձի առողջության և կրթության, ինքնագնահատականի և կյանքի տարբեր ոլորտներում ինքնաիրացման, հասարակությունում առկա բարիքներից համաչափ ու արդարացի կերպով օգտվելու հնարավորությունների վրա:

Ներկայումս հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունքը առավել լայն տարածում և ամրագրում է ստանում ինչպես առանձին պետությունների, այնպես էլ միջազգային իրավունքի դրույթներով: Այս իրավունքն իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ Սահմանադրությամբ: Այնուամենայնիվ, բազմաթիվ մարդիկ ու խմբեր շարունակում են հանդիպել խոչընդոտների դրա լիարժեք իրացման, ինչպես նաև արդյունավետ պաշտպանության հարցում:

## **Նախապաշարմունք, կարծրատիպ, խտրականություն**


Մարդն իր բնույթով ձգտում է հասնել հավասարության և արդարության ապահովման, սակայն յուրաքանչյուրս հաճախ անգիտակցաբար դասակարգում է անձանց իրենց ազգության, տարիքի, սեռի և բազմաթիվ այլ հատկանիշների հիմքով: Այդ դասակարգումները զուգահեռաբար ակտիվացնում են այդ խմբերի վերաբերյալ կանխակալությունները (նախապաշարմունքներն ու կարծրատիպերը):

Կանխակալությունների (bias) զարգացմանը նպաստում է վտանգի և վախի, երկիմաստության և անորոշության միջավայրը: Անորոշությունները ստիպում են անձանց ապավինել կանխակալության վրա հիմնված հավատմունքներին, որոնք էլ նրանց համար դառնում են որոշակիության աղբյուր: Այս հանգամանքը հաճախ օգտագործվում է առանձին խմբերի կողմից իրենց օրակարգերի իրացման նպատակով: Այսպես, օրինակ, աջական ավտորիտարիզմը դիտարկում և ներկայացնում է աշխարհը որպես վտանգա-

վոր մի միջավայր՝ պահանջելով ներխմբային միավորում «ավանդական արժեքների» շուրջ այդ վտանգներին դիմակայելու նպատակով: Այդ նպատակով այն «վտանգավոր» է որակում և թշնամական վերաբերմունք է ձևավորում այն բաղադրիչների հանդեպ, որոնց նկատմամբ առկա են կարծրատիպեր, և որոնք կարող են հակասել ընդունված սոցիալական, այսպես կոչված, «նորմալ»-ուրություններին, օրինակ՝ ֆեմինիզմի կամ ԼԳԲՏՆԱՍԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ հանդեպ:

Մինևույն ժամանակ մարդիկ հակված են պահպանելու, լեգիտիմացնելու և արդարացնելու հասարակականությունում առկա status quo-ն կամ ընդունված «նորմալ»-ը: Արտոնություններ ունեցող խմբերին դա անհրաժեշտ է, քանի որ այն, որպես կանոն, կյանքական շահի աղբյուր է: Իսկ անբարենպաստ վիճակում գտնվող խմբերը հակված են դա անել, որպեսզի արդարացնեն իրենց կարգավիճակը՝ մտածելով, որ անզոր են այն փոխել: Գոյություն ունեցող ճնշումներն էլ կարող են ստիպել անբարենպաստ վիճակում գտնվող խմբերին դիտարկել այդ կարգավիճակը իբրև ներխմբային, այլ ոչ արտաքին բնույթի խնդիր:

Սոցիալական հոգեբանությունը նախապաշարմունքը (prejudice) սահմանում է որպես կանխակալ վերաբերմունք, որը արտահայտում է խմբի հանդեպ գնահատական, կարծրատիպերը (stereotype)՝ որպես հատուկ հատկանիշների ու ասոցիացիաների վերագրում խմբին և դրա անդամներին, իսկ խտրականությունը (discrimination)՝ կանխակալ վարքագիծ և վերաբերմունք խմբի և խմբի անդամների նկատմամբ: (Տե՛ս Գծապատկեր 1)



**Գծապատկեր 1**

## Ակնհայտ և թաքնված կանխակալություն

Խտրականությունը դրսևորվում է որևէ խմբի կամ խմբի անդամների հանդեպ վերաբերմունքի կամ արտաքին ազդեցության այլ միջոցով: Կանխակալությունները, այսինքն՝ նախապաշարմունքներն ու կարծրատիպերը, ներհոգեբանական երևույթներն են: Դրանք առաջանում են անհատի մտքում, և դրանց գոյության մասին կարող են տեղյակ չլինել ոչ միայն այն անձինք ու խմբերը, որոնց մասին ձևավորվել են նախապաշարմունքներն ու կարծրատիպերը, այլ նաև ինքը՝ անձը, որը կրում է այդ նախապաշարմունքները կամ կարծրատիպերը: Ընդունված է համարել, որ ակնհայտ (explicit) և թաքնված (implicit) կանխակալություններ ունեն բոլորը:

Որպես կանոն, ակնհայտ նախապաշարմունքների և կարծրատիպերի մասին անձը տեղյակ է լինում և գիտակցում է դրանց առկայությունը, նույնիսկ եթե դրանք որպես այդպիսիք չի ընդունում: Թաքնված նախապաշարմունքների և կարծրատիպերի առկայությունը անձը չի գիտակցում: Այնինչ այդ թաքնված նախապաշարմունքները և կարծրատիպերը կարող են ինքնաբերաբերաբար ու ակամա կերպով «գործարկվել» կանխակալ վերաբերմունքի թիրախի ներկայության դեպքում և ազդել կանխակալությունը կրող անձի վարքի, նրա կողմից դրսևորվող վերաբերմունքի վրա: Այսինքն՝ անձը կարող է գործել կանխակալ կերպով՝ առանց գիտակցելու և հատուկ դիտավորության:

Թաքնված կանխակալությունների վերաբերյալ հետազոտությունները վկայում են առողջապահության<sup>145</sup>, իրավունքների<sup>146</sup>, աշխատավայրում<sup>147</sup>, սոցիալական և այլ ոլորտում որոշումների վրա թաքնված կանխակալությունների ազդեցության մասին:

## Նախապաշարմունք

Նախապաշարմունքը ինքնին բնական երևույթ է, որը ծառայում է կարևոր նպատակի. այն սուբյեկտիվ կերպով կազմակերպում է անձի միջավայրը, ուղղորդում է անձին, ունի այնպիսի ներհոգեբանական ֆունկցիաներ, ինչպիսին է ինքնազնահատականի բարձրացումը, սակայն նաև ունի անձի և մյուսների վրա բացասական ազդեցության բաղադրիչ:

Նախապաշարմունքը կարելի է նաև սահմանել որպես «հակակրանք՝ հիմնված սխալ և ոչ ճկուն ընդհանրացման վրա»: Այն կարելի է զգալ կամ արտահայտել, կարող է ուղղված լինել խմբին՝ որպես ամբողջություն, կամ անհատին, քանի որ նա այդ խմբի անդամ է: Որպես կանոն, նախապաշարմունքները արդյունքում արտահայտում են բացասա-

145. HRW Submission to the Office of the High Commissioner for Human Rights, 2022,

<https://www.hrw.org/news/2022/04/15/hrw-submission-office-high-commissioner-human-rights>

146. Polden D. J., Anderson J. M. Leadership to Address Implicit Bias in the Legal Profession, 2022,

<https://digitalcommons.law.scu.edu/cgi/viewcontent.cgi?article=2928&context=lawreview>

McLaughlin M. S., Gonzales C., Nasar O. Implicit Bias in Litigation, 2021, [https://law.pace.edu/sites/default/files/Alumni/CLE\\_Materials.pdf](https://law.pace.edu/sites/default/files/Alumni/CLE_Materials.pdf)

147. Breaking barriers: Unconscious gender bias in the workplace. International Labour Organization, 2017,

[https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed\\_dialogue/---act\\_emp/documents/publication/wcms\\_601276.pdf](https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_dialogue/---act_emp/documents/publication/wcms_601276.pdf)



կան հույզեր և վերաբերմունք: Սակայն միշտ չէ, որ այդ բացասական երանգը հեշտ է արձանագրել, հաճախ այն քողարկված է հովանավորչական (patronising), «դրական», «աջակցող» վերաբերմունքով:

Այսպես, կանանց հանդեպ նախապաշարմունքները ունեն միաժամանակ «թշնամական» և «բարյացական» կամ «բարեգործական» բաղադրիչ: Թշնամական սեքսիզմը «պատժում է» կանանց, որոնք «շեղվում» են ավանդական ստորադաս դերից, այնինչ «բարյացական» կամ «բարեգործական» սեքսիզմը ընդգծում է կանանց աջակցող, կարևոր դերը, սակայն կրկին հիմքում ունենալով կանանց ստորադաս դերը<sup>148</sup>: Նմանատիպ ֆեմոմեն կարելի է դիտարկել հաշմանդամություն ունեցող անձանց և մասնավորապես հոգեւոցիալական և (կամ) մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ մարդկության պատմության ընթացքում գերակշռել է բարեգործության և բժշկական մոդելի վրա հիմնված վերաբերմունքը, որն առաջին հայացքից կարող է «դրական» թվալ, քանի որ նպատակ ունի «օգնելու» և «բուժելու» հաշմանդամություն ունեցող անձանց: Սակայն արդյունքում դա հանգեցրել է հաշմանդամություն ունեցող անձանց ինքնավարության կորստին, բացառմանը, նրանց անքակտելի հատկանիշների ու կարիքների անտեսմանը, վատ վերաբերմունքի արդարացմանը և ի վերջո այնպիսի համակարգերի ու նորմերի ձևավորմանը, որոնք ինքնին խախտում են նրանց իրավունքները ու խոչընդոտում նրանց զորեղացումը<sup>149</sup>:

Նախապաշարմունքներ կարող են ունենալ ինչպես տվյալ հասարակությունում կամ համայնքում մեծամասնության կամ արտոնություններ ունեցող, այնպես էլ փոքրամասնության կամ այդ արտոնությունները չունեցող ու անբարենպաստ վիճակում գտնվող խմբերի ներկայացուցիչները: Փոքրամասնությունների կամ անբարենպաստ վիճակում գտնվող խմբերի անդամների նախապաշարմունքները հաճախ ռեակտիվ են և արձագանքում են մեծամասնության կողմից ակնկալվող խտրական վերաբերմունքին<sup>150</sup>: Համարվում է նաև, որ ռասայական նախապաշարմունքները ունեն ինքնապաշպանական հատկություն, քանի որ նպատակ ունեն պահպանելու խմբի ինքնությունը, ինչը, սակայն, անհեռատես ու խտրական մոտեցում է:

Այսպիսով, նախապաշարմունքը ձևավորում կամ պահպանում է խմբերի միջև հիերարխիկ հարաբերությունների կարգավիճակը, և այն կարող է սուբյեկտիվ կերպով գնահատվել դրական կամ բացասական, սակայն հետևանքները, որպես կանոն, բացասական են, քանի որ նպաստում են խտրական վերաբերմունքի ձևավորմանը:

148. Dovidio, John F., Hewstone M., Glick P, and M. Esses V. The SAGE Handbook of Prejudice, Stereotyping and Discrimination, 2010, <https://dx.doi.org/10.4135/9781446200919> էջ 6:

149. Լրացուցիչ տե՛ս «խոցելի վիճակում գտնվող խմբերի իրավունքներ. Հաշմանդամություն ունեցող անձինք» բաժնում:

150. Dovidio, John F., Hewstone M., Glick P, and M. Esses V. The SAGE Handbook of Prejudice, Stereotyping and Discrimination, 2010, <https://dx.doi.org/10.4135/9781446200919> էջ 6:

## Կարծրատիպ

Կարծրատիպերը սահմանվում են իբրև ճանաչողական (կոգնիտիվ) սխեմաներ, որոնք օգտագործվում են մարդկանց կողմից՝ ուրիշների մասին տեղեկատվությունը մշակելու համար:

Կարծրատիպերը պարունակում են մարդկանց մասին տեղեկատվության զգալի ծավալ և առաջացնում են ակնկալիքներ խմբի անդամներից սպասվող վարքագծի վերաբերյալ, ինչպես նաև ազդում են կարծրատիպը կրող անձի հուզական արձագանքի վրա: Ընդհանուր առմամբ կարծրատիպերը ստիպում են կարծրատիպը կրող անձին ընդունելի համարել միայն այն վարքագիծը կամ բնութագրերը, որոնք համահունչ են դրան:

Մի կողմից կարծրատիպերը խթանում են խտրականությունը՝ համակարգված կերպով ազդելով անձանց ընկալումների, մեկնաբանությունների և դատողությունների վրա, մյուս կողմից դրանք առաջանում են և ամրապնդվում են խտրականության միջոցով՝ այդպիսով հիմնավորելով ու ամրապնդելով խմբերի միջև առկա տարբերությունները:

Ավելին, հաճախ այն խումբը և խմբի անդամները, որոնց վերաբերյալ ձևավորված են այս կամ այն կարծրատիպերը, ունեն սոցիալական հակվածություն՝ ընդունելի համարելու «համակարգը արդարացնող» այդ կարծրատիպերը, ինչը «ռացիոնալ» ու «հիմնավոր» է դարձնում այդ խմբի սոցիալական դիրքը: Կարծրատիպային ակնկալիքները հաճախ ազդում են, թե ինչպես են այն անձինք կամ խմբերը, որոնց վերաբերյալ ձևավորված են կարծրատիպերը (կարծրատիպերի թիրախը), գործում, դրդելով նրանց, նույնիսկ առանց լիարժեք գիտակցելու դա, հարմարվել կարծրատիպով ձևավորված ակնկալիքին: Կարծրատիպերի թիրախի ինքնադրսևորման, վարքի վրա կարող է ազդել այն հանգամանքը, որ նա տեղյակ է իր վերաբերյալ առկա կարծրատիպերի մասին նույնիսկ այն պարագայում, երբ իր համար ընդունելի չէ այդ կարծրատիպը, և նույնիսկ այն դեպքում, երբ կարծրատիպեր կրող անձը ներկա չէ: Այս ֆենոմենը կոչվում է կարծրատիպի սպառնալիք (stereotype threat):

Կարծրատիպերի արդյունքում թիրախի մոտ ձևավորվող փորձառության մեկ այլ ֆենոմեն է տոկենիզմը (tokenism): Երբ անձինք տոկեն են, այսինքն՝ որևէ սոցիալական միջավայրում իրենց խմբի շատ սահմանափակ թվով ներկայացուցիչներից մեկն են, կամ, առավել ևս, միակ ներկայացուցիչն են, նրանք առավել խոցելի են կարծրատիպային վերաբերմունքի ենթարկվելու տեսանկյունից: Տոկենները կամ այդ միակ ներկայացուցիչները զգում են ինքնագիտակցության, ինքնակառավարման և ինքնագրաքննության առավել ծանր բեռ, ինչը կարող է նվազեցնել արդյունավետ գործելու և մտածելու նրանց ունակությունները:

Այսպիսով, կարծրատիպերը ազդում են, թե ինչպես են մարդիկ ընկալում, մշակում խմբի և դրա անդամների մասին որևէ տեղեկություն և թե ինչպես են վերաբերվում այդ խմբին: Դրանք փոխանցվում են սոցիալիզացման, մամուլի, լեզվի և առկա դիսկուրսների միջոցով:

## Խտրականություն

Խտրականությունը սահմանվում է որպես կանխակալ վարքագիծ, որը ներառում է ոչ միայն գործողություններ, որոնք ուղղակի վնասում են այլ անձանց կամ այլ խմբի, այլև այն գործողությունները, որոնք անարդարացիորեն բարենպաստ իրավիճակ են ձևավորում սեփական խմբի համար՝ հարաբերական անբարենպաստ իրավիճակ ձևավորելով այլ խմբերի համար<sup>151</sup>:

## Կառուցակարգային խտրականություն

Կառուցակարգային խտրականությունը, որն ի սկզբանե կարող է բխել անհատների նախապաշարմունքներից և կարծրատիպերից, ենթադրում է կառուցակարգային քաղաքականության առկայություն (օրինակ՝ հարկային օրենսդրություն, ներգաղթի հիմնահարցերի քաղաքականություն), որն անարդարացի կերպով սահմանափակում է մարդկանց որոշակի խմբերի հնարավորությունները:

Այս օրենքներն ու քաղաքականությունները խրախուսում են այն գաղափարախոսությունը, որը արդարացնում է գործող կանխակալ գործելակերպերը:

Անհատական կանխակալությունները կարող են ձևավորել վարքագիծ, որն աջակցում է կառուցակարգային խտրականությանը, սակայն կառուցակարգային խտրականությունը կարող է գործել՝ նաև անկախ անհատական կանխակալություններից: Հաճախ հասարակության անդամները չեն նկատում կառուցակարգային խտրականությունը, քանի որ, որպես կանոն, այն սերտաճած է լինում օրենքներին, և հասարակության մեջ արդեն իսկ ձևավորված են լինում այնպիսի խտրական հարաբերություններ, որոնք ընդունված է համարել «նորմալ»: Իսկ մամուլը և հանրային դիսկուրսը հաճախ վերահաստատում են կառուցակարգային խտրականությունը կամ շեղում այդ երևույթի մասին քննարկումներից:

Կառուցակարգային խտրականության հետևանքները կարող են ազդեցություն ունենալ տնտեսական, քաղաքական, աշխատանքային, տեղեկատվական, կրթական, առողջապահական, քրեական արդարադատության, հոգեկան և ֆիզիկական առողջության և այլ ոլորտներում:

151. Խտրականության իրավական կարգավորումների մասին քննարկումները տես՝ «Հավասարության իրավունքի շրջանակը» բաժնում:

## Մշակութային խտրականություն

Ի տարբերություն կառուցակարգային խտրականության, որը սերտաճած է ֆորմալ քաղաքականությունների և օրենքների հետ, մշակութային խտրականությունը ներկառուցված է որևէ համայնքի մշակույթի, պատմության, ընդունված վարվելակերպերի մեջ:

Մշակութային խտրականությունը ի հայտ է գալիս, երբ անձանց մի խումբ փորձում է ինքնուրույն ձևավորել ամբողջ հասարակության արժեքները և դրանք պարտադրել հասարակության փոքրամասնություն կազմող խմբերին: Արդյունքում ձևավորվում է մի խմբի մշակութային ժառանգության գերակայություն այլ խմբերի մշակութային ժառանգության նկատմամբ:

## Կանխակալությունների վերահսկումը

Այսպիսով, կանխակալությունների յուրաքանչյուր խումբ կարող է դրսևորվել անհատական, կառուցակարգային և մշակութային հարթակներում: Դրանք հաճախ վերահաստատվում են ընդունված գործելակերպի, ֆորմալ օրենքների միջոցով և արդարացվում գաղափարախոսությունների միջոցով: Ու թեև կանխակալությունների առաջացմանը դիմադրելը բարդ է, այնուամենայնիվ, մարդիկ կարող են կառավարել իրենց կանխակալությունները: Դրանք կառավարելու համար մասնագետները նշում են իրազեկվածության, մոտիվացիայի կարևորությունը, այլոց իրավիճակների հանդեպ ըմբռնող մոտեցումը, խմբերի միջև վստահության ձևավորումը:

Քանի որ անորոշությունն ու ընդհանրացումներն են ձևավորում կանխակալությունների համար նպաստավոր միջավայր, չափազանց կարևոր է, որ անձինք հնարավորինս բազմակողմանի կերպով տեղեկանան այլ անձանց, խմբերի իրավիճակների մասին: Ինչպես նաև կարևոր է տեղեկությունը հայցել հենց կանխակալությունների թիրախ խմբերին պատկանող անձանցից:

## Հավասարության տեսություն

«Հավասարությունը լայնորեն ընդունելի, բայց առեղծվածային քաղաքական իդեալ է», - նշում է Ռ. Դվորկինը՝ լիբերալ հավասարության տեսության զարգացողներից մեկը: Մի կողմից մարդիկ կարող են դառնալ հավասար (կամ գոնե ավելի հավասար) մի խմբին, սակայն դրա հետևանքը կարող է լինել նրանց՝ ավելի անհավասար դառնալը (կամ ավելի անհավասար) մյուսների համեմատ:

Չարգացնելով Դվորկինի միտքը Դոնըլլին նշում է, որ հավասարության այս ըմբռնումը «բնական կերպով» հանգում է ինքնավարության քաղաքական շեշտադրմանը: Անձնա-

կան ազատությունը, հատկապես սեփական կյանքն ընտրելու և դրան հետամուտ լինելու ազատությունը ակնհայտորեն բխում է հավասար հարգանքի գաղափարից: Իսկ անհատական ինքնավարության ժխտումը կամ սահմանափակման արդարացումը գրեթե պարտադիր կերպով ներառում է անհավասարության բաղադրիչ: Հավասար և ինքնավար կերպով իրավունքներ կրող անհատներն իրավունք ունեն հիմնարար ընտրություն կատարելու այն մասին, թե որն է լավ կյանքը իրենց համար, և թե ում հետ են իրենք միավորվում, և ինչպես: Միևնույն ժամանակ նրանք իրավունք չունեն միմյանց պարտադրելու իրենց գաղափարներն այն մասին, թե ինչն է ճիշտ և պատշաճ, քանի որ դա անելը կնշանակի վերաբերվել մյուսներին որպես անհավասարների:

Ներկայումս առանձնացնում են հավասարության երկու հիմնական մոտեցում ֆորմալ (formal) հավասարություն և առարկայական (substantive) հավասարություն: Առարկայական հավասարության մոտեցման երկու հիմնական սկզբունքներն են հավասար արդյունքների և հավասարար հնարավորությունների սկզբունքները:

### **Ֆորմալ հավասարության մոտեցումը**

Ընդունված է համարել, որ ֆորմալ հավասարության հիմքում Արիստոտելի բանաձևն է՝ «հավասարներին՝ հավասար, անհավասարներին՝ անհավասար» վերաբերմունք<sup>152</sup>: Այս բանաձևի վրա են հիմնված նաև հավասարության մասին մեր ընդունված հիմնարար պատկերացումները:

Ըստ Արիստոտելի՝ այս բանաձևը կապահովի արդար մոտեցումներ: Իր քննադատների կարծիքով՝ այն բավարար չէ արդարություն ապահովելու համար<sup>153</sup>:

Այս մոտեցումը առաջացնում է առնվազն չորս խումբ հարցեր<sup>154</sup>: Հարցերից առաջինն այն է, թե երբ են երկու անձ համարվում նման, համանման, հավասար: Օրինակ, արդյո՞ք կինն ու տղամարդը հավասար են, և նրանց հանդեպ միշտ պետք է հավասար վերաբերմունք ցուցաբերվի: Միշտ չէ, որ տարբերակված մոտեցումը խտրական է: Օրինակ՝ բարձր և ցածր եկամուտ ունեցող անձանց տարբերակումը հարկման քաղաքականության շրջանակում կամ ընտանիք ունեցող և ընտանիք չունեցող անձնաց տարբերակումը բնակարանային ապահովության հարցը լուծելիս: Կանայք դարեր ի վեր տարբերակվել են տղամարդկանցից, սակայն խտրական կերպով: Ուստի ի՞նչ բանաձևի կիրառմամբ պետք է գնահատել, թե որ տեսակի տարբերակումը պետք է համարվի ոչ իրավաչափ: Այժմ հավասարության իրավունքի կարևորագույն ձեռքբերումն այն է, որ իրավունքի մակարդակում տարբերակված որևէ մոտեցում (մի շարք հիմքերով պայմանավորված, ինչպիսիք են սեռը, ազգությունը, ռասան), որը հանգեցնում է անձի իրավունքների սահմանափակումների, ինքնին հիմնավոր չի կարող համարվել:

152. Nicholas Mark Smith. Basic Equality and Discrimination. Reconciling Theory and Law, 2011, ISBN 9781138277243, էջ 114:

153. "Nine. The Formal Principle of Equality" In Speaking of Equality: An Analysis of the Rhetorical Force of "Equality in Moral and Legal Discourse. 2014. էջ 186, <https://doi.org/10.1515/9781400861484.185>

154. Discrimination Law. [Clarendon Law Series](#). Sandra Fredman, 2011.

Երկրորդ խնդիրն այն է, որ հավասարությունը այս պարագայում պահանջում է, որ համանման մարդկանց հանդեպ դրսևորվի համանման հավասար մոտեցում: Հարց է առաջանում, թե արդյոք հավասար մոտեցում կհամարվի նաև հավասար մարդկանց հանդեպ հավասարապես վատ, իրավունքները սահմանափակող մոտեցման ցուցաբերումը:

Ասպես, Բրիտանական դատարանի կողմից լաված դեպքերից<sup>155</sup> մեկի շրջանակներում, որտեղ կին աշխատակիցը գանգատվել էր, որ իր հանդեպ խտրական է եղել այն իրավիճակը, երբ իր աշխատանքը կատարելիս ստիպված է եղել դիտել մերկ կամ կիսամերկ կանանց լուսանկարներ, դատարանը հանգել է եզրակացության, որ տղամարդ աշխատակիցները, որոնք կատարել են միևնույն աշխատանքը, ևս կարող են համարել այդ աշխատանքը նույնչափ անհաճո, որքան և ինքը, ուստի և խտրականության դեպք չի արձանագրվել: Այսինքն՝ դատարանն արձանագրել է, որ հավասար անբարենպաստ վերաբերմունքը չի հանգել խտրականության:

Մեկ այլ դեպքում ԱՄՆ բարձրագույն դատարանը, հակափաստարկելով բանտային դեկավարությանը, որ բոլոր ռասաները հավասարապես սեգրեգացված են բանտային պայմաններում, ուստի իրավիճակը խտրական չի կարող համարվել, արձանագրել է, որ. «Աքսիոմատիկ է, որ ռասայական դասակարգումը չի դառնում իրավաչափ՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ բոլոր անձինք հավասարապես են տուժում այդ իրավիճակից»<sup>156</sup>:

Երրորդ խնդիրն այն է, որ ֆորմալ հավասարությունը պահանջում է, որ պարտադիր լինի համեմատական՝ ու՞մ հետ հավասար: Այս պարագայում անհավասար միջամտությունը կարող է հիմնավորվել միայն այն պարագայում, երբ առկա է միևնույն իրավիճակում գտնվող անձ, որի հանդեպ եղել է առավել բարենպաստ վերաբերմունք: Այս մոտեցման հետևանքով է, որ ձևավորվում է ենթադրություն «ունիվերսալ անհատի» կերպարի վերաբերյալ, և «ունիվերսալ» նորմերի հետ համակերպվելու պարտադրանք: Հասարակությունում տվյալ ժամանակահատվածում առկա գերակշռող մոտեցումը ստանում է «նորմալ» որակումը: Այս խնդիրը խորապես ուսումնասիրվել է ֆեմինիստական տեսությունների շրջանակներում: Ֆեմինիստական գրականության մեջ այն կոչվում է «տղամարդկային նորմալ», որտեղ «Հավասար ու՞մ» հարցը անխուսափելիորեն հանգեցնում է «Հավասար տղամարդուն» պատասխանին՝ ստեղծելով մի իրավիճակ, երբ արդյունքում «տղամարդը դարձել է ամեն ինչի չափանիշը: Միանման չափանիշների անվան ներքո կանայք չափվում են ըստ այն բանի, թե որքանով են նրանք համապատասխանում տղամարդու չափանիշներին: ...Այսպիսով, գենդերային չեզոքությունը պարզապես տղամարդկանց չափանիշ է»<sup>157</sup>:

Խնդիրն առավել տեսանելի է Կանադական դատական գործերից մեկի շրջանակներում, երբ կին հրշեջ ծառայողը տապալել է քննությունը, որի պահանջների հիմքում եղել են տղամարդու միջին հատկանիշները: Բացի նրանից, որ Կանադական դատա-

155. Stewart v Cleveland Guest (Engineering) Ltd [1996] ICR 535, [https://www.bailii.org/uk/cases/UKCAT/1994/683\\_93\\_0405.html](https://www.bailii.org/uk/cases/UKCAT/1994/683_93_0405.html),

Discrimination Law, *Clarendon Law Series*, Sandra Fredman, 2011,

156. Powers v Ohio 499 US 400, 410 (1991), <https://caselaw.findlaw.com/us-supreme-court/499/400.html>,

Discrimination Law, *Clarendon Law Series*, Sandra Fredman, 2011.

157. MacKinnon C., *Feminism Unmodified*, 1987, ISBN 9780674298743, էջ 34:

րանը չէր ճանաչել գնահատման «կանաչի» չափորոշիչների անհրաժեշտությունը, այն նաև ամրագրել էր, որ տարբեր չափորոշիչներ սահմանելու դեպքում կարող է առաջանալ տղամարդկանց հանդեպ խտրականության խնդիր: Բարեբախտաբար, Կանադայի Բարձրագույն դատարանը չեղարկել է այս որոշումը՝ արձանագրելով տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը, սակայն ոչ ի վնաս կատարվող աշխատանքից ակնկալվող որակի:

Նման խնդիր նաև կարելի է դիտարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննած գործով, որով մահմեդական կրոն դավանող ուսուցիչը ստիպված է եղել դադարեցնել ուսուցչական պրակտիկան այն բանից հետո, երբ իր գործատուն՝ դպրոցի տնօրինությունը, պնդել է, որ իր այցելությունը մոտակա մզկիթ ուրբաթ օրվա աղոթքի համար անհամատեղելի է իր ամբողջ դրույք աշխատանքային պայմանագրի դրույթների հետ: Հարմարեցումներ կատարելու անհրաժեշտությունն արձանագրելու փոխարեն եվրոպական հանձնաժողովը արձանագրել է, որ դիմումատուն չի կարողացել հիմնավորել որևէ մեկի համեմատ «նվազ բարենպաստ վերաբերմունքը»<sup>158</sup>:

Այս խնդիրը նաև փակուղի է մտցնում այն իրավիճակների լուծումը, երբ օբյեկտիվորեն բարդ է գտնել համեմատականը, օրինակ՝ հղի կանանց դեպքում, կամ այն պարագայում, երբ որոշակի աշխատանքային պաշտոնները որպես կանոն զբաղեցնում են կանայք, օրինակ՝ ուսուցիչներ, ինսամողներ, բուժքույրեր<sup>159</sup>:

Եվ վերջապես, չորրորդ խնդիրն այն է, որ այս մոտեցումը միայն տարբերությունների վերացման մասին է: Այս մոտեցումը պահանջում է, որ հավասար վերաբերմունք կիրառվի համանմանների ու հավասարների նկատմամբ, սակայն այն չի պահանջում, որ անձանց հանդեպ ձևավորվի վերաբերմունք՝ հիմնված իրենց տարբերությունների ու առանձնահատկությունների վրա: Այսպես, օրինակ, եթե կինը կատարում է աշխատանք, որը նվազ արժեք է ներկայացնում, քան համեմատվող տղամարդը, այս սկզբունքից ելնելով՝ ընդունելի կլինի նրան վճարել առավել քիչ: Սկզբունքը չի նախատեսում, որ նրան վարձատրեն՝ ապահովելով համաչափություն իր կողմից կատարվող աշխատանքի և համեմատելի աշխատանքի տարբերության միջև:

Այսպիսով, ֆորմալ հավասարության մոտեցման հիմնական նպատակը միանման մոտեցման և տարբերությունների վերացումն է: Այնինչ նպատակը պետք է լինի ոչ թե տարբերությունը վերացնելը, այլ նման տարբերության հետ փոխկապակցված վնասը չեզոքացնելը՝ հարմարեցնելով առկա նորմերը այդ տարբերություններին:

Թեև այս սկզբունքը հիմնարար է հավասարության ապահովման հարցում, այնուամենայնիվ, այն բավարար չէ լիարժեք և իրական հավասարության ու արդարության ապահովման համար: Բովանդակային հավասարության երկու մոտեցումները՝ հավասար արդյունքների և հավասար հնարավորությունների սկզբունքները, լրացնում են ֆորմալ հավասարության մոտեցումը:

158. X. v. The United Kingdom 8160/78, [https://www.stradalex.eu/en/se\\_src\\_publ\\_jur\\_eur\\_cedh/document/echr\\_8160-78](https://www.stradalex.eu/en/se_src_publ_jur_eur_cedh/document/echr_8160-78),

Sandra Fredman. Discrimination Law. 2011. ISBN: 9780198859277

159. Համեմատականի մասին լրացուցիչ տե՛ս [«խտրականության տեսակները. Ուղղակի խտրականություն»](#) բաժնում:

## Հավասար արդյունքների սկզբունքը

Հավասար արդյունքների սկզբունքի տեսնակյունից հավասարության իրավունքը ոչ միայն պահանջում է, որ անձանց հանդեպ լինի հավասար վերաբերմունք, այլև նաև, որ նրանք հնարավորություն ունենան հասնելու հավասար արդյունքների:

Այս մոտեցման կարևորությունն այն է, որ այն արձանագրում է, որ հավասար վերաբերմունքը միևնույնն է կարող է հանգեցնել անհավասարության: Օրինակ՝ մի միջավայրում, որտեղ որոշակի ազգության ներկայացուցիչներ զրկված են եղել կրթության իրավունքից, ընտրություններին մասնակցության համար բոլորի նկատմամբ կիրառվող գրագիտության պահանջը կհանգեցնի նրանց բացառմանը:

Արդյունքների հավասարության մոտեցման նպատակն է ապահովել բարիքների առավել արդար բաշխում, այնինչ ֆորմալ հավասարությունը բավարարվում է միայն ընթացակարգային արդարության ապահովմամբ:

Արդյունքների հավասարության մոտեցումը ևս ունի որոշ երկիմաստություններ, որոնք կարող են խնդրահարույց լինել առարկայական հավասարության և բազմազանության խթանման ապահովման տեսանկյունից: Ուստի արդյունքների հավասարության չափորոշիչը չի կարող կիրառվել՝ առանց հաշվի առնելու հնարավորությունների հավասարության պահանջները:

Արդյունքների վրա կենտրոնանալն ինքնին կարող է ապակողմնորոշիչ լինել, քանի որ արդյունքները ինքնին չեն նշանակում, որ վերացել են այն կառուցակարգերը, որոնք նպաստում են խտրականությանը: Այս խնդիրը ակնհայտ երևաց, երբ առավել խորը ուսումնասիրվեց կառավարող պաշտոններում կանանց թվի կտրուկ աճի ֆենոմենը: Եվ այդ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ նոր կառավարող պաշտոնները, որոնք զբաղեցրել են կանայք, համեմատաբար առավել ցածր են վարձատրվում: Այսինքն՝ քանակական փոփոխությունը չի հանգեցրել որակական փոփոխության:

Մյուս կողմից, որոշ դեպքերում ցանկալի արդյունքներ ապահովելու դեպքում առաջանում է հարց, թե արդյոք արդյունքը ապահովվել է խտրականության ենթարկվող խմբի՝ առկա կառուցակարգերին հարմարվելու կամ ասիմիլացվելու արդյունքում, թե, հակառակը, կառուցակարգերը դարձել են մատչելի այդ խմբերի համար: Առկա է վտանգ, որ միայն հավասար արդյունքների վրա կենտրոնանալու դեպքում առավել քիչ ուշադրության կարժանանա իշխանության կարևոր պարտականությունը՝ հարգել անձանց ինքնությունն ու մարդկային բազմազանությունը առկա կառուցակարգերը նրանց կարիքներին հարմարեցնելու միջոցով, այլ ոչ անձանց՝ առկա կառուցակարգերին հարմարվելու միջոցով:

Խտրականությունը վնասում է ոչ միայն բարիքների հավասար բաշխմանը, այլև նաև անձի ինքնության պահպանմանը և անձի ինքնագնահատականին, և բազմաթիվ պաշտպանված հատկանիշների դեպքում ինքնության և ինքնագնահատականի պահպանու-



մն ունեն է՛լ առավել մեծ նշանակություն, քան բարիքների բաշխումը: Ուստի, չնայած արդյունքների հավասարության ապահովման կարևորությանը, անհրաժեշտ է զգոն լինել, որ այդ արդյունքները լինեն իրական մատչելիության ապահովման և խտրական կառուցակարգերի փոփոխության հետևանք, այլ ոչ՝ խտրականության ենթարկվող անձանց ինքնության կորստի և հարմարեցման<sup>160</sup>:

## Հավասար հնարավորությունների սկզբունքը

Հավասար հնարավորությունների սկզբունքը լրացնում է ֆորմալ հավասարության մոտեցումը և պահանջում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գոյություն ունեցած և ունեցող խտրական կառուցակարգերը շտկելու ուղղությամբ, քանի որ դա չանելու դեպքում մարդիկ և մարդկանց խմբերը կմնան նույն անբարենպաստ սկզբնակետերում: Այս սկզբունքի կիրառման նպատակն է հավասարեցնել ելակետը և հարմարեցնել հնարավորությունները բոլորի համար՝ անկախ անձի ծագումից և կարգավիճակից<sup>161</sup>:

Հավասար հնարավորությունների մոտեցման ընթացակարգային և առարկայական ընկալումները պահանջում են վերացնել փոքրամասնությունների առջև ծագող լրացուցիչ խոչընդոտները և դրական միջոցներ ձեռնարկել, որպեսզի անձինք և խմբերը իրապես ունենան հավասար հնարավորություն՝ բավարարելու որոշակի սոցիալական բարիքի հասնելու պայմանները: Օրինակ՝ աշխատանքի ընդունվելու համար աշխատանքային անընդհատ փորձի ամկայությունը կարող է անբարենպաստ իրավիճակում դնել այն կանանց, որոնք ստիպված են եղել դադարել աշխատել՝ ելնելով ծննդաբերության և երեխային խնամելու անհրաժեշտությունից<sup>162</sup>: Միայն ընթացակարգային հարմարեցումների և փորձի վերաբերյալ պահանջների փոփոխությունը համատեղ կարող են նպաստել այդ կանանց աշխատանքային իրավունքի լիարժեք ապահովմանը:

Ըստ հավասար հնարավորությունների մոտեցման՝ իշխանությունները պարտավոր են անել ավելին, քան զուտ ապահովել խտրական մոտեցումների բացառումն աշխատանքային, կրթական և այլ ոլորտներում: Նրանք կրում են նաև նաև պոզիտիվ պարտավորություն՝ նպաստելու հնարավորությունների հավասարությանը և հասարակությունում տարբեր խմբերի միջև հավասարության ձևավորմանը՝ պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:

Հնարավորությունների հավասարության մոտեցման հիմքով է սահմանվում կրթության, աշխատանքի, առողջապահության և կյանքի այլ ոլորտներում հատուկ աջակցության, խելամիտ հարմարեցումների տրամադրման պահանջը, կառուցողական գործողությունների իրականացումը չներառված և խտրականության ենթարկվելու վտանգի

160. Այս մոտեցումը հետագայում արձանագրել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Տե՛ս «Հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունք, խտրականության պաշտպանված հիմք կամ հատկանիշ» վերնագրի ներքո

161. The Ideas of Equality and Non-Discrimination: Formal and Substantive Equality,

<https://www.equalrightstrust.org/content/ideas-equality-and-non-discrimination-formal-and-substantive-equality>

162. Sandra Fredman. Discrimination Law. 2011, ISBN: 9780198859277, էջ 18:

տակ գտնվող անձանց և խմբերի համար՝ հավասար որակյալ և մատչելի ծառայություններ ապահովելու նպատակով:

### **Ինտերսեկցիոնալությունը (փոխհատվողականությունը)**

Հավասարության սկզբունքի կարևոր հարթություններից է ինտերսեկցիոնալությունը կամ փոխհատվողականությունը: Ինտերսեկցիոնալությունը պարզ հասկացություն է, ըստ որի՝ անձի ինքնությունը չի կարող դիտարկվել միայն միմյանց բացառող փորձառությունների և հատկանիշների միջոցով, այլ, հակառակը, անձի ինքնությունը տարբեր բաղադրիչների բարդ միաձուլման արդյունք է: *Ինտերսեկցիոնալություն* եզրը ձևակերպած Քիմբրլի Քրինշուն իր ուսումնասիրության կենտրոնում ունեցել է սևամաշկ կանանց փորձառությունը: Նա նշել է, որ ռասայական խտրականության դեմ պայքարի շարժումները բացառող են եղել սևամաշկ կանանց հանդեպ, քանի որ դրանք կենտրոնացել են սևամաշկ տղամարդկանց փորձառության վրա, մինևույն ժամանակ ֆեմինիստական շարժումները բացառող են եղել նրանց համար, քանզի կենտրոնացել են սպիտակամաշկ կանանց փորձառության վրա: Արդյունքում անխտրականության մոտեցումները, որոնք կիրառել են «մեկ առանցքի մոդելը», արդյունավետ չեն եղել սևամաշկ կանանց համար, և նրանց փորձառությունը փաստորեն մնացել է անտեսանելի, քանի որ այն փորձ է արվել տեղավորելու դոմինանտ համարվող «տղամարդիկ» կամ «սևամաշկ» կատեգորիաների ներքո<sup>163</sup>:

Այսպիսով, հավասարության առանցքային նշանակությունը բազմաթիվ հատկանիշներ ու տարաբնույթ փորձառություն ունեցող անհատի արժանապատվության, ինքնաիրացման և անձնականության պահպանման համար նպաստավոր միջավայրի ապահովումն է, որը որևէ դեպքում չի նշանակում անձանց միանմանեցում և հատկանիշների անտեսում: Այն կոչված է նպաստելու հասարակությունում մարդու ինքնության և մարդկային բազմազանության հանդեպ հարգանքին և անհատի համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը և պետք է ապահովի առկա բարիքների արդարացի բախշումն ու պատմականորեն գործող անարդարությունների վերացումը:

### **Հավասարության իրավունքի շրջանակը**

Տարբեր իրավական համակարգերում կիրառվում են *հավասարության իրավունք, խտրականության չենթարկվելու իրավունք*, ինչպես նաև *օրենքի առաջ հավասարության իրավունք* հասկացությունները: Հավասարության իրավունքը հաճախ դիտարկվում է իբրև ինքնաբավ իրավունք, որի հիմնական նպատակն է պաշտպանել անձի ինքնությունը, հարմարեցնել կառուցակարգերը մարդկանց կարիքներին և տարբերություններին ու պաշտպանել անձին նախապաշարմունքներից և կարծրատիպերից: Խտրականության չենթարկվելու իրավունքը հաճախ դիտարկվում է իբրև հավասարության

163. Intersectional Discrimination and Substantive Equality: A Comparative and Theoretical Perspective. Ben Smith. The Equal Rights Review, Vol. Sixteen, 2016, <https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/Intersectional%20Discrimination%20and%20Substantive%20Equality%20A%20Comparative%20and%20Theoretical%20Perspective.pdf>

իրավունքի անհրաժեշտ բաղադրիչ, քանի որ անձանց հավասար կարևորության և ինքնավարության հաստատման հիմնական միջոցը նրանց հանդեպ անհիմն տարբերակված վերաբերմունքի վերացումն է<sup>164</sup>:

Այս ձեռնարկում մենք գործածում ենք *հավասարության իրավունքը* և *խտրականության չենթարկվելու իրավունքը* որպես համարժեք եզրեր՝ դիտարկելով խտրականության չենթարկվելու իրավունքը որպես հավասարության իրավունքի բոլոր հարթություններին համարժեք հասկացություն: Խտրականության չենթարկվելու իրավունքը ամրագրված է Միացյալ ազգերի կազմակերպության շրջանակներում, ներառյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության և տարածաշրջանային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպական (ներառյալ՝ ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ), Աֆրիկյան և Ամերիկյան և այլ տարածաշրջանային կազմակերպությունների շրջանակներում ընդունված իրավական փաստաթղթերով: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ի սկզբանե 14-րդ հոդվածով սահմանել է խտրականության չենթարկվելու իրավունքը որպես Կոնվենցիայով երաշխավորված մյուս իրավունքներից կախում ունեցող նորմ, քանի որ այդ հոդվածով արգելվում է խտրականությունը Կոնվենցիայով երաշխավորված այլ իրավունքների իրացման համատեքստում: 2000 թ.-ից Կոնվենցիային կից 12-րդ լրացուցիչ արձանագրությամբ խտրականության չենթարկվելու իրավունքն ամրագրվել է նաև իբրև առանձին իրավունք և Կոնվենցիան այժմ երաշխավորում է խտրականության չենթարկվելու իրավունքը օրենքով ամրագրված որևէ իրավունքի իրացման հետ կապված: Ի լրումն՝ Կոնվենցիայի 7-րդ արձանագրությունը երաշխավորում է հավասարությունը ամուսինների միջև:

Խտրականության չենթարկվելու իրավունքի համատեքստում արգելվում է ուղղակի, անուղղակի խտրականությունը, հետապնդումը, ոտնձգությունը, ասոցացված խտրականությունը և զոհականացումը (վիկտիմիզացիան), ինչպես նաև խելամիտ հարմարեցումների մերժումը և խտրականության այլ տեսակները (Տե՛ս Գծապատկեր 2):

Խտրականության չենթարկվելու իրավունքը պետության համար առաջացնում է ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ բնույթի՝ կանխարգելելու, դադարեցնելու և պատասխանատվության ենթարկելու պարտավորություններ: Իսկ պարտավորություն կրող կարող է լինել ոչ միայն պետական կառավարման համակարգը, այլ նաև մասնավոր հատվածը, ինչպես, օրինակ, զբաղվածության, հանրային ծառայությունների տրամադրման, կրթության, առողջապահության և այլ ոլորտներում գործող մասնավոր սուբյեկտները:

Խտրականության չենթարկվելու իրավունքի ժամանակակից միջազգային և ներպետական կարգավորումները մեծապես արտահայտում են հավասարության ֆորմալ տեսության մոտեցումները: Միևնույն ժամանակ առանձին իրավահամակարգերում առանձին ոլորտների և պաշտպանված խմբերի դեպքում կիրառվում են նաև հավասարության առարկայական մոդելի մոտեցումները:

164. Nikolaidis, Charilaos. (2014). The right to equality in European Human rights law: The quest for substance in the jurisprudence of the European Courts. 10.4324/9781315780061.

## Ուղղակի խտրականություն

Չետապնդում

Ձոհականացում

## Անուղղակի խտրականություն

Խելամիտ հարմարեցումների մերժում

Ասոցացված խտրականություն

Բազմակի խտրականություն

Ինտերսեկցիոնալ խտրականություն

Խտրականության հրահրում/ատելության խոսք

## Գծապատկեր 2

### Խտրականության պաշտպանված հիմք կամ հատկանիշ

Պաշտպանված հատկանիշը կամ պաշտպանված հիմքը այն նույնականացվող, օբյեկտիվ կամ անձնական հատկանիշը կամ «կարգավիճակ» է, որով անձինք կամ խմբերը տարբերվում են միմյանցից, ինչպես, օրինակ, սեռը, կրոնը, ռասան, լեզուն, հաշմանդամություն ունենալը, տարիքը: Հավասարության իրավունքը պաշտպանում է այն տարբերակված վերաբերմունքը, որը հիմնված է պաշտպանված մեկ կամ ավել հատկանիշների վրա:

Որոշ իրավահամակարգեր սահմանում են պաշտպանված հիմքերի սպառնիչ ցանկ, որոշները սահմանում են բացարձակ բաց, ոչ սպառնիչ ցանկ կամ ընդհանուր բնույթի ձևակերպումներ, ինչպես, օրինակ, *յուրաքանչյուր անձ* ձևակերպումը, մյուսները ապավինում են միջանկյալ տարբերակին, երբ ամրագրվում է պաշտպանված հիմքերի որոշակի ցանկ՝ միևնույն ժամանակ բաց կամ կիսաբաց թողնելով այդ ցանկը: Վերջին երկու դեպքերում դատարանները և իրավակիրառողները ունենում են ցանկի ընդլայնման և այս կամ այն հիմքը որպես պաշտպանված ճանաչելու հնարավորություն:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով և 12-րդ արձանագրությամբ սահմանված է պաշտպանված հիմքերի որոշակի ցանկ, որը սպառնիչ չէ և բաց է լրացման համար՝ առանց հստակ սահմանված չափանիշների: Ի լրումն ամրագրված հիմքերի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդլայնել է ցանկը՝ ճանաչելով խտրականությունը տարիքի<sup>165</sup>, ներգաղթյալի կարգավիճակի<sup>166</sup>, բնակության վայրի<sup>167</sup>, բանտարկյալի<sup>168</sup>, քաղաքական հայացքների<sup>169</sup>, սեռական կողմնորոշման<sup>170</sup>, գեղեցիկային ինքնության<sup>171</sup>, առողջական վիճակի, ներառյալ ՄԻԱՎ-ով ապրելու<sup>172</sup>, գենետիկ հատկանիշի, ֆիզիկական հատկանիշի<sup>173</sup>, հաշմանդամության<sup>174</sup>, ծնող լինելու<sup>175</sup> և ամուսնական կարգավիճակի<sup>176</sup>, զբաղվածության<sup>177</sup> և մի շարք այլ հիմքերով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև, ըստ էության, արձանագրել է անձի հատկանիշի, կարգավիճակի անքակտելի բնույթը խտրականությունից պաշտպանության նպատակով՝ անդրադառնալով այն պնդմանը, թե խտրականությունը կարող էր դադարել, եթե անձը փոխեր իր կարգավիճակը, օրինակ՝ քաղաքական հայացքները: Այս առիթով Դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով խտրականության արգելքն իմաստ կունենա միայն, եթե յուրաքանչյուր դեպքում դիմողի մասնավոր կարգավիճակը, այսինքն՝ հատկանիշը, ընդունվի հենց այնպես, ինչպես որ այն կա: Այն մոտեցումը, թե դիմումատուն կարող էր խուսափել խտրականությունից որևէ գործոն փոփոխելու պարագայում, օրինակ, ընդունելով որոշակի ազգություն, կհակասեր իրավունքի բուն էությանը<sup>178</sup>:

Ինչպես տարբեր իրավահամակարգեր, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարում է, որ պաշտպանված հիմքից է կախված, թե պետության հայեցողության և իրավիճակի գնահատման ինչ չափանիշ կկիրառի դատարանը տարբերակված վերաբերմունքի իրավաչափության, այսինքն՝ վերաբերմունքը իբրև ոչ խտրական գնահատելու հիմնավորման համար: Այսպես, ռասայի, սեռի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության հիմքերով տարբերակված վերաբերմունքի իրավաչափությունը հիմնավորելու համար ենթադրյալ իրավախախտը պետք է ներկայացնի նման վերաբերմունք դրսևորելու «առանձնապես համոզիչ և ծանրակշիռ պատճառներ»: Այս չափանիշի իրացման որոշակի դժվարություններ կարող են առաջանալ փոխհատվող խտրականության դեպքում, մասնավորապես, երբ փոխհատված են տարբեր մոտեցումներ պահանջող պաշտպանված հիմքեր<sup>179</sup>: Հայաստանի Սահմանդրությամբ սահմանված է խտրականության պաշտպանված հիմ-

165. D.G. v. Ireland, 2002, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-60457>

166. Bah v United Kingdom, 2011, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-106448>

167. Carson v United Kingdom, 2010, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-97704>

168. Laduna v Slovakia, 2011, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-108031>

169. Virabyan v. Armenia, 2012, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-113302>

170. X v. Poland, 2021, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-211799>

171. L. v. Lithuania, 2007, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-82243> և այլ

172. Kiyutin v. Russia, 2011, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-103904>

173. Moraru v. Romania, 2022, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-220667>

174. Negovanović and Others v. Serbia, 2022, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-215183>

175. Weller v. Hungary, 2009, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-91993>

176. Petrov v. Bulgaria, 2008, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-86454>

Muñoz Díaz v. Spain, 2009, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96100>

177. Valkov and Others v. Bulgaria, 2011, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-107157>

178. Andrejeva v. Latvia [GC], 2009 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-91388>

179. The Right to Equality in European Human Rights Law. The quest for substance in the jurisprudence of the European Courts Charilaos Nikolaidis.

քերի ցանկ, որը սպառնիչ չէ և հնարավորություն է տալիս ներառելու «անձնական կամ սոցիալական բնույթի» այլ հանգամանքները:

## Խտրականության տեսակները

### Ուղղակի խտրականություն

Ուղղակի խտրականությունը կարելի է սահմանել իբրև անձի նկատմամբ նույնանման կամ հարաբերականորեն համանման հանգամանքներում իրական կամ ենթադրյալ պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի հիմքով կամ կարգավիճակով դրսևորված գործողություն, անգործություն, կարգավորում, վերաբերմունք կամ քաղաքականություն (հետայսու՝ վերաբերմունք)<sup>180</sup>: Ուղղակի խտրականություն կարելի է արձանագրել նաև, երբ հնարավոր չէ հիմնավորել նույնանման կամ հարաբերականորեն համանման հանգամանքները, սակայն իրական կամ ենթադրյալ պաշտպանված հատկանիշ որևէ մեկի կամ մի քանիսի հիմքով դրսևորված գործողության, անգործության, կարգավորման, վերաբերմունքի կամ քաղաքականության արդյունքում անձը հայտնվել է անբարենպաստ վիճակում:

Նվազ բարենպաստ վերաբերմունքը ենթադրում է, որ այն պետք է համեմատել այն անձի կամ խմբի հանդեպ վերաբերմունքի հետ, որ գտնվում է նույնանման կամ հարաբերականորեն համանման իրավիճակում տվյալ դեպքի բովանդակության շրջանակներում: Այդ խումբը կամ անձը կոչվում է համեմատական: Ընդ որում, համեմատականը անհրաժեշտ է վերլուծել վեճի հիմքում առկա վերաբերմունքի և իրավիճակի համատեքստում, այլ ոչ վերացական կերպով: Մի դեպքում Ա խումբը կարող է համարվել համեմատական Բ խմբի համար, մյուս դեպքում, կախված վեճի բովանդակությունից, միևնույն Ա խումբը չի կարող հանդես գալ որպես համեմատական Բ խմբի համար:

Ինչպես նշվեց, ներպետական և միջազգային իրավակարգավորումները, որպես կանոն, դեռևս միայն որոշակի բացառություններով հիմնվում են հավասարության ֆորմալ մոտեցման վրա, որի դեպքում համեմատականի առկայությունը կրում է պարտադիր բնույթ:

Եվ հաճախ այդ մոտեցման կիրառման արդյունքում իրավունքի ենթադրյալ խախտման խնդիրը մնում է չլուծված:

Առարկայական հավասարության մոտեցումները վկայում են, որ հաճախ հնարավոր չէ գտնել համեմատական, սակայն դա չի նշանակում, որ պետք է բացառել խտրականության փաստը:

180. Guide on Article 14 of the European Convention on Human Rights and on Article 1 of Protocol No. 12 to the Convention. Prohibition of discrimination. Council of Europe/European Court of Human Rights, 2022, [https://www.echrcoe.int/Documents/Guide\\_Art\\_14\\_Art\\_1\\_Protocol\\_12\\_ENG.pdf](https://www.echrcoe.int/Documents/Guide_Art_14_Art_1_Protocol_12_ENG.pdf) (կետ 28):

Հավասարության իրավունքի զարգացման միտումները վկայում են, որ որոշ իրավա-  
համակարգեր հակված են այս կամ այլ կերպ նվազեցնելու համեմատականի անկայութ-  
յան հիմնավորման անհրաժեշտությունը, քանի որ հակառակ դեպքում մեծ է խտրա-  
կանության բուն խնդրի անտեսումը ֆորմալ պահանջի պատճառով<sup>181</sup>: Այս մոտեցումն  
է որդեգրել նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն՝ նշե-  
լով, որ ուղղակի խտրականությունը ներառում է նաև պաշտպանված հիմքով անբարե-  
նպաստ ազդեցություն ունեցող գործողությունները կամ անգործությունը, երբ անկա չէ  
համեմատաբար նույնանման իրավիճակ<sup>182</sup>: Եվրոպական միության իրավահամակարգը  
որպես պարտադիր համեմատական գտնելու պահանջի բացառություն է սահմանում  
ամնվազն զբաղվածության ոլորտում հղի կանանց հանդեպ խտրականության դեպքե-  
րի համար՝ սահմանելով, որ բոլոր դեպքերում հղիության հիմքով կնոջ հանդեպ խտրա-  
կանությունը ուղղակի խտրականություն է սեռի հիմքով՝ առանց համեմատականի առ-  
կայության հիմնավորման պահանջի. նույնը վերաբերում է հղիության արձակուրդի և  
ներարգանդային բեղմնավորման դեպքերին<sup>183</sup>: ԵՄ երկրների մի մասը թույլատրելի է  
համարում կիրառել նաև համեմատական անցյալի հետ, օրինակ՝ նախկին աշխատա-  
վայր կամ հիպոթետիկ համեմատական<sup>184</sup>:

Հարավաֆրիկյան «Հավասարության մասին» օրենքն իր խտրականության սահման-  
ման մեջ առհասարակ չի պարունակում համեմատականի պահանջ<sup>185</sup>:

Այսպիսով, ընդհանուր մոտեցման համաձայն, ուղղակի խտրականության տարրերն են.

- նվազ բարենպաստ վերաբերմունք,
- նվազ բարենպաստ՝ ի համեմատ համեմատականի՝ այն անձանց կամ խմբի  
նկատմամբ վերաբերմունք, որոնք գտնվում են նույնանման կամ հարաբերա-  
կանորեն համանման իրավիճակում: Եթե անկա չէ «համեմատական», ապա  
պաշտպանված հիմքի պատճառով անբարենպաստ իրավիճակում հայտնվելը,
- պատճառահետևանքային կապ պաշտպանված հիմքի և տարբերակված վե-  
րաբերմունքի կամ անբարենպաստ իրավիճակի միջև, այսինքն՝ այդ վերաբեր-  
մունքի պատճառը պաշտպանված հատկանիշը կամ պաշտպանված հիմքն է:

## Հետապնդում, ոտնձգություն

Հետապնդումը կամ ոտնձգությունն ուղղակի խտրականության տեսակ է, որի դեպ-  
քում պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի հիմքով խախտվում  
է անձի արժանապատվությունը ու նրա շուրջ ձևավորվում է /կամ որի նպատակն է

181. R v Kapp [2008] 2 SCR 483 [22], <https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/5696/index.do>,  
Withler v Canada [2011] 1 SCR 396 [2] , [60], <https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/7925/index.do>

182. General comment No. 6 (2018) on equality and nondiscrimination,  
<https://www.undocs.org/Home/Mobile?FinalSymbol=CRPD%2F6%2F6&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=False para. 18>.

183. Handbook on European non-discrimination law. Eք 47, [https://www.echr.coe.int/Documents/Handbook\\_non\\_discrim\\_law\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Handbook_non_discrim_law_ENG.pdf)

184. A comparative analysis of non-discrimination law in Europe,  
<https://www.equalitylaw.eu/downloads/5568-a-comparative-analysis-of-non-discrimination-law-in-europe-2021-1-75-mb>

185. Promotion of Equality and Prevention of Unfair Discrimination Act 2000. South African law,  
[http://www.saflii.org/za/legis/consol\\_act/poeapouda2000637/](http://www.saflii.org/za/legis/consol_act/poeapouda2000637/)

նրա շուրջ ձևավորել ոչ բարյացակամ, թշնամական, վիրավորական, նվաստացնող կամ մերժողական միջավայր (հետայսու՝ ոչ ցանկալի վերաբերմունք):

Այս սահմանման հիմքում ոչ այնքան այլոց հետ համեմատությունն է, որքան վիրավորական ու կանխակալ վերաբերմունքից անձի պաշտպանությունը, ինչն ուղղակի բխում է առարկայական հավասարության մոտեցումից:

Հետապնդմամբ խտրականության վերլուծություն է պարունակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Օգանեզովան ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը<sup>186</sup>, որով դատարանը ճանաչել է հոմոֆոբ արշավի և հետապնդումների խտրական որակը, որը հանգեցրել են անձի սեփականության հրկիզմանը:

Հետապնդման ձևով խտրականության չենթարկվելու իրավունքի խախտում է ճանաչվել, երբ հաշմանդամություն ունեցող երեխայի մայրը՝ այդ երեխայի հիմնական խնամողը, ստիպված է եղել ազատվել աշխատանքից երեխայի հետ կապված հարցերում գործընկերների վերաբերմունքի պատճառով: Այսպես, վերջինիս գործատուն հնարավորություն չի տվել, որ նա օգտվի աշխատաժամերի միևնույն ճկուն համակարգից, ինչ իր մյուս ծնող գործընկերները. երբ նա աշխատանքից ազատ ժամանակ է խնդրել երեխայի մասին հոգալու համար, նրան անվանել են «ծուլ», գործընկերները վիրավորական մեկնաբանություններ են արել նրա և երեխայի մասին<sup>187</sup>: Այս դեպքում առկա է նաև ասոցացված խտրականության տարր, քանի որ մայրը չի եղել պաշտպանված հատկանիշի կրողը, իր հանդեպ խտրականություն է դրսևորվել՝ իր երեխայի հաշմանդամության և հաշմանդամության հանդեպ կանխակալ վերաբերմունքի հետ կապված:

Այսպիսով, հետապնդման տարրերն են.

- ոչ ցանկալի վերաբերմունք՝ պայմանավորված պաշտպանված որևէ հիմքով կամ հիմքերով,
- կամ այդ վերաբերմունքի հետևանքը կամ նպատակն է անձի արժանապատվության նվաստացումը և (կամ) նրա շուրջ ոչ բարյացակամ, թշնամական, վիրավորական, նվաստացնող կամ մերժողական միջավայրի ձևավորումը,
- պատճառահետևանքային կապ պաշտպանված հիմքի և ոչ ցանկալի վերաբերմունքի միջև, այսինքն՝ այդ վերաբերմունքի պատճառը պաշտպանված հատկանիշը կամ պաշտպանված հիմքն է:

## Անուղղակի խտրականություն

Անուղղակի խտրականությունը սահմանվում է որպես աներևույթ չեզոք գործողություն, անգործություն, կարգավորում, վերաբերմունք կամ քաղաքականություն (հետայսու՝ վերաբերմունք), որը իրական կամ ենթադրյալ պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց ասոցացման հիմքով անհամաչափ կերպով ան-

186. *Oganezova v. Armenia*, 2022, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-217250>

187. *S. Coleman v Attridge Law and Steve Law.*, <https://curia.europa.eu/juris/document/document.jsf?text=&docid=67793&pageIndex=0&doclang=en&mode=lst&dir=&occ=first&part=1&cid=1622260>



բարենպաստ է ազդում անձանց որոշակի խմբի վրա, կամ հավասար վերաբերմունք անձանց նկատմամբ, որոնք գտնվում են բնույթով տարբեր պայմաններում բացառությամբ դեպքերի, երբ առկա են անհրաժեշտության և համաչափության պայմանները:

Անուղղակի խտրականության դեպքում, ի տարբերություն ուղղակի խտրականության, առանցքային է ոչ թե տարբերակված վերաբերմունքը, այլ տարբերակված ազդեցությունը:

ԱՄՆ Բարձրագույն դատարանի կողմից քննված *Griggs v Duke Power Co.*<sup>188</sup> գործով դատավոր Բրադերը, բացատրելով անուղղակի խտրականության գաղափարը, որպես օրինակ է ներկայացրել «Կռունկն ու աղվեսը» առակը: Աղվեսը փորձում է հյուրասիրել կռունկին՝ ճաշը մատուցելով մի տափակ ափսեի մեջ: Այն հարմար է աղվեսին, բայց կռունկի համար անհնար է դարձնում կտուցով տափակ ափսեից ուտել կերակուրը: Կռունկը, ի պատասխան աղվեսի, կերակուրը հյուրասիրում է բարակ կուլայի մեջ, և աղվեսն այդպես էլ չի կարողանում ճաշակել ուտելիքը<sup>189</sup>:

Անուղղակի խտրականության գաղափարը, ըստ Էուրթյան, ընդունում է, որ միևնույն գործոնը կարող է տարբեր կերպ ազդել տարբեր անձանց ու խմբերի վրա՝ որոշների համար ձևավորելով առավել անբարենպաստ իրավիճակ:

Անուղղակի խտրականության դեպքում ճանաչվում է, որ հասարակության կառուցակարգերը ևս ազդում են տարբեր խմբերի որոշումների և գործողությունների վրա, որոնք հաճախ կարող են հանգել խտրականության: Ինչպես, օրինակ, *Օփուզն ընդդեմ Թուրքիայի* գործով, կանանց նկատմամբ բռնության դեպքերի քննության հարցում «ընդհանուր կիրառվող և խտրական դատական պասիվությունը, թեև ոչ միտումնավոր, հիմնականում [անբարենպաստ] ազդեցություն է ունեցել կանանց վրա» և հանգել այդ դեպքերի ոչ արդյունավետ քննության<sup>190</sup>:

*Դ.Հ.-ն ընդդեմ Չեխիայի*<sup>191</sup> անուղղակի խտրականությունն արձանագրած առաջին գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրահանգել է, որ այն ընդհանուր ստուգման համակարգը, որի միջոցով գնահատվել են երեխաների ինտելեկտուալ կարողությունները, որոշելու համար, թե արդյոք երեխան պետք է հաճախի համընդհանուր, թե հատուկ դպրոց, ունեցել է խտրական ազդեցություն գնչուական համայնքի երեխաների վրա, ինչի արդյունքում գնչուական համայնքի անհամաչափ մեծ թվով երեխաներ են ուղղորդվել հատուկ դպրոցներ: Դատարանը գտել է, որ թեստավորման համակարգը մշակելիս հաշվի չեն առնվել գնչուական համայնքի երեխաների առանձնահատկությունները և մասնավորապես սոցիալական և մշակութային տեսանկյունից անբարենպաստ իրավիճակը:

188. *Griggs v. Duke Power Co.*, 401 U.S. 424, (1971), <https://supreme.justia.com/cases/federal/us/401/424/>

Գործով արձանագրվել է, որ աշխատանքի ընդունվելու համար մշակված միևնույն հարցաշարը անբարենպաստ վիճակում է դնում սևամաշկ համայնքին, որի ներկայացուցիչները տարիներ շարունակ զրկված են եղել ստանալ այն նույն որակի կրթությունը, ինչ սպիտակամաշկ համայնքի ներկայացուցիչները:

189. Ed. by Hugh Collins and Tarunabh Khaitan. *Foundations of Indirect Discrimination Law*, 2018, ISBN: 9781509912537

190. *Opuz v. Turkey*, 2009, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-92945>

191. *D.H. and other v. The Czech Republic*, 2007, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-83256>

Անուղղակի խտրականության մեկ այլ օրինակ է ատենակալների ներգրավման վերաբերյալ Մալթայի օրենսդրության կիրառման հետևանքով առաջացած անհավասարությունը կանանց և տղամարդկանց միջև: Թեև օրենսդրությունը ինքնին տարբերակում չի դրել կանանց և տղամարդկանց միջև, սակայն ատենակալների ցուցակները կազմելու ձևավորված պրակտիկաների, ատենակալների բացարկի համար առաջադրած չափանիշների արդյունքում (օրինակ՝ ընտանիքի մասին հոգալու անհրաժեշտությունը, հաշվի առնելով, որ առավել մեծ թվով կանայք են խնամում ընտանիքին) կանանց իբրև ատենակալներ ներգրավվումը եղել է աննշան<sup>192</sup>:

Այսպես, անուղղակի խտրականության բաղադրիչներն են՝

- առերևույթ չեզոք վերաբերմունք, որը անբարենպաստ ազդեցություն ունի՝ անձի կամ անձանց խմբի վրա որոշակի հատկանիշով կամ կարգավիճակով պայմանավորված,
- այդ ազդեցությունն առավել անբարենպաստ է՝ ի համեմատություն այլ խմբի,
- պատճառահետևանքային կապ պաշտպանված հիմքի և ոչ ցանկալի վերաբերմունքի միջև, այսինքն՝ այդ վերաբերմունքի պատճառը պաշտպանված հատկանիշը կամ պաշտպանված հիմքն է:

## Ասոցացված և ենթադրության վրա հիմնված խտրականություն

Ասոցացված խտրականության դեպքում խտրականության ենթարկվող անձը չի կրում պաշտպանված հատկանիշը կամ կարգավիճակը, սակայն որևէ ձևով կապ ունի պաշտպանված հատկանիշը կրող անձի կամ խմբի հետ:

Ասոցացված խտրականությունը կարող է տեղի ունենալ խտրականության տարբեր ձևերի հետ համակցված: Այսպես, վերը քննարկված Քոուլմենի (Տե՛ս [«Հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունք. Հետապնդում, ոտնձգություն»](#) վերնագրի ներքո) գործով հետապնդումը տեղի է ունեցել մոր հանդեպ՝ երեխայի հաշմանդամության հիմքով:

Այն կարող է տեղի ունենալ և՛ ուղղակի<sup>193</sup>, և՛ անուղղակի խտրականության դեպքերում, ինչպես օրինակ, *Գուբերինաս ընդդեմ Խորվաթիայի* գործով<sup>194</sup>: Այս գործով դատարանը արձանագրել է հաշմանդամության հիմքով, փաստորեն, անուղղակի խտրականություն, երբ պետական մարմինները, իրենց հարկային քաղաքականությունը կիրառելով հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողի նկատմամբ, հաշվի չեն առել երեխայի հաշմանդամության կարգավիճակից բխող կարիքները:

Միևնույն ժամանակ խտրականությունը կարող է առաջանալ նաև անձի վերաբերյալ ենթադրության հիման վրա, օրինակ՝ ենթադրության, որ անձը այս կամ այն խմբի անդամ է կամ կրում է այս կամ հատկանիշը: Որպես կանոն, ենթադրության հիման վրա

192. Zarb Adami v. Malta, 2006, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-75934>

193. Օրինակ՝ Molla Sali v. Greece, 2020, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-203370>

194. Guberina v. Croatia, 2016, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-161530>

խտրականությունը ևս արգելված է<sup>195</sup>: Հայաստանի «Հաշմանդամությունն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը խտրականության սահմանման մեջ ուղղակի ներառում է թե՛ իրական, թե՛ ենթադրյալ հաշմանդամության հիմքով խտրականությունը:

## Չոհականացում (վիկտիմիզացիա)

Չոհականացումն այն բացասական վերաբերմունքն է կամ բացասական հետևանքը, որը կարող է առաջանալ իրավունքի պաշտպանության կամ մասնավորապես խտրականության չենթարկվելու իրավունքի պաշտպանության ուղղությամբ քայլեր ձեռնարկելու արդյունքում:

Չոհականացումից պաշտպանության հիմնական նպատակն է երաշխավորել, որ անձը չի պատժվի կամ կանխակալ վերաբերմունքի չի ենթարկվի այն պատճառով, որ իրացրել է իր իրավունքը կամ նպատակ ունի դա անելու:

Չոհականացումից պաշտպանությունը տարբեր երկրներում կարող է վերաբերել տարբեր խմբերի անձանց: Որոշ երկրներում այն տարածվում է բոլոր ներկայացնող յուրաքանչյուր անձի վրա, որոշ երկրներում նաև իրենց հետ փոխկապակցված, իրենց աջակցող անձանց կամ ցանկացած անձի, որը հայտնել է խտրականության մասին<sup>196</sup>:

Չոհականացման դեպքում, որպես կանոն, անհրաժեշտ չէ համեմատականի հիմնավորումը, այլ բավարար է հիմնավորել միայն այն, որ մեկ անձ բացասական վերաբերմունքի է ենթարկել մեկ այլ անձի, քանի որ վերջինս, գործելով բարեխղճորեն, կատարել է, պատրաստվում է կատարել կամ ենթադրաբար կատարել է օրենքով պաշտպանվող գործողություն<sup>197</sup>:

Գործատուի կողմից զոհականացման ձևով խտրականության չենթարկվելու իրավունքի և անձի աշխատանքային իրավունքի խախտում է ճանաչել Հայաստանի առաջին ատյանի ընդհանուր դատարանը 2017 թ.-ին քննված գործով<sup>198</sup> :

## Խելամիտ հարմարեցումների մերժում

Ըստ ՄԱԿ-ի Հաշմանդամությունն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի՝ խելամիտ հարմարեցումների մերժումը հանգեցնում է խտրականության, երբ անհրաժեշտ

195. A comparative analysis of non-discrimination law in Europe, 2021,

<https://www.equalitylaw.eu/downloads/5568-a-comparative-analysis-of-non-discrimination-law-in-europe-2021-1-75-mb>

196. A comparative analysis of non-discrimination law in Europe, 2021,

<https://www.equalitylaw.eu/downloads/5568-a-comparative-analysis-of-non-discrimination-law-in-europe-2021-1-75-mb>

197. Տե՛ս, օրինակ, Մեծ Բրիտանիայի «Հավասարության օրենքը», <https://www.legislation.gov.uk/ukpga/2010/15/contents>

198. Մ. Ասատրյան ընդդեմ Էներգակարգաբերում ՓԲԸ քաղ. գործ թիվ ԵԱԶԴ/4228/02/16,

[http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=14918173765745774](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14918173765745774)

և պատշաճ շտկումների և հարմարեցումների կատարումը, որը անհամաչափ կամ անհարկի բեռ չէ, սակայն անհրաժեշտ է մարդու իրավունքներից հավասար հիմունքներով օգտվելը և իրացումը երաշխավորելու համար, չի կատարվում:

*Խելամիտ հարմարեցումներ* հասկացությունը ԱՄՆ-ում առաջին անգամ ներդրվել է կրոնի հիմքով խտրականության համատեքստում և հետագայում ընդլայնվել՝ ներառելով նաև հաշմանդամությունը: Այժմ խելամիտ հարմարեցումների տրամադրման կանոնի կիրառումը առավել տարածված և զարգացած է հաշմանդամություն ունեցող անձանց՝ խտրականության չենթարկվելու իրավունքի պաշտպանության համատեքստում:

Առանձին իրավական համակարգերում այն տարածվում է նաև կրոնի, սեռի հիմքով խտրականության արգելքների դեպքերի վրա, իսկ Կանադայի<sup>199</sup> և Հարավային Աֆրիկայի<sup>200</sup> օրենսդրությունները այն տարածում են խտրականության պաշտպանության բոլոր հիմքերի վրա:

Խելամիտ հարմարեցման օրինակներ են սեղանի համապատասխան բարձրության ապահովումը, որը հարմար կլինի անվասայլակով տեղաշարժվող անձի համար, խոշորացույցի տրամադրումը տեսողության խնդիրներ ունեցող անձանց, աջակցող կենդանիների թույլատրումը կույր կամ խուլ անձանց համար: Ծնողական արձակուրդը կամ երեխայի խնամքի համար սահմանվող ճկուն աշխատաժամերը ևս խելամիտ հարմարեցման օրինակ են, ևույնիսկ եթե տվյալ իրավական համակարգում չեն որակվում որպես այդպիսին:

Խելամիտ հարմարեցումների «խելամտության» որոշումը նման է խտրականության այլ ձևերի հիմնավորմանը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի համաձայն՝ առնվազն հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիության և արդարադատության մատչելիության ապահովման դեպքերում բացակայում է շտկումների և փոփոխությունների «խելամտության» հիմնավորման պահանջը: Այսպես, անթույլատրելի է հաշմանդամություն ունեցող անձանց համընդհանուր կրթության ապահովման շրջանակներում խելամիտ հարմարեցումների տրամադրման մերժումը, որը կհանգեցնի կրթության մեջ ներառման սահմանափակմանը այն հիմնավորմամբ, որ դրանք անհամաչափ են կամ առաջացնում են անհարկի բեռ<sup>201</sup>: Իսկ հաշմանդամություն ունեցող անձանց համար արդարադատության մատչելիության համատեքստում գործում է *ընթացակարգային հարմարեցումներ* հասկացությունը, որն արդարադատության մատչելիության համատեքստում բոլոր անհրաժեշտ և պատշաճ շտկումների և հարմարեցումների կատարումն է, որոնք տվյալ մասնավոր դեպքում անհրաժեշտ են՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձի մասնակցությունը արդարադատության իրացման գործընթացում մյուսների հետ հավասար հիմունքներով: Ի տարբերություն խելամիտ

199. Canadian Human Rights Act, <https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/h-6/>

200. South African Equality Act, <https://www.justice.gov.za/legislation/acts/2000-004.pdf>

201. General comment No. 4 (2016) on the right to inclusive education. 25 November 2016. para 18,

<https://www.undocs.org/Home/Mobile?FinalSymbol=CRPD%2FC%2FEGC%2F4&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=False>

հարմարեցումների՝ ընթացակարգային հարմարեցումների տրամադրումը չի կարող սահմանափակվել «անհամաչափ կամ անհարկի բեռ» հանդիսանալու հիմքով<sup>202</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները խելամիտ հարմարեցումների տրամադրման հայեցակարգը դիտարկել են հիմնականում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների համատեքստում<sup>203</sup>:

Որպես այդպիսին չորակելով, սակայն փաստորեն խելամիտ հարմարեցումների, այս դեպքում՝ արդարադատություն իրականացնելիս ընթացակարգային հարմարեցումների չտրամադրման հիմքով իրավունքի խախտում է ճանաչել ՀՀ Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ այն հիմնավորումը, թե հոգեկան առողջության խնդիրներ ունենալու պայմաններում անձն ի վիճակի չէ մասնակցելու իր վերաբերյալ ընթացող դատավարությանը, պարունակում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի ենթադրվող խտրական վերաբերմունք: Ուստի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեպքում կանխավարկածը պետք է լինի լրացուցիչ միջոցառումների ձեռնարկմամբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցության խրախուսումը՝ իրենց իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն առնչվող վարույթին, որը պետք է իրականացվի լրացուցիչ երաշխիքների տրամադրմամբ, որպեսզի անձը հնարավորություն ունենա լիարժեք մասնակցություն ունենալու իր վերաբերյալ ընթացող վարույթին<sup>204</sup>:

## **Խտրականության հրահրում և ատելության խոսքը**

Խտրականության հրահրումը, դրդումը, հրահանգը, ցուցումն անհատների կամ խմբերի նկատմամբ, նրանց պաշտպանված հատկանիշից ելնելով, խտրական վերաբերմունքի դրսևորման դիտավորյալ խրախուսումը կամ հորդորներն են: Այն ներառում է նաև այնպիսի վերաբերմունքի ակտիվ պաշտպանությունը, որն արդարացնում է անհատների կամ խմբերի հանդեպ անհավասար վերաբերմունքը, նրանց բացառումը կամ հետապնդումը և այլ բացասական գործողություններ: Խտրականության հրահրումը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, ներառյալ բանավոր արտահայտություններով, գրավոր նյութերով, նկարներով, հրապարակային ելույթներով՝ ինչպես անցանց, այնպես էլ առցանց հարթակներում:

Խտրականության հրահրումը արգելված է ՄԱԿ-ի ԵՄ և ԵԽ մի շարք իրավական փաստաթղթերով:

202. International Principles and Guidelines on Access to Justice for Persons with Disabilities, August 2020, [https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Disability/SR\\_Disability/GoodPractices/Access-to-Justice-EN.pdf](https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Disability/SR_Disability/GoodPractices/Access-to-Justice-EN.pdf)

203. Տե՛ս, օրինակ, Enver Şahin v. Turkey, 2018, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-180499>;

Çam v. Turkey, 2016, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-161149>; G.L. v. Italy, 2020, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-204685>

204. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը թիվ ԱՐԱԴԴ/0001/14/18, ԱՐԱԴԴ/0001/15/18 Արթուր Մնացականյանի գործով, 20 մայիսի 2022 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=163152>

ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը արգելում է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում: Նմանապես «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան պահանջում է մասնակից պետություններից իբրև օրենքով պատժելի հանցանք սահմանել ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը, ինչպես նաև ռասիստական գործունեությանն օգնություն տրամադրելը, ներառյալ նման գործունեության ֆինանսավորումը:

Արտահայտման ձևերը, որոնք հանգեցնում են, բացահայտում կամ խրախուսում են թշնամանքը խմբի կամ անհատի նկատմամբ՝ խմբին նրա անդամակցության պատճառով, սովորաբար սահմանվում են որպես «ատելության խոսք»: Հաճախ խտրականության հրահրումը հասնում է ատելության խոսքի դրսևորման և բախման մեջ է մտնում անձի խոսքի ազատության հետ: Ուստի խոսքի որոշակի տեսակ զրկված է խոսքի ազատությամբ առաջարկվող պաշտպանությունից և նույնիսկ պետք է քրեականացվի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը խտրականության հրահրման բաղադրիչով դեպքերը հաճախ քննել է ազատ արտահայտվելու, հավաքների, կրոնի ազատության, անձի անձեռնմխելիության իրավունքների համատեքստում:

Այսպես, *Բաշկովսկին և ուրիշներն ընդդեմ Լեհաստանի* գործով Վարչավայի քաղաքապետը հոմոֆոբ բնույթի հրապարակային հայտարարություններ էր արել՝ ասելով, որ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության մասին իրազեկվածության բարձրացման երթի անցկացման թույլտվություն նա չէր տա: Իրավասու վարչական մարմինը, հետևելով այս խոսքին, մերժել էր թույլտվությունը, սակայն որոշումը պատճառաբանել էր ցուցարարների միջև բախումները կանխելու անհրաժեշտությամբ: ՄԻԵԴ-ը գտել է, որ քաղաքապետի հայտարարությունները կարող էին ազդել իրավասու մարմինների որոշման վրա, և որ որոշումը պայմանավորված էր սեռական կողմնորոշման հիմքով, հետևաբար, խտրականությունից գերծ լինելու իրավունքի հետ համակցված, հավաքների ազատության խախտում է<sup>205</sup>:

Խտրականության հրահրումը նաև հաճախ փոխկապակցված է և դրսևորվում է հետապնդումների հետ համատեղ: *Օգանեզովան ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ի լրումն հետապնդման, նաև արձանագրել է, որ բանավոր ուղղակի հարձակումների և ֆիզիկական սպառնալիքների, ներառյալ սեռական կողմնորոշման հիմքով ատելության խոսքի դեմ պայքարի համար անհրաժեշտ են քրեաիրավական միջոցներ՝ նշելով, որ ատելություն պարունակող մեկնաբանությունները այս դեպքում պարունակել են բռնության անթաքույց կոչեր: Դատարանը արձանագրել է, որ Կառավարությունը ձախողել է անձին հոմոֆոբ ատելության խոսքից

205. *Bączkowski and Others v. Poland*, 2007, <https://hudoc.echrcoe.int/eng?i=001-80464>

համարժեք կերպով պաշտպանելը, և նա իր սեռական կողմնորոշման պատճառով դարձել է ատելության ուղղակի թիրախ:

## **Բազմակի հիմքերով խտրականություն**

Բազմակի խտրականությունը այն տեսակն է, երբ խտրականությունը տեղի է ունենում մեկից ավելի պաշտպանված հիմքով՝ առանձին-առանձին:

Որպես բազմակի խտրականության քննարկման օրինակ կարելի է դիտարկել ծանր հոգեւորաբանական հաշմանդամություն ունեցող 67-ամյա անձի դեպքով Իսպանիայի Սահմանադրական դատարանի որոշումը: Անձը դիմել է Մադրիդի համայնքապետարան՝ պահանջելով ճանաչել իր հաշմանդամությունը և հնարավորություն տալ բնակվելու հոգեւորաբանական հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հաստատությունում: Համայնքապետարանը թեև ճանաչել է հաշմանդամությունը, սակայն մերժել է հաստատությունում բնակվելու վերաբերյալ նրա պահանջը՝ հիմնավորելով, որ հաստատությունում անձանց առավելագույն տարիքը 60 է՝ առանց որևէ բացառության: Իսպանիայի Սահմանադրական դատարանը գտել է, որ դիմողը ենթարկվել է բազմակի հիմքով խտրականության: Առաջին հերթին նա խտրականության է ենթարկվել հաշմանդամության հիմքով, քանի որ կարգավորումը զրկել է իրեն անհրաժեշտ աջակցություն ստանալու հնարավորությունից: Ի լրումն՝ տարիքային շեմը ևս եղել է խտրականության հիմք<sup>206</sup>:

## **Ինտերսեկցիոնալ (փոխհատվող) խտրականություն**

Ինտերսեկցիոնալ (փոխհատվող) խտրականությունը<sup>207</sup> տեղի է ունենում այն իրավիճակում, երբ խտրականության պաշտպանված մեկից ավելի հիմքեր գործում և ազդում են անձի իրավիճակի վրա միասին, միաժամանակ և անբաժանելի կերպով:

Ինտերսեկցիոնալ խտրականության օրինակ է հնդիկ կնոջ ազատումը աշխատանքից՝ Բրիտանական դատարանի կողմից քննված գործով<sup>208</sup>: Այս դեպքում դիմողը հնդիկ կին էր, որը կարճ ժամանակ աշխատել էր մի ընկերությունում, որի տնօրենները ունեին հնդկական ծագում: Հինգ ամիս անց դիմումատուն առանց բացատրության ազատվել էր աշխատանքից: Դիմողի գործընկերներից մեկը դիմումատունին ասել էր, որ տնօրենները հավանություն չեն տալիս, որ իրենց ընկերությունում աշխատեն ասիական ծագմամբ կանայք: Դատարանը գտել է, որ դիմողը նվազ բարենպաստ վերաբերմունքի է ենթարկվել ոչ այն պատճառով, որ նա կին է, և ոչ այն պատճառով, որ նա հնդիկ է, այլ այն պատճառով որ նա հնդիկ կին է, այսինքն՝ երկու հատկանիշի միաժամանակ առկա-

206. Spain, Constitutional Court Decision No. 3/2018, of 22 January 2018, <https://hj.tribunalconstitucional.es/docs/BOE/BOE-A-2018-2459.pdf>

207. Լրացուցիչ տե՛ս նաև. «Ինտերսեկցիոնալություն/Փոխհատվողականություն» բաժնում:

208. A Theory of Discrimination Law. Tarunabh Khaitan. 2015.

յության հիմքով, քանի որ պատասխանողը՝ գործատուն, նմանօրինակ խնդիր չի առաջացրել հնդիկ տղամարդկանց կամ ոչ ասիացի կանանց դեպքում: Խտրականության հանգամանքը հաստատելու համար Դատարանը օգտագործել է հիպոթետիկ համեմատական, որը ոչ հնդկական ծագում ունեցող տղամարդն է:

*Carvalho Pinto de Sousa Morais-ն ընդդեմ Պորտուգալիայի* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործի<sup>209</sup> շրջանակներում դատարանը անդրադարձել է կնոջ տարիքի և սեռի գործոնների փոխազդեցությամբ խտրականության ենթարկվելու դեպքին: Վերլուծելով ներպետական մակարդակում որոշում կայացրած Պորտուգալիայի դատարանի հայրիշխանական ընկալումները, նմանօրինակ այլ գործերը, երբ տղամարդկանց հանդեպ չի ցուցաբերվել նման անբարենպաստ վերաբերմունք՝ Դատարանը արձանագրել է, որ «այս դեպքում քննարկվող հարցը ոչ թե որպես այդպիսին տարիքի կամ սեռի վերաբերյալ նկատառումներն են, այլ այն ենթադրությունը, որ սեռականությունն այնքան կարևոր չէ հիսունամյա կնոջ և երկու երեխաների մոր համար, որքան երիտասարդ տարիքի անձի համար»: Այսինքն՝ դատարանը դիտարկել է տարիքի, սեռի և մայր կարգավիճակի միաժամանակյա ազդեցությունը դիմողի իրավունքի իրացման վրա:

Ինչպես բազմակի հիմքով խտրականության դեպքում, ինտերսեկցիոնալ խտրականության դեպքում ևս հստակ կարգավորումներ առկա են միայն որոշ երկրների իրավական համակարգերում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի նախաբանը արձանագրում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ենթարկվում են խտրականության բազմակի կամ ծանր ձևերի՝ կապված ռասայի, գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագման, սեփականության, ծննդյան, տարիքի կամ այլ կարգավիճակի հետ, իսկ տեքստում ճանաչում հաշմանդամություն ունեցող երեխաների, կանանց, անբարենպաստ սոցիալական վիճակում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց կարգավիճակը: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի կոմիտեն արձանագրել է, որ անդամ պետությունները պետք է օրենսդրորեն ճանաչեն և արգելեն խտրականության ինտերսեկցիոնալ տեսակները և դրա խորացված բացասական ազդեցությունը կանանց վրա<sup>210</sup>:

## **Ժամանակավոր հատուկ միջոցներ կամ կառուցողական գործողություններ**

Կառուցողական գործողությունը միջոց է, որը ծառայում է մեկ խմբի անբարենպաստ վիճակը մեկ այլ խմբի հանդեպ վերացնելուն:

209. Carvalho Pinto de Sousa Morais v. Portugal, 2017, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-175659>

210. General Recommendation 28 on the Core Obligations of States Parties under Art. 2, 2010, para. 18, [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FGC%2F28&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FGC%2F28&Lang=en)



Խտրական վերաբերմունքից զերծ մնալը երբեմն բավարար չէ փաստացի հավասարության հասնելու համար: Հետևաբար որոշ իրավիճակներում կառավարությունները, գործատուները և ծառայություններ մատուցողները պետք է քայլեր ձեռնարկեն՝ հարմարեցնելու, շտկելու այն կանոններն ու գործելակերպը, որոնց սովորական կիրառումը անբարենպաստ արդյունքներ է առաջացնում մեկ կամ ավելի խմբերի համար՝ ի համեմատ մյուսների: Այդ շտկումներն ու հարմարեցումները պետք է հաշվի առնեն խմբերի տարբերություններն ու առանձնահատկությունները, և պետք է միտված լինեն առկա անհավասարությունը վերացնելուն: Դրանք կոչվում են «հատուկ միջոցներ» կամ «դրական գործողություններ» կամ «կառուցողական գործողություններ»: Հատուկ միջոցների կիրառությամբ է, որ պետությունները կարող են ապահովել առարկայական հավասարությունը:

Հատուկ միջոցները կիրառվում են խմբերի միջև առկա փաստացի անհավասարությունը (հաճախ ունի պատմական հիմքեր) հաղթահարելու համար: Հատուկ միջոցների օրինակ է կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների և այլ խմբերի համար հավասարության ապահովման նպատակով կիրառվող քվոտաների համակարգը քաղաքականության, կրթության, զբաղվածության և այլ բնագավառներում:

*Հորվաթսն ու Քիսն ընդդեմ Հունգարիայի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը խտրականության չենթարկվելու իրավունքի խախտում է ճանաչել և արձանագրել, որ պետությունն ունի հատուկ դրական պարտավորություն՝ կանխարգելելու թվացյալ չեզոք ստուգման թեստերի միջոցով անցյալում տեղի ունեցած խտրականությունը կամ խտրական գործելաոճերը<sup>211</sup>:

Հատուկ միջոցները պետք է լինեն պատշաճ այն իրավիճակի համար, որի շտկման համար դրանք կիրառվում են, իրավաչափ և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Դրանք պետք է հարգեն համաչափության և արդարության սկզբունքները, ունենան ժամանակավոր բնույթ և դադարեցվեն այն պահին, երբ այն նպատակը, այսինքն՝ անհավասարությունը, որի չեզոքացման համար դրանք գործադրվել են, վերացած կլինի, հակառակ դեպքում դրանք ինքնին կարող են խտրական դառնալ<sup>212</sup>:

Հատուկ միջոցները նման են խելամիտ հարմարեցումներին, սակայն, ի տարբերություն վերջիններիս, որոնք մշակվում և կիրառվում են անհատի հանդեպ խտրականությունը վերացնելու նպատակով և անհատի առանձնահատկություններն ու կարիքները հաշվի առնելով, առաջինները մշակվում են՝ հաշվի առնելով պաշտպանված խմբի՝ անբարենպաստ վիճակում գտնվելու կարգավիճակը, խմբի առանձնահատկությունները և հավասարեցման ռազմավարությունները: Այս երկու հասկացությունները փոխլրացնող են, մեկի կիրառումը չի բացառում մյուսի կիրառումը:

211. Horváth and Kiss v. Hungary, 2013, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-116124>

212. UN, CERD (2009), General Recommendation 32: The Meaning and Scope of Special Measures in the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, 2009, para. 16, [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CERD%2FC%2FGC%2F32&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CERD%2FC%2FGC%2F32&Lang=en)

## Խտրականության թեստը

Ինչպես բոլոր մյուս իրավունքների դեպքերում, խտրականության չենթարկվելու իրավունքի խախտումը ևս ունի հիմնավորման և ապացուցման կարիք: Ոչ բոլոր դեպքերում է տարբերակված վերաբերմունքը կամ, երբ այն ենթադրաբար անհրաժեշտ է, տարբերակված վերաբերմունք չցուցաբերելը խտրական<sup>213</sup>:

Ընդունված կանոնի համաձայն՝ խտրական չի համարվում այն վերաբերումունքը, որն ունի ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում<sup>214</sup>:

Ըստ ընդհանուր կանոնի՝ խտրականության չենթարկվելու իրավունքի խախտումը ապացուցելու համար.

1. Պետք է հիմնավորել, որ առկա է տարբերակված վերաբերմունք, որը ներառում է պաշտպանված հիմքի առկայություն, ինդրո առարկա վերաբերմունքի, կանոնի, գործելաոճի առկայություն և, որպես կանոն, սակայն ոչ բացարձակապես բոլոր դեպքերում, համեմատական:
2. Պետք է հիմնավորել, որ այդ տարբերակված վերաբերմունքը կամ, երբ անհրաժեշտ է եղել, տարբերակված վերաբերմունքի բացակայությունը ողջամտորեն և օբյեկտիվորեն հիմնավորված չէ: Այն կհամարվի ողջամտորեն և օբյեկտիվորեն հիմնավոր այն պարագայում, երբ.
  - ինդրո առարկա կանոնը կամ գործելաոճը հետապնդում է իրավաչափ նպատակ.
  - այդ նպատակին հասնելու համար ընտրված միջոցը կամ միջոցները (այսինքն՝ այն միջոցը, որը հանգեցրել է տարբերակված վերաբերմունքի, կամ հակառակը) համաչափ և անհրաժեշտ են այդ նպատակին հասնելու համար: Իսկ համաչափությունը պարզելու համար անհրաժեշտ է համոզվել, որ կրած բացասական հետևանքները, վնասը հնարավոր նվազագույնն են, որը կարող է առաջանալ իրավաչափ նպատակին հասնելու համար, և որ իրավաչափ նպատակը բավականաչափ կարևոր են այդ աստիճանի միջամտությունն արդարացնելու համար:

Խտրականության առանձին տեսակների ապացուցման առանձահատկություններն ու տարրերը կարող եք տեսնել վերը՝ [խտրականության տեսակների](#) քննարկման ներքո: Խտրականության չենթարկվելու իրավունքի խախտումն ապացուցելու համար կարևոր նշանակություն ունեն ևսն ապացուցման շեմի և ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունները:

213. Իրավական պաշտպանության եղանակները խտրականության գործերով: Ձեռնարկ: Ա. Ղազարյան: 2015, <https://rm.coe.int/168048a700>

214. Guide on Article 14 of the European Convention on Human Rights and on Article 1 of Protocol No. 12 to the Convention. Prohibition of discrimination. Council of Europe/European Court of Human Rights, 2022, [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_14\\_Art\\_1\\_Protocol\\_12\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_14_Art_1_Protocol_12_ENG.pdf)  
Handbook on European non-discrimination law. 2018 edition, [https://www.echr.coe.int/Documents/Handbook\\_non\\_discrim\\_law\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Handbook_non_discrim_law_ENG.pdf)

## Ապացուցման բեռի բաշխումը

Խտրականության դեպքերով ապացուցման բեռի բաշխման կանոնի համաձայն՝ անձը, որը գտնում է, որ ինքը ենթարկվել է խտրականության, պարտավոր է ներկայացնել փաստեր (տարբերակված վերաբերմունք, պաշտպանված հիմք, հաճախ՝ համեմատական և իրավիճակի ու արդյունքի անհավասարություն), որոնցից կարելի է ենթադրել, որ տեղի է ունեցել խտրականություն (ի ցույց դնել *prima facie* խտրականության փաստը):

Արդյունքում ձևավորվում է խտրականության կանխավարկած: Խտրականության կանխավարկածը կարելի է ձևավորել նաև վիճակագրական տվյալների, հետազոտությունների, հանրային հրապարակումների և նմանօրինակ այլ միջոցներով: Խտրականության կանխավարկած ձևավորելուն հաջորդում է ապացուցման բեռի տեղափոխումը: Ապացուցման բեռը տեղափոխվում է, և այն կրում է անձը, որը ենթադրաբար պատասխանատու է խտրականության ենթարկելու համար: Ենթադրյալ խտրականության ենթարկած անձը պարտավոր է հիմնավորել, որ տարբերակված վերաբերմունքը կամ, անհրաժեշտության դեպքում, տարբերակված վերաբերմունք չցուցաբերելը չի եղել խտրական: Նա դա կարող է անել՝ հիմնավորելով, որ առկա չէ կապ տարբերակված մոտեցման և պաշտպանված հիմքի միջև, այսինքն՝ վերաբերմունքը պայմանավորված չի եղել խտրականության պաշտպանված հիմքով, կամ թեև այն ունեցել է կապ պաշտպանված հիմքի հետ, սակայն ունի ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում: Խտրականությունը համարվում է ապացուցված, եթե ենթադրյալ խտրականության ենթարկած անձին չի հաջողվում ապացուցել այս հանգամանքներից որևէ մեկը:

Ապացուցման բեռի այս կանոնը որպես կանոն չի գործում քրեաիրավական դեպքերի քննության համատեքստում, որտեղ գործում է անմեղության կանխավարկածի կանոնը:

Ապացուցման բեռի բաշխման կանոնի բացակայությունը իրավահամակարգում կարող է հանգեցնել խտրականության դեպքերի ապացուցման լրացուցիչ դժվարությունների և հաճախ դրա անհնարինության:

Այսպես, օրինակ, *Ք. Ավագյանն ընդդեմ «Ելփիհի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քաղաքացիական գործով*, որում հայցվորը պնդել է, որ իրեն ազատել են աշխատանքից՝ պայմանավորված իր կրոնական համոզմունքներով, ՀՀ առաջին ատյանի դատարանը առաջնորդվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոնով, որը չի նախատեսում ապացուցման բեռի տեղափոխում: Համաձայն դրա՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, ուստի կրոնական հատկանիշով խտրականության փաստի առկայության ապացուցման բեռը դատարանը դրել է գործով հայցվորների վրա<sup>215</sup>:

215. Ք. Ավագյանն ընդդեմ «Ելփիհի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, թիվ ԱՎԴ4/0043/02/19 քաղ. գործով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռ, 11.11.2020, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=27303072741031460](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741031460)

Ցավոք, նմանօրինակ եզրակացության է եկել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ, ինչ վերաբերում է «հղիության կապակցությամբ իր նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելու մասին հայցվորի փաստարկներին, ապա միայն հղի լինելու և աշխատանքից ազատվելու իրադարձությունների իրար հաջորդելը չեն կարող հաստատել խտրականության առկայությունը, քանզի ինչպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, այնպես էլ տվյալ պարագայում աշխատողի նկատմամբ խտրականություն դրսևորելը պետք է ապացուցվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, ինչը տվյալ դեպքում չի հիմնավորվել»<sup>216</sup>: Տվյալ դեպքում, ըստ միջազգային չափորոշի, անհրաժեշտ կլինեք, որ գործատուն ապացուցեր՝ հղի կնոջն աշխատանքից ազատելը չի եղել խտրական ու պայմանավորված վերջինիս հղիությամբ, ոչ թե հղի կինն ապացուցեր, որ աշխատանքից իր ազատումը պայմանավորված է եղել իր հղիությամբ:

### **Հարցեր լսարանին**

1. Ինչպե՞ս են կանխակալությունները ազդում հավասարության իրավունքի պաշտպանության վրա:
2. Ի՞նչ ազդեցություն ունեն հավասարության տեսությունները հավասարության իրավունքի զարգացման վրա, ինչպե՞ս է արտահայտվում այդ ազդեցությունը: Խնդրում ենք բերել օրինակներ:
3. Որո՞նք են հավասարության իրավունքի պաշտպանության հարցում պետության հիմնական պարտավորությունները:

## **5.5. Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք**

### **Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի հիմքերը**

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը ժամանակակից աշխարհում անընդհատ վերաիմաստավորվող և նոր բովանդակություն ստացող իրավունքներից է: Փաստացի այս իրավունքի ծագումը և զարգացումը, ինչպես և մնացած այլ իրավունքներինը, ընթացել է պետական կարգավորումների սահմանափակման և անհատի պաշտպանությունը պետության անհարկի և կամայական միջամտություններից պաշտպանելու համատեքստում: Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ

216. «Ինթելիգենթ Դիջիթլ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.11.2020 թվականի որոշման դեմ: 10.12.2021 թ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162372>

հարգանքը ժողովրդավարական հասարակության կարևորագույն բաղադրիչներից է և անձի երջանկության կարևորագույն հիմքերից: Այս իրավունքը իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության **հոդված 31**-ում:

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Միե՛Կ-ի 8-րդ հոդվածը ևս ամրագրում է այս իրավունքը:

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Ինչպես տեսնում ենք, Միե՛Կ-ի 8-րդ հոդվածը, ի հավելումն սահմանադրական դրույթի, ամրագրում է նաև **բնակարանի և նամակագրության** անձեռնմխելիությունը: ՀՀ Սահմանադրությունը ևս ամրագրում է իրավունքի այս բաղադրիչները, սակայն առանձին հոդվածներով:

### **Հոդված 32. Բնակարանի անձեռնմխելիությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր:

### **Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանա-

փակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը լավագույնս կարելի է բացահայտել՝ հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տրամաբանության վրա: Իրավունքի կառուցվածքը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝ **անձնական կյանք, ընտանեկան կյանք, բնակարանի անձեռնմխելիություն և նամակագրություն (հաղորդակցություն)**: Ստորև կներկայացնենք յուրաքանչյուր բաղադրիչն առանձին:

## Անձնական կյանք

Ի՞նչ ենք հասկանում անձնական կյանք ասելով: Իրավունքի լավագույն մեկնաբանությունը տալիս են դատարանները, երբ այն կիրառում են այս կամ այն կոնկրետ իրավիճակների նկատմամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այս առումով կարևորագույն դեր է ստանձնել: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ *անձնական կյանք* հասկացությունը ներառում է հարցերի և ոլորտների բավականին լայն շրջանակ: Յուրաքանչյուրն իրավունք ունի ազատորեն ընտրելու իր անհատականության զարգացումը և իրացումը: ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ *անձնական կյանք* հասկացությունը չի կարող սահմանափակվել միայն այն ներքին շրջանակով, որի սահմաններում անհատը ապրում է իր անձնական կյանքը, ինչպես կամենում է, և ամբողջովին բացառելով արտաքին միջամտությունը այդ շրջանակին: Ըստ դատարանի՝ անձնական կյանքը ներառում է նաև այլ մարդկանց հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու իրավունքը<sup>217</sup>:

ՄԻԵԴ-ն առանձնացրել է հարաբերությունների այն տեսակները, որոնք դուրս են *ընտանեկան կյանք* հասկացության շրջանակներից, պաշտպանվում են որպես մասնավոր կյանք, օրինակ՝

- խնամատար ծնողների և երեխայի միջև հարաբերությունները,
- դեռևս ամուսնության մեջ չգտնվող անձանց հարաբերությունները,
- նույնասեռական զույգի հարաբերությունները:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ որոշ գործնական հարաբերություններ ևս կարող են հադիսալալ անձնական կյանքի բաղկացուցիչ մաս<sup>218</sup>: *Անձնական կյանք* հասկացության մեջ

217. Niemetz v. Germany, Judgement of 16 December 1992, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57887>

218. Նույն տեղում:

մտնում են նաև անհատական տվյալները, որոնց պաշտպանությունը երաշխավորվում է Հոդված 8-ով: Պետական պաշտոնատար անձանց կողմից անհատի մասին տվյալներ հավաքելը, առանց անձի համաձայնության, միշտ վերաբերում է անձի անձնական կյանքին, օրինակ՝ մարդահամարը, որը ենթադրում է սեռի, ամուսնական վիճակի, ծննդավայրի և այլ անհատական տվյալների հավաքում (X v. United Kingdom, 6 October 1982), կամ մատնահետքի, լուսանկարի և այլ անհատական տվյալների հավաքումը ոստիկանության կողմից, եթե նույնիսկ ոստիկանության տվյալների բազան գաղտնի է (Murray v. the United Kingdom, Judgment of 28 October 1994; Leander v. Sweden, Judgment of 26 March 1987), բժշկական տվյալների հավաքումը և պահպանումը, հարկային մարմինների պահանջով եկամուտների չափը բացահայտելը, անհատական նույնականացման համակարգը, օրինակ՝ առողջապահական, սոցիալական և հարկային ծառայությունների սպասարկման համար գործող համակարգերը:

Անձի անունը ևս անձնական կյանքի բաղկացուցիչ մաս է, չնայած որ անվան մասին որևէ հիշատակում չկա Հոդված 8-ի տեքստում: Անունը անձնական անհատականացման միջոց է և այդպիսով ուղղակի վերաբերում է անձնական կյանքի ոլորտին՝ անկախ այն հանգամանքից, որ առկա է անունները կանոնակարգելու հանրային շահ (Stjerna v. Finland, Judgment of 25 November 1994):

ՄԻԵԴ-ը *X and Y v. Netherlands* գտել էր, որ *անձնական կյանք* հասկացությունը ներառում է անձի ֆիզիկական և բարոյական ամբողջականությունը՝ քննարկելով մտավոր հաշմանդամություն ունեցող կնոջ նկատմամբ կատարված բռնությունը<sup>219</sup>: ՄԻԵԴ-ն ունի բավականին ամբողջական նախադեպային իրավունք, համաձայն որի՝ ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունը անձնական կյանքի բաղկացուցիչ մաս է: Անձի սեռական կյանքը ևս անձնական կյանքի բաղկացուցիչ մաս է:

Անձնական կյանքի բաղկացուցիչ մաս է նաև մասնավոր հաղորդակցությունը: Քողարկված տեխնոլոգիաների օգնությամբ մասնավոր հաղորդակցությանը միջամտելը տեղավորվում է *մասնավոր կյանք* հասկացության շրջանակում: Ընդ որում, որևէ նշանակություն չունի, թե ինչ բնույթի է հաղորդակցությունը կամ հեռախոսային կապը: Օրինակ՝ «Ա-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*A. v. France*) գործով կառավարությունն առարկել էր՝ պնդելով, որ սպանության կատարմանը վերաբերող խոսակցությունը չի կարող վերաբերել անձնական կյանքին, սակայն հանձնաժողովը եզրակացրեց, որ այն հանգամանքը, որ խոսակցությունը վերաբերում էր հանրային շահին, չի զրկում դրան անձնական բնույթից<sup>220</sup>:

Այսպիսով, *անձնական կյանք* հասկացությունը ներառում է ֆիզիկական, հոգեկան, բարոյական անձեռնմխելիությունը, վերարտադրողական իրավունքները, հարկադիր բուժմանն առնչվող հարցեր, հոգեկան հիվանդություններին առնչվող հարցեր, բժշկական օգնություն և բուժում և շատ այլ ոլորտներ:

219. X and Y v. Netherlands, Application no. 8978/80, Judgment, 26 March 1985, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57603>

220. A v. France, Judgement 23 November 1993, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57848>

## Ընտանեկան կյանք

Ակնհայտորեն *ընտանեկան կյանք* հասկացությունն Էական զարգացում է ապրել 1950 թ.-ից ի վեր, երբ ընդունվել էր ՄԻԵԿ-ը: Երբ խոսքը գրանցված ամուսնությունների մասին է, ապա սովորաբար դրանք ունենք բավարար չափի բովանդակություն, որպեսզի համարվեն ընտանեկան կյանք<sup>221</sup>, ի տարբերություն, օրինակ, ֆիկտիվ ամուսնությունների, որոնք քաղաքացիություն ստանալու կամ միգրացիոն վերահսկողությունից խուսափելու նպատակ են հետապնդում<sup>222</sup>: Այն դեպքերում, երբ զույգի ամուսնությունը գրանցված չէ, պարզելու համար, թե արդյոք հարաբերությունները կարող են որակվել իբրև ընտանեկան կյանք, հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. արդյոք զույգն ապրում է համատեղ, հարաբերությունների տևողությունը, և արդյոք նրանք հաստատել են միասին լինելու կամքը երեխա ունենալու կամ որևէ այլ ճանապարհով:

Նույնասեռական զույգերի միջև հարաբերությունները ևս կարող են պաշտպանվել *ընտանեկան կյանք* հասկացության տրամաբանության շրջանակներում, չնայած նրան, որ երկար տարիներ հանձնաժողովը և ՄԻԵԿ-ը չէին դիտարկում նույնասեռական զույգի հարաբերությունները որպես ընտանեկան կյանք, այլ համարում էին անձնական կյանքի դրսևորվման ձև: ՄԻԵԿ-ի նախադեպային որոշումներով հաստատվել է, որ նույնասեռական զույգերը ևս կարող են դիտարկվել *ընտանեկան կյանք* եզրույթի ներքո<sup>223</sup>: *Ընտանեկան կյանք* հասկացությունը ներառում է նաև այնպիսի իրավիճակներ, երբ ընդհանրապես առկա է համատեղ բնակություն, օրինակ՝ ծնողի և զավակի հարաբերությունները, նույնիսկ եթե երեխան արտաամուսնական է<sup>224</sup>: Հետաքրքիր է, որ Հոդված 8-ի պաշտպանությունը տարածվում է այն դեպքերի վրա, երբ ծնողներից մեկի կապը երեխայի հետ խաթարվում է, օրինակ՝ Keegan v. Ireland գործով դիմումատուի դուստրը ուղարկվել էր մանկատուն որդեգրման նպատակով՝ առանց դիմումատուի հոր համաձայնության կամ իմացության: Այս գործով ՄԻԵԿ-ը գտել է, որ, չնայած այն հանգամանքին, որ հայրը և դուստրը հանդիպել էին միայն մեկ անգամ, այնուամենայնիվ, հոր և դստեր միջև հնարավոր ընտանեկան կյանքը պաշտպանվում է Հոդված 8-ի շրջանակներում, ի թիվս այլնի, նաև այն հանգամանքի ուժով, որ դիմումատուն և մայրը եղել են սիրային հարաբերությունների մեջ և պլանավորել են հղիությունը, սակայն երեխայի ծնվելու պահին արդեն բաժանված են եղել<sup>225</sup>: Ի տարբերություն այս իրավիճակի՝ մեկ այլ գործով՝ Ahrens v. Germany, ՄԻԵԿ-ը եզրակացրեց, որ դիմումատուի և իր դստեր միջև գոյություն չունի ընտանեկան հարաբերություն, քանի որ երեխան արդյունք է լոկ սեռական կապի, և երեխայի ծննդից առաջ կենսաբանական ծնողները չէին պլանավորել և մտադիր չէին ընտանիք ստեղծել և երեխա ունենալ<sup>226</sup>: Փաստացի այստեղ եզրակացությունն այն է, որ ծնողի և երեխայի միջև միայն կենսաբանական կապը բավարար չի կարող լինել ընտանեկան կյանքի առկայության մասին եզրակացություն անելու համար: Ընտանեկան

221. Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom, Judgement (1985)

222. Benes v. Austria, No. 18643/91, <https://hudoc.echr.coe.int/rus/?i=001-170149>

223. Schalk and Kopf v. Austria (2010), <https://hudoc.echr.coe.int/?i=001-99605>, Gas and Dubois v. France (2012), <https://hudoc.echr.coe.int/?i=001-109572>, X and Others v. Austria (2013), <https://hudoc.echr.coe.int/?i=001-116735>, Vallianatos and others v. Greece (2013), <https://hudoc.echr.coe.int/?i=001-128294>

224. Boughenami v. France, Judgement of 7 August 1996; Ahmut v. the Netherlands, Judgment of 28 November 1996, <https://hudoc.echr.coe.int/?i=001-58002>

225. Keegan v. Ireland, Judgment of 26 May 1994, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57881>

226. Ahrens v. Germany (2012), <https://hudoc.echr.coe.int/?i=001-109815>



կյանք է համարվում որդեգրված երեխայի և որդեգրող ծնողների միջև կապը կամ սուրճատ մորից ծնված երեխայի և օրինական ծնողների միջև կապը:

Եղբայրների և քույրերի միջև հարաբերությունները, հորեղբոր, քեռու և զարմիկների միջև հարաբերությունները, տատիկի/պապիկի և թոռնիկի միջև հարաբերությունները ընտանեկան կյանք են<sup>227</sup>: Սակայն որոշ իրավիճակներում կենսաբանական կապը առավել առաջնային դեր կարող է կատարել ընտանեկան կյանքը որոշելու համար, օրինակ՝ այն իրավիճակում երբ ծնողները ապրել են սուրճատ ծնողից ծնված երեխայի հետ, սակայն հետագայում պարզվել է, որ երեխան չունի որևէ կենսաբանական կապ ծնողներից ոչ մեկի հետ: Չնայած այն հանգամանքին, որ ծնողները պլանավորել էին երեխային, և նրանց միջև առկա էր եղել Էմոցիոնալ կապ, այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ի Մեծ պալատը գտել է, որ այս պարագայում ընտանեկան կապը բացակայում է՝ կենսաբանական կապի չլինելու և հարաբերությունների կարճ լինելու պատճառով<sup>228</sup>: Դատարանը նաև չի թույլատրում օգտագործել Հոդված 8-ը, երբ առկա են բացասական դրսևորումներ, օրինակ՝ *Evers v. Germany* գործով, որտեղ, չնայած հաշմանդամություն ունեցող երեխայի և ծնողի միջև կենսաբանական կապին և համատեղ բնակության հանգամանքին, Դատարանը եզրակացրեց, որ առկա չէ ընտանեկան կյանք, քանի որ ծնողի կատարած սեռական բռնության պատճառով ազգային դատարանը որոշել էր արգելել ծնողի շփումը երեխայի հետ:

Կարևոր է նշել, որ այն դեպքերում, երբ դատարանը գտնում է, որ առկա չէ ընտանեկան կյանք, միևնույն է, ինդրո առարկա հարաբերությունների նկատմամբ պաշտպանությունը կարող է տարածվել անձնական կյանքի տրամաբանության շրջանակում:

## Բնակարան

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը ներառում է նաև բնակարանի պաշտպանությունը, այլ կերպ ասած՝ այն տարածքի, որտեղ զարգանում են ընտանեկան և անձնական հարաբերությունները<sup>229</sup>: Այս իրավունքի տեսանկյունից այս կամ այն տարածքը որպես բնակարան բնորոշելու համար անհրաժեշտ է ապացուցել որոշակի տևական կապը անձի և տվյալ վայրի հետ<sup>230</sup>: Կարևոր է նշել, որ բնակարան չի նշանակում միայն անձին սեփականության իրավունքով պատկանող կամ նրա կողմից վարձակալվող բնակարանը, այլ նաև որևէ բնակարան, որտեղ անձը փաստացի ապրում է տևական ժամանակաշրջան<sup>231</sup>: Նաև պետք է հասկանալ, որ հայերենում *բնակարան* հասակացությունը պետք է լայն հասկանալ, օրինակ՝ Կոնվենցիայի ֆրանսերեն պաշտոնական տեքստում օգտագործվում է *domicile* հասկացությունը, իսկ անգլերեն պաշտոնական տեքստում *home* եզրը:

227. *Moustaquim v. Belgium* (1991); *Boyle v. UK* (1994); *Marckx v. Belguim* (1979); *Prince v. UK* (1988)

228. *Paradiso and Campanelli v. Italy* (2017), GC, <https://hudoc.echrcoe.int/?i=001-170359>

229. *Giacomelli v. Italy* (2006), <https://hudoc.echrcoe.int/?i=001-77785>

230. *Winterstein and others v. France* (2013), <https://hudoc.echrcoe.int/?i=001-162706>

231. *Prokopovich v. Russia*, <https://hudoc.echrcoe.int/?i=001-67538>

*Քնակարան* հասկացությունը պարտադիր չէ, որ նշանակի ավանդական իմաստով տունը կամ բնակարանը, այլ կարող է ներառել, օրինակ, վագոնատնակները կամ ոչ ստացիոնար այլ կացարանները<sup>232</sup>: Այն կարող է ընդգրկել նաև որևէ տարածքում կառուցված հյուղակները կամ տնակները, նաև վերաբերի երկրորդային բնակության վայրերին, ինչպիսիք են ամառանոցները<sup>233</sup>:

*Քնակարան* հասկացությունը կարող է ներառել նաև գրասենյակը, քան որ անձնական կյանքին առնչվող հարաբերություններ կարող են իրականացվել նաև գրասենյակային տարածքից, և այդ պարագայում *քնակարան* հասկացությունը կիրառելի է նաև նման տարածքների նկատմամբ<sup>234</sup>:

### **Նամակագրություն (հաղորդակցություն)**

Նամակագրության գաղտնիությունը անհրաժեշտ է հասկանալ առավել լայն իմաստով, ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ցանկացած հաղորդակցություն՝ անկախ այդ հաղորդակցության բովանդակությունից<sup>235</sup>: Նամակագրության պաշտպանությունը տարածվում է նաև անազատության մեջ գտնվող անձանց նամակագրության նկատմամբ<sup>236</sup>: Ինչպես վերևում արդեն նշվեց, հաղորդակցության ձևաչափը և ձևը որևէ նշանակություն չունեն, և 8-րդ հոդվածի տրամաբանությամբ պաշտպանության տակ են ընկնում նաև ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հաղորդակցությունները, ներառյալ խելախոսներից (smart-phones) ստացվող տվյալները, էլեկտրոնային փոստը, համացանցի օգտագործումը, համակարգչային սերվերների վրա պահպանվող տվյալները<sup>237</sup>:

### **Պետության պարտավորությունները**

Յուրաքանչյուր մարդու իրավունք առաջին հերթին ենթադրում է պետության որոշակի պարտավորություններ, որոնց իմաստն է ապահովել և երաշխավորել այս կամ այն մարդու իրավունքի իրացումը և պաշտպանությունը: ՄԻԵԴ-ի կողմից նախադեպային իրավունքի միջոցով սահմանվել է, թե պետությունն ինչ տեսակ պարտավորություններ է ստանձնում, հիմնականում դրանք կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝ նեգատիվ պարտավորություններ, պոզիտիվ պարտավորություններ և ընթացակարգային պարտավորություններ:

232. Chapman v. the United Kingdom [GC], 2001, §§ 71-74, <https://hudoc.echr.coe.int/?i=001-59154>

233. Demades v. Turkey, §§ 32-34, <https://hudoc.echr.coe.int/?i=001-61272>

234. Niemetz v. Germany (1992), <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57887>, Petri Sallinen and Others v. Finland (2005), <https://hudoc.echr.coe.int/?i=001-70283>

235. Michaud v. France (2012), <https://hudoc.echr.coe.int/?i=001-115055>

236. Silver and Others v. the United Kingdom, § 84, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57577>

237. Halford v. UK (1997), <https://hudoc.echr.coe.int/?i=001-58039>; Taylor-Sabori v. UK (2002), <https://hudoc.echr.coe.int/?i=001-60696>; Copland v. UK (2007), <https://hudoc.echr.coe.int/?i=001-79996>; Kennedy v. UK (2010), <https://hudoc.echr.coe.int/?i=001-98473>

## Նեգատիվ պարտավորություններ

Պետություններն առաջնային կերպով պարտավոր են ձեռնպահ մնալ անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ ցանկացած ոտնձգությունից: Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի շրջանակներում պետության նեգատիվ պարտավորության խախտման դասական օրինակներ են, երբ պետական մարմինները հավաքում և պահում են անհատական տվյալներ, անձը ազատվում է զինվորական ծառայությունից նույնասեռական լինելու հիմքով, երբ միգրանտը արտաքսվում է և այլն: Այս պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում պետության կողմից իրավունքին միջամտելը հանգեցնելու է դրա խախտման: Դիմումատուն է կրում պետության կողմից միջամտության փաստը ապացուցելու պարտականությունը և ապացուցման շեմը բավականին բարձր է՝ «ողջամիտ կասկածից վեր»<sup>238</sup>: Այսինքն՝ դիմումատուն պետք է ներկայացնի անհրաժեշտ քանակի ապացույցներ՝ հիմնավորելու, որ պետությունը խախտել է իր նեգատիվ պարտավորությունը:

Պետությունը կարող է միջամտել անձնական և ընտանեկան կյանքի իրավունքին, եթե ապահովում է երեք պայմանների միաժամանակյա պահպանումը՝ *օրենքի հիման վրա, իրավաչափ նպատակ է հետապնդում և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում*:

Ի՞նչ է նշանակում *օրենքի հիման վրա* կամ *օրենքով նախատեսված*: Նախ այս պահանջը նշանակում է, որ պետական մարմնի ցանկացած միջամտություն անձի իրավունքին պետք է լինի օրենքի համաձայն: ՄԻԵԴ-ը հստակ նախադեպային իրավունք ունի, համաձայն որի՝ սահմանվում են օրենքի որակին ներկայացվող պահանջներ՝ օրենքը պետք է լինի բավարար չափով հստակ, հասկանալի և կանխատեսելի՝ բավարարելով որոշակիության չափանիշները և իրավունքի գերակայության սկզբունքի պահանջները<sup>239</sup>: Հստակության պահանջը վերաբերում է օրենքի այն հատվածին, որը սահմանում է պետական պաշտոնատար անձանց գործելու իրավազորությունը, և պետք է հստակ սահմանագծվեն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործելու հայեցողության սահմանները:

Կանխատեսելիության տեսանկյունից օրենքները պետք է պարունակեն այնպիսի ձևակերպումներ, որոնք անձանց համար ողջամտորեն կանխատեսելի են դարձնում այն իրավիճակները և հանգամանքները, որոնց պայմաններում պետությունն իրավասու է միջամտելու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի իրացման հարցին<sup>240</sup>:

Համաձայն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պետության միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, այն է՝ միջամտությունը պետք է լինի «ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների և հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և

238. Nuri Kurt v. Turkey (2005), <https://hudoc.echr.coe.int/?i=001-71341>

239. Silver and others v. United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57577>, Lebois v. Bulgaria, <https://hudoc.echr.coe.int/?i=001-177698>

240. Fernández Martínez v. Spain [GC], <https://hudoc.echr.coe.int/?i=001-145068>

ազատությունների պաշտպանության նպատակով»: Օրինակ՝ ՄԻԵԴ-ը գտել է, որ դիմումատուի՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններ կատարելու համար կասկածվող բանտի պետի հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելը, դրանք պահելը և դատաքննության ընթացքում ներկայացնելը չեն առաջացնում իրավունքի խախտում, քանի որ հետապնդում են հանցագործության կանխարգելման իրավաչափ նպատակ<sup>241</sup>:

## Պոզիտիվ պարտավորություններ

Կոնվենցիոն պարտավորություններն իրենց բնույթով նաև լինում են պոզիտիվ, այսինքն՝ կարող են ենթադրել որոշակի գործողության կատարում պետության կողմից, որոնց նպատակն է երաշխավորել սահմանված իրավունքի իրացումը: Օրինակ՝ *Marckx v. Belgium* գործով դատարանը հայտնել է հետևալ կարևոր իրավական դիրքորոշումը.

«Հոդվածի (8-րդի - նշումը մերն է) նպատակը հիմնականում անհատին պետական պաշտոնյաների կողմից անհարկի միջամտություններից պաշտպանելն է .... Այնուամենայնիվ, այն պարզապես միայն չի պարտավորեցնում պետությանը ձեռնպահ մնալ նման միջամտությունից. ի հավելումս այս առաջնային նեգատիվ պարտավորության՝ կարող են նաև լինել պոզիտիվ պարտավորություններ, որոնք անհրաժեշտ են ընտանեկան կյանքի նկատմամբ արդյունավետ հարգանք ապահովելու համար»:<sup>242</sup>

Այս գործով մասնավորապես խոսքը ներպետական իրավական կարգավորումների և օրենսդրության ընդունման մասին էր՝ միտված երեխայի ծննդի պահից նրա՝ ընտանիքում ինտեգրվելու համար անհրաժեշտ պայմաններ ապահովելուն: Մեկ այլ գործով *Դատարանը* եզրակացրել է, որ մերկ երեխային գաղտնի նկարահանելու արգելքը քրեականացնող նորմի բացակայությունը անձնական կայնքի իրավունքի խախտում է<sup>243</sup>:

Պոզիտիվ պարտավորությունների օրինակներ կարող են նաև լինել այն դեպքերը, երբ պետությունը անգործություն է դրսևորում: Այսպես, այն դեպքում, երբ պետությունը մերժել էր անձին տրամադրել տեղեկատվություն իր՝ երեխա ժամանակ տեղական իշխանությունների ինսամքի տակ գտնվելու տևողության վերաբերյալ, *Դատարանը* գտել է, որ առկա է անձնական կյանքի իրավունքի խախտում<sup>244</sup>:

241. *Adomaitis v. Lithuania*, Application no. [14833/18](https://hudoc.echr.coe.int/?i=001-128043), Judgment, 18 January 2022.

242. *Marckx v. Belgium* (1979), para. 31, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57534>

243. *Söderman v. Sweden* [GC], § 85, <https://hudoc.echr.coe.int/?i=001-128043>

244. *Gaskin v. UK* (1989), <https://hudoc.echr.coe.int/?i=001-57491>

## Ընթացակարգային պարտավորություններ

Չնայած այն հանգամանքին, որ 8-րդ հոդվածը չի պարունակում ընթացակարգային բաղադրիչ, այնուամենայնիվ, որոշ իրավիճակներում Դատարանը կարևորել է ընթացակարգային երաշխիքների ապահովումը, քանի որ այդ ընթացակարգային երաշխիքներն իրենց ազդեցությունն են ունենում անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի տարբեր բաղադրիչների վրա: Այստեղ հատկապես խոսքը երեխայի խնամքի վերաբերյալ ընթացակարգերի, վտարումների և բնապահպանական հարցերի մասին է<sup>245</sup>:

Այս ընթացակարգային երաշխիքները իրենց էությունը նույնանում են ՄԻԵԿ-ի հոդված 6-ում ամրագրված արդարացի դատաքննության երաշխիքներին: Եվ վերը նշված դեպքերում շատ կարևոր է պատշաճ ընթացակարգի ապահովումը, որպեսզի ուսումնասիրվեն հարցի բոլոր կողմերը, լսվեն բոլոր շահագրգիռ կողմերը, և արդյունքում կայացվի կշռադատված որոշում: Այս տրամաբանությամբ ցանկացած ընթացակարգային խախտում առաջ է բերում նաև որոշակի ազդեցություն պաշտպանվող իրավունքների վրա: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է պահպանել անհրաժեշտ հավասարակշռությունը:

### Հարցեր լսարանին

1. Որո՞նք են անձնական կյանքի հիմնական բաղադրիչները:
2. Բերե՞ք պետության կողմից անձնական և ընտանեկան կյանքի իրավունքին իրավաչափ միջամտության մի քանի օրինակ:

## 5.6. Արդար դատաքննության իրավունք

Այս գլխում ներկայացվում են մարդու՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի էությունը, դրա տարրերը, ինչպես նաև՝ դատարանի՝ որպես այդ իրավունքի հասցեատիրոջը վերագրվող անօտարելի հատկանիշները: Առավել մանրամասն ուսումնասիրվում են անձի անմեղության կանխավարկածը, մեղադրյալի՝ ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքները, մրցակցության սկզբունքի էությունը և բովանդակությունը:

245. Neulinger and Shuruk v. Switzerland (2010), <https://hudoc.echr.coe.int/?i=001-99817>, McCann v. United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/?i=001-86233>, Guerra and others v. Italy (1998), <https://hudoc.echr.coe.int/?i=001-58135>

## Մարդու՝ դատարանի իրավունքը

Իրավունքի փիլիսոփայությունը, որի վրա հենվել են ՄԻԵԿ-ի հեղինակները, սահմանում է, որ քաղաքացիական հասարակության անդամը ունի իրավունք՝ դատարան փնտրելու և պարտականություն՝ կանգնելու դատարանի առջև և միայն դատարանի միջոցով ստանալու իր կողմից վիճարկվող իրավունքը<sup>246</sup>: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է հետևյալը.

**«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք...»:**

ՄԻԵԿ-ից բացի՝ դատարանը որպես մարդու՝ արդարություն պահանջելու և գտնելու իրավունքի հասցեատեր, բնորոշվում է վերաբերելի բոլոր միջազգային իրավական ակտերում, նաև ՀՀ Սահմանադրության մեջ: Մասնավորապես.

- *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ընդունվել է 1948 թ.-ի դեկտ. 10-ին) 10-րդ հոդվածը ամրագրում է՝*  
**«Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների ու պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք»:**
- *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ընդունվել է 1966 թ.-ի դեկտ. 16-ին) 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝*  
**«Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակային քննության իրավունք»:**
- *ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի (Արդար դատաքննության իրավունքը) 1-ին մասի համաձայն՝*  
**«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:**

Ինչպես տեսնում ենք, ամենուր դատարանի հատկանիշներն ամրագրվում են՝ ելնելով նրա՝ քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի արդար դատաքննության իրավունքի **հասցեատերը** լինելու գաղափարից: Փաստորեն, սակայն, ՄԻԵԿ-ի և

246. Гегель, Философия права, էջ 258:

մեջբերված՝ Հայաստանի Հանրապետության համար պարտադիր մյուս միջազգային իրավական փաստաթղթերի տեքստից բխում է, որ մասնավորապես քրեական արդարադատության ոլորտում դատարանը բնորոշվում է որպես **միայն մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի հասցեատեր**՝ մի կողմ թողնելով հանցագործությունից տուժողին, ինչպես նաև ցանկացած հանցագործության համընդհանուր տուժող հանրությանը, որը դատարանում ներկայացված է ի դեմս հանրային մեղադրողի՝ մեղադրանքը պաշտպանող դատախազի: Այս բացն ընդունվել է նաև Եվրոպայի խորհրդի կողմից, որը տուժողի իրավունքների պաշտպանության մասին ընդունել է մի շարք կարևոր փաստաթղթեր՝ նշելով հետևյալը.

«Հաշվի առնելով, որ քրեական արդարադատության համակարգի նպատակները ավանդաբար ձևակերպվել են այն նորմերի տեսանկյունից, որոնք առաջին հերթին վերաբերում են պետության և իրավախախտի միջև հարաբերություններին.

Հաշվի առնելով, որ դրա հետևանքով նման համակարգի գործող մեխանիզմը կարող է վատթարացնել և ոչ թե թեթևացնել տուժողի խնդիրները ..., անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել տուժողի պահանջմունքներին քրեական դատավարության բոլոր փուլերում»<sup>247</sup>:

Այսինքն՝ տուժողի իրավունքները պետք է պաշտպանվեն՝ նրան ճանաչելով որպես արդար դատաքննության իրավունքի սուբյեկտ, իսկ դատարանն էլ՝ որպես **նաև նրա՝** այդ իրավունքի՝ օրենքի հիման վրա ստեղծված, լիազորված, մատչելի և անկախ հասցեատեր: Բավարար չէ, այսպիսով, որ սահմանվեն տուժողի իրավունքների պաշտպանության քրեադատավարական՝ թեկուզ և մեղադրյալի հետ «հավասար» երաշխիքներ: Մեթոդաբանական և պրակտիկ առումով այդ լիակատար հավասարությանը անհնար է հասնել, եթե դա կոչված են ապահովելու մի մարմին, որն իր իրավագոյությունը ստանում է միայն մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքը ապահովելու պահանջմունքից: **Պետք է ընդունել, այսպիսով, որ տուժողի արդար դատաքննության իրավունքը նույնքան բնական է, որքան և մեղադրյալինը:**

**Գլոբալ առումով դատարանը միջնորդավորում է մեղադրյալի և համընդհանուր տուժող հանրության շփումը, հարաբերությունը, և ոչ մի իրավունք, այդ թվում և՛ դատական քննության, արդար համարվել չի կարող, եթե դրա իրականացման արդյունքում չի ապահովվում մեղադրյալի և տուժողի միջև նշված հարաբերության արդարացի հանգուցալուծումը:**

## **Դատարանի հասկացությունը և հատկանիշները**

Սույն Ձեռնարկի սկզբում արդեն նշվեց, որ պետական մարմինների, այդ թվում՝ դատարանի իրավագոյությունը (լեգիտիմությունը), նրա լինելու և գործելու իրավունքը

247. "Резолюции и рекомендации Комитета министров Совета Европы об облегчении доступа к эффективному и справедливому правосудию", Доступ к правосудию, русская версия, Страсбург, 1997, էջ 19:

պայմանավորված են մարդու իրավունքների նկատմամբ դրանց **հասցեատիրոջամբ: Դատարանի դեպքում այդ իրավունքը յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքն է:** Նշվեց նաև, որ հենց այդ հասցեատիրոջան ուժով պետությանը և համապատասխան գործառույթներով օժտված մարմիններին վերագրվում են որոշակի պարտադիր հատկանիշներ կամ ատրիբուտներ, այն է՝ երևույթի անօտարելի հատկություններ, «առանց որոնց այն չի կարող ո՛չ գոյություն ունենալ, ո՛չ էլ պատկերացվել»:

Դատարանի դեպքում այդ ատրիբուտները (հատկությունները) պատկանում են դատարանին բացառապես որպես քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի՝ **«դատարանի իրավունքի»** հասցեատիրոջ:

«6-րդ հոդվածի կիրառումը ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական ոլորտում ենթադրում է «օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի կողմից... քննության» իրավունքը: Տվյալ դրույթով ամրագրվում է «դատարանի իրավունքը», որը ներառում է երեք տարր: Առաջին հերթին, անհրաժեշտ է օրենքի հիման վրա ստեղծված և անկախության ու անկողմնակալության չափանիշներին համապատասխանող դատարանի առկայությունը: Երկրորդ, դատարանը պետք է ունենա բավականին լայն լիազորություններ, որպեսզի որոշումներ ընդունի վեճի կամ մեղադրանքի բոլոր այն ասպեկտների վերաբերյալ, որոնց նկատմամբ կարող է կիրառվել 6-րդ հոդվածը: Վերջապես, մարդը պետք է դատարան դիմելու իրավունք ունենա»<sup>248</sup>:

Դատարանի դեպքում, այսպիսով, նշված ատրիբուտներն են՝ **օրենքի հիման վրա ստեղծված լինելը, լիազորվածությունը, մատչելիությունը և անկախությունը**, առանց որոնց դատարանը չի կարող իրացնել մարդու արդար դատաքննության իրավունքը, չի կարող գոյություն ունենալ և պատկերացվել:

**Այսպիսով, դատարանը պետք է բնորոշել որպես յուրաքանչյուր ոքի արդար դատաքննության իրավունքի՝ օրենքի հիման վրա ստեղծված, լիազորված, մատչելի և անկախ հասցեատեր:**

## Օրենքի հիման վրա ստեղծված դատարան

Ամենաընդհանուր ձևով օրինականությունը կարելի է սահմանել որպես գոյության իրավունք: Դատարանի օրինականությունը իրենից ներկայացնում է քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի՝ հենց օրինական դատարան փնտրելու, այսինքն՝ դիմելու և գտնելու իրավունքը: Դատարանը ստեղծվել է և կա, քանի որ կա այդ իրավունքի իրացման պահանջմունքը: Օրինականությունը դատարանի՝ որպես արդար դատական քննության հասցեատիրոջ բուն գոյությունն է որպես այդպիսին: Օրինակա-

248. Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство, Эндрю Гротрайан, Изд-во Совета Европы, 1994, էջ. 16:



նության և գոյության կատեգորիաները համընկնում են, քանի որ գոյություն ունեցող ամեն բան կա իր գոյության օրենքի ուժով: **Հենց այդ օրենքն է, որ երևույթը և մասնավորապես դատարանը դարձնում է ճանաչելի, բանական.**

«Օրենքները, որոնցով դրանք (ընտանիքը, քաղաքացիական հասարակությունը և պետությունը. - Դ.Խ.) կառավարվում են, սուկ դրանցում լուսարձակվող բանականի ինստիտուտներն են»<sup>249</sup>: «Մեծագույն ճշմարտությունը բնության մեջ այն է, որ օրենքն ընդհանրապես գոյություն ունի»<sup>250</sup>:

**Եվ քանի որ դատարանի օրինականությունը (գոյությունը) պայմանավորված է յուրաքանչյուր մարդու կողմից իր՝ արդար դատաքննության իրավունքն իրականացնելու անհրաժեշտությամբ, ուստի և այդ օրինականության ձևերը պայմանավորված են նրանով, թե կոնկրետացման ո՞ր աստիճանին է գտնվում արդար դատաքննության իրավունքը:**

Ինչպես և գոյություն ունեցող ամեն բան, դատարանը գոյություն ունի բացառապես համընդհանուրի, հատուկի և եզակիի դիալեկտիկական հարաբերության (միասնության) մեջ: Ելնելով իր կոնկրետացվածության աստիճանից՝ օրինականությունն, այսպիսով, ընկալվում է որպես դատարանի՝

- **լեգիտիմություն**՝ դատարանի իրավունքը՝ գոյություն ունենալու որպես այդպիսին ցանկացած գործով՝ գործերի անորոշ շրջանակից և դատավորի՝ օրենքով սահմանված կարգով և հիմքերով նշանակված լինելը.
- **իրավասություն**՝ դատարանի իրավունքը՝ գոյություն ունենալու որպես այդպիսին որոշակի շրջանակի գործերով, որոնք առանձնացված են՝ ըստ իրենց տարածքային և առարկայական ընդդատության հատկանիշների.
- **օբյեկտիվ անաչառություն**՝ դատարանի իրավունքը՝ գոյություն ունենալու որպես այդպիսին իրեն ընդդատյա տվյալ կոնկրետ գործով:

«Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքների» (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից Նոյեմբերի 29-ի և դեկտեմբերի 13-ի այսուհետ՝ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքների) 5-րդ կետի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատվելու ընդհանուր դատարանների կամ օրենքով հաստատված ընթացակարգերով ղեկավարվող տրիբունալների կողմից: Տրիբունալները, որոնք չեն ունենա իրավական գործընթացի պատշաճորեն հաստատված ընթացակարգեր, չպետք է ստեղծվեն ընդհանուր դատարանների կամ դատական տրիբունալների իրավասության ոլորտում գործելու համար»:

249. Гегель, Философия права, էջ 290:

250. Նույն տեղում, էջ 57:

Այստեղ խոսքը նաև արտակարգ դատարաններ ստեղծելու ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածով ամրագրված արգելքի մասին է.

- «1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:
2. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է»:

2018 թ.-ին հուլիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը (այսուհետ՝ «Դատական օրենսգիրք») մանրամասն կարգավորում է նշված դատարանների ստեղծման կարգը, լիազորությունները, ինչպես նաև դրանց դատավորների նշանակման գործընթացը:

**Այսպիսով, լեգիտիմությունը նշանակում է դատարանի՝ օրենքով նախատեսված լի-  
նեյրը, ինչպես նաև՝ օրենքով նախատեսված ձևով կազմավորվելը և դատավորի՝ նման  
դատարանում օրենքով նախատեսված հիմքերով և կարգով նշանակված լինելը:**

Անհրաժեշտ է շեշտել, որ օրինականության չափանիշներ են ոչ թե այս կամ այն պաշտոնատար անձի սուբյեկտիվ կարծիքը կամ ցանկությունը՝ գործը իրեն ընդդատյա լինելու կամ չլինելու կամ սեփական անաչառության առկայության կամ բացակայության մասին, այլ կոնկրետ գործի օբյեկտիվ հատկանիշները.

«Դատարանի իրավասությունը որոշվում է այն ... գործերի շրջանակով, որոնք ենթակա են տվյալ դատարանին, այսինքն՝ ընդդատյա են նրան: **Ընդդատություն է կոչվում գործի հատկությունը**, որի հիման վրա որոշվում է, թե որ դատարանն է իրավասու քննել և լուծել տվյալ գործը»<sup>251</sup>:

ՀՀ Դատական օրենսգրքի 3-6-րդ գլուխները մանրամասն կարգավորում են ՀՀ դատարանների առարկայական և տարածքային իրավասության հարցերը: Ընդդատությունը որոշվում է գործերի որոշակի տարածքային և առարկայական հատկանիշներով, որոնք օբյեկտիվ են և չեն փոփոխվում:

**Դատարանի անաչառությունը նշանակում է օրենքի հիման վրա ստեղծված և առարկայական ու տարածքային ընդդատության կանոններին համապատասխանող դատարանում օրենքին համապատասխան նշանակված դատավորի իրավունքը՝ լինելու դատավար տվյալ կոնկրետ գործով:** Սա բխում է պետության և դատարանի՝ անձի արդար դատաքննության իրավունքի նկատմամբ հասցեատիրության սկզբունքից և պայմանավորված է այդ իրավունքի մաս կազմող անաչառ դատարանի կողմից գործի քննության իրավունքով: Այսպիսով, **անաչառ դատարանի իրավունքը անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարան ունենալու իրավունքն է տվյալ**

251. М. С. Строгович, «Курс советского уголовного процесса, т. 1, М., Наука, 1968, էջ 267:

**կոնկրետ գործով** և չնայած որ ապահովվում է դատավարական երաշխիքներով, մասնավորապես ինքնաբացարկի ինստիտուտով, **իր Եությամբ կրում է դատարանակազմական, այլ ոչ թե դատավարական բնույթ:**

Դատական օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ»:

Այսպիսով, դատավորի անաչառության հիմքում ընկած է ողջամիտ դիտորդի կողմից դրա ընկալումը, որը դարձյալ Պրոտագորասի «բոլոր իրերի չափը հանդիսացող մարդու» դիրքերից որոշում է դրա առկայությունը կամ բացակայությունը: **Օբյեկտիվ անաչառության հիմքում ընկած է դրա տեսանելիությունը ողջամիտ դիտորդի համար:** Սրա Եությունն այն է, որ ցանկացած կողմնակի անձ, իբրև դիտորդ, կարող է, տեսնելով, թե ով է դատավորը, օբյեկտիվ հիմքերի առկայության դեպքում հիմնավոր կասկածներ ունենալ նրա անաչառության նկատմամբ:

## Լիազորված դատարան

Լիազորվածությունը որպես դատարանի ատրիբուտ հստակ ընդունվել է ՄԻԵԴ-ի կողմից, որը *Սրամենկն ընդդեմ Ավստրիայի գործով* 1984 թ.-ի հոկտեմբերի 22-ի վճռում բնութագրել է այն որպես *բուն դատարան* հասկացության անբաժանելի մասը<sup>252</sup>: **Լիազորվածության ատրիբուտի բովանդակությունը առավել ընդհանուր ձևով կարելի է բնորոշել որպես դատարանի իրավունքը՝ կայացնելու իր քննության առարկա դարձած հարցերով իրավաբանորեն պարտադիր որոշումները:** Այս առումով ՄԻԵԴ-ը նշված լիազորությունը համարում է նաև դատարանի անկախության երաշխիք. նույն *Սրամենկի* և այլ գործերով կայացված որոշումների համաձայն՝ դատարանը բնութագրվում է իր դատական գործառնությամբ, այն է՝ իրավական նորմերի հիման վրա և կազմակերպված դատաքննության ընթացքում **լուծելու իր ընդդատության ներքո գտնվող բոլոր հարցերը, և որ դատական մարմինը պետք է ունենա լիակատար իրավազորություն, ներառյալ բոլոր՝ փաստի և իրավունքի հարցերով վիճարկվող ցանկացած որոշում վերացնելու իրավունքը**<sup>253</sup>:

Դատարանը պետք է լիազորված լինի քաղաքացիական իրավունքի կամ քրեական մեղադրանքի ցանկացած հարցով կայացնելու վերջնական որոշում: **Այդ լիազորվածությունը դատարանի իրավունքն է և հետևաբար պարտականությունը՝ լուծելու այն բոլոր հարցերը, որոնք նա կարող է քննել: Եվ հակառակը՝ դատարանը կարող է քննել միայն այն հարցերը, որոնցով կարող է որոշում կայացնել**<sup>254</sup>:

252. Sramek v. Austria <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-57581%22%7D>, նաև՝ Morris v. the United Kingdom [2002] ECHR 162, para. 73; Findlay v. the United Kingdom [1997] ECHR 8, para. 77; Van de Hurk v. the Netherlands [1994] ECHR 14, para. 45.

253. Sramek v. Austria, para. 36.

254. Նույն տեղում:

«Դատական որոշումը լայն իմաստով ընդգրկում է այն բոլոր պատասխանները, որոնք դատական իշխանության կողմից տրվում են գործով ծագող և դատական քննության ենթակա որևիցե մի հարցով: *Որոշում* անվանումը վերապահված է դատական իշխանությունից ելնող պատասխաններին»<sup>255</sup>:

Լիազորվածության հատկությունից բխում է ևս երկու շատ կարևոր հանգամանք. 1) եթե դատարանը իրավասու է պարտադիր կատարման ենթակա որոշմամբ լուծելու իրեն ընդդատյա բոլոր հարցերը, ապա այն բոլոր հարցերը, որոնցով այն որոշում չի կայացնում, չենք կարող համարվել **դատարանի** կողմից քննված, և 2) իրեն ընդդատյա հարցի կամ գործի **դատական** քննության արդյունքում դատավորի մոտ ձևավորված համոզմունքը կարող է արտահայտվել միմիայն դատարանի՝ այդ հարցը կամ գործը լուծող վերջնական որոշմամբ:

Վերջին տեսակետից խնդրահարույց է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այն նորմը, որ եթե դատարանը, քննելով գործը, գտնում է, որ գործով կիրառման ենթակա օրենքը հակասում է Սահմանադրությանը, պետք է կասեցնի գործի քննությունը և դիմի Սահմանադրական դատարան՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար: **Դատարանի լիազորվածության ատրիբուտը, ինչպես նաև Սահմանադրության՝ ցանկացած վարույթ կարգավորող օրենսդրության բաղկացուցիչ մաս լինելը, ուղղակի պարտադիր են դարձնում դատարանի համար անմիջապես կիրառել Սահմանադրությունը և լուծում տալ գործին՝ սեփական համոզմունքին համապատասխան:** Հենց այդ պատճառով էլ «այն մարմինը, որն իրավասու է միայն խորհրդատվական բնույթի եզրակացություններ տալուն, դատարան չի հանդիսանում, անգամ եթե գոյություն ունի այդպիսի որոշումների կատարման պրակտիկա»<sup>256</sup>:

Վերջապես, դատարանի լիազորվածությունը նշանակում է, որ *դատարանի* կողմից կայացված որոշումները չեն կարող վերացվել կամ փոփոխվել դատարան չհանդիսացող մարմինների կողմից<sup>257</sup>: «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» ԵՄ ՆԿ 94/12 հանձնարարականի՝ *դատավորների անկախության 2-րդ ընդհանուր սկզբունքի համաձայն՝ դատավորների որոշումները ենթակա չեն վերանայման օրենքով նախատեսված բողոքարկման ընթացակարգերի շրջանակներից դուրս:*

## Մատչելի դատարան

### Դատարանի մատույցի իրավունքը

Ինչպես ՄԻԵԿ-ով երաշխավորված ցանկացած այլ իրավունքի դեպքում, ՄԻԵԿ-ը հստակ տարանջատում է իրավական և փաստացի մատչելիությունը՝ պարզելու համար, թե արդյոք տվյալ դեպքում դատարանի մատույցը (access to a court) եղել է գործնական

255. И. Я. Фойницкий, «Курс ...», т. 2, Еջ 341:

256. Նույն տեղում:

257. Van de Hurk v. the Netherlands, para. 45-52; Morris v. the United Kingdom, para. 73.

և արդյունավետ, այլ ոչ թե տեսական և պատրանքային<sup>258</sup>: Օրինակ՝ այդպիսին կարող է լինել անձին հնարավորություն տալը՝ ծանոթանալու գործով փաստաթղթերի հետ<sup>259</sup>, մասնավորապես՝ խիստ մասնագիտական լեզվով շարադրված փորձագետի եզրակացության հետ, որում տեղ գտած եզրույթները, դատողությունները և գործի լուծման համար նշանակություն ունեցող եզրահանգումները հասու չեն մեղադրյալին:

Բացի այդ, քանի որ խոսքը սահմանափակելի իրավունքների մասին է, անձը ունի դատարան, այդ թվում՝ վերադաս դատարան (այսինքն՝ բողոքով) դիմելու **իրավունքից հրաժարվելու իրավունք**: Այդ իրավունքից հրաժարումը (waiver of a right), սակայն, նույնպես գտնվում է ՄԻԵԴ-ի վերահսկողության ներքո. դատարան չդիմելը չպետք է հակասի հանրության շահերին և պետք է կատարվի միանշանակ կերպով՝ բավարար երաշխիքներ տրամադրելով դատարանին դիմելու իրավունքից հրաժարվելու պատճառների արդյունավետ քննության համար: Հրաժարումը չպետք է «արատավորված լինի ճնշմամբ»: Մասնավորապես՝ *Դեվիրն ընդդեմ Բելգիայի գործով* 1980 թ.-ի փետրվարի 27-ի վճռում նկարագրված իրավիճակում<sup>260</sup> անձը ստիպված էր եղել հաշտության համաձայնություն կնքել և կատարել պետական վճարում գտնելով, որ բողոքարկման դեպքում կրելու էր ֆինանսական բնույթի լուրջ զրկանքներ, այսինքն՝ դատարան դիմելու իրավունքից հրաժարվելը եղել էր ոչ թե կամովին, այլ «հարկադրանքով պարտադրված»՝ ի խախտումն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի պահանջների: Բացի այդ, իրավունքից հրաժարվելու դեպքում ստուգվում է նաև այն, թե որքանով են կանխատեսելի եղել անձի համար իր՝ իրավունքից հրաժարվելու, թեկուզ և ազատ կամահայտնության հետևանքները: Այս պահանջները կիրառելի են նաև ցանկացած այլ սահմանափակելի իրավունքից հրաժարվելու դեպքում, ընդ որում կամահայտնությունը կարող է կատարվել նաև գործողությամբ (օրինակ, եթե մեղադրյալը սպառնացել է իր դեմ նախաքննության ընթացքում ցուցմունք տված վկային, թե վրեժխնդիր կլինի, եթե վկան գա և իր դեմ ցուցմունք տա դատարանում, ու վկան վախենա ու չգա դատարան, այնուհետև մեղադրյալը չի կարող պնդել, որ զրկված է եղել իր դեմ ցուցմունք տված վկային դատարանում անմիջապես հարցաքննելու իրավունքից)<sup>261</sup>:

Այսպիսով, դատարանի մատչելիությունը սահմանում է ինչպես դատարանին դիմելու իրավունքը, այնպես էլ ենթադրում վերջինիս գործունեության մատչելիության այնպիսի երաշխիքներ, որոնք ապահովում են մյուս իրավունքների (օրինակ՝ մեղադրայի կողմից իր դեմ ցուցմունք տված անձանց հարցաքննելու, իր պաշտպանությանը պատրաստվելու բավարար հնարավորություններ ունենալու, գործը ողջամիտ ժամկետում քննելու, դատական ակտը՝ այդ թվում՝ պատճառաբանությունը ստանալու և այն բողոքարկելու) արդյունավետ իրականացումը:

Մեկ այլ տեսակետից մատչելիությունը նաև դատական ընթացակարգերի և դրանցում օգտագործվող փաստաթղթերի հասանելիությունն է՝ նկատի ունենալով հրապարակայ-

258. Տես, ի թիվս բազմաթիվ այլ աղբյուրների, *Airey v. Ireland* (9 October 1979, para. 24):

259. Տես, ի թիվս բազմաթիվ այլ աղբյուրների, *Golder v. UK* (21 February 1975, para. 40):

260. *Deweere v. Belgium*, 27 February 1980, para. 42, 44, 46, 49-54,

<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%3A%22itemid%22%3A%22001-57469%22%7D>

261. Ալ Խավայան և Թահիրին ընդդեմ ՄԹ, *Al-Khawaja and Tahery v. the United Kingdom*, 15.12.2011, կետ 122-123:

նության սկզբունքը, որն արդեն ոչ միայն գործով կողմի իրավունքն է, այլ նաև՝ հանրության, այդ թվում մամուլի՝ մասնավորապես՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով նախատեսված արտահայտվելու ազատության, որի մեջ է մտնում նաև տեղեկություններ և գաղափարներ փնտրելու և տարածելու իրավունքը: **Ամենալայն իմաստով արդյունավետ մատույցը ընդգրկում է սեփական դիրքորոշումը պատշաճ ներկայացնելու իրական հնարավորությունը և պատճառաբանված որոշում ստանալու իրավունքը վարույթի հետ կապված կարևոր հարցերով:**

### **Պատճառաբանված դատական որոշում ստանալու իրավունքը**

Ինչպես տեսանք, դատարանի մատչելիությունը կապվում է դատական որոշումների պատճառաբանվածության պահանջի հետ: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն դատարանի որոշումները հասկանալու անհրաժեշտությանը՝ օրինակ՝ պաշտպանությունը դատարանում արդյունավետ կազմակերպելու համար, այլ նաև վերջնական դատական ակտերի պատճառաբանվածությանը՝ որպես բողոքարկման իրավունքի արդյունավետության երաշխիքի: Այդ իսկ պատճառով ՄԻԵԿ-ի համակարգում կարևոր նշանակություն է տրվում դատական թե՛ միջանկյալ, և թե՛ եզրափակիչ ակտերի պատճառաբանությանը, և պատճառաբանված դատական ակտ ստանալը դիտարկվում է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժան մաս:

Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (ԵԴԽԽ, CCJE) «Դատական որոշումների որակի մասին» թիվ 11 (2008) կարծիքը նվիրված է հենց այս հարցին<sup>262</sup>

«...6-րդ հոդվածով նախատեսված պարտավորության կատարումն իրական իմաստ է ստանում այն ժամանակ, երբ դատավորները դրա արդյունքում հնարավորություն են ունենում փաստերի և իրավունքի հարցերի առնչությամբ արդար և ճիշտ ձևով իրականացնել արդարադատությունը՝ ի վերջո ծառայելով քաղաքացիների շահերին: Բարձրորակ դատական որոշումն այն որոշումն է, որը ճիշտ արդյունք է տալիս՝ դատավորին հասանելի նյութի հնարավորության սահմաններում, ընդ որում դա կատարում է՝ արդարացիորեն, արագորեն, հստակորեն, միանշանակորեն. ...Ելակետն այն է, որ դատական որոշման նպատակն է ոչ միայն որոշակիության ապահովմամբ լուծել կողմերին առնչվող կոնկրետ վեճը, այլ՝ հաճախ նաև սահմանել դատական նախադեպ, որը կարող է կանխել այլ վեճերի առաջացումը և ապահովել հասարակական ներդաշնակություն»:

**ՄԻԵԿ-ը և ներպետական օրենսդրությունը, երաշխավորելով արդար դատաքննության իրավունքը, չեն երաշխավորում գործի ճիշտ լուծում. նման իրավունք անձը չունի: Փոխարենը անձն ունի արդար ընթացակարգի իրավունք, որի պահանջների պահպանման պարագայում կանխավարկածվում է, որ այդ գործընթացի արդյունքը նույնպես արդար է: Պատճառաբանված դատական ակտ ստա-**

262. [https://www.courtexcellence.com/\\_data/assets/pdf\\_file/0023/4919/ccje.pdf](https://www.courtexcellence.com/_data/assets/pdf_file/0023/4919/ccje.pdf)

նալու իրավունքը ենթադրում է, որ այդ ակտը այդ գործընթացի արդյունք է՝ արտացոլում է հետազոտված փաստերն ամբողջությամբ և պարունակում դրանցից ողջամտորեն բխող գնահատականը: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ ԵԴԽՆ-ն իր թիվ 11 (2008) կարծիքում անդրադառնում է հենց դատավարական հարցերին, որոնց թվում առանձակի կարևորվում է պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը: Դատարանի որոշումը թե՛ լուծման, թե՛ պատճառաբանության տեսակետից պետք է լինի այնքան որոշակի, որ տարընթերցում չառաջացնի դատարանի որոշման կատարման փուլում:

## Դատավարության ողջամիտ ժամկետներ

**Ինչպես ողջամտության իրավունքի մյուս հասկացությունների դեպքում, դատավարության «ժամկետի ողջամտությունը» ևս որոշվում է դրա տևողության վերաբերյալ ողջամիտ դիտորդի կարծիքով:** Հետևաբար օրենքով չի կարող սահմանվել, թե ինչպիսի ժամկետներն են ողջամիտ, ինչպիսիք՝ ոչ: Ամենասկզբից նշենք, որ եթե օրենքով դատավարական կոնկրետ գործողությունների կամ փուլերի համար արդեն իսկ սահմանված են հստակ ժամկետներ, ապա խոսքը ոչ թե «ողջամիտ», այլ «օրենքով սահմանված» ժամկետի մասին է, իհարկե, այն կանխավարկածով, որ օրենքով սահմանված ժամկետները նույնպես սահմանում են տվյալ գործողության կամ փուլի համար որոշակի ողջամիտ տևողություն:

Օրենքով չսահմանված ժամկետի ողջամտությունը, այսպիսով, չի կարող որոշվել գործի հանգամանքներից անկախ: Այդ իսկ պատճառով ՄԻԵԴ-ը հստակ նշում է, որ **ողջամտությունը չի կարող որոշվել արբտրակտ ձևով**<sup>263</sup>: Որո՞նք են այն չափորոշիչները, որոնցով որոշվում է, թե տվյալ կոնկրետ դեպքում վարույթի տևողությունը եղե՞լ է ողջամիտ, թե ոչ: ՄԻԵԴ-ը սահմանել է նման երեք չափորոշիչ՝

- գործի բարդությունը,
- գործի լուծման կարևորությունը անձի համար, այսինքն՝ ՄԻԵԴ-ի ձևակերպմամբ՝ «այն, թե ինչ է դրված խաղասեղանին»,
- կողմերի վարքագիծը<sup>264</sup>:

**1-ին և 2-րդ չափորոշիչները** գործի օբյեկտիվ հատկանիշների այնպիսի ամբողջություն են, որոնց համակցությամբ որոշվում է **«գործի կշիռը»**: ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2021 թ.-ին ընդունվել է «Գործերի քննության միջին տևողության ուղեկիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշումը<sup>265</sup>, որտեղ, ըստ էության, գործի օբյեկտիվ փաստական բարդությունը (օրինակ՝ քրեական գործով ամբաստանյալների քանակ և նրանց միջև շահերի հակասություն, քաղաքացիական գործով՝ հայցվորների և պա-

263. Santilli v. Italy (19 February 1991, para. 20) and Rajcevic (23 July 2002, para. 36).

264. Abdoella v. the Netherlands (25 November 1992, para. 24) and Jablonska v. Poland (9 March 2004, para. 39).

265. <https://court.am/storage/uploads/files/bdx-decisions/6RWmcd70J72Vw4rTAPPNDgutJWkYw6ZhhWXxWfg6.pdf>

տասխանողների և պահանջների և այլն) տարանջատվել է գործի իրավական բարդությունից (ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներ, քաղաքացիական հայցի տեսակներ, այսինքն, թե կողմի համար ի՞նչ կարևորության հարցով է ընթանում գործի քննությունը):

Միաժամանակ գործի փաստական բարդության տեսակետից կշիռ է տրվում 3-րդ չափանիշին՝ կողմերի վարքագծին, գնահատվում են նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են միջանկյալ դատական ակտի բողոքարկումը, փորձաքննության նշանակումը և այլն:

Վերջապես, ժամկետի հաշվարկը սկսվում է քրեական վարույթներով՝ *մեղադրանքը՝ դրա ինքնավար իմաստով ներկայացվելու պահից, այսինքն՝ այն պահից, երբ իրավասու մարմինը անձին որոշմամբ կամ գործողությամբ տեղեկացնում է տվյալ անձի կողմից հանցանք կատարելու իր մոտ ունեցած կասկածի մասին*<sup>266</sup>, և ավարտվում մեղադրանքին վերջնական լուծում տվող որոշումը ստանալով: Բացի դրանից՝ քրեական գործերով ժամկետն ընդգրկում է ամբողջ վարույթը, ներառյալ վերանայման վարույթը և մի քանի դատավճիռների դեպքում և մի քանի մեղադրանքներով վերջնական պատժի նշանակումը: Նույն մոտեցումն առկա է նաև քաղաքացիական գործերով: Այսինքն՝ *դատաքննության ողջամիտ ժամկետ* ասելով՝ հասկանում ենք ամբողջ վարույթը:

## Անկախ դատարան

### Սահմանադրությունը՝ որպես իշխանությունների տարանջատվածություն

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի («Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը») համաձայն՝

«Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների **բաժանման** ու հավասարակշռման հիման վրա»:

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է իշխանությունների **բաժանման** սկզբունքը, սակայն իրականում պետք է խոսել միևնույն իշխանության, նույն աղբյուրից՝ սահմանադիր ժողովրդից եկող իշխանության տարբեր ճյուղերի **տարանջատվածության** մասին (ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդված. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»), ինչը նախատեսված էր ՀՀ՝ 1995 թ.-ին ընդունված Սահմանադրության 5-րդ հոդվածում.

«Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների **տարանջատման** սկզբունքի հիման վրա»:

266. Foti v. Italy (10 December 1982, para. 53) and Kalashnikov v. Russia (15 July 2002, para. 124).



Հետաքրքիր է, որ իրավունքի փիլիսոփայությունը նույնպես խոսում է հենց տարանջատվածության, այլ ոչ թե տարբեր իշխանությունների բաժանվածության մասին, և տարանջատումը համարվում է այն հիմնական դերը, ինչին պատմականորեն կոչված է երկրի հիմնական օրենքը: Հեգելը նշում է. «Սահմանադրությունը **իշխանական ֆունկցիաների տարանջատվածությունն է**»<sup>267</sup>: Վերիջինս ենթադրում է երկրի ներսում *գապումների և հակակշիռների* այնպիսի համակարգի ստեղծում, որը թույլ կտա ապահովելու, մի կողմից պետական իշխանության միասնականությունը, իսկ մյուս կողմից օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների ինքնուրույն գործունեությունը:

### **Դատարանի արտաքին անկախությունը. անկախություն օրենսդրից և գործադիրից**

ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի («Դատավորի կարգավիճակը») համաձայն՝ «1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»:

*Անկախություն* հասկացությունը ՄԻԵԴ-ի կողմից սահմանվում է որպես «**դատարանի և իշխանության այլ (գործադիր կամ օրենսդիր) բաղադրիչների միջև որևէ կապվածության բացակայություն**»<sup>268</sup>: Այստեղ է, որ անհրաժեշտ է լինում խոսել դատական իշխանության անկախության **ինստիտուցիոնալ տարրի** մասին: Ինստիտուցիոնալ անկախության առումով կարևոր են դատական իշխանության կողմից գործող օրենքները, այդ թվում՝ երկրի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը սեփական մեկնաբանությամբ կիրառելը: «Իշխանությունների տարանջատման հասկացությունը իսկապես դատարկ և կեղծ մի բան կլիներ, եթե դատական մարմինը լիազորություն չունենար ասելու, թե վերջին հաշվով՝ «որն է օրենքը»»<sup>269</sup>: Այս հարցերը ներկայացվել են սույն Ձեռնարկի՝ պետության, իրավունքի և դատարանի սերմանը վերաբերող գլխում: Այս մոտեցումն է ամրագրված էս Նախարարների կոմիտեի 94/12 հանձնարարականի 5-րդ սկզբունքում («Դատավորների պարտականությունները»), որի 3-րդ կետը սահմանում է.

«Դատավորները պետք է ունենան, մասնավորապես, հետևյալ պարտականությունները. .... բ).... գործերը վարել փաստերի **իրենց** գնահատականին և օրենքների **իրենց** մեկնաբանությանը համապատասխան, ապահովել փաստարկների արդարացի քննությունը և կողմերի դատավարական իրավունքների պահպանումը՝ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան»:

Իշխանության օրենսդիր ճյուղից դատարանի ունեցած անկախությունը մեծապես պայմանավորված է դատական իշխանության դերով՝ ապահովել իրավունքի գերակայությունը և պաշտպանել անհատի իրավունքները, անգամ եթե այդ իրավունքների խախտման վտանգը հենց օրենքի մեջ է, այսինքն՝ մեծամասնության կարծիքն արտա-

267. Гегель, Энциклопедия философских наук, том 3, М. 1977, էջ 351:

268. Kleyn and Others v. the Netherlands (6 May 2003, paras. 193-195).

269. Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կենտրոնական և արևելաեվրոպական իրավական նախաձեռնություն, ABA/CEELI Judicial Reform Index, June 2001 Edition:

հայտող փաստաթղթում: Ինչպես տեսանք սույն Ձեռնարկի՝ [մարդու իրավունքների սահմանափակումների լեգիտիմությանը](#) նվիրված գլխում, հենց դատարանն է, որ կանգնում է անհատի և պետության միջև՝ թույլ չտալու համար, որպեսզի վերջինս, իր անգամ լեգիտիմ շահերը իրացնելիս անհամաչափ կերպով չսահմանափակի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Եվ ինչպես նշվեց, այս առաքելությունը դատարանն իրացնում է իրավունքի եռությունը երևութականացնող, այսինքն՝ իրավունքի համընդհանուր սկզբունքների և Սահմանադրության դատական մեկնաբանության և կիրառման արդյունքում իրավունքի նոր աղբյուրներ՝ դատական որոշումներ ստեղծելով:

**Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով** 1995 թ.-ի նոյեմբերի 22-ի վճռում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «որքան էլ պարզ լինեն այս կամ այն իրավական համակարգին պատկանող օրենքի դրույթներում առկա սահմանումները, միշտ էլ տեղ է մտնում դատական մեկնաբանության համար, և պետք է պարզել կասկածելի պահերը և հարմարվել իրադրության փոփոխություններին»<sup>270</sup>: Դատարանը բազմիցս է անդրադարձել այս խնդրին՝ մասնավորապես, նշելով, որ վավերացնելով ՄԻԵԿ-ը, անդամ պետությունները պարտավորվել են ապահովել **իրավունքի գերակայությունը**<sup>271</sup>:

Մասնավորապես ՄԻԵԴ-ը նշել է, որ «իրավունքի գերակայության սկզբունքը և արդար դատաբնականության հասկացությունը **հակադրվում են օրենսդիր իշխանության ցանկացած միջամտության արդարադատության իրականացման գործընթացին՝ միտված վեճի դատական լուծման վրա ազդելուն**»: Այնուհետև նշվում է, որ «1974 թ.-ի նոյեմբերի 28-ին, կրկին դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ և վավերացնելով Կոնվենցիան, Հունաստանը պարտավորվեց պահպանել իրավունքի գերակայությունը, որն իր արտացոլումն է գտնում նաև ՄԻԵԿ-ի 6.1 հոդվածում»<sup>272</sup>:

## Անկախություն գործադիրից

Թվում է, թե իրավունքի մեկնաբանման սուբյեկտների շրջանակը՝ **ազգային իշխանություններ**, շատ լայն է, և օրենքի մեկնաբանման վերաբերյալ, այդ թվում և՛ կոնկրետ գործեր քննելիս դատարանին կարող են պարտադրվել զանազան պետական մարմինների կողմից տրված օրենքի մեկնաբանությունները: Սակայն բոլոր նման հարցերին ՄԻԵԴ-ը սպառնիչ պատասխանել է *Բոմարտանն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 1994 թ.-ի նոյեմբերի 24-ի վճռում<sup>273</sup>՝ նշելով, որ «միայն այն մարմինն է արժանի «դատարան» կոչվելու՝ ՄԻԵԿ-ի 6.1 հոդվածի իմաստով, որն օգտվում է դատարանի իրավասության լրիվությունից և բավարարում է մի շարք պահանջների, ինչպիսիք են անկախությունը գործադիր իշխանության և քննությանը մասնակից կողմերի հանդեպ»:

270. S.W. v. the United Kingdom, para. 36, Бюллетень Конституционного правосудия, Специальный выпуск, Основные решения Европейского суда по правам человека, CDL-JU (2000) 10 prov. 2, Страсбург, 23.03.2000, էջ 76:

271. Տե՛ս բազմաթիվ այլ աղբյուրների թվում Հորնսբի ընդդեմ Հունաստանի (Hornsby v. Greece), 19.03.1997:

272. Бюллетень Конституционного правосудия, էջ 94-95:

273. Beaumartin v. France, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-57898%22%7D>

Ավելացնենք, որ ՄԻԵԴ-ը տվյալ որոշմամբ արձանագրել է նաև օրենքի մեկնաբանման և կիրառման ակտերի (հետևաբար՝ սուբյեկտների) համընկնման անհրաժեշտությունը՝ որպես Կոնվենցիայի 6.1 հոդվածի խախտում նշելով, որ «նախարարության պատասխանատու պաշտոնատար անձի միջամտությունը, որը վճռորոշ նշանակություն է ունեցել դատական վեճի ելքի համար, ենթակա չի եղել որևէ գանգատարկման շահագրգիռ անձանց կողմից»: Նույն դիրքորոշումը Դատարանն արտահայտել է **Սուխոբոկովն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2006 թ.-ի ապրիլի 13-ի վճռում<sup>274</sup>, որում դատական վերջնական որոշումը ի կատար չէր անվել և բեկանվել էր նախարարական մի հրահանգի ընդունումից հետո, որով համապատասխան օրենքին այլ մեկնաբանություն էր տրվել:

### **Անկախության դատարանակազմական և դատավարական երաշխիքները**

Դատարանի և դատավորի անկախության երաշխիքների շրջանակը շատ լայն է մեկ ենթակետում սպառիչ կերպով լուսաբանելու համար, ուստի կփորձենք ներկայացնել դրանցից առավել կարևորները ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի և ՀՀ օրենսդրության վերաբերելի դրույթների տեսանկյունից: Դատավորի անկախության կարևորագույն երաշխիքը անձեռնմխելիությունն է, այսինքն՝ պատասխանատվության ենթակա չլինելը օրենքի շրջանակներում իր կայացրած որոշումների համար: Այդ իսկ պատճառով ՀՀ դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-ին մասի համաձայն՝

«Արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության»:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ 1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ»:

Նշված դրույթներում արտահայտված է մի կողմից դատական իշխանության կրողի՝ **դատավորի սուբյեկտիվ անկախության իրավունքը** (9-րդ մասը), մյուս կողմից՝ օրենքի, այսինքն՝ **օրենսդրի կամ սահմանադրի (Սահմանադրության դեպքում) կամքի շրջանակներից դուրս չգալու ինստիտուցիոնալ անհրաժեշտությունը**: Մասնավորապես դատավորը չի կարող այնպես մեկնաբանել օրենքը, որ ձեռք բերի Սահմանադրությամբ չնախատեսված լիազորություններ կամ դուրս գա օրենքով նախատեսված հարցերի լուծման շրջանակից, դատավարական տվյալ փուլի խնդիրներից (օրինակ՝ չի կարող

274. Sukhobokov v. Russia, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-73297%22%7D>

մերժել անձին կալանավորելու միջնորդությունը այն հիմքով, որ մեղադրյալի մեղքը ապացուցված չէ միջնորդության մեջ ներկայացված ապացույցներով, ինչը միայն դատավճռով հաստատվող հանգամանք է):

Միաժամանակ օրենքի շրջանակներում իր գործառույթներն իրականացնելիս դատավորը, ինչպես արդեն նշվեց, պարտավոր է կայացնել պատճառաբանված դատական ակտեր: Ընդհանուր սկզբունք է, որ **եթե դատավորի կողմից կամ նրա մասնակցությամբ կայացված դատական ակտը բեկանվում է կամ փոփոխվում, ապա այդ փաստը ինքնին դատավորի անձնական պատասխանատվության որևէ հարց չի առաջացնում** (տե՛ս նույն հոդվածի 7-րդ մասը): Պատճառաբանության տեսակետից կարևոր է դրա առկայությունը, իսկ այն, որ վերադաս աստիճանները չեն համաձայնել դատավորի հետ, դատավորի համար անբարենպաստ հետևանքներ չի ստեղծում:

Դատավորների անկախության դատարանակազմական երաշխիքներն են նրանց նշանակման, այդ թվում՝ առաջխաղացման, լիազորությունների դադարեցման հատուկ կարգը, որտեղ առանցքային դերակատարում ունի Բարձրագույն դատական խորհուրդը:

**Վերը նշված բոլոր երաշխիքներն ուղղված են դատավորի անփոփոխելիության սկզբունքի ապահովմանը՝ որպես նրա կարգավիճակի կարևոր տարրերից մեկի, ինչը նշանակում է, որ դատավորները պաշտոնավարում են մինչև օրենքով սահմանված՝ 65 տարին լրանալը և չեն կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար՝ բացառությամբ, երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ** (տե՛ս Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասը):

Պետք է հիշել, սակայն, որ անկախության՝ ոչ մի օրենքով նախատեսված երաշխիք՝ դատավարական թե՛ դատարանակազմական, ինստիտուցիոնալ թե՛ այլ, չի կարող ինքնին անկախ դատավոր արարել<sup>275</sup>, եթե չկա այդ երաշխիքների պատշաճ հասցեատերը՝ դատավորի անկախությունը իր վրա կրելու ցանկություն և կարողություն ունեցող անձը՝ անձ, որը խոցելի չէ անձնական և խմբային շահերի կամ ֆինանսական գայթակղությունների հանդեպ: Այդ խոցելիության ռիսկերը և դրանց նյութականացման վտանգի ստուգման և կանխման պետության պարտավորությունները քննարկվում են սույն Ձեռնարկի [«Կոռուպցիան և մարդու իրավունքները»](#) գլխում:

## Մրցակցությունը որպես մտածողության և դատավարության ձև

Մեզնից յուրաքանչյուրը որոշումները կայացնում է՝ կշռադատելով *կողմ* և *դեմ* վարկածները: Մենք գիտենք, որ ճիշտ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է, որ այդ

275. И. Я. Фойницкий, «Курс...», т. 2, с. 88:

կողմ և դեմ վարկածները և դրանք հիմնավորող ու հերքող փաստարկներն ու հակափաստարկները, որոնք մրցում են մեր ուղեղում, ուսումնասիրենք ամբողջությամբ, բազմակողմանիորեն, օբյեկտիվ՝ առանց որևէ մեկին նախապատվություն տալու: Սա անհրաժեշտ է, որ մեր դատողությունները և եզրակացությունները մեզ մոտ կասկած չթողնեն դրանց՝ օբյեկտիվ իրականության վրա հիմնված լինելու և հարցին ճիշտ հանգուցալուծում տալու առթիվ:

Դատարանում ճշմարտության այդ վարկածները և վերջնական դատողությունը անձնավորված են՝ ի դեմս դատավարական կոնկրետ գործառույթներ կատարող սուբյեկտների: 1) կողմ, որն առաջ է քաշում ապացուցման ենթակա թեզը և ապացուցում այն, 2) կողմ, որը հերքում է այդ թեզը՝ կասկածներ սերմանելով դրա ճշմարտացիության շուրջ կամ առաջ է քաշում սեփական հակառակ թեզն ու ապացուցում այն, և վերջապես 3) որոշում կայացնող անձ՝ դատավոր, որը, կշռադատելով կողմերի ներկայացրածը, ուսումնասիրում է իրականությունը և հանգում սեփական հետևության: Կախված դատավարության տեսակից՝ այդ իրականության ուսումնասիրությունը կարող է ենթադրել դատավորի՝ տարբեր աստիճանի ակտիվություն:

Մասնավորապես քաղաքացիական դատավարությունում դատավորի կողմից ուսումնասիրվող այդ իրականությունը արտացոլված է բացառապես կողմերի ներկայացրած ապացույցներով (*դիսպոզիտիվության սկզբունք*): Վարչական դատարանում, բացի այդ, գործում է նաև *ի պաշտոնե* ուսումնասիրության սկզբունքը, ճշմարտությունը դատավորի կողմից սեփական, կողմերից ներկայացված ապացույցներից դուրս վեր հանելու պարտականությունը: Վերջապես, քրեական դատավարությունում դատավորը կամ կաշկանդված է կողմերի, այսինքն՝ մեղադրողի և պաշտպանության կողմի ներկայացրած ապացույցներով (*մաքուր մրցակցություն*), կամ պարտավոր է գործով այսպես կոչված *օբյեկտիվ ճշմարտությունը* բացահայտելու համար սեփական նախաձեռնությամբ պահանջել ապացույցներ՝ հրավիրել վկաներ, նշանակել փորձաքննություն և այլն (ինկվիզիցիոն դատավարություն, որը, ժամանակակից աշխարհում շատ քիչ մաքուր դրսևորում ունենալով, առավելապես արտահայտվում է այսպես կոչված *խառը մրցակցության* պատմական դատավարական ձևով): Ընդ որում, ամեն դեպքում պաշտպանության կողմը կարող է ընդհանրապես լռություն պահպանել և որևէ դիրքորոշում կամ ապացույց չներկայացնել և մեղադրանքի հաստատված չլինելու բոլոր *ողջամիտ* կասկածները անմեղության կանխավարկածի ուժով (սրա մասին կիսովի հաջորդ ենթակետում) պետք է մեկնաբանվեն հոգուտ մեղադրյալի):

Մրցակցությունը, այսպիսով, իր ամենալայն իմաստով նշանակում է **կողմերի հավասար հնարավորությունը՝ ձևավորելու դատավորի համոզմունքը**: Օրենքը ձգտում է ապահովելու, որ.

1. կողմերը, հատկապես մեղադրանքի կողմը, անջատված և անկախ լինեն դատավորից կամ գործի/հարցի լուծման գործառույթից.
2. կողմերի ներկայացրած ապացույցները կամ փաստարկներն օժտված լինեն ճշմարտացիության հավասար կանխավարկածով՝ այս կամ այն կողմի դիրքորոշմանը, ներկայացված փաստարկներին ու դրանք հիմնավորող ապացույցներին որևէ նախապատվություն չտալով.

3. կողմերը իրենց դիրքորոշումը՝ այն հիմնավորող փաստարկները և դրանց հիմքում ընկած ապացույցները դատավորին հասցնելու հավասար հնարավորություններ ունենան դատավարական գործիքներն օգտագործելիս (միջնորդություններ, բացարկներ, հայտարարություններ), ինչպես նաև հակառակ կողմի փաստարկները և ներկայացրած ապացույցները վիճարկելիս:

Այդ հավասար հնարավորություններն ապահովելու պետության պարտավորությունը ՄԻԵԴ-ի կայուն հաստատված նախադեպային իրավունքում կոչվում է **զենքերի հավասարություն**, որը, ամրագրված չլինելով ՄԻԵԿ-ի տեքստում, այն մեկնաբանող ՄԻԵԴ-ի կողմից ամենաընդհանուր ձևով բնորոշվել է որպես **մի սկզբունք, որի համաձայն՝ դատավարության յուրաքանչյուր կողմ իր գործը ներկայացնելու հավասար հնարավորություն պետք է ունենա**<sup>276</sup>:

Ինչպես նշում է ՄԻԵԴ-ը այս հարցին նվիրված իր նախադեպերից մեկում.

«Զենքերի հավասարությունը ներառում է ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու գործը այնպիսի պայմաններում, որոնք անձին չեն դնում զգալիորեն անբարենպաստ վիճակի մեջ՝ իր ընդդիմախոսի համեմատ»<sup>277</sup>:

Այս սկզբունքի խախտումներն արտահայտվում են տարբեր իրավունքների իրացման կապակցությամբ և ամենատարբեր իրավիճակներում: Մասնավորապես ՄԻԵԴ-ը նշել է, որ «կողմերը պետք է նույն հասանելիությունն ունենան գործին վերաբերող արձանագրություններին և այլ փաստաթղթերին, առնվազն, երբ դրանք կարող են դեր խաղալ դատարանի կարծիքը ձևավորելու համար»<sup>278</sup>, և եթե կողմերից մեկին չի տրվում այդ հնարավորությունը, ապա առկա է արդար դատաքննության իրավունքի խախտում<sup>279</sup>, նույնը, երբ կողմը տեղյակ չէ հակառակ կողմի միջնորդություններից<sup>280</sup> և այլն: Հենց այս սկզբունքի պահպանմանն են ուղղված մեղադրյալի պաշտպանության իրավունքի առանձին տարրեր, օրինակ՝ օրենքի այն պահանջը, որ նախաքննության ավարտին պաշտպանական կողմին պետք է տրամադրվեն նրա դեմ դատարանում օգտագործվելիք ապացույցները<sup>281</sup>, մեղադրյալի՝ իր գործի դատաքննությանը ներկա լինելու և մասնակցելու իրավունքը<sup>282</sup>, իր դեմ ցուցմունք տված վկաներին դատարանում հարցաքննելու իրավունքը և այլն:

**Մրցակցաբար, հակառակ կողմին իր փաստարկները ներկայացնելու, ապացույցներով հիմնավորելու հավասար ու հնարավորինս լայն հնարավորություններ տալու պետության պարտականությունը, սակայն, շատ ավելի հեռուն է գնում, քան պարզապես քաղաքացիական, վարչական կամ քրեական դատավարությունների շրջանակներում իրականացվող ճանաչողության ու որոշումների կայացման սկզբունք**

276. Neumeister v. Austria, 27 June 1968, (C) para. 22.

277. Dombo Beheer B.V. v. the Netherlands, 27 October 1993, para. 33.

278. Ernst and Others v. Belgium, 15 July 2003, paras. 60–61.

279. McMichael v. the United Kingdom (1995) and Foucher v. France (1997).

280. MacGee v. France (2003), Fortum Corporation v. Finland (2003), Walston v. Norway (2003).

281. Kuopila v. Finland (2000) and Dowsett v. the United Kingdom (2003).

282. Colozza v. Italy (1985), Monnell and Morris v. the United Kingdom (1987), Botten v. Norway (1996) and Lobo Machado v. Portugal (1996).

լինելը: Մարդու ուղեղում ընթացող գործընթացները, իրենց սկզբունքներով հանդերձ, գործում են (հետևաբար պետք է ամրագրվեն իբրև գործող) ցանկացած բնագավառում, որտեղ գոյություն ունի մտավոր աշխատանքի անհրաժեշտություն՝ դիալոգիկ մտածողություն, դատական պրոցես, երկու կողմ: Մրցակցությունը, կարծիքների բախումը, երկխոսությունը, այսպիսով, կազմում են նաև ժողովրդավարական մասնակցայնության և գիտակցված ու պատասխանատու որոշումներ կայացնելու հիմքը, նախապայմանը և եղանակը<sup>283</sup>:

## Անմեղության կանխավարկած

### Անմեղության կանխավարկածի բնութագիրը

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան*: ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ *հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով*:

Անմեղության կանխավարկածը **հասարակության անդամների բարեխիղճ վարքածի կանխավարկածի** բացասումն է (հերքումը) քրեական դատավարությունում: Այդ բացասումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ անձին առաջադրվում է մեղադրանք. չէ՞ որ այս իրավունքը տրված է հենց մեղադրյալին:

Քանի որ անձը դառնում է մեղադրյալ, անմեղության կանխավարկածի իրավունք ձեռք է բերում իրեն մեղադրանք առաջադրելու պահից: Այս առումով շատ կարևոր է *մեղադրանքի առաջադրում* հասկացությունը, որը դարձյալ ինքնավար հասկացություն է, այսինքն՝ բնորոշված է ՄԻԵԿ-ի կողմից.

«*Մեղադրանքը* կարելի է սահմանել որպես իրավասու մարմնի կողմից անձին՝ նրա կողմից հանցագործություն կատարելու հայտարարությունը պաշտոնապես ներկայացնելը, կամ երբ լուրջ ներգործություն է տեղի ունենում [կասկածյալի] վիճակի վրա»<sup>284</sup>:

Մեղադրյալի անմեղության կանխավարկածը, լինելով նրա օբյեկտիվ վիճակը<sup>285</sup>, այն հիմքն է, որից բխում են նրա բոլոր դատավարական և ոչ դատավարական իրավունքները: Այսինքն՝ կարող է պարադոքսալ հնչել, մեղադրյալի առաջնային իրավունքն է նրա նկատմամբ առաջադրված մեղադրանքի կամ նրա՝ մեղադրվողի իրավական վիճակի դատավարական ամրագրումը, որպեսզի վերջինս կարողանա օգտվել իր իրավունքներ-

283. Вольтер, Отрывки из мемуаров Вольтера о Фридрихе II Великом, <http://vivil.ru/fridrix/memyary.php>.

284. Դեվիրն ընդդեմ Բելգիայի, 27.02.1980 թ., (կետ 42, 44, 46, 49-54):

285. М.С.Строгович, Учение о материальной истине в уголовном процессе, М.; Л., 1947, էջ 236:

րից, առաջին հերթին պաշտպան ունենալու և լռելու իրավունքից:

Մեղադրյալի անմեղության կանխավարկածը ինքնին կարևոր ճանաչողական ելակետ է քրեադատավարական ամբողջ գործունեության համար: Ի՞նչ է նշանակում *համարվում է անմեղ*. անմե՞ղ է, թե՞ իրականում մեղավոր է, բայց դրա մասին դեռևս չկա դատարանի մեղադրական դատավճիռը: *Համարվում է* եզրույթը մի կողմից նշանակում է, որ իրենց դատավարական ճանաչողության մեջ համապատասխան պաշտոնատար անձինք՝ քննիչը, դատախազը, **դատարանը, պետք է ելնեն մեղադրյալի ոչ թե մեղավորության, այլ անմեղության փաստից**: Քննիչն ու դատախազը պետք է հասկանան, որ մեղադրանքի առաջադրումը անձի կողմից հանցագործություն կատարած լինելու մասին իրենց ունեցած կարծիքի, կասկածի փոխանցումն է հենց այդ անձին:

Այդ փոխանցումը կամ ծանուցումը կարող է լինել ինչպես պաշտոնապես մեղադրանք առաջադրելը՝ որոշումը մեղադրյալին տալով, այնպես էլ ցանկացած ձևով անձի կողմից հանցագործություն կատարած լինելու պետության ներկայացուցիչների ունեցած կասկածը անձին փոխանցելով, օրինակ՝ նրան վկայի կարգավիճակում մերկացնող հարցեր տալով, քրեական գործ հարուցելու որոշմամբ, երբ ակնհայտ է, որ այդ որոշման հիմքում ընկած փաստը վերագրելի է կոնկրետ անձի<sup>286</sup>, և այլն: Մեղադրանքի առաջադրումն անհրաժեշտ է, որպեսզի սկսվի այն մրցակցային, այսինքն՝ դատավարական սուբյեկտավորված մտածողության գործընթացը, որտեղ հնարավոր է դառնում մի կողմից առաջադրել մեղադրանքի պաշտոնական թեզ ու ապացուցել այն, իսկ մյուս կողմից արդյունավետորեն պաշտպանվել դրանից: Մեղադրանքի թեզի կողմը այդ ապացուցման ընթացքում կարիք է ունենում որոշակի դատավարական հարկադրանքի, խափանման միջոցների, որոնք ապահովում են մեղադրյալի պատշաճ վարքագիծը, որպեսզի, օրինակ, մեղադրյալը՝ հնարավոր հանցագործը, լինի պետական մարմինների վերահսկողության ներքո՝ չդիմի փախուստի, չազդի վկաների վրա, չվերացնի հանցանքի հետքերը և այլն: Պաշտպանության կողմը այդ նույն ընթացքում ձեռք է բերում հակառակն արդյունավետորեն ապացուցելու որոշակի երաշխիքներ՝ պաշտպանի իրավունք, լռելու իրավունք և այլն:

### Մեղադրյալի անմեղության կանխավարկածը նշանակում է, որ.

- *մեղադրանքի ապացուցման ընթացքում պետական մարմինների բոլոր գործողությունների արդյունքում անձը՝ անմեղ համարվող մեղադրյալը, կրում է բացառապես այնպիսի զրկանքներ, որոնք անհրաժեշտ են հանցագործության բացահայտման և մեղավորների հայտնաբերման լեգիտիմ շահը հետապնդելու համար, այսինքն՝ մեղադրյալը օգտվում է ոչ մեղադրյալ բոլոր քաղաքացիների հետ համահավասար իրավունքներից՝ այն սահմանափակումներով, որոնք հետապնդում են քրեական հետապնդման համար օրենքով նախատեսված իրավաչափ նպատակները և համաչափ են տվյալ իրավիճակում (անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ).*

286. Տե՛ս Լևիկ Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշումը, կետ 23, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77189>:



- ապացուցման ընթացքում անձից չի պահանջվում ապացուցել իր անմեղությունը, քանի որ դրա կանխավարկածի հերքումը կամ ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրող, այն է՝ մեղադրանքի թեզն առաջ քաշած կողմի վրա.
- այս կանխավարկածը, լինելով բոլոր ոչ մեղադրյալների բարեխիղճ վարքագծի կանխավարկածի արտացոլումը, բացասումը, քրեական դատավարությունում մեղադրանքը հաստատվելու դեպքում բացասվում է դատարանի՝ ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով: Չհաստատվելու դեպքում անձը վերադառնում է իր հին՝ մեղադրյալի կարգավիճակից առաջ ունեցած բարեխիղճ քաղաքացու կարգավիճակին:

Անմեղության կանխավարկածի իրավունքը բացարձակ իրավունք չէ՝ թեկուզ այն պատճառով, որ այդ կանխավարկածը կարող է հերքվել մեղադրական դատավճռի՝ ուժի մեջ մտնելուց հետո ծագող հիմնավորվածության և օրինականության կանխավարկածով: **Քանի որ մեղադրանքի հիմքում կասկածն է՝ կարծիքը, այլ ոչ թե գիտելիքը, որը, ինչպես գիտենք, միակն է, որ օժտված է համընդհանրության և անհրաժեշտության հատկություններով, դրա հիման վրա անձի համար առաջացող զրկանքները ժամանակավոր են, դառնալի են, վերականգնելի: Պետությունը, կարելի է ասել, «պարտքով» է անում դա՝ վստահ լինելով իր կարծիքի հավաստիության մեջ<sup>287</sup>: Մյուս կողմից քրեական պատիժը արդեն նշանակվում է դատավճռով, որի հիմքում կանխավարկածվում է արդեն ոչ թե կարծիքը, այլ գիտելիքը անձի մեղավորության մասին: Մեղադրական դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո անձը մեղադրյալից վերածվում է դատապարտյալի, քանի որ ողջամիտ կասկածից վեր շեմով ստացվել է գիտելիք նրա մեղավորության մասին՝ հերքելով նրա անմեղության կանխավարկածը:**

Այդ հերքելիությունը, ոչ բացարձակ լինելը ազդում են նաև բուն ճանաչողության ընթացքում մեղադրյալի ոչ միայն անմեղության կանխավարկածի մաս կազմող իրավունքների սահմանափակելիության վրա (օրինակ՝ որոշ փաստական իրավիճակներում մեղադրյալի լռությունից նրա համար անբարենպաստ հետևություններ անելու լեգիտիմությունը), այլ նաև մեղադրյալի մյուս իրավունքների վրա (օրինակ՝ հակառակ կողմի վկաներին հարցաքննելու իրավունքից հրաժարվելու փաստը՝ այդ վկաներին սպառնալու կամ հարցաքննությանը չներկայանալու ձևով, կամ ներկայանալու դեպքում՝ ոչ վերաբերելի հարցեր տալու իրավունքից զրկվելու ձևով):

**Անմեղության կանխավարկածը, առաջին անգամ ամրագրվելով Անգլիայի 1215 թ.-ի «Ազատությունների մեծ խարտիայում», դարձել է մարդկության մեծագույն նվաճումներից մեկը՝ նրա ոչ նյութական ժառանգության կարևոր մասը: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է իմանալ դրա արժեքը և իմաստը՝ գիտակցելով, որ հանցագործության մեջ մեղադրվող անձինք օգտվում են իրեն հավասար բոլոր իրավունքներից և անմեղ են իր պես, ինչպես նաև, որ պատիժ կրած անձը**

287. ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի («Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք») 5-րդ մասը նախատեսում է. «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

նույնպես հասարակություն է վերադարձել որպես դրա հավասար և լիիրավ անդամ քրեական հետապնդման բոլոր փուլերում պահպանած լինելով իր անօտարելի բոլոր իրավունքները:

## Անմեղության կանխավարկածի տարրերը

Նախորդ կետում արված վերլուծությունը, միջազգային փաստաթղթերի և ՀՀ օրենսդրության պահանջները և ՄԻԵԴ-ի նախադեպային դիրքորոշումները հաշվի առնելով կարելի է պնդել, որ անմեղության կանխավարկածը բաղկացած է հետևյալ սկզբունքներից՝

- մեղարյալի մեղավորությունն ապացուցելու պարտականությունը դրված է նրա մեղավորության թեզն առաջ քաշած մարմնի՝ մեղադրանքի կողմի վրա,
- միայն դատարանն է իրավասու անձին մեղավոր ճանաչել հանցագործություն կատարելու մեջ և պատիժ նշանակել,
- մեղադրյալի մեղավորության մասին բոլոր ողջամիտ կասկածները մեկնաբանվում են ի նպաստ մեղադրյալի,
- հարկադրանքի և խափանման միջոցները պետք է համաչափ լինեն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին հայտնաբերելու իրավաչափ նպատակին և չեն կարող պարունակել պատժի տարրեր:

Վերջին դրույթն հստակ ամրագրված էր ՀՀ քրեական դատավարության 1998 թ.-ի օրենսգրքի 18-րդ հոդվածում և, ցավոք, տեղ չգտավ նոր՝ 2022 թ.-ի ՔԴՕ-ում: Ամրագրված չլինելով որպես սկզբունք, այլ լինելով դրա հետևանքը՝ այն բխում է նաև ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի (1966 թ.) 10-րդ հոդվածի 2-րդ մասից.

«2. ա) Այն դեպքերում, երբ բացակայում են բացառիկ հանգամանքները, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին և նրանց տրվում է չդատապարտված անձանց վերաբերյալ նրանց կարգավիճակին համապատասխանող առանձին ռեժիմ»:

Մեղադրանք ներկայացնելով՝ պետությունը հասարակության անդամին տեղեկացնում է (գործողություններով և որոշումներով) այն մասին, որ իր մոտ առկա է **կասկած, վարկած** այն մասին, որ տվյալ անձը կատարել է հանցագործություն: Նախաքննության ընթացքում պետական մարմինները, սակայն, ոչ թե ապացուցում են անձի մեղավորությունը, այլ ուսումնասիրում են օբյեկտիվ իրականությունը՝ գործի հանգամանքները բացահայտելով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանիորեն՝ առանց ապացույցներին մեկը մյուսի նկատմամբ գերակայություն տալու և ճանաչվող իրականության տարբեր

վարկածներին հաստատվելու հավասար հնարավորություն ընձեռելով: Այս ընթացքում նրանք պարտավոր են հավաքել, արձանագրել և անաչառ կերպով ստուգել ու գնահատել ինչպես մեղադրյալին մերկացնող, այնպես էլ նրա անմեղությունը կամ նրա կողմից նվազ ծանր հանցագործության կատարումը փաստող ապացույցներ:

Այնուհետև գործն ուղարկվում է դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու համար: Դրա մեջ է մեղադրական թեզը՝ հիմնավորող ապացույցներով, որոնք դատախազի կողմից (մեղադրական եզրակացությունը հաստատելու դեպքում) պաշտպանվելու են (ապացուցվելու են) դատարանում: Այստեղ կարևոր է նշել ապացուցողական շեմերի կամ չափանիշների (**standards of proof**) տարբերությունը, որը դրվում է մի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու համար գործը դատախազին ուղարկելու քննիչի, նաև հաստատված մեղադրական եզրակացությամբ գործը դատարանն ուղարկելու դատախազի որոշման, իսկ մյուս կողմից դատարանի մեղադրական դատավճռի միջև: Վերջին որոշման դեպքում գործում է *ողջամիտ կասկածից վեր* ապացուցողական չափորոշիչը (**beyond a reasonable doubt**), իսկ առաջինների դեպքում *ապացույցների գերակշռության* չափորոշիչը (**preponderance of proof**): Մասնավորապես ՀՀ գործող ՔԴՕ-ի 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Եթե մինչդատական վարույթում հավաքված բոլոր ապացույցները գնահատելով՝ քննիչը հանգում է հետևության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը **մեծապես հավանական է**, ապա նախաքննության ավարտի մասին գրավոր ծանուցում է վարույթի մասնավոր մասնակիցներին և հայտնում վարույթի նյութերին նրանց ծանոթանալու տեղը, ժամանակը և հաջորդականությունը՝ միաժամանակ սկսելով մեղադրական եզրակացության կազմումը»:

Ապացուցողական այս չափանիշների տարբերակումը հենց կարևոր է նրանով, որ **արդարացման դատավճռի դեպքում փաստվում է, որ մեղադրյալի մեղքը չի հիմնավորվել ողջամիտ կասկածից վեր, բայց դա չի նշանակում, որ բացակայել են գործը դատարանն ուղարկելու հիմքերը կամ, այլ կերպ ասած, բավարարված չի եղել դրա համար սահմանված ավելի ցածր շեմը:**

Ապացուցման պարտականություն (**burden of proof**) կրելը նշանակում է, որ դատարանի ուսումնասիրմանը ներկայացված ապացուցման թեզը պետք է հաստատվի բացառապես այն ներկայացրած անձի, այսինքն՝ դատախազի կողմից: Ո՛չ դատավորը, ո՛չ էլ պաշտպանը պարտավոր չեն օգնելու նրան, և եթե մեղադրանքը չի ապացուցվել՝ ողջամիտ կասկածներ չթողնելով, ապա մեղադրյալը ենթակա է արդարացման: Այս առումով կարևոր է անել ևս երեք դիտարկում այս ընթացքում դատարանի և պաշտպանական կողմի ունեցած դերակատարման առնչությամբ:

**Այժմ ներկայացնենք ՄԻԵԴ-ի հիմնական դիրքորոշումները վերը նշված դրույթների վերաբերյալ:** Անմեղության կանխավարկածի հետ կապված խնդիրներ են առաջանում այն դեպքերում, երբ ապացուցման պարտականությունը փոխանցվում է մեղադր-

յալին՝ վերջինիս կողմից ի պաշտպանություն իրեն ներկայացված թեզն ապացուցելու համար, կամ երբ իրավունքի կամ փաստի կանխավարկածը կիրառվում է մեղադրյալի դեմ: **Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի** գործով 1988 թ.-ի հոկտեմբերի 7-ի վճռում<sup>288</sup> ՄԻԵԴ-ը նշել է, որ նման կանխավարկածների գործողությունը «պետք է պարփակվի ողջամիտ սահմաններում, հաշվի առնի մեղադրյալի համար *խաղատեղանին դրվածի* կարևորությունը և ապահովի պաշտպանական կողմի իրավունքները»: Այս վճռից 16 տարի անց **Գրեյսոնն ու Բարնհամն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով** 2008 թ.-ի սեպտեմբերի 23-ի վճռում<sup>289</sup> ՄԻԵԴ-ը արդեն ավելի կոնկրետ ձևով արձանագրեց (կետ 46-րդ), որ (կետ 49-րդ). «Դատարանը համաձայն է... որ քրեական դատավարությունում արդարացի դատաքննության գաղափարի հետ անհամատեղելի չի եղել այն, որ յուրաքանչյուր դիմումատու պարտավորեցվել է իր առկա ֆինանսական վիճակի մասին արժանահավատ տեղեկություններ տալ»:

Քանի որ անմեղության կանխավարկածը բացարձակ իրավունք չէ, ապա մեղադրյալն իրավունք ունի նաև հրաժարվելու դրա տարրերը կազմող որոշ իրավունքներից: Օրինակ՝ միայն դատարանի կողմից մեղքը հաստատվելու իրավունքից մեղադրյալը հրաժարվում է, երբ համաձայնություն է տալիս, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի այսպես կոչված «ոչ արդարացնող» հիմքերով, օրինակ՝ որպեսզի նրա նկատմամբ կիրառվի համաներում, հետապնդումը դադարեցվի տվյալ հանցագործության համար սահմանված քրեական հետապնդման ժամկետները լրանալու հիմքով և այլ հիմքերով, որոնք նախատեսված են ՀՀ ԶԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այդ կետերում թվարկված «հանգամանքների առկայությունը քրեական հետապնդումը բացառող չէ, եթե անձն առարկում է դրա դեմ այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը: Այս դեպքում քրեական վարույթը շարունակվում է ընդհանուր կարգով, սակայն մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում այդ անձի նկատմամբ պատիժ չի նշանակվում»:

Նախկին ԶԴՕ 37-րդ հոդվածով նախատեսված Եր դատախազի լիազորությունը առանց մեղադրյալի համաձայնության դադարեցնելու քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքերով, օրինակ՝ իրադրության փոփոխության դեպքում: ՄԻԵԴ-ը **Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի** գործով 2012 թ.-ի հոկտեմբերի 2-ի վճռում<sup>290</sup> նշեց, որ այս նորմի կիրառումը Վիրաբյանի նկատմամբ նրա անմեղության կանխավարկածի խախտում էր, և պետք է ասել, որ դեռևս ՄԻԵԴ-ում գործի քննության ընթացքում այդ նորմը փոփոխվել էր՝ պարտադիր դարձնելով մեղադրյալի համաձայնությունն ստանալը: **Այսինքն՝ մեղադրյալի կողմից իր մեղքը ոչ դատարանի որոշմամբ հաստատելու համաձայնությունը, այն է՝ անմեղության կանխավարկածի տարր կազմող՝ մեղքը բացառապես դատարանի կողմից հաստատվելու իրավունքից հրաժարվելու իրավունքը նույնպես անմեղության կանխավարկածի մի մաս է:**

288. Salabiaku v. France, para 28, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-57570%22%7D>

289. Grayson and Barnham v. the United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-88541%22%7D>

290. Virabyan v. Armenia, para. 191-192, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-113302%22%7D>

**Մեղադրյալի համաձայնության պարտադիր լինելը իր հերթին նրա արդարացվելու իրավունքի մի մասն է:** Դեռևս միջնադարյան Կարոլինայի դատաստանագրքում, անձի նկատմամբ մեղադրական կամ արդարացման դատավճռից զատ, կարող էր կայացվել երրորդ տեսակի դատավճիռ՝ մեղադրյալին «կասկածի տակ թողնելը»: **Կասյուն ընդդեմ Բելգիայի** գործով 2005 թ-ի. հունվարի 13-ի վճռով<sup>291</sup> ՄԻԵԴ-ը խախտում ճանաչեց այն, որ դիմումատուի դեմ գործը կարճվել էր՝ առանց նրան պաշտոնապես արդարացնելու: Այս գործով Բելգիայի Անհիմն կալանավորումների վերանայման ատյանը հրաժարվել էր փոխհատուցում տրամադրել օրենսդրական այն հիմքով, որ անձը, որի նկատմամբ վարույթը կարճվել էր, հատուցման իրավունք ստանալու համար պետք է ապացուցեր իր անմեղությունը՝ տրամադրելով համապատասխան ապացույցներ կամ ներկայացնելով իրավական փաստարկներ: Այս գործով վճռում (կետ 25-րդ) ՄԻԵԴ-ն արտահայտեց այն հստակ դիրքորոշումը, որ «իր անմեղությունն ապացուցելու անձին առաջադրվող պահանջը, որը վկայում է այն մասին, որ դատարանը նրան մեղավոր է համարում, ողջամիտ չէ և անմեղության կանխավարկածի խախտում է»: Այսպիսով, ՄԻԵԴ-ը «կասկածի առկայության վիճակի» մասին պաշտոնական պնդումը հավասարեցրեց մեղքի հաստատմանը՝ առանց վերջնական դատական որոշման:

Այստեղ ՄԻԵԴ-ը հենվեց ընդհանուր մեթոդի վրա, ըստ որի՝ **ինչ-որ բան ապացուցելու կարիքը, հետևաբար նաև պարտականությունն առաջ է գալիս, երբ առկա է դրա հակառակի կանխավարկած:** Տվյալ դեպքում փաստորեն ՄԻԵԴ-ը գտավ, որ անձին իր անմեղությունն ապացուցելուն պարտավորեցնելը պայմանավորված է անձի մեղավոր լինելու կանխավարկածով, և անձին իր անմեղությունն ապացուցելուն պաշտոնապես պարտավորեցնելը հավասարազոր է նրան պաշտոնապես մեղավոր հայտարարելուն:

ՄԻԵԴ-ը նաև առանձին դիրքորոշում ունի՝ կապված նրա հետ, որ **առանձին քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում կայացված որոշման մեջ ազգային դատարանի կողմից անմեղության մասին արված մեկնաբանությունները, որոնք առնչվում էին քրեական գործով արդարացված անձին, նույնպես խախտում էին նրա անմեղության կանխավարկածը**<sup>292</sup>: Ամբողջ միտքը հետևյալն է. արդարացումը պետք է որպես հետևանք ունենա անձի անմեղության փաստումը՝ այն հաշվով, որ պաշտոնական որևէ հայտարարություն կամ որոշում, որը ստվեր է գցում արդարացման օրինական և հիմնավորված լինելու հանգամանքի վրա, հակասում է անմեղության կանխավարկածին:

**Սանդերսն ընդդեմ ՄԹ գործով** 1996 թ.-ի դեկտեմբերի 17-ի վճռով ՄԻԵԴ-ը նշեց, որ.

«Չնայած լռելու իրավունքը և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը Կոնվենցիայի տեքստում հատուկ նշված չեն, սակայն հանդիսանում են արդարացի ընթացակարգի հիմքում ընկած միջազգայնորեն ճանաչված նորմեր»<sup>293</sup>:

291. *Capeau v. Belgium*, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-67961%22%7D>

292. *Y.-ն ընդդեմ Նորվեգիայի, Y. v. Norway*, 11.02.2003, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-60934%22%7D>

293. *Saunders v. the United Kingdom*, para. 68, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-58009%22%7D>

Այս գործով ընկերության աշխատակիցը **քրեական վարույթ հարուցված չլինելու պայմաններում** պարտավորեցվել էր պետական մարմին տրամադրել տեղեկություններ, որոնք այդ մարմինը ներկայացրել է դատախազական մարմիններին՝ հետազայում դրանք այդ անձի դեմ քրեական հետապնդում իրականացնելիս օգտագործելու համար: ՄԻԵԴ-ը գտել է, որ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի լռելու և չաջակցելու իր մերկացմանը:

Մեկ այլ՝ **Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի** գործով (վճիռը կայացվել է 1993 թ.-ի փետրվարի 25-ին<sup>294</sup>) ընկերության տնօրենը, որն օրենքով պարտավորվել էր պատասխանել Առևտրի և արդյունաբերության նախարարության տեսուչների կողմից իրեն առաջադրված՝ ընկերության նկատմամբ վերահսկողության մասին հարցերին, ինչը կարող էր հանգեցնել հենց նրա դեմ մեղադրանք առաջադրելուն: Հետագայում հարցումների արձանագրությունները դատարանում օգտագործվել էին որպես ընկերության տնօրենի մեղքի ապացույց, և նա դատապարտվել էր: ՄԻԵԴ-ը որոշեց, որ գործով թույլ էր տրվել 6-րդ հոդվածի խախտում: Ֆունկեն նաև հրաժարվել էր մաքսային քննչական մարմիններին տրամադրել բանկային և այլ փաստաթղթեր, որոնք, նրանց կարծիքով, առկա էին, բայց որոնք չէին հայտնաբերվել խուզարկության ընթացքում, ինչի համար ֆունկեն ենթարկվել էր տուգանքի: Միաժամանակ անմեղության կանխավարկածը բացարձակ չէ նաև լռության իրավունքի իմաստով, և որոշ դեպքերում մեղադրյալը պարտավոր է բացատրություն ներկայացնել:

Քանի որ մեղադրյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված է այդ թեզն առաջ քաշած ու դատարանում այն պաշտպանող մեղադրող կողմի վրա, այդ ապացուցման արդյունքում մնացած ողջամիտ կասկածները անմեղության կանխավարկածի ուժով համարվում են չապացուցված և մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: ՀՀ գործող ԹԴՕ-ի 17-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն ամրագրում է. **«Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը»:**

Ինչպես տեսնում ենք, մեղադրյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար անհրաժեշտ *ողջամիտ կասկածներից վեր* շեմի հաղթահարված լինելու կամ, այլ կերպ ասած, ողջամիտ կասկածների փարատվածության գնահատմանը նույնպես «մասնակցում է» ողջամիտ դիտորդը: Իսկ ինչպե՞ս է գնահատվում, թե արդյոք մնացած կասկածները ողջամիտ են, թե ոչ: Ամենատրամաբանական պատասխանը, որը տրվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից մի դիրքորոշման մեջ, այն է, որ **ողջամիտ է այն, ինչի հակառակը հնարավոր չէ ողջամտորեն պնդել**<sup>295</sup>:

294. Funke v. France, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-57809%22%7D>

295. Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումը, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95718>:

## Մեղադրյալի հիմնական իրավունքները

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

Նույն իրավունքները նախատեսված են նաև ՀՀ Սահմանադրության 67-րդ («Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը») հոդվածով: ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության (ընդունվել է 1984 թ.-ին) 2-րդ հոդվածն ամրագրում է քրեական գործերով դատապարտյալի՝ դատավճիռը բողոքարկելու իրավունքը, իսկ 3-րդ հոդվածը՝ սխալ դատապարտման դեպքում անձի փոխհատուցման իրավունքը: ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ արարքի համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել, ինչպես նաև չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

Նախորդ կետում քննարկեցինք մեղադրյալի անմեղության կանխավարկածը, որից բխում են մեղադրյալի իրավունքները: Սակայն կան **պաշտպանության իրավունքի մաս կազմող իրավունքներ**, որոնք անձն ունի՝ անկախ իր դատավարական կարգավիճակից կամ որևէ կարգավիճակ ունենալու փաստից, և որոնցից նա օգտվում է նախքան մեղադրանք առաջադրվելը, քանի որ հակառակ դեպքում մեղադրանք առաջադրելուց հետո անմեղության կանխավարկածի իրավունքը կդառնար ոչ արդյունավետ: Մասնավորապես ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն.

«**Ոչ ոք** պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ»:

Սա նշանակում է, որ անձը ունի այդ իրավունքը մինչև մեղադրանք առաջադրվելը: ՀՀ օրենսդրությամբ սրա ուժով անձին, մասնավորապես վկային տրվում է փաստաբանով հանդես գալու իրավունք: Մյուս կողմից սրա ուժով մեղադրանք առաջադրելու օբյեկտիվ հիմքեր ունենալու դեպքում պետական մարմինները՝ քննիչը, դատախազը, պարտավոր են անձին առաջադրել մեղադրանք և բացատրել նրա իրավունքները՝ այդ թվում պաշտպան ունենալու և լռելու իրավունքները: Պատկերացրե՛ք, որ եթե անձը, պաշտպան չունենալով, ստիպված լինի ցուցմունք տալ որպես վկա, տա իրեն մերկացնող ցուցմունքներ, բացահայտի ինքն իրեն, ապա արդյո՞ք կարելի է խոսել նույն անձին մեղադրանք առաջադրելուց հետո նրա՝ որպես մեղադրյալ ունեցած իրավունքների՝ լռելու և պաշտպան ունենալու իրավունքի արդյունավետության մասին, եթե դրանց իրացման իմաստն արդեն բացակայում է:

Քանի որ մեղադրյալի պաշտպանության իրավունքը կազմող իրավունքների շրջանակը շատ լայն է, այստեղ կներկայացնենք դրանցից առավել բարդ՝ մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու կամ այլ կերպ ասած *հակընդդեմ հարցաքննության* իրավունքը՝ նաև որպես **ինքնավար հասկացության** օրինակ: Եվ այսպես, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

... դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները»:

Արդեն նշվեց միջազգային պայմանագրերում առկա հասկացությունների ինքնավարության և մեթոդական արժեքի մասին, մասնավորապես դրանց՝ ՄԻԵԿ-ի մեկնաբանմամբ տրված բովանդակության շնորհիվ է հնարավոր դառնում ապահովել դրանց պահանջների միատեսակ կիրառումը Եվրոպայի ամբողջ տարածքում: Ինքնավար նշանակություն ունեն նաև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի Դ կետում օգտագործվող *վկա* և *ցուցմունք* հասկացությունները, և Հայաստանի Հանրապետությունը չի կարող հրաժարվել մեղադրյալի պաշտպանության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի Դ կետում ամրագրված երաշխիքներն ապահովելուց՝ նշելով, որ մեղադրյալը չի կարող հարցաքննել այս կամ այն անձին, քանի որ վերջինս, ՀՀ քրեադատավարական օրենսդրության համաձայն, չունի կամ չի կարող ունենալ *վկայի* կարգավիճակ: ՄԻԵԿ-ի դիրքորոշումը շատ հստակ է և կարմիր թելով անցնում է քննարկվող հարցով կայացված բոլոր ակտերում: Այդ դիրքորոշման հիմքում ընկած է իրավունքի անձնակենտրոն գաղափարը, ըստ որի՝ եթե որևէ **անձի** «արտադրած» տեղեկատվությունը, անկախ գրավոր կամ բանավոր ձևից, կարող է ազդել ազգային դատարանի կողմից մեղադրյալի մեղավորության հարցը լուծելու վրա, ապա այն **վկայի ցուցմունք է**, ուստի և այն տված անձն էլ՝ **վկա**.

«... այն փաստը, որ ցուցմունքները, ինչպես սույն գործով է եղել, տրվել են համամեղադրյալի, այլ ոչ թե վկայի կողմից, նշանակություն չունի: Այս կապակցությամբ



Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի համակարգում *վկա* հասկացությունն ունի ինքնավար իմաստ: Այսպիսով, եթե ցուցմունքը նշանակալի չափով կարող է հիմք ծառայել դատապարտման համար, ապա անկախ նրանից, թե այն տրվել է վկայի կողմից՝ նեղ իմաստով, թե համամեղադրյալի կողմից, այն **մեղադրանքի կողմի համար** ապացույց է, որի նկատմամբ կիրառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի Դ կետով ամրագրված երաշխիքները»<sup>296</sup>:

Քանի որ վկաներին հակընդդեմ հարցաքննելու իրավունքը սահմանափակելի իրավունք է, այսինքն՝ կան լեգիտիմ շահեր, որոնք հետապնդելով այն կարող է սահմանափակվել (օրինակ՝ սպառնալիք ստացած կամ վտանգի տակ գտնվող վկաներին անախուս կերպով հանդես գալու և հարցաքննվելու թույլտվությունը), ապա այս իրավունքի սահմանափակումը ոչ միշտ է, որ հանգեցնում է արդար դատաքննության իրավունքի խախտման, եթե **չհարցաքննված վկայի ցուցմունքը վճռորոշ նշանակություն չի ունեցել անձի դատապարտման համար**<sup>297</sup>:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքն ամրագրել է մեղադրյալի այս կարևորագույն իրավունքը և նախատեսել դրա իրացումը նաև պետության ներկայացուցիչների նկատմամբ, այսինքն՝ իրավունք տալով մեղադրյալին հարցաքննելու նաև հետաքննություն իրականացրած անձին, ինչպես նաև քննիչին: Մասնավորապես ՀՀ ՔԴՕ 43-րդ հոդվածի («Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները») 1-ին մասի համաձայն՝

«Մեղադրյալը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի՝

... 10) հակընդդեմ հարցման ենթարկելու իր դեմ վկայած անձանց, կամ որ այդ անձինք ենթարկվեն հակընդդեմ հարցման, ինչպես նաև, որ իր օգտին վկայող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ վկայած անձինք»:

Միաժամանակ ՀՀ ՔԴՕ-ն երաշխիքներ է ստեղծել մեղադրյալի նշված իրավունքի իրացման համար: Մասնավորապես ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին համահունչ՝ օրենսգրքով ամրագրված՝ քրեական դատավարության սկզբունքների թվում 22-րդ հոդվածի («Պատշաճ ապացուցումը») 7-րդ մասով սահմանված է, որ.

«7. Մեղադրյալի դատապարտումը հակակշռող բավարար գործոնների բացակայության պայմաններում չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, որի հակընդդեմ հարցման հնարավորություն տվյալ մեղադրյալը կամ նրա պաշտպանը կամ ներկայացուցիչը չի ունեցել»:

296. *Lucà v. Italy*, 27.02.1991, para. 41, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-59222%22%7D>

297. Նույն տեղում, para. 40.

### Հարցեր լսարանին

1. Որո՞նք են օրենքի հիման վրա ստեղծված դատարանի հիմնական բնութագրիչները:
2. Նկարագրեք անմեղության կանխավարկածի տարրերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի հիման վրա:

## 5.7. Արտահայտվելու ազատության իրավունք

Արտահայտվելու ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունք է, որը ճանաչված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով և մի շարք այլ միջազգային իրավական փաստաթղթերով:

Կարծիքի արտահայտման ազատությունը երաշխավորված է նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով, որի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև, առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից, տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Բոլորին հայտնի է, որ առանց արտահայտվելու ազատության իրավունքի ապահովման ժողովրդավարություն գոյություն ունենալ չի կարող: Միևնույն ժամանակ հենց ժողովրդավարական համակարգում է առավելագույնս երաշխավորված մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Այս տեսանկյունից ժողովրդավարությունը և արտահայտվելու ազատությունը խիստ փոխկապակցված են միմյանց հետ:

Արտահայտվելու ազատության և հատկապես զանգվածային լրատվամիջոցների ազատության բացակայությունը կամ ոչ բավարար պաշտպանվածությունը ուղղակիորեն ազդում է երկրում մարդու իրավունքների վիճակի վրա՝ հանգեցնելով մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիայի, իշխանության չարաշահման և այլ արատավոր երևույթների աճին, քանի որ համապատասխան խախտումները չեն բարձրաձայնվում, և բացակայում է հանրային վերահսկողությունը պետական մարմինների գործունեության նկատմամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր վճիռներում բազմիցս շեշտել է, որ արտահայտվելու ազատությունը ոչ միայն ժողովրդավա-

րական հասարակության կարևոր հիմքերից մեկն է, այլև յուրաքանչյուր անհատի ինքնահիրացման նախապայմաններից մեկը<sup>298</sup>:

Այսպիսով, արտահայտվելու ազատության իրավունքի ուժով անձն ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այն ներառում է յուրաքանչյուրի սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այսինքն՝ անձը պետք է հնարավորություն ունենա ազատ, առանց մտավախության արտահայտելու իր կարծիքը տարբեր երևույթների վերաբերյալ, այդ թվում՝ իր անհամաձայնությունը, քննադատությունը կամ դժգոհությունը իշխանությունների գործողությունների կամ անգործության վերաբերյալ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Հենդհայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով<sup>299</sup> կայացված վճռով սահմանվեց դատարանի այն առանցքային մոտեցումը, որն այնուհետև կանխորոշեց դատարանի նախադեպային պրակտիկան արտահայտվելու ազատության իրավունքին առնչվող գործերի քննության ժամանակ: Ըստ այդ դիրքորոշման՝ «Արտահայտվելու ազատությունը... կիրառելի է ոչ միայն այն «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ կամ չեզոք, այլ նաև նրանց, որոնք վրդովեցնում են, ցնցում կամ անհանգստություն պատճառում»: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սրանք են բազմակարծության, հանդուժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել ժողովրդավարական հասարակություն:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմինների պրակտիկան վկայում է այն մասին, որ արտահայտվելու ազատության իրավունքը տարածվում է արտահայտման բոլոր ձևերի նկատմամբ՝ բանավոր, գրավոր արտահայտությունը, պատկերները, գրքերի, թերթերի, ամսագրերի, ֆիլմերի, հեռուստատեսության, ռադիոյի, համացանցի, սոցիալական մեդիայի միջոցով արտահայտությունը և այլն<sup>300</sup>:

## **Պետության պարտավորությունները արտահայտվելու ազատության իրավունքի բնագավառում**

Պետությունն ունի արտահայտվելու ազատության իրավունքից բխող թե՛ նեգատիվ և թե՛ պոզիտիվ բնույթի պարտավորություններ: Նեգատիվ պարտավորությունների շրջանակում այն չպետք է միջամտի անհատի կողմից արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը՝ բացառությամբ թույլատրված խիստ սահմանափակ դեպքերի:

298. *Observer and Guardian v. the United Kingdom*, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57705>

299. *Handyside v. the United Kingdom*, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57499>

300. A Guide to the Interpretation and Meaning of Article 10 of the European Convention on Human Rights, Toby Mendel Executive Director Centre for Law and Democracy. General comment No. 34 Article 19: Freedoms of opinion and expression, UN Human Rights Committee.

Արտահայտվելու ազատության իրավունքին միջամտության դեպքերը կարող են դրսևորվել, օրինակ, լրատվամիջոցի նկատմամբ վնասի փոխհատուցում վճարելու պարտականությունն ախտատեսող դատական ակտի կայացման, ՉԼՄ-ի կողմից հրապարակման իրականացումն արգելող, հերքում կամ ներողության տեքստ հրապարակելու պահանջ, տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջ ախտատեսող դատական ակտի կայացման և այլ եղանակներով: Եթե համապատասխան պետությունում առկա են վիրավորանքի կամ զրպարտության համար քրեական պատասխանատվություն սահմանող իրավակարգավորումներ, միջամտությունը կարող է դրսևորվել նաև անձի նկատմամբ քրեական պատասխանատվության միջոցներ կիրառելու եղանակով:

Այս առումով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ախտատեսում է արտահայտվելու ազատության իրավունքին հնարավոր միջամտության մի քանի եղանակներ: Այսպես, վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

- *հրապարակայնորեն ներողություն խնդրել,*
- *եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը,*
- *սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել,*

իսկ զրպարտության պարագայում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

- *եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը,*
- *սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 6000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:*

Վերոգրյալ պաշտպանության միջոցների անհիմն կիրառումը դատարանի կողմից, օրինակ՝ զանգվածային լրատվության միջոցի նկատմամբ, կհանգեցնի արտահայտվելու ազատության իրավունքին ոչ իրավաչափ միջամտության և հետևաբար այս իրավունքի խախտմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ արդեն իսկ կայացվել են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի խախտում արձանագրող վճիռներ: Օրինակ՝ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով<sup>301</sup> ներպետական դատարանի վճռով լրատվամիջոցի վրա դրված՝ հերքում հրապարակելու և հայցվորներին զգալի չափով փոխհատուցում վճարելու պարտականությունը

301. «Դարեսկիզբ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154926>

ՄԻԵԴ-ի կողմից գնահատվել է որպես ոչ իրավաչափ միջամտություն արտահայտվելու ազատության իրավունքին, և արձանագրվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը այս գործով արձանագրել է, որ ներպետական դատարանները զրպարտության վերաբերյալ պահանջի հետ կապված չեն ընդունել Կոնվենցիայի չափանիշներին համապատասխան վճիռ, չեն ներկայացրել համապատասխան և բավարար հիմնավորումներ՝ դիմումատու ընկերության՝ արտահայտվելու ազատության իրավունքին միջամտության և նշանակված ոչ համաչափ պատասխանատվության միջոցների համար, հետևաբար վիճարկվող միջամտությունը «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»:

Պետությունն ունի նաև արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը աջակցելուն ուղղված պոզիտիվ պարտավորություններ:

Այս պարտավորությունների շրջանակում, ի թիվս այլ միջոցների, պետությունը պետք է ստեղծի հեղինակների և լրագրողների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ՝ հանրային քննարկմանը բոլոր շահագրգիռ անձանց մասնակցության նպաստավոր միջավայր ապահովելու համար, ինչը հնարավորություն կտա վերջիններիս առանց մտավախության արտահայտելու իրենց կարծիքներն ու գաղափարները<sup>302</sup>:

### **Արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումները**

Արտահայտվելու ազատությունը բացարձակ իրավունք չէ և կարող է ենթակա լինել որոշակի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով, բխում են սահմանված իրավաչափ նպատակներից և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշտապես շեշտել է, որ քաղաքական խոսքի և հանրային շահին առնչվող հարցերի քննարկման բնագավառներում սահմանափակումների կիրառման հնարավորությունը բավականին նեղ է<sup>303</sup>:

Արտահայտվելու ազատության իրավունքին միջամտության իրավաչափությունը գնահատելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կիրառում է եռաստիճան թեստ: ՄԻԵԴ-ը գնահատում է, թե.

- արդյո՞ք միջամտությունն արտահայտվելու ազատության իրավունքին սահմանված է ներպետական օրենսդրությամբ, արդյո՞ք այդ օրենսդրությունը իրապես մատչելի է քաղաքացու համար և բավարար չափով հստակ, որպեսզի անձը հնարավորություն ունենա անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավական օգնություն ստանալու միջոցով համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված պահանջներին.
- արդյո՞ք միջամտությունը հետապնդում է իրավաչափ նպատակ.

302. Dink v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/eng/?i=002-808>

303. Castells v. Spain, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57772>

Այս նպատակները սպառնիչ կերպով թվարկված են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասում: Այսպես, արտահայտվելու ազատության իրավունքը կարող է սահմանափակվել՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Օրինակ, եթե անձը հայց է ներկայացրել դատարան իր պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները հերքելու պահանջով ընդդեմ լրատվամիջոցի, այս գործով կայացված միջամտություն նախատեսող դատական ակտը կառնչվի այլ անձանց հեղինակությունը պաշտպանելու նպատակին, իսկ եթե, օրինակ, անձը ենթարկվել է քրեական պատասխանատվության պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները ապօրինի հրապարակելու համար, համապատասխան միջամտությունը կառնչվի պետական անվտանգության պաշտպանության նպատակին և այլն:

- արդյո՞ք միջամտությունը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»: *Այս պահանջի շրջանակներում Դատարանը որոշում է, թե արդյո՞ք միջամտությունը բխում է «ճնշող հասարակական կարիքից», համաչափ է հետապնդվող իրավաչափի նպատակին և արդյո՞ք համոզիչ կերպով հիմնավորված է սահմանափակման անհրաժեշտությունը:*

Այսպիսով, սահմանափակման՝ օրենքով նախատեսված լինելը և իրավաչափի նպատակ հետապնդելը դեռ բավարար չեն միջամտությունը արդարացված համարելու համար, միջամտությունը պետք է նաև անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում: Ինչպես նշվեց, միջամտության անհրաժեշտությունը որոշելիս ՄԻԵԿ-ը, ի թիվս այլ հանգամանքների, գնահատում է սահմանափակման համաչափությունը, այն հարցը, թե արդյո՞ք առկա են եղել այլընտրանքային միջոցներ, որոնք նույն իրավաչափի նպատակին կարող էին հասնել՝ առավել նվազ ծավալով սահմանափակելով արտահայտվելու ազատության իրավունքը: Օրինակ՝ *Ռոմանենկոն և մյուսները ընդդեմ Ռուսաստանի* վճռով<sup>304</sup> ՄԻԵԿ-ը արձանագրել է, որ դիմումատուների արտահայտվելու ազատության իրավունքի խախտումը տեղի է ունեցել նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չէին գնահատել, թե վերջիններիս եկամուտների որ մասն է կազմել պահանջվող փոխհատուցումը, և արդյո՞ք դրանով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: ՄԻԵԿ-ը գտել է, որ պահանջվող փոխհատուցումը հավասար է եղել դիմումատուների չորս ամսվա եկամուտներին և հետևաբար եղել է ակնհայտորեն ոչ համաչափ՝ արձանագրելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Արտահայտվելու ազատության իրավունքին միջամտության իրավաչափությունը գնահատելիս ՄԻԵԿ-ը քննարկման առարկա է դարձնում մի շարք էական հանգամանքներ, որոնք էլ իրենց հերթին կանխորոշում են արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության աստիճանը:

304. Romanenko and others v. Russia, <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-94843>

## Չանգվածային լրատվության միջոցների դերը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտվելու ազատության իրավունքին առնչվող գործերով առանձնահատուկ կարևորություն է տալիս ՉԼՄ-ների դերին: Մի շարք վճիռներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. «... Թեև մամուլը չպետք է անցնի այն սահմանները, որոնք նախատեսված են, այդ թվում այլ անձանց հեղինակությունը պաշտպանելու համար, այն ունի քաղաքական հարցերով, ինչպես նաև հանրային նշանակություն ունեցող այլ հարցերով տեղեկություններ և գաղափարներ տարածելու առաքելություն, հանրությունն իր հերթին ունի այդ տեղեկությունները և գաղափարները ստանալու իրավունք<sup>305</sup>»:

Ի թիվս այլ գործերի՝ *Սանդի Թայմս ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով կայացված վճիռով<sup>306</sup> ՄԻԵԴ-ը լրատվամիջոցների դերը բնորոշել է նրանց հանրային հսկիչ լինելու գործառնությունով և, հաշվի առնելով Չանգվածային լրատվամիջոցների Եական ներդրումը ժողովրդավարական, հասարակությունում արդարացված է համարել նաև որոշակի աստիճանի չափազանցության և սադրանքի դիմելու հնարավորությունը լրագրողական ազատության շրջանակներում<sup>307</sup>:

Այնուամենայնիվ, կարևոր է շեշտել նաև, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ արտահայտվելու ազատության իրականացումը ենթադրում է պարտականություններ և պատասխանատվություն, որոնք կիրառելի են նաև մամուլի նկատմամբ: ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ պարտականություններն ու պատասխանատվությունը ձեռք են բերում Եական նշանակություն, երբ արատավորվում է անհատի հեղինակությունը, և խախտվում են այլոց իրավունքները: Որքան ավելի լուրջ է արված հայտարարությունը, այնքան ավելի ամուր փաստական հիմքեր են անհրաժեշտ այն հիմնավորելու համար<sup>308</sup>: ՄԻԵԴ-ը մշտապես շեշտել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ տրամադրելու նպատակով՝ լրագրողական էթիկայի պահանջներին համապատասխան<sup>309</sup>:

ՄԻԵԴ-ը կիրառել է այս սկզբունքները նաև Հայաստանի նկատմամբ կայացված վճիռներով: Այսպես, «*Դարեսկիզբ*» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով<sup>310</sup> ՄԻԵԴ-ը, ի թիվս Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ այլ հիմնավորումների, արձանագրել է, որ ներպետական վճիռներում չկա որևէ վկայություն առ այն, որ դատարանները ձեռնարկել են հայցվորների համբավի պաշտպանության անհրաժեշտության և մամուլի՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկություններ տարածելու իրավունքի միջև հավասարակշռություն հաստատելու նախաձեռնություն:

305. Bladet Tromsø and Stensaas v. Norway, <https://hudoc.echr.coe.int/?i=001-58369>

306. Sunday Times v. the United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57584>

307. Dichand and others v. Austria, <https://hudoc.echr.coe.int/?i=001-60171>

308. Europapress Holding D.O.O. v. Croatia, 22/10/2009, <https://hudoc.echr.coe.int/?i=001-95329>

309. Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/05/1999, <https://hudoc.echr.coe.int/?i=001-58369>

310. «Դարեսկիզբ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154926>

## Հանրային նշանակություն ունեցող հարցերի քննարկում

ՄԻԵԴ-ը ընդարձակ պաշտպանություն է տրամադրում արտահայտվելու ազատությամբ, եթե համապատասխան հայտարարությունները արվել են հանրային նշանակություն ունեցող հարցերի քննարկման շրջանակներում<sup>311</sup>: Հանրային նշանակություն ունեցող հարցերի առկայությունը ՄԻԵԴ-ի կողմից որպես կանոն գնահատվում է՝ հաշվի առնելով այն սուբյեկտների շրջանակը, որոնց նկատմամբ քննադատության շրջանակները պետք է ավելի լայն լինեն՝ մասնավոր անձանց համեմատությամբ, և այն հիմնահարցերի շրջանակը, որոնք առնչվում են հանրային շահին: ՄԻԵԴ-ի կողմից նաև հստակ տարանջատվում են այն իրավիճակները, երբ առկա է հասարակության տեղեկացված լինելու իրավունքը, և երբ հրապարակումը ծառայում է զուտ որոշակի ընթերցողների հետաքրքրասիրությունը բավարարելուն<sup>312</sup>:

Հանրային անձանց նկատմամբ քննադատության շրջանակների առնչությամբ ՄԻԵԴ-ի կողմից սահմանված առանցքային սկզբունքը հետևյալն է. երբ մասնավոր անձինք մտնում են հանրային դաշտ, նրանք բաց են դառնում հանրային քննարկման համար և հետևաբար պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան քննադատության նկատմամբ: Միևնույն ժամանակ, օրինակ, դերասանների, հեռուստավարողների, երգիչների և այլ հանրային անձանց նկատմամբ ընդունելի քննադատության շրջանակները շատ ավելի նեղ են, նրանց կարգավիճակը գրեթե հավասարեցվում է մասնավոր անձանց կարգավիճակին: Օրինակ՝ *ԷմՋիէն Լիմիթիդն ընդդեմ Միացյալ Թագավորության*<sup>313</sup> կայացված վճռով ՄԻԵԴ-ը շեշտել է, որ այնպիսի լուսանկարների և հոդվածների հրապարակումը, որոնց միակ նպատակը որոշակի շրջանակի ընթերցողների հետաքրքրասիրության բավարարումն է, չի կարող համարվել որևէ հանրային շահին առնչվող քննարկմանը նպաստող:

ՄԻԵԴ-ի կողմից *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի* գործով<sup>314</sup> սահմանված առանցքային սկզբունքի համաձայն՝ «քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ ... ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և հետևաբար պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան»: ՄԻԵԴ-ը արձանագրել է նաև, որ կառավարությունը պետք է դրսևորի անգամ ավելի բարձր աստիճանի հանդուրժողականություն քննադատության նկատմամբ, քան քաղաքական գործիչները, քանի որ ժողովրդավարական համակարգում կառավարության գործողությունները կամ բացթողումները պետք է ենթարկվեն ոչ միայն օրենսդիր և դատական, այլև մամուլի և հասարակական կարծիքի ուշադրությանը<sup>315</sup>:

311. Flux v. Moldova, <https://hudoc.echr.coe.int/?i=001-87217>

312. Standard Verlags GmbH v. Austria, <https://hudoc.echr.coe.int/?i=001-77829>

313. MGN Limited v. the United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/fre?i=002-648>

314. Lingens v Austria, <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-57523>

315. Castells v. Spain, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57772>



Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից հետևում է, որ իրենց ծառայողական պարտականությունները կատարող քաղաքացիական ծառայողները պետք է ավելի մեծ հանդուրժողականություն ցուցաբերեն քննադատության նկատմամբ՝ ի համեմատ մասնավոր անձանց: Այնուամենայնիվ, ըստ ՄԻԵԴ-ի, ի տարբերություն քաղաքական գործիչների, քաղաքացիական ծառայողները գիտակցաբար իրենց ենթակա չեն դարձնում յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ ստուգման<sup>316</sup>:

## Փաստեր և գնահատողական դատողություններ

ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին վերաբերող գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակորեն տարանջատում է ներկայացված գնահատողական դատողությունը փաստերից՝ համարելով, որ եթե փաստերի ամկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն<sup>317</sup>: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10-րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է<sup>318</sup>: Այնուամենայնիվ, ըստ ՄԻԵԴ-ի՝ նույնիսկ գնահատողական դատողությունը, առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի, կարող է լինել չափազանց<sup>319</sup>:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում *Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության*<sup>320</sup> գործով ՄԻԵԴ-ի կողմից արտահայտված դիրքորոշումները: Այս գործով ներպետական դատարանները եզրահանգում էին կատարել առ այն, որ դիմումատուն ենթակա է պատասխանատվության, քանի որ չի կարողացել ապացուցել «Պարոն Շամանովը չունի ո՛չ ամոթ, ո՛չ պատկառանք» հայտարարության ճշմարտացիությունը: Այս վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը տարբերակում չի կատարել գնահատողական դատողության և փաստական տվյալի միջև, քանի որ այն հղում է կատարել ընդհանուր առմամբ *տեղեկություն* արտահայտությանը և ելել է այն կանխավարկածից, որ ցանկացած նման հայտարարություն քաղաքացիական դատավարության շրջանակներում ենթակա է ապացուցման: Արձանագրվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

## Ատելության խոսք

Առայսօր ամկա չէ համընդհանուր ճանաչում ստացած սահմանում ատելության խոսքի վերաբերյալ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը թեև հստակ սահմանում չի տվել ատելության խոսքին, մի շարք վճիռներում հղում է կատարել «արտահայտ-

316. Pedersen and Baadsgaard v. Denmark, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-67818>

317. Mvcar v. the United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-60450>

318. Lingens v Austria, <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-57523>

319. Pedersen and Baadsgaard v. Denmark, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-67818>

320. Grinberg v. Russia, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-69835>

վելու բոլոր ձևերին, որոնք տարածում, հրահրում, խրախուսում կամ արդարացնում են անհանդուրժողականության վրա հիմնված ատելությունը»<sup>321</sup>:

ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու հարգանքը բոլոր մարդկանց հավասար արժանապատվության նկատմամբ ժողովրդավարական, բազմակարծության վրա հիմնված հասարակության հիմքերն են, միաժամանակ որոշ ժողովրդավարական հասարակություններում կարող է անհրաժեշտ համարվել անհանդուրժողականության վրա հիմնված ատելությունը արդարացնող, հրահրող արտահայտման ձևերի կանխումը կամ նման դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառումը՝ համաչափության սկզբունքի պահպանման պայմանով<sup>322</sup>:

Ատելության հրահրման և արտահայտվելու ազատության իրավունքին առնչվող գործերի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կիրառում է հետևյալ երկու մոտեցումները. 1. Կոնվենցիայի 17-րդ հոդվածին հղում կատարելով՝ բացառում է տվյալ արտահայտությունները ՄԻԵԿ-ի պաշտպանության շրջանակներից, երբ խնդրո առարկա արտահայտությունները որակվում են որպես ատելության խոսք և ոչնչացնում են Կոնվենցիայի հիմնարար արժեքները, 2. կիրառում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված սահմանափակումները, երբ վիճարկված արտահայտությունները թեև որակվում են որպես ատելության խոսք, սակայն ընդունակ չեն վերացնելու ՄԻԵԿ-ի հիմնարար արժեքները<sup>323</sup>:

Ճայրահեղական բնույթի խոսքն արգելված է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մասնավորապես քրեականացված է անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը: Քրեական պատասխանատվություն է սահմանված նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև ատելության խոսքի մի շարք այլ դրսևորումների համար:

## Տեղեկատվության մատչելիություն

Արտահայտվելու ազատության իրավունքի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ նաև տեղեկատվության ազատության իրավունքին, որը արտահայտվելու ազատության իրավունքի բաղաճուցիչ մասն է: Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝

321. *Erbakan v. Turkey*, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-76232>

322. Նույն տեղում, § 56:

323. Factsheet - Hate speech, [https://www.echr.coe.int/documents/d/echr/fs\\_hate\\_speech\\_eng](https://www.echr.coe.int/documents/d/echr/fs_hate_speech_eng)

նաև Օրենք) և այլ իրավական ակտերով: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Որպես տեղեկատվություն տնօրինող օրենքը դիտարկում է տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական հիմնարկներին, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններին, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններին (ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին) և դրանց պաշտոնատար անձանց:

Տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է տեղեկությունը տրամադրել դիմողին հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքերի): Օրենքը սահմանում է նաև տեղեկատվության տրամադրումը մերժելու հնարավորություն՝ խիստ սահմանափակ հիմքերի առկայության դեպքում:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից տեղեկատվությունը ապօրինաբար չտրամադրելու համար ՀՀ օրենսդրությունը սահմանում է պատասխանատվություն:

### **Հարցեր լսարանին**

1. Որո՞նք են արտահայտվելու ազատության իրավունքի իրավաչափ սահմանափակման նախապայմանները: Բերե՞ք արտահայտվելու ազատության իրավունքին ոչ իրավաչափ միջամտության մի քանի օրինակ:
2. Հիմնավորե՞ք արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության աստիճանակարգության անհրաժեշտությունը:

## 5.8. Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը մարդու կարևորագույն իրավունքներից է, որը ճանաչված և երաշխավորված է թե՛ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, թե՛ միջազգային փաստաթղթերով, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով:

### Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն՝

- «1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակա՝ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:
2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:
4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»:

Մտքի, խղճի, կրոնի ազատությունները գտնվում են սերտ փոխկապակցված են և մեծ հաշվով պայմանավորում են միմյանց ու բխում մեկը մյուսից:

### Մտքի ազատության իրավունք

Մտքի ազատության իրավունքի հիմքում ընկած է այն գաղափարը, որ յուրաքանչյուր անհատ ներքուստ հնարավորություն պետք է ունենա առանց որևէ արտաքին միջամտության կամ ազդեցության (այդ թվում՝ հանրային իշխանության կողմից գործադրվող) ձևավորելու (ունենալու) իր միտքն ու համոզմունքները և փոփոխելու դրանք: Այս իրավունքը անհատի համար ապահովում է երաշխավորված ազատություն՝ տրամաբանելու, բարոյական դատողություններ ձևավորելու, քննադատաբար մտածելու և մտորելու իրեն շրջապատող աշխարհի, հանրային և մասնավոր կյանքի հիմնարար ընկալումների շուրջ:

Մտքի ազատության իրավունքը չի սահմանափակվում լոկ քաղաքական դաշտով, այլև տարածվում է կյանքի բոլոր ասպեկտների և մտքի բոլոր ոլորտների վրա և մնում է անհատի հետ՝ անկախ վերջինիս գտնվելու վայրից և հանգամանքներից, որոնցում նա հայտնվում է: Հատկանշական է, որ այս իրավունքն իր բնույթով բացարձակ է, այսինքն՝ որևէ դեպքում սահմանափակման ենթակա չէ: Մտքեր և համոզմունքներ ունենալու և դրանք փոփոխելու ազատությունը մարդու անօտարելի և բացարձակ ազատություններից է:

## **Խղճի ազատության իրավունք**

Խղճի ազատության իրավունքը սերտորեն փոխկապակցված է մտքի ազատության իրավունքի հետ: Այն վերաբերում է անհատի՝ հավատք և բարոյական կամ էթիկական դատողություններ ունենալու կարողությանը՝ հիմնվելով բարու և չարի անձնական մեկնաբանության վրա: Կարևոր է նշել, որ այս իրավունքը ներառում է նշյալ համոզմունքներին համապատասխան գործելու և դրանց հակասող գործողություններից, վարքագծից զերծ մնալու ազատությունը՝ պայմանով, որ այլոց իրավունքներն ու ազատությունները հարգվում են և չեն խախտվում:

Այսպիսով, խղճի ազատության իրավունքը ներառում է սեփական համոզմունքներին համաձայն վարվելու հնարավորությունն ու ազատությունը:

Խղճի ազատության իրավունքը հաճախ վկայակոչվում է այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են, օրինակ, զինվորական ծառայությունը, առողջապահությունը, հանրային ծառայողների մասնագիտական պարտականությունները, կարող է վերաբերել այնպիսի հարցերի և հավատքի այնպիսի կառույցների, ինչպիսիք են պացիֆիզմը, բուսակերությունը և այլն: Խղճի ազատության իրավունքը կարող է ենթարկվել սահմանափակումների՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

## **Կրոնի ազատության իրավունք**

Կրոնի ազատության իրավունքը, որը նաև հայտնի է որպես հավատքի ազատության իրավունք, ներառում է որևէ կրոնական համոզմունք ունենալու, կրոնական համոզմունքները փոխելու և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը: Ինչպես կարելի է տեսնել, այս իրավունքը կարող է ներառել կրոնական արարողությունների և պրակտիկայի տարբեր ասպեկտներ, ինչպիսիք են կրոնական

քարոզը, պաշտամունքը, ուսուցումը, ծիսակատարությունները: Այն ներառում է նաև որևէ կրոն չդավանելու ազատությունը:

Կարևոր է շեշտել, որ այս ազատությունը վերաբերում է ոչ միայն ավանդական և լայնորեն ճանաչված կրոններին, այլև ավելի նոր կրոններին և փոքրամասնությունների հավատքներին, այսինքն՝ տարածվում է կրոնական հավատի ուսմունքների և այլ համակարգերի վրա:

Վերը ներկայացվածի հիման վրա կարող ենք արձանագրել, որ սկզբում անձը իրացնում է իր մտքի ազատության իրավունքը, ինչին հաջորդում է խղճի ազատության իրացումը, այսինքն՝ անձը գործում է իր համար ընդունելի որևէ բնույթի համոզմունքին համապատասխան, իսկ արդեն կրոնի ազատությունն ունի ավելի նեղ ընդգրկվածություն և արտահայտվում է սեփական կրոնական համոզմունքներն ունենալով և դրանք այս կամ այն ձևով արտահայտելով:

Ինչպես նշվեց, այս երեք ազատությունները փոխկապակցված են և հաճախ համընկնում են: Նրանք միասին կազմում են անհատական ինքնավարության և ինքնաարտահայտման հիմնաքարը՝ վճռորոշ դեր խաղալով բազմակարծիք, ժողովրդավարական հասարակություններում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գործերից մեկով նշել էր, որ ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատությունը «ժողովրդավարական հասարակության» հիմքերից է, և գտել, որ այդ իրավունքը, «կրոնական կտրվածքով» կենսական տարր լինելով հավատացյալների համար, արժեք է նաև «աթեիստների, ագնոստիկների, սկեպտիկների և չեզոք անձանց համար: Բազմակարծությունը, որը դարավոր պայքարի արժեքավոր արդյունք համարվող ժողովրդավարական հասարակության անբաժան մասն է, կախված է դրանից»<sup>324</sup>:

Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքն ունի երկու կողմ՝ ներքին (*forum internum*) և արտաքին: Ներքին կողմը վերաբերում է անձի՝ սեփական գիտակցության մեջ կրոնական մտքեր և համոզմունքներ կրելու կամ դրանք փոփոխելու ազատությանը, իսկ արտաքին կողմն արդեն վերաբերում է դրանց արտահայտմանը՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով: Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից ակներև է, որ Սահմանադիրն ամրագրել է միայն համոզմունքների (կրոնական կամ ոչ կրոնական) արտահայտման մասնավոր մի քանի եղանակներ, սակայն այդ ցանկը սպառիչ չէ:

Անդրադառնալով մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի բովանդակությանը, դրա ներքին և արտաքին դրսևորումներին՝ Սահմանադրական դատարանը նշել էր, որ «Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրվում է մարդու մտքի, խղճի, կրոնի ազատության հիմնական իրավունքը: Նույն հոդվա-

324. "Kokkinakis v. Greece" European Court of Human Rights, 25 May, 1993, European Human Rights Reports, Vol. 17, 1993, p. 397, para. 31.

ծի 1-ին մասի 2-րդ նախադասությունը մանրամասնում է կրոնի ազատության իրավունքի բովանդակությունը՝ սահմանելով, որ այն «ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակապ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը»: (...)

Կրոնի ազատության իրավունքի ներքին բաղադրիչը վերաբերում է հավատքի ազատությանը, մարդու ներաշխարհին և ունի կենսագործման յուրահատուկ կառուցակարգ, իսկ արտաքին բաղադրիչը վերաբերում է կրոնական դավանանքի կամ համոզմունքների հիման վրա որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի վարքագծից ձեռնպահ մնալու իրավունքին, և իր հերթին բաժանվում է կրոնական ազատության դրական (պոզիտիվ) և բացասական (նեգատիվ) տարրերի: Կրոնական դրական ազատությունը դասական իմաստով սեփական կրոնական հավատալիքները կամ համոզմունքներն ակտիվորեն դավանելու ազատությունն է: (...)

Կրոնական բացասական (նեգատիվ) ազատությունը կրոնական համոզմունքների հիմքով գործադրվող հարկադրանքից կամ դրսևորվող խտրականությունից զերծ լինելն է: Հարկադրանքից զերծ լինելու ազատությունը ենթադրում է, որ մարդն իր կրոնական համոզմունքների պատճառով չի ենթարկվում պատժամիջոցների կամ անբարենպաստ որևէ այլ վերաբերմունքի:

Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ» կրոնի ազատությունն արտահայտելու իրավունքը, որը ենթադրում է՝ առաջին, անձինք իրավունք ունեն խմբերով դավանելու իրենց կրոնը՝ առանց հատուկ կազմակերպական իրավական ձևով գրանցվելու, ինչը չի բացառում հավատացյալների խմբերի երկրորդ իրավունքը՝ ձեռք բերել կազմակերպական որոշակի ձևի իրավասությունները: Կրոնի ազատության իրավունքի այս բաղադրիչը կարևորվել է միջազգային պարտադիր և խորհրդատվական մի շարք փաստաթղթերով»<sup>325</sup>:

Թեև Սահմանադրական դատարանի վերը մեջբերված ՍԴՈ-1683 որոշման հիշյալ հատվածն առավելապես վերաբերում է կրոնի ազատությանը, ակներև է, որ դրանում ներկայացված դատողությունները հավասարապես կիրառելի են նաև արդեն ոչ կրոնական բնույթի համոզմունքներ ունենալու և դրանք արտահայտելու դեպքերում:

Ինչպես ցանկացած հիմնական իրավունքի, այնպես էլ՝ մտքի, խղճի կրոնի ազատության իրավունքով պահանջների հասցեատերը հանրային իշխանությունն է: Այս կապակցությամբ հանրային իշխանությունը ստանձնում է միաժամանակ երկու բնույթի պարտականություններ.

1. նեգատիվ, այն է՝ ձեռնպահ մնալ այդ իրավունքին միջամտությունից.
2. պոզիտիվ՝ պաշտպանել այդ իրավունքը երրորդ անձանց ոտնձգություններից, այդ թվում՝ ընդունելով այդ առումով անհրաժեշտ օրենսդրություն:

325. 2023 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1683 որոշում:

Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը, ըստ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասի և ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, կարող է ենթարկվել սահմանափակման: Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ինչպես ցանկացած հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման պարագայում է, այս դեպքում նույնպես որևէ սահմանափակում կարող է համարվել իրավաչափ, եթե այն նախատեսված է օրենքով, հետապնդում է իրավաչափ նպատակ (թվարկված են Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասում) և համաչափ է (Սահմանադրություն, հոդված 78): Միաժամանակ հիմնական իրավունքների և ազատությունների Էությունն անխախտելի է (Սահմանադրություն, հոդված 80), և հետևաբար բոլոր դեպքերում նախատեսված որևէ սահմանափակում չի կարող խաթարել մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի բուն Էությունը:

2020 թվականի փետրվարի 18-ի ՍԴՈ-1506 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «Մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանադրական բովանդակության բացահայտման տեսանկյունից՝ (...) այդ իրավունքն ընդգրկում է.

- 1) անձի՝ համոզմունք, մասնավորապես՝ կրոնական համոզմունք ունենալու ազատությունը, որը սահմանադրական մակարդակով երաշխավորված բացարձակ իրավունք է և ենթակա չէ որևէ սահմանափակման,
- 2) կրոնական համոզմունքներն արտահայտելու, ի ցույց դնելու ազատությունը, որը, ի տարբերություն այդպիսիք ունենալու ազատության՝ բացարձակ չէ և կարող է սահմանափակվել օրենքով՝ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հիմքերով:

(...) Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ կրոնի ազատության սահմանափակման (արգելքի) հիմք կարող է լինել ոչ թե համոզմունքներ ունենալու ազատությունը, այլ կրոնական համոզմունքներն արտահայտելու ազատությունը, եթե այդ սահմանափակումը պայմանավորված է պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ: Ինչպես նշվեց, նույնաբովանդակ սահմանափակումներ են նախատեսված նաև միավորումների ազատության սահմանափակման համար: Հետևապես, մինչև կրոնի ազատության արտահայտման սահմանափակման համաչափության գնահատումը Սահմանադրական դատարանի գնահատման առարկան առաջին հերթին այդպիսի սահմանափակման հիմքերի առկայության ստուգումն է»:

Այսպիսով, մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի ներքին բաղադրիչը (*forum internum*) սահմանափակման ենթակա չէ, իսկ այս իրավունքի հնարավոր սահմանափակումները կարող են վերաբերել համոզմունքների արտահայտման ազատությանը:



Սահմանափակումը օրենքով նախատեսված լինելու, վերը հիշատակված նպատակներից որևէ մեկը հետապնդելու, նաև սահմանափակումը համոզմունքների արտահայտմանը վերաբերելու պարագայում արդեն առաջ կգա այս իրավունքի սահմանափակման համաչափության գնահատման անհրաժեշտությունը՝ իր ամբողջության մեջ սահմանափակման իրավաչափությունը պարզելու նպատակով:

Հիմնական իրավունքների սահմանափակման համաչափությանը նվիրված Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «*Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը*»:

Համաչափության թեստը հանգում է հետևյալին.

1. Միջամտությունը պետք է լինի պիտանի, այսինքն՝ հնարավոր դարձնի այն նպատակի կյանքի կոչումը, որի համար էլ նախաձեռնվել է:
2. Միջամտությունը պետք է լինի անհրաժեշտ համապատասխան իրավաչափ նպատակին հասնելու համար, այսինքն՝ որևէ այլ առավել մեղմ միջոցով հետապնդվող նպատակին հասնել հնարավոր չէ:
3. Պետք է հավասարակշռություն ապահովվի միջամտությամբ ստացվելիք արժեքի և անձի հիմնական իրավունքի կամ ազատության միջև:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով պետության կողմից հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում անձանց առաջադրվելիք պահանջների և վերջիններիս կրոնական համոզմունքների հարաբերակցության հարցերին, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴԴ-1244 որոշմամբ նշել է հետևյալը.

*«Սահմանադրական դատարանն իր ՍԴԴ-649 որոշմամբ անդրադառնալով օրենքով նախատեսված անձի սուբյեկտիվ պարտականության և Սահմանադրությամբ երաշխավորված խղճի, կրոնի, համոզմունքների ազատության իրավունքի հարաբերակցության, դրանց հավասարակշռման սահմանադրաիրավական գնահատման խնդրին՝ ընդգծել է, որ «... Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել այդ համոզմունքների դավանաբանական էությունը, սակայն օրենքի կիրառման առաջին իսկ պահից ծագած այս խնդիրները մղել են և՛ օրենսդրին, և՛ գործադիր իշխանությանը տվյալ անձանց համար գտնելու այլընտրանքային լուծումներ»:* Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառման նույնպիսի խնդիր առկա է սույն գործով վեճի առարկա նորմեր պարունակող օրենքներում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի խնդիրն է սույն գործով վիճելի իրավակարգավորումների շրջանակներում նախատեսել այնպիսի այլընտրանքային ընթացակարգեր, որոնց պարագայում անձը կամընտրական հնարավորություն ունենա իր կրոնական համոզմունքներին համահունչ համապատասխանեցնելու իր վարքագիծը: Այս առումով, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «... հասարակա-

կան կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավունքների անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով, երբ այդպիսի իրավունքների իրականացումը պայմանավորված է անձը հաստատող փաստաթղթերի պարտադիր առկայությամբ, պետք է նախատեսվեն համապատասխան իրավական միջոցներ, որոնք ընդունելի կլինեն կրոնական համոզմունքների տեսանկյունից և անձանց չեն կանգնեցնի կրոնական համոզմունքների և հիմնական իրավունքների իրականացման միջև ընտրություն կատարելու փաստի առջև»:

Այսպիսով, ցանկացած պարագայում պետությունը պետք է ձգտի սահմանելու այլընտրանքային այնպիսի ընթացակարգեր, որոնք առավելագույնս հնարավոր կդարձնեն համատեղել անձին առաջադրվելիք պահանջների ապահովումը՝ մի կողմից, և վերջինիս մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի իրացումը՝ մյուս, միաժամանակ չեն հանգեցնի իրավիճակների, երբ անձինք կկանգնեն կրոնական համոզմունքների և հիմնական այլ իրավունքների իրացման միջև ընտրություն կատարելու փաստի առջև:

Ներկայացվածի օրինակ կարող է լինել Սահմանադրության 41-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը, որը նախատեսում է զինվորական ծառայությունը այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք այն քաղաքացիների համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը: Նշվածը սերտորեն կապված է հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության, մասնավորապես կիրառվող միջոցի՝ հետապնդվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ լինելու, ինչպես նաև հետապնդվող նպատակի և անձի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքի միջև արդարացի հավասարակշռության ապահովման պահանջների հետ:

### **Հարցեր լսարանին**

1. Ո՞րն է մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի բնորոշումն ու շրջանակը: Ի՞նչ բաղադրիչներ ունի այն:
2. Արդյո՞ք մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը ենթակա է սահմանափակման, և, եթե այո, ապա ինչպիսի՞ սահմանադրական պայմանների առկայությամբ:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, արդյո՞ք ՄԻԵԿ-ի կարգավորումները, որոնք վերաբերում են այս իրավունքին միջամտության իրավաչափ նպատակներին, նույնական են Սահմանադրության հիշատակված դրույթի հետ՝ հաշվի առնելով ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասը,

ըստ որի՝ այս իրավունքին հնարավոր է միջամտել միայն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով, և եթե դրանք նույնական չեն, ապա ինչպիսի՞ գործնական հետևանքների կարող է հանգեցնել Սահմանադրության և ՄԻԵԿ-ի կարգավորումների միջև նման տարբերությունը:

## 5.9. Հավաքների ազատություն

*«Խաղաղ հավաքների միջոցով հանուն փոփոխության դժգոհություն կամ ձգտում արտահայտելու իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության առանցքն է:»:*

### ***Մայնա Քիայ, ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքի հարցերով նախկին հատուկ զեկուցող***

Հավաքների ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է և ցանկացած ժողովրդավարական հասարակության կենսագործունեության նախապայմանը:

Այս իրավունքը իրական հնարավորություն է տալիս անձին այլ անձանց հետ միասին իրացնելու իր արտահայտվելու ազատությունը, բարձրաձայնելու իր տեսակետները, մտահոգությունները, դժգոհությունները, ինչպես նաև հաշվետվողականության պահանջ ներկայացնելու հանրային իշխանություններին: Այս տեսանկյունից հավաքների ազատության իրավունքը սերտորեն փոխկապակցված է արտահայտվելու ազատության իրավունքի հետ: Ի թիվս այլ իրավունքների՝ այն սերտորեն առնչվում է նաև միավորումների ազատության հետ, քանի որ միավորման ազատության իրավունքը հաճախ պայմանավորում է հավաքների ազատության իրավունքի իրացումը:

Հավաքների ազատության իրավունքի իրացման միջոցով անձը կարողանում է գործուն մասնակցություն ունենալ հանրային կարևորության հարցերի քննարկմանը, լսելի դարձնել Կառավարության կողմից վարվող քաղաքականությանը հակադրվող իր մտեցումներն ու համոզմունքները, հնչեցնել փոքրամասնություն կազմող խմբերի տեսակետները և խնդիրները: Ավելին, հավաքների անցկացման կամ մասնակցության միջոցով անձինք կարողանում են բարձրաձայնել մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի, կոռուպցիայի դրսևորումների և այլ համակարգային խնդիրների մասին, ին-

չը նշանակում է, որ հավաքների ազատությունը ծառայում է նաև որպես մարդու այլ իրավունքների իրացման և պաշտպանության, ինչպես նաև հաշվետու կառավարման ապահովման կարևոր խողովակ:

Հավաքների ազատության իրավունքը ճանաչված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով: Հավաքների ազատությունն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 44), որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Ընդ որում, եթե հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա, ինքնաբուխ հավաքների իրականացման համար ՀՀ Սահմանադրությամբ իրազեկում չի պահանջվում:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը նկարագրում է հավաքը որպես երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայություն որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ:

Ակնհայտ է, որ հավաքը ենթադրում է մեկից ավելի կամ մի խումբ անձանց ներկայություն, այնուհանդերձ, մեկ անձի կողմից իրականացվող բողոքի ակցիան, որի պարագայում վերջինիս ֆիզիկական ներկայությունը իր արտահայտվելու ազատության իրականացման բաղադրիչն է, օժտված է նույն պաշտպանությամբ, ինչ հավաքը<sup>326</sup>:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից տրված մեկնաբանության համաձայն՝ պաշտպանության են ենթակա բոլոր խաղաղ բնույթի հավաքները՝ անկախ նրանից, թե դրանք տեղի են ունենում դրսում, ներսում, թե առցանց (օնլայն) հարթակներում, հանրային թե մասնավոր տարածքներում: Հավաքները կարող են իրականացվել տարբեր եղանակներով՝ ցույցերի, բողոքի ակցիաների, ժողովների, հանրահավաքների, երթերի, նստացույցերի, մոմավառությունների, ֆլեշմոբների և այլ միջոցներով<sup>327</sup>:

## Հավաքի բնույթը

Ինչպես տեսնում ենք, հավաքների ազատության իրավունքով պաշտպանվում է միայն խաղաղ բնույթի հավաքը:

326. Guidelines on Freedom of Peaceful Assembly SECOND EDITION, prepared by OSCE/ODIHR Panel of Experts on the Freedom of Assembly and Council of Europe's European Commission for Democracy through Law, Warsaw/Strasbourg, 2010.

327. General comment No. 37 (2020) on the right of peaceful assembly (article 21), UN Human Right Committee, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G20/232/15/PDF/G2023215.pdf?OpenElement>

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք վճիռներով անդրադարձել է հավաքի բնույթին՝ շեշտելով, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի պաշտպանության շրջանակի մեջ չեն ընդգրկվում այն հավաքները, որոնց մասնակիցները կամ կազմակերպիչները ունեն բնություն գործադրելու մտադրություններ: Կոնվենցիայով նախատեսված երաշխիքները կիրառելի են բոլոր հավաքների նկատմամբ՝ բացառությամբ նրանց, որոնց կազմակերպիչները կամ մասնակիցները ունեն նման մտադրություններ, բնություն են հրահրում կամ այլ կերպ մերժում են ժողովրդավարական հասարակության հիմքերը<sup>328</sup>:

Նման պայմաններում հատուկ կարևորություն է ձեռք բերում այն հարցը, թե ինչպես պետք է որոշել՝ հավաքը կրում է խաղաղ բնույթ, թե ոչ: **Արդյո՞ք առանձին մասնակիցների կողմից բնության կիրառման դեպքերը կամ կոչերը բավարար են հավաքը ոչ խաղաղ բնույթի որակելու համար:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում հաճախ է անդրադարձել հավաքների բնույթը սահմանազատելու հարցին՝ դիտարկելով այն անհատի՝ հավաքների ազատության իրավունքի իրացման տեսանկյունից: Մասնավորապես ՄԻԵԴ-ը համարել է, որ անձը չի դադարում հավաքների ազատության իրավունքի շահառու լինելուց, եթե, օրինակ, ցույցի ժամանակ տեղի են ունենում բնության կամ այլ պատժելի արարքների եզակի դրսևորումներ այլ անձանց կողմից, իհարկե, եթե տվյալ մասնակիցը շարունակում է պահպանել իր մտադրությունների կամ վարքի խաղաղ բնույթը<sup>329</sup>: Մասնավորապես հավաքի բնույթը գնահատելիս ՄԻԵԴ-ը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

- արդյո՞ք հավաքն ի սկզբանե նախատեսված էր որպես խաղաղ բնույթ ունեցող, թե՞ կազմակերպիչներն ունեցել են բնություն գործադրելու մտադրություններ,
- արդյո՞ք անձը դրսևորել է բնություն գործադրելու մտադրություններ հավաքին միանալիս,
- արդյո՞ք անձը մարմնական վնասվածք է հասցրել որևէ մեկին<sup>330</sup>:

Այսպիսով, բնության գործադրման եզակի դեպքերը առանձին մասնակիցների կողմից չպետք է հանգեցնեն այլ մասնակիցների հավաքի ազատության իրավունքի խախտմանը: Ընդհակառակը, Նշված դեպքերում ոստիկանությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել խաղաղ հավաքի իրականացմանը աջակցելու համար՝ անհրաժեշտության դեպքում մեկուսացնելով տվյալ մասնակիցներին:

Հավաքի բնույթի որակման հարցը քննարկման առարկա է դարձել նաև Հայաստանի Հանրապետության նկատմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված մի շարք վճիռներում<sup>331</sup>, որոնք կապված են եղել 2008 թվականի

328. Kudrevičius and others v. Lithuania, <https://hudoc.echr.coe.int/?i=001-158200>

329. Primov and Others v. Russia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-144673>

330. Shmorgunov and Others v. Ukraine, <https://hudoc.echr.coe.int/?i=001-207418>

331. Mushegh Saghatelian v. Armenia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-186114>, Ter-Petrosyan v. Armenia,

<https://hudoc.echr.coe.int/?i=001-192653>, Matevosyan v. Armenia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-176930>, Jhangiryan v. Armenia,

<https://hudoc.echr.coe.int/?i=001-204811>, Smbat Ayvazyan v. Armenia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-204812>, and others

փետրվարի 19-ի նախագահի ընտրությունների արդյունքների կապակցությամբ անցկացվող բողոքի հավաքները ցրելու առաջնությամբ մարտի 1-2-ը տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարել է, որ նշված դեպքում առկա չեն եղել ապացույցներ այն մասին, որ, ընդդիմության շատ կողմնակիցների կարծիքով, կեղծված նախագահական ընտրությունների անցկացման դեմ Ազատության հրապարակում 2008 թվականի փետրվարի 20-ից անցկացվող հանրահավաքներում առկա են եղել որևէ բռնություն հրահրելու կամ բռնության գործողություններ մինչև 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան իրականացված ոստիկանական գործողությունները: Անդրադառնալով Կառավարության այն պնդմանը, որ իշխանություններն ապացույցներ են ձեռք բերել այն մասին, որ ցուցարարները ծրագրել են զինվել զանգվածային անկարգություն հրահրելու համար, ՄԻԵԴ-ը շեշտել է, որ Կառավարությունը չի ներկայացրել տվյալ ապացույցները, ինչպես նաև համապատասխան մանրամասները ու բացատրությունները: ՄԻԵԴ-ն ուշադրություն է հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ Կառավարությունը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ Ազատության հրապարակում հայտնաբերված զենքերը, այդ թվում ատրճանակները, նռնակներն ու «ծակող» սուր առարկաներն առնչություն են ունեցել ցուցարարներից որևէ մեկի հետ: Ո՛չ էլ որևէ ապացույց է եղել, որը կհիմնավորեր, որ Ազատության հրապարակում ոստիկանական գործողությունների ժամանակ ցուցարարների կողմից օգտագործվել են հրազեններ, պայթուցիկ նյութեր կամ սառը զենք, ինչը զարմանալի է՝ հաշվի առնելով այն պնդումը, որ նրանք զինված են եղել և մտադրություն են ունեցել զինված ապստամբություն սկսելու<sup>332</sup>:

Այսպիսով, հավաքի բնույթը գնահատելիս կարևոր է մասնակիցների կողմից իրական կամ անխուսափելի բռնության դրսևորման հանգամանքի գնահատումը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, մեկնաբանելով այս իրավունքը, շեշտում է, որ բռնությունը տվյալ դեպքում ենթադրում է հավաքի մասնակիցների կողմից ֆիզիկական ուժի կիրառում, որը հավանաբար կհանգեցնի վնասվածքի, մահվան կամ գույքային լուրջ վնասների: Բնական է, որ հավաքի ընթացքում պարզապես միմյանց հրելը չի հանգեցնում հավաքի խաղաղ բնույթը կորցնելուն:

Մի շարք դեպքերում մենք ականատես ենք լինում տարբեր հավաքների ընթացքում տեղի ունեցող ընդհարումներին ոստիկանության ծառայողների և հավաքի մասնակիցների միջև, ինչի պարագայում հարց է ծագում, թե արդյոք այս ընդհարումների հետևանքով հավաքը ինքնաբերաբար զրկվում է իր խաղաղ բնույթից, թե ոչ: Այս հարցին հստակ պատասխան է տալիս ՄԻԵԴ-ը իր նախադեպային վճիռներում համարելով, որ միայն այն փաստը, որ հավաքի ժամանակ բռնություն է տեղի ունեցել, ինքնին բավարար չէ՝ պնդելու, որ դրա կազմակերպիչները բռնություն գործադրելու մտադրություններ են ունեցել: Ավելին, եթե երկու կողմերը՝ ցուցարարները և ոստիկանությունը, ներգրավված են եղել բռնության գործողություններում, անհրաժեշտ է քննարկել, թե ով է սկսել բռնությունը, և արդյոք դիմումատուն անձամբ ագրեսիայի սկզբնական գործողությունների հա-

332. Mushegh Saghatelian v. Armenia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-186114>

մար այն պատասխանատու անձանց թվում է եղել, որոնք նպաստել են հավաքի նախնական խաղաղ բնույթի խաթարմանը<sup>333</sup>:

Բոլոր վերոգրյալ չափանիշների հետ մեկտեղ որոշ դեպքերում շատ բարդ է լինում հատկապես տեղում գնահատել հավաքի բնույթը և որակել այն որպես խաղաղ կամ ոչ խաղաղ բնույթի: Ըստ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ թեև չկա շատ հստակ սահմանազատում խաղաղ և ոչ խաղաղ բնույթի հավաքների միջև, գործում է հավաքը խաղաղ բնույթի համարելու կանխավարկածը<sup>334</sup>: Ընդ որում, հավաքը պետք է համարվի խաղաղ բնույթի, քանի դեռ մասնակիցների վարքագիծը խաղաղ է, նույնիսկ եթե կազմակերպիչները չեն պահպանել մինչև հավաքը պահանջվող բոլոր իրավական ընթացակարգերը<sup>335</sup>:

Վերոգրյալ սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն՝ եթե հավաքն անցկացվում է օրենքով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, ապա ոստիկանությունը պարտավոր է բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության: Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել այդ հավաքին:

Հաճախ առանձին խնդիրների վերաբերյալ անցկացվող հավաքները կարող են հանգեցնել կամ հրահրել հակադիր տեսակետներ ունեցող անձանց կողմից հավաքների կազմակերպմանը: Ակնհայտ է, որ նման հավաքները չեն կարող դիտարկվել որպես առաջնային հավաքի խաղաղ բնույթը խաթարող և հիմք հանդիսանալ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման համար: Ընդհակառակը, պետությունը այստեղ ունի հստակ պոզիտիվ պարտավորություններ՝ ձեռնարկելու միջոցներ հավաքի մասնակիցներին հակադիր բնույթի հավաքի մասնակիցների հնարավոր հրահրող գործողություններից պաշտպանելու համար:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ որպես հավաքի վայր կարող է ծառայել հավաքի անցկացման նպատակով յուրաքանչյուրի համար մատչելի պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բացօթյա ցանկացած տարածք (այդ թվում փողոցը, մայրը, հրապարակը, այգին) կամ շինությունը: Բնական է, որ այս վայրերում հավաքների անցկացումը հաճախ անխուսափելիորեն առաջացնելու է բնականոն կյանքի որոշակի խաթարում, որը կարող է արտահայտվել տրանսպորտային երթևեկության, անձանց ազատ տեղաշարժի խոչընդոտման, հասարակական անդորրի խախտման, տնտեսվարող սուբյեկտների գործունեության խափանման կամ այլ եղանակներով: Առօրյա կյանքում մենք հաճախ ենք ականատես լինում նման իրավիճակների: Այնուամենայնիվ, այս բոլոր անհարմարությունները չեն կարող հիմք հանդիսանալ հավաքը որ-

333. Primov and Others v. Russia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-144673>, Mushegh Saghatelian v. Armenia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-186114>

334. General comment No. 37 (2020) on the right of peaceful assembly (article 21), UN Human Right Committee, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G20/232/15/PDF/G2023215.pdf?OpenElement>

335. Oya Ataman v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/?i=001-78330>

պես ոչ խաղաղ բնույթի որակելու համար: ՄԻԵԴ-ը այս կապակցությամբ մի շարք գործերով շեշտել է, որ տարածքների օգտագործումը հավաքի անցկացման նպատակով նույնչափ իրավաչափ նպատակ է, որքան երթևեկության, առևտրային գործունեության և այլ նպատակներով:

Հավաքների ազատության իրավունքի շրջանակներում պաշտպանության ենթակա չեն պատերազմի քարոզը և բռնության հրահրումը: ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն արգելում է հավաքների ազատության օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այստեղ հարկ է կրկին ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ առանձին մասնակիցների կողմից բռնության գործադրման մեկուսի կոչերը բավարար չեն հավաքը որպես ոչ խաղաղ բնույթի որակելու համար: Այս կապակցությամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն շեշտել է, որ նման դեպքերում համապատասխան գործողությունները հնարավորինս պետք է ձեռնարկվեն կոնկրետ հրահրող անձանց նկատմամբ՝ ամբողջ հավաքի փոխարեն<sup>336</sup>:

### **Պետության պարտավորությունները՝ հավաքների ազատության իրավունքի ապահովման բնագավառում**

Պետությունն ունի հավաքների ազատության իրավունքից բխող թե՛ նեգատիվ, թե՛ պոզիտիվ բնույթի պարտավորություններ, ընդ որում, դրանք տարածվում են հավաքին նախորդող, ընթացիկ և դրան հաջորդող փուլերի նկատմամբ:

Նեգատիվ պարտավորությունների շրջանակներում պետությունը պետք է ձեռնպահ մնա անհատների կողմից հավաքների ազատության իրավունքի իրացմանը ոչ իրավաչափ միջամտությունից: Այսինքն՝ այն չի կարող արգելել, սահմանափակել, դադարեցնել կամ ցրել խաղաղ հավաքը՝ բացառությամբ թույլատրված խիստ սահմանափակ և հիմնավորված դեպքերի: Օրինակ՝ պետության կողմից հավաքների ազատության իրավունքի իրականացմանը ոչ իրավաչափ միջամտություն կհամարվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հավաքի անցկացումն արգելելը՝ հակադիր տեսակետներ ունեցող անձանց կամ խմբերի առկայության և նրանց կողմից հնարավոր բողոքի ակցիաների կազմակերպման և հնարավոր լարվածության առաջացման պատճառաբանությամբ: Այս արգելքի ոչ իրավաչափությունը բխում է նախ և առաջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանված այն ուղենիշային սկզբունքից, որի համաձայն՝ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածի շրջանակներում պաշտպանության են ենթակա նաև այն խաղաղ հավաքները, որոնք կարող են զայրացնել կամ վիրավորել անձանց, որոնք չեն կիսում հավաքի մասնակիցների կողմից առաջ մղվող գաղափարները<sup>337</sup>:

336. General comment No. 37 (2020) on the right of peaceful assembly (article 21), UN Human Right Committee, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G20/232/15/PDF/G2023215.pdf?OpenElement>

337. Alekseyev v. Russia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-101257>



Ոչ իրավաչափ կհամարվի նաև հավաքին մասնակցությունը խոչընդոտելու նպատակով անձին հավաքից առաջ ձերբակալելը կամ համապատասխան վայր հասնելու ճանապարհին այլ խոչընդոտներ ստեղծելը: Օրինակ՝ *Կասպարովն ընդդեմ Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ-ը ոչ իրավաչափ է ճանաչել միջամտությունը հավաքների ազատության իրավունքին այն դեպքերում, երբ դիմումատուն անհիմն ձերբակալվել է օդանավակայանում երթի անցկացման վայրի քաղաք թռիչքից առաջ և ժամեր շարունակ պահվել է անազատության մեջ, ինչն անհնարին է դարձրել վերջինիս մասնակցությունը նախանշված երթին<sup>338</sup>: *Հակոբյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դիմումատուների նկատմամբ հարուցված վարչական վարույթները և դրանց հաջորդող կալանավորումը եղել են միջոց՝ կանխելու կամ խափանելու դիմումատուների մասնակցությունն ընդդիմադիր ցույցերին, որոնք անվիճելիորեն կրել են խաղաղ բնույթ և տվյալ ժամանակահատվածում ընթացել են երևանում<sup>339</sup>:

Հավաքի ընթացքում պետության ոչ իրավաչափ միջամտության դասական օրինակներից են անհիմն կերպով հավաքը ցրելու, ոստիկանության ծառայողների կողմից խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ ուժ գործադրելու, հավաքի մասնակիցներին ձերբակալելու, վարչական բերման ենթարկելու գործողությունները:

Հավաքից հետո իրավաչափ հիմքերի և հիմնավորումների բացակայության պայմաններում հավաքի մասնակիցներին կամ կազմակերպիչներին ձերբակալելը, ազատությունից այլ կերպ զրկելը, քրեական հետապնդման, քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմինների պրակտիկայում հաճախ են դիտարկվում որպես հավաքին հաջորդող պատժողական բնույթի գործողություններ, որոնք հանգեցնում են հավաքների ազատության իրավունքին պետության ոչ իրավաչափ միջամտությանը:

Ընդունված է համարել, որ այսօր հավաքների կազմակերպման կամ մասնակցության հետ կապված մի շարք գործողություններ տեղի են ունենում առցանց հարթակներում, ինչը ենթադրում է, որ պետությունը պետք է ձեռնպահ մնա ինտերնետի հասանելիությունը խոչընդոտելուն կամ սահմանափակելուն ուղղված որևէ ոչ իրավաչափ գործողություններից, քանի որ դա կարող է ուղղակի հետևանք ունենալ հավաքների ազատության իրավունքի լիարժեք իրացման վրա:

Պետությունն ունի նաև հավաքների ազատության իրավունքից բխող պոզիտիվ, այսինքն՝ որոշակի գործողություններ կատարելուն ուղղված պարտավորություններ: Հավաքների ազատության իրավունքի համատեքստում դրանք լայն առումով հանգում են այնպիսի գործողությունների ձեռնարկման, որոնք ուղղված են հավաքների խաղաղ և սահուն ընթացքը ապահովելուն, հավաքի մասնակիցների, ինչպես նաև այլ անձանց անվտանգությունը երաշխավորելուն:

338. Kasparov v. Russia (2016), <https://hudoc.echr.coe.int/?i=001-167094>

339. Հակոբյանը և այլք ընդդեմ Հայաստանի, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=132084>

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր վճիռներով շեշտել է, որ նույնիսկ այն պարագայում, երբ հավաքի մասնակիցների մտադրությունները ունեն խաղաղ բնույթ, հանրային ցույցերը կարող են վտանգ ներկայացնել հասարակական կարգի համար, երբ հակադարձ ցույցի մասնակիցները իրացնում են հավաքների ազատության իրենց իրավունքը: Իշխանությունները պոզիտիվ պարտավորություն ունեն՝ պաշտպանելու օրինական հավաքը հակադարձ հավաքի հնարավոր հետևանքներից, քանի որ արդյունավետ հավաքների ազատության իրավունքը չի կարող հանգել պետության կողմից պարզապես չմիջամտելու պարտավորությանը<sup>340</sup>: ՄԻԵԴ-ը կարևորում է նաև կանխարգելիչ բնույթի անվտանգության ապահովման միջոցների ձեռնարկումը պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակներում, օրինակ՝ հավաքի վայրում առաջին բուժօգնության ծառայությունների ապահովման միջոցով<sup>341</sup>:

Պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակներում են տեղավորվում նաև հավաքների ազատության իրավունքի լիարժեք իրացման նպատակով անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների ապահովումը և ինստիտուցիոնալ կառուցակարգերի ստեղծումը: Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատության իրավունքի իրացման կարգը կանոնակարգող հիմնական օրենքը «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքն է (այսուհետ՝ նաև Օրենք): Ի թիվս այլ կարգավորումների՝ այն սահմանում է հավաքի մասնակիցների, ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները, հավաքի անցկացման համար գրավոր իրազեկման ներկայացման և քննարկման կարգը, առանց իրազեկման հավաքների անցկացման դեպքերը, հավաքը դադարեցնելու և ցրելու դեպքերն ու կարգը: Օրենքը սահմանում է նաև հավաքի ընթացքում ոստիկանության պարտականությունները, որոնք ներառում են՝ հավաքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո անհապաղ իր ներկայացուցչին նշանակելու և այդ մասին հավաքի կազմակերպչին ու համապատասխան համայնքի ղեկավարին հայտնելու պարտականությունը, իր ներկայացուցչի ներկայությունը հավաքին ապահովելու պարտականությունը, հավաքի անցկացման վայրից այն անձանց հեռացնելու պարտականությունը, որոնք կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը (եթե այլ կերպ հնարավոր չէ ապահովել այն), հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը ապահովելու պարտականությունը:

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու հնարավորություն: Այսպես, հավաքի կազմակերպիչը Վարչական դատարանում կարող է վիճարկել հավաքը սահմանափակումներով անցկացնելու մասին, ինչպես նաև հավաքն արգելելու մասին համայնքի ղեկավարի որոշումները: Հավաքի մասին իրազեկումն ի գիտություն ընդունելու գործողությունը ևս կարող է վիճարկվել դատարանում այն անձանց կողմից, որոնց՝ սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող տարածքում նախատեսվում է անցկացնել հավաքը, եթե վերջիններս համարում են, որ այդ որոշումներով խախտվել են կամ կարող են խախտվել իրենց իրավունքները:

340. Plattform "Ärzte für das Leben" v. Austria, <https://hudoc.echr.coe.int/?i=001-57558>

341. Oya Ataman v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/?i=001-78330>

րը: Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է այս գործերի քննության բավականին սեղմ ժամկետներ (երկու օրացուցային օր)՝ հաշվի առնելով հավաքների ազատության իրավունքի ապահովման նպատակով հրատապ միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը: Բոլոր վերոգրյալ գործողությունները և միջոցները հավաքների ազատության իրավունքից բխող պետության պոզիտիվ պարտավորությունների կատարման օրինակներ են:

Պետությունը դրական պարտավորությունների շրջանակներում ունի նաև քննություն իրականացնելու ընթացակարգային պարտավորություններ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս շեշտել է, որ պետությունը պարտավոր է քննել հավաքների ընթացքում բռնության գործադրման դեպքերը, որոնք անդրադառնում են ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների իրացման վրա: *Չախարովը և Վարժապետյանը ընդդեմ Ռուսաստանի* գործով ՄԻԵԿ-ը նշել է, որ ցուցարարների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների միջև լայնածավալ առճակատման դեպքում, որը զուգորդվել է երկու կողմերի՝ բռնության գործադրմամբ, իշխանությունները պարտավոր են իրենց նախաձեռնությամբ քննություն նախաձեռնել ոչ միայն բռնություն գործադրող ցուցարարների, այլև իրավապահ մարմինների գործողությունների մանրամասն ուսումնասիրության համար<sup>342</sup>:

## **Հավաքների ազատության իրավունքի սահմանափակումները**

Հավաքների ազատության իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն խիստ որոշակի և սպառիչ հիմքերի առկայության պարագայում: Հավաքների և միավորման ազատությունը ամրագրող ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: (...):»:

Բնական է, որ վերոգրյալ հիմքերը չեն կարող ընդլայնվել ՀՀ օրենքների կամ այլ իրավական ակտերի շրջանակներում, ինչպես նաև չեն կարող տարածական մեկնաբանության ենթարկվել: Սահմանափակման դեպքերը պետք է հստակ և որոշակի ձևով սահմանված լինեն ՀՀ օրենսդրությամբ:

Միջամտությունը հավաքների ազատության իրավունքին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից իրավաչափ կհամարվի միայն այն դեպքերում, երբ այն «նախատեսված լինի օրենքով», հետապնդի վերոգրյալ իրավաչափ նպատակներից որևէ մեկը և «անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում»:

342. Guide on the case-law of the European Convention on Human Rights. Mass protests. Updated on 31 August 2022.

հնչալես գիտենք, օրենքով նախատեսված լինելու պահանջը ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի շրջանակներում նշանակում է, որ համապատասխան վիճարկվող միջոցը պետք է ոչ միայն իրավական հիմք ունենա ներպետական օրենսդրությամբ, այլև պետք է մատչելի և կանխատեսելի լինի հասցեատեր հանդիսացող անձի համար: Հավաքների ազատության համատեքստում, օրինակ, *Լաշմանկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ-ը համարել է, որ ներպետական օրենսդրությունը, որը գործադիրին հնարավորություն է ընձեռնում հավաքի վայրի, ժամանակի կամ եղանակի փոփոխություն առաջարկել և չի պարունակում այս լիազորությունները կամայական և խտրական ձևով իրականացնելու դեմ համարժեք և արդյունավետ իրավական երաշխիքներ, չի համապատասխանում ՄԻԵԿ-ից բխող «օրենքի որակ»-ին առաջադրվող պահանջներին<sup>343</sup>:

Միջամտությունը ՄԻԵԴ-ի կողմից «անիրաժեշտ կհամարվի ժողովրդավարական հասարակությունում», եթե այն համապատասխանի «ճնշող հասարակական կարիքի»-ն և մասնավորապես համաչափ լինի դրանով հետապնդվող նպատակին, ինչպես նաև այն արդարացնելու համար իշխանությունների կողմից ներկայացված փաստարկները լինեն «վերաբերելի և բավարար»<sup>344</sup>:

Հավաքների անցկացման նկատմամբ ընդհանուր արգելքների կիրառումը, օրինակ՝ որոշակի վայրերում կամ ժամերին հավաքների անցկացման արգելքը, խիստ խնդրահարույց է իրավունքի սահմանափակման համաչափության տեսանկյունից: Այս համատեքստում կարևորվում է տեսողության և լսողության դաշտում հավաքի անցկացմանն առնչվող սկզբունքը, համաձայն որի՝ հանրային հավաքները անցկացվում են թիրախային անձին կամ մարմինն ուղերձ հասցնելու նպատակով: Այս սկզբունքին համապատասխան՝ պետք է աջակցել, որ հավաքներն անցկացվեն թիրախային անձի կամ կազմակերպության տեսողության և լսողության դաշտում<sup>345</sup>:

Հաճախ ականատես ենք եղել դեպքերի, երբ իրավասու պետական մարմինները հակված են եղել սահմանափակելու հավաքների անցկացումը առանձին պետական մարմինների շենքերին հարող տարածքներում պետական մարմնի բնականոն գործունեության խաթարման նկատառումներից ելնելով: Փոխարենը, սակայն, պետք է հնարավորություն ստեղծել աջակցելու հավաքի անցկացմանն այնպիսի եղանակով, որը թույլ կտա պետական մարմնի բնականոն գործունեության և հավաքի անցկացման գուլգակցումը, քանի որ հավաքի նպատակը կոնկրետ պետական մարմնին ուղերձ հղելն է:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ տարբեր տարիների զեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր ժամանակներում արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանության կողմից թույլ չի տրվել հավաքն անցկացնել որևէ պետական մարմնի անմիջապես հարակից տարածքում պատճառաբանելով համապատասխան մարմնի բնականոն աշխատանքի խոչընդոտմամբ: Պաշտպանի գնահատմամբ՝ շատ դեպքերում այդ արգելքը և դրան հաջորդող ոստիկանության գործողությունները (բերում,

343. Lashmankin and Others v. Russia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-170857>

344. Coster v. the United Kingdom, <https://hudoc.echr.coe.int/?i=001-59156>

345. Guidelines on Freedom of Peaceful Assembly SECOND EDITION, prepared by OSCE/ODIHR Panel of Experts on the Freedom of Assembly and Council of Europe's European Commission for Democracy through Law, Warsaw/Strasbourg, 2010.

վարչական ձերբակալում, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմում և վարչական պատասխանատվության ենթարկելու գործընթաց) եղել են ոչ իրավաչափ: Արձանագրվել է, որ մի շարք պետական մարմինների (այդ թվում Գլխավոր դատախազություն, Սահմանադրական դատարան, ՀՀ Նախագահի նստավայր) անմիջապես հարակից տարածքում նախկինում անցկացվել են հավաքներ, որոնք չեն արգելվել ոստիկանության կողմից, դրանք չեն դիտարկվել որպես պետական մարմնի բնականոն գործունեությանը սպառնացող հեռավորության վրա անցկացվող հավաքներ: Այնուամենայնիվ, մի շարք դեպքերում նույն մարմինների առջև անցկացվող հավաքները արգելվել են՝ պետական մարմնի բնականոն գործունեությանը սպառնացող հեռավորության վրա անցկացնելու պատճառաբանությամբ<sup>346</sup>:

### **Հավաքի անցկացման մասին նախնական իրազեկման/ծանուցման պահանջներ**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ հանրային հավաքների անցկացման վերաբերյալ նախնական ծանուցմանն ուղղված ներպետական ընթացակարգերը, որպես այդպիսին, չեն հակասում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ պայմանով, եթե դրանց նպատակը իշխանությունների կողմից անհրաժեշտ կանխարգելիչ անվտանգային միջոցների ձեռնարկումն է՝ հավաքի սահուն ընթացքն ապահովելու և անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու համար<sup>347</sup>: Միաժամանակ, ըստ ՄԻԵԴ-ի, այս ընթացակարգերը չեն կարող օգտագործվել որպես հավաքների ազատության իրավունքի իրացման թաքնված խոչընդոտ<sup>348</sup>:

*Բուկտան և մյուսներն ընդդեմ Հունգարիայի* գործով կայացված վճռով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ որոշ հատուկ հանգամանքներում, երբ ինքնաբուխ հավաքը կարող է արդարացված լինել, օրինակ՝ որոշակի քաղաքական իրադարձությանը արձագանքելու պարագայում, միայն նախնական ծանուցման բացակայության պատճառով հավաքը ցրելը, մասնակիցների կողմից որևէ անօրինական գործողություն չկատարելու պայմաններում, կարող է հանգեցնել հավաքների ազատության իրավունքի ոչ համաչափ սահմանափակման<sup>349</sup>:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը այս տեսանկյունից համահունչ է ՄԻԵԿ-ի պահանջներին. այսպես, Օրենքի համաձայն՝ հանրային հավաք անցկացնելու համար կազմակերպիչը գրավոր իրազեկում է լիազոր մարմնին, **բացառությամբ մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբուխ հավաքների**: Ըստ Օրենքի՝ ինքնաբուխ է համարվում որոշակի իրադարձությանը անմիջապես արձագանքելու նպատակով անցկացվող հավաքը: Իսկ շտապ է համարվում այն հավաքը, որը կազմակերպվում և

346. 2014 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում:

347. Berladir and Others v. Russia, <https://hudoc.echr.coe.int/?i=001-112101>

348. Éva Molnár v. Hungary, <https://hudoc.echr.coe.int/?i=001-88775>

349. Bukta and Others v. Hungary, <https://hudoc.echr.coe.int/?i=001-81728>

անցկացվում է որևէ իրադարձությանը հրատապ արձագանքելու նպատակով, և այդ նպատակին հնարավոր չէ հասնել իրազեկում ներկայացնելու ժամկետի պահպանման պարագայում: Օրենքը նախատեսում է նաև շտապ և ինքնաբուխ հավաքների անցկացման հետ կապված որոշակի կանոնակարգումներ:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը նաև կարևոր երաշխիք է նախատեսում խաղաղ հավաքների պաշտպանության բնագավառում, որը բխում է միջազգային չափանիշներից և ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններից: Այսպես, ըստ Օրենքի 32-րդ հոդվածի՝ եթե նույնիսկ հավաքն անցկացվում է իրազեկմանն առնչվող պահանջների խախտմամբ, հավաքը ենթակա է աջակցության և պաշտպանության, եթե այն ունի խաղաղ բնույթ:

### **Հարցեր լսարանին**

1. Որո՞նք են հավաքի բնույթը կանխորոշող չափորոշիչները:
2. Ո՞ր դեպքերում է ոստիկանությունն իրավասու դադարեցնելու 100-ից ավելի մասնակից ունեցող և առանց իրազեկման ընթացակարգերի պահպանման անցկացվող հավաքը:
3. Կարո՞ղ է ոստիկանությունն արգելել ինքնաբուխ հավաքի անցկացումը ՀՀ կառավարության շենքի դիմաց աշխատանքային օրվա ընթացքում պատճառաբանելով, որ հավաքի մասնակիցների կողմից բարձրախոսով հնչեցված հայտարարությունների արդյունքում առաջացող աղմուկը խոչընդոտում է աշխատակազմի բնականոն աշխատանքը: Եթե այո, ի՞նչ պայմանների առկայության պարագայում:

## **5.10. Ժողովրդավարության իրավունք**

### **Ժողովրդավարության պատմություն**

Ժողովրդավարությունը հանրային հարաբերությունների կառավարման ձև է, որում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Այն իրականացվում է անմիջականորեն՝ ընտրությունների կամ հանրաքվեների և հանրային իշխանության մարմինների միջոցով: Ընդ որում, հանրային իշխանության բոլոր մարմինները հանրային հաշվետվողականության պարտականություն ունեն: Ժողովրդավարությունը հիմնված է ժողովրդական ինքնիշխանության, մեծամասնության կառավարման և անհատական իրավունքների պաշտպանության սկզբունքների վրա:

Առաջին հայտնի ժողովրդավարությունները ձևավորվել էին Հին Հունաստանում և Հռոմում: Այնուամենայնիվ, այս ժողովրդավարությունները կատարյալ չէին իրենց սահմանափակ մասնակցայնությամբ, քանի որ բաց էին միայն փոքրաթիվ մարդկանց համար և անկայուն էին իրենց կառուցվածքով: Ժողովրդավարության արդի գաղափարի արմատները գնում են 17-18-րդ դարեր: Դրանք իրենց պատմական նշանավորումն ունեցան Ամերիկայի անկախությամբ և Ֆրանսիական հեղափոխությամբ, որոնք հիմք դրեցին ժողովրդավարական պետությունների ձևավորմանը ԱՄՆ-ում և Ֆրանսիայում:

19-րդ դարում ժողովրդավարությունը՝ որպես քաղաքական ռեժիմ և հանրային կառավարման մոդել, տարածվեց աշխարհի այլ մասերում Բրիտանական կայսրության կողմից իր գաղութներին ինքնակառավարում և հետագայում նաև անկախություն շնորհելով, իսկ Լատինական Ամերիկայում և Եվրոպայում՝ նոր պետությունների ստեղծմամբ:

## Ժողովրդավարություն և մարդու իրավունքներ

*Ժողովրդավարություն* եզրույթը ծագել է հունարեն *demos* (նշանակում է *ժողովուրդ*) և *kratia* (նշանակում է *իշխանություն*) արմատների կապակցությունից և նշանակում է քաղաքական համակարգ, որտեղ իշխանությունը և կառավարումը ժողովրդի ձեռքում են: Ժողովրդավարությունը հաճախ բնութագրվում է այնպիսի տարրերով, ինչպիսիք են խոսքի ազատությունը, ազատ մամուլը, արդար ընտրությունները, քաղաքացիների մասնակցությունը հանրային կարևորության որոշումների կայացմանը և օրենքի առաջ հավասարությունը: Սա նշանակում է կառավարման համակարգ, որը թույլ է տալիս հանրային դիսկուրս, խթանում է թափանցիկությունը և հարգում է մեծամասնության կամքը՝ միևնույն ժամանակ պաշտպանելով փոքրամասնությունների իրավունքները:

Ըստ Էուրթյան, ժողովրդավարությունը հիմնված է հետևյալ սկզբունքի վրա. յուրաքանչյուր անհատ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա մասնակցելու այն որոշումների կայացմանը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են իր կյանքի վրա: Այս գաղափարը դրսևորվում է ժողովրդավարության տարբեր մոդելներով. այդպիսիք են ուղղակի, ներկայացուցչական և մասնակցային ժողովրդավարությունները: Մինչ ուղղակի ժողովրդավարությունը քաղաքացիներին թույլ է տալիս ուղղակիորեն մասնակցել յուրաքանչյուր հարցի լուծմանը հանրաքվեների միջոցով կամ այլ կերպ ուղղակի մասնակցություն ունենալ հանրային գործերի կառավարմանը, ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում այդ մասնակցային լիազորությունները վերապահված են ընտրված ներկայացուցիչներին:

Ժողովրդավարությունը երաշխավորված է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությամբ, որի աստիճանն ուղղակիորեն բնութագրում է կոնկրետ ժողովրդավարության որակը: Առհասարակ ժողովրդավարությունը և մարդու իրավունքները միահյուսված հասկացություններ են: Ժողովրդավարությունն ապահովում է այն քաղաքական և իրավական շրջանակը, որի պայմաններում է **միայն** հնարավոր լիարժեքորեն հարգել

և պաշտպանել մարդու իրավունքները, մինչդեռ այդ իրավունքները անհրաժեշտ պայմաններ են ապահովում ժողովրդավարության համար՝ հանդիսանալով ժողովրդավարության գոյության հիմնական նպատակ-արդարացումը:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների հարաբերությունները հիմնարար են և փոխադարձ: Ըստ Եռության, ժողովրդավարությունը մարդու իրավունքների քաղաքական մարմնավորումն է, մինչդեռ մարդու իրավունքների պաշտպանության աստիճանը ժողովրդավարության որակի ցուցանիշ է: Երկու հասկացություններն էլ հատվում են՝ ամրապնդելով միմյանց, ձգտելով յուրաքանչյուր անհատի ազատության, արժանապատվության և հավասար իրավունքները հարգող հասարակության:

Ըստ Եռության, ժողովրդավարությունը միակ քաղաքական ռեժիմն է, որի պայմաններում հնարավոր է արդյունավետորեն պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

Ազատ ընտրությունները, որոնք ժողովրդավարական հասարակությունների հիմնաքարն են, չեն կարող տեղի ունենալ առանց խոսքի, հավաքների և միավորումների ազատության իրավունքի: Քաղաքացիները պետք է ազատ լինեն՝ արտահայտելու իրենց կարծիքը, հավաքվեն ուրիշների հետ, կազմավորեն և միանան կազմակերպություններին և խաղաղ բողոքի ցույց անեն՝ չվախենալով հաշվեհարդարից: Բացի այդ, տեղեկատվության ազատությունը կարևոր է ընտրողների համար գիտակցված ընտրություն կատարելու տեսանկյունից:

Այնուամենայնիվ, ժողովրդավարությունը միայն մեծամասնության իշխանությունը չէ: Այն պահանջում է հարգել և պաշտպանել յուրաքանչյուր անհատի և փոքրամասնությունների իրավունքները:

Եզրափակելով՝ ժողովրդավարությունը և մարդու իրավունքները խորապես փոխկապակցված են: Այս երկուսի իրականացման համար դրանցից յուրաքանչյուրը ապավինում է մյուսին: Ժողովրդավարական հասարակությունը հարգում և պաշտպանում է մարդու իրավունքները, մինչդեռ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումն ամրապնդում է ժողովրդավարական կառավարումը և ապահովում դրա շարունակականությունը:

## **Ժողովրդավարության իրավունքի ծագումը և դրա զարգացման համաշխարհային պատմությունը**

Առհասարակ *ժողովրդավարության իրավունք* հասկացության իրավական բովանդակությունը ազատ ընտրության իրավունքի առանցքով *ժողովրդավարական իրավունքների* համախումբն է և զուգորդվում է այնպիսի իրավունքներով, ինչպիսիք են արտահայտվելու ազատությունը, խաղաղ հավաքների ազատությունը, մտքի, խղճի և կրոնի



ազատությունը և այլ իրավունքներ, որոնք առանցքային են հասարակության ժողովրդավարական կառուցվածքը և բազմակարծության բնույթն ապահովելու համար:

Այս իմաստով սխալ չէ *ժողովրդավարության իրավունքը* թարգմանել որպես *քաղաքական մասնակցության իրավունք*: Թեպետ ժողովրդավարության՝ քաղաքական կառավարման ռեժիմից դեպի անհատական իրավունքների առարկա դառնալու մոտեցման քաղաքագիտական հիմքերն արդեն իսկ առկա էին 20-րդ դարում, համաշխարհային պատմության շրջադարձային իրադարձություններն էին, որ ստիպեցին պետություններին *ժողովրդաիշխանության սկզբունքը* (principle of popular sovereignty) ամրագրել միջազգային իրավունքում որպես պետությունների նկատմամբ կիրառվող պարտավորեցնող նորմ: Մասնավորապես Երկրորդ համաշխարհային պատերազմում դաշնակիցների հաղթանակն այն պահն էր, որը, հաշվի առնելով մարդու իրավունքների դոկտրինների զարգացման աստիճանը, հանգեցրեց միջազգային իրավունքում այնպիսի շրջադարձային փոփոխության, երբ պետության ինքնիշխանության և ինքնիշխան շահերի վրա հիմնված միջազգային իրավունքում առաջացան հատվածներ, որոնց հիմքում ընկած էին մարդու իրավունքների և ազատությունների գաղափարները: Սա նշանավորեց հին հռոմեական իրավունքից *hominum causa omne jus constitutum est* (իրավունքի նպատակը մարդուն ծառայելն է) մաքսիմի միջազգային իրավունք մուտքը:

Քանի որ ժողովրդավարությունը գնալով աճող ներկայություն էր սկսում ունենալ միջազգային ասպարեզում, միջազգային իրավունքը նույնպես սկսեց աճող ուշադրություն կենտրոնացնել ժողովրդավարական իրավունքների միջազգային պաշտպանության հարցի վրա: Եվ Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո ծնված 1-ին միջազգային փաստաթուղթը, որը հեղինակավոր ամրագրում տվեց ժողովրդաիշխանության սկզբունքին միջազգային իրավունքի մակարդակում, 1945 թվականին հիմնադրված Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունն էր, որի նախաբանը սկսվում է **«Մենք՝ Միավորված ազգերի ժողովուրդներս, ...»** բառերով, ինչն այլ բան չէր նշանակում, քան այն, որ նոր աշխարհակարգի գաղափարական հիմքում այլևս անդամնալիորեն ընկած էր ժողովրդի իշխանության համաշխարհային ճանաչումը:

Ակնհայտորեն ներշնչված լինելով 18-րդ դարի վերջին Ամերիկայում և Ֆրանսիայում կատարված մի շարք հեղափոխական հռչակագրերից և որդեգրած լինելով եվրոպական Լուսավորչականության ոճը՝ հետագայում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածում արձանագրվեց. «ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը»: Այս գաղափարը որոշ ձևափոխումներով հետագայում ավելի մանրամասնվեց 1966 թվականին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում<sup>350</sup>, իսկ մինչ այդ՝ նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում<sup>351</sup>, «Մարդու իրավունքների և պարտականությունների մասին» ամերիկյան հռչա-

350. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, հոդված 25:

351. ՄԻԵԿ-ի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդված:

կազրում<sup>352</sup>, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայում<sup>353</sup>, Մարդու իրավունքների աֆրիկյան խարտիայում<sup>354</sup>, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության «Մարդկային չափման մեխանիզմներ»-ում, Հելսինկյան եզրափակիչ ակտում<sup>355</sup>, ԵԱՀԿ «Մարդկային չափման մասին» Կոպենհագենի կոնֆերանսում ընդունված փաստաթղթում<sup>356</sup>:

Ժողովրդավարության իրավունքը իր տարածուն և անհստակ շրջանակով աստիճանաբար սկսեց հղկվել այլ միջազգային փաստաթղթերում և հանգեց «ազատ ընտրության իրավունքի», որը մի կառուցակարգ էր, որ մասնակիորեն էր ընդգրկում ժողովրդավարության իրավունքի ընդհանուր գաղափարը, սակայն իր նեղ առարկայի բերումով գործնական կիրառության տեսանկյունից ավելի արդյունավետ էր դարձնում ամրագրված իրավունքի պաշտպանությունը:

Հայաստանի համար առարկայական հետաքրքրություն է ներկայացնում ժողովրդավարությանը և ժողովրդավարական իրավունքներին վերաբերող այն դրույթների բովանդակությունը, որոնք հատկապես ստեղծվեցին Եվրոպայի խորհրդի կազմավորման և դրա հիմքում ընկած հիմնարար փաստաթղթերի մշակման արդյունքում:

Մասնավորապես Եվրոպայի խորհրդի հռչակած նպատակներն էին «մարդու իրավունքների, բազմակարծության վրա հիմնված ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությունը»<sup>357</sup>: Եվրոպայի խորհրդի ձևավորումից հետո «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածում նախատեսվեց նաև ազատ ընտրության իրավունքը՝ որպես առանցքային ժողովրդավարական-քաղաքական իրավունք, որի զարգացմանն ուղղված ՄԻԵԴ-ի վճիռները մեծապես ուղղորդել են նաև Հայաստանի նորանկախ Հանրապետության ընտրական համակարգի զարգացումը: Կարևոր է հիշատակել, որ ՄԻԵԿ-ի նախագծմանն ուղղված միջազգային համաժողովը, ինչպես նաև դրան նախորդած և հաջորդած մասնագիտական և քաղաքական մարմինների քննարկումներում ՄԻԵԿ-ի հիշատակված հոդվածը նախապես վերնագրված է եղել «Ժողովրդավարության իրավունք» և ՄԻԵԿ-ի նախագծում նախատեսված է եղել որպես նյութական իրավունք նախատեսող առաջին հոդվածը:

## **Ժողովրդավարությունը՝ ըստ Սահմանադրության**

Ժողովրդավարության և ժողովրդավարության իրավունքի մասին Սահմանադրության առանցքային արձանագրումների գերակշիռ մասն առկա է Սահմանադրության անփոփոխ դրույթներում: Այդպիսով Սահմանադիրն ընդգծել է ժողովրդավարության կենտրոնական դերը և դրա պաշտպանության կարևորությունը:

352. Article XX, O.A.S. Res. XXX, adopted by the Ninth International Conference of American States (1948), reprinted in Basic Documents Pertaining to Human Rights in the Inter-American System, OEA/Ser.L.V/II.82 doc.6 rev.1 at 17 (1992).

353. American Convention on Human Rights (1969), article 23.

354. African Charter on Human and Peoples' Rights (1981) Article 13.

355. The document accepted in the Conference on Security and Cooperation in Europe, 1st August 1975 Helsinki, Section VII.

356. Document of the Meeting of the Conference on the Human Dimension of the for Security and Cooperation in Europe, Copenhagen, 29 June 1990, 29 International Legal Materials, 1990, 1305, Preamble.

357. Statute of Council of Europe, signed in London on 5 May 1949, CETS 001, Preamble.

Այսպես.

**Սահմանադրության 1-ին հոդվածը**, որը նախատեսում է Հայաստանի Հանրապետության անփոփոխ որակները, սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունը .... ժողովրդավարական .... պետություն է»: Սահմանադրության անփոփոխ դրույթում Հայաստանի ժողովրդավարական պետություն լինելու արձանագրման հետևանքը ժողովրդավարության՝ որպես Հայաստանում քաղաքական կառավարման ռեժիմի անփոփոխ այնպիսի դրույթունն է, որն անհնար է փոփոխել նույնիսկ իշխանության աղբյուրի՝ ժողովրդի համար:

**Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասը** նախատեսում է իշխանության՝ ժողովրդին պատկանելիության մասին Սահմանադրի անփոփոխ անձանագրությունը:

**Նույն հոդվածի 2-րդ մասով** նախատեսված են ժողովրդի իշխանության իրականացման միջոցների ցանկը՝ ընտրություն, հանրաքվե, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ պաշտոնատար անձինք: Հարկ է նկատել, որ Սահմանադրության այս դրույթով ժողովրդի իշխանության իրականացման համար նախատեսված միջոցների ցանկը սպառիչ է:

**Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ մասով** նախատեսված է, որ ժողովրդի իշխանության յուրացումը ցանկացած կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է: Այս առնչությամբ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Սահմանադրի կողմից մեր պետության ժողովրդավարական բնույթի և ժողովրդի՝ որպես իշխանության առաջնային իրականացնողի նկատմամբ կարևորությունը բարձրացված է այն աստիճանի, որ ամբողջ Սահմանադրության մեջ միակ հանցագործության մասին հիշատակումը վերաբերում է ժողովրդի իշխանության յուրացման քրեականացմանը, ընդ որում՝ Սահմանադրության մակարդակով:

### **Ազատ ընտրության իրավունքը՝ ըստ Սահմանադրության**

Ազատ ընտրության իրավունքը, որը, ինչպես նշվեց, կազմում է ժողովրդավարության իրավունքի առանցքը, Սահմանադրությամբ նախատեսված (հոդված 48) անհատական իրավունք է, որը ներառում է ինչպես համապետական իշխանության մարմնի՝ Ազգային ժողովի ընտրության, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության իրավունքը: Այս իրավունքի սկզբունքները որպես սահմանադրական կարգի սկզբունքներ սահմանված են Սահմանադրության 7-րդ հոդվածում: Հայաստանում ընտրությունը կամ հանրաքվեն անցկացվում է.

- ընդհանուր,
- հավասար,
- ազատ,
- ուղղակի,
- գաղտնի քվեարկությամբ
- անցկացվող ընտրական իրավունքի հիման վրա:

Սահմանադիրը սահմանել է նաև ազատ ընտրության իրավունքի իրականացման սահմանափակում, որի իրագործումն ու պահպանությունը վերապահված է օրենսդրի կողմից համապատասխան օրենքներ (Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք և այլ օրենքներ) կամ ոլորտային միջազգային պայմանագրեր ընդունելու կամ վավերացնելու միջոցով մեխանիզմներ ներառելուն և գործադիր իշխանության և ընտրական վարչարարության համակարգին (Կենտրոնական ընտրական հանձնաժողովին): Մասնավորապես, ընտրական իրավունքով օժտված են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (թեպետ օրենսդրին վերապահված է քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունք նախատեսելու իրավասություն): Բացի այդ, մեկ այլ ընտրական սահմանափակում է ակտիվ (ընտրելու իրավունք) ընտրական տարիքը մինչև 18 տարին լրացած, իսկ պասիվ (ընտրվելու իրավունք) ընտրական իրավունքը մինչև 25 տարին լրացած անձանց համար սահմանափակելը: Նմանապես պասիվ ընտրական իրավունքից օգտվել չի կարող վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի այլ պետության քաղաքացիություն ունեցող կամ վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակված կամ հայերենին չտիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին: Սահմանադրությամբ առհասարակ արգելված է ակտիվ և պասիվ, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրացումը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձի համար: Ընտրվելու իրավունք չունի նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձը:

### **Հարցեր լսարանին**

1. Ինչպիսի՞ն են ժողովրդավարության և մարդու իրավունքների փոխհարաբերությունները:
2. Ինչպիսի՞ դեր ունեն ժողովրդավարությունը և Հայաստանի Հանրապետության համար պետության ժողովրդավարական տեսակի ընտրությունը Սահմանադրի համար, ինչպե՞ս է այն կարևորված մեր Սահմանադրությամբ:
3. Ո՞րն է ազատ ընտրության իրավունքի սահմանադրական բովանդակությունը:

## 5.11. Սեփականության իրավունք

Սեփականության իրավունքը մարդու կարևորագույն իրավունքներից մեկն է, որը երաշխավորված է թե՛ միջազգային փաստաթղթերով, թե՛ Սահմանադրությամբ: Մասնավորապես ՄԻԵԿ-ի՝ 1952 թ.-ի մարտի 20-ին ընդունված 1-ին արձանագրության 1-ին հոդվածի (Սեփականության պաշտպանություն) համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ (Սեփականության իրավունքը) հոդվածի համաձայն՝

- «1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք»:
2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:
3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:
5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:
6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:
8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

հնչալես ցանկացած հիմնական իրավունքի, այնպես էլ սեփականության իրավունքով պահանջների հասցեատերը հանրային իշխանությունն է: Այս կապակցությամբ հանրային իշխանությունը ստանձնում է միաժամանակ երկու բնույթի պարտավորություն՝ նեգատիվ՝ ձեռնպահ մնալ իրավունքին միջամտությունից և պոզիտիվ՝ պաշտպանել այդ իրավունքը երրորդ անձանց ոտնձգություններից՝ այդ թվում ընդունելով այդ առումով անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ: Նշվածը բխում է Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի և ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կարգավորումներից:

Անդրադառնալով այս հարցին՝ ՄԻԵԿ-ը նշել է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը նպատակ ունի պաշտպանելու անձին պետության կողմից չարդարացված միջամտությունից իր սեփականությունից անարգել օգտվելու հարցում, ինչպես նաև անդամ պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ ՄԻԵԿ-ի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված անձի սեփականության իրավունքը խախտելուց, այլ նաև ընդունել այնպիսի օրենսդրություն, որը կպաշտպանի անձի սեփականության իրավունքը այլ անձանց ոտնձգություններից (*Sovtransauto holding v. Ukraine*, 25/07/2002, app. no. 48553/99, § 96):

Մարդու սեփականության, այսինքն՝ գույքը ազատորեն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը պատկանում է ոչ բացարձակ, այն է՝ սահմանափակելի իրավունքների թվին, ինչը նշանակում է, որ կարող են լինել լեգիտիմ շահեր կամ նպատակներ, որոնք հետապնդելով՝ պետությունը կարող է միջամտություն իրականացնել այս իրավունքի նկատմամբ: Ըստ Սահմանադրության՝ այդ նպատակներն են հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Միևնույն ժամանակ սահմանադրական մեջբերված նորմերը սահմանում են սեփականությունից անձին զրկելու բացառապես դատական կարգը, ինչպես նաև նշում, որ սեփականությունից զրկումը և սեփականության իրավունքը կազմող իրավունքների նկատմամբ ցանկացած միջամտություն (սահմանափակում) կարող են կատարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Վերջին եզրույթը պետք է հասկանալ ոչ թե դրա կոնվենցիոն, այսինքն՝ ինքնավար իմաստով, այլ բառացի՝ որպես Հայաստանի խորհրդարանի կողմից ընդունված օրենքներ: Այս մեկնաբանությունը բխում է նախ և առաջ ՄԻԵԿ-ի 53-րդ (Մարդու առկա իրավունքների երաշխավորումը) հոդվածից, որի համաձայն՝

«Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ շեղում, որոնք կարող են երաշխավորվել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որևէ այլ համաձայնագրով»:

Ավելին, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասը լրացուցիչ պայմաններ է սահմանում առ այն, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումը կարող է իրականացվել դարձյալ օրենքով սահմանված, սակայն արդեն ոչ թե ցանկացած, այլ միայն բացառիկ դեպքերում նախատեսելով անգամ դրա

համար «նախնական և համարժեք փոխհատուցում» տրամադրելու պետության պարտականությունը՝ պարտականություն, որը չի կարող չեղարկվել կամ որևէ սահմանափակման ենթարկվել անգամ Հայաստանի Ազգային ժողովի կողմից ընդունվող օրենքով:

Պետք է նշել, որ նշված հատուկ սահմանադրաիրավական կարգավորումներից յուրաքանչյուրն արտահայտում է Հայաստանի պատմական փորձը՝ ոչ թե օրենքի, այլ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով Երևանի կենտրոնի բնակիչներին պատկառող տները հանրային գերակա շահ ճանաչելու՝ առանց թե՛ համարժեք, թե՛ նախնական փոխհատուցում տրամադրելու, ինչպես նաև նախքան դատարանի որոշումները նրանց տներից վտարելու մասով՝ խախտումներ, որոնք արդեն իսկ արձանագրվել են ՄԻԵԴ-ի բազմաթիվ վճիռներով:

Իր հերթին ՄԻԵԴ-ը, անդրադառնալով ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի բովանդակությանը, նշել է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է երեք առանձին կանոններից: Առաջին կանոնը, որը շարադրված է առաջին պարբերության առաջին նախադասությունում և ընդհանուր բնույթի է, ձևակերպում է գույքից անարգել օգտվելու սկզբունքը: Երկրորդ կանոնը, ամրագրված առաջին պարբերության երկրորդ նախադասությունում, վերաբերում է գույքից զրկելու հարցերին և այդ առնչությամբ հատուկ պայմաններ է սահմանում: Երրորդ կանոնը, որը նախատեսված է երկրորդ պարբերությամբ, ճանաչում է, որ պետությունները, ի թիվս այլևի, իրավունք ունեն վերահսկելու գույքի օգտագործումը՝ պայմանավորված հանրային շահով: Այս կանոններից երկրորդը և երրորդը վերաբերում են գույքից անարգել օգտվելու իրավունքին կատարվող միջամտությունների առանձին դրսևորումներին և հետևաբար պետք է մեկնաբանվեն առաջին կանոնում սահմանված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո:

### **Ի՞նչն է համարվում սեփականություն**

*Սեփականություն* կամ *գույք* եզրույթը ՄԻԵԿ-ի համակարգում ունի ինքնավար նշանակություն, այսինքն՝ դրա բովանդակությունը սահմանվում է ոչ թե ներպետական օրենսդրությամբ, այլ ՄԻԵԴ-ի դատական մեկնաբանությամբ: ՄԻԵԴ-ի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ անձի մոտ «սեփականության» կամ «գույքի» առկայության հարցը որոշելիս պետք է քննարկվի այն հարցը, թե արդյոք առանձին գործի հանգամանքներն (իրենց ամբողջության մեջ) անձին օժտում են որևէ նյութական (substantive) շահով, որը պաշտպանվում է ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով: Միևնույն ժամանակ, ելնելով նույն ՄԻԵԿ-ի 53-րդ հոդվածից և մարդու իրավունքների գերակայությունից, եթե որևէ ներպետական օրենսդրությամբ գույքը համարվում է «սեփականության իրավունքի օբյեկտ», ապա այն ցանկացած դեպքում պաշտպանված է ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով:

ՄԻԵԴ-ի պրակտիկայում գույք է համարվել.

- առկա գույքը,
- գույքի նկատմամբ ողջամիտ ակնկալիքը,
- եկամուտը,
- կենսաթոշակը՝ որոշակի պայմանների բավարարման դեպքում,
- պայմանագրով նախատեսված՝ գույքը պահանջելու և ստանալու իրավունքը,
- դատարանի որոշումը, որը ճանաչում է անձի սեփականության իրավունքը և այդպիսով ճանաչում անձի՝ գույքի նկատմամբ պահանջը որպես նրա ակտիվ,
- տնտեսական շահերը, օրինակ՝ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու դեպքում ավելի հաջողի խմիչքների վաճառքի արտոնագիրը
- և այլն:

Ոչ նյութական բարիքների նկատմամբ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիության հարցում ՄԻԵԴ-ը ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, թե արդյոք դրանք անձի համար առաջ են բերում գույքային իրավունքներ ու շահեր, հետևաբար ունեն տնտեսական արժեք, թե՞ ոչ: Համապատասխանաբար մտավոր այնպիսի սեփականությունը, ինչպիսին են, օրինակ, ապրանքային նշանը, արտոնագիրը և այլն, դիտարկվել են որպես «գույք» ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Կարևոր է նշել, որ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է, որ անձն ունենա ներպետական օրենսդրությամբ նախատեսված որևէ իրավունք, որն իր բովանդակությամբ համահունչ կլինի ՄԻԵԿ-ի իմաստով «գույքից» օգտվելու իրավունքին: Այս առումով զուգահեռաբար նրան, որ Կոնվենցիայի իմաստով *գույք* հասկացության բովանդակությունն ինքնավար է, և պարտադիր չէ, որ սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ, անձն առաջին հերթին պետք է ցույց տա, որ առանձին իրավունքները (որոնք պետք է հավասարեցվեն գույքին) պատկանել են իրեն կամ առնվազն վերջինս ունեցել է դրանք ձեռք բերելու և դրանցից օգտվելու իրավաչափ ակնկալիք՝ ըստ կիրառելի ներպետական օրենսդրության:

### **Ի՞նչպես է պարզվում սեփականության իրավունքի խախտման փաստը**

Ինչպես տեսանք թե՛ ՄԻԵԿ-ի, թե՛ Սահմանադրության կարգավորումներից, անձը իրավունք ունի անարգել կերպով իրականացնելու սեփականատիրոջ իր իրավունքները, սակայն պետությունն էլ, թվարկված լեգիտիմ շահերը հետապնդելով, իրավունք ունի վերահսկելու սեփականության իրավունքի իրացումը: Այսպիսով, հիմնական խնդիրն է ապահովել այն արդարացի հավասարակշռությունը, որը պետք է գոյություն ունենա սեփականության իրավունքի պաշտպանության և հանրային շահերի միջև, իսկ այդ հավասարակշռության խախտվելու դեպքում ապահովել դրա վերականգնումը:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը համատեղելի է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ միայն, եթե համապատասխանում է օրինականության սկզբունքին և հետապնդում հանրային



շահից բխող նպատակ՝ իրականացվելով հետապնդվող նպատակին ողջամտորեն համաչափ միջոցներով:

Ինչպես և մյուս սահմանափակելի իրավունքների դեպքում, նման սահմանափակման թույլատրելիության պատասխանը տրվում է ՄԻԵԴ-ի կողմից կիրառվող թեստի միջոցով, որով, բերվող հաջորդականությամբ, ուսումնասիրվում են հետևյալ հարցերը.

- արդյոք առկա է գույքը՝ ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով.
- արդյոք տեղի է ունեցել միջամտություն այդ իրավունքի նկատմամբ.
- գույքից անարգել օգտվելու իրավունքի իրացման նկատմամբ ՄԻԵԿ-ի արձանագրության 1-ին հոդվածի տեքստում սահմանված պետական թույլատրելի վերահսկողության ո՞ր ձևի ներքո է տեղի ունեցել այդ միջամտությունը.
- արդյոք միջամտությունը տեղի է ունեցել օրենքի հիման վրա.
- արդյոք միջամտությունը հետապնդում է որևէ հանրային իրավաչափ շահ.
- արդյոք միջամտությունը համաչափ է՝ հանրության լեգիտիմ և անհատի օրինական շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռությունը պահպանելու միջոցով, թե ոչ:

Սահմանափակման իրավաչափության հարցը քննարկելիս առաջնային չափանիշը **օրինականության սկզբունքի** պահպանումն է: Փաստելով, որ միջամտությունը չի համապատասխանում օրինականության սկզբունքին, ՄԻԵԴ-ն (առանց որևէ այլ պայմանի առկայությունը ստուգելու) արձանագրելու է սեփականության իրավունքի խախտում:

Օրինականության սկզբունքը նախ վերաբերում է նրան, որ միջամտության հնարավորությունը պետք է սահմանված լինի օրենքով, սակայն չի սահմանափակվում դրանով: Միջամտությունը կարող է համարվել օրենքի հիման վրա, եթե այն տեղի է ունեցել որոշակիության չափանիշին համապատասխանող իրավական նորմերի հիման վրա: Միաժամանակ օրինականության չափանիշի ստուգման շրջանակներում ՄԻԵԴ-ը սովորաբար չի անդրադառնում այն հարցին, թե որքանով ճիշտ է կիրառվել ներպետական օրենսդրությունը. բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ խոսքը ամերևույթ ակնհայտ և կոպիտ խախտումների մասին է:

Ինչպես նշվեց, միջամտությունը կարող է համարվել օրինական, եթե օրենքը, որի հիման վրա այն տեղի է ունեցել, համապատասխանում է որակական որոշակի չափանիշների: Օրենքը պետք է համահունչ լինի իրավունքի գերակայության սկզբունքին և երաշխավորի կամայականության բացառումը: Այն պետք է լինի մատչելի (հասանելի) և համապատասխանի իրավական որոշակիության պահանջներին, այսինքն՝ ձևակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը թույլ կտա քաղաքացուն իր վարքագիծը համատեղել դրանով նախատեսված կանոնին:

Միայն հիշյալ որակական չափանիշներին համապատասխանող իրավական նորմերը (նրանք, որոնք համատեղելի են իրավունքի գերակայության սկզբունքի հետ) կարող են հանդիսանալ օրենք և ծառայել որպես սեփականության իրավունքին միջամտության օրենսդրական հիմք:

Վերաբերելի հաջորդ չափանիշը, որի հիման վրա ստուգվում է սեփականության իրավունքին միջամտության իրավաչափությունը, այն է, թե որքանով է այդ միջամտությունը հետապնդել **իրավաչափ նպատակ**: Ինչպես վերը նշվեց, Սահմանադրությունը նախատեսում է այդպիսի երկու նպատակ՝ այլոց իրավունքների պաշտպանությունը և հանրային շահի պաշտպանությունը: Միջամտությունը կարող է որակվել որպես իրավաչափ միայն, երբ ծառայում է հիշյալ նպատակներին:

Միջամտության իրավաչափության ստուգման հաջորդ պայմանն այն է, թե որքանով է վերջինս եղել **համաչափ**: Այս հարցին անդրադարձ պետք է կատարվի միայն այն պարագայում, երբ պարզվել է, որ միջամտությունը տեղի է ունեցել օրենքի հիման վրա (օրինական է) և հետապնդել է իրավաչափ նպատակ: Հիմնական իրավունքների սահմանափակման համաչափությանը նվիրված Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը*:

Նշված կարգավորումը ըստ էության արտացոլում է նաև այս կապակցությամբ ձևավորված կոնվենցիոն չափանիշները:

*Համաչափության թեստը* ունի հետևյալ բաղադրիչները:

1. Միջամտությունը պետք է լինի պիտանի, այսինքն՝ հնարավոր դարձնի այն նպատակի կյանքի կոչումը, որի համար էլ նախաձեռնվել է:
2. Միջամտությունը պետք է լինի անհրաժեշտ համապատասխան իրավաչափ նպատակին հասնելու համար, այսինքն՝ որևէ այլ առավել մեղմ միջոցով հետապնդվող նպատակին հասնել հնարավոր չէ:
3. Պետք է հավասարակշռություն ապահովվի միջամտությամբ ստացվելիք արժեքի և միջամտության արդյունքում անձի կրելիք զրկանքների հետ:

## **Սեփականության իրավունքի կապը արդար դատաքննության իրավունքի հետ**

Ինչպես և ցանկացած այլ իրավունք, սեփականության իրավունքը ևս իր առավել արդյունավետ պաշտպանությունը կարող է գտնել դատարանում: Սեփականատիրոջ՝ իրեն գույքից զրկելու վերաբերյալ պետական, մասնավորապես վարչական մարմինների որոշումները ենթակա են դատական բողոքարկման՝ վերը նշված հանրային և մասնավոր շահերի միջև առկա հավասարակշռության պահպանումը ստուգելու նպատակով: Այս առումով կարևոր է նշել, որ եթե արձանագրվում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի (Արդարացի դատաքննության իրավունք) խախտում, օրինակ՝ դատավարության կողմերի միջև մրցակցության սկզբունքի կամ, այլ կերպ ասած, զեկների հավասարության խախտում կամ դատարանի մատչելիության սկզբունքի խախտում չափազանց բարձր պետական

տուրքերի հետևանքով, ապա ի սկզբանե չի կարող լինել սեփականատիրոջ իրավունքի նկատմամբ միջամտության համաչափություն: ՄԻԵԴ-ն իր պրակտիկայում արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները իրենց հերթին պետք է լինեն համաչափ և հետապնդեն լեգիտիմ շահ. սա չէր ապահովվել տուրքերի մեծ ծավալի պատճառով, որի հետևանքով անձը զրկվել էր պետության միջամտության համաչափության դատական ստուգման հնարավորությունից:

### Հարցեր լսարանին

1. Ո՞րն է սեփականության իրավունքի առարկայական շրջանակը, ինչպիսի՞ «գույք» է ներառված դրանում:
2. Որո՞նք են սեփականության իրավունքի սահմանափակման սահմանադրական պայմանները:
3. Որո՞նք են սեփականության իրավունքի սահմանափակման կամ այդ իրավունքին այլ կերպ միջամտության իմաստով *օրենք* հասկացությանն առաջադրվող սահմանադրական պահանջները:

## 5.12. Աշխատանքի իրավունք

Աշխատանքի իրավունքը ճանաչված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով, Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներով, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով և այլ փաստաթղթերով: Այն մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, որի իրացման միջոցով անձը, ի թիվս այլ հնարավորությունների, կարողանում է եկամուտ վաստակել իր կեցությունը ապահովելու համար:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 18 ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ աշխատանքի իրավունքը ենթադրում է արժանապատիվ աշխատանք, այսինքն՝ աշխատանք, որը հարգում է մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները, ինչպես նաև աշխատողի իրավունքները՝ անվտանգ աշխատանքային պայմանների և վարձատրության առնչությամբ, ստեղծում է իր և իր ընտանիքի անդամների ապրուստն ապահովելու համար բավարար վաստակի հնարավորություն<sup>358</sup>:

358. General comment No. 18, Article 6 of the International Covenant on Economic, Social and Cultural Rights, UN Committee On Economic, Social and Cultural Rights.

Աշխատանքի իրավունքի առանձին բաղադրիչներ իրենց ամրագրումն են ստացել նաև ՀՀ Սահմանադրությամբ: Այսպես, Սահմանադրության 57-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի աշխատանքի ազատ ընտրության իրավունքը: Նույն հոդվածի շրջանակներում ամրագրված է պարտադիր կամ հարկադիր աշխատանքի արգելքը՝ միաժամանակ նախատեսելով, որ պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում:

- այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը.
- գինվորական կամ այլընտրանքային ծառայությունը.
- յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ:

Աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում յուրաքանչյուր աշխատողի պաշտպանության իրավունքը ևս երաշխավորվում է՝ աշխատանքից ազատման հիմքերը թողնելով օրենքի կարգավորմանը: Սահմանադրության մակարդակով ամրագրված է նաև մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելու արգելքը, յուրաքանչյուր աշխատող կնոջ համար հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունքը, յուրաքանչյուր աշխատող ծնողի համար երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում արձակուրդի իրավունքը, մինչև տասնվեց տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելու արգելքը, գործադուլի իրավունքը, օրենքին համապատասխան, առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքը:

Սահմանադրությունը նախատեսում է նաև նվազագույն աշխատավարձի չափը օրենքով սահմանելու պահանջը, այսինքն՝ այն աշխատավարձի չափը, որից ցածր գործատուն չի կարող վճարել աշխատողին: Իսկ առավել համապարփակ ձևով աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, որն իր հերթին պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի նորմերին: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից վարվող քաղաքականությունը զբաղվածության բնագավառում պետք է համապատասխանի պետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

Այսպես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ դաշնագրին մասնակցող պետությունները պետք է ճանաչեն աշխատանքի իրավունքը և միջոցներ ձեռնարկեն այս իրավունքի ապահովման ուղղությամբ: Այն իր մեջ ներառում է յուրաքանչյուրի՝ այնպիսի աշխատանքով իր ապրուստը վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է:

*Արդյո՞ք աշխատանքի իրավունքի ճանաչումը կամ դրա երաշխավորմանն ուղղված պարտավորությունը ենթադրում է, որ պետությունը պետք է յուրաքանչյուրին ուղղակիորեն ապահովի աշխատանքով:*

Այս հարցի պատասխանը կարող ենք անմիջականորեն բխեցնել դաշնագրի 6-րդ հոդվածի 2-րդ մասից, որն ամրագրում է աշխատանքի իրավունքի լիարժեք իրացմանը հասնելու նպատակով ձեռնարկվելիք քայլերը: Դրանք ընդհանուր առմամբ ներառում են պետության կողմից այնպիսի քաղաքականության և ծրագրերի իրականացումը, որոնք ուղղված կլինեն կայուն տնտեսական, սոցիալական և մշակութային աճին և լրիվ, արտադրողական զբաղվածության ապահովմանը:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ նաև Կոմիտե), որն իրականացնում է մասնակից պետությունների կողմից Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի պահանջների կատարման մշտադիտարկումը, մեկնաբանելով աշխատանքի իրավունքը սահմանող 6-րդ հոդվածը, արձանագրում է, որ աշխատանքի իրավունքը չի կարող ընկալվել որպես աշխատանք ձեռք բերելու բացարձակ և անվերապահ իրավունք<sup>359</sup>:

Փոխարենը պետությունը պետք է վարի լիարժեք զբաղվածությանն ուղղված քաղաքականություն, այսինքն՝ քաղաքականություն, որը միտված է նոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատանքի տեղավորման մասնագիտացված զբաղվածության ծառայությունների արդյունավետությանը, տեխնիկական և մասնագիտական ուսուցման, վերապատրաստման ծրագրերի ապահովմանը: Մի կողմից սա պետության համար աստիճանական իրականացման ենթակա պարտավորություն է, մյուս կողմից դրա կատարման մակարդակը նաև խիստ չափելի է՝ իրավունքի խախտումն արձանագրելու տեսանկյունից:

Որպես օրինակ դիտարկենք Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի իրագործումը մշտադիտարկող մարմնի՝ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի պրակտիկան, որի շրջանակներում մի շարք դեպքերում կոմիտեն ճանաչել է պետության կողմից աշխատանքի իրավունքի ապահովումից բխող հենց այս պարտավորության խախտումը: Այսպես, կոմիտեն որպես Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջների խախտում է ճանաչել հետևյալ իրավիճակները.

- երբ բացակայել է լիարժեք զբաղվածության ապահովման թե՛ հռչակված հանձնառությունը և թե՛ համակարգված զբաղվածության որևէ քաղաքականություն.
- երբ գործազրկության ծայրահեղ բարձր ցուցանիշների պայմաններում ձեռնարկված միջոցները եղել են ոչ համարժեք.
- երբ զբաղվածության քաղաքականության բնագավառում արձանագրվել են բացասական զարգացումներ թե՛ գործազուրկ անձանց ներգրավման և թե՛ զբաղվածության ապահովման ուղղությամբ ծախսվող ֆինանսական միջոցների մակար-

359. General comment No. 18, Article 6 of the International Covenant on Economic, Social and Cultural Rights, UN Committee On Economic, Social and Cultural Rights.

դակում այն դեպքում, երբ տնտեսական աճի պայմաններում գործազրկության ցուցանիշները կտրուկ բարձրացել են.

- երբ չափազանց փոքր թվաքանակով աշխատանք փնտրողներ են հասանելիություն ունեցել վերապարտաստումներին և այլ դեպքեր<sup>360</sup>:

Հետևաբար աշխատանքի իրավունքի ապահովման բնագավառում պետությունն ունի լիարժեք զբաղվածության քաղաքականությունը հետևողականորեն և համակարգված ձևով իրականացնելու բավականին հստակ պարտավորություններ:

## **Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքը**

Ինչպես գիտենք, աշխատանքի իրավունքը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է: Այսինքն՝ աշխատանքի ընտրության ազատությունը աշխատանքի իրավունքի կարևորագույն բաղադրիչ է, և այն առաջին հերթին ենթադրում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքը:

### **Ինչպե՞ս որակել աշխատանքը որպես հարկադիր կամ պարտադիր բնույթ ունեցող:**

*Հարկադիր կամ պարտադիր աշխատանք* եզրույթը հստակ սահմանված է ՀՀ-ի կողմից վավերացված «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» ԱՄԿ թիվ 29 կոնվենցիայով, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանք է դիտարկվում որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը: Համանման սահմանում է պարունակում նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.2-րդ հոդվածը՝ միաժամանակ նախատեսելով այս կանոնից Սահմանադրությամբ ամրագրված երեք բացառությունները:

Պետք է նկատի ունենալ, որ պատժի սպառնալիքը բավականին լայն մեկնաբանության է ենթարկվում Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից՝ դրա տակ դիտարկելով ոչ միայն տարատեսակ պատիժները, հարկադրանքի ձևերը, այլև աշխատանքային իրավունքներից կամ արտոնություններից զրկումը (օրինակ՝ աշխատավարձից, առաջխաղացումից զրկելը և այլն)<sup>361</sup>:

## **Խտրականության արգելքը աշխատանքային հարաբերություններում**

Ազատորեն ընտրված աշխատանքով իր ապրուստը վաստակելու իրավունքից բխում է նաև աշխատանքային հարաբերություններում խտրականության բոլոր ձևերի արգել-

360. Digest of the Case Law of the European Committee of Social Rights, 31 December 2021.

361. ILO Standards on Forced Labour. The New Protocol and Recommendation at a Glance, ILO, 2016.

քի ապահովման պահանջը: Բնականաբար, օրենսդրությամբ պետք է արգելվի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությունը աշխատանքային հարաբերություններին առնչվող բոլոր փուլերում: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն հստակ բնորոշում է այս պարտավորությունը որպես պետության կողմից անհապաղ կատարման ենթակա պարտավորություն՝ ի տարբերություն աստիճանական կատարման ենթակա պարտավորությունների:

Պետությունը ոչ միայն պետք է օրենսդրությամբ սահմանի աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելքը, այլև պետք է գործունե միջոցներ ձեռնարկի այս արգելքը կյանքի կոչելու ուղղությամբ, այդ թվում՝ ապահովելով խտրականության դեմ պաշտպանության արդյունավետ միջոցներ:

Ըստ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի՝ նման միջոցները, ի թիվս այլին, պետք է ապահովեն՝ խտրականության դրսևորման դեպքերում վարչական մարմին կամ դատարան դիմելու իրավունքը, գործատուի վերաբերյալ բողոք ներկայացրած աշխատողի պաշտպանությունը՝ աշխատանքից ազատման կամ գործատուի այլ պատժիչ բնույթի գործողության դեմ, խտրականությանն առնչվող գործերով ապացուցման բեռի բաշխումը՝ հոգուտ հայցվորի, խտրականության դրսևորման դեպքերում համարժեք պատասխանատվություն և խտրականության ենթարկված անձանց համար փոխհատուցման հնարավորություն, որը պետք է լինի համարժեք, համաչափ և կանխարգելիչ բնույթ ունեցող<sup>362</sup>:

Թվարկված պահանջներից հակիրճ անդրադառնանք խտրականությանն առնչվող գործերով հոգուտ հայցվորի ապացուցման բեռի բաշխման սկզբունքին: Այս սկզբունքի Եությունը հետևյալն է. եթե որպես կանոն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ինքն ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը, խտրականության դրսևորման դեպքերում համապատասխան պահանջների պահպանման պարտականությունը կատարած լինելու փաստը ապացուցելու պարտականությունը պետք է կրի պատասխանողը, այսինքն՝ գործատուն:

Ինչ վերաբերում է աշխատանքային հարաբերությունների շրջանակներում խտրականության գոհերի համար նախատեսվող փոխհատուցմանը, ապա, ըստ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի, այն պետք է նախատեսված լինի խտրականության բոլոր հնարավոր դեպքերի համար, մինևույն ժամանակ այս փոխհատուցումը պետք է համաչափ լինի խտրականության գոհ դարձած անձի կրած վնասին և ունենա բավարար զսպող ազդեցություն գործատուի համար:

Կարևոր է նաև նշել, որ ՀՀ օրենսդրությունը դեռևս ամբողջ ծավալով համահունչ չէ խտրականության արգելքին վերաբերող բոլոր վերոգրյալ պահանջներին, ինչը հաստատվում է նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից 2016 թ.-ին և 2020 թ.-ին Հայաստանի վերաբերյալ ընդունված հետևություններով<sup>363</sup>:

362. Digest of the Case Law of the European Committee of Social Rights, 31 December 2021.

363. Conclusions 2020 - Armenia - Article 1-2 2020/def/ARM/1/2/EN, Conclusions 2016 - Armenia - Article 1-2 2016/def/ARM/1/2/EN.

## Աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների իրավունք

Աշխատանքի իրավունքի առանցքային բաղադրիչ է աշխատանքի արդար պայմանների իրավունքը: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածը ամրագրում է յուրաքանչյուրի աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների իրավունքը՝ սահմանելով անհրաժեշտ երաշխիքների ծավալը: Այս իրավունքը իր բաղադրիչներով համապարփակ ձևով սահմանված է նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում:

Աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների իրավունքը, ի թիվս այլ պահանջների, ենթադրում է մի շարք երաշխիքների ապահովում, այդ թվում՝ օրական և շաբաթական ողջամիտ աշխատաժամանակ, տարեկան նվազագույնը չորսշաբաթյա վճարովի արձակուրդ, շաբաթական հանգստի ապահովում, գիշերային ժամերին աշխատողների համար հավելյալ պաշտպանության երաշխիքներ, հատկապես անառողջ և վտանգավոր աշխատանքներում վտանգները վերացնելու կամ լրացուցիչ երաշխիքներ սահմանելու պահանջ և այլ երաշխիքներ<sup>364</sup>:

Արդարացի վարձատրման իրավունքը ևս աշխատանքի իրավունքի կարևորագույն բաղադրիչ է: Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրա արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով պետությունը պետք է ճանաչի աշխատողների վարձատրման իրավունքը, որը նրանց և նրանց ընտանիքներին կապահովի պատշաճ կենսամակարդակով, այդ թվում պետք է ճանաչի աշխատողների վարձատրման դրույքաչափի ավելացման իրավունքը արտաժամյա աշխատանքի համար (բացառությամբ առանձնահատուկ դեպքերի), կին և տղամարդ աշխատողների նույնարժեք աշխատանքի համար հավասար վճարման իրավունքը, բոլոր աշխատողների՝ աշխատանքից ազատվելու վերաբերյալ նախապես ծանուցում ստանալու իրավունքը, աշխատավարձից պահումներ կատարելու հետ կապված հստակ սահմանափակումները:

Առավել մանրամասն անդրադառնալով վերոգրյալ պահանջներից մի քանիսին: Այսպես, նախապես ծանուցում ստանալու իրավունքի համատեքստում ծանուցման ժամկետի ողջամտությունը գնահատվում է՝ աշխատանքային ստաժի տևականությունից ելնելով. որքան տևական է աշխատանքային ստաժը, այնքան երկար պետք է լինի ծանուցման ժամկետը: Ըստ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին չեն համապատասխանում, օրինակ, հետևյալ ծանուցման ժամկետները՝ մեկշաբաթյա ծանուցման ժամկետը՝ վեց ամսից պակաս տևողությամբ աշխատանքի դեպքում, երկշաբաթյա ծանուցման ժամկետը՝ վեց ամսից ավելի տևողությամբ աշխատանքի դեպքում, մեկ ամսից պակաս ծանուցման ժամկետը՝ մեկ տարվա տևողությամբ աշխատանքի դեպքում, ութշաբաթյա ծանուցման ժամկետը՝ առնվազն տասը տարվա տևողությամբ աշխատանքի դեպքում<sup>365</sup>: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (հոդված 115), որպես կանոն, նախատեսում

364. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, հոդված 2:

365. Digest of the Case Law of the European Committee of Social Rights,

<https://rm.coe.int/digest-2018-parts-i-ii-iii-iven/1680939f80>, <http://hudoc.esc.coe.int/eng?i=2018/def/ARM/4/4/EN>



Ե տարբերակված ծանուցման ժամկետներ՝ հաշվի առնելով աշխատանքային ստաժի տևականությունը:

Ինչ վերաբերում է աշխատանքի արդարացի վարձատրման իրավունքից բխող՝ անձին և նրա ընտանիքի անդամներին պատշաճ կենսամակարդակի ապահովման բաղադրիչին, ապա այստեղ կարևոր է շեշտել, որ մի կողմից սա աշխատանքային իրավունքի կարևոր բաղադրիչ է, մյուս կողմից այն կարող է հռչակագրային հնչեղություն ստանալ, եթե ամկա չլինեն պատշաճ կենսամակարդակին ամնչվող հստակ ցուցիչներ, և չբացահայտվի դրա բովանդակությունը: Առհասարակ այս խնդիրը արդիական է նաև ընդհանուր առմամբ սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների համատեքստում: Հաճախ մենք կարող ենք միջազգային պայմանագրերում հանդիպել բավականին լայն ձևակերպումների, որոնք, առանց հստակեցման և այդ իրավունքների ներքո պետության հստակ պարտականությունների նախատեսման, շատ դեպքերում կարող են դառնալ ոչ իրագործելի:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն հստակ ուղենիշ է սահմանել արդարացի վարձատրության իրավունքի այս բաղադրիչի վերաբերյալ, որի համաձայն՝ որպես ընդհանուր կանոն՝ նվազագույն աշխատավարձը չպետք է տվյալ պետությունում միջին աշխատավարձի 60 տոկոսից ցածր չափով սահմանված լինի<sup>366</sup>:

Աշխատանքի իրավունքի կարևոր բաղադրիչ է նաև անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքը, որը, ըստ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 3-րդ հոդվածի, ի թիվս այլ պահանջների, ներառում է պետության պարտավորությունը՝ վարելու աշխատանքային անվտանգությանը, աշխատանքային առողջությանը և աշխատանքային միջավայրին վերաբերող քաղաքականություն: Այդ քաղաքականության առաջնային նպատակը պետք է լինի աշխատանքային անվտանգության ու առողջության բարելավումը և աշխատանքի ընթացքում ծագող, դրա հետ կապված կամ տեղի ունեցող վթարների և առողջությունը վնասելու հնարավորության կանխումը:

**Երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքի ապահովման համատեքստում ՀՀ-ն Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի ներքո պարտավորվել է.**

- աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք ապահովել 15 տարեկանը՝ բացառությամբ այն երեխաների, որոնք զբաղվում են ընդունված թեթև աշխատանքով՝ առանց վնասելու իրենց առողջությունը, բարոյական կերպարը կամ խանգարելու կրթությանը,
- աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք ապահովել 18 տարեկանը՝ այն ընդունված աշխատանքների ամնչությամբ, որոնք համարվում են վտանգավոր կամ վնասակար են առողջությանը,
- ապահովել, որ դեռևս պարտադիր կրթության ենթակա անձինք չզբաղվեն այնպի-

366. Digest of the Case Law of the European Committee of Social Rights, 31 December 2021.

սի աշխատանքով, որի պատճառով կգրկվեն իրենց կրթությունից լրիվ օգտվելու հնարավորությունից,

- ապահովել, որ 18 տարեկանից ցածր անձանց աշխատաժամերը սահմանափակվեն՝ ելնելով նրանց զարգացման անհրաժեշտությունից և մասնավորապես նրանց մասնագիտական ուսման նկատառումներից,
- ապահովել, որ 18 տարեկանից ցածր աշխատող անձինք տարեկան նվազագույնը չորսշաբաթյա վճարովի արձակուրդի իրավունք ունենան,
- ապահովել, որ 18 տարեկանից ցածր աշխատող անձինք չկատարեն գիշերային աշխատանք,
- ապահովել երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառման ապահովմանն ուղղված այլ երաշխիքներ<sup>367</sup>:

**Աշխատանքի իրավունքի առանցքային բաղադրիչ է աշխատանքից ազատելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքը:** Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 24-ի համաձայն՝ այն ենթադրում է պետության կողմից հետևյալ իրավունքների ճանաչումը.

- աշխատանքից ազատելու դեպքում աշխատողի իրավունքը չպետք է դադարի՝ առանց նման ազատման համար հիմնավորված պատճառների, որոնք կապված են նրանց ընդունակության կամ վարքի հետ կամ հիմնված են կազմակերպության գործնական պահանջների վրա,
- աշխատանքից առանց հիմնավորված պատճառի ազատված աշխատողը պետք է պատշաճ փոխհատուցման կամ այլ համապատասխան օգնության իրավունք ունենա:

Այսինքն՝ աշխատողին կարելի է աշխատանքից ազատել միայն երկու տեսակի պատճառների դեպքում. նրա վարքի կամ կարողությունների հետ կապված պատճառներ և կազմակերպության գործունեության հետ կապված տնտեսական պատճառներ:

Այսպես, օրինակ, գործատուն չի կարող ազատել աշխատողին միայն վերջինիս որոշակի տարիքի հասնելու հիմքով՝ առանց պատճառաբանելու դրանով պայմանավորված նրա վարքի կամ կարողությունների անհամապատասխանությունը: Մի շարք դեպքերում Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն խախտում է ճանաչել խարտիայի մասնակից պետությունների կողմից նման կարգավորումների սահմանման հիմքով: Այսպես, կոմիտեն ճանաչել է խարտիայի պահանջների խախտում այն հիմքով, որ Նորվեգիայի օրենսդրությունը սահմանել էր 62 տարին լրացած նավաստիներին աշխատանքից ազատելու հնարավորություն՝ անկախ նրանց ընդունակություններից կամ վարքից, ինչպես նաև կազմակերպության գործնական պահանջներից<sup>368</sup>:

Հարկ է արձանագրել, որ մինչև 2023 թվականը կատարված փոփոխությունները աշխատողին կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով ազատելու հնարավորություն էր նախատեսում նաև ՀՀ աշխատանքային օրենսգիրքը:

367. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, հոդված 7:  
368. Fellesforbundet for Sjøfolk (FFFS) v. Norway.

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերը սպառիչ կերպով թվարկված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածով, ինչը կարևոր երաշխիք է հանդիսանում աշխատողի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Այսինքն՝ օրենքով նախատեսված հիմքերի շրջանակից դուրս գործատուն իրավունք չունի լուծելու աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը: Սահմանված հիմքերը հետևյալն են՝

- գործատուի լուծարման/գործունեության դադարման դեպքում.
- աշխատանքի ծավալների և (կամ) տևողության և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.
- աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.
- աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.
- աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.
- աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.
- աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում.
- աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեմեդիկամենտների ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացնելու դեպքում.
- անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.
- պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.
- օտարերկրացու կացության կարգավիճակն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում.
- օրենքով սահմանված դեպքերում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:

Աշխատանքային պայմանագրի անօրինական լուծման դեպքում աշխատողն իրավունք ունի դիմելու դատարան և հասնելու իր խախտված իրավունքների վերականգնմանը՝ պահանջելով նաև իր միջին աշխատավարձի վճարում հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Իրենց աշխատանքային պայմանների բարելավման նպատակով աշխատողները իրավունք ունեն նաև միավորվելու և կոլեկտիվ բանակցություններ վարելու: Նրանք իրավունք ունեն արհեստակցական միություններ ստեղծելու և անդամագրվելու դրանց՝

իրենց աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով: Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն նաև գործադուլի իրավունք: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է գործադուլի իրավունքի իրականացման մանրամասնեցված կարգն ու սահմանափակումները:

### **Հարցեր լսարանին**

1. Ինչպե՞ս կարող ենք գնահատել, թե արդյոք ՀՀ-ն կատարել է աշխատանքի արդարացի վարձատրության իրավունքի ապահովմանն ուղղված իր միջազգային պարտավորությունները:
2. Գնահատե՞ք ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման ժամկետների համապատասխանությունը Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին:
3. Զննարկե՞ք գործատուի կողմից աշխատողի հետ կնքված պայմանագիրը լուծելու հիմքերը, բերե՞ք աշխատանքային պայմանագրի ոչ իրավաչափ լուծման մի քանի օրինակներ:

## **5.13. Առողջության իրավունք**

### **Ընդհանուր նկարագրություն**

Առողջության իրավունքը մարդու արժանապատիվ կյանքի հիմնարար բաղադրիչներից մեկն է և մարդու իրավունքների ամբողջության անբաժան մասը: Թեև իրավունքի սահմանումն ու լիարժեք ճանաչումը համեմատաբար նոր են, և այն դեռևս զարգացման ընթացքում է, առողջության իրավունքը, կամ, այլ կերպ ասած, ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույն հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը, ամրագրված է բազմաթիվ միջազգային փաստաթղթերով:

Միջազգային ժամանակակից իրավական համակարգերում այն առաջին անգամ արձանագրվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ 1946 թ.-ի Սահմանադրությամբ: ԱՀԿ Սահմանադրության նախաբանում նշվում է. «Առողջության առավելագույն հասանելի մակարդակի առկայությունը և դրանից օգտվելու հնարավորությունը յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքներից մեկն է՝ անկախ ռասայից, կրոնից, քաղաքական համոզմունքներից, տնտեսական կամ սոցիալական պայմաններ-

րից<sup>369</sup>» Փաստաթուղթն առողջությունը սահմանում է որպես «լիակատար ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ և ոչ միայն հիվանդության կամ առողջական խնդիրների բացակայություն»:

ԱՀԿ-ի սահմանումն ընդլայնվել է 1978 թ.-ին Առողջության առաջնային պահպանման մասին Ալմա Աթայի հռչակագրով, որը վերահաստատել է նշված սահմանումը և լրացրել այն՝ իրավունքը բնորոշելով որպես «մարդու հիմնարար իրավունք» և ավելացնելով, որ առողջության առավելագույն հասանելի մակարդակի հասնելը համաշխարհային սոցիալական կարևորագույն նպատակ է, որի իրականացումը պահանջում է միջոցներ ձեռնարկել ոչ միայն առողջապահության ոլորտում, այլ նաև սոցիալական և տնտեսական ոլորտներում: Ալմա Աթայի հռչակագիրը նաև որպես պետության պարտավորություն է ամրագրել առողջության պահպանման համար ռեսուրսների արդյունավետ և արդար բաշխումն ապահովելու նպատակով համապարփակ առողջապահական համակարգերը աստիճանաբար զարգացնելը:

1948 թ.-ին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում առողջությունը նշվում է որպես բավարար կենսամակարդակի իրավունքի մաս<sup>370</sup>: Առողջության իրավունքը կրկին ճանաչվել է որպես մարդու իրավունք 1966 թ.-ին «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում:

Մարդու իրավունքների այլ միջազգային պայմանագրեր ևս ճանաչել կամ անդրադարձել են առողջության իրավունքի կամ դրա առանձին տարրերին, օրինակ՝ բժշկական օգնության իրավունքին: Առողջության իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերից յուրաքանչյուրը: Իսկ 2002 թ.-ին ՄԱԿ-ի շրջանակներում ձևավորել է հատուկ զեկուցողի մանդատ՝ յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր հասանելի մակարդակի իրավունքի վերաբերյալ<sup>371</sup>: Այս և այլ նախաձեռնություններ օգնել են պարզաբանելու առողջության իրավունքի բնույթը և սահմանելու դրա լիարժեք ապահովմանն ուղղված պարտավորությունների շրջանակը:

Առողջության իրավունքի ոլորտում հիմնարար փաստաթղթերից է 1997 թ.-ին ընդունված Եվրոպայի խորհրդի տարածքում կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքները ամրագրող «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիան կամ, այլ կերպ ասած, «Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին» կոնվենցիան, որը նաև անվանում են Օվիեդոյի կոնվենցիա<sup>372</sup>: Նպատակ ունենալով կանխելու մարդու արժանապատվության և իրավունքների լուրջ խախտումները՝ այն սահմանում է կենսաբժշկության ոլորտում անձի իրավունքների պաշտպանութ-

369. World Health Organization (WHO) (1946). Constitution of the World Health Organization. Basic Documents, Geneva: World Health Organization, <https://apps.who.int/gb/bd/PDF/bd47/EN/constitution-en.pdf?ua=1>

370. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1896>

371. Special Rapporteur on the right of everyone to the enjoyment of the highest attainable standard of physical and mental health, <https://www.ohchr.org/en/special-procedures/sr-health>

372. «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիա», 1997 թ., No. 164

<https://rm.coe.int/human-rights-and-biomedicine-convention-arm/1680a206db>

յան նվազագույն չափորոշիչները ու սկզբունքները և մասնավորապես անդրադառնում կենսաբանական և բժշկական գործունեության, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման, իրագեղված համաձայնության, մասնավոր կյանքը հարգելու և տեղեկատվության ազատության իրավունքի իրացման և այլ հարցերին: Կոնվենցիայի մաս են կազմում նաև կից արձանագրությունները, որոնք վերաբերում են մարդու կլոնավորման արգելքին, մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստմանը և կենսաբժշկական հետազոտություններին: Օվիեդոյի կոնվենցիայի կիրառման ապահովման մարմինն է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան իր հերթին ուղղակի կերպով չի ամրագրում առողջության իրավունքը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Կոնվենցիայով ամրագրված իրավունքները այս կամ այն կերպ առնչվում են առողջության իրավունքին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անդրադարձել է առողջության իրավունքի բազմաթիվ խնդիրների՝ մեկնաբանելով անձի հոգեկան և ֆիզիկական բարեկեցության, առողջապահության հասանելիության, ազատ որոշումների կայացման իրավունքները

Ի թիվս այլնի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը անդրադառնում է ազատագրկվածների՝ առողջության հետ առնչություն ունեցող իրավունքներին, վերարտադրողական առողջությանը, Էֆթանագիային, հոգեկան առողջությանն ու ազատագրկման պրակտիկաներին<sup>373</sup>:

## Առողջության իրավունքի բովանդակությունը

Առողջության իրավունքը ընդգրկում է իրավունք է: Մենք հաճախ առողջության իրավունքը կապում ենք առողջապահական ծառայությունների հասանելիության և առողջապահական հաստատությունների առկայության հետ, սակայն առողջության իրավունքի սահմաններն Էլ ավելի լայն են: Այն ներառում է ինչպես առողջապահական համակարգի հատուկ տարրեր և պարտավորություններ, այնպես Էլ առողջության պահպանմանը նպաստող մարդու այլ իրավունքներ՝ առողջությանն առնչվող մարդու հատուկ իրավունքներ: Այն, ըստ էության, ներառում է նաև գործոնների լայն շրջանակ, որոնք կարող են օգնել մեզ վարելու առողջ կյանք: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեն դրանք անվանում է «առողջության հիմքում ընկած որոշիչներ (դետերմինանտներ)»<sup>374</sup>: Դրանք ներառում են.

1. անվտանգ խմելու ջուր և բավարար սանիտարական պայմաններ,
2. անվտանգ սնունդ,
3. բավարար սնուցում և բնակարանային պայմաններ,

373. Health. ECHR factsheet, October 2022, [https://www.echr.coe.int/documents/fs\\_health\\_eng.pdf](https://www.echr.coe.int/documents/fs_health_eng.pdf)

374. General Comment No. 14 (2000). The right to the highest attainable standard of health (article 12 of the International Covenant on Economic, Social and Cultural Rights), 2000, <https://undocs.org/Home/Mobile?FinalSymbol=E%2FC.12%2F2000%2F4&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=False>

4. առողջ աշխատանքային պայմաններ և շրջակա միջավայր,
5. առողջության վերաբերյալ կրթություն և իրազեկվածություն,
6. գեներային հավասարություն<sup>375</sup>:

Միևնույն ժամանակ առողջության իրավունքը առողջ լինելու իրավունքը չէ: Պետությունները չունեն պարտավորություն՝ երաշխավորելու անձի առողջությունը, քանզի այն կարող է կախված լինել բազմաթիվ այլ անկառավարելի գործոններից: Պետությունները, սակայն, պետք է երաշխավորեն հարգանքը անձի առողջական վիճակի նկատմամբ և յուրաքանչյուրի հավասարությունը՝ անկախ առողջական վիճակից:

Ինչպես նշեցինք, առողջության իրավունքը ներառում է իրավունքներ: Այս իրավունքների թվում են.

1. առողջության պաշտպանության համակարգի առկայության իրավունք, որն ապահովում է բոլորի համար առողջության հնարավոր հասանելի մակարդակը վայելելու հավասար հնարավորություններ,
2. հիվանդությունների կանխարգելման, բուժման և կառավարման իրավունք,
3. հիմնական դեղերի հասանելիություն,
4. մոր, երեխայի և վերարտադրողական առողջության իրավունք,
5. հիմնական առողջապահական ծառայությունների հավասար և ժամանակին հասանելիություն,
6. առողջության վերաբերյալ կրթության և տեղեկատվության հասանելիության իրավունք,
7. բնակչության և համապատասխան խմբերի մասնակցությունը առողջության հետ կապված որոշումների կայացմանը ազգային և համայնքային մակարդակներում<sup>376</sup>:

Առողջության իրավունքը, ինչպես և մյուս մարդու իրավունքները պետությունների համար առաջացնում են երեք տեսակի պարտավորություն՝ հարգել, պաշտպանել և իրացնել: Առողջության իրավունքը հարգելու պարտավորությունը պահանջում է, որ պետությունները չմիջամտեն անձի առողջության իրավունքին: Ի թիվս այլնի, սա նշանակում է, որ պետությունները պետք է ձեռնպահ մնան բոլոր անձանց, ներառյալ խոցելի վիճակում գտնվող անձանց, օրինակ՝ ազատազրկված անձանց, ազգային փոքրամասնությունների և այլոց բուժական և ամոքիչ առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության մերժումից կամ սահմանափակումից, ձեռնպահ մնան հանրային քաղաքականություններում խտրական մոտեցումներից և գերծ մնան խտրական պրակտիկաներից, որոնք կապված կլինեն կանանց առողջության և կանանց կարիքների հետ:

Առողջության իրավունքի պաշտպանության պարտավորությունը նշանակում է, որ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի երրորդ անձինք չմիջամտեն անձի առողջության իրավունքին: Պետության պարտականությունն է, ի թիվս այլնի, ընդունել այնպիսի օրենսդրություն և ձևավորել այնպիսի կառուցակարգեր, որոնք կապա-

375. Նույն տեղում:

376. The Right to Health: Fact Sheet No. 31, <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/Factsheet31.pdf>

հովեն երրորդ անձանց կողմից մատուցվող առողջապահական և առողջության հետ կապված ծառայությունների հավասար հասանելիությունը: Պետությունները պետք է նաև ապահովեն, որ երրորդ անձինք չսահմանափակեն մարդու հասանելիությունը առողջության վերաբերյալ տեղեկատվությանը և ծառայություններին:

Եվ վերջապես, առողջության իրավունքի իրացումը պահանջում է, որ պետություններն ընդունեն իրավական, վարչարարական, ֆինանսական, դատական և խրախուսման միջոցներ առողջության իրավունքը լիարժեք ապահովելու նպատակով: Պետությունները պարտավոր են ապահովել առողջության իրավունքը պատշաճ կերպով ճանաչող ազգային քաղաքական և իրավական համակարգերի առկայությունը, ներառյալ օրենսդրության, ինչպես նաև ընդունել ազգային առողջապահական քաղաքականություն, որը կներառի նաև առողջության իրավունքի իրականացման ծրագիր: Այս պարտավորությունը ենթադրում է նաև պետության կողմից պոզիտիվ միջոցների ձեռնարկում, որոնք անհատներին և համայնքներին հնարավորություն կտան օգտվելու առողջության իրավունքից:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեն նաև առանձնացրել է, թե ինչ պարտավորություններ ունեն պետությունները առողջության իրավունքի իրացման, ապահովման և պաշտպանության ոլորտներում: Պետություններն այդ պարտավորությունները կարող են կատարել աստիճանական (պրոգրեսիվ) իրականացման միջոցով: Սակայն Կոմիտեն նաև ամրագրել է այն պարտավորությունների հիմնական նվազագույն փաթեթը, որոնք պետք է իրականացվեն ամբողջությամբ և անհապաղ, այլ ոչ աստիճանական (պրոգրեսիվ): Այդ պարտավորությունները ներառում են.

- ապահովել առողջապահական հաստատությունների, ապրանքների և ծառայությունների՝ անխտրական հիմունքներով հասանելիության իրավունքը, հատկապես խոցելի վիճակում գտնվող խմբերի համար.
- ապահովել նվազագույն հիմնական սննդամթերքի հասանելիությունը, որը բավարար, սննդարար և անվտանգ է՝ բոլորի համար սովից պաշտպանություն ապահովելու համար.
- ապահովել հիմնական բնակարանների, բնակարանային և սանիտարական պայմանների և անվտանգ խմելու ջրի բավարար մատակարարման հասանելիությունը.
- ապահովել հիմնական դեղամիջոցներ.
- ապահովել բոլոր առողջապահական հաստատությունների, ապրանքների և ծառայությունների արդարացի բաշխումը.
- ընդունել և իրականացնել հանրային առողջության ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր՝ հիմնված համաճարակաբանական տվյալների վրա, որոնք հաշվի են առնում ամբողջ բնակչության առողջապահական խնդիրները:

Մինևույն ժամանակ կարևոր է հաշվի առնել, որ թեև առողջության իրավունքը ընդհանուր առմամբ համարվում է աստիճանական (պրոգրեսիվ) իրականացման իրավունք, այնուամենայնիվ, երկրում ծանր ֆինանսական վիճակը չի ազատում պետություններին առողջության իրավունքի իրացման համար քայլեր ձեռնարկելու պարտավորությունից,



և պետությունը չի կարող արդարացնել դրա չկատարումը ռեսուրսների բացակայության հիմնավորմամբ: Պետությունները պետք է ապահովեն իրավունքի իրականացման կայուն զարգացում:

## **Առողջությանն առնչվող մարդու իրավունքներ**

Ինչպես նշվեց, առողջության իրավունքը ընդգրկում է նաև մարդու իրավունքներ, որոնք համարվում են առողջության իրավունքի անբաժանելի բաղադրիչը: Դրանք, ի թիվս այլևի, ներառում են սննդի, բնակության վայրի, կրթության, մարդկային արժանապատվության, կյանքի, անխտրականության և հավասարության, խոշտանգումներից զերծ լինելու, անձնական տվյալների պաշտպանության, տեղեկատվության ազատության, միավորումների, հավաքների և տեղաշարժի ազատությունը: Այն ներառում է նաև առողջության իրավունքի հետ անբաժանելի կապ ունեցող իրավունքներ, օրինակ՝ առանց տեղեկացված համաձայնության առողջապահական միջամտությունից ազատ լինելու, բուժումից հրաժարվելու իրավունքը: Տեղեկացված համաձայնությունը առողջության իրավունքի առանցքային տարրն է՝ և՛ որպես ազատություն, և՛ որպես դրա անքակտելի երաշխիք:

Այս իրավունքները կարող են ծառայել առողջության իրավունքի բոլոր երեք տիրույթներին՝ ֆիզիկական, հոգեկան կամ սոցիալական, կամ այս տիրույթներից որևէ մեկին: Այսպես, ֆիզիկական առողջությունը հաստատվում է ֆիզիկական գոյության և անհատի ամբողջականությանն առնչվող իրավունքների հետ (գոյության իրավունքներ): Հոգեկան առողջության իրավունքն ընդգրկում է այն իրավունքները, որոնք պաշտպանում են անհատների մտածելու և գործելու ինքնավարությունը (ինքնավար գործելու իրավունքներ), ընդ որում, այս իրավունքները նույնը չեն, ինչ հոգեկան առողջության կառավարման և հոգեկան հիվանդությունների բուժման իրավունքները: Սոցիալական բարեկեցությանն առնչվող իրավունքները ընդգրկում են այն իրավունքները, որոնք ենթադրում են անհատների և խմբերի սոցիալական փոխգործակցությունը, ինչպես ընտանիքներում, այնպես էլ քաղաքական, մշակութային և միջազգային համայնքներում (սոցիալական փոխազդեցության իրավունքներ): Այս տարանջատման և իրավունքների ու առողջության երեք տիրույթների փոխազդեցությունը ամերևույթ է դարձնում այն, որ այս բոլորը՝ անձին ֆիզիկական անձեռնմխելիությունից զրկելը, ինքնավարության սահմանափակումը և սոցիալական փոխգործակցության սահմանափակ հնարավորությունները, ազդում են առողջության իրավունքի լիարժեք իրացման վրա, ինչպես նաև դրանք հաճախ առանձին կարող են հանդես գալ իբրև մարդու իրավունքների խախտումներ: Մինևույն ժամանակ որոշ դեպքերում այս իրավունքների պահպանման և առողջության իրավունքի միջև կարող են արձանագրվել հակասություններ, օրինակ՝ Էֆթանազիայի դեպքում անձի որոշումների կայացման իրավունքի և կյանքի իրավունքի միջև:

## Հոգեկան առողջության իրավունք

Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Չկա առողջություն առանց հոգեկան առողջության» կարգախոսը արքիում է: Այն հիմնված է դեռևս 1954 թ.-ին ԱՀԿ-ի առաջին գլխավոր տնօրեն Չիսհոլմի արած պնդման վրա՝ «Առանց հոգեկան առողջության չի կարող լինել իրական ֆիզիկական առողջություն»:

Ինչպես և ֆիզիկական առողջությունը, հոգեկան առողջությունը ևս անձի ընտրության կամ կամայականության հետևանք չէ, այլ առողջական վիճակ է, որը պահանջում է կառավարում, ինչպես, բուժում: Այնուամենայնիվ, հոգեկան առողջությանը դեռևս նույնչափ կարևորություն չի տրվում, ինչ ֆիզիկական առողջությունը, իսկ հոգեկան առողջության ոլորտի վերաբերյալ առկա կարծրատիպերի և կանխակալությունների հետևանքով անձինք զրկվում են պատշաճ առողջապահական և այլ անհրաժեշտ հարակից աջակցությունից կամ ստիպված են անցնել անտեղի տառապանքների միջով: Մինևույն ժամանակ, յուրաքանչյուր ոք իր ողջ կյանքի ընթացքում ունի այնպիսի միջավայրի կարիք, որը կնպաստի իր հոգեկան առողջությանը և բարեկեցությանը, և այդ դիտանկյունից յուրաքանչյուրս հոգեկան առողջության ծառայությունների շահառու է: Շատերը նաև գուցե ժամանակ առ ժամանակ ունենան կարճատև հոգեւոցիալական դժվարություններ կամ անհանգստություններ, որոնք լրացուցիչ կառավարում կպահանջեն: Ոմանք երկարաժամկետ ճանաչողական, մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն կամ աուտիզմ ունեցող անձինք են, որոնք ամենօրյա կյանքում բախվում են խոչընդոտների իրենց իրավունքների իրականացման հարցում, հոգեկան առողջության ծառայություններից օգտվելիս, ներառյալ հոգեկան առողջության և ինչպես հաստատություններում խախտվում են նրանց իրավունքները:

Հոգեկան առողջության ծառայությունները ձևավորվել են կենսաբժշկական մոդելի հիման վրա, որը նպաստել է մտավոր, ճանաչողական և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց, աուտիզմով ապրող, այսինքն, որպես կանոն, տվյալ համայնքում մշակութային, սոցիալական և քաղաքական հիմնական տիրույթից տարբերվող անձանց բացառմանը, անտեսմանը, հարկադրմանը և շահագործմանը: Հոգեբուժությունը և հոգեկան առողջությունը պատմականորեն փոխկապակցված են եղել իրավունքների կոպիտ խախտումների հետ: Մի օրինակ է լոբոտոմիան<sup>377</sup>, որն իրականացվել է իբրև բժշկական միջամտություն: Ինստիտուցիոնալացումը և հարկադրանքը ևս հոգեբուժության ոլորտում մինչ այժմ շարունակում են լրջագույն խնդիր մնալ:

Հոգեկան առողջության ծառայությունների մեծ մասը շարունակում է կենտրոնացած մնալ երկարաժամկետ ինստիտուցիոնալ շուրջօրյա ինչպիսի և սպասարկման շուրջ, ինչը, բացի նրանից, որ գուցորդվում է անձի իրավունքների անհամաչափ միջամտություններով և լրջագույն խախտումներով, նաև նպաստում է ոլորտի շուրջ առկա կարծրատիպերի վերահաստատմանն ու խորացմանը, հանգեցնում բոլորի համար հոգեկան առողջության համապարփակ հասանելիության և հոգեկան առողջության խթանման

377. Լոբոտոմիան հոգեկան առողջության որոշ խնդիրների բուժման նպատակով կիրառվող վիրաբուժական միջամտություն էր, որի հետևանքով հեռացվում էր գլխուղեղի որոշակի մասնահատված: Այն տարածված էր 20-րդ դարի կեսերին, սակայն հետագայում բազմաթիվ երկրներ արգելեցին այն իբրև անմարդկային և անպացուցողական հիմք չունեցող միջամտություն:

քաղաքականության ձախողմանը: Իսկ հոգեկան առողջության թերֆինանսավորման պայմաններում առանց այն էլ սահմանափակ ռեսուրսները ուղղորդվում են ինստիտուցիոնալ ծառայությունների պահպանմանը: Ինստիտուցիոնալ խնամքը և հարկադիր բուժման պրակտիկաները խախտում են անձանց իրավունքները, ներառյալ վատ վերաբերմունքից զերծ մնալու, տեղեկացված համաձայնության իրավունքները, անձնական տվյալների պաշտպանության և սեփական կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունքները: Նման պրակտիկաները նաև կարող են վնասակար լինել այդ անձանց հոգեկան առողջության համար:


Հոգեկան առողջության ժամանակակից ըմբռնումը ձևավորվում է վերոնշյալ մոտեցումների փոփոխությամբ և մեծապես հենվում է մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների վրա: Այս փոփոխությունները մեկնարկել են մոտ 200 տարի առաջ՝ հոգեկան առողջության ոլորտի ազատականացման շարժումներով: Այսօր հոգեկան առողջությունը ավելի ու ավելի է ճանաչվում որպես հանրային առողջության համաշխարհային խնդիր, որն ազդում է բոլոր տարիքի, սեռի և ծագման մարդկանց վրա, իսկ վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա հիմնված մոտեցումները նպաստում են, որ հոգեկան առողջության հիմնախնդիրները չդիտարկվեն միայն անձի առողջական վիճակի, այլ նաև նրա մասնավոր, սոցիալական, քաղաքական և տնտեսական կյանքի համատեքստում:

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների զարգացման հետ մեկտեղ առավել են ընդլայնվում մասնագիտական քննարկումները հոգեկան առողջության ոլորտում ծառայությունների իրավունքահենության, անձի արժանապատվության, ինքնավարության, սեփական մարմինը և առողջությունը վերահսկելու ազատության պաշտպանության շուրջ: Իրավունքահեն մոտեցումները նաև ենթադրում են հոգեկան առողջության ոլորտի ոչ ֆորմալ ծառայությունների, ինչպիսին է ինքնախնամքը, և համայնքահեն ծառայությունների զարգացման անհրաժեշտությունը (Տե՛ս Գծապատկեր 3):

Այժմ անվիճելի է, որ հոգեկան առողջության ծառայությունները պետք է հարգեն անձի իրավունքները, ազատությունն ու իրավասությունները: Հոգեկան առողջության ծառայությունները պետք է տրամադրվեն հնարավորինս քիչ սահմանափակող միջավայրում, համայնքում, և անձինք չպետք է ենթարկվեն հարկադրանքի և բժշկական օգնության առանց տեղեկացված համաձայնության: Հոգեկան առողջության իրավունքը ենթադրում է նաև համայնքում ներառված լինելու և անկախ ապրելու իրավունքների, իրավունակության և գործունակության ճանաչումը:

Այնուամենայնիվ, պատմականորեն ձևավորված և քաղաքականությունների ու օրենսդրությունների մեջ ներհյուսված բազմաթիվ մոտեցումներ խոչընդոտում են հոգեկան առողջության իրավունքի լիարժեք իրականացումը: 2017 թ.-ին Ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույն հասանելի մակարդակից օգտվելու իրավունքի գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, իր բեկումնային զեկույցում անդրադառնալով հոգեկան առողջության իրավունքի և հոգեբուժության ոլորտում «խոչընդոտների գլոբալ բեռին», առանձնացրել է երեք հիմնական բնույթի խնդիրներ.

- կենսաբժշկական մոտեցումների գերակայությունը,
- հարաբերություններում իշխանության անհավասարակշռությունը, որ ազդում է բոլոր մակարդակներում հոգեկան առողջության քաղաքականության և ծառայությունների վերաբերյալ որոշումների կայացման վրա,
- հոգեկան առողջության ոլորտում որոշումներ կայացնելիս ապացույցների կանխակալ կիրառումը:



**Գծապատկեր 3. Հոգեկան առողջության ծառայությունների օպտիմալ համադրությունն ըստ ԱՀԿ-ի**

Ինչպես ընդհանուր առողջության իրավունքի դեպքում, հոգեկան առողջության իրավունքի իրականացմանն ուղղված պետության բազմաթիվ պարտավորություններ ևս ենթակա չեն աստիճանական իրականացման և պետք է իրականացվեն անհապաղ: Այդ պարտավորությունների թվում են անձի ազատության, վատ վերաբերմունքից և շահագործումից զերծ մնալու, անձնական տվյալների պաշտպանության և տեղեկացված համաձայնության և այլ հիմնարար իրավունքների պաշտպանությանն ուղղված պարտավորությունները: Իսկ պետության հիմնական պարտավորությունները ներառում են

հանրային առողջության ազգային ռազմավարության մշակում և առանց որևէ խտրականության ծառայությունների հասանելիության ապահովում: Հոգեկան առողջության իրավունքի համատեքստում այս ռազմավարությունը պետք է նպաստի հարկադրական բնույթ կրող առողջապահական ծառայությունների վերացմանը և իրավունքների վրա հիմնված հոգեկան առողջության ծառայությունների հավասար հասանելիության, ներառյալ համայնքում ծառայությունների հավասարաչափ բաշխման ապահովմանը:

## **Խտրականության բացառման սկզբունքն ու առողջապահական ծառայությունների չափորոշիչները**

Առողջության, ներառյալ հոգեկան առողջության իրավունքի հիմնական սկզբունքն է խտրականության բացառումը: Առողջության իրավունքը նաև պահանջում է, որ առողջապահական, ինսամքի և աջակցության միջոցները, ապրանքները և ծառայությունները համապատասխանեն չորս հիմնական չափորոշիչների. դրանք պետք է լինեն հասանելի, մատչելի, շահառուի համար ընդունելի և որակյալ: Ստորև դիտարկենք այս բաղադրիչներից յուրաքանչյուրը:

### **Խտրականության բացառումը**

Առողջապահական ծառայությունները, ապրանքները և հաստատությունները պետք է գործեն բոլորի համար հավասարապես, առանց որևէ խտրականության: Ընդ որում, խտրականությունը կարող է մի կողմից նպաստել առողջական վիճակի վատթարացմանը, ներառյալ նախադրյալներ ձևավորել հոգեկան առողջության վատթարացման համար, դրդել, որ անձը խուսափի մասնագիտական ծառայություններին դիմելուց, մյուս կողմից անձինք կարող են ենթարկվել խտրականության՝ ելնելով իրենց առողջական վիճակից:

Թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջության իրավունքի լիարժեք ապահովումը կախված է հավասարության և խտրականության բացառման սկզբունքների ապահովումից: Խտրականությունը, ներառյալ դրա բազմակի և ինտերսեկցիոնալ (փոխհատվող) ձևերը խոչընդոտում են անհատների, այդ թվում կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ռասայական և էթնիկ փոքրամասնությունների, ՄԻԱՎ-ով ապրող անձանց, տարեց և խոցելի վիճակում գտնվող այլ անձանց իրավունքների լիարժեք իրացումը: Խտրականությունը և անհավասարությունը ֆիզիկական և հոգեկան վատ առողջության և՛ պատճառ են, և՛ հետևանք՝ երկարաժամկետ ազդեցություն ունենալով հիվանդացության, մահացության և հասարակության բարեկեցության վրա:

Այսպես, առողջապահական իրավունքները առանցքային դեր ունեն՝ սեռով պայմա-

նավորված խտրականության վերացման համար: Կանայք ունեն հատուկ առողջապահական կարիքներ, որոնք տարբերվում են տղամարդկանց առողջապահական կարիքներից: Երբ այդ կարիքները չեն բավարարվում, նրանց հանդեպ խտրականությունն էլ ավելի է խորանում: Մյուս կողմից խտրականությամբ պայմանավորված անբարենպաստ վիճակները կանանց համար ձևավորում են մի միջավայր, որտեղ նրանց համար առավել դժվար է իրական հասանելիություն ունենալ առողջապահական ծառայություններին: Դա կարող է պայմանավորված լինել կանանց նկատմամբ տարբեր տեսակի բռնությամբ, ներառյալ ընտանեկան բռնությամբ, աշխատավայրում գենդերային խտրականությամբ, ինչպես նաև կանանց՝ սեռով պայմանավորված տարբեր կարգավիճակներում գտնվելու պայմանով, ինչպես, օրինակ, հղիության, ծննդաբերության և հետծննդաբերական առողջապահական կարիքներով, հակաբեղմնավորիչների, հղիության արհեստական ընդհատման, արհեստական բեղմնավորման և այլ խնդիրներով:

Նույնը վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց. հաշմանդամություն ունեցող որոշ անձինք ունեն առողջապահական ծառայությունների կարիք, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է իրենց հաշմանդամությամբ, մյուս կողմից առկա խոչընդոտների հետևանքով նրանք գուցե հասանելիություն չունենան լայն հանրությանը մատչելի և որակյալ առողջապահական ծառայություններին: Երկու դեպքում էլ առկա է վտանգ՝ խորացնելու նրանց նկատմամբ խտրականությունը, ինչպես նաև խոչընդոտելու առողջապահական ծառայություններից լիարժեք օգտվելը:

## **Հասանելիություն**

Հասանելիությունը պահանջում է, որ գործող հանրային առողջապահության ծառայությունները, հաստատությունները, ապրանքները բավարար քանակությամբ առկա լինեն պետության ամբողջ տարածքում:

Հոգեկան առողջության ոլորտում այն ենթադրում է նաև այնպիսի ծառայությունների առկայություն, որոնք հիմնված կլինեն ոչ թե կենսաբժշկական մոդելի վրա, որի հիմքում ինստիտուցիոնալացումն է, այլ իրավունքահեն մոդելի: Հոգեկան առողջության խթանման, հոգեկան առողջության հիվանդությունների կանխարգելման, բուժման, վերականգնման, կառավարման, խնամքի համակարգված ծառայությունները պետք է ինտեգրված լինեն առողջապահական համակարգում: Հասանելիությունը պահանջում է հոգեկան առողջության ծառայություններ, որոնք ինտեգրված են առողջության առաջնային և ընդհանուր համակարգում և նպաստում են հոգեկան առողջության խնդիրների վաղ հայտնաբերմանը և միջամտությանը, ինչպես նաև ծառայություններ, որոնք նախատեսված են տարբեր համայնքների աջակցելու համար: Անհրաժեշտ է, որ ծառայությունները հասանելի լինեն մտավոր, ճանաչողական և հոգեբանական հաշմանդամություն, աուտիզմ ունեցող անձանց համար՝ համակցված անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքների հետ, այլ ոչ ինամքի և բուժման հաստատություններում՝ սեգրեգացված պայմաններում: Հասանելիությունը նաև ենթադրում է ապացույցների վրա հիմնված հոգեկան առողջության ծառայությունների և դրանք մատու-

ցելու համար վերապատրաստված համայնքային բուժաշխատողների առկայություն, ինչպես նաև բավարար մարդկային ռեսուրս, ներառյալ առողջապահական և ոչ առողջապահական ոլորտի մասնագետներ՝ նեղ և ընդհանուր մասնագիտացմամբ բժիշկներ, համայնքային առողջապահական աշխատողներ, ինչպես նաև այլ մասնագետներ, ինչպիսիք են ուսուցիչները, սոցիալական աշխատողները, համայնքային աշխատողները:

## Մատչելիություն

Մատչելիության չափորոշիչը պահանջում է, որ ծառայությունները լինեն ֆիզիկապես, աշխարհագրորեն, ֆինանսապես անվտանգ ու անխտրական կերպով հասանելի բնակչության համար, ներառյալ երեխաների, դեռահասների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և խոցելի վիճակում գտնվող այլ խմբերի համար: Մատչելիությունը նաև ներառում է առողջությանն առնչվող տեղեկատվությունը անձի համար մատչելի եղանակով փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք՝ անձնական առողջական տվյալների գաղտնիության պահպանման իրավունքի պաշտպանության պայմանով: Այն պահանջում է կլինիկական փորձարկումներից ստացված տեղեկատվության մատչելի, ամբողջական և ժամանակին բացահայտումը:

Հոգեկան առողջության ծառայությունների մատչելիությանը կարող է նպաստել ծառայությունների ինտեգրմանը ընդհանուր տիպի առողջապահական հաստատություններում, առաջնային խնամքի և սոցիալական խնամքի ծառայությունների ու շարժական տեխնոլոգիաների համապատասխան կիրառմանը: Կարևոր է նաև հոգեկան առողջության, բուժման, ներառյալ կողմնակի ազդեցությունների վերաբերյալ ապացույցների վրա հիմնված տեղեկատվության մատչելիությունը հանրության բոլոր խմբերի համար, ինչպես նաև անձի ապրումների, անհանգստությունների համատեքստային ըմբռնման կարողությունների զարգացումը մասնագիտական համայնքի մոտ:

## Ընդունելի լինելը

Ծառայությունները, հաստատություններն ու ապրանքները պետք է նաև հարգեն բժշկական էթիկան, լինեն գեներազգայուն և արձագանքեն ծառայություններից օգտվող համայնքի մշակութային առանձնահատկություններին և կարիքներին, ինչպես նաև անձի կյանքի ցիկլին, հարգեն գաղտնիությունը և հնարավորություն տան անհատներին վերահսկելու իրենց առողջությունն ու բարեկեցությունը: Այսինքն՝ դրանք պետք է ընդունելի լինեն ծառայություններից օգտվողների համար բժշկական և մշակութային առումով<sup>378</sup>: Ծառայությունները պետք է մշակութային առումով համապատասխան և ընդունելի լինեն մտավոր, ճանաչողական կամ հոգեւոցիալական հաշմանդամություն

378. General Comment No. 14 (2000). The right to the highest attainable standard of health (article 12 of the International Covenant on Economic, Social and Cultural Rights), 2000, <https://undocs.org/Home/Mobile?FinalSymbol=E%2FC.12%2F2000%2F4&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=False>

ունեցող և աուտիզմ ունեցող անձանց, դեռահասների, կանանց, տարեցների, բնիկ անձանց, փոքրամասնությունների, փախստականների և միգրանտների, ինչպես նաև սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով կամ այլ հիմքով խոցելի վիճակում գտնվող անձանց համար:

Այս չափորոշիչը նաև ներառում է *մի՛ վնասիր* սկզբունքի իրացումը, առողջապահական ծառայությունների հարցում անձի ընտրության իրավունքն ու վերահսկողությունը՝ ինքնավարության, կամքի, նախապատվության և արժանապատվության հարգանքի սկզբունքները:

Այս չափորոշիչի ներքո կարող են առաջանալ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են դեղորայքի չափազանց շատ կիրառումը, հարկադրանքի մոտեցումների և ստացիոնար բուժման չափազանց մեծ շեշտադրումը, ինչը հակասում է ոչ միայն չվնասելու սկզբունքին, այլ նաև մարդու այլ հիմնարար իրավունքներին:

Գենդերային և այլ կարծրատիպերը ևս հաճախ նպաստում են հանրության որոշ անդամների նկատմամբ բժշկական միջամտությունների առավել լայն կիրառմանը, համեմատ մյուս անդամների, և հարկադրական պրակտիկաներին ենթարկելուն: Այսպես, հատուկ ուշադրություն պետք է դարձնել կանանց իրավիճակին, որոնց անհամաչափորեն են ենթարկվում հոգեկան առողջության վնասակար միջամտությունների: Այդ միջամտությունները հիմնված են հայրիշխանական ավանդույթների, գենդերային կարծրատիպերի, կանանց զգացմունքների և վարքագծի բժշկականացման վրա: Սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների խախտումները նաև ուղղակի բացասական ազդեցություն են ունենում կանանց հոգեկան առողջության վրա:

## Որակ

Առողջապահական ծառայությունները, հաստատություններն ու ապրանքները պետք է լինեն գիտահեն, բժշկական տեսանկյունից որակյալ: Սա ենթադրում է վերապատրաստված առողջապահական մասնագետներ, գիտականորեն ապացուցված մոտեցումներ, ոչ ժամկետանց դեղեր և որակյալ հիվանդանոցային սարքավորումներ, համապատասխան սանիտարական չափանիշներ և անվտանգ խմելու ջուր:

Հոգեկան առողջության ոլորտում այն ևս պահանջում է ապացույցների վրա հիմնված պրակտիկաների կիրառում՝ կանխարգելման, կառավարման, բուժման և վերականգնման ընթացքում, արդյունավետ համագործակցություն տարբեր ծառայություններ մատուցողների և ծառայություններից օգտվող մարդկանց և նրանց ընտանիքների ու ինսամքի գործընկերների միջև, ինչպես նաև ինսամքի որակի բարձրացում: Կենսաբժշկական միջամտությունների չարաշահումը, ներառյալ հոգեմետ դեղերի ոչ պատշաճ օգտագործումը կամ դեղորայքի չափից շատ կիրառումը, հարկադրանքի կիրառումը և հարկադիր հոսպիտալացումը ևս կարող են անհամաչափորեն միջամտել որակյալ ծառայություն ստանալու իրավունքին: Որակի տարրը պահանջում է խտրական գոր-



ծելաոճի վերացում, հոգեկան առողջության խնամքի և աջակցության տրամադրման ձևերի վերանայում, որպեսզի ծառայություններից օգտվողները ճանաչվեն որպես իրավունքների ակտիվ կրողներ, այլ ոչ միայն որպես ուղղակի խնամք ստացողներ<sup>379</sup>: Այն ևս ներառում է ինստիտուցիոնալացման մոտեցումների փոխարինումը համայնքահեն մոտեցումներով, ներառյալ հոգեւոցիալական, մտավոր հաշմանդամություն, աուտիզմ ունեցող մեծահասակների և երեխաների ինստիտուցիոնալացման ու չափազանց դեղորայքային բուժման չարաշահման բացառումը:

### **Հարցեր լսարանին**

1. Ի՞նչ գործողություններ են պահանջվում պետությունից անձի առողջության իրավունքն ապահովելու համար:
2. Ինչպե՞ս է մարդու առողջության իրավունքը փոխհարաբերվում մարդու այլ տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական և քաղաքացիական իրավունքների հետ: Խնդրում ենք բերել օրինակներ:

## **5.14. Առողջ միջավայրի իրավունք**

Առողջ շրջակա միջավայրի իրավունքը մարդու առողջության, բարեկեցության, արժանապատվության և շրջակա միջավայրի միջև ներքին կապն ապահովող իրավական կառուցակարգ է: Այն վերաբերում է մարդկային կյանքի կազմակերպման տարբեր ապակետների, ներառյալ մաքուր օդի, մաքուր և անվտանգ ջրի հասանելիությանը, կայուն կլիմային, անվտանգ և սննդարար սննդին և կենսաբազմազանությանը. սրանք բոլորն էլ նպաստում են շրջակա միջավայրի առողջության պահպանությանը:

### **Արդյո՞ք առողջ միջավայրի իրավունքն ունի ավարտուն իրավական սահմանում**

Առողջ միջավայրի իրավունքը հստակորեն ճանաչված չէ Հայաստանի Սահմանադրությամբ որպես առանձին անհատական իրավունք, ինչպես նաև նախատեսված չէ Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերում, սակայն ավելի ու ավելի է ճանաչվում ազգային տարբեր սահմանադրություններում, օրենքներում և դատական ակտերում, ինչպես նաև մարդու իրավունքների գլոբալ և տարածաշրջանային փաստաթղթերում: Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի 2011 թվականին ընդունած բանաձևով հաստատվել է, որ «*մարդու իրավունքները և շրջակա միջավայրի պաշտպանությունը փոխկապակցված են և անբաժանելի*»:

379. Report of the Special Rapporteur on the rights of persons with disabilities, 2016, [https://ap.ohchr.org/documents/dpage\\_e.aspx?si=A/HRC/34/58](https://ap.ohchr.org/documents/dpage_e.aspx?si=A/HRC/34/58)

Առողջ շրջակա միջավայրի իրավունքի կարևորությունը պայմանավորված է մարդու՝ բազմաթիվ այլ իրավունքներից օգտվելու նախապայման հանդիսանալու հանգամանքով: Այդպիսիք են կյանքի, առողջության, սննդի, ջրի, բնակարանի և մշակույթային իրավունքները: Օրինակ՝ շրջակա միջավայրի դեգրադացիան՝ աղտոտվածության կամ կլիմայի փոփոխությամբ, կարող է վտանգել մարդկանց առողջությունը՝ վտանգելով նրանց կյանքի իրավունքը, խաթարելով նրանց կյանքի որակը: Էկոհամակարգերի ոչնչացումը կարող է սպառնալ առհասարակ մաքուր ջրի և սննդի հասանելիությանը:

Մինչև անդրադառնալն այն հարցին թե արդյոք իրապես գոյություն ունի առողջ միջավայրի անհատական իրավունք, պետք է նկատի ունենալ, որ այն անառարկելիորեն մարդու այլ իրավունքներից արդյունավետորեն օգտվելու նախապայման է: Այս ըմբռնումն արտացոլված է տարբեր միջազգային իրավապաշտպան մարմինների փաստաթղթերում, որոնք ավելի ու ավելի են ճանաչել շրջակա միջավայրի թողած հետևանքները մարդու իրավունքների վրա:

Ավելին, առողջ շրջակա միջավայրի իրավունքը նույնպես Էական նշանակություն ունի կայուն զարգացման համար, մի հայեցակարգ, որի նպատակն է հավասարակշռել տնտեսական աճը, սոցիալական իրավունքները և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Առանց առողջ միջավայրի՝ մոլորակի կարողությունը՝ աջակցելու մարդկային կյանքին և բարեկեցությանը կարող է խաթարվել՝ վտանգելով կայուն զարգացման հեռանկարները:

Առողջ շրջակա միջավայրի անհատական իրավունքի ճանաչումը Էական ազդեցություն կունենա նաև շրջակա միջավայրի կառավարման վրա: Այն կարող է հիմք հանդիսանալ պետության և շահույթ հետապնդող կամակերպությունների հասցրած բնապահպանական վնասի համար պատասխանատվության ենթարկելու գործընթացի համար՝ անհատներին և համայնքներին հնարավորություն տալով պաշտպանելու իրենց բնապահպանական իրավունքները և խթանելու զարգացման ավելի կայուն և արդար ձևերը:

Ընդհանուր առմամբ առողջ շրջակա միջավայրի իրավունքը և՛ մարդու իրավունքն է ինքնին, և՛ մարդու այլ իրավունքների պաշտպանության և կայուն զարգացման խթանման կարևոր միջոցը: Այն մարմնավորում է այն ըմբռնումը, որ մարդիկ և շրջակա միջավայրը խորապես փոխկապակցված են, և մեկի առողջությունն ու բարեկեցությունը չեն կարող տարանջատվել մյուսի առողջությունից:

## **Բնապահպանական իրավունքների զարգացումը**

Բնապահպանական իրավունքների հայեցակարգի սկիզբը 1960-ականների վերջի և 1970-ականների սկզբի բնապահպանական շարժումներում է: Սա մի ժամանակաշրջան էր, որը բնութագրվում էր շրջակա միջավայրի այնպիսի խնդիրների նկատմամբ հանրային իրազեկվածությամբ և անհանգստությամբ, ինչպիսիք են աղտոտվածությունը և վայրի բնության ոչնչացումը:

1972 թվականին Ստոկհոլմում տեղի ունեցած Մարդկային շրջակա միջավայրի հարցերով ՄԱԿ-ի համաժողովը նշանակալի շրջադարձային պահ եղավ: Ստոկհոլմի հռչակագիրը, որը մշակվեց այս կոնֆերանսի արդյունքներով, բացահայտորեն չէր ճանաչում առողջ շրջակա միջավայրի իրավունքը, սակայն հաստատում էր շրջակա միջավայրի պաշտպանության կարևորությունը մարդու բարեկեցության և զարգացման համար:

Ստոկհոլմի կոնֆերանսին հաջորդած տարիներին առողջ շրջակա միջավայրի իրավունքի գաղափարը սկսեց ամրագրվել ազգային սահմանադրություններում և օրենքներում: 2012 թվականի դրությամբ ավելի քան 100 երկրներ իրենց սահմանադրություններում ճանաչել են առողջ շրջակա միջավայրի իրավունքի տարրեր պարունակող նորմեր:

1981 թվականին ընդունված Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան խարտիան դարձավ միջազգային իրավունքում և տարածաշրջանային մակարդակում առաջին իրավաբանորեն պարտադիր մարդու իրավունքների միջազգային ակտը, որը հստակորեն ճանաչեց առողջ միջավայրի իրավունքը: Դրան հաջորդեց Տևտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը (նաև հայտնի է որպես Սան Սալվադորի արձանագրություն) 1988 թվականին:

Միևնույն ժամանակ Միավորված ազգերի կազմակերպությունը շարունակում էր կարևոր դեր խաղալ բնապահպանական իրավունքների ճանաչման խթանման գործում: 1982 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Բնության համաշխարհային խարտիան, որը կոչ էր անում հարգել և պաշտպանել Էկոլոգիական համակարգերը: 1987 թվականին Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողովի կողմից հրապարակված Բրունդլանդի զեկույցը ներկայացրեց կայուն զարգացման հայեցակարգը և ընդգծեց շրջակա միջավայրի պաշտպանության և մարդու իրավունքների միջև կապը:

Շրջակա միջավայրի և զարգացման մասին Ռիոյի 1992 թվականի հռչակագիրը մեկ քայլ առաջ ձեռքբերում էր՝ պնդելով, որ մարդն ունի բնության հետ ներդաշնակ առողջ կյանքի իրավունք: Թեև սա դեռևս չի նշանակում առողջ շրջակա միջավայրի իրավունքի բացահայտ ճանաչում, այն արտացոլում է զարգացող միջազգային կոնսենսուսը մարդու իրավունքների և շրջակա միջավայրի միջև կապի վերաբերյալ:

Վերջին տարիներին այս միտումը շարունակվել է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի տարբեր բանաձևերով, որոնք հաստատում են, որ շրջակա միջավայրի պաշտպանությունը մարդու իրավունքների լիարժեք իրացման անբաժանելի մասն է: 2012 թվականին Մարդու իրավունքների խորհուրդը նշանակեց մարդու իրավունքների և շրջակա միջավայրի հարցերով հատուկ զեկույցող, որին հանձնարարված էր ուսումնասիրել, թե ինչպես շրջակա միջավայրի վնասը կարող է խոչընդոտել մարդու իրավունքների իրացումը:

Ըստ Էության, բնապահպանական իրավունքների պատմական Էվոյուցիան եղել է աստիճանական գործընթաց, որը բնութագրվում է մարդու իրավունքների և շրջակա միջավայրի միջև ներքին կապի աճող ճանաչմամբ: Այսօր ողջ աշխարհում առողջ շրջակա միջավայրի իրավունքը ճանաչվում է տարբեր ձևերով՝ արտացոլելով մարդկանց և բնության փոխհարաբերությունների մեր ըմբռնման հիմնարար փոփոխությունը:

## Առողջ շրջակա միջավայրի իրավունքին առնչվող սահմանադրական դրույթները

Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը կրում է շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման պարտավորություն, ինչպես նաև պարտավոր է **ապահովել բնական պաշարների** ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Պետության այս պարտավորությունն ունի ընդհանրական բնույթ, սակայն այլ անհատական իրավունքների հետ համակցությամբ դառնում է առողջ շրջակա միջավայրի կապակցությամբ անհատական իրավունքների բովանդակության վրա որոշիչ ազդեցություն ունեցող իրավական դրույթ:

Առհասարակ շրջակա միջավայրին առնչվող պետության պարտավորությունները ուղղակիորեն տեղ են գտնում մարդու կամ քաղաքացու մի շարք հիմնական սահմանադրական իրավունքների մեկնաբանություններում թե՛ ազգային՝ հայկական իրավունքում, թե՛ Հայաստանի համար ուժի մեջ գտնվող միջազգային իրավունքի ակտերում:

Մասնավորապես.

- **Կյանքի իրավունքի** (Սահմանադրության 24 հոդված) պաշտպանության շրջանակներում պետությունը կրում է պոզիտիվ պարտավորություն՝ ապահովելու իր իրավագործության ներքո շրջակա միջավայրի աղտոտվածության պատճառով վտանգի մեջ գտնվող մարդկանց անվտանգությունը: Այս պարտավորության աղբյուրը «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակում ՄԻԵԴ-ի կողմից տրված մեկնաբանություններն են՝ սկսած *Օսերյիլդիզն ընդդեմ Թուրքիայի* գործով 2004 թվականին կայացրած վճռից (այս գործով ՄԻԵԴ-ը քննել էր գանգատը, որով տուժողները զոհ էին դարձել աղտոտվածության պատճառով տեղի ունեցած պայթյունին և դրա հետևանքով սողանքներին): Կյանքի իրավունքի պաշտպանության պետության պարտավորությունը շրջակա միջավայրի համատեքստում առկա է նաև արտադրական-արդյունաբերական գործընթացները պետության կողմից կանոնակարգելու համատեքստում, այսպես կոչված՝ պատահարները կամ աղետը «կանխարգելող իրավական կարգավորումներ» ընդունելու պարտավորության միջոցով: Նման կարգավորումները կարող են նախատեսել լիցենզավորման, վերահսկողության իրականացման կամ անվտանգության միջոցառումներ ապահովելու պարտականություններ բոլոր այն իրավիճակների համար, երբ մարդկանց կյանքը շրջակա

միջավայրի ազդեցության ներքո կարող է վտանգի ենթարկվել: Կանխարգելիչ միջոցառումների և կարգավորումների շարքին է դասվում նաև վերահաս վտանգների (բնածին կամ մարդածին բնույթի) մասին ազդակիր մարդկանց տեղեկացնելը:

- **Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքին** (Սահմանադրության 26 հոդված) վերաբերելի մասով շրջակա միջավայրի պաշտպանությունը դառնում է անհատական իրավունքով պարտադրելի պարտականություն, երբ խոսքը վերաբերում է պետության բացառիկ վերահսկողության ներքո գտնվող անձանց՝ բանտարկյալների պահման պայմաններում օդի (ծխախոտի ծխով) աղտոտվածության դեպքերին: Այս դեպքերում, կախված գործի հանգամանքներից, ՄԻԵԴ-ի վճիռներով բազմիցս ճանաչվել են ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտումներ: ՄԻԵԴ-ի պրակտիկայից մեկ այլ իրավիճակ է ուշարժան, երբ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի ներքո (որով նախատեսված իրավունքը մեծիմասամբ նույնաբովանդակ է Սահմանադրության 26-րդ հոդվածով նախատեսված իրավունքի հետ) քննարկվել է նաև միջավայրի հարուցած անհարմարությունը (օրինակ՝ դիմողների բնակարանների մերձակայքում գտնվող մետաղաձուլական գործարանի արտանետած վտանգավոր գազերի անթույլատրելի խտության արտանետումները, ինչպես նաև այլ գործով դիմողների աշխատանքի ընթացքում ազբեստի բարձր խտությունն աշխատավայրում և այլն) որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում: Թեպետ նման իրավիճակներում ՄԻԵԴ-ն իրավունքի խախտումներ չի արձանագրել, սակայն դրա պատճառը եղել է այն, որ շրջակա միջավայրի պատճառած անհարմարությունը չի բավարարել ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի ներքո վերաբերմունքի անհրաժեշտ շեմը, այլ ոչ այն, որ նման իրավիճակները չեն կարող տեսականորեն ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի կիրառման առարկա հանդիսանալ:
- **Մասնավոր կյանքի և բնակարանի անձեռնմխելիության** (Սահմանադրության 31-32 հոդվածներ) ներքո միջավայրի աղտոտվածությունը, ըստ ՄԻԵԴ-ի կողմից ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի ներքո կայացրած վճիռների, կարող է որոշիչ գործոն լինել այս իրավունքների խախտման համար, եթե միջավայրի (օդի, տեղանքի) աղտոտվածությունը անհնար է դարձնում իր բնակարանում բնակվելը կամ բնականոն գործունեությամբ զբաղվելը: Ընդ որում, ոչ միայն վրա հասած աղտոտվածությունը կամ շրջակա միջավայրին հասցված այլ վնասներն են միայն, որ կարող են հանգեցնել իրավունքի խախտման, այլև դրանց իրական վտանգը: Առհասարակ մարդու կյանքի վրա շրջակա միջավայրի վնասման արդյունքում բացասական ինտենսիվ ներգործություն ունեցող հանգամանքները կարող են քննության առարկա դառնալ մասնավոր կյանքի և բնակարանի անձեռնմխելիության իրավունքին առնչվող վեճի շրջանակներում (մասնավորապես ինտենսիվ աղմուկը՝ լինի օդազնացային թռիչքներից թե մոտակա զվարճանքի վայրերից, ավտոճանապարհներից կամ երկաթգծից աղմուկը, ջրի մեջ արտանետվող թունավոր արտադրական բացթողումները, միջուկային ռադիոակտիվ սարքերի կամ միջավայրերի ազդեցությունը, բարձրավոլտ էլեկտրական լարերի ուղիղ ներգործությունը կամ մարդու տան մոտ հանրային մեծ գերեզմանոցի կառուցումը, որը կարող էր ջրի վարակվածություն հարուցել):

- **Անհատի արտահայտվելու կամ կարծիքի արտահայտման ազատությունը** (Սահմանադրության 42 հոդված) և պետության շրջակա միջավայրի պաշտպանության պարտավորությունը հատվում են այն կետում, երբ անհատի արտահայտվելու թեմատիկ առարկան են լինում բնապահպանական կամ շրջակա միջավայրին վերաբերող այլ հարցեր: Ինչպես հայտնի է, անհատի սույն ազատությունը ենթակա է սահմանափակումների Սահմանադրությամբ նշված նպատակների համար և այնքանով, որքանով այդ սահմանափակումները նախատեսված են օրենքով և համաչափ են սահմանափակման նշված նպատակին: Այդուհանդերձ, անհատի (ներառյալ նաև զանգվածային լրատվության միջոցների) արտահայտվելու ազատության միջամտությունները գնահատելիս ՄԻԵԴ-ը և համապատասխան սահմանափակումները գնահատելիս Սահմանադրական դատարանը հատուկ կարևորություն և ուշադրություն են դարձնում խոսքի կամ այլ կերպ արտահայտվելու նպատակային առարկային: Օրինակ՝ քաղաքական խոսքը վայելում է արտահայտվելու ազատության բարձր պաշտպանություն, քանի որ ուղղակիորեն հանրային շահի պաշտպանությանն ուղղված հանրային և տեղեկացված բնավեճի նախապայման է: Նմանապես բնապահպանական խնդիրներին և հարցերին վերաբերող խոսքը և այլ արտահայտչաձևերը վայելում են բարձր պաշտպանություն, քանի որ դրանք վերաբերում են հանրային շահի առավել զգայուն և կարևոր հարցերի՝ շրջակա միջավայրի պաշտպանությանը: Բացի այս, արտահայտվելու կամ կարծիքի արտահայտման ազատությունը, որը ներառում է նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, նույնպես ունի շրջակա միջավայրի պաշտպանության պետության պարտավորության հետ ուղղակի առնչություն, և բոլոր այն դեպքերում, երբ պահանջվող կամ փնտրվող տեղեկատվությունը վերաբերում է բնապահպանական կամ շրջակա միջավայրի այլ խնդիրներին, դրա տրամադրման սահմանափակումները համոզականության ավելի բարձր շեմ պետք է բավարարեն:
- **Խաղաղ հավաքների և միավորումների ազատությունը** (Սահմանադրության 44-45 հոդվածներ), որն արտացոլում է նաև ՄԻԵԿ-ի 10-11 հոդվածներով նախատեսված համանուն ազատությունները: Ինչպես արտահայտվելու ազատության դեպքում, բնապահպանական կամ շրջակա միջավայրին առնչվող այլ հարցերի շուրջ հավաքները նույնպես պետք է վայելեն դրանց միջամտելու կամ սահմանափակելու իրավասություն ունեցող պետական մարմինների պաշտպանությունը նույն պատճառաբանությամբ, ինչ արտահայտվելու ազատության դեպքում:

Խոսելով անհատական տարբեր սահմանադրական իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանության պետության սահմանադրական պարտավորության մասին՝ հարկ է նշել նաև, որ Սահմանադրությամբ նախատեսված են ոչ միայն առողջ միջավայրի բովանդակությունը կազմող իրավունքի կառուցակարգի տարբեր տարրեր, այլ նաև շրջակա միջավայրի մասին հոգալու յուրաքանչյուր անհատի և կազմակերպության պարտականությունը: Այստեղ ավելորդ է հիշատակել, որ անհատի պարտականությունը

Սահմանադրի կողմից խիստ հազվադեպ է արձանագրվել Սահմանադրության մակարդակով: Նման՝ Սահմանադրությամբ ամրագրված անհատական պարտականությունների մենք կարող ենք հանդիպել Հայաստանի Հանրապետության կենսագործունեության միայն ընդգծված կարևորության դեպքերով, օրինակ, երբ խոսքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության (Սահմանադրության 14 հոդված) կամ հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ կատարելու (Սահմանադրության 60 հոդված) անհատական պարտականություններին, առանց որոնց պետության կենսագործունեությունն անհնար է պատկերացնել: Նմանապես Սահմանադրության 12-րդ հոդվածով ամրագրելով յուրաքանչյուր ոքի պարտականությունը շրջակա միջավայրի պահպանության մասին հոգ տանելու վերաբերյալ՝ Սահմանադիրն ընդգծել է նման անհատական պարտականության կենսական կարևորությունը Հայաստանի Հանրապետության կենսագործունեության համար:

### **Բնապահպանական իրավունքների վերաբերյալ (Հայաստանին վերաբերելի) միջազգային գլոբալ և տարածաշրջանային գործիքները**

#### **Գլոբալ գործիքներ**

Համաշխարհային մակարդակում Միավորված ազգերի կազմակերպությունը կարևոր դեր է ունեցել բնապահպանական իրավունքների ճանաչմանը նպաստելու գործում: Թեև մարդու իրավունքների հիմնական միջազգային պայմանագրերը բացահայտորեն չեն ճանաչում առողջ շրջակա միջավայրի իրավունքը, ՄԱԿ-ի մի քանի մարմիններ դրանք մեկնաբանել են որպես բնապահպանական իրավունքի տարրեր ընդգրկող ակտեր:

Օրինակ՝ **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն**, որը վերահսկում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով պետությունների պարտավորությունների կատարումը, ճանաչել է ջրի իրավունքը և առողջության իրավունքը՝ ներառելով որոշակի բնապահպանական չափումներ: Այն նշել է, որ պետությունները պարտավոր են կանխել և նվազեցնել շրջակա միջավայրի աղտոտվածությունը՝ պաշտպանելու այդ իրավունքները:

**Մարդու իրավունքների խորհուրդը** բանաձևեր է ընդունել՝ ընդգծելով մարդու իրավունքների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները: 2011 թվականին այն ստեղծել է մարդու իրավունքների և շրջակա միջավայրի հարցերով հատուկ զեկուցողի մանդատը, որը պարզաբանել է պետությունների պարտավորությունները՝ կապված շրջակա միջավայրի պաշտպանության հետ՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն:

Ավելին, տարբեր միջազգային բնապահպանական բնույթի պայմանագրեր, ինչպիսիք են Ստոկհոլմի հռչակագիրը, Ռիոյի հռչակագիրը և Կլիմայի փոփոխության մասին Փարիզի համաձայնագիրը, հաստատում են շրջակա միջավայրի պաշտպանության կարևորությունը մարդու բարեկեցության համար՝ դրանով իսկ անուղղակիորեն ճանաչելով բնապահպանական իրավունքները:

Ամփոփելով՝ նշենք, որ թեև իրավական փաստաթղթերում շրջակա միջավայրի պաշտպանության շրջանակներում առողջ միջավայրի իրավունքի ճանաչումը տարբերվում է ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում, այս իրավունքի ճանաչման աճող միտում կա: Սա արտացոլում է իրավական դիսկուրսում և պրակտիկայում մարդու իրավունքների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների ընդլայնված ըմբռնումը:

### **Եվրոպական տարածաշրջանային գործիքները**

Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական տարածաշրջանային համակարգը կարևոր դեր է ունեցել Հայաստանում բնապահպանական իրավունքների պաշտպանության իրավական շրջանակների ուրվագծման գործում, թեև այդ իրավունքները հստակորեն թվարկված չեն տարածաշրջանային մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերում:

**Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա:** Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան հստակորեն չի ներառում առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը մեկնաբանում է Կոնվենցիան, զարգացրել է այն մինչ այն աստիճան, որ շրջակա միջավայրի պաշտպանությունը վերածվել է մարդու՝ ՄԻԵԿ-ով պաշտպանված իրավունքների միջամտության իրավաչափության ստուգման ընթացքում կարևոր գործոնի: Դատարանը շեշտել է, որ շրջակա միջավայրի խիստ դեգրադացումը կարող է խոչընդոտ հանդիսանալ անհատի կյանքի իրավունքի (հոդված 2) և անձնական և ընտանեկան կյանքի (8-րդ հոդված) իրավունքի իրացման համար:

**Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա:** Այս խարտիան, որի կատարումը վերահսկվում է Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից, նախատեսում է սոցիալական և տնտեսական մի շարք իրավունքներ, ներառյալ առողջության, սոցիալական ապահովության և բարեկեցության հետ կապված իրավունքները: Թեև այն ուղղակիորեն չի ամրագրում բնապահպանական իրավունքները, դրա դրույթների մեկնաբանությունից բխում է շրջակա միջավայրի պահպանության պետության պարտավորությունը: Օրինակ՝ դա մասնակից պետություններից պահանջում է այնպիսի քաղաքականության իրականացում, որն ապահովում է «*առողջության հնարավոր ամենաբարձր ստանդարտը*», որը մեկնաբանվել է որպես առողջության վրա ազդող բնապահպանական գործոն:



**Օրհուսի կոնվենցիա:** Եվրոպայում տարածաշրջանային մակարդակով բնապահպանական իրավունքների ամենաուղղակի ճանաչումը 1998 թվականին ընդունված «Տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրային մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության մասին» UNECE կոնվենցիան է, որը հայտնի է որպես Օրհուսի կոնվենցիա: Օրհուսի կոնվենցիան հենվում է երեք սյուների վրա՝ բնապահպանական տեղեկատվության հասանելիության հանրության իրավունք, բնապահպանական որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք և բնապահպանական հարցերի համար արդարադատության հասանելիության իրավունք: Այս իրավունքները վճռորոշ են անհատներին իրենց շրջակա միջավայրը, վերջնարդյունքում իրենց առողջությունն ու բարեկեցությունը պաշտպանել լիազորելու տեսանկյունից:

Ամփոփելով առողջ շրջակա միջավայրի իրավունքի վերաբերյալ այս հատվածը՝ յուրաքանչյուր ոք պետք է նկատի ունենա այս իրավունքի եւ դրա շուրջ ծավալվող բանավեճի բարձր կարևորությունը և դրա որոշիչ բնույթը մեր մոլորակի ապագայի համար: Այս առնչությամբ յուրաքանչյուրիս պարտքն է գիտակցել և մտապահել, որ այն, ինչին ուղղված է այս իրավունքը՝ շրջակա միջավայրի և բնության պաշտպանությունը, մի խնդիր է, որի վերաբերյալ յուրաքանչյուրիս վերաբերմունքը պետք է ձևավորվի՝ հիմք ընդունելով այն անառարկելի իրողությունը, որ մինչ այսօր մարդկությունը տեղյակ չէ որևէ այլ տիեզերական միջավայրի մասին, որտեղ հնարավոր է երկրային կյանքը: Այս իրողության բերումով Երկիր մոլորակի բնության և կենսաբազմազանության, դրա կլիմայական միջավայրի պաշտպանությունը առնվազն մարդածին վնասարար գործոններից ոչ թե հռչակագրային, այլ կյանքի իրավունքի խնդիր է մարդու համար: Ավելին, այն առհասարակ կենդանական և բուսական կյանքի պաշտպանության խնդիր է: Ասելով այս ամենը և կրկնելով հաճախակիորեն՝ մենք երբեմն մեզ հարմարավետ կարող ենք զգալ՝ կարծելով, որ այսօր ջանքեր չգործադրելու հետևանքը մենք կամ մեզ մոտ սերունդները չեն, որ կզգան: Իրականում այդպես չէ: Գիտական հետազոտություններն աճող ինտենսիվությամբ ցույց են տալիս մեր սերնդի կյանքի տևողության ընթացքում այնպիսի բնական աղետների և արհավիրքների հնարավորություն, որոնց հումանիտար և միջազգային-քաղաքական և անվտանգային հետևանքները մենք նույնիսկ ամբողջությամբ պատկերացնել և հաշվարկել չենք կարող: Այսինքն՝ առողջ շրջակա միջավայրի իրավունքը յուրաքանչյուր մարդու պահանջն է՝ ապահովելու իր, իր սերունդների կյանքը և դրան նպաստող միջավայրի պաշտպանությունը: Այս՝ տեսականորեն գոյություն ունեցող իրավական կառուցակարգի ամրապնդումը կարող է նպաստել շրջակա միջավայրի առավել ադյունավետ պաշտպանությանը, քանի որ դա գործադրվելու է որպես պետության կողմից երաշխավորված անհատական իրավական պահանջ, պետության ունեցած՝ գլխավորապես ծրագրային քաղաքականության բնույթ ունեցող պարտավորության փոխարեն:

Փորձելով պատմական զարգացման համատեքստում հակիրճ ներկայացնել առողջ միջավայրի իրավունքի և շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրը՝ սխալված չենք լինի ասել, որ մարդու՝ քաղաքակրթություն, ներառյալ գիտություն և մշակույթ ստեղծելու և զարգացնելու գործընթացը եղել է բնությունն իր կամքին հպատակեցնելու

հիմնական ուղղությամբ: Այս ճանապարհին գնալով համոզվում ենք, որ այսօր արդեն մարդու քաղաքակրթվածության և մարդկության, որպես տեսակի, կենսունակության գնահատման չափանիշ է դառնում մեր մոլորակի բնությանը վնասող մեր մարդկային բնությունը սանձելու ունակությունը և հավաքական կամքը: Առողջ շրջակա միջավայրի իրավունքի՝ որպես անհատական իրավունքի ճանաչումը մեր մշակույթի քաղաքակրթվածության կարևորագույն ցուցիչներից կարող է լինել:

### **Հարցեր լսարանին**

1. Արդյո՞ք հայկական իրավունքն ունի հստակ իրավական սահմանում առողջ շրջակա միջավայրի իրավունքի համար՝ որպես անհատական իրավունքի:
2. Ո՞ր սահմանադրական հիմնական իրավունքներն առնչություն ունեն շրջակա միջավայրի պաշտպանության կապակցությամբ պետության պարտավորության հետ:
3. Որո՞նք են շրջակա միջավայրի պաշտպանության հարցում հիմնական միջազգային իրավական գործիքները:

ԳԼՈՒԽ 6.

ԽՈՑԵԼԻ ՎԻՃԱԿՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ԽՄԲԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ



## 6.1. Ընդհանուր նկարագրություն. խոցելիության տեսությունը

Մարդու իրավունքների պաշտպանության գործիքակազմի նպատակն է երաշխավորել բոլորի իրավունքների հավասար պաշտպանվածությունը՝ անկախ անձանց անհատական հատկանիշներից և իրավիճակից, որում նրանք գտնվում են: Միևնույն ժամանակ իրավունքների հավասար պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից է բխում գիտակցումը, որ, գործնականում տարբեր հանգամանքներից ելնելով, որոշ անձինք կամ խմբեր իրենց իրավունքներն իրացնելիս և պաշտպանելիս առավել մեծ դժվարությունների կառերեսվեն, քան մյուսները: Մի կողմից առավել բարձր է նրանց խտրականության ենթարկվելու ռիսկը, մյուս կողմից էլ ձևավորված կառուցակարգային, մշակութային և այլ խտրական պրակտիկաները նպաստում են նրանց իրավունքների խախտումներին և պաշտպանության բացերին ու դժվարություններին:

Օրինակ՝ բռնարար ընտանեկան հարաբերություններում հայտնվելու տեսանկյունից կանայք ավելի են վտանգված՝ ելնելով հասարակության՝ գենդերի վերաբերյալ պատմականորեն ձևավորված կառուցակարգերից, երեխաներին վնաս հասցնելու վտանգը առավել մեծ է՝ ելնելով այն հանգամանքից, որ նրանք ֆիզիկական և հուզական զարգացման ընթացքում են, ինչպես նաև կախման մեջ՝ այլ անձանցից, հաշմանդամություն ունեցող անձինք պատմականորեն ձևավորված կախվածության կառուցակարգերի հետևանքով առավել քիչ հնարավորություն ունեն լսելի լինելու և պնդելու իրենց տեսակետներն ու որոշումները:

Այս խմբերին կամ անձանց ընդունված է համարել խոցելի վիճակում գտնվող: Չկան խոցելիության գնահատման միանշանակ չափանիշներ: Ընդունված է համարել, որ անձանց և խմբերի խոցելիությունը ձևավորվում է *պատմականորեն խոցելի* համարվելու, հիերարխիկ հարաբերություններում, կախյալ վիճակում գտնվելու արդյունքում կամ այլ հանգամանքներից ելնելով: Հաճախ որպես խոցելի վիճակում գտնվողներ են ճանաչվում երեխաները, անչափահասները կամ երիտասարդները, ազատագրված անձինք, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, ռասայական, ազգային և էթնիկ փոքրամասնությունները, կանայք և այլ խմբեր: Միևնույն ժամանակ այս խմբերը ևս միատարր չեն: Այս խմբերի անդամներից ոմանք կարող են ունենալ խոցելիության մի քանի հատկանիշներ: Ինչպես և խտրականության համատեքստում, խոցելիության համատեքստում ևս կարևոր է ըստ անհրաժեշտության որդեգրել փոխհատվող (ինտերսեկցիոնալ) մոտեցում, որը թույլ կտա զգոն լինել անձի կամ խմբի խոցելիությանը նպաստող մեկից ավելի գործոնների նկատմամբ, ինչն էլ հնարավորություն կտա մշակելու նրանց իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ ռազմավարություններ: Այսպես, օրինակ, կանանց խոցելիության համատեքստում կարևոր է հաշվի առնել տարիքային, ազգային պատկանելության, հաշմանդամության և այլ կարգավիճակներ, քանի որ դրանցից յուրաքանչյուրն իր ազդեցությունն ունի անձի խոցելի վիճակի ձևավորման վրա:

Միևնույն ժամանակ կարևոր է հիշել, որ *խոցելիություն* եզրը ունի նաև բացասական երանգ: Այն կարող է ասոցացվել թուլության, անկարողության, անպաշտպանության և նմանօրինակ այլ՝ բացասական համարվող հատկանիշների հետ, վերագրել նման որակներ անձին կամ խմբին՝ դրանով իսկ նպաստելով այդ անձանց սուբյեկտայնության և ինքնավարության նսեմացմանը:

Ուստի կարևոր է, որ խոցելիության վիճակի ճանաչումը չհանգեցնի անձի և խմբերի պիտակավորմանը, ինքնավարության կորստին:

Մենք օգտագործում ենք *խոցելի*, *խոցելիություն* եզրերը, որպեսզի բնութագրենք այն իրավիճակները, որոնք նպաստում են անձի իրավունքների սահմանափակմանը և նվազեցնում դրանց պաշտպանության հնարավորությունները: Անձանց, խմբերի խոցելիության ճանաչումը կարևոր է նրանց իրավունքների հավասար իրացման ու պաշտպանության արդյունավետ գործիքակազմ ձևավորելու և գործարկելու տեսանկյունից: Խոցելիության վիճակի ճանաչման կարևոր նպատակներից պետք է լինի անձանց լիարժեք սուբյեկտայնության խթանումը, նրանց իրական մասնակցությունը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին տարբեր մակարդակներում, ներառյալ փաստահավաք գործունեության և հետազոտությունների փուլերում, այլ ոչ բացառումը:

Անձանց և խմբերի խոցելիությունը որոշվում է և՛ նրանց անհատական հատկանիշներով, և՛ միջավայրային պայմաններով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ անձանց խոցելիության բացասական ազդեցությունը վերացնելու կարևորագույն միջոցը նրանց ներգրավումն է որոշումների կայացման գործընթացում անհատական, համայնքային և քաղաքական մակարդակներում: Ինչպես նաև կարևոր է հիշել, որ իրավունքների պաշտպանության ոլորտում անձին հանդիպող դժվարությունների և դրանց բնույթի վերաբերյալ առաջնային և առավել ճշգրիտ տեղեկատվություն կարող են տալ, ինչպես նաև խնդիրների ընդունելի լուծումներ առաջարկել հենց խոցելի վիճակում գտնվող խմբերի անդամները: Այս համատեքստում կարևորագույն նշանակություն ունի անձանց՝ իրենց իրավունքների վերաբերյալ լիարժեք և մատչելի իրազեկումն ու նրանց իրական ներգրավումը որոշումների մշակման և կայացման գործընթացներում:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային գործիքակազմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք, որպես կանոն, հաշվի են առնում առանձին խմբերի խոցելիության վիճակը և ճանաչում են այդ խմբերի իրավունքները հավասարապես ապահովելու անհրաժեշտությունը: Որոշ գործիքակազմերի միջոցով պետությունները ճանաչել են առանձին խմբերի իրավունքների պաշտպանությունը խթանելու անհրաժեշտությունը և ստանձնել դրանք խթանելու պարտավորություններ: Այդպիսին են, օրինակ, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եւրոպական կոնվենցիան, «Տարեց անձանց համար» ՄԱԿ-ի սկզբունքները, «Երեխայի իրավունքների մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաները:

## 6.2. Կանայք

Կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ, իսկ միջազգային և ներպետական իրավակարգավորումները արգելում են սեռով պայմանավորված խտրականությունը: Սակայն պատմականորեն ձևավորված գենդերային կառուցակարգերի և անհավասարությունների հետևանքով առաջացել են կանանց իրավունքների իրացման ու պաշտպանության խորքային հիմնախնդիրներ, ուստի և՛ կանանց իրավունքների լրացուցիչ խթանման անհրաժեշտություն:

Կանայք հայտնվել են առավել խոցելի վիճակում, այդ թվում՝ այնպիսի իրավախախտումների ու հիմնախնդիրների համատեքստում, ինչպիսիք են.

- կանանց նկատմամբ բռնությունը, որը ներառում է ընտանեկան բռնությունը, տնտեսական հարկադրանքը, կանանց սեռական օրգանների խեղումը, հուլալան, հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնության տեսակները.
- սեռական և վերարտադրողական առողջությունը, որը ներառում է հղիության արհեստական ընդհատման հետ կապված կարգավորումներն ու արդյունավետ, մատչելի և անվտանգ ընթացակարգերը<sup>380</sup>, հարկադիր ամլացումը, արհեստական բեղմնավորումը.
- քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը, կրթությունը.
- ամուսնական և ընտանեկան իրավունքները, ընտանիքից բաժանումը, ծնողական իրավունքները.
- մարդկային թրաֆիկինգը.
- աշխատանքային հարաբերություններում անհավասարությունը և հավասար վարձատրության իրավունքը.
- սեփականության և հարակից իրավունքները.
- կին իրավապաշտպանների պաշտպանությունը.
- կանանց իրավունքները արտակարգ և պատերազմական իրավիճակներում:

Գենդերային հավասարության ու կանանց իրավունքների խթանման նպատակով մշակվել են միջազգային իրավական գործիքակազմեր, որոնք արձանագրել և սահմանել են կանանց իրավունքների պաշտպանության երաշխիքները: Դրանք միտված են նրանց իրավունքների իրացման և պաշտպանության առկա խոչընդոտներին և վտանգներին բավարար, թիրախային և արդյունավետ կերպով արձագանքելուն:

Միավորված ազգերի կազմակերպության «Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին» կոնվենցիան<sup>381</sup> կանանց իրավունքների վերաբերյալ ամենաընդգրկուն

380. Միջազգային իրավական փաստաթղթերից այժմ միայն Մապուտոյի արձանագրությունն է ուղղակի ճանաչում հղիության արհեստական ընդհատման իրավունքը՝ ամրագրելով. «...պաշտպանել կանանց վերարտադրողական իրավունքները՝ թույլ տալով հղիության բժշկական արհեստական ընդհատումը սեռական ուսնձգությունների, բռնաբարության, արյունապղծության դեպքերում, և երբ հղիության շարունակությունը վտանգում է մոր հոգեկան և ֆիզիկական առողջությունը կամ մոր կամ պտղի կյանքը»:

Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի արձանագրությունը կանանց իրավունքների մասին, հոդված 14(2)(գ), <https://au.int/en/treaties/protocol-african-charter-human-and-peoples-rights-rights-women-africa>

381. «Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին» կոնվենցիա, 1979 թ., դեկտեմբերի 18,

պայմանագիրն է, որը թիրախային կերպով արձանագրում է կանանց իրավունքները: Այն դատապարտում է կանանց նկատմամբ խտրականության ցանկացած ձև և վերահաստատում կանանց և տղամարդկանց հավասար քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքացիական իրավունքների երաշխավորման կարևորությունը: Սույն կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը վերահսկում և մշտադիտարկում է կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն<sup>382</sup> անհատական բողոքների քննության և կառավարությունների պարբերական զեկույցների քննարկման միջոցով<sup>383</sup>: Այն նաև աջակցում է պետություններին՝ կատարելու իրենց ստանձնած պարտավորությունները թեմատիկ ընդհանուր մեկնաբանությունների և ուղեցույցների միջոցով:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան<sup>384</sup>, որն ուժի մեջ է մտել 2014 թ.-ին, ևս ներառում է համանման դրույթներ: Միևնույն ժամանակ այն մասնավորապես կարգավորում է կանանց նկատմամբ բռնության արգելքի բոլոր ձևերը՝ պարտավորեցնելով պետություններին գործունե միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ: Այն արձանագրում է, որ սեռական ոտնձգությունը, բռնաբարությունը, հարկադիր ամուսնությունը, պատվի հանցագործությունները, սեռական օրգանների խեղումը և բռնության այլ ձևեր մարդու իրավունքների լուրջ խախտումներ են և «կանանց ու տղամարդկանց միջև հավասարության հասնելու հիմնական խոչընդոտը»: Նշված կոնվենցիան սահմանում է նաև մշտադիտարկման մեխանիզմ, այն է՝ 10-15 անկախ փորձագետներից կազմված խումբ, որը վերահսկում է Ստամբուլյան կոնվենցիայի կատարումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ ԵԽ անդամ երկրներում գենդերային հավասարության խրախուսումը կարևոր նպատակ է, ուստի նաև սեռի հիմքով տարբերակված մոտեցման հիմնավորման համար ևս դատարանը պահանջում է ապացուցման բարձր շեմ՝ «շատ ծանրակշիռ պատճառներ»-ի ներկայացման միջոցով: Միևնույն ժամանակ Դատարանը անընդունելի է համարել հղումը ավանդույթներին, սոցիալական հարաբերություններին և այլ պատճառներին՝ որպես սեռի հիմքով տարբերակված վերաբերմունքի արդարացում: Որպես սեռի հիմքով խտրականության դրսևորման դեպքեր՝ այն քննել է ամուսնության ընթացքում հավասարության<sup>385</sup>, զբաղվածության հասանելիության<sup>386</sup>, ծնողական արձակուրդների<sup>387</sup>, կենսաթոշակի<sup>388</sup>, քաղաքացիաիրավական պարտավորությունների<sup>389</sup>, ընտանիքի վերամիավորման<sup>390</sup>, երեխաների ազգանվան<sup>391</sup>, ընտանեկան բռնության<sup>392</sup> և այլ հարցեր:

382. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, <https://www.ohchr.org/en/treaty-bodies/cedaw>

383. A Guide to Using the UN CEDAW Committee and the Special Rapporteur on Violence against Women in Cases of Gender-Based Violence, [http://ehrac.org.uk/wp-content/uploads/2023/05/EHRAC-UN-CEDAW\\_SRVAW-Guide-23\\_ENG\\_v2-1.pdf](http://ehrac.org.uk/wp-content/uploads/2023/05/EHRAC-UN-CEDAW_SRVAW-Guide-23_ENG_v2-1.pdf)

384. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի եվրոպայի խորհրդի կոնվենցիա, <https://rm.coe.int/168046246d>

385. Ünal Tekeli v. Turkey, 2004, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-67482>

Burghartz v. Switzerland, 1994, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57865>

386. Emel Boyraz v. Turkey, 2014, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-148271>

387. Konstantin Markin v. Russia, 2012, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-109868>

388. Willis v. the United Kingdom, 2002, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-60499>

389. Zarb Adami v. Malta, 2006 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-75934>

390. Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom, 1985, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57416>

391. Cusan and Fazzo v. Italy, 2014, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-140033>

León Madrid v. Spain, 2021, <https://hudoc.echr.coe.int/eng?i=002-13451>

392. Opuz v. Turkey, 2009, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-92945>

Volodina v. Russia, 2019, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-194321>

Կանանց իրավունքների խթանման և պաշտպանության, ինչպես նաև գեղեցիկ հիմքով բռնության դեմ պայքարի նպատակով պետությունները ստանձնել են պարտավորություններ նաև այլ տարածաշրջանային և մասնագիտացված միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության շրջանակներում:

### 6.3. Երեխաներ

Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ: Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում տարածված խնդիրներից են երեխաների աղքատությունը, բռնության և ոտնձգությունների ենթարկվելու վտանգը, ներառյալ ընտանեկան բռնությունը, սեռական բռնությունը, կրթության և առողջության իրավունքների խախտումները, բավարարար կենսապայմանների, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների բացակայությունը, պատշաճ սնուցման, ընտանիքում կամ ընտանիքին մոտ միջավայրում ապրելու իրավունքի հիմնախնդիրները, դեռահասների հղիության և մանկական ամուսնության վտանգները:

Երեխայի խոցելիության հիմքում նրանց օբյեկտիվ կախվածությունն է չափահասներից, ինչպես նաև նրանց՝ ֆիզիկական, զգայական և հուզական զարգացող կարգավիճակը:

Երեխաներն իրենց կյանքը սկսում են որպես կախյալ Էակներ: Միևնույն ժամանակ յուրաքանչյուրն անհատ է և օժտված է հիմնարար մարդկային արժանապատվությամբ: Նրանք իրենց ծնողների, ինսամակալների, պետության, պետական կառույցների կամ այլոց սեփականությունը չեն և ոչ էլ բարեսիրության անօգնական օբյեկտներ: Երեխաներն օժտված են նույն ընդհանուր իրավունքներով, ինչ մեծահասակները: Այդ իրավունքները, ինչպես և մեծահասակների դեպքում, պետք է ապահովվեն և պաշտպանվեն, որպեսզի ձևավորվի այնպիսի նպաստավոր միջավայր, որտեղ յուրաքանչյուր երեխա կկարողանա իրացնել իր ողջ ներուժը:

Երեխաների իրավունքները և մասնավորապես նրանց որպես իրավունքների սուբյեկտ, այլ ոչ միայն շահառու դիտարկելը խթանել է *երեխայի զարգացող կարողությունների* հայեցակարգի զարգացումը և ճանաչումը, որն առաջին անգամ ամրագրվել է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի<sup>393</sup> տեքստում:

Երեխայի զարգացող կարողությունների սկզբունքը պահանջում է ճանաչել, որ երեխաների տարիքին և զարգանալուն համընթաց զարգանում են նաև նրանց կարողութ-

393. «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child>, 1989 թ. նոյեմբերի 14, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503>



յունները և ունակությունները, ուստի ծնողները, խնամողները և այլք պետք է հարմարեցնեն իրենց մոտեցումները երեխայի տարիքին և հասունության աստիճանին, որպեսզի երեխաներին հնարավորություն ընձեռեն գործադրելու հնարավորինս լայն ազատություն և ինքնավարություն: Սա որոշակիորեն արմատական շեղում է ավանդական ծնող-երեխա հարաբերություններից, որտեղ ծնողները հիմնական իրավունքների կրողներն էին, իսկ երեխան՝ պաշտպանության և խնամքի պասիվ ստացող<sup>394</sup>:

Երեխայի զարգացող կարողությունների սկզբունքի նպատակն է փոխել երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում առկա այն արմատացած ընկալումը, որ երեխաները միայն պաշտպանության օբյեկտ են, և բարձրացնել երեխայի իրավունքների պաշտպանության նշանոցը՝ նրան ճանաչելով որպես իրավունքի իրավատեր, պահանջելով անմիջական փոխհարաբերություն պետության և երեխայի միջև, ինչը մինչ այդ իրականացվել է մեծահասակների միջնորդությամբ: Այդպիսով նաև երեխան տեսանելի և լսելի է լինում իրավունքի առջև:

Բացի այդ, երեխայի իրավունքների իրացումն ու պաշտպանությունը հիմնվում է չորս կարևորագույն սկզբունքների վրա: Դրանք են.

- խտրականության չենթարկելու սկզբունքը, որը պաշտպանում է երեխային ցանկացած տեսակի խտրականությունից՝ անկախ երեխայի կամ նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի իրական կամ ենթադրյալ ռասայական պատկանելությունից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ կարծիքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային վիճակից, հաշմանդամությունից, ծննդից կամ այլ կարգավիճակից:
- երեխայի գոյատևման և զարգացման սկզբունքը, որը երեխայի համար երաշխավորում է առաջին հերթին կյանքի իրավունքը, ինչպես նաև տնտեսական և սոցիալական իրավունքների առավելագույն իրացման հնարավորությունը: Այն իրացվում է առողջության ապահովման, պատշաճ սնուցման, սոցիալական երաշխիքների, բավարար կենսապայմանների, առողջ և անվտանգ միջավայրի, կրթության և հանգստի և այլ իրավունքների հետ համակցությամբ, համապարփակ կերպով: Ըստ Էուլթյան, այն ներառում է արժանապատիվ կյանք ապահովելու համար անհրաժեշտ պայմաններ ձևավորելու պարտավորությունը:
- երեխայի տեսակետները լսելու և հաշվի առնելու սկզբունքը, որը պաշտպանում է երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու և իր վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում մասնակցություն ունենալու իրավունքները: Այդ իրավունքը ներառում է տեղեկություններ և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ ըստ երեխայի ընտրության: Երեխային պետք է տրվի իր կարծիքն արտահայտելու հնարավորություն: Բացի դրանից՝ անհրաժեշտ է աջակցել այն երեխաներին, որոնք խոչընդոտների են հանդիպում իրենց կարծիքը արտահայտելու և լսելի դարձնելու գործընթացում, այդ թվում՝ տարբեր

394. Varadan, S. The Principle of Evolving Capacities under the UN Convention on the Rights of the Child, 2019, <https://doi.org/10.1163/15718182-02702006>

հաշմանդամություն ունեցող երեխաներին, տվյալ լեզվին չտիրապետող, ներառյալ ժեստերի լեզվով հաղորդակցվող կամ այլ հիմքով բացառման վտանգի գոտում գտնվող երեխաներին: Երեխայի կարծիքը պետք է հաշվի առնել՝ հիմք ընդունելով նրա տարիքը և հասունության աստիճանը:

- երեխայի լավագույն շահի սկզբունքը, որը պահանջում է երեխայի կամ երեխաների խմբի վրա հնարավոր ազդեցություն ունեցող որոշումներ կայացնելիս ուսումնասիրել և գնահատել դրանց դրական կամ բացասական ազդեցությունը նրանց վրա և առաջնորդվել երեխայի համար առավել բարենպաստ լուծումներով:

Նշված սկզբունքները չեն կարող դիտարկվել առանձին-առանձին, դրանցից յուրաքանչյուրը փոխլրացնում է մյուս սկզբունքներին և (կամ) հավասարակշռում դրանք: Օրինակ՝ երեխայի վերաբերյալ որոշում կայացնելիս երեխայի տեսակետը հաշվի առնելու սկզբունքին կարող է հավասարակշռել երեխայի լավագույն շահի սկզբունքը, միևնույն ժամանակ որոշումը չպետք է խախտի երեխայի խտրականության չենթարկվելու և մյուս իրավունքները:

Որպես մարդու իրավունքների լիարժեք շահառուներ՝ երեխաները օգտվում են նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (պարունակում է երեխայի իրավունքների վերաբերյալ հատուկ դրույթներ) և մարդու իրավունքների այլ համակարգերի պաշտպանությունից ինչպես Եվրոպայի խորհրդի շրջանակներում, այնպես էլ դրանից դուրս: Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի զարգացում է ապահովել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ հիմնվելով, այդ թվում, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի և Երեխայի իրավունքների կոմիտեի մեկնաբանությունների վրա, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեքստը, որպես այդպիսին, հաշվի չի առնում երեխաների իրավունքների առանձնահատկությունները<sup>395</sup>:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործում են նաև մի շարք այլ կոնվենցիաներ, որոնք ուղղված են երեխայի առանձին իրավունքների պաշտպանությանը, ինչպես, օրինակ, «Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու մասին» կոնվենցիան (Լանզարոտեի կոնվենցիա)<sup>396</sup>, «Երեխայի իրավունքների իրականացման վերաբերյալ» կոնվենցիան<sup>397</sup>, «Երեխաների որդեգրման մասին» եվրոպական կոնվենցիան<sup>398</sup>:

395. Dr. Samantha Davey. Children and the European Court of Human Rights, 2021, <https://doi.org/10.1093/lawfam/ebab014>.

396. Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու մասին կոնվենցիա 2007թ. հոկտեմբերի 25. CETS No. 201, <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=201>  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152921>

<https://rm.coe.int/prems-095719-arm-2576-lanzarote-convention-leaflet-a5-web/168097a5d9>

397. Երեխայի իրավունքների իրականացման վերաբերյալ կոնվենցիա, 1996 թ. հունվարի 1, ETS No. 160, <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=160>

398. Երեխաների որդեգրման մասին եվրոպական կոնվենցիա, 2008թ. նոյեմբերի 27, CETS No. 202, <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=202>

## 6.4. Տարեց անձինք

Տարիքի հիմքով խոցելիության վիճակում են գտնվում նաև տարեց անձինք: Ընդունված է տարեց համարել 65-ից բարձր տարիք ունեցող անձանց, թեև այս սահմանումը համընդհանրական և միանշանակ չէ:

Ինչպես և երեխաների դեպքում, տարեց անձանց խոցելիությունն ու նրանց հանդեպ խտրականությունը հիմնականում պայմանավորված է նրանց կախյալ վիճակով:

Նրանց իրավունքների պաշտպանության հիմնական խնդիրները պայմանավորված են և կարող են հանգեցնել աղքատության, անտնության, թերսնման, քրոնիկ հիվանդությունների, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների բացակայության, դեղորայքի և բուժման միջոցների անհասանելիության, կայուն բավարար եկամտի բացակայության, բռնության և շահագործման, անտեսման, հատուկ ծառայությունների բացակայության: Ի լրումն նշվածի՝ հաճախ տարեց անձինք իրենց թոռնիկների և ընտանիքի այլ անդամների խնամողներն են, ինչը նրանց համար կարող է առաջացնել լրացուցիչ դժվարություններ: Խնդրահարույց կարող է լինել տարեց անձանց իրավունքներն ապահովելու համար անհրաժեշտ ծառայությունների բացակայությունը: Այդպիսիք են հատուկ մասնագիտացված ծառայությունները, գերիատրիկ ծառայությունները, երկարաժամկետ ներտնային խնամքի ծառայությունները:

Տարեց անձանց իրավունքների սահմանափակումները կարող են պայմանավորված լինել նաև աշխատանքային և կրթական իրավունքների սահմանափակումներով, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում նրանց բացառմամբ:

Թեև առկա չէ առանձին տարեց անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված պարտադիր բնույթ կրող միջազգային պայմանագիր, սակայն տարեց անձինք պաշտպանված են մարդու իրավունքների գործիքակազմով: Միևնույն ժամանակ ընդունվել են տարեց անձանց իրավունքների վերաբերյալ մի շարք հանձնարարականներ և բաՆաձևեր, ներառյալ «Տարեց անձանց համար» ՄԱԿ-ի սկզբունքները: Դրանք սահմանում են տարեց անձանց իրավունքների պաշտպանության հինգ հիմնական սկզբունքներ՝ անկախություն, մասնակցայնություն, խնամք, ինքնիրացում և արժանապատվության հարգանք: Տարեց անձանց իրավունքների մեկնաբանության կարևոր փաստաթղթեր են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից մշակված Տարեց անձանց մարդու իրավունքների սկզբունքներն ու չափորոշիչները<sup>399</sup>, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունը կին տարեց անձանց իրավունքների մասին<sup>400</sup>, Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունը տարեց անձանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին<sup>401</sup>:

399. Տարեց անձանց իրավունքները: Սկզբունքներն ու չափորոշիչները, 2011 թ.,

<https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/OlderPersons/OHCHRBackgroundpaper2011.pdf>

400. Ընդհանուր քննության մեկնաբանություն տարեց կանանց և նրանց իրավունքների պաշտպանության մասին, 2010 թ.,

<https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-recommendation-no-27-older-women-and>

401. Տարեց անձանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, 1996 թ.,

[https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=E/1996/22\(SUPP\)&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=E/1996/22(SUPP)&Lang=en)

Տարեց անձանց իրավունքների պաշտպանության համակարգը զարգացել է նաև Եվրոպայի խորհրդի շրջանակներում: 2014 թ.-ին ԵԽ նախարարների կոմիտեն ընդունել է տարեց անձանց իրավունքների խթանման մասին բանաձևը<sup>402</sup>, որն արձանագրել է, որ թեև մարդու իրավունքների գործող միջազգային չափորոշիչները կիրառելի են բոլոր մարդկանց կյանքի բոլոր փուլերում և կազմում են տարեցների մարդու իրավունքների պաշտպանության համապատասխան նորմատիվ շրջանակը, սակայն պետք է լրացուցիչ ջանքեր գործադրել՝ գնահատելու տարեց անձանց իրավունքների պաշտպանության բացերը: Տարեց անձանց իրավունքներին հատուկ անդրադարձ է կատարում նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան: Իսկ ՄԻԵԴ-ը տարեց անձանց իրավունքների պաշտպանության համակարգի զարգացումն ապահովել է կյանքի իրավունքի, վատ վերաբերմունքից զերծ մնալու, անձնական ազատության և այլ իրավունքների շրջանակներում<sup>403</sup>:

## 6.5. Հաշմանդամություն ունեցող անձինք

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համակարգ նախատեսող առավել ամփոփ և հիմնարար փաստաթուղթ է: Ըստ նշված կոնվենցիայի՝ հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում այն անձինք, որոնք ունեն ֆիզիկական, հոգեկան, մտավոր և (կամ) զգայական տևական հիվանդություններ, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել նրանց լիարժեք և արդյունավետ, մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցությունը հասարակական կյանքին:

Պատմության ընթացքում մարդիկ, հասարակությունները և պետությունները հաշմանդամության նկատմամբ ունեցել են տարբեր մոտեցումներ, որոնք ձևավորել են վերաբերմունք, քաղաքականություն և օրենքներ: Այդ մոտեցումները ձևակերպվել են հաշմանդամության մոդելների շուրջ: Դրանցից են կենսաբժշկական և բարեգործական մոդելները և սոցիալական ու մարդու իրավունքների վրա հիմնված մոդելները: Կենսաբժշկական և բարեգործական մոդելների հիմքում անձի առողջական վիճակն է և հաշմանդամություն ունեցող մարդկանց որպես պաշտպանության և խնամքի պասիվ շահառուների վերաբերվելը, իսկ սոցիալական և մարդու իրավունքների վրա հիմնված մոդելները շեշտադրումը տեղափոխել են դեպի առկա սոցիալական խոչընդոտները և մարդկային արժանապատվությունը:

402. Recommendation CM/Rec(2014)2 of the Committee of Ministers to member states, 2014,

<https://rm.coe.int/promotion-of-human-rights-of-older-persons/16809fb9bf>

403. Elderly people and the European Convention on Human Rights. Factsheet, 2022 September,

[https://www.echr.coe.int/documents/fs\\_elderly\\_eng.pdf](https://www.echr.coe.int/documents/fs_elderly_eng.pdf)

Այսպես, ըստ բարեգործական մոդելի՝ հաշմանդամություն ունեցող անձինք, իրենց առողջական վիճակից ելնելով, չեն կարող բավարար չափով ապահովել իրենց կյանքը: Առաջնորդվելով այս մոդելով՝ անձինք և պետությունները հակված են բարեգործական միջոցներով ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց, որպես կանոն, առաջնային կարիքները: Այն ավելի է խորացնում կարծրատիպերն ու խարանը, ինչպես նաև մեծացնում է հեռավորությունը հաշմանդամություն ունեցող անձանց և հասարակության միջև և չի նպաստում նրանց հավասարությանը և ներառմանը:

Կենսաբժշկական մոդելը, որը նաև հայտնի է որպես դեֆիցիտի մոդել, հաշմանդամության այսպես կոչված «խնդիրը» պայմանավորում է միայն այդ անձի առողջական վիճակով: Շեշտադրելով անձի առողջական վիճակը՝ այն ձգտում է բարելավել այն, իսկ երբ դա չի հաջողվում, անձը շարունակում է կրել ոչ բավարար առողջ լինելու խարանը՝ որպես իր հիմնական հատկանիշ: Այսպես, հաճախ կարող է հանդիպել *հաշմանդամության կանխարգելում* եզրույթը: Այն ամբողջությամբ հիմնված է հաշմանդամության կենսաբժշկական մոդելի վրա, քանի որ նույնականացնում է անձի հաշմանդամությունը անձի առողջական վիճակի հետ: Սակայն այն խտրական եզր է և հակասում է անձի կարգավիճակի և մարդկային բազմազանության հանդեպ հարգանքի սկզբունքին՝ ենթագիտակցորեն բացասական երանգ հաղորդելով նաև հաշմանդամությանը, որի հետևանքներին ստիպված են առերեսվել հաշմանդամություն ունեցող անձինք:

Ի տարբերություն վերոգրյալ մոդելների՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան անցնում է առավել համապարփակ մոտեցման և հիմնված է հաշմանդամության սոցիալական և մարդու իրավունքների մոդելների վրա:

Սոցիալական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտվում է որպես սոցիալական կառուցակարգերի և խոչընդոտների արդյունքում ձևավորված անարդարություն, որի դեմ հնարավոր է պայքարել և վերացնել այն արմատական սոցիալական փոփոխությունների միջոցով:

Լրացնելով սոցիալական մոդելը՝ մարդու իրավունքների մոդելը կենտրոնանում է մարդու բնածին արժանապատվության վրա: Այն պահանջում է, որ ճանաչվի հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք իրավասությունները: Միևնույն ժամանակ, ինչպես և սոցիալական մոդելը, այն չի բացառում, և, ավելին, պահանջում է, որ ապահովվեն հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր իրավունքների, ներառյալ առողջության իրավունքի լիարժեք և անխտրական իրացումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հիմնական արդի մարտահրավերներն են.

- նախապաշարմունքներն ու խտրականությունը, խելամիտ հարմարեցումների չտրամադրումը և օրենքի առջև հավասարության ճանաչման և ապահովման հիմնախնդիրը, ներառյալ անձին անգործունակ ճանաչելու համակարգը, որոշումների կայացման ազատության և սեփական կյանքի հանդեպ հսկողության ցածր հնարավորությունները և աջակցության բացակայությունը:

- ինստիտուցիոնալացումը. առավելապես հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց բուժման և ինամքի ծառայությունների կենտրոնացումը շուրջօրյա հաստատություններում և հաստատությունների շուրջ, համայնքում ապրելու, անկախ կյանքի և հասարակությունում ներառվելու համար անհրաժեշտ ու բավարար ծառայությունների բացակայությունը, համայնքում առկա ծառայությունների անմատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Տեական աջակցության կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակարանային ապահովման պետական ծրագրերի անհասանելիությունը, աջակցության միջոցների բացակայությունը կամ անբավարարությունը:
- հաշմանդամություն ունեցող երեխաների ինստիտուցիոնալացումը շուրջօրյա հաստատություններում, մանկատներում կամ հատուկ կրթական հաստատություններում, ընտանիքում կամ ընտանիքին մոտ պայմաններում ապրելու իրավունքի ապահովման բացերը:
- բռնությունը և շահագործումը, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, ֆինանսական, սեռական, անտեսումը, հարկադիր ամլացման վտանգները, ներառյալ հաստատություններում ապրող անձանց նկատմամբ ծառայություններ մատուցողների կողմից, հաստատություններում բնակության անմարդկային պայմանները, ապօրինի զսպման միջոցների կիրառումը: Առավելապես խոցելի են մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք:
- հատկապես հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ հաշմանդամության հիմքով ազատագրվումը, ինամքի և բուժման հաստատություններում հարկադիր տեղավորումը, ինչպես նաև հարկադիր բուժումը:
- միջավայրի անմատչելիությունը, խոսքի և տեղեկատվության ազատության իրացման խոչընդոտները, հաղորդակցման մատչելի միջոցների բացակայությունը, կրթության ցածր որակը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար տեղեկատվության մատչելիությունը:
- հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահաս անձանց որակյալ և ներառական կրթություն ստանալու համար կրթական համակարգերի, ուսումնական ձևաչափերի և նյութերի անմատչելիությունը:
- հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ փոխհատվող (ինտերսեկցիոնալ) խտրականությունը, առողջապահական, ներառյալ վերարտադրողական ծառայությունների անհասանելիությունն ու անմատչելիությունը, աշխատանքային իրավունքների իրացման և հավասար վարձատրության ապահովման հիմնախնդիրները: Ֆիզիկական, հոգեբանական, սեռական, ֆինանսական և բռնության այլ ձևերի, զսպման, վերարտադրության վերահսկողության, մեկուսացման և վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկվելու ռիսկերը կանանց համար շեշտակի բարձր են թե՛ հաստատություններում, թե՛ ծառայություններ մատուցողների կողմից, թե՛ ընտանիքներում, թե՛ այլ երրորդ անձանց կողմից:

- աշխատանքային իրավունքների իրացման համար աջակցության, ներուժի զարգացման համակարգերի բացերը և աշխատանքային իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների բացերն ու անմատչելիությունը:
- իրավունքի պաշտպանության արտադատական և դատական միջոցների ու կառուցակարգերի անմատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար, ներառյալ ֆիզիկական, տեղեկատվական, ընթացակարգային:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համակարգը շեշտակի զարգացում է ապրել 2006 թ.-ին՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունումից հետո, որի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն է:

Կոնվենցիան ճանաչում է հաշմանդամություն ունեցող անձանց բազմազանությունը, ամրագրում միջավայրային, կառուցակարգային, տեղեկատվական և իրավական խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը: Դա կերաշխավորի հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության և իրավունքների նկատմամբ, թույլ կտա նրանց որոշումներ կայացնել և ընտրություն կատարել սեփական կյանքին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ: Իսկ անհատական ինքնավարության ճանաչումն ու ակտիվ խթանումը, հնարավորությունների և կարողությունների ճանաչումը և մյուսների հետ հավասար հիմունքներով իրավունքների իրականացման համար բավարար պայմաններ ապահովելու անհրաժեշտությունը պահանջում է հաշմանդամություն ունեցող անձանց ընկալել որպես որոշումների կայացման գործընթացի սուբյեկտներ և ոչ միայն շահառուներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ևս մարդու իրավունքների տարբեր համակարգերի պաշտպանության ներքո են: Ոլորտը այժմ զարգացում է ապրում, և միջազգային բոլոր իրավական համակարգերում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված չափորոշիչների լիարժեք ներառումն ապահովելու համար երկար ճանապարհ կա անցնելու: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան չի պարունակում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հատուկ դրույթներ, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր հերթին բազմաթիվ առիթներով մեկնաբանել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր իրավունքներ՝ նաև հիմնվելով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի դրույթները և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի մեկնաբանությունները<sup>404</sup>: Միևնույն ժամանակ որոշ իրավունքների պաշտպանության հարցում (այդպիսիք են հարկադիր ազատազրկումից և գործունակության զրկումից պաշտպանությունը, հաշմանդամություն ունեցող անձանց կրթութ-

404. Persons with disabilities and the European Convention on Human Rights. Factsheet, November 2022, [https://www.echrcoe.int/documents/fs\\_disabled\\_eng.pdf](https://www.echrcoe.int/documents/fs_disabled_eng.pdf)

յան, քվեարկելու իրավունքները) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի ապահովում այնպիսի պաշտպանություն, որը կհամապատասխաներ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի նշանողին<sup>405</sup>:

## 6.6. Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խոցելի վիճակում գտնվող անձինք

Անձինք կարող են հայտնվել խոցելի վիճակում իրենց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով: ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց իրավունքների խախտումները կարող են ստանալ տարբեր դրսևորումներ՝ բուլիինգից մինչև գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով սպանություն: Միևնույն ժամանակ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքի շուրջ առկա կարծրատիպերը և նախապաշարմունքները հաճախ օգտագործվում են հասարակության մեջ վախեր սերմանելու, որոշումների և որոշում կայացնող անձանց օրակարգերի վրա ազդելու և մանիպուլյատիվ այլ նպատակներով: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքի շուրջ կարծրատիպերի այսպիսի օգտագործումն Է՛լ ավելի խոցելի է դարձնում ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց՝ խորացնելով նրանց շուրջ առկա թշնամական միջավայրը և կյանքի, առողջության, արժանապատիվ ապրելու շուրջ վտանգները:

Կարելի է առանձնացնել ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց իրավունքների հետևյալ հիմնական խնդիրները<sup>406</sup>:

- Բռնի հարձակումներ՝ ագրեսիվ բնույթի բանավոր վիրավորանք և հոգեբանական բնույթի ահաբեկումներ, ֆիզիկական հարձակումներ, ծեծ, խոշտանգում, առևանգումներ և նպատակային սպանություններ:
- Խտրական քրեական օրենքներ, որոնք հաճախ օգտագործվում են ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց հետապնդելու և «պատժելու» համար, ներառյալ օրենքներ, որոնք քրեականացնում են համաձայնության հիման վրա ձևավորված նույնասեռ հարաբերությունները՝ այդպիսով խախտելով նաև գաղտնիության և խտրականությունից զերծ մնալու իրավունքները:

405. Տե՛ս, օրինակ, The European Court of Human Rights fails to protect the right to vote of persons with disabilities, 2021, <https://www.edf-fepb.org/the-european-court-of-human-rights-fails-to-protect-the-rights-to-vote-of-persons-with-disabilities/>

406. Fact sheet. International Human Rights Law and Sexual Orientation & Gender Identity, <https://www.unfe.org/wp-content/uploads/2017/05/International-Human-Rights-Law.pdf>



- Խոսքի ազատության խտրական սահմանափակումները և դրան առնչվող միավորումների, հավաքների ազատության իրականացման սահմանափակումները:
- Խտրական վերաբերմունքը, որը կարող է տեղի ունենալ ամենատարբեր առօրյա պայմաններում, ներառյալ աշխատատեղում, դպրոցում, հիվանդանոցներում և այլն: Առանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը արգելող օրենսդրության երրորդ անձանց կողմից նման խտրական վերաբերմունքը շարունակվում է մնալ անվերահսկելի՝ տուժողների համար պաշտպանության սվազագույն հնարավորություններով:

Այս և այլ մարտահրավերներին դիմակայելու և ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց իրավունքները լիարժեք իրականացնելու նպատակով մշակվել են հինգ խումբ միջոցառումներ, որոնք ուղենշային կարող են լինել պետությունների համար<sup>407</sup>: Դրանք բերվում են ստորև:

- Պաշտպանել անձանց հոմոֆոբ և տրանսֆոբ հարձակումներից և ներառել սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը որպես խտրականության պաշտպանված հիմք աստիճանային հիմքով կատարվող հանցագործությունների շրջանակում, վարել արդյունավետ վիճակագրություն սշված անձանց նկատմամբ թույլ տրված իրավախախտումների վերաբերյալ, իրականացնել դեպքերի արձանագրում և արդյունավետ քննություն, ինչպես նաև ապահովել տուժողների իրավունքների վերականգնում և վնասների հատուցում:
- Կանխարգելել խոշտանգումները և դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց նկատմամբ ազատագրկման վայրերում, այդ թվում՝ սահմանելով արգելք ու պատիժ նման գործողությունների համար, ապահովելով իրավապահ մարմինների ծառայողների բավարար մասնագիտական պատրաստում ու ազատագրկման վայրերում մշտադիտարկման իրականացում:
- Վերացնել այն օրենքները, որոնք քրեականացնում են նույնասեռ հարաբերությունները:
- Ուղղակի արգելել խտրականությունը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով: Ընդունել խտրականության համապարփակ օրենսդրություն, որը կսահմանի սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հիմք: Երաշխավորել տարբեր ծառայությունների, զբաղվածության և այլ ոլորտների անխտրական հասանելիությունը:

407. Sexual Orientation and Gender Identity in International Human Rights Law, 2012, <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/BornFreeAndEqualLowRes.pdf>

- Երաշխավորել խոսքի, միավորումների և խաղաղ հավաքների ազատությունը ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց համար և այս ազատություններն իրացնող անձանց պաշտպանել բռնությունից:

Ինչպես և մյուս անձանց համար, ԼԳԲՏ և ինտերսեքս անձինք օգտվում են մարդու իրավունքների միջազգային գործիքակազմերով սահմանված բոլոր իրավունքներից: Միևնույն ժամանակ հաճախ խտրական վերաբերմունքի հետևանքով այդ իրավունքները լիարժեք չեն իրականացվում: Հաշվի առնելով ԼԳԲՏ անձանց իրավունքների իրականացման վիճակի գնահատման և թիրախային արձագանքման անհրաժեշտությունը՝ 2016 թ.-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը ձևավորել է Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության գծով անկախ փորձագետի մանդատը<sup>408</sup>:

ԼԳԲՏ և ինտերսեքս անձանց՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով տարբեր իրավունքների խախտումները, ներառյալ խոսքի և միավորումների ազատության, ընտանիքի իրավունքի, խտրականության չենթարկվելու իրավունքի համատեքստում քննարկել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը<sup>409</sup>: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննարկված նման անկյունաքարային դեպքերից է *Օգանեզովան ընդդեմ Հայաստանի*<sup>410</sup> գործը: Այս գործով դատարանը արձանագրել է, որ Հայաստանը ձախողել է պատշաճ կերպով քննել Օգանեզովայի նկատմամբ հոմոֆոբ ատելության դրդապատճառներով կատարված հարձակումներն ու ոտնձգությունները, ակումբի պայթեցման դեպքը, քանի որ նաև հաշվի չի առել այդ արարքների հոմոֆոբ շարժառիթների վերաբերյալ Օգանեզովայի պնդումները:

## 6.7. Էթնիկ, ռասայական, ազգային պատկանելության հիմքով խոցելի վիճակում գտնվող անձինք

Էթնիկ, ռասայական, ազգային պատկանելության հիմքով խտրականությունն ունի խորը արմատներ, իսկ ստրկության, գաղութատիրության, իմպերիալիզմի և ապարտեիդի ժամանակաշրջաններում այլոց գերիշխելու և ենթարկելու նպատակով ձևավորված կառուցակարգերն ու համակարգերը շարունակում են ունենալ իրենց ազդեցությունը մինչ այժմ, չնայած միջազգային և ներպետական համակարգերում առկա ուղղակի կարգավորումներին:

408. Independent Expert on sexual orientation and gender identity, <https://www.ohchr.org/en/special-procedures/ie-sexual-orientation-and-gender-identity>

409. Guide on the case-law of the European Convention on Human Rights. Rights of LGBTI persons, August 2022, [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_LGBTI\\_rights\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_LGBTI_rights_ENG.pdf)

410. Oganeyzova v. Armenia, 2022, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-217250>

Էթնիկ պատկանելությունը, ռասան, ազգությունը, լեզուն փոխկապակցված և համընկնող հասկացություններ են: Ռասայի հասկացությունը արմատավորված է մարդկանց կենսաբանական ենթատեսակների դասակարգման գաղափարի մեջ այնպիսի մորֆոլոգիական առանձնահատկությունների հիման վրա, ինչպիսիք են մաշկի գույնը կամ դեմքի առանձնահատկությունները: Էթնիկ պատկանելությունը ծագում է հասարակության խմբերի գաղափարից, որոնք միավորվում են, մասնավորապես ընդհանուր ազգության, ցեղային պատկանելության, կրոնի, լեզվի կամ մշակույթի և ավանդույթների ծագման ու հետագծի հիման վրա: Իրական կամ ենթադրյալ Էթնիկ պատկանելության հիմքով խտրականությունը ռասայական խտրականության տեսակ է<sup>411</sup>:

Ազգային կամ Էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձինք հաճախ դառնում են բազմակի խտրականության զոհ, ինչպես նաև, ի թիվս այլևսի, նրանք կարող են զրկվել այնպիսի հիմնարար բարիքներից, ինչպիսիք են բնակության վայրը, ունեցվածքը և նույնիսկ ազգային ինքնությունը: Այս հիմքերով խոցելի վիճակում գտնվող անձանց իրավունքների խթանումն ու պաշտպանությունը պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի հարցերի, ինչպիսիք են նրանց գոյության ճանաչումը, նրանց իրավունքների իրականացումն առանց խտրականության, բազմամշակութային և միջմշակութային կրթության խթանումը ազգային և տեղական մակարդակով, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց մասնակցության խթանումը, զարգացման և աղքատության հաղթահարման գործընթացներում նրանց ներառումը:

Նրանց իրավունքների իրականացումը ևս սերտ փոխկապակցված է ինքնության պահպանման և խթանման, աշխատանքային, կրթության, մշակութային իրավունքների հավասար հիմունքներով իրացման, իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու և բնությունից ու անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից հավասար պաշտպանության ապահովման հետ:

Այս հիմքով խոցելի վիճակում գտնվող անձանց իրավունքները ամրագրող առավել ամփոփ իրավական ակտը «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան է<sup>412</sup>, որը մարդու իրավունքների բնագավառում ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերից առաջինն էր Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո և կոչված էր արձագանքելու ազգային հիմքով անհանդուրժողականության խորը ճգնաժամին: Մասնակից պետությունների կողմից Կոնվենցիայի պահանջների կատարումը վերահսկում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն<sup>413</sup>:

411. Sejdíć and Finčić v. Bosnia and Herzegovina, 2009, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96491>

Timishev v. Russia, 2005, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-71627>

412. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիա, 1965 թ. դեկտեմբերի 21, <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-elimination-all-forms-racial>  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75843>

413. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, <https://www.ohchr.org/en/treaty-bodies/cerdc>

Եվրոպայի խորհրդի շրջանակներում 1994 թ.-ից գործում է Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը<sup>414</sup>, որն անկախ փորձագետներից կազմված մարդու իրավունքների մշտադիտարկման մարմին է՝ մասնագիտացած ռասիզմի, խտրականության (ռասայի, Էթնիկ/ազգային ծագման, մաշկի գույնի, քաղաքացիության, կրոնի, լեզվի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով), այլատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության ոլորտում: Հանձնաժողովն իր ընդհանուր քաղաքականության հանձնարարականների և մշտադիտարկման զեկույցների միջոցով մեկնաբանում է, արձանագրում է իրավիճակն ու նախանշում այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկեն պետությունները՝ անձանց իրավունքների պաշտպանությունն առանց խտրականության ապահովելու նպատակով:

Եվրոպայի խորհրդի տարածաշրջանում քննարկվող հիմքով խտրականության և իրավունքների հարցերը լայնորեն մեկնաբանվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ խտրականության, ռասայական պրոֆիլավորման<sup>415</sup>, ներգաղթի<sup>416</sup>, ատելության խոսքից պաշտպանության, բռնության, ներառյալ ոստիկանության կողմից կիրառված բռնության, կրթության և այլ իրավունքների պաշտպանության համատեքստերում<sup>417</sup>: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ ռասայական կամ Էթնիկ պատկանելության հիման վրա տարբերակված մոտեցման օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորումը պետք է մեկնաբանվի հնարավորինս խիստ կերպով<sup>418</sup>: Դատարանը արձանագրել է, որ բացառապես կամ որոշիչ աստիճանի անձի Էթնիկ պատկանելության վրա հիմնված տարբերակված վերաբերմունքը չի կարող օբյեկտիվ կերպով հիմնավոր համարվել ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում, որը հիմնված է բազմակարծության և տարբեր մշակույթների նկատմամբ հարգանքի վրա<sup>419</sup>:

Միևնույն ժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կրթության հավասար իրավունքի համատեքստում լեզուն մեկնաբանելով որպես մշակութային ինքնության, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բաղադրիչ<sup>420</sup>, չի ճանաչել հանրային հաստատությունների հետ հաղորդակցման ընթացքում սեփական նախընտրած լեզուն օգտագործելու և այդ լեզվով պատասխան ստանալու իրավունքը<sup>421</sup>:

414. Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով,

<https://www.coe.int/en/web/european-commission-against-racism-and-intolerance>

415. Racial profiling. Factsheet, [https://www.echr.coe.int/Documents/FS\\_Racial\\_profiling\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/FS_Racial_profiling_ENG.pdf)

416. Guide on the Case-law of the European Convention on Human Rights. Immigration,

[https://www.echrcoe.int/Documents/Guide\\_Immigration\\_ENG.pdf](https://www.echrcoe.int/Documents/Guide_Immigration_ENG.pdf)

417. Guide on Article 14 of the European Convention on Human Rights and on Article 1 of Protocol No. 12 to the Convention,

[https://www.echrcoe.int/Documents/Guide\\_Art\\_14\\_Art\\_1\\_Protocol\\_12\\_ENG.pdf](https://www.echrcoe.int/Documents/Guide_Art_14_Art_1_Protocol_12_ENG.pdf)

418. Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina, 2009, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96491>

419. D.H. and Others v. the Czech Republic, 2006, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-72317>

420. Belgian linguistic case., 1968, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57525>

421. Guide on Article 14 of the European Convention on Human Rights and on Article 1 of Protocol No. 12 to the Convention,

[https://www.echrcoe.int/Documents/Guide\\_Art\\_14\\_Art\\_1\\_Protocol\\_12\\_ENG.pdf](https://www.echrcoe.int/Documents/Guide_Art_14_Art_1_Protocol_12_ENG.pdf)

### **Հարցեր լսարանին**

1. Որո՞նք են անձի կամ խմբերի՝ խոցելի վիճակը ճանաչելու հիմնական մարտահրավերները, և ինչպե՞ս կարող է խոցելի վիճակի արձանագրումը նպաստել անձի իրավունքների լիարժեք իրականացմանը:
2. Կանանց, երեխաների, տարեց, հաշմանդամություն ունեցող անձանց կամ այլ խմբերի իրավունքների սահմանափակման ի՞նչ օրինակների եք ակա-նատես եղել. խոսքն այն դեպքերի մասին է, երբ սահմանափակումը տեղի է ունեցել այդ անձանց՝ խոցելի վիճակում գտնվելու հետևանքով: Ի՞նչ կառու-ցակարգերով են պաշտպանվում այդ իրավունքները:

ԳԼՈՒԽ 7.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ  
ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ



## 7.1. Ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ բռնությունը՝ որպես մարդու իրավունքների խախտում

Այս գլխում ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության հետ կապված պետության ունեցած պոզիտիվ պարտավորությունները ներկայացվում են բռնության՝ զոհի և բռնարարի միջև առկա հարաբերությունների բնույթով պայմանավորված առանձնահատկությունների լույսի ներքո՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ պարտավորություններն արդեն իսկ մանրամասն քննարկվել են խոշտանգումների և համանման դրսևորումների բացարձակ արգելքի վերաբերյալ գլխում: Այդ պարտավորությունները քննարկվում են՝ ելնելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված առավել վերաբերելի միջազգային պայմանագրերի պահանջներից: Դրանցից են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան և դրա համապատասխան հոդվածների մեկնաբանման արդյունքում ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված Նախադեպային դիրքորոշումները, ինչպես նաև այլ միջազգային իրավական գործիքներ: Ներկայացվելու են բռնության ձևերը, տուժողների խոցելիության գնահատման, նրանց պաշտպանության մեխանիզմները, այս ոլորտում պետության կողմից զոհակենտրոն քաղաքականության մշակելու և իրականացնելու կարևորությունը, որը ամրագրված է միջազգային իրավական դրույթներով:

### Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում հիմնական միջազգային աղբյուրները

Այս ոլորտում հիմնական միջազգային իրավական գործիքն է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (ընդունվել է 2011 թ.-ի ապրիլի 7-ին, ուժի մեջ է մտել 2014 թ.-ի օգոստոսի 1-ին, այսուհետ՝ նաև Ստամբուլյան կոնվենցիա<sup>422</sup>), որը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2018 թ.-ի հունվարի 18-ին, սակայն դեռևս վավերացված չէ: Նախքան Ստամբուլյան կոնվենցիայի ընդունումը կանանց նկատմամբ բռնության հարցերով մարդու իրավունքների միակ բազմակողմ պայմանագիր էր «Կանանց նկատմամբ բռնությունը կանխելու, պատժելու և վերացնելու մասին» 1994 թ.-ի կոնվենցիան (Բելեմ դու Պարայի կոնվենցիա, Belém do Pará Convention<sup>423</sup>), որն ամրագրում է պետությունների պարտավորությունները գենդերային հիմքով բռնության առնչությամբ: Այնուհետ ավելի ընդգրկուն փորձ կատարեց Եվրոպայի խորհուրդը, երբ Ես Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի AD HOC հանձնաժողովի (CAHVIO, ԿԱՎԻՈ) կողմից Նախապատրաստվեց և 2011 թ.-ի ապրիլի 7-ին Ես Նախարարների խորհրդի կողմից ընդունվեց Ստամբուլյան կոնվենցիան:

422. <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210?module=treaty-detail&treatynum=210>

423. Ընդունվել է Ամերիկյան պետությունների կազմակերպության կողմից (Organisation of American States, OAS), ուժի մեջ է մտել 1995 թ.-ի մարտի 5-ին:

Հենց սկզբից անհրաժեշտ է նշել, որ չնայած նշված կոնվենցիան վավերացված չէ և հետևաբար պարտադիր չէ Հայաստանի համար, պարտադիր են, սակայն, ՄԻԵԴ-ի այն նախադեպերը, որոնք ընկած են այդ կոնվենցիայի հիմքում: Այս ոլորտում ՄԻԵԴ-ի նախադեպերի վերաբերելիության և պարտադիրության հետ կապված պետք է նշել երկու կարևոր հանգամանք.

- ՄԻԵԴ-ի ձևավորած նախադեպային իրավունքը որպես Ստամբուլյան կոնվենցիայի ստեղծման հիմք նշվում է հենց վերջինիս բացատրական զեկույցում<sup>424</sup> (այս գլխում այսուհետ՝ նաև Չեկույց, ընդունվել է Կոնվենցիան ընդունած նույն մարմնի կողմից նույն օրը՝ 2001 թ.-ի ապրիլի 7-ին): ՄԻԵԴ-ի նախադեպային դիրքորոշումներն իրոք խտացված ձևով արտահայտվել են Կոնվենցիայում, և դրանց բազմաթիվ հղումներ է անում Չեկույցը:
- Ստամբուլյան կոնվենցիան վավերացված չէ, սակայն Հայաստանի համար պարտադիր են ՄԻԵԴ-ի այն բոլոր նախադեպային դիրքորոշումները, որոնք ընկած են Կոնվենցիայի մշակման հիմքում: ՄԻԵԴ-ը չունի հստակ տարանջատում, թե Կոնվենցիայի որ հոդվածների ներքո պետք է դիտարկվի ընտանեկան բռնությունը, հիմնականում, ըստ հետևանքների, կիրառվում են 2-րդ հոդվածը (կյանքի իրավունք), 3-րդ հոդվածը (խոշտանգումների արգելում) ինչպես հոգեբանական տրավմայի, այնպես էլ մարմնական վնասվածքների իմաստով, 8-րդ հոդվածը (Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք) և 14-րդ հոդվածը (խտրականության արգելում)՝ առանձին դեպքերում ինքնուրույն, սակայն հիմնականում թվարկված հոդվածների հետ միասին վերցրած<sup>425</sup>:

Ընդ որում, ինչպես գիտենք, ՄԻԵԴ-ի նախադեպերը պետության համար պարտադիր են՝ անկախ նրանից, թե որ երկրին առնչվող գործով են դրանք արտահայտվել: Չեկույցի 163-րդ կետում ուղիղ նշվում է, որ.

«Այս հարցն ուսումնասիրելիս և հաշվի առնելով այն, որ Դատարանը տալիս է Կոնվենցիայի .... իրավունքների և ազատությունների նախադեպային մեկնաբանությունը, Դատարանը քննության է առնելու, թե արդյոք ազգային իշխանությունները բավարար չափով հաշվի են առել Դատարանի կողմից **թեկուզ այլ պետությունների վերաբերյալ գործերով կայացված վճիռներից բխող սկզբունքները**»:

**Այդ վճիռներից իր ուրույն տեղն է զբաղեցնում վերը արդեն վկայակոչված Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԴ-ի կողմից 2009 թ.-ի վճիռը**, որին վերաբերելի դիրքո-

424. <http://conventions.coe.int/Treaty/EN/Reports/Html/210.htm>

425. Որոշ գործերի կոնկրետ հանգամանքներում պետությունների՝ Կոնվենցիայի ներքո ունեցած պոզիտիվ պարտավորությունները կարող են տարբերվել և անհրաժեշտ դարձնել նաև 2-րդ և 3-րդ հոդվածների կիրառումը, մինչդեռ մյուս գործերով Դատարանը կարող է հենվել 8-րդ հոդվածի վրա՝ ինքնուրույն կամ 3-րդ հոդվածի հետ միասին վերցրած (տես վերը նշված Բևաքուան և Ս-ն ընդդեմ Բուլղարիայի (Bevacqua and S. v. Bulgaria, 12.06.2008, կետ 65, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-86875%22%7D>): Այս գործով Դատարանը հենվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վրա՝ կապված դիմումատուին և նրա որդուն նախկին ամուսնու ազդեցիկ վարքագծից պաշտպանելու պետության պոզիտիվ պարտավորության հետ: Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով վճռում (կետ 72-86) Դատարանը հենվել է Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և անգամ 14-րդ հոդվածների վրա՝ կապված մարդկանց ընտանեկան բռնությունից պաշտպանելու պետության պոզիտիվ պարտավորության հետ: Արդեն վկայակոչված Օսմանի գործով (կետ 128-130) Դատարանը կիրառել է Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածները՝ կապված երկրորդ դիմումատուի և նրա հոր կյանքը ենթադրյալ իրական և իմացյալ վտանգից պաշտպանելու ուղղությամբ համարժեք և անհրաժեշտ քայլեր կատարելու պետության պոզիտիվ պարտավորության հետ»:



րոշումները արդեն իսկ կարևոր դեր են կատարում մեր երկրի օրենսդրության զարգացման տեսանկյունից: Մասնավորապես տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու դեպքում քրեական հետապնդումը շարունակելու հնարավորությունը, որը նախատեսված է ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով, հենց այս նախադեպի հետևանք է: Տվյալ վճռի այս և այլ՝ ՀՀ օրենսդրության և պրակտիկայի վրա ունեցած ազդեցության դրսևորումների մասին առանձին կիսովի այս գլխի հաջորդ կետերում:

## **Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում պետության պոզիտիվ պարտավորությունները**

Պետության պարտավորություններն այս ոլորտում չեն տարբերվում խոշտանգումների անչվող պարտավորություններից, քանի որ ՄԻԵԴ-ը չի տարանջատում, թե Կոնվենցիայի ո՞ր հոդվածների ներքո պետք է դիտարկվի ընտանեկան բռնությունը, և, ըստ դրա հետևանքների, կիրառվում են ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածները կամ 14-րդ հոդվածը՝ ինքնուրույն կամ նշված հոդվածների հետ միասին վերցրած: Այդ պոզիտիվ պարտավորություններն են.

1. ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության՝ որպես մարդու իրավունքի խախտման առավել ծանր դրսևորումների քրեականացումը.
2. նշված բռնության՝ պետությանը հայտնի վտանգի նյութականացումը կանխելու պետության պարտավորությունը.
3. արդյունավետ և անկախ քննության իրականացումը առկա դեպքերի առթիվ.
4. մեղավոր անձանց նկատմամբ բավականաչափ զսպող, արդյունավետ և համաչափ պատիժների նշանակումն ու իրագործումը.
5. բռնության զոհերին պատճառված վնասի հատուցումը:

Խոշտանգման արգելքի հետ ունեցած ընդհանրությունից ելնելով՝ վերը նշված պարտավորությունները սույն գլխում կներկայացվեն բացառապես ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում դրանց առանձնահատկությունները ցույց տալու համար: Այդ առանձնահատկություններն առավել ցայտուն կերպով դրսևորվում են բռնության տարբեր ձևերի քրեականացման, բռնության վտանգի կանխման և բռնության դեպքերի արդյունավետ քննության պարտավորությունների հետ կապված, ինչը պայմանավորված է ընտանեկան բռնության և կանանց դեմ բռնության էությանը, որի հիմքում բռնության զոհի և բռնարարի միջև եղած հատուկ հարաբերությունների բնույթն է: Հենց վերջինիցս էլ բխում է խտրականության արգելքի առավել վերաբերելիությունը այս գործերին, ինչպես նաև վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի արգելումը՝ դարձյալ պայմանավորված բռնության զոհի խոցելի կարգավիճակով, ինչպես նաև բռնության զոհին հետագա թիրախավորումից և կրկնակի զոհականացումից պաշտպանելու անհրաժեշտությունը:

## **Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության՝ որպես մարդու իրավունքի խախտման առավել ծանր դրսևորումների քրեականացումը**

Ինչպես և խոշտանգման արգելքի դեպքում, այս պարտավորության նպատակն է ապահովել, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ծանր խախտումները արդյունավետ կերպով հետապնդելի լինեն: 2021 թ.-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը *ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության* առանձին հանցակազմ չի նախատեսում: Փոխարենը ընտանեկան բռնության հնարավոր առավել ծանր դրսևորումները ցրված են համապատասխան հանցավոր արարքների նկարագրության մեջ՝ հիմնականում որպես մեղքը ծանրացնող հանգամանքներ: Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության առանձին դրսևորումներ քրեականացված են ՀՀ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-5-րդ և 9-րդ մասերում, 197-199-րդ հոդվածներում, 258-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերում, 260-րդ հոդվածում, 263-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում:

Վկայակոչված հոդվածների նկարագրությունները հիմնականում արտահայտում են դրանց քրեականացման անհրաժեշտությունը: Սանկցիաների մասով ուրախալի է, որ դրանցից որոշները՝ առավել ծանր դրսևորումներով, պատժվում են ազատազրկմամբ՝ 5-ից ավելի տարի ժամկետով, այսինքն՝ համարվում են ծանր հանցագործություն: **Դրական է նաև, որ դրանց համար նախատեսված է միայն ազատազրկում բացառելով այլընտրանքային պատժատեսակները:** Սանկցիաների մասով վերաբերելի են խոշտանգումների վերաբերյալ գլխում **194-196-րդ հոդվածներով նախատեսված արարքների (Ֆիզիկական բռնություն, հոգեբանական բռնություն, Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) կապակցությամբ արդեն իսկ արտահայտած** մտահոգությունները: Այս կետում վերհիշենք մասնավորապես առավել վերաբերելի այն բացը, որ, ըստ 194-րդ հոդվածի (Հոգեկան ներգործությունը), **հղի կնոջ նկատմամբ սպանության սպառնալիքը՝ այն իրականացնելու իրական վտանգի առկայության դեպքում, ընդամենը պատժվում է առավելագույնը երկու ամիս ազատազրկմամբ, իսկ նվազագույնը՝ 20 հազար դրամ տուգանքով:**

## **Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության՝ պետությանը հայտնի վտանգի նյութականացումը կանխելու պարտավորությունը**

Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության ծանր դրսևորումների կանխման ուղղությամբ պետության ունեցած պոզիտիվ պարտավորության հիմնական առանձնահատկությունն այն է, որ գրեթե բոլոր դեպքերում այդ ծանր դրսևորումները նախկինում դրսևորված բռնության նվազ ծանր դրսևորումների հանգուցալուծում են: Գրեթե միշտ նախքան կյանքի իրավունքի և խոշտանգման ու համանման վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի խախտումների ի հայտ գալը տեղի է ունենում նախ՝ հոգեբանական բռնություն, այնուհետև՝ ֆիզիկական բռնության նվազ ծանր դրսևորումներ, որոնք, անպատիժ մնալով, ընտանեկան բռնության բնույթից բխող այսպես կոչված

պարույրածն ուժգնացման հետևանքով այնուհետև հանգեցնում են զոհի համար անդառնալի հետևանքների՝ սպանության, խեղման և այլն:

Նշվածի ուժով **պետությունը գրեթե միշտ զրկված է այս դեպքերով բռնության ծանր դրսևորումների վտանգի մասին իր անտեղյակությունը ապացուցելու հնարավորությունից**: Հակառակը, միջազգային իրավական չափորոշիչները պահանջում են, որ պետությունը հակազդող միջոցներ ձեռնարկի բռնության նվազ ծանր դրսևորումների փուլում կանխելով դրա հանցավոր դրսևորումները: Հայաստանի Հանրապետությունում այդ հակազդման միջոցներն ամփոփված են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի (ընդունվել է 2017 թ.-ի դեկտեմբերի 13-ին) համապատասխան հոդվածներում:

Մասնավորապես կարևոր են նշված օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածները, որոնցով համապատասխանաբար նախատեսվում են **ոստիկանության կողմից անհետաձգելի միջամտության, իսկ դատարանի կողմից՝ պաշտպանական որոշում կայացնելու հիմքերը և կարգը**: Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողը պարտավոր է անհապաղ որոշում կայացնել մինչև 20 օր ժամկետով **անհետաձգելի միջամտության մասին**: Նաև այդպիսի որոշում կարող է կայացվել այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

Ի թիվս այլ սահմանափակումների՝ այդ որոշմամբ ընտանիքում բռնություն գործադրած անձին կարելի է.

«1) հարկադրել անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը,

2) արգելել այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր,

3) արգելել այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին՝ սահմանելով հեռավորության կոնկրետ չափը, և

5) արգելել հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նրա խնամքի տակ եղած անձանց հետ»:

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում է, որ **պաշտպանական որոշումը կայացվում է դատարանի կողմից՝** ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնի դիմումի հիման վրա՝ մինչև 6 ամիս ժամկետով՝ 2 անգամ գործողության ժամկետը առավելագույնը 3 ամսով երկարացնելու հնարավորությամբ՝ ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառելով, վերը թվարկված սահմանափակումներից բացի, նաև հետևյալ սահմանափակումները.

«5) պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղող անձանց խնամքի ծախսերը՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված ալիմենտային պարտավորությունների համար վճարման ենթակա գումարի չափով,

6) անհրաժեշտության դեպքում արգելել երեխաների հետ տեսակցությունները, և

.... 8) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու ռեաբիլիտացիոն ծրագիր»:

Բնականաբար, նշված նորմերը ենթադրում են, որ արդյունավետ միջոցներ պետք է կիրառվեն այս հրահանգները չկատարելու համար, այսինքն՝ քրեականացվի դրանց չկատարումը և այն **հանդիսանա ու հետապնդվի որպես առանձին հանցագործություն կամ արդյունավետ, համաչափ և զսպող սանկցիա առաջացնող այլ բնույթի խախտում** անգամ այն դեպքերում, երբ պաշտպանության հրամանի խախտումը հանգեցրել է մեկ այլ հանցագործության, օրինակ՝ հանցավորը մոտեցել է տուժողին արգելված տարածության վրա և վնասել գույքը, պատճառել մարմնական վնասվածք և այլն: Այս դրույթը բխում է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից և նախատեսված է ինչպես **Ստամբուլյան կոնվենցիայի 52-րդ հոդվածով, որի համաձայն (մաս 3-րդ)**՝ «Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու սույն հոդվածի 1-ին մասի համաձայն արձակված արգելող կամ պաշտպանության կարգադրության պահանջների խախտումների պատժելիությունը **քրեական կամ իրավական բնույթի այլ արդյունավետ, համաչափ և զսպող պատժամիջոցներով**», այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքով, որի 508-րդ հոդվածը (Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը) սահմանում է հետևյալը.

«1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև

8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված պահանջն ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից չկատարելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

Պետք է նշել, որ չնայած ուրախալի է նշված արարքների քրեականացումը, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ պատիժները բավականաչափ զսպող չեն՝ հաշվի առնելով այն, թե ինչպիսի գործողությունների համար կարող են կիրառվել անհետաձգելի միջամտության որոշումը և պաշտպանական որոշումը, ինչպես նաև այն, որ, ըստ էության, հաշվի չի առնվել, որ առաջին որոշումը կայացվում է ոստիկանի, իսկ երկրորդը՝ դատարանի կողմից, որի որոշումը չկատարելը պետք է համարվի առավել ծանր հանցագործություն՝ ավելի խիստ պատժամիջոց նախատեսելով:

Այս ոլորտում բռնության ծանր դրսևորումների կանխման պարտավորության հետ կապված անհրաժեշտ է նշել, որ պետությունը պետք է պատշաճ ջանասիրություն գործադրի՝ նշված վտանգը, այն է՝ դրա ռեալությունը և անմիջական լինելը գնահատելու ուղղությամբ, ինչը բխում է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից: Երբեմն ընտանեկան բռնության և ոչ միայն այդ գործերով պատասխանող պետություններն իրենց մարմինների անգործությունը փորձում են արդարացնել նրանով, որ տուժողը չի կատարել իրեն սպառնացող վտանգի ռեալ լինելը ապացուցելու՝ իբրև թե տուժողի վրա դրված պարտականությունը: Այսպես, Օփուզի գործով դիմումատուի մոր կողմից պաշտպանության խնդրանքով ներկայացված դիմումի առթիվ Թուրքիայի Կառավարությունը պնդել էր, որ.

«124. ... այդ դիմումն իր բովանդակությամբ չէր տարբերվում նախորդներից և ընդհանուր բնույթի էր: Չկար որևէ ծանրակշիռ փաստ կամ կոնկրետ վկայություն այն բանի, որ նրա կյանքը իրոք գտնվում էր վտանգի տակ: Իր դիմումի մեջ մայրը ընդհանրապես չի միջնորդել որևէ պաշտպանական միջոց ձեռնարկել, այլ պարզապես խնդրել է արագորեն քննել իր բողոքը և պատժի ենթարկել դիմումատուի ամուսնուն: Այնուամենայնիվ, 2002 թ.-ի փետրվարի 27-ի դիմումն ստանալուց հետո, իշխանությունները գրանցել են այն, հետագայում 2002թ. մայիսի 27-ին տեղի է ունեցել դատական նիստ, որին հաջորդել են այլ նիստեր ևս: Վերջապես, դիմումատուի մորը սպանելուց հետո Հ.Օ-ն դատապարտվել է և ստացել ծանր պատիժ»:

Այդ պնդմանը ՄԻԵԴ-ն արձագանքեց (կետ 147-րդ)՝ իրականում այս գործերով քրեական վարույթի ընթացքի հետ կապված **գոհակենտրոն մոտեցման և դրա՝ բռնարարի իրավունքների նկատմամբ գերակայության սկզբունքը սահմանելով**, այն է, որ **ընտանեկան բռնության գործերով կատարողների իրավունքները չեն կարող գերակայել տուժողների կյանքի և ֆիզիկական ու հոգեբանական անձեռնմխելիության մարդու իրավունքների նկատմամբ:**

հնչալես խոշտանգման դեպքում Էր, այս գործերով ևս ՄԻԵԴ-ը կանխման պոզիտիվ պարտավորության առաջացումը և պետության կողմից այդ վտանգին արձագանքելու պատշաճությունը կամ ջանասիրությունը կապում Է կոնկրետ գործի հանգամանքների հետ:

**Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության՝ զոհի և բռնարարի միջև առկա հարաբերությունների բնույթով պայմանավորված առանձնահատկությունները: Չոհերի խոցելիություն, երեխաների իրավունքներ, խտրականության հարցեր**

Այս վերնագրում նշված առանձնահատկություններից առավել կարևորներն են՝ բռնության տվյալ տեսակի դրսևորումների զոհի խոցելի վիճակը, նրա կողմից իր սկզբնական բողոքից հրաժարվելու միջոցով քրեական հետապնդումը շարունակելու վրա ազդելու հնարավորությունը, ընտանեկան վեճերն ու բռնությունը ներընտանեկան խնդիր դիտարկելը, տուժողի այսպես կոչված «վիկտիմ» կամ պրովոկացիոն վարքագծին դատավարական նշանակությունը տալը, այս բռնության գործադրման հիմքում ու դրա դրսևորումների դեմ պայքարում որոշակի խտրականության առկայությունը և այդ դրսևորումների դեմ պայքարում երեխաների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը: Այժմ քննարկենք այս առանձնահատկություններն առանձին-առանձին:

**Տուժողի խոցելի վիճակը և նրա կամահայտնության նշանակությունը**

Ընտանեկան բռնության դեպքերով **կարևորագույն** առանձնահատկությունն Է այն, որ **բռնության զոհը գրեթե միշտ գտնվում Է խոցելի վիճակում**, նյութական կամ այլ կախվածություն ունի բռնարարից: Հենց սա հաշվի առնելով Է, որ նշված օրենքի 10-րդ հոդվածը (Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցումը), նախատեսելով զոհի և բռնարարի միջև նրանից մեկի՝ աջակցության կենտրոնին ուղղված դիմումով հաշտեցման գնալու հնարավորություն, սահմանում Է նաև (մաս 2-րդ), որ «մինչև գործընթացն սկսելը աջակցության կենտրոնն ստանում Է հաշտեցմանը մասնակցելու՝ մյուս կողմի գրավոր համաձայնությունը», և «**աջակցության կենտրոնը դադարեցնում Է հաշտեցման գործընթացը, եթե առկա Է հիմնավոր ենթադրություն, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը դրան մասնակցում Է սպառնալիքների ազդեցության ներքո**»:

Նշված խոցելի վիճակն հաշվի առնելու մեկ այլ օրենսդրական դրսևորում Է արդեն քրեական վարույթի հետ կապված այն կարգավորումը, որ եթե անգամ տուժողը հետ Է վերցնում իր բողոքը, պետական մարմինները ամեն դեպքում, **անկախ քրեական հետապնդումը շարունակելու հնարավորությունից**, պարտավոր են միջոցներ ձեռնարկել տուժողի կրկնակի զոհականացումը (վիկտիմացում՝ victim- զոհ բառից) թույլ չտալու համար՝ միաժամանակ գնահատելով տուժողի կողմից հրաժարման կամավորությունն

ու հետևանքների գիտակցման փաստը, ինչի մասին կխոսվի ստորև: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 11-րդ հոդվածի (Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը) 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի<sup>426</sup> 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է մասնավոր կարգով, իսկ մյուս բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

... 4. Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով՝

### 1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, **եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը**»:

Մեջբերված իրավակարգավորումները միանշանակ պետք է ողջունելի համարել, քանի որ դրանց անհրաժեշտությունը բխել է պրակտիկայից և ՄԻԵԴ-ի նախադեպային դիրքորոշումներից՝ արտահայտելով ընտանեկան բռնության զոհերի խոցելի վիճակը: Մասնավորապես խոսքը վերաբերում է նրան, որ ընտանեկան բռնության զոհերը հաղորդում ներկայացնելուց հետո գրեթե միշտ հրաժարվում էին իրենց բողոքից, ինչի արդյունքում ենթադրյալ բռնարարի նկատմամբ վարույթը օրենքի ուժով անմիջապես դադարեցվում էր: Այսինքն՝ տուժողը ուներ «վետոյի իրավունք» քրեական վարույթի նկատմամբ և վարույթի ցանկացած փուլում իր սեփական կամահայտնությամբ կարող էր վետո (veto - արգելք) դնել այն շարունակելու վրա: Բռնության զոհի նման լիազորվածությունը անթույլատրելի էր, քանի որ **խոցելի վիճակում անձին նման իրավունքներ վերապահելը թիրախավորում է նրան ևս մեկ անգամ, այն է՝ ենթադրյալ բռնարարը՝ սպառնալիքների և այլ անթույլատրելի եղանակներով ստիպում է իր զոհին հրաժարվել բողոքից**: Ավելին, տուժողի վիճակն էլ ավելի է բարդանում. չէ՞ որ, բողոք ներկայացնելով, նա ավելի մեծ թշնամանք է առաջացնում իր նկատմամբ:

Մյուս կողմից, նշված հեռանկարը հաշվի առնելով, քննչական մարմինները շատ դժկամորեն էին վարույթ նախաձեռնում և ձեռնամուխ լինում գործի քննությանը՝ հաշվի առնելով տուժողի կողմից հետագայում գրեթե մշտապես հաշտվելու և արդեն իսկ իրականացվող վարույթի շարունակման վրա վետո դնելու պրակտիկան:

426. Հոդված 15. Քրեական պատասխանատվությունը հանցագործությունից տուժածի քրեական հայցի հիման վրա:

Այս առումով կարևոր է այն, որ դատախազը, որպես ցանկացած հանցագործության համընդհանուր տուժող հասարակության<sup>427</sup> ներկայացուցիչը, հնարավորություն է ստանում ստուգելու ընտանեկան բնության գոհի խոցելի վիճակը և վարույթը չջարունակելու առթիվ տուժողի արտահայտած կամահայտնության ազատությունը: Սա բխում է *Օփուզն ընդդեմ Թուրքիայի* գործով ՄԻԵԴ-ի այն նախադեպային դիրքորոշումից (կետ 143-րդ), որ իշխանությունների կողմից պետք է քննության առևժեռ բողոքները հետ վերցնելու շարժառիթները:

Հենց տուժողի նշված լիազորվածության և հետագա թիրախավորման փոխկապակցվածությունն է պատճառը, որ նույն *Օփուզի գործով* ՄԻԵԴ-ը, նշելով, որ հետապնդումը շարունակելու վերաբերյալ պետական մարմինները պետք է ունենան հայեցողություն և, որպես այդ հայեցողության իրացման չափանիշ, առանձնացնելով հանցավորի նախկին ոչ իրավաչափ գործողությունների պատմությունը, արձանագրել է.

«139. ...որքան մեծ է կրկին հանցագործություն կատարելու վտանգը, այնքան ավելի հավանական է, որ քրեական հետապնդումը պետք է շարունակվի հանուն հանրային շահի՝ անգամ տուժողի կողմից իր բողոքը հետ վերցնելու դեպքում»:

Փաստորեն ՄԻԵԴ-ն ընդունում է, որ անգամ եթե իրավախախտ գործողությունը քրեական հետապնդման չի արժանացել տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու պատճառով, այսինքն՝ որպես փաստ չի հաստատվել, այն կարող է, նոր իրավախախտման կամ դրա վտանգի հետ միասին վերցրած, քրեական նոր հետապնդում իրականացնելու հիմք լինել: Արդյունքում ՄԻԵԴ-ը, **վարույթը անկախ տուժողի դիրքորոշումից շարունակելու և այդպիսով՝ արդյունավետ քննություն իրականացնելու պետության պոզիտիվ պարտավորությունը** կապելով բնության ծանր դեպքերը կանխելու մեկ այլ պարտավորության հետ, նույն գործով նշեց (կետ 136-րդ), որ «**այնպիսի ողջամիտ միջոցներ չձեռնարկելը, որոնք կարող էին ունենալ հանգուցալուծումը փոփոխելու կամ վնասը մեղմացնելու հեռանկար, բավարար է՝ պետության պատասխանատվություն առաջացնելու համար**» և որ (կետ 153-րդ) «այն պահից սկսած, երբ իրավիճակը ներկայացվում է ազգային մարմինների ուշադրությանը, ազգային մարմինները չեն կարող վկայակոչել տուժողի դիրքորոշումը՝ ի հիմնավորում նրա, որ իրենք չեն ձեռնարկել այնպիսի բավարար միջոցներ, որոնք կարող էին կանխել բնարարի կողմից տուժողի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ արված սպառնալիքներն ի կատար ածելու հավանականությունը»:

ՄԻԵԴ-ի վկայակոչված դիրքորոշումների հիման վրա՝ *Օփուզի գործով* վճռի կայացումից հետո երկու տարի անց ընդունված Ստամբուլյան կոնվենցիան (**Հոդված 55. Մասնավոր և հանրային մեղադրանքի վարույթներ**) նույնպես արձանագրեց.

«1. .... պետությունները պետք է ապահովեն, որպեսզի .... սույն կոնվենցիայի .... համաձայն նախատեսված հանցագործությունների քննությունն ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը լիովին կախված չլինեն տուժողի կողմից հա-

427. Гегель, Философия права, էջ 258:



ղորդում կամ բողոք ներկայացնելու փաստից, և որպեսզի արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող վարույթները հնարավոր լինի շարունակել անգամ տուժողի կողմից իր ցուցմունքներից կամ բողոքից հրաժարվելու դեպքում»:

Ինչպես նկատեցինք, ՄԻԵԴ-ը պահանջում է, որ պետությունը, ընտանեկան բռնության գոհի կողմից բողոքը հետ վերցնելու դեպքում մեխանիկորեն չդադարեցնի քրեական հետապնդումը, այլ ստուգի տուժողի կամահայտնության շարժառիթները: Բնականաբար, սա մեծ հայեցողություն է ընձեռում դատախազներին: Նման հայեցողությունը կամայականության վերածվելը թույլ չտալու համար ՄԻԵԴ-ի կողմից ի դեմս Նույն *Օփուզի գործի* նշվել է (կետ 138-րդ), որ «գոյություն ունեն որոշակի գործոններ կամ չափանիշներ, որոնք կարող են հաշվի առնել քրեական հետապնդումը շարունակելու մասին հարցը լուծելիս՝ հանցանքի ծանրությունը, արդյո՞ք տուժողին պատճառվել է ֆիզիկական թե՛ հոգեբանական վնաս, արդյո՞ք մեղադրյալի կողմից գործադրվել է զենք, թե ոչ, արդյո՞ք հարձակումից հետո որևէ սպառնալիքներ են արվել մեղադրյալի կողմից, արդյո՞ք մեղադրյալը պլանավորել է հարձակումը, թե ոչ, բռնության՝ տանը ապրող երեխաների վրա ունեցած ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), մեղադրյալի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը, շարունակական վտանգի առկայությունը տուժողի կամ մեկ այլ անձի առողջության կամ անվտանգության համար, ով ներգրավված է եղել կամ կարող էր ներգրավված լինել միջադեպին, մեղադրյալի հետ տուժողի փոխհարաբերությունների ներկայիս վիճակը, տուժողի կամքին հակառակ քրեական հետապնդումը շարունակվելու ներգործությունը այդ փոխհարաբերությունների վրա, փոխհարաբերությունների վիճակը նախկինում, մասնավորապես արդյո՞ք նախկինում գործադրվել է բռնություն, թե ոչ, և մեղադրյալի նախկինում հանցանք կատարած լինելը, հատկապես՝ բռնության գործադրմամբ»:

ՄԻԵԴ-ի մեջբերված դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ Նոր ԶԴՕ-ի վկայակոչված իրավակարգավորումները իրենց հերթին բխում են իրավունքի փիլիսոփայությունից՝ արտահայտելով *հանցագործություն* հասկացության բուն էությունը, այն է՝ արարք, որն ուղղված է հասարակության մեջ ընդունված և պաշտպանվող հարաբերությունների դեմ, այսինքն՝ արարք, որից տուժում է հանրությունը՝ ամբողջությամբ, այլ ոչ թե միայն կոնկրետ բռնության զոհ հանդիսացած անձը կամ անձինք: Հակառակ դեպքում ստիպված ենք լինելու ընդունել, որ քրեական պատիժը ոչ թե սոցիալական պաշտպանության միջոց է, այսինքն՝ հանրության արձագանքը իր արժեքների դեմ ոտնձգող առանձին անհատների նկատմամբ, այլ տուժողի վրեժխնդրության գործիք, որը պետության իրավասու մարմինների կողմից գործադրվում է Նույն տուժողի կամքով, ինչն ավելի վտանգավոր է այդ Նույն հանրության համար՝ խոցելի վիճակում գտնվող տուժողի բացարձակ վերահսկողության և թույլտվության պայմաններում:

Պատիժը հենց նրանով է իրավական, հետևաբար և՛ օրինական, որ արտահայտում է ամբողջ հանրության համընդհանուր և անհրաժեշտ արձագանքը, օբյեկտիվ է՝ ի տարբերություն անձամբ տուժողի սուբյեկտիվ ցանկություններից: Իրապես, «հասարակության այնպիսի վիճակում, որտեղ գոյություն չունեն ո՛չ դատավորներ և ո՛չ էլ օրենքներ, պատիժը մշտապես մնում է վրեժխնդրության ձև, և այդ ձևը մնում է անկատար, քանի

որ այն ընդամենը սուբյեկտիվ կամքի արար է և հետևաբար չի համապատասխանում դրա բովանդակությանը»<sup>428</sup>:

«Հանցագործության պատժումը վրեժի տեսքով հանդես է գալիս սոսկ որպես իրավունքն իր մեջ, այլ ոչ թե իրավական ակտի ձևով, այսինքն՝ որպես ոչ իրավական՝ իր գոյությամբ: Տուժող կողմի փոխարեն հանդես է գալիս տուժող համընդհանուրը, որն ի դեմս դատարանի օժտված է իր հատուկ իրականությամբ և իր վրա է վերցնում հանցագործին հետապնդելը և հանցագործությունը պատժելը, ինչն հենց այդպիսով դադարում է սոսկ սուբյեկտիվ և պատահական հատուցում, վրեժ լինելուց և փոխակերպվում է իրավունքի՝ ինքն իր հետ հաշտվելուն, պատժի»<sup>429</sup>:

Այս առումով ավելորդ չէ նշել նաև այն դրական փաստը, որ Նոր Զրեական օրենսգրքով շեշտակի նվազեցվել է մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը: Պետք է ասել նաև, որ ՄԻԵԴ-ի մեջբերված դիրքորոշումները ազդեցին նրա վրա, որ վերջնական փոփոխության ենթարկվեցին ՀՀ Նոր Զրեական դատավարության օրենսգրքի՝ *Օփուզի գործով* վճռի հրապարակման պահի դրությամբ նախագիծ տարբերակի համապատասխան դրույթները:

## **Ընտանեկան բռնությունը և կանանց դեմ բռնությունը մասնավոր խնդիր դիտարկելու անթույլատրելիությունը**

Ինչպես ցույց է տալիս իրավակիրառ պրակտիկան և ինչպես տեսնում ենք ՄԻԵԴ-ի մեջբերված դիրքորոշումներից, ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության՝ որպես բռնության առանձին տեսակի հետ սերտորեն կապված են դրա դրսևորումները զուտ ներընտանեկան մի այնպիսի խնդիր դիտարկելը, որին պետությունը չպետք է միջամտի: Դա անթույլատրելի մոտեցում է և հակասում է թե՛ ՀՀ միջազգային պարտավորություններին, և թե՛ դրանց հիմքում ընկած իրավունքի գաղափարին և իրավունքի փիլիսոփայությանը: Սրանից բխում է նաև, որ անթույլատրելի է տուժողի՝ բռնությանը նախորդող այսպես կոչված զոհական («վիկտիմ») կամ սադրիչ (պրովոկացիոն) վարքագիծը որպես վերաբերելի ապացույց դիտարկելը՝ արտացոլելով բռնարարի գործողությունները բարոյապես և իրավական առումով արդարացնելու արմատապես սխալ մոտեցումը:

Ընտանեկան բռնությունը և կանանց դեմ բռնությունը, ի տարբերություն բռնության այլ դրսևորումների, ոչ թե հանրային, այլ մասնավոր խնդիր դիտարկելու սխալ մոտեցմանը արդյունավետորեն հակազդելով և ՄԻԵԿ-ի խախտում արձանագրելով՝ նույն *Օփուզի գործով* ՄԻԵԴ-ը առանձնացրել էր հետևյալ փաստերը.

«57. ....վերջնական դատավճռով.... դատարանը Հ.Օ-ին դատապարտել է սպանության և ապօրինի զենք կրելու համար և նշանակել ցմահ ազատազրկում: Սակայն,

428. Гегель, Философия права, էջ 151:

429. Гегель, Философия права, էջ 258:

հաշվի առնելով, որ ամբաստանյալը հանցանքը կատարել է զոհվածի սադրանքի արդյունքում և գործի դատաքննության ընթացքում նրա լավ վարքագիծը՝ դատարանը սկզբնական պատիժը մեղմացրել է և որպես պատիժ նշանակել ազատազրկում 15 տարի և 10 ամիս ժամանակով և տուգանք 180 նոր թուրքական լիրայի չափով: Հաշվի առնելով նախնական կալանքի տակ դիմումատուի գտնվելու ժամկետը, ինչպես նաև այն փաստը, որ դատավճիռը դառնալու է վերաքննության առարկա, դատարանը Հ.Օ-ին ազատ է արձակել:

Վերջապես, արտացոլելով ՄԻԵԴ-ի՝ վերը մեջբերված դիրքորոշումները, Ստամբուլյան կոնվենցիան (Հոդված 54. **Քննություն և ապացույցներ**) սահմանում է.

«Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քաղաքացիական կամ քրեական ցանկացած դատավարության շրջանակներում տուժողի սեռական վարքագծի և սեռական հարաբերությունների անցյալի հետ կապված ապացույցները թույլատրելի ճանաչվեն կամ գնահատվեն միայն այն դեպքերում, երբ դրանք վերաբերելի են գործին և անհրաժեշտ»:

### **Երեխաների իրավունքները հաշվի առնելու անհրաժեշտությունը**

Բռնության այս դրսևորումների դեմ պայքարում մեկ այլ առանձնահատկություն է **երեխաների լավագույն շահերի պաշտպանության անհրաժեշտությունը**՝ անկախ նրանց՝ բռնության անմիջական զոհ լինելու հանգամանքից: Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույցը (կետ 234-րդ) ՄԻԵԴ-ի նախադեպերի հիման վրա նշում է, որ.

«Ընտանեկան բռնության գործերով, երբ բռնությունը գործադրվում է մի ծնողի նկատմամբ և երեխայի ներկայությամբ, հնարավոր է, որ երեխայի լավագույն շահերից չբխի շարունակել շփումը բռնարար ծնողի հետ: Բռնարար ծնողի հետ շփումն ապահովելը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն երեխայի համար, այլ նաև կարող է լուրջ ռիսկ ստեղծել տուժողի անվտանգության համար, քանի որ դա հաճախ իրավախախտին հնարավորություն է ընձեռում շփվելու կամ տեսնելու տուժողին և կարող է հակասել արգելքի կամ պաշտպանության մասին արձակված հրամանին»:

Նշվածը լրացնելու է գալիս Ստամբուլյան կոնվենցիայի 31-րդ հոդվածը («Խնամակալություն, այցելելության իրավունքներ և անվտանգություն»).

«2. .... պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի այցելության կամ խնամակալության որևէ իրավունքի իրականացումը չսպառնա զոհի կամ երեխաների իրավունքներին և անվտանգությանը»:

Այս մեջբերումներով ևս մեկ անգամ ապացուցվում է, որ երեխան, անգամ անմիջապես չենթարկվելով բռնության, ընտանեկան բռնության գոհ է դառնում արդեն իր մերձավորի նկատմամբ բռնության արդյունքում լինելով «ընտանիքում շարունակական բռնության հոգեբանական հետևանքների գոհ» (*տե՛ս Օփուզի գործով վճիռ, կետ 132*), հատկապես դրա ականատեսը լինելու պարագայում: Այսինքն՝ երեխան երկու դեպքում էլ ճանաչվում է ընտանեկան բռնության գոհ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, որոնք կիրառելի են անմիջական գոհ դարձած նրա մերձավորի նկատմամբ: Եվ ՀՀ դատական պրակտիկայում նույնպես հաշվի է առնվում այս հանգամանքը, օրինակ՝ երեխայի ներկայությամբ նրա ծնողի սպանությունը դիտվում է որպես առանձին դաժանությամբ կատարված, այսինքն՝ ընդունվում է երկու տուժողի ամկայությունը:

Այսպիսով, ինչպես և ցանկացած այլ հանցագործության դեպքում, հասարակությունը ևս պետք է անհանդուրժող լինի ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության հանդեպ, քանի որ այս բռնության գոհը, ինչպես և ընդհանրապես ցանկացած հանցագործության դեպքում, համընդհանուր հասարակությունն է և ոչ թե կոնկրետ բռնությունից տուժած անձը՝ կինը, երեխան, տարեցը և այլն: Դրանում արտացոլվում է իրավունքի փիլիսոփայության մեկ այլ կարևոր սկզբունք ևս. միայն արդարացի պատիժն է, որ հասարակությանը հաշտեցնում է հանցագործի հետ, քանի որ «տուժող կողմի փոխարեն հանդես է գալիս տուժող համընդհանուրը, որն ի դեմս դատարանի օժտված է հատուկ իրականությամբ և իր վրա է վերցնում հանցագործի հետապնդումը և հանցագործության համար պատիժը, որը հենց դրանով էլ դադարում է սուբյեկտիվ և պատահական հատուցում, վրեժ լինելուց և դառնում իրավունքի՝ ինքն իր հետ իրական հաշտեցում, պատիժ»<sup>430</sup>:

## Խտրականության հարցեր

Կանանց նկատմամբ բռնությունն **ինքնին** համարվում է մարդու իրավունքի խախտում և խտրականության դրսևորում՝ սեռական պատկանելության հիմքով: Ընդ որում, *Օփուզն ընդդեմ Թուրքիայի* գործով ՄԻԵԴ-ը արձանագրեց, որ այս իրավունքի երաշխավորման հետ կապված որպես խտրականության ապացույց է դիտարկում նաև այն ակնհայտ վիճակագրական տարբերությունները, որոնք առկա են մարմնական վնասվածքների և բռնության գործադրման այլ դրսևորումների առթիվ հարուցված և իրականացված վարույթների միջև՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք բռնության գոհը կին է, թե տղամարդ:

**Ընդ որում, կարևոր է ոչ թե խտրականություն դրսևորելու նպատակը, այլ տուժողի կողմից խտրականության ենթարկված լինելու փաստը:** Քանի որ սույն Ձեռնարկում խտրականության արգելքը ուսումնասիրվում է առանձին գլխով, այս գլխում մենք չենք վերլուծի ՄԻԵԴ-ի դիրքորոշումները՝ պետության կողմից խտրականություն դրսևորելու նպատակի՝ իրավունքի խախտման տեսակետից ոչ վերաբերելի հանգամանք լի-

430. Гегель, Философия права, էջ 258:

նելու, խտրական վերաբերմունքի բացակայության ապացուցման պարտականությունը պետության վրա դրված լինելու և այլ հարցերի առնչությամբ: Պարզապես կարևորենք մեկ հանգամանք, այն է՝ խտրականության փաստը հաստատելիս ՄԻԵԴ-ի կողմից (*Օփուզի գործով*) վիճակագրական տվյալների վրա հենվելը: Օրինակ՝ այդ գործով **ներկայացված 2484 կանանց հետ անցկացված հարցազրույցների արդյունքում ստացված վիճակագրության համաձայն՝ բողոքաբերներից բոլորը ենթարկվել են հոգեբանական բռնության, իսկ նրանցից մոտ 60%-ը՝ նաև ֆիզիկական բռնության:** Տուժողների ամենամեծ խումբն են կազմել 20-30 տարեկան կանայք (43%): Այս կանանց 57%-ը ամուսնացած է: Տուժողների մեծ մասը անգրագետ է կամ ունի ցածր կրթական մակարդակ: Կանանց 78%-ը քրդական ծագում ունի: Օգնության համարին զանգահարած տուժողների 91%-ը Դիարբեքիից է: Տուժողների 85%-ը զուրկ է սեփական վաստակի աղբյուրից: Սույն գործով ՀԿ-ներից մեկի կողմից ներկայացված զեկույցը նախապատրաստվել էր այսպես կոչված *պատվոհ հանցագործությունների* (crimes of honor) ֆենոմենը դրա արդարադատական չափման մեջ դիտարկելու համար: Հետազոտվել էին Դիարբեքիի դատարանների և երեխաների գործերով դատարանների կողմից 1999-2005 թթ.-ին քննված գործերը: Այդ յոթ տարիների ընթացքում արձանագրվել է 59 գործ, որոնք ավարտվել են դատավճռով: Այդ գործերով 71 տուժող/անձ սպանվել է, իսկ ամբաստանյալների թիվը եղել է 81 անձ: Ընդ որում.

«106. Այն գործերով, որոնցում տուժողը եղել է կին, ամբաստանյալները, ի պաշտպանություն իրենց, պնդել են, որ սպանվածը զրուցել է այլ տղամարդկանց հետ, զբաղվել է մարմնավաճառությամբ կամ դավաճանել է: Դատավճիռներից 46-ում կիրառվել է չհիմնավորված պրովոկացիայի՝ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքը: 61 դատապարտման դեպքում կիրառվել են Թուրքիայի Քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի դրույթները մեղմացուցիչ հանգամանքները հաշվի առնելու հայեցողության վերաբերյալ»:

Այնուհետև ՄԻԵԴ-ը արձանագրեց Կոնվենցիայի նաև 14-րդ՝ խտրականությունն արգելող հոդվածի խախտում՝ նշելով (կետ 180-րդ) որ եթե «դիմումատուն, չվիճարկված պաշտոնական վիճակագրության հիման վրա, ի վիճակի է ցույց տալ, որ գոյություն ունի առերևույթ վկայություն այն բանի, որ որևէ կոնկրետ նորմ անգամ չեզոք կերպով ամրագրված, փաստացի ներգործում է կանանց ակնհայտորեն ավելի մեծ տոկոսի նկատմամբ, քան տղամարդկանց, ապա պատասխանող Կառավարությունն է, որ պետք է ցույց տա, որ դա օբյեկտիվ գործոնների հետևանք է, որոնք սեռական պատկանելության հիմքով խտրականության հետ որևէ կապ չունեն», և որ (կետ 191) «պարտադիր չէ, որ նման պաշտպանություն չտրամադրելը լինի դիտավորյալ»:

Այնուհետև, ՄԻԵԴ-ն այդ վիճակագրության և զեկույցների միջոցով հիմնավորեց դիմումատուի նկատմամբ խտրականության դրսևորումը, նրա՝ որպես տուժողի՝ 3-րդ հոդվածով (խոշտանգում) և որպես տուժողի իրավահաջորդի՝ 2-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտումը (սպանությունը) արդյունավորորեն չքննելու մասով, նշեց (կետ 194-րդ), որ «բոլոր գոհերը եղել են կանայք, որոնք մեծամասամբ ենթարկվել են ֆիզիկական բռնության: Այս կանանց ճնշող մեծամասնությունը ծագումով եղել

Է քուրդ, անգրագետ կամ ցածր կրթական մակարդակ ունեցող, և սովորաբար՝ զուրկ սեփական վաստակի որևէ աղբյուրից...», ապա և (կետ 200-րդ), որ «հաշվի առնելով իր վերը արված հետևությունն այն մասին, որ Թուրքիայում դատական իշխանության ընդհանուր բնույթ կրող և խտրական պասիվությունը, չնայած և ոչ դիտավորյալ կերպով, գլխավորապես տարածվել է կանանց վրա, ... այն բռնությունը, որին ենթարկվել են դիմումատուն և նրա մայրը, կարող է դիտվել որպես գենդերային հիմքով իրականացված բռնություն, որը կանանց նկատմամբ խտրականության ձևերից մեկն է»:

### **Հարցեր լսարանին**

1. Արդյո՞ք սեփական ընտանիքում անձի թեկուզ և իրավախախտ վարքագիծը պետք է այն նույն արձագանքի արժանանա պետության կողմից, որը վերջինս դրսևորում է ընտանեկան փոխհարաբերությունների մեջ չգտնվող անձանց դեպքում:
2. Արդյո՞ք պետությունը չի միջամտում խիստ միջանձնային հարցերին և չի թուլացնում հասարակության բնական բջիջը հանդիսացող ընտանիքը, երբ ընտանեկան բռնության դեպքերի քննության ու մեղավորների հայտնաբերման նպատակով միջամտում է ամուսինների փոխհարաբերություններին ու արդյո՞ք չի նպաստում ընտանիքների քայքայմանը:
3. Արդյո՞ք ամուսնալուծությունների կանխումը ավելի մեծ նպատակ չէ, քան ոչ ծանր հանցագործությունների համար անձանց դատապարտելը, մանավանդ երբ հանցագործության զոհը խնդրում է չդատապարտել իր ամուսնուն, որը ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասի դեպքում նաև ընտանիքի միակ կերակրողն է:

## ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ



Այս գլխում ներկայացվում են կոռուպցիոն հիմնախնդիրները՝ կոռուպցիոն ռիսկերը, դրանք նվազեցնելու կամ վերացնելու, պետական մարմինների և պաշտոնատար անձանց որոշումներում դրանց նյութականացումը (իրացումը) կանխելու ուղղությամբ պետության ունեցած պարտավորությունները, իսկ նյութականացման դեպքում՝ այդ դրսևորումների, հատկապես հանցավոր դրսևորումների բացահայտման, մեղավորների հայտնաբերման, կոռուպցիոն ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման հարցերը և այլն: Հիմնական նպատակն է այս խնդիրները ներկայացնել մարդու իրավունքների, մասնավորապես պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կայացվող բոլոր որոշումների կայունության և կանխատեսելիության, այն է՝ օրինական և պատճառաբանված որոշումներ ստանալու իրավունքի, վերջին հաշվով՝ օրինականության սկզբունքի տեսանկյունից:

Այդ իսկ պատճառով կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային և ներպետական իրավական գործիքների պահանջները ներկայացված են այնքանով, որքանով դրանք վերաբերելի են նշված նպատակին: Եվ քանի որ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կայացվող բոլոր որոշումները և գործողությունները սկզբունքորեն ենթակա են դատական վերանայման, առանձնակի կարևորվում են դատական որոշումների՝ բացառապես օրենքի հիման վրա կայացված լինելու և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նյութականացումը կանխելու երաշխիքները:

## 8.1. Կոռուպցիայի վտանգավորությունը մարդու իրավունքների համար, կոռուպցիայի շարժիչ ուժը, օրենքների և իրավակիրառ պրակտիկայի որոշակիությունը

Մարդու որևէ իրավունք կամ ազատություն չի կարող պաշտպանվել և իրացվել, եթե դրանց ամնչվող պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից կայացվող որոշումները բխեն ոչ թե այդ որոշումների համար վերաբերելի փաստերից, այլ որոշում կայացնողի սուբյեկտիվ ցանկություններից, մասնավորապես որոշում կայացնելիս օրենքի պահանջի նկատմամբ պաշտոնյայի համար գերակայություն ձեռք բերող շահով: Այս շահը կարող է լինել անմիջական և միջնորդավորված, գույքային և ոչ գույքային, անձնական և խմբային և այլն: Դրսևորումները՝ երևութականացումը, նույնպես տարբեր են, սակայն անփոփոխ է էությունը՝ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման վրա, օրենքի պահանջները կատարելուց զատ, ազդեցություն է ունենում որևէ այլ շարժառիթ: **Սրանք անվանենք կոռուպցիայի սուբյեկտիվ կողմ:**

Քանի որ այդ շարժառիթները իրացվում են որոշումների ձևով, իսկ որոշումը միշտ մտահանգում է, եզրակացություն, որն արվում է մեծ դատողությունը (օրենքը) փոքր դատողության (վերաբերելի փաստերի ամբողջության) վրա տարածելու, կիրառելու արդյունքում, ապա ակնհայտ է, որ **կոռուպցիայի շարժիչ ուժը այն ռիսկերն են, որոնք պաշտոնյային թույլ են տալիս կամայականություն դրսևորել այդ եզրակացությունն անելիս:** Այսինքն՝ օրենքն այնքան անորոշ է, որ կամ միևնույն վերաբերելի փաստերի դեպքում թույլ է տալիս կայացնել տարբեր որոշումներ, կամ թույլ է տալիս փաստերի վերաբերելիությունը որոշել կամայականորեն: **Օրենքի և վերաբերելի փաստակազմի այս անորոշությունը անվանենք կոռուպցիայի օբյեկտիվ կողմ:**

Այժմ բերենք օրինակներ՝ լսարանի մոտ մեծ դատողության մեջ, այն է՝ կիրառելի օրենքում կոռուպցիոն ռիսկեր հայտնաբերելու հմտություններ ձևավորելու նպատակով: Վերցնենք ձևական տրամաբանության **հիպոթետիկ երկու օրինակ՝**

- Դատողություն Ա (օրենք). «Բոլոր ծառերը փայտից են»:
- Դատողություն Բ (փաստ). «Խնձորենին ծառ է»:
- Մտահանգում (որոշում). «Խնձորենին փայտից է»:

Այժմ կոռուպցիոն ռիսկեր ավելացնենք Ա և Բ դատողություններում և տեսնենք, թե որքան կամայական է դառնում մեր եզրակացությունը.

- Դատողություն Ա (օրենք). «Բոլոր իրական և նկարված ծառերը փայտից են կամ այն նյութից, որի վրա նկարված են»:
- Դատողություն Բ (փաստ). «Թղթի վրա նկարված է խնձորենի»:



Մտահանգում (որոշում). «Խնձորենին փայտից է, բայց եթե նկարված է թղթի վրա, ապա՝ թղթից»:

Նույն անորոշ Ա բնույթի դատողություններ առկա են ՀՀ օրենսդրության մեջ, և քիչ անց մենք կներկայացնենք մեկ-երկու օրինակ ՀՀ քրեական օրենսգրքից:

Սույն Ձեռնարկի [«Մարդու իրավունքների սահմանափակումների լեգիտիմությունը»](#) գլխում արդեն անդրադարձանք այն հարցին, որ *օրենք* հասկացությունն ունի ինքնավար նշանակություն և կարող է համարվել այդպիսին բացառապես այն դեպքերում, եթե բավարարում է իրավական որոշակիության պահանջները: Մասնավորապես նշվեց, որ օրենքը պետք է լինի այնքան կանխատեսելի, որ թույլ տա դրա հասցեատիրոջը անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն ստանալուց հետո աներկբա ձևով հասկանալ դրա պահանջը և համակերպել իր ապագա կամ ընթացիկ վարքագիծը այդ պահանջի հետ: **Հենց օրենքի որոշակիությունն էլ դիտվում է օրենքը կիրառողի կամայականությունը զսպող հատկանիշ:** Այսինքն՝ օրենքի որոշակի լինելը մի կողմից ուղղված է քաղաքացուն, որպեսզի նա կարողանա պահպանել օրենքի պահանջը, իսկ մյուս կողմից՝ պետությանը, որը օրենքներում չպետք է ստեղծի կոռուպցիոն ռիսկեր՝ խոցելի դարձած քաղաքացու նկատմամբ կամայականություն դրսևորելու հնարավորություն տալով իրավակիրառներին:

Այժմ բերենք **իրական օրինակներ**: ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հետևյալը.

«**իրացնելու նպատակով** թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը **կամ դրանք ապօրինի իրացնելը** կամ մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի ձեռք բերելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»:

Այս տեքստից բխում է, որ պետությունը նույն կերպ է պատժում և՛ այն գործողությունները, որոնք ուղղված են թմրամիջոցների իրացմանը, նախապատրաստում են այն, օժանդակում դրան, և այն գործողությունները, որոնք իրենցից ներկայացնում են այդ նպատակի իրականացման ավարտը՝ թմրամիջոցների բուն իրացումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ շահագործման վիճակում գտնվող մարդու ծառայությունից օգտվելը, որը կատարվել է՝ հղի կնոջ նկատմամբ, անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կամ անչափահասի նկատմամբ՝ **«պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:**

Այս հոդվածի վերլուծությունից էլ բխում է, որ միևնույն արարքի, օրինակ՝ անօգնական վիճակում գտնվող մարդու ծառայություններից օգտվելու համար հանցավորը կարող է պատժվել և՛ 20 հազար դրամ տուգանքով, և՛ 60 ամիս ազատազրկմամբ: Մեկնաբանությունները, կարծում եմք, ավելորդ են: Հասարակական գիտակցության մեջ այս երևույթը բնութագրվում է որպես «օրենքի ռեզին», երբ օրենքով նախատեսված միևնույն գործողությունների համար պետության արձագանքը տարբերվում է թե՛ բնույթով, թե՛ խստության աստիճանով՝ կամայականության անսպառ հնարավորություններ տալով դատարանին՝ մի դեպքում, ըստ էության, անպատիժ թողնելու հանցավորին՝ նրան տուգանելով 20 հազար դրամի չափով, իսկ մյուս դեպքում՝ դատապարտելու երկարատև ազատազրկման: **Նման դեպքերն էլ հենց ամենամեծ կոռուպցիոն ռիսկերն են:**

Նման օրինակներ կարելի է բերել իրավունքի ցանկացած ճյուղից: Ո՞րն է հարցի լուծման ողջամիտ հեռանկարներ տվող սկզբունքային մոտեցումը օրենքներում առկա կոռուպցիոն ռիսկերը վերացնելու տեսանկյունից: Վերոգրյալից ելնելով՝ նման **լուծում կարող է լինել այն փաստերի ամբողջության կամ իրավաբանորեն ասած՝ փաստակազմերի տրոհումը, որի նկատմամբ կարող է կիրառվել տվյալ օրենքը, որպեսզի հնարավորինս նեղացվի օրենքի կիրառման տարբերակների շրջանակը, և սահմանափակվի իրավակիրառի հայեցողությունը՝ առնվազն կամայականությունը կանխելու աստիճան:**

Մասնավորապես, վերը մեջբերված ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածում կարելի է առանձնացնել թմրամիջոցների իրացմանն ուղղված՝ հոդվածում նկարագրված գործողությունները և առանձին հոդվածում բուն թմրամիջոցների իրացումը, համապատասխանաբար՝ ընդհանուր 3-ից 6 տարվա ժամկետով ազատազրկումը որպես՝ հետևանք մասնատելով և նախատեսելով իրացմանն ուղղված գործողությունների համար՝ 2-ից 4, իսկ բուն իրացման համար՝ 4-ից 6 տարի ժամկետով ազատազրկում: Մեջբերված մյուս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածում կարելի է պարզապես մոտեցնել հոդվածի սանկցիայում ամրագրված քրեական պատժի նվազագույն և առավելագույն շեմերը՝ օրինակ՝ հրաժարվելով այս հանցագործություններով *տուգանքը* որպես այլընտրանքային պատժատեսակ նախատեսելուց և թողնելով միայն «ազատության սահմանափակումը՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկումը՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկումը՝ երկուսից հինգ տարի ժամկետով»: Նման մոտեցումն, ի դեպ, ուղղված կլինի նաև խոշտանգման և այլ նմանատիպ վերաբերմունքը կանխելու պետության պոզիտիվ պարտավորության իրականացմանը, քանի որ տվյալ հոդվածով, ըստ էության, քրեականացված է «շահագործման վիճակում գտնվող մարդու ծառայությունից օգտվելը»: Վերջինս արտահայտում է այդ ծառայությունների **պահանջարկը, որը, ինչպես գիտենք, առաջարկ գեներացնող հիմնական պայմանն է, այսինքն՝ եթե չլինեն շահագործման վիճակում գտնվող մարդու ծառայությունից օգտվողներ, չի լինի նաև շահագործման վիճակում գտնվող մարդու ծառայությունը, ու չի լինի մարդու շահագործումը:**

Այնուամենայնիվ, հանրահայտ փաստ է, որ **հնարավոր չէ օրենքների պահանջները սահմանել այնպիսի որոշակիությամբ, որ տեղ չմնա իրավակիրառի մեկնաբան-**

**նության համար**, ինչի մասին ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է նախկին դատավոր Արայիկ Մելքունյանի գործով 2019 թ.-ի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1488 որոշման մեջ (կետ 4.3)<sup>431</sup>:

**Այսինքն՝ ՀՀ ՍԴ-ն արձանագրել է, որ օրենքի ոչ բավարար աստիճանի որոշակիությունը պետք է լրացվի իրավակիրառ պրակտիկայի որոշակիությամբ: Հետևաբար որոշք են այն լուծումները, որոնք քաղաքակրթությունը մշակել է իրավակիրառ պրակտիկայի որոշակիությունն ապահովելու համար:**

Այս տեսակետից կարևոր է առանձնացնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ 2004 թ.-ի օրենքը, որի 7-րդ հոդվածի («Կամայականության արգելքը») 2-րդ մասի համաձայն. **«Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:** Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով ևս հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշումը»:

**Դատարանների** գործունեության մեջ իրավակիրառ պրակտիկայի կանխատեսելիությունը դարձյալ ապահովվում է դատական պրակտիկայի միասնականությամբ: Այս խնդրի լուծումը, Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն, դրված է ՀՀ Վճռաբեկ դատարանի վրա, որն **«ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը»:** Դրա իրագործման եղանակը դատական նախադեպի *Թող որոշումը մնա կանգուն*-(*Stare Decisis*) ինստիտուտն է, ըստ որի՝ համանման գործերը պետք է լուծվեն համանման ձևով:

Սակայն քանի որ ՀՀ ՎԴ-ի լուծմանն են հասնում շատ նեղ շրջանակի գործեր, դատարանների պրակտիկայի միասնականության ապահովման համար կիրառվում են **դատական վիճակագրության և պրակտիկայի ամփոփման գործիքները**, որոնք ենթակա են կատարելագործման՝ այն հաշվով, որ հանրությանը ներկայացուցչական տվյալներ տրամադրվեն այն մասին, թե ինչպես են ոչ միայն կոնկրետ դատարանները, այլ նաև դատավորները կիրառում օրենքը: Օրինակ՝ անհրաժեշտ են *խելացի վիճակագրության* (smart statistics) թվային գործիքներ՝ **դատավորների գործունեության վերաբերյալ վարվող վիճակագրության հիման վրա** պարզելու դատավորի պրակտիկայի կայունության աստիճանը, օրինակ՝ ո՞ր դեպքերն է նա համարում մեղքը մեղմացնող հանգամանք, ո՞ր հոդվածներով որքան պատիժ է նշանակում և այլն, այսինքն՝ նույն փաստակազմով արդյո՞ք նույն լուծումն է տալիս գործին, թե ոչ:

Մասնավորապես, եթե Քրեական օրենսգրքով նույն արարքի համար նախատեսված է պատիժ և՛ չնչին տուգանքի, և՛ ազատազրկման ձևով, ապա դատավորը պետք է իմանա, որ հանրությունը տեսնելու է, թե արդյոք նա շեղվում է իր իսկ պրակտիկայից, և, օրինակ, նախկինում չդատված, ինամքին 2 անձ ունեցող, հաշմանդամության 2-րդ

431. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=136491>

խումբ ունեցող անձին մի դեպքում չի դատապարտում 20 հազար դրամ տուգանքի, իսկ մյուսին՝ 5 տարվա ազատազրկման: ԱՄՆ-ում կիրառվող վերաբերելի և արդյունավետ գործիքներից է «Պատժի նշանակման ուղեցույցը» (**Sentencing Guidelines**), որը մի կողմից հանրության համար կանխատեսելի է դարձնում երկրի պատժողական քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ երաշխիքներ ստեղծում կամայական պատիժների դեմ:

## 8.2. Կոռուպցիայի բովանդակությունը. ինչպես վերացնել կոռուպցիայով զբաղվելու ցանկությունը

Իր ամենախորքային բովանդակությամբ կոռուպցիան խտրականություն է՝ այն հիմքով, որի նկատմամբ խոցելի է տվյալ պաշտոնյան: Խոցելիության այդ հիմքերը այն աղբյուրներն են, որոնցից գալիս է ազդեցությունը պաշտոնյայի վրա՝ քաղաքական կամ այլ խմբային կապվածության, անձնական, գույքային և ոչ գույքային ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածության տեսքով: **Կոռուպցիայի դեմ պայքարի ամենագործուն միջոցը այն միջոցն է, որը կոռուպցիոն գործունեությունը դարձնում է անիմաստ**, իսկ սրան կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե կոռումպացված պաշտոնյան և նրա մերձավորները չկարողանան օգտվել կոռուպցիոն գործունեության արդյունքներից: Պետության խնդիրն է, հետևաբար, երաշխավորել այդ արդյունքներից չօգտվելը, որի ամենաարդյունավետ միջոցը եկամտի օրինական աղբյուրներով չհիմնավորված գույքի բռնագանձումն է:

2016 թ.- դեկտեմբերի 16-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց օրենք, որով այն ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգիրքը (2003 թ.-ին ընդունված) լրացրեց 310.1 հոդվածով, որով քրեակասացվեց *ապօրինի հարստանալը*, այն է՝

««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք Էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես *Էական* ամրագրվեց «հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)», այսինքն՝ 5 միլիոն դրամը: Այս փափոխությունն ուժի մեջ

մտավ 2017 թ.-ի հուլիսի 1-ից: Նույն արարքը նույն նկարագրությամբ, սակայն Էական դիտելով արդեն 3 միլիոն դրամը, քրեականացվեց նաև 2021 թ.-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով (հոդված 443):

Պետք է նշել, որ Եվրոպական միության ոչ մի երկիր, ինչպես նաև ԱՄՆ-ն ու Կանադան չեն քրեականացրել ապօրինի հարստացումը որպես հանցագործություն: Փոխարենը լայնորեն կիրառում են չհիմնավորված եկամուտները այսպես կոչված գույքի ստացմանը «նախորդող» կոռուպցիոն հանցագործությունները ապացուցելու համար, որի օրինակները քննարկվեցին սույն Ձեռնարկի՝ [անձի արդար դատաքննության իրավունքին](#) վերաբերող գլխում՝ ապացուցման պարտականությունը առանձին դեպքերում մեղադրյալի վրա դնելու թույլատրելիության հետ կապված:

Սա մեծ ներուժ է պարունակում իր մեջ, քանի որ ապացուցման կանոնները նախատեսվում են ոչ թե Քրեական օրենսգրքով, այլ Քրեական դատավարության օրենսգրքով, որը, ի տարբերություն առաջինի, կիրառվում է տվյալ պահին ընթացող վարույթի նկատմամբ, անգամ եթե քննվող հանցագործության դեպքը տեղի է ունեցել մինչև ՔԴՕ-ում համապատասխան փոփոխություն կատարելը: **Այսպիսով, կոռուպցիայի դեմ իրական պայքար տանելու համար աշխարհի զարգացած երկրները գնացել են ոչ թե պարզապես գույքի տարբերությունը քրեականացնելու, այլ բուն կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ու մեղավորներին պատժի ենթարկելը երաշխավորող ապացուցման արդյունավետ դատավարական կանոններ սահմանելու ուղղությամբ:**

**Ինչպես նշվեց, անմեղության կանխավարկածը, մասնավորապես լռություն պահպանելու իրավունքի մասով բացարձակ չէ և առանձին դեպքերում առաջացնում է մեղադրյալի կողմից որոշակի բացատրություն ներկայացնելու պարտականություն, ինչը չանելը կարող է հիմք դառնալ ապացույցներն ի վնաս մեղադրյալի գնահատելու համար:**

Մասնավորապես ***Ջոն Մյուրրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության*** գործով 1996 թ.-ի փետրվարի 8-ի վճռում ՄԻԵԴ-ը, ընդունելով, որ իր դեմ ցուցմունք չտալու արտոնությունը մտնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքների մեջ, այնուամենայնիվ, նշել է նաև, որ **այդ անձեռնմխելիությունը չի կարող և չպետք է արգելք հանդիսանա, որ այնպիսի իրավիճակներում, որոնք պարզորոշ կերպով նրանից բացատրություն են ակնկալում, մեղադրյալի լռությունը հաշվի առնվի մեղադրանքի կողմի ներկայացրած ապացույցների համոզիչ լինելը գնահատելիս**<sup>432</sup>:

ՄԻԵԴ-ը այդ գործով նշեց, որ «**լռության իրավունքը**» բացարձակ չէ: Անգամ չնայած նրան, որ այդ իրավունքն անհամատեղելի է մեղադրանքը բացառապես կամ գլխավորապես մեղադրյալի լռության կամ նրա կողմից ցուցմունք տալուց հրաժարվելու փաստի վրա կառուցելու փորձերի հետ, միանգամայն ակնհայտ է, որ մեղադրյալի լռության

432. John Murray v. the United Kingdom, 08.02.1996, Reports 1996-I, para. 47, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22itemid%22%3A%22001-57980%22%7D>

իրավունքը հաշվի է առնվում այնպիսի իրավիճակներում, որոնք միանշանակ կարիք ունեն բացատրության: Դատարանը նշեց, որ տրամաբանական եզրակացությունների օգտագործումը ազգային իշխանությունների կողմից եղել էր առողջ բանակա- նության արտահայտում՝ այնպիսի պայմաններում, երբ դիմումատուն հրաժարվել էր հիմնավորված բացատրություն ներկայացնել իր գործողությունների կամ վար- քագծի առթիվ: Առկա են եղել արդար դատարանի սկզբունքի ապահովման բավա- րար երաշխիքներ, և ապացույցներին վերաբերող բեռը ընդհանուր առմամբ ընկած է եղել մեղադրանքի կողմի վրա:

**Կոռուպցիան անիմաստ դարձնելու մեկ այլ եղանակ առկա է քաղաքացիական դատավարությունում: Խոսքը Հայաստանում արդեն իսկ կիրառվող ապօրինի գույ- քի վերականգնման ինստիտուտի (recovery of illegal assets) մասին է: 2020 թ.-ի ապ- րիլի 16-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը: Կարելի է ասել, որ *այս օրենքով հետապնդվում է գույքը, այլ ոչ թե անձը (in rem confiscation)*: Արդյունքում այս գործերը քննվում են ոչ թե քրեական, այլ քաղաքացիական դատավարության կարգով:**

Ավելացնենք նաև, որ այս ինստիտուտի անգլերեն անվանումը (*asset recovery - գույ- քի վերականգնում*) ավելի ցայտուն է արտահայտում դրա էությունը, քանի որ *խոսքը ոչ թե այդ գույքը պարզապես անձից բռնագանձելու, այլ հասարակությանը այն վե- րադարձնելու մասին է՝ արտացոլելով նաև այն իրողությունը, որ, անկախ այդ գույ- քը տիրապետելուց կամ դրա տևողությունից, անձը երբեք որևէ լեգիտիմ իրավունք չի ունեցել դրա նկատմամբ: Հենց ապօրինի գույքի տիրապետման ժամանակավոր բնույթը ու վաղ թե ուշ այն հանրությանը վերադարձնելու անխուսափելիության գի- տակցումն է, որ ի վիճակի է արմատախիչ անել կոռուպցիան՝ զրո հանդուրժողա- կանության աստիճան, ինչպես դա առկա է, օրինակ, Սկանդինավյան երկրներում:*

### 8.3. Պաշտոնյաների անխոցելիության ստուգումը. Նախնական և հետադարձ վեթինգ

Արդեն նշվեց, որ իր ամենախորքային բովանդակությամբ կոռուպցիան խտրակա- նություն է: Սակայն դա մշտապես խտրականություն է այն հիմքով կամ հատկանիշով, որով տվյալ պաշտոնյան խոցելի է որոշումներ կայացնելիս: Օրինակ, եթե դատավորը մեկ՝ նախկինում չդատված, ինամքին երկու երեխա ունեցող անձին 3 փամփուշտ պա- հելու համար դատապարտում է 3 տարվա ազատազրկման, բայց նույն տվյալներն ու- նեցող որևէ մեկին իր պրակտիկայում այդ հոդվածով երբեք չի դատապարտել 6 ամսից ավելի ժամկետով ազատազրկման և հիմնականում նշանակել է տուգանք, և պարզվում է, որ այդ ամենախիստ պատժին արժանացած մեղադրյալը ընդդիմադիր քաղաքական

գործիչ է կամ նրան մերձավոր անձ, ապա այստեղ գործ ունենք ոչ միայն ընտրովի արդարադատության հետ, ոչ միայն նրա հետ, որ քաղաքական հայացքների հիմքով ունենք ազատագրված մի անձ, որն ավելի երկար ժամկետի է դատապարտվում, քան նման հայացքներ չունեցող բոլոր անձինք (ինչը, ի դեպ *քաղաքականության* հասկացության բնորոշումն է Եւ «Քաղաքական բանտարկյալի սահմանումը» վերտառությամբ թիվ 1900 բանաձևի համաձայն<sup>433</sup>), այլ ավելին՝ ունենք դատավոր, որը խոցելի է հենց քաղաքական ազդեցության նկատմամբ:

Հետևաբար կոռուպցիայի դեմ պայքարում պետք է շեշտը դնել այդ խոցելիությունը ստուգելու վրա՝ բնականաբար չմոռանալով, որ այն չէր իրացվի կամ պակաս ծանրությամբ կիրացվեր, եթե օրենքը, ինչպես քննարկեցինք սույն գլխի նախորդ կետերում, դատավորին թույլ չտար նույն արարքի համար կիրառել անհամադրելի պատժաչափեր, ինչպես նաև եթե լինեին դատական պրակտիկայի գործուն մեխանիզմներ, որոնցով ժողովրդի աչքին կզարներ դատավորի՝ տվյալ մեղադրյալի նկատմամբ այլ մեղադրյալների հանդեպ չափազանց տարբեր մոտեցումը:

Նախքան այս կետը շարադրելը, ինչպես հին հույներն էին ասում, «համաձայնության գանք տերմինների շուրջ»՝ եզրույթների, որոնք օգտագործելով, հաղորդակցվում ենք: **Կոռուպցիա նշանակում է քայքայում, փչացում: Վերևում մենք խոսեցինք «օրենքի ռեզինի» մասին, որը վկայում է հենց օրենքի կոռումպացվածության, «փչացածության» մասին: Հենց այս օրենքներն են գրավում կոռումպացված մարդկանց, քանի որ հենց իրենց կայացրած որոշումների միջոցով է իրացվում պաշտոնյաների խոցելիությունը՝ առանձին խմբերի կամ անհատների ունեցած և չարաշահվող քաղաքական, ֆինանսական և այլ լծակների հանդեպ:**

Պաշտոնյաների մոտ կոռուպցիոն ռիսկերի և դրանց դրսևորումների գնահատման կամ ստուգման գործում առանցքային նշանակություն ունի *բարեվարքություն* եզրույթը: Հայաստանում ապագա և գործող պաշտոնյաների բարեվարքության ստուգմամբ զբաղվող լիազոր մարմինն է ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: **Բարեվարքություն** բառը, սակայն, միայն մասնակի է արտահայտում անգլերեն *integrity* եզրույթի իմաստը, որից այն թարգմանվել է: «**Integrity**»-ն իրականում նշանակում է ոչ միայն «**բարեվարքություն**», այլ նաև անձի կամ անշունչ առարկայի, օրինակ՝ նավի պաշտպանիչ արտաքին շերտի, ամբողջականությունը, այն է՝ խոցելի չլինելը, «թողնող» տեղեր չունենալը և, այդպիսով, արտաքին ռիսկերի հանդեպ անխոցելի լինելը: **Իրական integrity կոչվածն, այսպիսով, պաշտոնյայի անխոցելիությունն է իր նկատմամբ հնարավոր ազդեցության՝ քաղաքական կամ խմբային այլ ճնշումների, անձնական կախվածության և ֆինանսական գայթակղությունների հանդեպ:**

Հենց այս խոցելիությունն էլ ստուգվում է զարգացած ժողովրդավարական երկրներում, իսկ ստուգման գործողությունն արտահայտող եզրույթը կոչվում է **վեթինգ** (անգլերեն՝ *vetting՝ քննում, ստուգում* բառից): Հաճախ այն սխալմամբ օգտագործվում է որպես *զտում*, սակայն վերջինս ստուգման արդյունքներից միայն մեկն է. այլ

433. Ընդունվել է Եւ խորհրդարանական վեհաժողովի կողմից 2012 թ.-ի հոկտեմբերի 3-ին, <https://pace.coe.int/files/19150/pdf>:

արդյունք կարող է լինել ստուգման արդյունքում դրան ենթարկված, օրինակ՝ դատավորին, պաշտոնում վերահաստատելու կամ թողնելու մասին որոշումը: *Integrity* բառի և *վեթինգ* բառի համադրված օգտագործման առավել ճշգրիտ տարբերակը *անխոցելիության ստուգում* է: Օրինակ՝ 1997 թվականից ԱՄՆ-ում գործում է այսպես կոչված «Լիհի վեթինգի» օրենքը՝ այն նախաձեռնած սենատոր Պատրիկ Լիհիի անունով (Patrick Leahy), որը, ի թիվս այլնի, նախատեսում է, օրինակ, որ օտար երկրների ոստիկանության այն աշխատողները, որոնց ԱՄՆ Կառավարությունը պատրաստվում է վերապատրաստել կամ այլ աջակցություն տրամադրել, պետք է վեթինգ անցնեն, այն է՝ նրանց կենսագրությունը պետք է ստուգվի՝ մարդու իրավունքների խախտումներ թույլ տված լինելու տեսակետից: Եթե այդպիսիք հայտնաբերվում են, ապա տվյալ պաշտոնյան չի կարող վերապատրաստվել, ստանալ այլ աջակցություն և այլն:

***Վեթինգի նպատակն է ապահովել դատական իշխանության հանդեպ հանրային վստահության ձևավորումը առ այն, որ այն անձինք, որոնց վստահված է այդ իշխանությունը, խոցելի չլինեն քաղաքական և խմբային այլ, անձնական և գույքային կախվածության աղբյուրների նկատմամբ:*** Սա այսպես կոչված *զանգվածային վեթինգ*ն է, որի դրական փորձն առկա է Ալբանիայում:

### **Հարցեր լսարանին**

1. Ինչո՞վ է վտանգավոր կոռուպցիան մարդու իրավունքների համար: Կարո՞ղ եք բերել կոնկրետ օրինակներ, երբ կոռուպցիոն վերաբերմունքը ազդում է մարդու այս կամ այն իրավունքի իրացման արդյունավետության վրա:
2. Արդյո՞ք ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտը չի հակասում անմեղության կանխավարկածին: Փաստարկե՞ք ձեր դիրքորոշումը:



ԳԼՈՒԽ 9.

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ



## 9.1. Թվային տեխնոլոգիաների զարգացումը, սոցիալական ցանցերը և մարդու իրավունքները

Թվային տեխնոլոգիաների, սոցիալական ցանցերի, արհեստական բանականության սրընթաց զարգացումը և իրական կյանքի ու թվային իրականության միախառնումը վստահաբար առաջ են բերել բազմաթիվ հարցեր, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են մարդու իրավունքների երաշխավորմանը և առաջ են բերում մարդու իրավունքների պաշտպանության կանոնակարգումները վերանայելու անհրաժեշտություն: 2021 թ.-ին ՄԻԵԴ-ը Մեծ պալատի կազմով կայացրեց երկու կարևոր վճիռ՝ [Big Brother Watch v. UK](#) և [Centrum för Rättvisa v. Sweden](#) գործերով, որտեղ քննարկվում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության և խոսքի ազատության իրավունքին առնչվող հարցերը նոր տեխնոլոգիաների կիրառման համատեքստում: Խոսքը հատկապես զանգվածային հսկողության դեպքում մարդու իրավունքների խախտումների և հավասարակշռման մասին է:

[Big Brother Watch v. UK](#) գործով կայացրած վճռում ՄԻԵԴ-ի Մեծ պալատը մի քանի կարևոր արձանագրումներ կատարեց զանգվածային գաղտնադիտարկումների (bulk interception) իրականացման վերաբերյալ: Դատարանը մասնավորապես առանձնացրեց մի քանի չափանիշ, որոնց Միացյալ Թագավորության օրենքները չէին համապատասխանում. զանգվածային գաղտնադիտարկումներ իրականացնելու միջնորդության հաստատում անկախ մարմնի կողմից, գաղտնադիտարկման դիմումի մեջ որոնման հատուկ տերմինների/բառերի չներառում և անհատին առնչվող որոնման բառերի նախնական հաստատում չանցնելը<sup>434</sup>:

[Centrum för Rättvisa v. Sweden](#) գործով ՄԻԵԴ-ի Մեծ պալատի կայացրած վճռում Դատարանն արձանագրեց, որ պետություններն ունեն լայն հայեցողություն՝ որոշելու, թե հսկողության ինչ սխեմաներ են անհրաժեշտ ազգային անվտանգությունը պաշտպանելու համար՝ հաշվի առնելով միջազգային դերակատարներից առաջացող սպառնալիքների բազմապատկումը, ինչպես նաև այն, որ վերջիններս չհայտնաբերվելու նպատակով բավականին բարդ տեխնոլոգիաներ են գործածում բացահայտվելուց խուսափելու համար<sup>435</sup>: Դատարանը նաև նշեց, որ Շվեդիայի օրենսդրության մեջ բացակայում են որոշակի կարգավորումներ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայի տեսանկյունից իրավունքի խախտում թույլ չտալու համար, օրինակ՝ այլ պետություններին հետախուզական տվյալներ փոխանցելու դեպքում օրենսդրության մեջ անհատի մասնավոր կյանքին առնչվող շահերը դիտարկելու պահանջի բացակայությունը:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հարցը հատկապես կարևոր է դիտարկել տվյալների պաշտպանության համատեքստում, քանի որ այսօր բազմաթիվ կազմակերպություններ ավտոմատացված կերպով հավաքում են անհատական տվյալներ, որոնք

434. Big Brother Watch v. UK, (Applications nos. [58170/13](#), [62322/14](#) and [24960/15](#)), Grand Chamber, Judgement, 25 May 2021.

435. Centrum för Rättvisa v. Sweden, (Application no. [35252/08](#)), 25 May 2021 Judgement, paras. 251-253.

ուղղակիորեն վերաբերում են մարդու մասնավոր կյանքի տիրույթին: Իրականում տեխնոլոգիական առաջընթացի արագությունն այնքան մեծ է, որ դժվար է հասցնել կանոնակարգել նման առաջընթացի արդյունքում ստեղծվող իրականությունը: ԵՄ Արդարադատության դատարանն իր հայտնի Թվային իրավունքներ-Իռլանդիա (Digital Rights Ireland) գործում ընդգծում է՝ հավաքվող տվյալները հնարավորություն են տալիս հստակ պատկեր կազմելու անձի մասնավոր կյանքի վերաբերյալ, ներառյալ նրա սովորությունները, ժամանակավոր կամ մշտական բնակության վայրը, օրվա ընթացքում նրա տեղաշարժը, այլ մարդկանց հետ ունեցած սոցիալական կապերը, ինչպես նաև այն սոցիալական միջավայրը, որտեղ անձը սովորաբար այցելում է<sup>436</sup>:

Թվային տեխնոլոգիաների առաջընթացի պայմաններում տեղի է ունենում նաև ֆիզիկական իրականության և թվային տարածքի տարրալուծում: Հաճախ այն, ինչ կատարվում է թվային տարածքում, հնարավոր չէ վերահսկել կամ կարգավորել ավանդական մեթոդներով, որոնք կիրառելի են իրական կյանքում մարդու իրավունքների երաշխավորման համար: Նման պարզ օրինակներից է առցանց ատելության խոսքը, ինչն առավել շատ է սկսել հանդիպել լոկ այն պատճառով, որ առցանց տիրույթում արտահայտվելը շատ ավելի դյուրին է դարձել, իսկ վերահսկելը պահանջում է նոր տեխնոլոգիաների և մոտեցումների կիրառում:

Մարդու իրավունքների վերաբերյալ մեր ընկալումները հիմնված են ուղղահայաց հարաբերության տրամաբանության վրա. կա պետություն, որը օրենքների և կանոնակարգումների ճանապարհով սահմանում է մարդու իրավունքների երաշխավորման համար անհրաժեշտ սահմանները և նորմերը: Պետությունն է կրում պատասխանատվություն մարդու իրավունքների խախտումների համար, սակայն թվային տեխնոլոգիաների զարգացման պայմաններում այս տրամաբանությունը փոփոխվում է ավելի շատ հորիզոնական հարաբերության, որտեղ անհատները հարաբերությունների մեջ են մտնում միմյանց և կազմակերպությունների հետ, և մարդու իրավունքների պաշտպանության համար պատասխանատվություն են սկսում կրել մասնավոր կազմակերպությունները<sup>437</sup>: Այս պարագայում, բնականաբար, խոսքը այն կազմակերպությունների մասին է, որոնք հասանելիություն ունեն հսկայածավալ անհատական տվյալների, ունեն տեխնոլոգիաներ և գործիքներ, որոնցով կարող են ազդել որոշումների կայացման վրա: Ակնհայտորեն այդպիսիք են այսօրվա տեխնոլոգիական հսկաները՝ «Գուգլ», «Մետա» («Ֆեյսբուք», «Ինսթագրամ», «Ուոթսափ»), «Ամազոն» և այլն (Google, Meta (Facebook, Instagram, Whatsapp), Amazon): Այս ընկերությունների ազդեցությունն Էական է մարդու իրավունքների պաշտպանության վրա:

Տվյալների ավտոմատացված մշակման պարագայում, ինչը հիմնականում կատարվում է արհեստական բանականության ալգորիթմների օգնությամբ, առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք ուղղակի առնչվում են այս կամ այն իրավունքի պաշտպանության շրջանակներին:

436. Nyst C. Falchetta T., The right to privacy in the digital age. (2017) 9 (1), Journal of Human Rights Practice. 104-118.

437. Yulia Razmetaeva, Yurii Barabash, Dmytro Lukianov, The Concept of Human Rights in the Digital Era: Changes and Consequences for Judicial Practice. Access to Justice in Eastern Europe, էջ 47-48 (2022):

Տեխնոլոգիական, թվային և ցանցային աշխարհում ընթացող գործընթացների ազդեցությունը մարդու իրավունքների վրա այնքան մեծ է, որ, շատ հետազոտողների կարծիքով, Կառել Վաշակի՝ մարդու իրավունքների երեք սերունդների դասակարգումը ինքնին չի արտացոլում նոր իրավունքների խումբը: Վաշակը դեռ 1970-ականների վերջին մարդու իրավունքները դասակարգել էր երեք սերունդների. առաջին սերունդ՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքներ, երկրորդ սերունդ՝ սոցիալ-տնտեսական իրավունքներ և երրորդ սերունդ՝ առողջ շրջակա միջավայրի, ինքնորոշման իրավունք: Իհարկե, այս սերնդային դասակարգումը բավականին քննադատության էր արժանացել տարբեր տեսաբանների կողմից, այնուամենայնիվ, այն ունեցել է կարևոր կողմնորոշիչ նշանակություն, օրինակ, քաղաքացիական հասարակության համար<sup>438</sup>: Ավելին, ըստ որոշ հեղինակների, անհրաժեշտություն կա նույնիսկ իրավունքների որոշակի խումբ դասակարգելու նոր՝ չորրորդ սերնդի տրամաբանության շրջանակներում: Այդ իրավունքները ընդհանրական կարելի է անվանել կենսաչափատեղեկատվական իրավունքներ<sup>439</sup>: Նման իրավունքների շարքին կարելի է դասել, օրինակ, կլոնավորման արգելումը, անհատական տվյալը ավտոմատացված մշակման չենթարկելու իրավունքը, բոլոր տվյալները ջնջելու իրավունքը<sup>440</sup>:

Ավելին, նոր թվային դարաշրջանի պայմաններում ծնվում են նոր իրավունքներ, որոնք անմիջականորեն կապված են ցանցային աշխարհի հետ: Իհարկե, հիմնարար իրավունքները, որոնք հիմնականում նախատեսված են 1950 թ.-ին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայով, ձևակերպված են ընդհանրական տերմիններով և բառակապակցություններով, ինչը հնարավորություն է տալիս դրանք մեկնաբանելու ժամանակի առաջընթացին համահունչ<sup>441</sup>. այդպես էլ անում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Սակայն ինչպես ընդգծում է Լեյդենի համալսարանի հետազոտող դասախոս Բարտ Քասթերսը, առանձին դեպքերում առաջանում է նոր իրավունքների առանձնացման անհրաժեշտություն, քանի որ, ըստ նրա, այսօրվա իրականության պայմաններում հիմնարար իրավունքների հիմքում ընկած արժեքները և տրամաբանությունը շատ դեպքերում չեն համապատասխանում այսօրվա թվային աշխարհի պայմաններում ստեղծված հանգամանքներին<sup>442</sup>: Քասթերսն առաջարկում է առանձնացնել մի շարք իրավունքներ, որոնց մի մասն իրենց ամրագրումն են ստացել որոշ պետությունների կամ ԵՄ օրենսդրության մեջ:

**Անցանց (օֆլայն) լինելու իրավունքը:** Այս իրավունքի առաջացման հիմքերը գալիս են Ֆրանսիայից, որտեղ, աշխատավայրի պաշտպանության նոր կանոնների համաձայն, հիսուն և ավել աշխատակից ունեցող ընկերությունները պարտավոր են համաձայնագիր կնքել իրենց աշխատակիցների հետ, որով կկարգավորվեն այն ժամերը, որոնց ընթացքում գործատուն իրավունք կունենա կապ հաստատելու աշխատողի հետ<sup>443</sup>: Առ-

438. Spasimir Domaradzki & Margaryta Khvostova & David Pupovac, Karel Vasak's Generations of Rights and the Contemporary Human Rights Discourse. *Human Rights Review* (2019) 20, 423-443.

439. Yulia Razmetaeva, Yurii Barabash, Dmytro Lukianov, The Concept of Human Rights in the Digital Era: Changes and Consequences for Judicial Practice. *Access to Justice in Eastern Europe*, էջ 47-48 (2022)

440. Նույն տեղում:

441. Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. *Computer Law & Security Review* 44 (2022), 4.

442. Նույն տեղում:

443. Lorenzo Migliorato, Culturing Boundaries: The Right to be Offline. Available <https://thetechnoskeptic.com/culturing-boundaries/>

ցանց լինելու իրավունքը վերաբերում է նաև սոցիալական ցանցերում ակտիվությանը, հատկապես որ բավականին շատ հետազոտություններ կան այն մասին, որ անընդհատ առցանց լինելը խորքային հոգեբանական խնդիրներ է առաջացնում մարդկանց մոտ և հանգեցնում ինտերնետային կախվածության<sup>444</sup>:

**Ինտերնետի հասանելիության իրավունքը:** Դժվար է պատկերացնել մեր իրականությունն առանց համացանցի, և ինչպես յուրաքանչյուր ոք իրավունք ունի անցանց լինելու, նաև ունի ինտերնետին հասանելիություն ունենալու իրավունք: Հատկապես այսօր բազմաթիվ ծառայություններ, ներառյալ պետական ծառայությունները, ինչպես նաև ապրանքներ հասանելի են ինտերնետի օգնությամբ<sup>445</sup>: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 2016 թ.-ի բանաձևում արդեն խոսվում էր ինտերնետի հասանելիության հիմնարար իրավունքի հաճախելիության մասին<sup>446</sup>: Ինտերնետի հասանելիությունը, իհարկե, այսօրվա պայմաններում անհրաժեշտություն է կյանքի տարբեր բնագավառներում իրավունքներ իրացնելու հարցում, ներառյալ խոսքի ազատություն, աշխատանքի դիմելու հնարավորություն, ուսման իրավունք, գիտական հետազոտություններ իրականացնելու իրավունք և շատ այլ բնագավառներ:

**Զիմանալու իրավունքը:** Իհարկե, առավել հայտնի իրավիճակ է, երբ քաղաքացին պետական մարմիններից կամ կազմակերպություններից կարող է պահանջել, որ տեղեկացվի այն մասին, թե իր մասին ինչ տվյալներ են մշակվում: Սակայն հակառակ իրավիճակը ևս հնարավոր է, երբ անձը չցանկանա իմանալ, օրինակ, իր կյանքի հավանական տևողության մասին, քանի որ ցանկանում է ապրել առանց իր հավանական մահվան ժամանակը իմանալու պատճառով մտահոգվելու<sup>447</sup>: Մեծ տվյալների (Big data) օգնությամբ հնարավոր է կատարել տարբեր կանխատեսումներ անձի տարբեր բնութագրիչ գծերի և կյանքի մասին, օրինակ՝ ամուսնալուծվելու հավանականությունը, որոշակի նյութեր չարաշահելու հակումը, սրտանոթային հիվանդությունների հավանականությունը, որոշակի տեսակի քաղցկեղի հավանականությունը<sup>448</sup>: Որոշ մարդիկ գուցե չցանկանան իմանալ նման մանրամասն կանխատեսումներ իրենց կյանքի և առողջության մասին: Կարծում ենք, որ նման իրավունքի անհրաժեշտությունը, ի թիվս այլնի, նաև պայմանավորված է մարդուն հավելյալ տառապանքների չենթարկելու տրամաբանությամբ:

**Միտքը փոխելու իրավունքը:** Ձևակերպումից էլ պարզ է, որ այս իրավունքը առաջնայնորեն կապված է մտքի և խղճի ազատության հիմնարար իրավունքի հետ, սակայն ինտերնետային իրականության պայմաններում այն նորովի իմաստավորելու կարիք կա: Առցանց իրականության պայմաններում, երբ մարդիկ բացահայտում են իրենց նա-

444. Tsitsika, A., Janikian, M., Schoenmakers, T. M., Tzavela, E. C., Olafsson, K., Wojcik, S., . . . Richardson, C. (2014). Internet addictive behavior in adolescence: A cross-sectional study in seven European countries. *CyberPsychology, Behavior, and Social Networking*, 17, 528-535; Blackwell, D., Leaman, C., Tramposch, R., Osborne, C., Liss, M. (2017) Extraversion, neuroticism, attachment style and fear of missing out as predictors of social media use and addiction, *Personality and Individual Differences*, Vol. 116, p. 69-72, հղումն ըստ Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. *Computer Law & Security Review* 44 (2022), 4.

445. Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. *Computer Law & Security Review* 44 (2022), 7.

446. UN Resolution A/HRC/32/L.20 of 27 June 2016, [https:// documents-dds- ny.un.org/doc/UNDOC/LTD/G16/131/89/PDF/ G1613189.pdf?OpenElement](https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/LTD/G16/131/89/PDF/G1613189.pdf?OpenElement)

447. Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. *Computer Law & Security Review* 44 (2022), 8.

448. Kosinski, M., Stillwell, D. & Graepel, T. (2012) Private traits and attributes are predictable from digital records of human behaviour, *Proceedings of the National Academy of Sciences (PNAS)*, [www.pnas.org/content/early/2013/03/06/1218772110](http://www.pnas.org/content/early/2013/03/06/1218772110) - հղումն ըստ Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. *Computer Law & Security Review* 44 (2022)

խասիրությունները և կարծիքը որոշակի վարքագծի օգնությամբ, տարբեր կայքերի և ցանցերի ալգորիթմները հրամցնում են մարդուն տեղեկատվություն, ապրանքներ կամ ծառայություններ, որոնք անհատականացված են՝ ըստ անձի նախասիրությունների<sup>449</sup>: Արդյունքում անձը ստանում է այնպիսի տեղեկատվություն, որը հաստատում է արդեն իսկ գոյություն ունեցող կարծիքը, և շատ դեպքերում նման ինտերնետային հարթակներն անվանվում են արձագանքի սենյակներ<sup>450</sup>: Սակայն ի՞նչ է տեղի ունենում, երբ անձը ցանկանում է փոխել իր նախասիրությունները կամ կարծիքը և սկսում է հետաքրքրվել լրիվ այլ բանով: Ինչո՞րն այն է, որ ժամանակակից ալգորիթմները նույնիսկ գուցե խոչընդոտեն, և մարդը կարող է կաղապարված մտալ անցյալում ունեցած իր նախասիրություններով և պարփակված այսպես կոչված ֆիլտրային պղպաղակների (filter bubbles) կամ արձագանքի սենյակներում (echo chambers)<sup>451</sup>: Այս տրամաբանության պայմաններում իրականում առաջանում են մարդու՝ առցանց հարթակում միտքը փոխելու իրավունքի ամրագրումը և դրա կիրարկման գործուն մեխանիզմների առկայությունը:

**Նոր մաքուր (թվային) թերթից/Էջից սկսելու իրավունքը:** Ինտերնետային կայքերի ալգորիթմները արդյունքում կարող են հանգեցնել անձի դասակարգման և տեղեկատվական փակ ցիկլի, և այս պարագայում սխալները և կողմնակալությունները կարող են առավել ամրապնդվել դրական ազդակների արդյունքում՝ կրկին վերածվելով փակ շրջանի: Նման խնդրի լուծման ճանապարհը մաքուր թվային էջից սկսելու իրավունքն է, այսինքն՝ այնպիսի էջը, որը չի զուգորդվի արդեն իսկ հավաքված անհատական տվյալների հետ: Այս իրավունքն իրենով նման է ջնջվելու կամ մոռացված լինելու իրավունքին, որի մասին խոսվում է ստորև, սակայն մոռացված լինելու իրավունքի սահմանները Էապես ավելի սահմանափակ են: Կարծում ենք, որ այս իրավունքը նաև շատ սերտորեն կապակցված է միտքը կամ կարծիքը փոխելու իրավունքի հետ, ինչի մասին ներկայացվեց վերևում: Թե՛ միտքը կամ կարծիքը փոխելու իրավունքը, թե՛ նոր մաքուր թվային էջից սկսելու իրավունքը ծնունդ են արդի համացանցում, ներառյալ սոցիալական ցանցերում, ինչպես նաև այլ հարթակներում մեծ տվյալների (big data) հավաքման, վերլուծության և ավտոմատացված մշական և, ըստ այդմ, անձին համապատասխան բովանդակություն (content) հրամցնելու ալգորիթմների բացասական ազդեցության և չարաշահման:

**Տվյալների համար վաղեմության ժամկետի իրավունքը:** Ինչպես և ցանկացած ապրանք, այնպես էլ անհատական տվյալը պետք է ունենա որոշակի վաղեմության ժամկետ կամ առնվազն վավերականության ժամկետ, քանի որ անձի տվյալները և նախասիրությունները ժամանակի ընթացքում փոփոխվում են: Ժամանակի ընթացքում անձի անհատական տվյալները, ինչպիսիք են բնակության վայրը, աշխատանքի վայրը և այլ բնութագրող տվյալներ, կարող են փոփոխվել: Ավելին, որոշակի համաձայնություններ տալը ևս պետք է ժամկետով սահմանափակված լինի<sup>452</sup>: Իրականում վաղեմության ժամկետով սահմանափակելը նաև անհատի տեսանկյունից առավել ողջամիտ է, քանի որ հնարավորություն է տալիս անձին վերսկսելու իր թվային կյանքը, և, կարծում ենք, նաև համահունչ է նախորդ իրավունքների տրամաբանությանը:

449. Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. Computer Law & Security Review 44 (2022), 9.

450. Նույն տեղում:

451. Նույն տեղում:

452. Առավել մանրամասն տե՛ս Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. Computer Law & Security Review 44 (2022), 10:

**Քո տվյալի արժեքը իմանալու իրավունքը:** Երբ մենք օգտվում ենք ինտերնետային տարբեր կայքերից, սոցիալական ցանցերից և այլ հարթակներից, դրանք մեծամասամբ անվճար են, այսինքն՝ մենք չենք վճարում բաժանորդագրման գումար: Սակայն իրականում մենք վճարում ենք մեր անհատական տվյալներով, որը մեծ կազմակերպությունների ձեռքին դառնում է ապրանք և ունի հստակ արժեք: Իհարկե, արժեքի որոշման միասնական մեթոդաբանություն գոյություն չունի, սակայն ակնհայտ է, որ անհատական տվյալների արժեքը հավաքական հասկացություն է: Տարբեր հետազոտություններ և ուսումնասիրություններ կատարվում են այս ուղղությամբ<sup>453</sup>: Այս տրամաբանությամբ անհատական տվյալի արժեքը իմանալու անհատի իրավունքը կարևորվում է հատկապես այն տեսանկյունից, որ անհատական տվյալը պետք է դիտարկել որպես անձին անհատականացնող հանգամանք և ո՛չ ապրանք:

**Մաքուր թվային միջավայրի իրավունքը:** Շրջակա միջավայրի իրավունքը արձագանք է տեխնոլոգիական զարգացումներին, և մաքուր շրջակա միջավայրի իրավունքն իր ամրագրումն է ստացել տարբեր երկրների սահմանադրություններում: Սակայն մաքուր թվային միջավայրի մասին քիչ է խոսվում, մինչդեռ տվյալներով աղտոտումը թվային դարաշրջանի լրջագույն խնդիրներից է: Տվյալներով աղտոտումը կարող է հանգեցնել աղմուկի կամ կոմսակալությունների թվային Էկոհամակարգերում կամ կարող է բարդացնել այլ, առավել պիտանի տվյալ փնտրելը<sup>454</sup>: Մաքուր թվային միջավայրի մասին խոսելիս միայն կարևոր է նաև ընկալել սերտ կապը իրական կյանքում մաքուր շրջակա միջավայրի իրավունքի հետ: Որպես օրինակ՝ կարելի է բերել բլոքչեյնի տեխնոլոգիաների կիրառումը և դատամայնիստի գործունեությունը, որը սպառում է մեծ քանակությամբ էներգիա: Այլ օրինակ կարող է լինել մարտկոցների համար անհրաժեշտ քիմիական տարրերի, օրինակ՝ լիթիումի օգտագործումը:

**Անվտանգ թվային միջավայրի իրավունքը:** Թվային տիրույթում անվտանգ միջավայրը նույնչափ կարևոր է, որքան ոչ թվային, ռեալ իրականությունում: Թվային տիրույթում անվտանգ միջավայրի ապահովումը իրականացվում է հատուկ մշակված համակարգերի և ծրագրերի օգնությամբ: Պետությունները ունեն պարտավորություն՝ ապահովելու, այդ թվում՝ նաև թվային միջավայրում, անվտանգությունը, քանի որ թվային միջավայրն այսօր մեր կյանքի բաղկացուցիչ մասն է, և անհնար է պատկերացնել մեր կյանքի շատ ոլորտներ առանց թվային գործիքների: Թվային գործիքների կիրառումը լայնորեն տարածված է նաև տարբեր տեսակի ծառայությունների տրամադրման, ներառյալ պետական, բանկային, ֆինանսական, իրաբանական բնույթի ծառայությունների և այլնի: Անվտանգությունը ներառում է նաև թվային տիրույթում կատարվող հանցագործություններից պաշտպանություն, սոցիալական ցանցերում անթույլատրելի վարքագծի կանխարգելում կամ պատժում: Այս ամենի իրագործումը թվային միջավայրում հասկանալիորեն պահանջելու է հատուկ գործիքների, ծրագրերի և մեթոդների կիրառում:

453. Օրինակ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը իրականացրել էր նման հետազոտություն - OECD (2013), "Exploring the Economics of Personal Data: A Survey of Methodologies for Measuring Monetary Value", OECD Digital Economy Papers, No. 220, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/5k486qtxldmq-en>.

454. Առավել մանրամասն Bart Custers, New digital rights: Imagining additional fundamental rights for the digital era. Computer Law & Security Review 44 (2022), 10-11.

**Ջնջվելու իրավունքը (մոռացված լինելու իրավունքը):** ԵՄ Տվյալների պաշտպանության գլխավոր կանոնակարգի (General Data Protection Regulation - GDPR) 17-րդ հոդվածը ամրագրում է ջնջվելու իրավունքը կամ մոռացված լինելու իրավունքը, որը ենթադրում է, որ տվյալների սուբյեկտը, այսինքն՝ անձը, իրավունք ունի դիմելու տվյալները տնօրինողին/վերահսկողին և պահանջելու, որպեսզի ջնջվեն իր վերաբերյալ տվյալները այն դեպքում, երբ առկա է հետևյալ հանգամանքներից որևէ մեկը.

- ա. անհատական տվյալներն այլևս անհրաժեշտ չեն այն նպատակի տեսանկյունից, որի համար հավաքվել էին.
- բ. տվյալի սուբյեկտը չեղարկում է տվյալը մշակելու իր համաձայնությունը կանոնակարգին համապատասխան, և այլ իրավական հիմքեր առկա չեն տվյալը մշակելու համար.
- գ. տվյալի սուբյեկտը, կանոնակարգի համաձայն, առարկում է տվյալը մշակելուն, և առկա չեն տվյալների մշակումն իրականացնելու համար ավելի բարձր իրավական ուժ ունեցող իրավաչափ հիմքերը.
- դ. անհատական տվյալները մշակվել են ոչ իրավաչափ.
- ե. անհատական տվյալը պետք է ջնջվի, քանի որ նման պահանջը բխում է ԵՄ-ում առկա որևէ իրավական պարտավորությունից կամ այն անդամ պետության օրենսդրությունից, որի իրավագրության ներքո գործում է տվյալները տնօրինող/վերահսկողը, .
- զ. տվյալները հավաքվել են երեխային սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով<sup>455</sup>:

Մոռացված լինելու իրավունքն իրականում շատ սերտորեն կապված է անձնական կյանքի անձեռնմխելիության հետ, սակայն ինչպես և այլ դեպքերում, այս պարագայում ևս թվային տեխնոլոգիաների զարգացումն իրականում առաջ է բերում առանձնատուկ կարգավորման անհրաժեշտություն: Եվ պատահական չէ, որ ԵՄ-ում այս իրավունքն առանձնակի իրավական ամրագրում է ստացել, ինչը փաստացի այդ խնդիրների անմիջական արձագանքն է:

---

455. Կանոնակարգի հոդված 17-ը հասանելի է հետևյալ հղումով <https://gdpr.eu/article-17-right-to-be-forgotten/>



## 9.2. Արհեստական բանականության ազդեցությունը մարդու իրավունքների վրա

Ի՞նչ է արհեստական բանականությունը: Առհասարակ բանականությունը ենթադրում է առավել բարդ խնդիրներ լուծելու որոշակի կարողություն<sup>456</sup>: Սա առավել ընդհանրական բնորոշում է, որը ներառում է բանականության բոլոր դրսևորումները՝ մարդկային և ոչ մարդկային: Դարեր շարունակ բանականության մասին խոսելիս առաջնային մենք պատկերացրել ենք մարդուն՝ որպես բանական էակի, որն ունի մտածելու և բարդ խնդիրներ լուծելու ունակություն: Իսկ այսօր տեխնոլոգիական առաջընթացը հասել է այն կետին, որ մենք ամերեսվում ենք մեքենաների (machine) բանականության հետ, որը հնարավոր է դարձել բարդ ծրագրավորման արդյունքում ալգորիթմների ստեղծմամբ: Այսօր արհեստական բանականությունը կարող է ստեղծել յուրահատուկ բնույթ ունեցող պոեզիա, հոդվածներ և երաժշտություն՝ հավաքելով և վերլուծելով գոյություն ունեցող տվյալները<sup>457</sup>: Այս համատեքստում անխուսափելիորեն ծագելու են հեղինակային իրավունքին անչվող խնդիրներ, եթե հատկապես խոսքը արդեն գոյություն ունեցող տվյալների հիման վրա ստեղծված ստեղծագործությունների մասին է:

Արհեստական բանականության աստիճանական զարգացման պայմաններում ավելանում են ոլորտները, որոնց վրա այն անմիջական ազդեցություն է գործում: Օրինակ՝ արհեստական բանականության օգտագործումը հնարավոր է նաև իրավաբանական որոշակի ծառայությունների մատուցման համար՝ պայմանագրերի նախագծում, փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև ավելի բարդ առաջադրանքների՝ վեճերի լուծում: Շատ հեղինակներ և հետազոտողներ գտնում են, որ արհեստական բանականությամբ օժտված մեքենաների կողմից վեճերի լուծումը գուցե նույնիսկ առավել անկողմնակալ և մաքուր լինի, քան մարդու կողմից իրականացվող արդարադատությունը: Սա՝ այն պարզ պատճառով, որ մարդն իր էությամբ օժտված է բազմաթիվ կողմնակալ մոտեցումներով, նախասիրություններով, ինչպես նաև որոշումների կայացման վրա կարող են ազդել անձի տրամադրությունը, եղանակային պայմանները, ինքնազգացողությունը և առողջական վիճակը, ներառալ նաև մարդու սխալվելու հավանականությունը: Այս բոլորը բացակայում են արհեստական բանականության պարագայում<sup>458</sup>:

Կարծում ենք, որ մարդու իրավունքների վրա ազդեցության տեսանկյունից արհեստական բանականությունն ունի բավականին շոշափելի դեր, և նախորդ բաժնում քննարկված նոր սերնդի իրավունքները վկայում են հենց այդ ազդեցության մասին: Խոսքը մեծ տվյալների (big data) ավտոմատացված մշակման և դրա հիման վրա անձին համապատասխան բովանդակություն (content) հրամցնելու մասին է: Նշված գործընթացները իրականացվում են հենց արհեստական բանականության օգնությամբ, որոնք այդ ավտոմատացված մշակման ընթացքում կարող են խախտել բազմաթիվ իրավունքներ:

456. Max Tagmark, *Life 3.0: Being Human in the Age of Artificial Intelligence*. 2018. էջ 48-49:

457. RD Brown, *Property Ownership and the Legal personhood of artificial intelligence*. (2021) 30 (2) *Information & Communications Technology Law* 212.


458. Ավելի մանրամասն տե՛ս Max Tagmark, *Life 3.0: Being Human in the Age of Artificial Intelligence*, 2018:

Այսպես է, օրինակ, խտրականության արգելքը, քանի որ մարդիկ կարող են դասակարգել ամենատարբեր հատկանիշներով, և դասակարգված խմբերի նկատմամբ կարող է լինել տարբերակված վերաբերմունք: Արհեստական բանականության կիրառման արդյունքում կարող են խախտվել անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը, ազատ տեղաշարժի իրավունքը և մի շարք այլ իրավունքներ:<sup>459</sup>

### **Հարցեր լսարանին**

1. Արդյո՞ք հնարավոր է մարդու իրավունքների ընդունված միջազգային փաստաթղթերի օգնությամբ միայն թիրախավորել և լուծել թվային դարաշրջանում առաջացող մարդու իրավունքների խնդիրները:
2. Ի՞նչ տեսակի ազդեցություն է թողնում արհեստական բանականությունը մարդու իրավունքների վրա, և ինչպե՞ս է հնարավոր կարգավորել այն:

459. Արհեստական բանականության՝ մարդու իրավունքների վրա ազդեցության մասին առավել մանրամասն տե՛ս Human Rights in the Age of Artificial Intelligence հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.accessnow.org/wp-content/uploads/2018/11/AI-and-Human-Rights.pdf>:



◆ ԵՐԵՎԱՆ 2023

**:ԲՈՒՆ**